21.09
-89

# Ա Ր Ա Զ Ի

ՄՏԱՐԱՆԻ Է 1961 թ.

# Յ Ե Ր Կ Ե Ր

## I

## Ճ Ա Տ Ո Ր

Գրադ
II
A 2695



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Պետհրատ 1937 Երևան

303

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՈՎԵԼՆԵՐ

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ,

ՎԻՊԱԿՆԵՐ

# ԱՐԵՎԸ

*Լսո՞ւմ եք... սպասե՛ք մի վայրկ, յես ձեզ կպատմեմ թռչնիկը սկզբից...*

*Գնո՞ւմ եք... լսո՛ւմ, յես վպատմեմ ծաղիկներին ու խոտերին...*

*Սիրուն կակաչներ, լա՛վ լսեցեք արևի պատմությունը...*

*Աղջիկս հիվանդ եր...*

*Գիտե՞ք, նա էլ ձեզ նման մի ծաղիկ եր, նախշունիկ գեղջուկ, վսակեպանդուր մազերով:*

*Աղջիկս հիվանդ եր...*

*Բժիշկը յեկավ, լծավ մեր բնակարանը: Նա տխուր եր. ինչո՞ւ...*

*Հա, հիշում եմ, նա չեր սիրում ներքևի հարկերը...*

*Նա լծավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին.*

*— Մոնավ ե,—ասաց,—պիտի փոխեք բնակարանը, պիտի արևլոդ սենյակ ճարեք...*

*— Ինչո՞ւ յերեխա ունեք,—հարցրեց:*

*— Յերեքն եյին. յերկուսը մեռան, մնաց այս մեկը... Պատուհ՛ք իմ աղջկան. նա մեր տան հոգին ե...*

*Նա ինչ-որ գեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց:*

*— Հայրի՛կ, ինչ գրեց բժիշկը,— հարցրեց աղջիկս:*

*—Արև՛ գրեց սիրելիս, արև՛ գրեց, որ փայլի քեզ վրա ու պաղատի ցավից...*

*Ու այն որը գնացի արև փնտռելու. գնացի շատ հեռու՝ քաղաքի ծայրը ու գտա արևլոդ մի բնակարան:*

*— Սիրո՞ւն կակաչներ, արևի գալարներ, ասեք լսո՞ւմ, ձեզ մոտ բերել իմ վսակեծաղիկ աղջկան:*

Դուք նրան կզուգեյիք կարմիր ու կանաչ...

Բայց, հա՛, պիտեմ, դուք նրան հաց չեյիք տալ... Դուք ծնվում եք վաղորդյան ցողով...

Լա՛ք, յես գնա չեմ վերջացրել...

... Մյուս առավոտ արիտի տանեյի աղջկանա արևի տուն, քայց յերբ լուսացավ, նա լինճ վանչեց, ճնռքա բռնեց ու փակից աչքերը...

Հետո յեկան մարդիկ ու տարան նրան...

Ու յերբ վսակեծամիկ աղջիկս հեռացավ մեզանից, մենք բոլոս այրվեցինք լալուց, իսկ յես գարձա արևի հիմանդ:

Յես գնում եյի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և. սպասում արևածագին:

Ու մշտա տեսնում եյի աղջկանա՝ արևը գրկած և իր մազերը նրա վրա փռած...

Բայց յերբ պատմում եյի արևի մասին, կինս ու մայրս չեսկին հավատում. նրանք կարծում եյին, թե յես խելագար եմ, և վողբում եյին այրված, ցամաքած աչքերով:

Ու մի որ էլ յես գիմեցի արևին.

— Հզո՛ր արև, ասի,— մի մեծ դանդատ ունեմ քեզանից. ինչո՞ւ դու մի շողք խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար նրան:

Նա տխրեց ու մթնեց:

— Գնա՛, ասաց, գնա՛ հայտնիր աշխարհին, սաա՛ — վերևի հարկը արևի շողքերը խլեց, ստվեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց են վսակեհեր աղջկան...

1913

## ԿԻՍԱՏ ՏՈՒՆԸ

*Ա յդ ա յն ո րե ր յին ե ր, յե ր բ ա մ ե ն ի նչ չ ա ր ժ վ ե ց :*

*Յ ե ր բ մ ու թ խ ո ր չ ե ր ի ց ճ ա ղ ն ե ց դ ա ր ա վ ո ր լ ո ղ ո ջ ը, յ ե ր բ բ ա ց ա վ ե ց ի ն վ ա ռ ե ր ա ն ն ե ր ը ...*

*Ա յն ժ ա մ ա ն ա կ Ս ա ր գ ի ս ը վ ե ր ա դ ա ր ձ ա վ ք ա ղ ա ք ի ց ու հ ա յ տ ա ր ա ր ե ց դ յ ու ղ ի հ ր ա պ ա ր ա կ ու մ .*

*— Ե լ հ ա ր ու ս տ ա ն ա ղ ջ ա կ չ կ ա . ո ր ա ն ի ց դ ե ն ը լ ո ւ ր ջ մ ի ն ե ն ք ...*

*Շ ու տ ով յ ե կ ան ն ր ա յ ե տ ևի ց և ու ր ի շ ն ե ր ը՝ ն ու յ ն հ ո վ ե ր ով, ու ա մ բ ող ջ դ յ ու ղ ը դ ղ ր դ ա ց ն ո ր խ ո ս ք ե ր ի տ ա ր ա փ ի ց :*

*Պ ա տ մ ու մ ե յ ի ն ք ա ղ ա ք ի ա ն ց ք ե ր ի ց , չ չ մ ե ղ ն ու մ գ յ ու ղ ա ց ի ն ե ր ի ն ն ո ր բ ե ր ա ծ մ ա յ ր ե ր ով :*

*Ա յդ ո ր ե ր ի ն ե ր ա հ ա , յ ե ր բ Ս ա ր գ ի ս ը ու ր ա խ ս ր տ ով ա կ ս ե ց ի ր ն ո ր տ ան չ ե ն ք ը . ն ա բ ա ր ձ ր ա ց ր ե ց պ ա տ ե ր ը , բ ա յ ց չ կ ա ր ո ղ ա ց ի ն ճ ա ճ կ ե լ ու ա ր ք ե լ ի ր տ ու ն ը ...*

*Ո ւ ա ն ց ա ն տ ա ր ի ն ե ր , ա ն ց ա լ ա յ ն ժ ա մ ա ն ա կ ը ...*

*Ս ա ր գ ի ս ը մ ն ա ց դ յ ու ղ ու մ՝ ք ա ղ ա ք ու մ ե լ գ ո ր ծ չ կ ա ր ...*

*Ն ա մ ա ն ե ր գ ա լ ի ս լ ու ռ՝ լ ե ռ ն ք ի ր մ ե ջ խ ո ր ա ս ու զ վ ա ծ , ա շ խ ա տ ե լ ով ա ն ն կ ա տ ե լ ի գ ա ր ձ ն ե լ լ ո ր ն ե ն : Ա ո ւ ն ա ց ե լ ե ր ն ր ա չ ու խ ա ն , վ ո ր ի վ ր ա յ ե ր կ ա ր ու մ ե յ ի ն յ ե ր կ ու մ ե ծ կ ա ր կ ա տ ա ն ն ե ր ը , գ ժ գ ո ն ե լ ե ր ն ր ա գ ե մ ք ը , ի ս կ ն ր ա տ ո ւ ն ը գ ա ր ճ յ ա լ կ լ ի ս ա տ ե ր ...*

*Ա ն ց ե լ ե ր ա յ ն ժ ա մ ա ն ա կ ը , կ յ ա ն ք ը ն ո ր ի ց ի ր ն ա խ կ ի ն հ ո ւ ն ի մ ե ջ ե ր ը ն կ ե լ : Գ յ ու ղ ի հ ր ա պ ա ր ա կ ու մ գ ա ր ճ յ ա լ լ ր ե ն ց ա ռ ա ջ վ ա գ ի ր ք ե ր ն ե յ ի ն գ ր ա վ ե լ յ ե ր կ ու վ ա շ խ ա տ ու ն ք ե ր ը՝ հ ա ս տ ա վ ո ր Ս ա ն դ ր ո ն և ն ի հ ա ր , չ ո ր Մ ա ր տ ի ր ո ս ը :*

*Ո ւ ա մ ե ն ա ն գ ա մ , յ ե ր բ Ս ա ր գ ի ս ը լ ու ռ ա ն ց ն ու մ ե ր գ յ ու ղ ի չ ու կ ա յ ով , Մ ա ր տ ի ր ո ս ը տ ե ր ո ղ ո ր մ յ ան ձ գ ե լ ով , ա պ ա տ ու մ ե ր վ ո ր ն ա մ ա ե ն ա ու կ ա մ ա ց ու կ ա ս ու մ .*

— Սա՛րդիս, կարելի ա վող ա հարկավոր, ա՛րի տամ, տունդ վերջացրու...

Ու նրա վսակրատ դեմքի վրա խաղում եր խորամանկ ժպիտը և մանր աչքերը խայթում էլին հեղնող վայրով:

Սարդիսն անցնում եր լուռ, արհամարհանքով, բայց ահա նրա առաջ եր դալիս հատատիտը Սանդրոն՝ չրջապատված իր համախոհներով: Դեռ հեռվից նա բղավում եր իր հրճվալից, խրխնջող ձայնով.

— Սա՛րդիս, բա տասում էլիր էլ հարուստ-աղքատ չկա. բա ինչի՞ չես տունդ վինում, վկատա ա մնացել...

Սարդիսն այրվում եր այդ խոսքերից. նրանք հիշեցնում էլին անցած օրերը, երբ նա ինքն եր հարճակվում այդ կերկու վաշխառուների վրա,— ու էլ չեր համբերում.

— Շո՛ւտ մի յեղակարիլ,—ասում եր,—մի առվոտ վոր ջուր ա դնացել՝ մին էլ կգնա... ասղ աշխարհի տունն ա կվատ մնացել, մնոտակ իմը հո չի՞: Լավ իմանաս՝ են օրերն էլի կգան, տունս կշինեմ քու աչքն էլ կհանեմ...

— Հա՛ հա՛ հա՛... մին էլ կըդա... հռհռում եր Սանդրոն, ու ծխամաղից վերկնելով՝ ավելի կեր լայնացնում իր տեղը:

Յեվ նրա հետ ներդաշնակ հռհռում էլին իր շուրջը պատած համախոհները:

— Ծխամա՛ղը, ծխամա՛ղը. տեղդ լենացել ա, ամա լա՛վ մխող պահիր, քանի հա խալխի ցավը կա՝ են օրերն ուզակ նման էլի կըշտրեն դառնող տռաջ:

Առում եր Յարդիսը, կծու հեղնանքով չարխում վռանից դրուխ Սանդրոյին ու հետանում դանդաղ քայլերով:

Գնում եր ու իր այրվող աչքերով կերք եր վնտռում այն տեղ վողոյնելրում...

Ու վորպես մի արճան են անցած օրերի՝ խորհրդավոր լռությամբ հանդիպում եր նրան իր կվատ տունը...

1913

## ՎԻՐԱՎՈՐ ԹՌՉՈՒՆԸ

*Ան նցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ՝ հալած-ված են չքեղ լույսերից, քարերի տապից, խեղդող փոշուց...*

*Կուրծքս հևմանդ է, աչքերս մթնում են, ծնկներս ծալվում, խակ դո՛ւ, սևերես, կրկնում ես անվերջ.*

*— Գնա՛, գնա՛...*

*Ես քեզ վաղո՛ւց եմ ճանաչում, ո՛վ սևերես կարիք. դու դիշեր ցերեկ հետևում ես ինձ, հալածում...*

*— Հիշո՞ւմ ես... դու տարար ինձ այն մեծ խանութը, ուր ամեն ինչ կար ուտելու համար, բայց այդ ծով-ուտելեղենի մեջ չես քաղցած եղի ու Տանտալի նման չեղի կարող ձեռք տալ և վոչ մի բանի: Ես՝ մի գալուկ որխորդ, նստած այնտեղ՝ մխայն դանձում եղի տիրոջս վոդերը...*

*Հիշո՞ւմ ես, յերբ առաջին անգամ վոտ դրի այնտեղ, յերբ խանութի տերը զինջեց մորս աղաչանքին ու ինձ ընդունեց... Նա ինձ հավանեց ու գաղտնի հրճվանքով ասաց իր մտքում.*

*— Կգա ժամը և դառը կլինի վոդջակիզ...*

*Ես ընդունելեցի և առժամանակ հանդիստ առա... Կարճատե՛ւ հանդիստ...*

*Նա միշտ նայում եր ինձ վշխոդի ժպտով, նա ցանկանում եր վնաս, խակ դո՛ւ, սևերես չչնջում եյեր դռան ետևից.*

*— Զոհվի՛ր, գառնուկս... յեթե չհպատակվես, ցուրտ ձըմեռանը կմնաս մայթերի վրա...*

*... Ցավ ահա մի որ տերս հայտնեց իր կամքը. գաղտնի ժպտով մեկնեց ձեռքը դեպի ինձ, ուզեց ճաշակել իր ստրկությունն, բայց համբուրչի տեղ մի ապտակ ինչով նրա մսեղ դեմքին:*

*Նա ապշեց, կատաղեց, ուզեց հարձակվել նորից, բայց յես արդեն դուրսն եյի...*

*Ու այն ուրից չես  չեկա ձեզ մոտ, ո՛վ անհյուրընկալ մայրեր, չես ընկերացա քեզ, ո՛վ սևազգեստ կարիք...*

*... Անցնում եմ սալահատակ մայթերով, քայլում եմ՝ հալածվածն են չքնել լուսյաներից, քարերի տապից, խեղդող վուշից...*

*Կուրծքս հխլանդ է, աչքերս մթնում են, ծնկներս ծալվում, խակ դո՛ւ, սևերես կարիք, կրկնում ես անվերջ.*

*— Գնա՛, գնա՛...*

1913

## ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

Ա մեն որ նա գնում եր հեռագրատուն նույն ճանապարհով:

Տարիների ընթացքում այդ վողոցները սովորական եյին դարձել, ինչպես իր բնակարանը. սովորական եյին դարձել նույնիսկ այն մարքերը, որոնք ծագում եյին ճանապարհի պատյան կիսերում:

Հասնելով յերկու վողոցների անկյունին՝ նա մտածում եր — մի՞թե մինչև այդ չե, թե վոր կողմով կըղնամ.—կյանքն արդեն լծել և ինձ իր մեծ բեռին, և ուր ել գնամ, բաց չի թողնել...

— Ձև՛, պետք և վճռել այն դլխավոր հարցը,— ասում եր նա ինքն իրեն քաղաքային այդով անցնելիս.— ո՞ւմ համար և այս կյանքը, վոր յես քարշ եմ տալիս. ինձ համա՞ր... բայց յես ահա վոչ թե ապրում եմ, այլ մէռնում որեցոր... ինո՞ր, յերեխայիս համա՞ր.— բայց նրանք ել ինձ նման են — նույն դալուկ դեմքերը, փչրված սրտերը...

— Ո՞ւմ համար և այս բոլորը,— կրկնում եր նա, քայլերը դանդաղեցնելով.— հա՛, գիտեմ,— այն յերջանիկ դույգի համար՝ հարուստ, ջահել ու անհոդ... նրանք գալիս են հեռագրատուն ծիծաղելով, մեկ-մեկու ձեռքից խլում են գրիչը, գրում են, ջնջում, նորից գրում: Հաճախ հեռագիրներ են տալիս, այն ել՝ ի՞նչ գլարճալի ու չնչին բաների մասին.— «Ցնորհավորում ենք քո անվանակոչության.— մենք առողջ ենք. առողջ և և մեր չարաճճի շնիկը»... Նրանք ցնորհավորում են, փառաբանում այս կյանքը, իսկ յես անիծում եմ... անքուն գիշերներով հեռագրում եմ, չխկչխկացնում և գլարճության այդ բեռը հասցնում եր տեղը:

— Փո՛ղը, փո՛ղը,— կրկնում եր նա ներս մանելով հեռա-

*դրատան շեմքը — ամեն ինչ վըվխախ, ամեն ինչ կըվճռե... Նա ինձ կազատե այս անտանելի մթնոլորտից, կեղտոտ հատակից, տաժանելի աշխատանքից...*

*— Ո՛, անիծված վանդակներ,— ասում էր նա, ներս մըտնելով մահու չափ ձանձրացել էր անելակը, ուր արդեն ապասում էր նրան ծերուկը: Նա սովորաբար ամենքից վաղ էր գալիս ու կարդում էր իր փոքրիկ, կոպեկանոց լրագիրը:*

*— Բարեվ. ի՞նչ նորություն կա քո լրագրում.— հարցնում է նա ծերուկին:*

*— Մեզ համար վոչինչ. մեզ վիճակված է միայն աշխատել և աշխատել...*

*— Բայց յերեվակայի՛ր,— ասաց Մելանյանը,— հանկարծ վիճակախաղում ամենս յերկու հարյուր հազար, թևեր առնեն, գնաս թողնես այս հոտած վանդակից ու պատես աշխարհի շուրջը...*

*— Ե՛հ, յերանի քեզ, դու դեռ յերտպում ես.— դեռ յերիտասարդ ես. իսկ իմ բանն արդեն վերջացած է... Յես էլ մի ժամանակ յերազում էյի, բայց քեզ պես համառ յերազող դեռ չեմ տեսել. այնքան ուժեղ է քո հարստության ձգտումը, որ յերբեմն թվում է, թե կհարստանաս: Բայց դու էլ յերեսակայի՛ր... հանկարծ քո լոզը կատարվի... դու, իհա՛րկե հեռեվյալ որը մեզ՝ քո ծառայակիցներիդ կարհամարհես.— այդպես է կյանքի ոգենքը... կգաս մի որ չքեզ վերարկուով, հպարտ քայլերով, կբռատնեսս մեր փոքրիկ պատուհանքին և կոպեկ առնով կբարևեսս.*

*— Սա ի՞նչ խոյտառակություն է. ինչո՞ւ եք ուշ հասցրել իմ հեռագիրը... Դու իհարկե յերբեք չէյիր հասկանալ, որ մենք անասելի ծանրաբեռնված ենք գործով. ամենից կասեմ՝ դու դրանով չէիր բավականանալ. հեռախոսով կհայտնեյիր մեր կատարածը, որ մեզ նկատողություն անի: Յեվ այդ կլիներ աշնան մի անձրևելային, լացող որ... Չե՛, թող քո այդ դաժան ձգտումները...*

*... Փոքրիկ պատուհանում յերեվաց հաճախորդի ձեռքը և հեռագրի կապույտ թուղթը: Ներսնք ընդհատեցին խոսակցությունը: Վանդակում նորից տիրեց սովորական չըխչըխկոցը:*

*Ծերուկը տխուր էր. նա յերեխայի նման խռոված դեմք ուներ: Տարօրինակ պայքար էր ծագել այդ յերկուսի մեջ՝ յերե-*

վախճյական հարստուԹյան չուրջը: Ամեն անգամ, երբ Ծերուկը լսում եր Մելանյանից վիճակախաղերի, հարստանալու մասին, նրա սիրտը գառնանում եր: Նա մեքենայաբար գրում եր անդորրագրերին ու մտքում կռվում.— «Ուզում է հարստանալ, տրիկացնել հաղարամոր մարդկանց... Չե՛, Թող քո այդ համառ յերազը, քո չար գավաԹությունը»...

***

...Այսոր Մելանյանը գնում եր իր տունը նույն սովորական ճանապարհով՝ պաշարված իր մտքերով. նա կարծես չտապում եր, վոր իր սենյակում վճռի իրան տանջող հարցը:

Մի խավար տուն եր այն, ուր արեվը մուտք չուներ: Յերկու սենյակներից մեկը իրան եր հատկացրել: Կարծես մի տխուր վոգի յեր Թաղավորում այնտեղ: Կինն ու փոքրիկ աղջիկը նրա տրամադրուԹյանն եյին հարմարվում, իսկ այդ տրամադրուԹյան լավ մասերը վաղուց վերացել եյին: Նա ժամերով հետ ու առաջ եր քայլում սենյակում ու մտածում, մտածում... Քայլերից մաշվել եր փոքրիկ կարպետը, վորը ձգած եր սեղանի առաջ:

Այդ յերեկոյան նա մի առանձին Թախիծ եր քայլում սենյակում՝ անձնատուր յեղած իր մտքերին: Նրան զրկում եր այն ժխորը, վոր սիրում եր փողոցներում՝ մոտակա առնէ պատճառով: Անդիտակցաբար նա չարունակում եր մտքում այն խոսակցուԹյունը, վոր ունեցավ Ծերուկի հետ:

— «Ծերո՛ւկ,— ասում եր նա,— ամեն անգամ յերբ յես ձգտում եմ հարստուԹյան, դու վիճում ես. դու խանգարում ես իմ հարստանալուն»...

Ու յերևակայում եր Թե ինչպես Ծերուկը՝ նստած և իր փոքրիկ, սառը սենյակում և ծխում է, ծխում: Նրա առաջ՝ սեղանի վրա փոքրիկ, կեղտոտ հեչտայերը ԹչԹչում և տխուր,— ու հիշեցնում անցյալը...

Նա մոտենում է Ծերուկին և ասում ականջին.

— Ծերո՛ւկ, լսում ես՝ դու խանգարում ես իմ հարստանալուն...

Ծերուկը հանկարծ վոտի յե կանգնում ու ասում զայրույԹով.

— Իսկ դո՛ւ, դու՛, խանգարում ես մեր ապրելուն,— դու ուզում ես հարստանալ, յեղնել մեր ուսերի վրա...

Ցեխ՝ ո՛վ զարմանք... Հանկարծ թվում է, թե հեշտայեռն սկսում է բարձր թչթշալ, դոլորշի է թողնում... Ծերուկի յետեւից հարյուրավոր մարդիկ են յերևում ու ձեռքները բարձրացրած՝ սպառնում են, գոչում.

— Դո՛ւ, դո՛ւ, խանգարում ես մեր ապրելուն...

Ու Մելանյանը հանկարծ ասես հայվում է հազարավոր մարդկանց տաքությունից ու ձուլվում է նրանց հետ:

— Ձես ձեզ հետ եմ,— հանկարծ գոչում է նա. յես էլ ձեզ հետ եմ...

... Նա ներս է մտնում մյուս սենյակը, ուր էր կինն ու յերեխաները էյին ու չիմիաճ, բարձր ձայնով կանչում է.

— Ձես ձեզ հետ եմ... Գնանք բոլո՛րս, բոլո՛րս միասին...

Փոքրիկ աղջիկը, վոր զբաղված եր գուլպագործ թղթերից շղթաներ շինելով՝ առնածառի համար, ու իր կինը մնացել էյին սպշած:

Նա գրկում է աղջկան, վորը ուրախությունից չվարած՝ փարվում է հորը, կարծելով թե մոտակա առնեղի առիթով և նրա ուրախությանը, ու իր ձեռքի կարմիր շղթան փաթաթում է հոր վզին:

Կարծես ծանր աշխատանքից հանդստանալով՝ Մելանյանը պարծանացած դեմքով նստում է սեղանին: Հեշտայեռը հզոր հեվքով քլթքլթում է, դոլորշու քուլաներ թողնում ու թվում եր, թե զսպված դոլորշին էլ՝ բռնված նույն մաքերով, գոչում եր.

— Բոլո՛րս միասին... բոլո՛րս միասին...

... Մտաենում եր նոր տարին:

Գործի մեջ թաղված՝ Մելանյանը հետապրում եր անընդհատ ու չխկչխկացնում մեքենան, շնորհավորական հեռագրեր հաղորդելով: Թվում եր, թե դրսի ամբողջ աշխուժը նրան էյին հաճախել, վոր դնկատարի: Այդ ժխորում նրա վատ յերևակայության մեջ լսվում էյին բյուրավոր ամբոխի ձայներ: Նա չխկչխկացնում եր՝ շնորհավո՛ր, շնորհավո՛ր, ու թվում եր՝ մի ահագին ծառ և յերկրի վրա, թե հակա ղանդեր են դողանջում

ովկիանից ովկիան՝ ամբողջ աշխարհին ու ինքը կանգնած բարձր՝ մի աշտարակի վրա, դիշում և բյուրավոր ամբոխին.

— Ուղղեցե՛ք կորացած մեջքերը, ծաղկեցրեք թառամած կանաչները... Չկա՛ն այլևս վանդակները... դուք ազա՛տ եք, ազա՛տ...

1913

II
26902

8krlbr—2

17

# ԿԱՐՄԻՐ ՀԱՄԲՈՒՅՐԸ

*Ո՞ւսուերատվի դաշտը այն դաշտան է, ուր ծաղիկները լալիս են, նուվնալես վիրտավոր ու հաշմանդամ...*

*Մի հատիկ ծաղիկ է շոյում դեմքս, յերբ մոտենում եմ գետնին, այն էլ աչնան դեղին ծաղիկ է,— մահվան ծաղիկը...*

*— Մենավո՛ր ծաղիկ, թող ըմպեմ քո ցողը, ծարավս հանդեցնեմ, թեկուզ մահվան թույն լինի այդ:*

*Բայց դու արյունոտ ես, վիրավո՛ր ինձ նման...*

*... Դիակներ... անվերջ դիակներ...*

*Երանք ընկած են խառնիխուռն, թշնամին ու բարեկամը միասին:*

*Յեվ բոլորի դեմքին դրոշմած է մի լսրված անշարժություն, աստ ամեն մեկը մեխել է հիշողության մեջ իր տեսածը և սպասում է, վոր ահեղ ձայնով պատմի աշխարհին:*

*... Անդրերը պատվում են վերևում...*

*Երանք լռնում են, մոտենում զգուշությամբ, ապա զգալով մեռելությունը՝ համարձակ հոշոտում են մարմիններըը:*

*Ահա երանցից մեկը կտցահարում է թափված ուղեղը:*

*— Հարգա՛նք, ով անդր, դեպի մարդկային ուղեղը... Նա արժանի յեր ուրիշ վիճակի,— չանթահա՛ր ուղեղը... բայց այժմ դարձել և անդրերի կերակուր...*

***

*... Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր...*

*Շարժվում եմ առանց որհատակյան ճիգով:*

*Ինչ եղ էինի, պիտի վնասեմ՝ պիտի գտնեմ ջուրը...*

*Հազիվ յերկու քայլ հասի փորտղում եմ ու ընկնում թուլացած:*

Դիակները պառել են շուրջս ու չեն թողնում հեռանամ: Նրանք վանչում են ինձ կողմից, հրավիրում մասնակցելու իրենց ուռ խոհերին...

Տաժանելի ուղեղ, դու կպարթևս այս ուռ խոսակցությունից...

Այս լռությունը մի հզոր աղմուկ է, որից վրկության չկա...

***

Առջևս ընկած է արյունոտ մի դեմք, հոյակապ մի մարմին ընկած է անշարժ:

Պառառոտած վերարկուի տակից յերևում է ժամացույցի յերկաթե շղթան, կախված փոքրիկ պատվերով:

Մոտենում եմ մի փոքր, նայում պատկերին ու սիրտս սկսում է բարախել ուժգին:

Յերիզվամի պատկեր է,— յերկու լամաստասերնների խոհուն ճակատներով:

Յեվ հիշողություններս այրվում են,— վնասելով այն մարդուն վորի ձեռքին տեսել եմ այդ պատկերը:

— Յես քեզ ճանաչում եմ, ընկեր:

Ո՛չ, լավ կլիներ՝ չճանաչեյի, չպատեյի քեզ այս անթիվ դիակներից...

Պատմի՛ր, այդ ի՞նչպես յեղավ, վոր մենք թշնամի ենք էինք, վոր իմ վողջույնի տեղ դուցե քեզ հանդիպեց իմ դաժան զնդակը:

Պատմի՛ր...

Բայց դու չես կարող խոսել,— բերանդ լիքն է արյունով և մահվան խավարն իջել է աչքերիդ...

Հիշո՞ւմ ես այն յերեկոն, յերբ դուրսը ցուրտ ու ձյուն եր, իսկ այն անչուք տանը կրակը վառվում եր ոջախում դուրեկան ճարճատյունով: Ու մենք,— ոտարազգի ընկերներս՝ և մի հավաքված,— խոսում եյինք դալիք որերից... Յեվ դու, հիշո՞ւմ ես, ժպիտը դեմքիդ չխոսում եյիր մատներով այս փոքրիկ պատկերը...

Գիտեմ, ընկեր, են ոջախում կրակը մարել և արդեն. և մութ պիչերները, չնեղի վտանգից արշավացած՝ քո փոքրիկ տղան կըծկվում և մոր գրկում և հարցնում՝

— Հայրիկը յե՞րբ կգա:

Իսկ մայրը՝ արցունքները զսպելով ասում է.

— Շուտո՛վ, շուտո՛վ...

Ասում է ու կարծես հալասում, վոր դու կվերադառնաս...

***

... Յերեկոն գալիս է: Լռում են թնդանոթները:

— Ո՛վ հաղթեց, ընկերներ. մե՞նք՝ թե՞ դուք... յե՞ս՝... թե՞ դու...

Լավում են մարդկային ձայներ.— յեկել են վիրավորներին հավաքելու:

Գալիս են շարժում դիակները, ապա հրում են լինճ ու ասում.

— Թող մնա, թող մեր թշնամին վտի ես ամայի դաշտում...

***

— Թող մնանք ես ամայի դաշտում՝ արյունոտ ընկեր:

Մենք կսպասենք դիշերվան, ու կելնենք, կղարթեցնենք դիակներին անթիվ ու կքայլենք դեպի քաղաքները քարահատակ...

Բուք ու թորանի հետ մենք կխուժենք ամենուրեք, չռինդ ու չբնակոցով կբռնանք վտակ դռներն ու ներս կտանենք ցրտահար, արյունոտ մեր ճշմարտությունը...

Մենք ահեղաղղորդ փողեր կհնչեցնենք, դժոխային տարտուփ կտանք մեր զահիճներին ու հրեղեն պատգամներ կնետենք աշխարհից աշխարհ...

Ու կգա նոր... Հաղթական կամարների տակով մենք կանցնենք նոր կյանքի շարքերով...

— Ընդունի՛ր համբույրս՝ ընկեր, արյունոտ, կարմիր համբույրս...

Կարվել է մեր ընկերական շղթան. յեկ միացնենք ամո՛ր և ամո՛ր...

Յեկ հանգչենք միասին ես արյունոտ դաշտում մինչև յելնելը...

— Մինչև յելնե՛լը...

1915

## ԿԻՎԱԽՆՁՈՐԸ

Ա. մեն բարեկենդանի անցյալի հիշողությունները սիրտս տակն ու վրա յեն անում:

Հենց առավոտը պարթնում եմ թե չե՝ աչքիս առաջ և գալիս մայրս. տեսնում եմ նրան՝ ինչպես այսօր, մեր գյուղական տան առաջ՝ արահի տակ: Նա գլուխը քաշ արած, ձեռքերով յերեսը ծածկած՝ լինքն իրան խոսում և ու Թաքուն լաց լինում:

Այն ժամանակ յես փոքր եյի, բայց դուք ել լավ գիտեք, վոր աղքատի փոքրը շուտ և մեծանում, վաղ և կյանքի գառնության համն առնում: Մայրս աշխատում եր Թաքցնել իր արցունքները, բայց յես նկատում եյի ու հասկանում նրանց պատճառը:

Տեսնում եմ՝ նա ինչ վոր պղինձ և գրել կրակին, բայց պետեմ, վոր մեջը բան ձկա՝ մխան ջուր և տաքանում:

Ի՞նչ ուներ յեփելու:

Ինձ համար պարզ եր, վոր ինչպես անցյալ տոնին՝ այս անգամ ել բրինձ ու յուղ եյին խոստացել և չեյին տվել. իսկ մորս վախտն եր՝ վրայ յեփել, ինչպես կարդն և՝ ուրախացնել մեզ՝ յերեխաներիս:

Ի՞նչ աներ. մորթե՞ր մնացած յերեք հավերից մեկը... բայց հետո վո՞րտեղից ձու ճարեր իր հարար ու մի հոգաների համար, ինչո՞վ Թուխս դներ...

Ու նստած մեր դռան առաջ՝ մայրս մնացել եր այրող ցավերի ճանկերում. ուղեղը մաչում եր մի յելք գտնելու համար, ու Թաքուն լաց եր լինում:

Իսկապես ի՞նչ եր մեր որը:

Դեռ հորս կենդանության ժամանակ մի բանի տեր չեյինք, իսկ նրա մահից հետո, ինչպես ասում են՝ ջուրը մաղվեցինք:

Մի կտոր հող էր մնացել այն էլ դռնաններից մեկին էր պատկել։ Մայրս ընկել էր ուրիշների դռներն ու սրա-նրա գործին էր գնում՝ վորի աղոնն էր անում, վորի հացը թխում, ջուրը կրում ու մի կերպ մեզ պահում։

Ցեխ ահա յեկել էր «աղետ» որը, իսկ նա էր անվերջ չար-չարանքի վտխարեն ուրախություն մի չնչին շուշ էլ չէր ստացել։

Կրծո՛ղ ցավեր...

Ուզում եյի մոտենամ, հանդստացնեմ.— ասեմ մա՛յրիկ, յերբ մեծանամ, ինչ վոր լավ բան կա՝ ինչ ճարեմ քեզ համար։ բայց վախենում եյի ավելի վշտացնեմ՝ իր գաղտնիքը բանալով, չե՞ վոր նա թաղցնում էր իր վիշտը։ Մեկ էլ սիրտս այնպես էր դառնացած, վոր ղռում եյի՝ յեթե մոտենամ մորս, յես էլ կը վարակվեմ նրա արցունքներից։ Իսկ այդ բանը չէր թույլ տալիս իմ՝ փոքրիկ տղամարդուս ինքնասիրությունը։

Բայց մենակ մորս վիշտը չէր լինճ այրողը։ մի ուրիշ ցավ էլ ունեյի, վոր ինքս եյի նրանից ծածկում։

Իմ դարդն էլ մեծ էր։

Մեր հարևանի տղան ու իր յերկու ընկերները՝ մեկը տանուտերի տղան, մյուսը քահանայի՝ բարձրացել եյին մեղանից մոտիկ մի կտուրի վրա ու քեֆ եյին անում։ Յերեքն էլ ունեվոր եյին, հագել եյին լրանց լավ շորերը, իսկ մեր հարևանի տղայի խելքը գնում էր նախշուն թևերով կարած իր նոր կոշիկներից, վոր նրա հայրը քաղաքից էր բերել։

Նրանք ամեն կերպ աշխատում եյին մեծերին նմանվել։ հարհրոցն եյին դցել։ յերդում եյին, չվի ածում ու պարում։ Ի հարկե ամենից շատ պարում էր մեր հարևանի տղան, վորպեսզի ցույց տա իր նախշուն կոշիկները։

Ուղիղն ասած՝ սիրտս չէր համբերում։ շուտ շուտ անցնում եյի այդ տան մոտից ու ամեն նրանց ձայնը լսելիս այնպես էր թվում, թե չուքչա անդունդ է բացված ու սեղ չեմ գտնում գետնի վրա։

Ինչո՞ւ նրանք ուրիշ խաղերի ժամանակ լինճ կանչում եյին, իսկ այժմ չեյին կանչում։ Պարզ բան է՝ նրանք լրանց աններից բերել եյին ամեն տեսակ ուտելեղեն, իսկ յես ի՞նչ կարող եյի տանել.— յես նրանց «թայը» չեյի... Այդ մխիթն էր, վոր լինճ

կատարելագործում եր. զբաղմունքի մի խորը վիրավորանք: Այդպես պնում-պալիս եյի, մեկ տեսնում մորս ու զառնանում, մեկ անցնում քնի անողների մոտից ու այրվում, խորովվում:

Այդ դեռ բավական չե. նկատելով վոր յես հետևում եմ իրենց, նրանք ավելի եյին աշխատում ինձ զրգռել: Ինձ տրաքացնելու համար տեսնում եմ մի ձող ննկեցին կտուրի վրա ու ու նրա ծայրին մի մեծ, կարմիր խնձոր ցցեցին:

Նայում եյի խնձորին ու կատաղում, իսկ նրանք էլ յերեքով իրենց ծաղրական ածականներով, ծամածռություններով մյուս կողմից եյին սիրտս դաղում: Վերջն էլ՝ կարծես այդ բոլորը քիչ եր,— հանկարծ վերեվից դլխիս հող թափեցին:

Բաժակն արդեն լցվել եր: Պետի վրեժ առնելի, ինչ էլ լիներ:

Կռվին սկսվեց:

Պետք է տեսնեյիք թե ինչ ճարպիկությամբ մեկ մեկու յետևվից նետում եյի քարեր դեպի կտուրը: Իմ քարեկարկուտի ահից նրանք խելոքն թաղնվեցին, բայց յես չեյի դադարում, իմ աչքի վուշը այն կարմիր խնձորն եր, վոր չդիտեմ ինչու, ամենից շատ եր ինձ զրգռում:

Սկսեցի նշանել խնձորին: Ինչքան ուժ ու չնորք ունեյի՝ բարում եյի վոր դիպցնեմ: Քարերը թռչում եյին բարձր-բարձր ու նորից ընկնում, բայց յես համառությամբ շարունակում եյի նետել: Քրտինքը պատել եր ճակատս, սիրտս ուժգին բարախում եր, բայց ո՞վ կարող եր ինձ յես դարձնել կռվից. մեջս խորը համոզում կար, վոր անպատճառ պիտի դիպցնեմ այն կարմիր խնձորին:

Իմ չուրջը հավաքվել եյին հարեվանները՝ մեծ ու փոքր, ու ամեն կողմից խրախուսում եյին, սպասելով իմ հաղթանակին:

Մեկ էլ հանկարծ... ի՞նչ ասեմ՝ դա մի հրաշք եր... խընձորն ընկավ ներքև ու վոլևորության ցնծագին մի աղմուկ բարձրացավ չորս կողմը:

— Ա՛հ, ա՛պրես, ա՛պրես— կանչեցին բոլորը:

Վրա վազեցի, վերցրի խնձորն ու անասահման ուրախության մեջ թռա դեպի մեր տունն ու փարվեցի մորս վզովը:

Նրան արդեն պատմել եյին մեր կռվի մասին. նա

*պատրաստվում եր գալ ինձ տանելու, բայց ահա յես յեկա:*

*— Բա՛լաս,—կրկնում եր նա, համբուրելով ճակատս և իր հորդառատ արցունքներով թրջելով յերեսս·— քո հերը քեզ համար հարստութիւն չի թողել· քոնն ել ես պոչատ ձեռքերն են... քա վայն ել ես կարմիր խնճորն ա...*

*Նայում եմ մորս· արցունքները ահռում են աչքերիցս... յերջանի՛կ արցունքներ... ապա դարձնում եմ հայացքս ու անուշ-անուշ նայում իմ հաղթանակին՝ կարմիր խնճորին:*

1916

## Ջ Ե Ք Յ Ա Թ Ը

Ա. յոթ յերեկո յել, ըստ սովորութեան՝ յերեխաները հավաքվել եյին Մարդարի տանը և անհամբեր սպասում եյին նրա խոստացած հեքյաթին:

Դուրսը ձյուն եր: Յերկար ճնապնդի խաղից հետո նրանք նեբա վազեցին այն ժամանակ, յերբ Մարդարն իր համեստ ընթրիքը վերջացնելով, թվկնել եր թախտին՝ ոջախի մոտ, ու քթի տակ մրմռում եր—«ննջյա՛, վարդան, անուշ քնով»...

Ոջախում ծուլը-ծուլը թչթչում եյին թաց փայտերը, լցնելով ամբյակը ծխով: Մի թևթեղյա անոթակի ճրագ, որը կախված եր սևացած անից, հազիվ եր լուսավորում սենյակն իր աղոտ լույսով ու յերեան հանում տան խղճուկ պարագաները՝ դիմացի պատի թաղեքն իր հասարակ ամանեղենով:

Մարդարի կինը յերեխաների լվացքն եր անում, լաթերը փռելով բուխարու մոտ, իսկ մայրը ծալապատիկ նստած կրակի մոտ գուլպա յեր գործում, ատեպ-ատեպ հորանջելով ու յերեսը խաչակնքելով: Յերեխաներից փոքրերը քնած եյին, իսկ յերկու տղաները խաղում եյի մեծ՝ ըրդոտ կաուվի հետ, որը ուշադրություն չդարձնելով նրանց վրա, հանգիստ մոլոում եր:

Ամեն ինչ այնտեղ տրամադրում եր մի անդորը, անյերազ քնի: Միայն յերեխաները եյին, որ պատրաստ եյին յերկար ժամերով նստել, միայն թե Մարդարը հեքյաթներ պատմեր: Ամբողջ գյուղում նրա նման հեքյաթ պատմող չկար:

***

Յեվ Մարդարն սկսում է կարծես յերազով, աչքերը փակ, կուչ աշուղի նման, սկսում է պատմել իր սիրած են մեծ հեքյաթը՝ հրեղեն թռչունի և յերեք յեղբայրների մասին: Իսկ յե-

ընկաները՝ ընձուղները դասած՝ ազատության մարտում էլին նրա ամեն մի խոսքը: Ու հնացած դուրսը ձյուն—ձմեռ եր, նրանք տեսնում էլին մոքով մարկոսյան դաշտեր ու ծաղկիններ, ջինջ յերկինք, ամրոցներ...

... Յոթը սարերի յետևում հրեղեն թռչունն և ապրում իր վոսկե վանդակում: Ու նրա շուրջը հատու, ամրակուռ պատեր են քաշած ու յերկաթե մեծ դռների մոտ ևս, դաժան վկշտանները հսկում են պլշեր ցերեկ:

Յեվ ահա յերեք յեղբայրները՝ մեկ մեկու յետևից գնում են այդ հրեղեն թռչունը վնռտելու, բայց մկան վոքը յեղբայրն և ափրապետում նրան՝ հաղթելով աժդահա վկշտաններին: Սակայն ճամբին դավաճան յեղբայրները, վորոնց նա պատռել եր վկշտաններից, խաբելով խլեցնում են նրան հոգի մեջ, ապա առնելով նրա վատասած հրեղեն թռչունը, թողնում են գնում...

***

...Հանկարծ դուռն շեմքում շունը հաչաց և վազեց դեպի վողց, մխանալով ուրիշ շներին, վորոնք հարձակվել էլին կնկվոր անցորդի վրա: Աղմուկի մեջ դրսից լսվեց մի ձայն.

— Մարդա՛ր, ա՛յ Մարդա՛ր...

— Քեզ են կանչում,— հայտնեց Մարդարի կինը վախեցած ձայնով:

Մարդարը կարծես քնից նոր արթնացած՝ հոնքերը կնճռած ականջ դրեց, ապա վոտները ձգելով տրեխների մեջ ու դվխին փախած գնելով՝ դուրս յեկավ վողց: Դուռը բաց մնաց և դրսից մի անախորժ սառնություն յեկավ:

Նա չուտով վերադարձավ այլայլված դեմքով.

— Սղեն կանչել ա,— ասաց նա և ցրտից ու հուզմունքից արթարթալով, սկսեց սմբացնել իր տրեխները:

Նա գնաց, յերեխաներն էլ նրա յետևից տխուր դուրս յեկանք վողց:

Զքացավ նրանց յերևակայության հրաշալի հեքյաթը. նրանց կծկում եր ձմռան ցուրտը, իսկ տների մութ անկյուններից չարագուշակ վոսկսումով կարծես դաժան աղայի անունն էլին տալիս, վորը կտրեց վառ հեքյաթը...

***

Բայց ինչքա՞ն այդ որվանից Մարդարը կարծես պատանձվեց, ու էլ յերբեք չլսեցին նրա հեքյաթները: Յերկար ժամանակ յե-

բեխանները չէին հասկանում, բայց ահա մի որ՝ գարնան սկզբին նրանց առաջ բացվեց սխուր գաղանիքը:

Այդ որը յեկան յերկու աստվածանալոր առնուտերի ու նրա ոգնականի հետ, յեկան նայելին մարդարի տունը, ինչ վոր պրեցին:

— Յեկել են տունը վեր պրելու, լսում էինք հարևաններից·— վոդ եր պատռտ աղաչին, չսվեց, հիմի տունը խլում են ձեռքից...

Մարդարը կանգնել եր դլխակոր, անշարժ, քարացած դեմքով:

Մեկն յերը նրա ականջին հասցավ եր յերեխաների լացը (նրանք կարծում էին, թե տանում են հորը քանատարվելու) մոտեցավ աստվածանալորին.

— Ա՛ղա, խնդրում եմ համբերեք... աշխատանք կանեմ, պարտքս կտամ...

Բայց աստվածանալորը չթողեց վոր նա իր խոսքը վերջացնի.

— Գնա քո պարտատերին խնդրիր. որենքը չի համբերում:

Նրանք դնացին, բայց դեռ յերկար լսվում եր Մարգարի մոր աղերսական լացը, նրա հուսահատ դոչերը: Սակայն դուր եր նա ծնկները թակում, ձեռքերը բարձրացնում: Մարդարի տունը խլեցին, իսկ գարնան վերջերին նա հեռացավ դյուղից:

Ահա թե ինչու աղան կանչեց նրան են մութը, ցուրտ դիշերը, ահա թե ինչու կտրվեց հյնդեն թռչունի հնքյաթը և յերբոր յեղբայրը մնաց մութը հորում...

***

Անցել են տարիներ...

Այն տեղը, ուր Մարդարի տունն եր, յերևում է վրատակների մի կույտ:

Մեկն անցած սրտի մի բեկոր հիշեցնում է, վոր այնտեղից յերբեմն ծուխ եր յելնում: Խամրանված և վտղուց նաև ջրհորը տան առաջ, իսկ նրա տեղը յերևում է կիսով չափ հողի մեջ թաղած մի քար:

Յեվ տարավա լուսինը տահում է, անցնում, խորհրդավոր տավերներ ձգելով վրատակների վրա:

Ու ծղրիդները անվերջ, կրկնում են յերգը տխուր.

*Այսաե՛ղ... այսաե՛ղ... յերբեմն... մարդիկ եյին... ապրո՛ւմ... ապրո՛ւմ...*

*Ու այս ժամերին թվում է, խաւխանված ջրհորից ձայներ են գալիս... են հեքյաթի յերբորդ յեղբայրն է, են ինքը Մարզարն է, վոր ճղնում է յելնել մութը հորից...*

*Ու այս ժամերին թվում է՝ խաւխանված ջրհորից ձայներ են ապրում, թռչելով գալիս է չորրորդ յեղբայրը. նա սլանում է ամպերից վեր իր կարմիր նժույգով, գալիս է ապատելու Մարզային իր խավար բանտից...*

1913

## ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԱՅԳԻՆ

*Կես գիշերին մոտ էր, երբ խնճույքը վերջացավ:*

*Հյուրերը յերաժիշտների ուղեկցությամբ ծանր ու բարակ պնում էին այգինների ճամբով: Յերբեմն նրանք կանգ էին առնում ուրախ բացականչերով խրախուսում յերգչին, ապա նորից հնչում էր նվագի ձայնը՝ հետզհետե մարելով տարածության մեջ:*

*Այգեպանը՝ կանգնած մեծ դռների առաջ՝ յերեսը դարձրած հյուրերի կողմը՝ մոքով մասնակցում էր հեռացող յերաժշտության: Ահա վերջին ձայներն էլ մարեցին դյուղի մեջ. լսվեց շների կարճատեվ հաչոց ու ամեն ինչ հանդստացավ: Աշունքվա առաղաստից գիշերը դարձյալ սիրեց իր ծանր լռությունը:*

*Հանկարծ այգու փոքրիկ դռնակը ճռռալով բացվեց ու այն տեղից դուրս նայեց մի գեմք՝ իր յերկար մորուքով: Վախի մի ուժեղ ապտուռ անցավ այգեպետրոչ մարմնով:*

*— Ո՞վ ես,— հարցրեց նա դողդոջուն ձայնով:*

*— Յես եմ, ապա... ուշացար, հենց խմացա հյուրերի հետ գնացիր:*

*— Ակոփ, դու յե՞ս... աչքումս ուրիշ մարդ յերեվաց:*

*— Չե, ապա, ուրիշ մարդն ասենդ ի՞նչ ե չինում:*

*Ակոփը չարունակում էր նայել այգեպանին հատուկ խորհրդավոր հայացքով, բայց տեսնելով, վոր ապան չի խոսում, գեմքը նորից ներս տարավ, դդուշությամբ փակելով դռնակը:*

*Այգեպանը հինգ տարի էր, ծառայում էր Եմինյանի մոտ, բայց ինչո՞ւ այս անգամ ուրվականի նման զարդանդ բերեց վրան: Նա այժմ ամեն ինչից վախենում էր. վչե ցանկապատներից ինչ-վոր վտխտուկներ էր լսում. թվում էր թե նրանց յետևը մարդիկ են կանգնած ու սպասում են նրան: Ու վախի տագնա-*

ալուլ նա չտալ ներս մտալ այդին, յերեվակայելով թե յեռևից մարդիկ են գալիս:

***

Տարօրինակ, մռայլ ու ամայի տպավորութիւն էր անում այժմ իր տունը, նրա լուսամուտ պատշգամբը, ուր մի վոքր առաջ հնչում էին քեֆի ուրախ բացականչները: Ներքնայի հարկի խավար, սեվ պատուհանները զարհուրելի աչքերով նայում էին անդուխտների տակից, կարծես հազարաւոր վոգիներ դարան մտած սպասում էին նրան:

Կանգ առալ տատանմունքի մեջ: Նա կուզեր հենց այդ րոպէին թողնել ու դնալ քաղաք, ազատվել այս այդուց, վորի համեն մի վայրը, համեն մի ծառը կարծես սպառնում էր նրան:

Բայց ահա լույսի շերտում նորից յերեվաց այդեպանը. նա պատվում էր սանդուխտների մոտ, վոր այն ճոխ սեղանի մնացորդներից լինքն էլ մաս առանա: Տերը վոքր ինչ հանդստացավ Ակուլին տեսնելով և խնդուքն հրավիրեց նրան.

— Ակուլ, արի վերեվ, դու էլ մի բան կեր:

Այդեպանը բարձրացավ սերոջ յեռևից ու քաշվելով մի կողմը՝ կանգնեց սեղանից հեռու, պատշգամբի ծայրին:

Տերը նստեց, ծանր թիկնելով աթոռի մեջքին: Նրա գալուկ դեմքը, նախանձոտ աչքերն արտահայտում էին ինչ-վոր ներքին հիվանդութիւն: Սծխած նիհար դեմքի վրա նշմարվում էին ժամանակից առաջ ապխտակած բեղերը:

— Ակուլ, արի նստիր, կանչեց նա, յերբ նկատեց, վոր այդեպանը հեռու կանգնած սպասում է:

Ակուլը դանդաղ, զգուշ քայլերով մոտեցավ սեղանին, նստեց աթոռի ծայրին ու սկսեց մեծ ախորժակով ուտել խորոված մնացորդները:

Տերը նախանձով դիտում էր Ակուլի առողջ ուտելը և ախտայից համեմատում իր հետ: Ահա այժմ էլ իր հիվանդութիւնը պլուխ և բարձրացրել և մռայլում է դեմքը: Ծանր, ծակող ցավն սկսում է ատամոքսից ու պորտում, անցնում է ամբողջ մարմնով: Նա կիսաբաց աչքերով նայում է՝ մեկ տեսնում է այդեպանին, մեկ կորցնում նրան. մեկ տեսնում է նրա վոտքերի մոտ մի շուն, մեկ էլ նկատում է վոր այդ նրա վտիտներն է՝ վոտքերի մոտ դրած:

Իսկ Ակոփը շարունակում էր ուտելը. մեկ-մեկ էլ աջում էր դիմին ու յերկար կենացներ խմում:

Տերը հանկարծ զարթնեց մի կենացի վրա. անդիտակցաբար՝ «վաղջ լինես», մռմնջաց ու սկսեց լուռ նայել այգեպանին, կարծես ուզում էր հիշել թե ո՞վ է նա:

***

Ակոփն արդեն կշտացած՝ վառեց էլեուխն ու սկսեց ծխել զանգատ, կարծես դիտմամբ յերկարացնելով էր բավականությունը: Ծոհարարը քնամթաթախ դեմքով հավաքեց սեղանի ամանեղենն ու տարավ ներքեվ: Ամբոյտները շարունակում էր ննջել:

— Ախա, տեղդ ննջում ես, կըմբռես,— ասաց Ակոփը:

— Քնած չեմ,— արտասանեց տերը, ապա հանեց ծխախոտի անուշահոտ պլանակները ու սկսեց ծխել, պրուցելով այգեպանի հետ:

— Յերանի քեզ, Ակոփ, ապրում ես առողջ ու հանգիստ, մեզ պես հոգսոտ ու մի ցավ չունես:

— Ը՛հ, աղա, քեզանից լինճ յերանի չի հասնիլ, ամբողջ որը մեջքս ծռած բանում եմ, աշխարհի լավ բաներից հետու. եհ, աա էլ մեր բաղդն է... Են էլ ուզիլ ե՝ մեծ կայքը մեծ ցավեր ունի: Ախա քեզ էլ հայտնի չե, վոր յես յերեսուն տարի չե աշխատում եմ ես այդտեղ, քա՛նի տեր եմ փոխել... Ինչքան բաներ են տեսել ես աչքերս... Լավ մխա ե, ուխտը տարի սրտանից առաջ հենց ես ժամանակ ես այդու տիրոջը սպասեցին...

Տերը՝ չնայած վոր լսել էր դրա մասին, բայց այսուհետ՝ այս ժամին նա ցնցվեց այդ խոսքից, ասես սպանությունը լրտես էր վերաբերում: Ու ինչպես հաճախ պատահում է, նա՝ կամենալով կարճ կտրել, վերջ տալ այդ անախորժ պատմության, վոր այժմ սարսուռ էր պղտում վրան, հենց լինքը սկսեց նպատակից, վոր այգեպանը պատմի յեղելությունը:

— Վերջը վո՞նց յեղավ, բացվե՞ց սպանությունը, թե չե:

— Բացվեց, բայց ուշ բացվեց. ուզիղն ասած՝ են սպանողն լրտեսից չեր, վոր մեղքի մեջ ընկավ՝ նրան տեղահան արին, նամուսից գցեցին...

— Ինչքան էլ նեղված լիներ, մեծի պատիվը չպետք է մոռանար. վերջացած, ասլազակ մարդ է յեղել:

— Աղա, դու վոր գլխից խմանաս, կըտեսնես վոր են մար-

դը իրան նամուսի կրակից եղելս բան արած: Եդ տղեն ես այդումն եր աչխատում.— նա իմ ոգնականն եր. մի սիրուն կնիկ ուներ՝ չարմատ յերեսով... Դու ասա, թե եղելս նչիով աղջիկը վո՞րտեղից պատահեց եդ աղքատ մարդուն:

Սրանց դարուց մի քանի չարաթ անց՝ տեսա վոր ես մեր տղի աչքը կպել ա եդ կնկանը: Առաջ ո՞վ եր տեսել, վոր նա յերկու որից ավելի նստեր ես այգում, բայց հիմի չարաթներով եր նստում: Գնում-գալիս եր, աչք ածում, լինչ բաներ ասես՝ կտոր-բեղեն թե ականջի ողեր, բերում նրա համար: Կանչում եր տուն, մթամ գործ եր տալիս, մարդուն էլ չուտ-չուտ դես դեն եր ղրկում: Եսպես որ-որի վրա անց կացավ՝ տեսնում եմ՝ ես կնիկը կակղում է, մարդն էլ տանը չի: Ծաթին դալիս է, յես էլ չեմ իմանում ի՞նչ անեմ: Մի անգամ էլ սիրտս չհամբերեց, ասի.

— Աղա, նա էլ մարդ ա... մուղայլեթ կաց. մարդ նամուսի խաթրու կյանքից ձեռք ա քաշում... բայց ո՞ւմ ես ասում.— ծիծաղեց վրես:

— Դու հեն մարդ ես,— ասաց, չես հասկանում. ա՛յ ես իմ այգին, ես էլ իմ այգեպանը: Ուրիշի տղրանքին հո ձեռք չե՞մ տալիս...

Դե ի՞նչ ասեյի. ի՞նչ ուժ ունեյի. դլուխս թաղ տվի ու տուս կացա:

Մի որ էլ տեսնեմ՝ եղ կնկա մարդը կանչեց ինձ ու հարցուփորձ արած: Բանից դուրս յեկավ, վոր դլխի է ընկել: Ցես էլ շատի ահից չեմ ու չում անելով անց կացրի՝ բանը: Բայց ես մարդը չեր հանդստանում. կրակն ընկել եր ջանը. դես եր դնում, դեն եր դնում, եղ մխքը ձեռքից բաց չեր թողնում:

Տեսա վոր բանը դժվարանում է, ասի՝ ա՛յ տղա, քանի վոր մեջդ կասկած է ընկել լավ կանես կնկանդ առնես, դնաս քո դեղը: Նա էլ վերջիվերջո հոժարվեց. մկայն վող ուներ ատանալի, աղեն էլ եստեղ չեր, ասաց՝ վոր գա՝ հաչխվա վառնեմ, կըքոչեմ եստեղից:

Աղեն վոր յեկավ, ես աղեն ուղում եր վողն առնել, բայց նա էլ դլխի եր ընկնում, վոր մխքը դնալու յե՝ ինքըն էլ չեր ուղում կնկանը բաց թողնի, ձգձգում եր — եսը մեղավոր եր դցում: Իսկ կնկա հետ էլ քիչ եր մնում աշխարս սեր քաչվի: Դե, կրակը թաքցնել կլի՞... Բանն են տեղը հասավ, վոր տղեն ա-

մեն բան իմացավ: Յևկավ գարդը պատմեց ինձ՝ իրան աչքով տեսածը... Հազիվ եղ մարդուն հանդստացրի, ուշքի բերի: Ելի խորհուրդ ավի, վոր գնա եստեղից. նա էլ առանց չխոդի, առանց հաչխին առնելու վեր կացավ կնկով ու յերեխով քոչեց գնաց:

Եղ որից մի ամիս անց կացավ. յես էլ հանդստացա ասի՝ կրակից ազատվեցինք: Բայց դու մի ասիլ՝ եղ մարդը էր սըրտում մուռը պահած՝ թաքուն մեկ-մեկ գնում-գալիս ե, վոր էր մոքում վճռածն անի: Մի գիշեր էլ, յերբ մեր աղեն եստեղ քեֆ էր անում. եղ մարդը գալիս ե ու մի մութը տեղից թվանքով նչան է գնում... Ի՞նչ յերկարացնեմ. հենց եղ քեֆի ժամանակ մի գնդակ յեկավ ու մեր աղի կյանքին վերջ տվավ:

Մյուս ե՝ ես առնդուխտների վրա կանդնած թամաչա եյի անում. աղեն՝ քեֆից ծանրացած, վեր կացավ սեղանից ու որորվելով առաջ յեկավ վոր պարի՝ մեկ էլ տեսանք՝ վեր ընկավ ու չունչը փչեց:

Ակումբը նորից լցվեց չիրուխան ու ծխի մեծ-մեծ քուլաներ դուրս թողնելով, ընկղմվեց մտածմունքների մեջ:

***

Տերը լուռ էր ու անհանգիստ. ոտրտուն անցնում էր մարմնով ու կծկում. թվում էր թե կաչկանդված էր չղթանեըով և վոչ մի չարժում չի կարող անել, հարյուրավոր հրացաններ ուղղված են դեպի իրան այդու մութը խորշերից:

Ու մի գեմք նրա աչքից չեր հեռանում. անթարթ նայելով՝ համառությամբ մտածում էր ու մտածում: Յևլ ինքը նրա առաջ այնպես էր նվաստանում, վոր զգում էր՝ թե վո՛չ մի ամրություն վոչ մի որենք չի փրկել այդ դաժան հայացքից:

Դա այն մարդն էր, վոր այդ առավոտ մոտեցավ նրան վոդում ու չտեսնված համարձակությամբ պահանջեց իր աշխատավարձը:

— Յերեք ամիս է, չարչարում եք... վարձս տուր, թե չե՝ գիտեմ, թե ինչ կանեմ...

Իսկ ինքը կոպիտ մերժեց նրա աշխատավարձը, նույնիսկ դանգատվեց պրիստավին և ծեծել ավել նրան:

Յևլ այժմ նա ամեն բան կրտսեր, միայն թե հեռացներ իր մոքից այդ ապտռնացող աչքերը, վորոնք համառ ու անթարթ մտածում եյին իրան... Ու հանկարծ նա ասկումով զգաց, վոր իր վախի պատճառը հենց այդ գեմքն է...

— Հէմէ, ազա, դու տաս. ինչի՞ցն եր նէ ամենը,— չարունակեց այդեպանը.— ինչի՞ցն եր վոր են մարդը նրպես դաղարդյուն ելալ ու իր տունը քանդեց: Մի ամիս չքաշեց, բանը բացվեց. տասա՛ն են՝ իրան թշնամին եր մատնել... ինչ վոր ե՝ նէ մարդուն տարան, կտրցրին, նրա տան ծուխը կտրեցին...

— Ձերես են առել... յերես են առել,— հանկարծ միջամտեց տերը իր խեղդված ձայնով, դեմքը կնճռելով տասամոքսի ցավից:

— Չե, ազա. մեկը չի, յերկուսը չի. յես իմ աչքով շատ բան եմ տեսել ես այդտեղ... Ես աշխարհում մի ծուռ բան կա. մինչև չուղղվի, հանգստություն չի լինելու: Հերս պատմում եր, վոր ես այդու վրա անեծք կա... Ասում են՝ մի ժամանակ սրա հողը ժողովրդինն է յեղել. մի որ իրանը դուրս է գալիս պրոցեսը, տեսնում է ու շատ հավանում է եստեղը: Կանչում է իրան մարդկանց ու հրամայում տալիս՝ թե չորս կողմը պատեցեք ու ինձ համար այդի չլինեցեք: Ժողովուրդը տեսնում է, վոր բանը եղպես է՝ կռիվ է գցում. մեջը արյուն է թափվում. բայց իրանն իրանին անում է, ու-մինչև անդամ հողը ժողովրդին վարել է տալիս: Ասում են՝ վոր հենց եղ դիշերը մի հալվոր մարդ ես այդու չորս կողմը պատռտում է ու անիծում.— ասում է՝ «վո՛չ ուտեք, վո՛չ մարսեք»... Ու են որվանից դես ես այդին հանգստություն չունի...

***

Տերը հանկարծ դարձնեց ցնցումից: Նա ննջել եր ու յերազով լսել:

Նրան թվում եր, թե գնում է մի նեղ ճամբով, վորի յերկու կողմից փշե ցանկապատներ եյին, վորոնք քանի գնում, մոտենում եյին իրար... Տազնապով առաջ եր գնում: Ահա ցանկապատերը միանում են ու սեղմում նրան... հանկարծ մի մեծ փուշ ծակում է նրա կողքը...

...Զարթնում է: Նայում է առաջը՝ այդեպանը չկա: Սարսափած վեր է կենում, անցնում է պատշգամբի ծայրը, վոր կանչի, բայց այդ րոպեին հանկարծ լսում է հրացանի պայթուն, նա զգում է վայրկենապես մի ծակոց ցավ:

— Ոչնեցի՛ք,— կանչում է հառաչած ձայնով ու վայր ընկնում:

1916

## ԱՐՅՈՒՆՈՏ ԾԱՂԻԿՆԵՐԸ

*Ամեն առավոտ, արհեստանոց գնալիս՝ ես մի քանի րոպե-յով կանգ եմ առնում մի չքնեղ տան պարտեզի առաջ ու հրճվան-քով նայում դարմանալի դույզդույն ծաղիկներին:*

*Բայց ամեն անգամ հեռանում եմ դառը մտածմունքով:*

*— Յերա՛նի ձեզ, ծաղիկներ,— ասում եմ — ձեզ այդպես քնքուշ պահում, դուրգուրում են, ձեզ նույնիսկ աչնան ցուրտ գիշերները խանրնելով ծածկում են, որ չմրսեք, իսկ ինձ, որ չի անցնում, որ չծնծեն...*

*Ես իմ վոտքիվ ուզովս այնպես եմ մտածում, որ մարդս մի ծաղիկ էլ չարժի:*

*Բայց մի աչնան առավոտ ես տեսի այդ ծաղիկները...*

*Այդ որը մի ւժրախտ որ եր ինձ համար:*

*Վարպետը հանձնել եր ինձ նորոգելու մի ղույզ կոշիկներ, իսկ ինքը գնացել էր գործերով:*

*Ես էլ ուշքս տվել եմ փողոցում խաղացող աշակերտներին ու չարունակ նրանց կողմն եմ նայում: Մեկ էլ տեսնեմ՝ մեկը ծուռ խփվեց ու ձեղքից կոշիկի կաղապարը:*

*Հենց այն պահից տում եմ այդ կաղապարները,— նրանք հիշեցնում էին ինձ մեռելի վոտքերը. շատ անգամ այդպես էլ տեսնում եմ նրանց յերազում:*

*Վարպետը վերադարձավ յերեկոյան դազազած. յերևում եր գործը, ավելի շատ քեֆը՝ չեր հաջողվել, որն էլ կորել եր:*

*Նա իսկույն լմացավ իմ դժրախտության մասին և կատա-ղած սկսեց ինձ ծեծել:*

*Մինչև այժմ էլ տարտում և անցնում մարմնովս, յերբ հի-շում եմ այդ ծեծը. կարծես նա վճռել եր մխանգամից վերջ տալ իմ գոյությանը: Նա յերկար կծեծեր ինձ, յեթե պատահմամբ*

ներս չմտներ իր ծանոթ կոշիկարարը: Երանից քաշվելով՝ վարպետը բավականացավ միայն ինձ փողոց դուրս ձգելով:

Սղի սղի լաց լինելով, քայլերս ուղղեցի դեպի վարպետանոցը: Մտածում էի, թե ինչպես միշտ՝ այս անգամ էլ նա կհանգստանա ու կմոռանա, բայց սխալվում էի:

Տուն վերադառնալուն պես նա նորից հարձակվեց և մի քանի հարված տալով, վռնդեց ինձ փողոց, գոռալով.

— Գնա՛, կորիր, էլ չերևաս, թե չե կսպանեմ...

Կանգնել էի փողոցում մոլորված, սիրտս լքվել ու ցած ճայռով հեկեկում էի:

Իսկ աշնան քամին վզովս էր, փշաքաղում մարմինս, սառը մարսկում էր, քշում ինձ:

Անցնում էի դես ու դեն ու մտածում՝ ո՞ւր գնամ, ի՛նչպես անցկացնեմ այդ յերկար, դաժան պիշերը:

Նայում էի դիմացի լուսավոր պատուհաններին ու յերանի տալիս այն տղաներին, որոնք մայրական փայփայանքով պատրուպված՝ տաք անկողիններում անուշ-անուշ քնած էին:

Իսկ իմ մա՞յրը... Նա չա՛տ հեռու յեր, դյուղում, և իսկի չեր կասկածում, թե ինչ որն է ընկել իր վորդին...

Այս պրուֆյան մեջ յես մոռացա այն չքեղ մեծ տանը: Նայելի պարտեզի կողմը և իսկույն մի մեռք անցավ պլեսովս:

Յես հիշեցի, վոր աշնան ցուրտ պիշերներըս այդ պարտեզի ծաղիկների վրա խոխրներ էլին ծածկում, վոր չմրսեն:

Հենց այդ առավոտ յես տեսել էի խոխրները:

«Ի՞նչ կլինի,— մտածում էի,— յեթե անցնեմ պարտեզը, մոտենամ այն խոխրների տակ և պատասպարվեմ ցրտից: Առավոտը շատ վաղ կհեռանամ, չեն նկատիլ ինձ, իսկ յեթե նկատեն էլ, մի՞թե չեն ներիլ, յեթե իմանան իմ դրությունը»...

Լավ նայեցի չորս կողմը, տեսա մարդ չկա, բարձրացա ցանկապատի վրայով և իջա պարտեզը:

Մոտ խոխրների տակ ու մի կերպ վոտներս կծկելով՝ պատսպարվեցի: Գետինը խոնավ էր. ծաղիկների հոտը չքմեղնում էր. որվա ցնցումները դեռ տանջում էին ինձ: Յերկար ժամանակ քուն չեր տանում, բայց վերջապես յես քնեցի և շատ խորը:

... Սոկայն իմ դարթնելը շատ դառն եր:

Յերեսդ պես պըպզի, կարծես ինչ-որ ծանր բան վրաս ընկավ:

Սուր, սանդի նման ծակծկող ցավը կրկնվեց, ու յես վեր թռա...

Հիշում եմ՝ պարծած որ եր. արևն ընկել եր վրաս ու տաքացրել: Բայց մի ակնթարթում ամեն ինչ աչքիցս ծածկեց մի հրեշավոր ստվեր՝ մեծ, մորթի վառվռտով, վորն արջի նման վազած՝ հարվածում եր ինձ:

— Շո՛ւն, ախ՛ղակ,— գոռում եր նա.— ի՞նչ կասի իմ տերը. լավ և քո գլուխը մեռնի, քան թե ես ծաղիկները վչացնան...

Ատում եր ու կուզիա հարվածներ տալիս՝ նախ վայրում, տալա ձեռներով:

Վեր կացա տեղիցս բայց նա նորից հարվածելով վայր ձգեց: Թթիցս արյուն եր կաթկթում. կիսաթմբան դրության մեջ չմնել եմի, չմտանալով թե ինչ և կատարվում:

Նորից ճիգ արի, վեր կացա և որոշելով դուրս վազել պատռեցի բաց պռնով, յեսևիցս թողնելով արյան կաթիլների հետքերը:

... Սհա այդ որվանից յես ատեցի այն չքեղ տան ծաղիկները, ու սրեն տեսնելիս թվում և ինձ, թե նրանք ալյումով են ջրվում. թվում և՝ թե են կարմիր ծաղիկները իմ արյան կաթիլներն են...

1916

## ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎԸ

Ուրվա ծանր աշխատանքից հոգնած՝ բանվոր Մինասյանը յերեկոյան նստել էր սեղանի առաջ, ու դադն առել իր մի տունական յերեխայից: Նա զգում էր մի դուրեկան հանգստություն, վոր տարածվում էր նրա ամբողջ մարմնով:

Նրա առաջ դրած էր մի բաժակ թեյ ու լոգդիր. բայց նա ինքնամոռացության մեջ թվկնել էր աթոռին և ընկղմվել անորոշ մտածմունքների մեջ: Յերեխան շարունակ վեր-վեր էր թըռչում դեպի լամպի լույսը, բայց մինչ հանդիպելով հոր ձեռքին, վորոնք բռյն պրկել էյին նրան, զարմանքով հետ էր նայում, ապա նորից սկսում իր շարժումները:

Դուրսն անձրև էր, աշունքվա բարակ ու անընդհատ անձրև: Տների խողովակներից տաղտկալի յերաժշտությամբ անվերջ թափվում էր ջուրը: Վերևի հարկից լսվում էյին խուլ ձայներ, վոր թվում էր թե գալիս էյին շատ հեռվից, մի ուրիշ աշխարհից:

Դրսից յերբեմն լսվող կառքերի ձայնը նրա առաջ պատկերացնում էր քաղաքի փողոցները, ուր լապտերները՝ խոնավության շղարշով պատած, ոգիսի նման պրսվում էյին հազվադյուտ անցորդներին: Ապա կառքերի հեռվհեռու մարվող ձայնին հետևելով, նրա յերևակայությունն անցնում էր քաղաքից դուրս՝ դեպի իրանց գյուղի մութ ու ամայի դաշտերը, տերևաթափ ծառերը, անանցանելի ցեխն ու շների վոռնոցը:

Նա տեսնում էր իր մորը, նստած մեն-մենակ իր տանը, վառարանի առաջ... Ի՞նչ է մինում այժմ այդ համառ կինը, վորին նա յերբեք չկարողացավ տեղաշարժել քաղաք: Անցյալ որը իրենց գյուղացիներից մեկն ասաց, վոր մայրը թեթև, վոտի վրա հի-

վանդ է. ո՞վ պիտի, ինչ դրութեան մեջ է... Նա յերբեք չի դալ քաղաք. նա իր դյուղի՝ իր տան հետ ամուր է կապված...

***

Դուռը բացվեց. ներս մտավ Մինասյանի կինը՝ ձեռքերը մինչև արմունկները բաց, հետը բերելով լվացքի հոտը: Նա սպիտակած, բշտած մատներով բռնել էր մի նամակ, որն արդեն ճխլվել եր ու կեղտոտվել:

— Եսոր մի դյուղացի բերավ, ասաց բարեկամ է, բայց յես չճանաչեցի:

Նա նամակը դրեց սեղանի վրա և նկատելով որ յերեխան անհանգիստ չարժումներով դեպի իրան է ձգտում, չտապով դուրս գնաց դեպի խոհանոց:

Մինասյանը վերցրեց ծրարը: Անշուշտ նամակն իր մոլից պիտի լիներ. բայց ինչո՞ւ այս անգամ հասցեն գրած է ավելի վարժ ձեռքով:

— «Սիրելի վորդի, գրում եր մայրը. քանի տարի յա, աչքս չուր կտրվեց քեզ ճամբա պահելով: Որերը համարելով ապրում եյի՝ մի յա աչքս դռանը, մի յա սպասելով, վոր հա՛ վորդիս կգա ու իմ ամայի տունը կշենացնի... Ինչ թագցնեմ քեզանից. մի յա իմ սրտի խորհուրդն են ա եղել, վոր մի որ էլ դու ընտանիքովդ պաս եսանց ապրես, քու պապերի, քու հոր ոջախն ծուխն ելի վեր անես, ու իմ սիրտն էլ փառավորվի՝ տեսնեմ աչքիս առաջ թոռներիս ու հարսիս. խակ դու յել ազատվես եղ Թանդ ու կրակ քաղաքից: Ախր էլ ինչ կյանք ա, վոր չուրն էլ փորով ես առնում:

Եհ, ի՛նչ ասեմ, վորդի, գիշեր-յերեկ մտածում եյի, ախ ու վիշ անում, առավոտները վեր եյի կենում, տանը մոխիկ տալիս. շատ անգամ սիրտս փչաքաղվում եր, յերբ տեսնում եյի մի տեղ ղերանը փռած, մի տեղ կտուրը քանդված: Ինչքան եմ ձեռքերով, մատներով, չարչարվել, վոր մեր տունը քանդվելուց ազատեմ: Յերբ ուրիշներն էլ եյին ասում, թե՛ ավելի յեր կտրվում... Հա՛յ տունդ քանդվում ա, հա՛յ մենակ մնացիր, տղեդ մոխից հանել է քեզ... Յես լսում եյի, մեջս լաց լինում, համա բերանիցս մենակ մի խոսք եր դուրս գալիս.

— Հո՛ւսով եմ, հո՛ւսով...

Բայց դե ինչ արած. իմ բախտս ուրիշ բան բերեց... Մի որ էլ, պիչերվա մեծ անձրևից հետո՝ յերբ տանից դուրս եյի գա-

լեա՝ չեմքը վոտ չեկավ, գնդանի ծերը դիպավ ուսիս ու ջարդեց. շատ չանցած՝ մնացածն էլ քանդվեց ու չես մնացի ուրիշի դատնը: Մի շարաթ ու պատիժ եմ քեզնս տանը: Տեսա, վոր հարս հալ չի, եսոր կանչեցի մեր վարժապետին, վոր ես նամակը գրի, ինչ վոր սրտումս պահած ունեմ, իմ ապիղ վորդուն իմաց անի... Ո՞վ գիտի, կարելի չա մի չէնս նամակը տեղ հասնելը, չես կենդանի չլինեմ. ու թե ես էլ իմ վերջին խոսքն ա, վորպէս, էլի սատա եմ՝ հուսով եմ, վոր դու կգաս, մեր ավերակ տունը կշինես, քու օջախի տերը կլինես:

Մնամ քեզ սիրող և քեզ կարոտ մնացած մայրդ»:

***

Մինասյանը մի չնչում կարդաց նամակը. նա գրաց, վոր մայրը մեռած է. գիտեր, վոր մեկի վերջին րոպեն կարող եր էր համառ մորը ներչնչել այդպիսի նամակ: Ու տարեներով թաղնված, անթեղված զգացումներն սկսեցին շարժվել էր մեջ: Ծերին սիրտանքը, խղճահարությունը բռնեց նրան: Նա ճղնում եր պատկերացնել մորը, բայց իզուր. կարծես գիտամտ նա ծածկում եր դեմքը, հեռանում դեպի հավիտենական լռությունը...

Դրա տեղը գալիս էին մանկական հուշերը, յերբ ինքը գյուղումն եր՝ մոր փեշի տակ: Հիշում եր՝ մի որ, աշնան վերջերին յերբ սատկի քամուց հետո լրենց տան առաջի թթենին մերկացած՝ տխուր նայում եր: Յեվ ինքը, վոր միշտ մանկական հետաքրքրությամբ հետևում եր տերևաթափին՝ վորովհետև ուզում եր անպատճառ նկատել, թե յե՞րբ կրնկնի վերջին տերևը, այս անգամ տեսավ, վոր մի հատիկ տերևն է մնացել ծառին: Ու յերբ գուշց տվավ մորը, նա ասաց.

— Տերևը վորպիսի ա, ծառն էլ մերը. եդ մեկ տերևը շատ ա սիրում մորը, չի ուզում բաժանվել... Դու գիտ թե ինձ շատ ես սիրում, ինձանից չես բաժանվիլ...

... Մինասյանը նորից վերցրեց նամակը, վոր մի անգամ էլ կարդա, բայց յերեխան հանկարծ մի ճիչ արձակեց ու ճանկելով նամակը, վայր դցեց ներքև, սեղանի տակը:

«Վերջին տերևը... անցավ նրա մտքով,— վերջին տերևն էլ ընկավ»...

Յեվ արցունքի յերկու կաթիլներ հանդարտ սահեցին նրա աչքերից...

1916

## ԱՆՑՅԱԼԻ ՆԻՐՀԸ

*Գաղաթի բազմամարդ շուկայի ամենից մի անկյունում նստած և ծեր գեներալը:*

*Նստած և նա մի խարխուլ աթոռի վրա ու հենված գա-ղան նեղհոտ և անշարժ, վորպես մի արձան:*

*Նրա լայն, խորշոմած դեմքն իր յերկճյուղ սպիտակ մորուքով ու ծխախոտից դեղնած յերկար բեղերով՝ քանդակված է այն հին, անցած վոճով: Նրա խիտ հոնքերի մեջ խոր ակոսված կընճռները, վոր յերբեմն հրամայողին տալիս եյին խրոխտ արտահայտություն, այժմ եյ վոչ վոքի վրա չեն ազդում, վորպես հնացած, չատ սովոր դեմքերը, վորոնցից յերեխաներն եյ չեն վախենում:*

*Իր գինվորական խունացած գլխարկը, վորի ճակատին դեռ նշմարվում էր հանած կոկարդի տեղը, իր վերարկուն,— նույնպես խունացած, և վարյուն մեծաղյա կոճակները սեվերի վոխած՝ պատմում են անցյալի մասին...*

*Աջկը վոտած մի քանի հնադուն գրքերն ու թղթերը նա կարծես չէ ծախում, այլ մխայն հակում է, վոր նրանք չշարժվեն տեղից:*

*Անցյալ դարու պատերազմների պատմություններ, մի գինվորական դասագիրք, հնադուն թվաբանություն, մի կապոց անկապ գրքեր,— գինվորական կանոնադրությունների մասին, մի կեղտոտ, վրված աստվածաշունչ, և վերջապես, վոմփուչտնեերից չինված մի սեղանի զարդարանք — ահա այդ եր նա չուկա բերել ծախելու:*

*Շարաթներով նստած է նա, անշարժ, և սակայն եր բերած գրքերը մնում են գրենց տեղերում, և նայողին թվում է՝ թե նրանց տերը ցանկություն եյ չունի վոչ ծախելու և վոչ էլ-*

խոսելու, այլ միայն ննջելու, խոր ու հավիտյան ննջելու...

Յեվ կարծես ամեն անցնող ակոսում և իսանդարել այս ներդաշնակ, արձանացած լուսթյունը:

Ահա մոտենում և մի պատանի կին, բայց և անում աստվածանչունչը, ապա վերցնում դիրքը և մոտ բերելով ծերունուն, հարցնում է.

— Պապի, ի՞նչ արժե քո սուրբ դիրքը:

Պապը չի պատասխանում:

Կինը նորից կանչում է:

Ծերունին բայց և անում աչքերը, անթարթ նայում կնոջը, կարծես ուզենալով հիշել, թե ո՞րտեղ է ինքը և ի՞նչ է անում, ապա նկատելով իրան մոտ բերած դիրքը, սկսում է մտաբերել թե ի՛նչ արժե նա:

— Հարյուր հազար,— լսվում է նրա խռպոտ, մաշված ձայնը:

Կինը՝ առնելով վախենալով այդ տարօրինակ ուրվականի ձայնից, պատկառանքով վայր է դնում դիրքը և լուռ հեռանում:

Նորից նկրհում է ծերունին ու նրա հետ կարծես նկրհում են իր ծախու բերած իրերը:

Ապա մոտենում է նրան հնամաշած թուրքը, վերցնում է անկապ դրքերի կապոցն ու բարձր ձայնով կանչում.

— Ե՛յ, թալարիշչ, ո՞նց ես ծախում դիրքը:

Ծերունին բարձր ձայնից նորից զարթնում է և զարմացած նայում է թուրքին, կարծես ուզենալով իմանալ, թե ի՞նչ կապ կա իր և այդ մարդու մեջ, ապա վերջապես նկատելով բարձրացրած դրքերի կապոցը, ձեռքով ծանր ու զանգատ նշան է անում, թե չի ծախում:

Նա արդեն մի քանի անգամ փորձել է և դիտե, որ այդպիսի թուրքերը քաշով են առնում և դին չեն տալիս:

Փողոցով անցնում է կարմիր բանակի մի վաշտ, խրոխտ քայլերնագլխանոցով նվագով: Գնդերգալը ցնցվում է, զարթնում, ապա ձայնի հեռանալուն պես, ննջում է նորից...

... Նկրհում է ծեր գնդերգալը, անխռով ու անշարժ, որպես մի արձան, նկրհում են նրա հետ և իր շուկա բերած իրերը...

1922

# Ա Ն Ց Վ Ո Ր Ը

*Բալաքի ամենավաղ վոտքով՝ յերբեմն այնքան սովոր և այժմ անչափ խորթացած՝ անցնում է նախկին Հարուստ Ազատյանը:*

*Մի ժամանակ նա թեթև սլանում էր ավտոյով, կառքով, իսկ այժմ անցնում և հազիվ վոտները քարշ տալով, ասես ամեն լինչ հետ և մղում նրան, ամեն լինչ վշերի նման կառչում և չորերից:*

*Յերբեմնի դեր մարմինն իր ազդեցիկ, հաստ վորով, այժմ նեղս և ընկել, նիհարել: Ու րոպե յերկծալ կաշիները, վոր նրա կարողության ուժին եյին նեղչնչում՝ այժմ դատարկ կախ են ընկել ու չարժվում են, վորպես ավելորդ լաթեր:*

*Մի ժամանակ յերես բժշկով պահված այդ մարմինն այժմ բնության կամքին հանձնած՝ թանչում և, հետևում խարխուլ կառքի նման:*

*Ծանր շունչը էլ հնազանդվում, խեղդում և նրան, չրակտած աչքերն այրվում են ու ականջները թշշում անհանդիստ ժխորով. շուրջն ասես բոլոր ձայները կանչում են մխաբերան.*

*— Անցի՛ր... անցի՛ր...*

*Ձեռքին բռնած մի կեղտոտ տոպրակ՝ մեջը մի կտոր հաց, գնում է նա ու անիծում ես աշխարհը— վոր դարձել և նրա համար մութ գերեզման:*

*Վողջը անցյալում՝ վորին տէրում եր վորպես իշխան, նա կուզեր չքացած լինել այդ անցյալի հետ...*

*Բայց ի՛նչ... նա ապրում և տակավին, կենդանի յե ու կարծես մեռած, չրջում և վորպես ուրվական:*

*Փողոցի անկյունում, իր նախկին պալատի առաջ նա կանգ և առնում վոքր լինչ շունչ քաշելու:*

Ո՞վ է այս վոլոցի անկյունում իր տունը նորոգում: Անշուշտ խելագարը և նա, վոր չինում է, նորոգում...

— Հը, ես՞ա ճանաչում, յես Արշակին եմ, ես տունը չինողը:

— Արշա՞կը... վո՞ր Արշակը:

— Ես տունը չինողը: Մխոթ ա՞, վոր ինձ խոստացար, ասիր տունը վերջացնելուց հետո մի ձեռք չոր կտամ... Խոստացար ու վերջը չտվիր: Ը՛հ, հիմի տունը մնաց իր չինողներին...

— Արշակ, դո՞ւ ես, ո՞ւմ համար ես չինում... Թա՛րմ տուր: Ե՛հ, ինձ համար չինելը ես պարտաը, բայց ո՞ւմ ձեռն ընկավել, ի՛նչ որին հասա յես...

— Հա՛, ասեցի, էմ ասա՞ց... տունը մնաց իր չինողներին...

— Ը՛հ, մի՛ նորոգիր. Թող քանդվի, կործանվի ամեն ինչ... Ատամ ե ու չատպում հետանալ այս անհյուրընկալ վայրից, ուր ամեն մի հիշողություն վշի նման ծակում է նրա սիրտը:

Իսկ Արշակը՝ բարձր չվացնելով չարունակում էր իր գործը:

... Անցնում է նախկին տերը, հարվել վոռնելը քարշ տալով, դնում է ու անիծում ես աշխարհը, վոր պարծել է նրա համար մուքը դերելման:

Ու վոլոցի անհանդիստ ժխորը մխրճվում է, կանչում է նրա ականջին.

— «Անցի՛ր... անցի՛ր»...

1916

## ԽԱԼԻՉԱՅԻ ՅԵՐԳԸ

*Ամեն որ՝ այն բանուկ փողոցում անցորդները լսում էին Մահմեդի ձայնը՝ նրա սրամաշուկ խալիչայի յերգը:*

*Յերգին ձայնակցում էր վոխտ մի սազ, վոր Մահմեդի մատների տակ հառաչում էր խուլ ու ճնշված նվագով: Ձայնակցում էր Մահմեդին և իր փոքրիկ տղան, վոր ֆեսը վոտքած ճուտիկի նման կծվլել էր ու մեխվել դեռնեին, արձանացել իր հողապուշի դեմքով... Նա ոտրվելով յերգում էր, ակամա, կրկնելով հոր խոսքերը:*

*— Հե՛յ խալիչա, խալիչա...*

*Յերգում էր Մահմեդը, դիմում անցորդներին առավոտից մինչև յերեկո: Նրա դեմքը քամուց ու փոչուց ծեծված՝ դղրդված մորուքով տանս այրվում, հանգչում էր անընդհատ: Հարյուր տեղից պատռտված մի ձորձ վրան՝ թաղիքե մաչված թաոտկը ղլխին, նա իր սիրտն էր բացում քաղաքի առաջ, վոր սովի մեջ դալարվող ընտանիքը պահի:*

*Անցնում էր աշխատավորը, լսում յերգը, րոպեապես կանդ էր առնում, հիշում այն որերը, յերբ Մահմեդի աչքերը տեսնում էին արևի լույսը, յերբ նրա յերեխան խաղում էր, վազվզում...*

*Մտաբերում, ձգում էր իր պղնձե լուման, ախուր մտածում հարվածող բախտի մասին՝ վոր իրեն էլ ու գուցե ապատում Մահմեդի սև որը...*

*Մոտենում էր յերբեմնի նաև կուշտ, յեղակալած վաճառականը չատպոլ ձգում յերդչին մի մաշված չահի ու խնդրում ալ-չահից, վոր հետու պահի իրեն կուլը Մահմեդի դամաթից...*

***

*Յերեք տարի առաջ էր, յերբ Մահմեդը՝ ամեն առավոտ, դեռ լույսը չբացված՝ չալակում էր իր տղային ու չտապում դե-*

ալէ քաղաքի ծայրը՝ խալիչայի արհեստանոցը: Փողոցում նա պատահում էր իր նամաններին: Ստուկինների շարանն անցնում էր մթում խարխափելով՝ վոտաբորիկ, պատռոտած շորերով, ծանր դլուխներով ու քաղցած փորերով: Շատերը Մահմեդի պես՝ վոսկրացավով հիվանդ յերեխաներին չալակած՝ տանում էին լրենց ոդնելու, վոր վոքը լինչ ավելի առատան: Անիծում էին ու դնում.—լինչ վոր առանում էին, հացի վոտ էլ չեր դառնում. դնում էին մեռնելու՝—ապրելու համար...

Քաղաքի ծայրին՝ խոնավ, կիսաավեր պարրատում լույսը բացվելուն պես սկսվում էր տաժանակիր դործը: Ամենքը բըռնում էին լրենց տեղերը՝ դաղդահների մոտ և Մահմեդը՝ նկարն առաջին, իր անուշ ձայնով յերդում, թելադրում էր թե վո՞ր թելը վորին կցեն: Բանվորները խառը-խառը կրկնում էին նրա յերդը.

— Կարմիր թելը կանաչին,
Կարմիր թելը կապույտին...

Կրկնում էին ու չը՛րխկ... չը՛րխկ, չարժում դաղդահները ու նախշուն թելերը չարում խալիչայի մեջ:

Ամեն կեսորին՝ նամազից հետո, դալիս էր արհեստանոցի տերը, լուռ ընդունում իր ստուկինների խոնարհ բարևները: Նա խեթ հայացքով չափում էր իր մորուքը, ու դիշատիչ դեմքով դիտում էր հերթական գոհին. վորին պետի հայհոյի և ապտակա, վորին ծեծի ու վռնդի՝ նրա տեղը մի ուրիշ՝ ավելի արժան բանվոր դնելու համար:

Նա ամեն լինչ դիտե, նուշնիկ ճանճերի չարժումը: Արհեստանոցի պահապան Ալին, վորին «անոթի Ալի» էին կոչում, իր շիլ աչքով ամեն լինչ դիտում էր, լրտեսում. շատ անգամ նա ուխտված հետում էր ու պատմում տիրոջը:

Հավատարիմ Ալին, տկլոր ու քաղցած՝ մեկի մի կտոր անուշով էր կշտանում. այդպես էր պահելյան վաճառականի օրենքը — «պահապան շունը յերբեք չպետի կշտանա, վոր ծառայի անճնվեր ու հավատարիմ»:

***

Վոսկրացավի բուն էր խոնավ արհեստանոցը: Հիվանդ էր Մահմեդը, հիվանդ էր նրա տպան ու վոդջ արհեստանոցը: Բայց քանի վոտքի վրա կեր, քանի յերեխային կարող էր շալակով դար-

ֆլ տանել, նա հվհանդուքյուն չեր անվանում այդ, այլ աղքատություն:

Բայց մի որ ճակատագիրը նրան հարվածեց ընդմիշտ ու անդարձ:

Մի առավոտ, երբ նա՝ չալակած յերեխային, արհեստանոց էր գնում՝ տյան հանկարծ հառաչեց ու ասաց խորհրդավոր, մեծ ճայնով.

— Բա՛րա, յես քո գալական եմ. դու լինճ սերում ես, չե՛... Տա՛ր լինճ, վորի՛ր գերեզմանը, մեջը գիր... Մի՛ տանիլ լինճ են խալիչայի արհեստանոցը...

Մահմեդի ծնկները թուլացան. նա հանկարծ զգաց, վոր վյանքն իր մեջից թռավ ու ել վոչ մի հաշիվ չունի ես աշխարհում:

Չեռևյալ որը նա մենակ գնաց գործի. յերեխան արդեն վոնզացել եր և չեր կարողանում չարժել նույնիսկ ձեռները:

Ցերդում եր, թելադրում Մահմեդը, բայց ծանր գարդն իր սրտում՝ ցրված, մտազբաղ. յերբեմն նույնիսկ մոռանում եր ու «կարմիր—կապույտ թելերի» տեղ սխալ բայաթի յեր մտածում: Ա.չքերն արդեն սկսել եյին այրվել, պղտորվել. մի քանի անգամ խալիչայի նկարը խառնել եր ու թելերը չկոթել:

Իսկ տերը ամեն վոնչ գիտեր ու գնչատիչ բազեյի նման իր մաղձոտ աչքերով պտտվում եր Մահմեդի չուրջը, մորուքը չփելով:

Ու մի որ էլ նա կատաղած, վրդիրած հարձակվեց Մահմեդի վրա ու ծեծելով, թքելով դուրս չլրտեց վորդուց, լավ հիչելով իր վաչխառու հոր խրատը.

—«Մի մարդու վոր քամեցիր ու մղեցիր խպատ.,՝ դուրս չլրտիր վորդուց»:

***

Ամեն առավոտ յերեք տղերքներ՝ մահվան դատապարտվածների դավակներ ծանր անցնում են վորդուց: Փոքրիկ աղջիկը չարտասվի մնացորդներով ծածկված՝ առաջնորդում է կուրը հորը գետի չուխա: Հոր չալակին իր վոնդ տյան է, իսկ ձեռքին՝ իր սխալ սաղը: Բերում է գիրանց փոքրիկ աղջիկը, հասցնում վորդուն մի անկյուն ու ամոթխածությամբ յետ վախչում չտասով:

Հայրը տնքալով ու հառաչելով վայր է դնում տոպրակն, բարում է իր ասղն ու սկսում յերգել իր մեծ դարդը, իր «խալխանը»... յերկար ու բարակ հյուսում է, չարում իր յերգն ու ապատում անցորդնեըի վողորմությյան:

Կարմիր թելը կանաչին,
Կարմիր թելը կապույտին,
Հե՛յ, խալխա, խալխա...
Ուրիշի վոտքերը վոսկեպատրիր,
Յերեխա վոտքերը տարար,
Հե՛յ, խալխա, խալխա...

Զարնը մղկտում է, ալլվում, պատեըը կոծում, բողոքում, ու մնում անպատման, վորպես ամեն ինչ արևելյան են քաղաքում..

1924

---

## ԱՐԾԱՔԻ ՏԱԿ

*Ա. Ժպտաց, վիթխարի այդ մարդն անչուչա իրանի մեծ հերոսների ժառանգներից էր: Բարձրահասակ, լայնաթիկունք, խոշոր, դեմքով՝ թանձր, խոհեմ մորուքի ու խիտ սև հոնքերի չրջանակի մեջ: Կապտավուն աչքերում նախնական, անկեղծ ու հավատ ներշնչող մի վայել կար, և միաժամանակ՝ անվախ ու անչար հայացք,— մի մարտահրավեր կյանքի բոլոր արհավիրքներին:*

*Սակայն գինք ու զրահի տեղ նրա վրա կար միայն մի մեծ վահան:*

*Մշակ էր Հասանը, բնեռակիր մշակ, բայց ծանրաբեռնների հետ նա կարծես խաղ էր անում: Ապրանքների ծանր հակերն ուսին՝ վազում էր, թռչում:*

*Բայց ո՞ր չար աչքը նրան դիպավ, ո՞ր աստանան նրա մեջ մտավ ու ամերից են ար-մարմինը:*

*Մի որ աստվածոյց կեսին նա անընդհատ ապրանք կրեց, ցցից կենդրոպական մեծ պահեստն ու կերբ քստնքի մեջ լողում էր, մի քանի կնիկ, «սաթլջամ» բերավ նրա վրա ու անկոպեր ձգեց մի ամբողջ ամիս:*

*Նրա մեկ թմբիկը մայր բնությունն էր, վորն այդպես տենդի մեջ կյանքի թելն էր պահպանում:*

*Յերբ նա ուշքի կենավ, առաջին ձայնը վոր լսեց, էր կնոջ հառաչանքն էր ու չորս կերեխաների ճիչը.*

*— Բարա, հա՛ց...*

*Այդ ճիչը սուր ասեղներով ծակծկեց նրան, ու դեռ տակավին չամոքված, նա վեր կացավ, մեջքին դրեց էր վահանը և պարվելով դիմեց էր ծանոթ շուկան:*

*Այնքան թուլացել էր, վոր վահանն իսկ ծիվում էր նրան*

արճճից չինած: Տաքսիթյան ալիքները չորսում էին մարմնի մեջ, քաշում դեպի անկողին. շունչը ծանր եր, գլուխը պտտում էր, կարծես անդունդի վրա օդապարիս լիներ:

Ահա կանգնել է Հասանը էն խանութի առաջ, որի համար քա՛նի-քա՛նի ծանր հայհոյ ու տարել է բերել տեանում է նորից էն քար-արճանի նման անշարժ նստած վաճառականին, որը դայլան է քաշում: Ներս է մտնում, գլուխը թևքերով բարև է տալիս, բայց վաճառականն իր դաժան, արհամարհող դեմքով չի ուզում նկատել նրան:

Նորից բարեվում է Հասանը նվագած ձայնով ու ապատում: վաճառականը բավական ժամանակից հետո բարևհաճում է ու նշան անում գործակատարին.

— Տարեք էն արծաթ փողը անգլիական բանկը:

Հասանը խոնարհ ուղի պես վրան է տանում արծաթե դոռոններով էլ պարկերն ու առաջ չարժվում:

Վա՛յ են չարժվելուն. ամեն քայլափոխին աչքերին պնծեր են վայրում. դողում է, կարծելով թե վայր է ընկնում:

Իակ Տալիբյան արևն այրում է, խայթում, և համառորեն հետևում նրան, կարծես մտնում նրա մարմնի խորքերը:

Մի տեղ նա կանգ առավ. հենվեց քանդված պատին. ի՛նչ-պես է վար վայր չընկավ. մի գերմարդկային հիշ նրանց պատից. ի՞նչ մեծ ցանկություն եր գալիս մեջը,— թափել անբժված արծաթե փողերն ու փախել գնացին, թեկուզ Տալիբյան՝ հանդիսատեսներ էս չարքաշ կյանքից:

«Ե՛հ, թեկուզ մեռնես՝ — պիտի տեղ հասցնես... գոնաթ է, գոնաթ... Այսպես չի՞ ասել խնատուն Ֆերդուսին.—

«Մի որ մարդն է փայտին վրա, մյուս որը փայտը՝ մարդու վրա»...

Կարելի չե մի որ էլ բաղդը Հասանին կժպտա...

Ատում են՝ ծոմի են կոդմը մեզ նման չի. ենթակ քրստոնեության էշխանությունն է... Հավատում բո՞ղ է... ո՞ւր է թե գոն. աչքերս չուր կտրվեց...

Նորից չարժվում է գանդաղ, յերերուն: Ահա անգլիական բանկը. բայց վո՛ւքան հեռու չե թվում:

Ո՛, յերբեք իր կյանքում նա այսպիսի ստվար ճիգ չի արել...

Աչքերը մթնում են. նա չգիտե, յերազո՞ւմ է, թե՞ արթուն

շարժվում է, բայց թվում է, թե ինքը չի այլ անում, այլ մի ուժ մղում է իրեն:

Մոտենում է բանկին: Ես առնդուխքներն ինչո՞ւ չեն այրքան բարձր:

Հասանը մի վերջին ճիպ է անում, մոտենում է բանկի առնդուխքներին, բայց առաջին աստիճանի վրա վատքը դնելուն պես վայր է ընկնում...

Արծաթը դնդում է ու լռում. մի խոր Հասաչ է բխում Հասանի կրծքից, վերջին հառաչը... Այլևս և հասում նրա բերանից ու նեղկում առնդուխքի չիկացած աստիճաններըը:

Լուռ ու անտարբեր նայում է բանկը. լուռ ու արհամարհող հայացքով անցնում է Հանճախտը վաճառականին իր քարացած պեմքով. չի չառպում նույնիսկ բանկի պահապանը:

Ընկած եր Հասանը, վորպես մի պոհ մեհյանի առաջ: Նրա չրթունքների վրա պայրուքի անեծքն և դրոշմվել՝ իր միակ ժառանգությունը, վոր նա թողնում եր քաղցած յերեխաներին:

Իսկ են բարձր մինարեյից կրոնավորն իր պել ձայնով կեսգիշեր ազանն եր կանչում, կարծես առում եր ընկած Հասանին:

— «Այսպե՛ս և... այսպե՛ս և...որենքը յերկնքի և յերկրի»...

1924

# ՀԻՆ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

— Գնե՛ք ես պատի ժամացույցը... լավն է, կծառայի ձեզ յեփկար, անխաափան... Տեսե՛ք, ինչ պլնդ փայտից է... Գուցե կուզեք պահարա՞նը...

Առաջ եր պատահել կլինը չուկայի անկյունում, ցույց տարով հին, փորը դուրս ընկած պահարանն ու նրա վրա դրած ժամացույցը: Նրա դեմքը, բազմաթիվ կնճիռներով ակոսված է. նա աղեբատանքով նայում է ամեն անցնողի ու խոնարհ, հնազանդ աչքերով սպասում պատահականի:

Սակայն անցորդները աչքի տակով նայում են այդ տարորինակ, հին իրերին և վազ մի կաս չդդալով նրանց հետ՝ հեռանում են՝ մեկը ժպտալով, մյուսն ուսերը վեր քաշելով:

Ձիշտ վոր տարորինակ ժամացույց է: Նա այնքան հազվադյուտ է, վոր այժմ ել ընկեր չունի: Կլոմամոնադուն, տեղ-տեղ մաշված ու դեղնած, ներքևը լայն, տաս ծալապատիկ նստած բուդդայական կուռք լինի, նույնիսկ աչքեր ել ունի, վորոնց տեղ բանալիների անցքերն են ծառայում. մեռած աչքեր, վորոնք նայում են քարացած հայացքով: Համեստ, նիհարած թվանշանների շրջանակի վրայով պտտում են վախկոտ սլաքները, տաս ամաչելով իրենց չարժումից: Իսկ ճոճանակը՝ — լայն պղնձե այդ տարուկը, ծանր հետևով անցնում է աջից ձախ, ձախից աջ, ու ամեն անգամ հասնելով մինչև՝ տաս պատռնի անքուն է մի հին ցավից ու նորից չարունակում իր ճամբան, միալար ու տաղտուկ:

— Չը՛կ... չը՛կ... չը՛կ...

Ու այս հին իրերին ներողամիտ և պատռվի պղեստը: Նրա ու չորեքն ու դվնատիկը հազնում եյին տարիներ առաջ, իսկ այժմ նրանք հնաոճյուն են, թեպետև խնամքով պահված:

— Գնե՛ք ես ժամացույցը,— կանչում և պատռվ կինը,— իսկ յեթե կուզեք, այս սլրոմն ել կծախեմ շատ պեղեցիկ և... լավ հիշատակ... Եհ, չեյլ ծախել բայց ի՛նչ արած...

Սակայն անցորդները դարձյալ չեն դնում վազ մի բան: Պատռվը բոլեսպես լռում է և բայց և անում սլրոմը: Պատահմամբ

նա թողել է մեջը ամուսնու պատկերը... Ահա և նա,— որքան-ևէր մորուքով ու բեխերով, ակնոցավոր, խոժոռած դեմքով մեծ մարդ, որ մի քանի տարի է ապրում ամենքին, նույնիսկ էր կնոջ վրա, մանավանդ յերբ հագնում էր իր վայրկան կոճակներով՝ մարմնին սլինդ կպած համազգեստը:

Կինը նայում էր պատկերին ու բոլորովին այլոնում մոքով դեպի անդարձ անցյալը, տեսնում է մի ընտանիք, ուր ամեն ինչ «որքնավոր» էր ու հրու հնազանդ, տեսնում է մի բուռ, ծանր կքահավորված աննյակ, սեղանի մոտ մի դաժան ամուսին, նրանից քիչ հեռու, մյուս սեղանին դասերը սերտող վախկոտ յերեխաները... լուռ-թյո՛ւն, լուռ-թյո՛ւն: Նույնիսկ հեչտակեան աաեա վախենում էր սլինդ ձայն հանել, իսկ ինքը՝ կինը, վորը փախում էր նրա չուրջը, վոտքերի ծայրերով էր մանր դալիս, վոր չդրգռի էր ամուսնուն... Այդպես էր և աղախինը, վոր հաամարյա չէր խոսում, այլ միայն կատարում էր հրամաններըը աչքերը ցած դցած:

Յեվ ժամացույցը՝ այդ հնազարյան կուռքը, իր բուն աչքերով սաեա բուռ նայում էր ու հսկանում տալիս այդ կարգ-կանոնված կյանքին: Իսկ ճոճանակը, վորպես պղնձե սորուկ՝ անցնում էր աջից ձախ, ձախից աջ և միալար ձայնում էր ու հաստատում՝

— Այդ-սե՛ս... այդ-սե՛ս...

...Կինը նայում է ամուսնու պատկերին, խորասուզվում անցյալի մեջ ու մոռանում, թե վո՞րտեղ է ինքը և ի՞նչ է անում:

Նրա մոտով անցնում են բարձր քրքիջով մի խումբ դպրոցականներ,— սլուռնելներ. կինը սթափվում է, վախենում, տպա նորից սկսում.

— Գնեք ես ժամացույցը. շա՞տ լսվեն է, տեսեք ի՞նչ ամուր է... Նա կծառայի ձեզ յերկա՛ր, անխափան...

Վոչ վոք չի մոտենում են հնազանդ, յերկու թաղավորների չըջանում անցած ժամացույցին, վոր միայն ինքը գիտե, թե ինչպես խարխուլ է իր ներսը, թե ինչպես տարիները խանգարել ու մաշել են իրեն...

Իսկ ճոճանակը պատալ-պատալ չարժվում է աջից ձախ, ձախից աջ, և հատնելով մեջտեղը, կարծես գաղտնի ոնքում է մի հին ցավից, հառաչում է ու կանչում.

— Մեռնո՛ւմ եմ... մեռ-նո՛ւմ եմ...

# ԴՈՒՇՄԱՆԻ ՅԵՐԳԸ

Ք ատաքում լուր եր տարածվել, թե բոլշևիկները տահմանի մոտ թնդանոթներ են ուղարկել և ուզում շարժվել՝ դալիս էին։ Ով եր տեսել և տուղել, վոչ վոք չի հարցնում. ամենքն իրարից լսում են ու իրար տարատիահար անում։

Շուկայում մի հարահրոց և, մի իրարանցում, ասես աշխարհի վերջն և լինել. տարատվից գլուխները կորցրած վաճառականները վազում եյին դես ու դեն՝ թակարդն ընկած միների նման։

Հանկարծ բազարի կենտրոնից հարա յեն տալիս.

— Հե՛յ, ուղղահամառները, դնալի մեծ մեչիդը...

Մի ակնթարթում, չըր՛խկ... Թրը՛խկ, վահում են խանութները ու չտապում դնալի նովրոպական մեչիդը։ Սրտեղ մուշտեչիդը պետի ազոթի, հոգում կատարի, վոր ալլահը պաշտպան կանգնի իր հավատացյալներին, վորտեղ նրանց ոչ ոք, չտեսնված պատուհասից։

Մեչիդի վազգում դորոց և ընկել անցնողներից. վաճառական, պառաֆ ու խան—ոչը պրծնելին չտապում եյին ազոթելու։ Բայց այդ ժխորի մեջ ամենից բարձր հնչում եր մուեցիկի ձայնը։ Նա իր սովորական տեղն եր՝ վազգի անկյունում, Ապամար հազուստով, մեյն մի վոքը տեղ ամոթը ծածկած, մաշված, կերված դեմքով ու կիսակուլլ աչքերով։ Մերկ մարմինը զարերում եր կիսաթեք, ձեռքերը կարկատում եյին, ու դրե, ոգետալից ձայնով նա կանչում եր, ճչում, վորպես դիվահար.

— Հե՛յ, ալլահը բոլշևիկների տունն ավերի, նրանց հոգին ու թողը կորցնի... Հե՛յ, Ալլահը նրանց ճամբեն կրակի, աչխարհս բոլոր ցավերը նրանց գլխին թափի... Հե՛յ, ալլահը...

Կանչում և մուեցիկը, նորանոր անեծքներ չարում բոլշևիկների գլխին ու ջղաձիգ մեկնում ձեռները՝ ոգտակերով վողորմություն։

Անցորդներից վաճառք սրտաճաք մոտենում էին, կարծելով թե նա մի նոր ապեռա է հազորդում, ու տեսնելով վոր նա իրանց սրտից և խոսում, մի չնչին, պղնձե դրամ էին գցում նրա առաջ:

Յերբ մեչխլը լցվեց հավատացյալներով ու փողոցը հանդարտվեց, մուրացիկին մոտեցավ մի յերիտասարդ, կաղլածոտ, խոր աչքերով յեռ ու առաջ-դեռնց ու ասաց.

— Ալի, ինչ ես եպես կսկորդդ պատռում, ինչ ես վախում բոլշևիկներից. յես աստրաԹյունից եմ գալիս և գիտեմ, վոր նրանք քրաեխներին են բոմատ անում, իսկ են մեծերին ՔՀնամի յեն... Ե՛հ, Թող վախենան վաճառականն, գառաֆ ու խանը պու ինչ ունեռ վախենալու. ինչո՞ւ յես ուրիշների տեղ անեծքներ Թափում...

— Ախա՛, յես վաղրմուԹյամբ եմ ապրում, ՔԵ վոր գան բոլշևիկները ու Թալանեն հարուստներին, ել ո՞վ կաա ինձ վարդրմուԹյուն...

— Յես ապա չեմ, յոլդաչ աաա... Չիմացա՞ր Ալի, ինչ ա՝... խեղճեն, ապքաաեն են գնում... ԹԵ հասկանաա, Ալի, ել բանները քո ապյան ձծագնների սիրտը չես յեղի...

— Յո՛լդաչ, ի՞նչ խելք և մնացել վրաս, վոր ինչ հասկանամ, ծնողս գրից որ չեմ տեսել. իսկ յերբ բախան վիճակ վերջին անգամ խրեց, ել յես վո՞չինչ չեմ հասկանում... յես մենակ յերկու ձեռք եմ տեսնում ես աշխարհում. մեկը՝ վոր վաղրմուԹյուն ե տալիս, մյուսը՝ ես իմ չար ձեռքը, վոր վերցնում ե... Ե՛հ, մի ժամանակ, պատանին ել պրուչատվես, ճորան ել են կառաչած խառնի... կիսաքաղցած, քաշ ել տալիս իմ կյանքը, բայց դե ել կողքես խոսող, գարդս լսող կլեն, յերեխա կար... Հիմի վո՞ւմնից չկա իմ չուրջը... ես իմ չար գլուխն ե մնացել...

Արցունքները սկսեցին հորդառատ Թափվել Ալիի ապրված աչքերից:

— Յերբ վոր սովը չաա գառեց՝ ասի խանից մի նոր հող վերցնեմ, կսկսվի յե բանս աջողի: Գնացի մոտը, մի քարքարոտ, անպետք հող խնդրեցի ու վերկալա լջարով: Ամաչ արի, արյուն— քրտինք Թափեցի, ձեռքերիս պուտ ապա չինեցի ու ցանեցի մեծ հուսերով:

Բայց արծիվը յե՞րբ ե Թողնում հանգիստ փոքրիկ, անզոր դուչերին...

Մի որ խանը սեյր եր անում. յեվրամ ձիով, արտիս աշք

ածեց, մեծ բեխերը շոկելով, ու նախանձ խոսքը դցեց.

— Լավ ձեռք ունես, Ալի,— ասաց,— բայց ես ուզեն ինձ հարկավոր է...

— Ադա՛, ասի, լավ է եասեղ ինձ սպանես, քանց ես սրտը ձեռքից լցես, ոդմուշաղես ուտդը կտրես... ամաղ ունեմ, քրտինք ունեմ Թահած ամեն մի թեզ հոդի վրա...

Աղի թե չէ, խանը յեզի յեկամ ու փրփրեց:

— Քանի՞ դլուխ է քո դլուխը, ե՛յ, հեյվան,— լո՛նչ, խանին մոտացե՛լ ե՞ս.. յես քեզ ենպես հիշել կտամ, վոր հավխոցան չմոռանաս...

Ու դամշոլը մեն,— յերկու յերեսով յեկամ, արյունդված սրտալ ինձ:

— Ես քեզ,— ասաց,— բեհ եմ տալիս, մնացածը ժամանակին կատանաս...

Անցավ որը, պիշերն եկավ, մի բայդուշ, մութ պիշեր: Ցեկան խանի Ֆարրաշները, վոնց հոտամի՝ մոնչալով հայհոյելով ինձ քարշ տվին, կապտանեցին, ոդմուշաղես լաց ու կոծը վեր արին:

Եհ, լո՛նչ ասեմ, լո՛նչ յերկարեմ... Թակեցին, ենքան, դերեզմանի դուռը տարան... ու են որվանից, կարդաշ, լա՛վ իմացիր, մեջը կոտրած, կոնդ եմ յես: Մի չարաթից հետո՝ կնկիս արտաճաք յեղավ, մեռավ, ինձ ել վոնց մի կենդանու լեչ դուրս պցեցին մեր դյուդից... երեխեքս ել... եհ, լո՛նչ ասեմ՝ տոմածծարավ մնացին խալխի դռաներին, հիվանդացան ու քոչեցին ես աշխարհից... ոջախս ծուխը կտրվեց...

Մնացի եսկես՝ չոր դլխովս կոնդ ու անտեր, դարդերի տակ ճխլված, դաղարդյուն ու քաղցած: Հիմի, կարդաշ, տեսնում ես իմ որը· քաղաքի կեզտ ու ցեխում ճեռք եմ մեկնում ամենքին: Ցես ել վո՛չինչ չեմ հասկանում, մահ եմ կանչում, վոր չտեսնեմ ես անկրամ աշխարհը:

— Ալի, շատ սխալ ե քո պատմությունը, բայց հազար ավելի լո՛ն ե սխալ, վոր քեզ սպանողի անեծքն ես կրկնում, քո դուշմանի յեզդն ես յերդում: Թե ես բոնները հասկանաս, Ալի, քո ձեռից քաղաքի պարիսպները կշարժվեն...

Մեչերից հետո ու կենտ մարդիկ դուրս յեկան: Ցերիտասարդ նորից թափվեց կողքի նեղ փողոցում, իսկ աղեխարչ Ալին մնաց իր տեղը դնդնալիս:

— Ալա՛հ, ալա՛հ,— կանչում եր նա մեքենաբար ու մոտա-

ցել եր, ո՞ւր ես ինքը, ի՞նչ ես անում, ապրո՞ւմ ես դեռ, թե պառավում ես չհաննամի խորչերում:

Ու յերբ նորից փողոցը լցվեց ղաբռոցով, վերադարձող վաճառական, պառաֆ ու իսան գարմանքով նյին անցնում մուբացիլի մոտով: Ալին, Ալին, ո՞ւր դնաց նրա ձայնը, վոր հնչում եր այնպես պիլ, վոր հյուխթալի նպաստ ու անեծք եր թափում բոլշեվիկների գլխին:

— Ալա՛հ... ալա՛հ...՝ մրմնջում եր Ալին ու առնա-առնա մոտացվում, ինքն իրան փսխում.— Ողջ-առող... արյուն — արատ... յես վո՛չինչ չեմ հասկանում. Են ի՞նչ խաբար, ի՞նչ հրաշք եր պատահում ռուսրուհանը... Ա՛խ, յես վոչինչ չեմ հասկանում... յես չգիտեմ, վոր դուշմանիս յերկն եմ յերգում...

1925

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՎՈՏԸ

*Կաղամբը գլուխները մոռենում էին, դրավելով կայսրան աու կայսրան, ու քանի մոռենում էին այնքան ավելի էր ճեղքվում քաղաքի տրամադրությունը: Կյանքը բնվնավել էր յերկու ծայրերում. մի տեղ՝ քաղքենիների շրջանում, կաղամբների ամեն մի նահանջը բերում էր իր հետ մղձավանջ, սև պիչեր, իսկ մյուս ծայրում՝ բանտում այդ լուրերն ընդունվում էին ցնծագին խանդավառությամբ. այստեղ գալիք ապստամբությունը չսպասվում էր վարպետուհի արշալույսի հետ...*

***

*... Գիշեր էր, ցուրտ ու խավար: Բանտի կծու հոտերով լցված մթնոլորտի մեջ՝ սառը պատի վրա պատված էին բանտարկյալները: Ալոտ ու պղտոր լույսի տակ յերևում էին ցրտից կծկված մարմինների շարքերը:*

*Որվա լուրերը հուզիչ էին. կաղամբներն արդեն մոռեցել էին նախավերջին կայարանին: Վաղ առավոտից, բանտը մեղվանոցի նման բղավում էր, արձագանքելով դրսից յեկող տեղեկություններին: Այժմ էլ՝ ուշ գիշերին՝ բանտարկյալները քնած յերազում էին այդ ցնծոդ ուրախության թևերի տակ: Միայն անկյունում մի խումբ մարդիկ դեռ արթուն քչփչում էին, քննում մոտալուտ իշխանության՝ հեղկոմի կազմը, ընտրում թեկնածուներ:*

*Կես գիշերը վաղուց էր անցել, յերբ հանկարծ դրնդալեն բացվեց բանտի դուռը և մի պահուն, թավ ձայն դոչեց ձգերով.*

*Վըստա՛ա... (կանգնե՛լ).*

*Բոլորը վոտքի յեն կանգնում ցնցված, ու բոլորի մեջ խայ-*

Քող ցրտի սարսուռն հետ նետա և սպրտում մի մռայլ մխոք՝ բոլորը մտածում են՝ «յեկել են դնդակահարելու»...

Կանդնում են յերկու շարքով, ու սպասում. բոպեները դիտմամբ ձգում են ահաբեկելու համար: Բանտապետը իր յերկու պահապանների հետ նայում են, չանթում բանտարկյալներին մրնդին աչքերով:

Ապա սկսում են կարդալ ազգանուններն ձայնի կոչա, հրամայական չնչոով, ու տեղ-տեղ կանգ առնելով՝ նշաններ դնում ցուցակի մեջ:

Բանտապետը գուրս և կանչում իրեն պետած յերկու բանտարկյալներին, ապա ձեռքով նշան և անում, վորպեսզի մնացածները գրվեն իրենց տեղերը:

Յերկու պահերը չատպով հավաքում են իրերը, ու արագ շչուխով խոսում շրջապատող ընկերների հետ. «տանում են դնդակահարելու»— անցնում և շշուկը մեկից մյուսին ու իբ մահվան լրջությամբ կասեցնում խոսքերը... Սեղմում են ձեռքերը, համբուրվում խորը հրաժեշտով.

— Մնաք բարով ընկերներ, մենք էլ չենք զառնալու,— ասում են նրանք ու բաժանվում:

Հանկարծ Վալոդյան, վորն ամենափոքրն էր ընկերների մեջ, ծղրտում և հետևերիկ ճայնով.

— Դահիճնե՛ր...

Բանտապետը հետ և գառնում, կանգնում խմբված բանտարկյալների դիմաց ու մնջում, արյունոտ աչքերը չռելով.

— Ո՞վ ասաց:

Բոլորը լուռ են:

Վալոդյան ուզում և գուրս ընկնել, ասել,— «յես եմ», բայց հետևից կանգնած ընկերները քաշում են վեր, հասկացնելով, վոր լուի: Բոսեաչափ բանտապետն ու բանտարկյալներն աչքերը հառած նայում են իրար, կարծես չափելով իրար ուժերը: Բանտապետը ձեռքը դնում և ատրճանակի պատյանի վրա, ձևացնելով, թե ուզում և հանել: Կատաղի վրնջը բռնկում և բանտարկյալներին. թվում և, թե մի վոքը ցնցում և՝ ահա բոլորը կհարձակվեն ու կխեղդեն նրան:

Ու կարծես պատով այդ ահավոր բռնկումը, նա սթափվում և ու բավականանում և միայն պատասխով.

Մալչա՛ս... (լռե՛լ):

Ապա մի քանի վայրկյան էլ կանգ է առնում, և դուրս պնդում դիմելօրականի քայլերով: Բոլորը պղում են, վոր բանաստեղծը ահից սոխակած նահանջի դիմից, ու հուզված չըջապատում են Վալոդիային:

–Վալոդյա,— դիմում է ընկերներից մեկը,— մի՞թե չես հասկանում վոր սրանք մի պատճառ են վնտռում, վորպեսզի բոլորիս դնդակահարեն: Մենք չպետք է դուռ տեղը նոր պոհեր տանք. չե՞ վոր մեր ընկերները չուտով կմոնեն քաղաք...

— Ջե՛մ կարող համբերել, հասկանո՞ւմ ես, չե՛մ կարող,— աում է Վալոդյան, բռունցքները ցնցելով, ապա հենվելով պատին, յերկու ձեռքով սեղմում է դլուխը:

Քունը վախչում է բոլորից. հուզված չդները յերկար ժամանակ չեն հանդստանում: Բայց, դալիս է պահապանն ու պահանջում, վոր դնան լրենց տեղերը:

Նորից պառկում են, ու ցած ձայնով խոսում, ծխելով հատարակ կոշտ թութունը: Խոսում են լրենց յերկու ընկերների մասին... Նրանց սրտերում հնչում են վերջին հրաժեշտի խոսքերը.

— Մնա՛ք բարով ընկերներ, մենք էլ չենք դառնալու...

Գիշերն անցնում է անհանգիստ. կայարանի կողմից լսվում են չոգեկառքերի խուճապային սուլոցներ. ապա տխրում և խորհըրդավոր լռություն...

Արշալույսը վոդջունում է բանտի պատուհաններից, ապես ժպտում է հատարավոր դեմքերով...

Վաղ առավոտից բանտի դուռը բացվում է ու էլ չի կոդվում: Պահապանը ներս է մտնում ու բարևում քծնելով. նրա դաժան, պոչ դեմքին այնքան է սազում ժպիտը, վորքան ապստությունը՝ բանտին:

— Ցերեկ ուզում եք կարող եք դուրս դնալ,— առաջարկում է նա:

Բայց վոչ վոք չի դուրս դնում, չհավատալով թշնամու առաջարկին, չե՞ վոր կարող են փախչողների տեղ դնել ու դնդակահարել...

Սկսվում են այն ապատողական, մի՞ջանկյալ մոմենտները, յերբ հին ուժիմը չքանում է, բայց նորը դեռ չկա. յերբ քաղաքը կարծես պրկվում է իր իշխանությունից, իր դեմքից...

***

Զանցած մի քառորդ ժամ՝ հանկարծ վողոցով ծխծեռնակի թեւով թռչում և մի ճիավոր կարմիր բանակային ու կտրուկ կանգ առնելով բանակ առաջ՝ ներս և ընկնում պավկիը: Նրան նկատում են բանակի պատուհաններից ու դուրս թափվում: Բարձրանում և մի ցնծագին աղմուկ, մի աննկարագրելի ճիչ, վ-ը դուրս և քաշում բանակից բոլորին, բոլորին...

Դուրս են թափվում հեղեղի նման, շրջապատում կարմիր բանակային, սեղմում են ձեռքը, համբուրում են ճիուն...

Կարմիր բանակայինը՝ շշմած այս անսպասելի պաշտպում-ից ամոթխած կարմրում է, ժպտում, կարծես պարմանում, թե մի՞թե լինքը կարող եր արդքան ուրախություն պատճառել...

Մի քանի րոպեյից հետո նա հաղիվ է կարողանում ազատվել ու շարժվում է դեպի դուրս՝ իր հետ շարժելով բանակ ամբողջ բանակը: Փողոցում բոլորը կանոնավոր շարժվում են ճիավորի յետևից:

Դեմքերը պայծառացած են մի ներքին լույսով. մի րոպեյում մոռացվում են ամիսների տանջանքն ու դրկանքը. յերեկվա որբ թվում է վաղո՛ւց անցած մի անախորժ յերազ...

Մինչ ընկերները շարվում են յերթի, քաղաքից դալիս է վալտիայի քույրը, վաթսաթվում է յեղբորն ու համբուրում ուրախության արցունքներով...

—Ընկերները գնդակահարված են...Հայտնում է նա տխուր ձայնով: Լուրը տարածվում է շարքերում ու վառում ցասում.

— Սրիկանե՛ր... դահիճնե՛ր... գոչում են չորս կողմից:

Վալտիան դարձնում է յերեսը դեպի բանակն ու յերկար ձեռքերը շարժելով, ասում է արտասվախառն ձայնով:

— Մնա՛ք բարով, ընկերներ, մենք ձեզ չե՛նք մոռանա, մենք կվրեժխնդրենք ձեզ...

Իսկ բանակի չենքն այժմ կանգնած եր վորպես մի չա՛ռ հին, բորբոնած անցյալ...

Փողոցը լցվում է մարդկանցով. շարքերի ծայրը կորչում է հեռվում: Հնչում է ինտերնացիոնալը, ու հեռուհեռու ծավալվում հարյուրավոր ձայներով:

Յերթը շարժվում է...

Ալիում է խորհրդային առաջին օրը...

1932

# ԿԱՄՈՒՐՋԸ

Ամեն առավոտ, երբ մենք հավաքվում էինք յերկաթուղու պահակատան առջևակում՝ թևի շուրջը, անխուսափելի վեճ էր բռնկվում, վորը համարյա միշտ ավարտում էր կամուրջից։ Բայց պատուհանից յերևում էր կամուրջը՝ պայծառից բացված էր յերախով, վորը սպասում էր ներշնչում մեզ, կարծես մի վերջ լիներ հակա յերակի վրա։ Սպիտակ գորքերի ժառանգություն էր այդ. նրանք պայթեցրել էին կամուրջը, ու մեր նահանջում էին, հետիհետե հալվելով վարմիր բանակայիններին հետապնդումից։ Մեր վաշտը մնացել էր պահակին՝ կամուրջը պաշպանելու համար։

Քաղցկեղը ոչյուր վտքր լինչ մոայլ էր. նա լինչ վոր տեղեկություն էր սպացել։

— Այս դրությունն այլևս չի կարելի հանդուրժել,— ասաց նա, թողնելով թևն ու քայլելով առնյակում.— պետք է անհապաղ վերականգնել կամուրջը...

— Վերականգնե՞լ, ոչն էլ անհապա՞ղ.— ակնոցն ուղղելով ասաց հին ինժեները, վորին ուղարկել էին՝ կամուրջը հետապրոելու. նա ձեռքին բռնած լրագրի յերեսից աչքերը սևեռեց քաղցկեղի վրա.— կատակ է՞ք անում... այս կամուրջը վոքր լինչ կարդի բերելու համար մի ամբողջ յի հարկավոր։

— Ե՛հ, դո՛ւք, մասնագետներ միշտ սիրում եք գործը դժվարացնել...

— Համե՛ցեք, ինքներդ հետապրոեք. բայց դրա համար անհրաժեշտ է, ծանոթ լինել տեխնիկային...

Քաղցկեղը՝ կարծես չլսելով ինժեների ասածը, մի յերկու անգամ մոացրեր անցավ առնյակով ու նորից սկսեր նայել յեց վաշտապետի դեմքին։

— Ի՞նչ կասես, Յեմյան։

Վաչտապետը, դադարելով վիշտլեն Թեյ խմելուց, հանդիսատեսին ասաց.

— Գլխավորը հրամանն է. յեթե հրաման դա՝ խոտը կմեքենավարվանգնենք կամուրջը:

— Լսո՞ւմ եք, ի՞նչ և ասում.— դեմից քաղղեկը ինժեներին:

— Լսում եմ,— ասաց ինժեները.— բայց ի՞նչ և հետևում դրանից—յերկու անգամ յերկուսն տասնչորս չի կարող դառնալ...

Ու սև հացի կտորը բռնած՝ ձեռքը չարժելով, նա սկսեց բացատրել, Թե ի՞նչ տեխնիկական դժվարություններ կան գործի մեջ: Բայց նրա խոսքն ամենաստոր մոմենտին, ներս մտավ մեր ապխտպետը՝ պրոլետարական բռնատուների՝ մի խոշոր Թատ ձեռքին: Շնչատակի նայելով ինժեներին, նա բարձր ձայնով ասաստանեց իր նոր գրած «Կամուրջ» պոեմից.

Մենք կկապե՛նք կամուրջը,
կամուրջը՝ ապագայի հետ...

— Եհ, ձեզ ի՞նչ կա,—ասաց ինժեները քմծիծաղով.—դուք՝ պոեմներով կարող եք կամուրջ ձգել և ամպերի վրա:

Պոետը վերից վար չեզ նայեց ինժեներին.

— Թույլ տվեք ասել, որ դուք դեռ չեք վարակվել դեսի ձախ ասիե հոդերամնությամբ. ձեզ հարկավոր և փոքր ինչ յերկաստասարանալ, բոլշևիկանալ...

— Գուցե և պոետանա՞լ,— ալն ժամանակ ինձա՛րկե, անկարելին կլսելի կդառնա...

Քաղղեկը, կարծես ապաստելով իր հերթին, միջամտեց.

— Հեղափոխության ժամանակ անկարելի բան չկա. յես ձեզ կհիշեցնեմ մի դեպք Ֆրանսական հեղափոխության,— մի անգամ պորքերի հրամանատարը առաջապահ ջոկատի հետ չատպրում և դեպի մեծ դեսի ասիը, որի վրայով պիտի անցներ դորքը:

—Զաիե՛ք դեսի գործությունը — դիմում և նա ինժեներին.

— Չեմ կարող,— պատասխանում և նա.— գործիքները հեռուեն են մնացել:

— Պետք և չասիել անմիջապես,— ասում և հրամանատարը, ձեն քշելով գետն ի վեր:

Ինժեները տարակուսում է, ուսերը շարժում, բայց... չանցած մի քանի րոպե՝ կատարում է հրամանը...

— Ի՞նչպես— հարցրեց պոետը, հետաքրքրությամբ բռընկված:

— Նա ինքն է պատռում գործէք՝ պատռում է կարկին: Նա կանգնում է՝ ձգվում սյունի պես, ճակատին է քաշում գլխարկն ու նրա յեզրով նայում վիմացի ափին: Հետո նույն դիրքով պտտվում է ու յերեսը դարձնում իր կտրվի ափին՝ նչելով այն կետը, վորտեղ ընկնում ել իր հայացքը· ապա քայլերով չափում է մինչև նշված տեղը,— և գործը պատրաստ ել... Ձերք հրամանատարը վերադառնում է, ասում է ծիծաղելով:

— Դուք ավելի շուտ չափեցիք, քան Թե յես ապատում էլի..

— Մ՛յ հասկանում եմ — ասաց պոետը վոգևորված, այդ դեպքի մեջ Թռիչք կա, բանաստեղծություն կա...

Ինժեները վոչքր ինչ նկատած վեր կացավ տեղից·

— Ձեր կարծիքով ամեն ինչ պինդ-որական հրամանով և կատարվում՝ մե՛կ-յե՛րկու, պրծա՛վ... Վորտե՛ղ կամուրջի վերանորոգելը և վորտե՛ղ գետի լայնությունը չափելը...

— Ամեն մեկն իր կարգով— ասաց քաղցեկը·— կրկնում եմ՝ հեղափոխության ժամանակ, անկարելի բան չկա...

Ինժեները ձեռքով շարժեց ու դուրս դնաց ասելով·

— Ի՞նչ խոսեմ ձեզ հետ, այսոր բոլորդ պոետ եք դարձել...

***

Բայց մի առավոտ խոսակցությունն ընդհատվեց անակնկալ կերպով· պոետը ներս մտավ՝ ձեռքին բռնած հեռադիրն ու հանդիսավոր ձևով մատուցեց ինժեներին:

— Սա ի՞նչ յերեխայություն է— բացականչեց ինժեները, գեմքը խոժոռելով·— ինչպես Թե— «անհապաղ վերականգնել կամուրջը... վերականգնել յերկաթուղային հաղորդակցությունը... վագոն-արհեստանոցները կժամանեն վաղը ժամի 7-ին»: Սա ի՛նչ բան է,— ասում եր նա, նայելով բոլորի դեմքերին...

— Ոչդպիլի վոչինչ չեմ հասկանում,— ասաց նա հուզված ու չռած քայլերով դուրս դնաց, Թողնելով սեղանի վրա Թեյի կիսատ բաժակը:

— Իսկ յես հասկանում եմ— ասաց պոետը նրա յետևից— սա ձեր հոբելյանն է, ձեր յերեխաստղությունը...

... Անցավ մի քանի որ: Ինժեները դարձել էր լռակյաց, մռայլը, ու կարծես չարունակ ինչ որ փնտռում էր: Մենք հաղվադեպ էինք լինում նրա հետ, նա մեծ մասն անց էր կացնում գետի մյուս ափին: Տեսնում էինք, թե ինչպես նա չարունակ վառոդջի վրա կարգադրություններ է անում, հաճախ իջնում նավթի՝ բանվորների մոտ: Գետի մյուս ափին կանգնած էր մի դնացք, որն ամբողջովին վերածված էր արհեստանոցի:

Մենք անհամբեր սպասում էինք կամուրջի ավարտելուն,— բայց յերբ հանդիպելիս հարցնում էինք ինժեներին, նա ոչինչ չէր ասում:

Վերջապես մի ամսից հետո՝ առավոտը նա նեղս մոտավ ու գլխարկը վերցնելով, առաց ուրախ ձայնով:

— Սիրելի ընկերներ, կարող եք ինձ շնորհավորել. կամուրջն արդեն պատրաստ է... վաղը ձեզ ամբողջ կազմով հրավիրում եմ իմ հոբելյանին... այժմ յես կարծես քառասուն տարեկան չերևոսալու եմ...

Մենք ցնծագին բացականչերով վողջունեցինք նրան՝ ձեռքը ծոխմելով, իսկ պոետը մոտեցավ ու համբուրվեց ինժեների հետ:

Յերբ մյուս առավոտ մենք մեծ խմբով նստեցինք վագոնը, ինժեները ուրախությունից կարծես ոչինչ չէր լսում:

Շոգեկառքը սուրեց ու դնացքը չարժվեց հանդիսավոր, դանդաղ ընթացքով՝ «Ինտերնացիոնալի» նվագով:

Յերբ հասանք կամուրջի նորոգված տեղին, ու նեղքևից՝ խուճաձև ամրացրած չարմների վրայից, բանվորները վողջունեցին ուռաններով, դրոշակները ծածանելով՝ ինժեներն էլ չհամբերեց.

— Սա ուղղակի հերոսություն եր,— ասաց նա, ինքնամոռացության մեջ ու գլխարկը ձղեց գետի մեջ:

Նորից նեղքևից թնդացին ուռաները:

Իսկ պոետը բամբ ձայնով արտասանում էր իր պոեմից.

Մենք կկապե՛նք, կկապե՛նք կամուրջը,
կամուրջը՝ ապագայի հետ...

1933

## ԿՈՄՅԵՐԻՏՈՒՀԻՆ

*Մի փոքրիկ աղջիկ եր՝ տարիներ առաջ, ցնցուխները հաւաքէն, վառարանիկ, անցնում եր մոր հետ յերիկաթ վողոցով, կապտաժ մատներին չնչում, ու ապերասում հուսահատութ. խոկ հիմա տեսնե՛ս —ինչ հարվածային ընկեր է դարձել, ինչպես է քայլում հաղթական յերթով...*

*Հագել է պիոներական խալկին, մարմինը կոկիկ մեջն առել, ու դեմին ծուռ դրել կեպկին, չարաճճի դանդուրները դուրս թողել: Աչտերը թուխ ու կտրտիչ՝ աշխուժ խաղում են ժպտով, ու ոչքերը վառվռուն՝ անվախ նայում աշխարհին:*

*Վո՛րքան կոլեկտիվով հոգսեր կան թաղնված իր լոյն ճակատին, քա՛նի կոլխոզ, գործարան ու ժողով սիրուն պիտի հարվածային այս օրերին: Բայց նրա դեմքին ամպ չի նստում — միշտ պիոներ է ու կայուն՝ հարվածային այս օրերին:*

*Քայլում է բանակային քայլով. մոմոում յերգը խրոխտ. չատպում է կենսակոմ, Հոյժողկոմ... Դեռ նոր է դարձել մեծ աշխարհից, պատրաստվում է մի ուրիշի՝ դեպի կոլխոզը «Ժրաջան», դեպի ապառնի մրցանիշ:*

*Այստեղ դեկուցում ունի, դնում ԼԿՅԵՄ, կռմոմ քարտուղարի հետ, ինչ լինչոշ յե նա ձգձգում, մորը պահում ծրագիրը:*

*Քայլում է, չտեսնում դեպի ֆաղյուսալաթ, լուսժոկոմ, համբարբառուն, ու ել չեմ տեսում—քա՛նի ուրիշ տեղ. անցնում է գործից գործ, ու յերեկոյան ուշ պահին,— վառված աչտերով գուրս ե գալիս բուռն ժողովից, ու չարժվում դեպի հանդիսասը՝ դեպի մոլբերիկը կարոտ...*

*— Ախչի, հասկ ընկած ձի յե՞ս, քեզ պատահ չկա՞:*

*— Մայրիկ, ուշացել եմ, հա՞... շատ գործ ունեյի... աֆ, մոտայս տասնի հերթի կանգնեմ... լա՛վ, վոչինչ, վարը կհիշեմ...*

Պառկում է, ձգվում անկողնում, ու հոգնած մոքով կրկնում իր ճառը վերջին: Ապա քնում է խորը քնով, ու տեսնում յերազում ընդարձակ մի պաշտ, հորիզոնը՝ վառ արշալույս, ու հորս պինդ սեղմած սպիտակ աչքերը բամբակի: Արտերը լիքն են աչխուժ խոսքեր... Թարմ ձայների համերգ է լսում... Կողքին Սուրենն է ժպտում հեզնորեն, ատյմրցման բռնվում իր հետ... Ու այնպես լա՛վ է, այնպես լիքն ու սիրտը նոր կյանքով...

... Մի վոքրիկ աղջիկ իր տարիներ առաջ, ցնցոտիները հագին անցնում էր մոր հետ, կապտած մատներին չնչում ու աղերսում հուսահատուր, իսկ հիմա տեսնե՛ս—ի՛նչ հարմածային ընկեր է դարձել, ի՛նչպես է քայլում հաղթական թափով...

1931

## ԸՆԿԵՐ ՄՈՒԿՈՒՉԸ

1

Ամեն ինչ փոխվում էր, բացի Մուկուչից:

Տասը տարի էր, ինչ նա պահապան էր կաչվի գործարանում: Այդ մեջոցին պետական կարգերը չերկու անգամ հեղաշրջվել էլին, գործարանի դիմաց հինգ կառավարիչ էր անցել, բայց դժվար թե մեկն ու մեկը նկատեր Մուկուչի վրա փոքրիկ փոփոխություն: Յեվ ահա էլ հարցնելիը, այն էր տառապ, թե աչքը բաց է արել՝ տեսել Մուկուչին նույն հագուստով և նույն տեղը:

Ամեն նորեկ կառավարիչ նկատում էր Մուկուչին առաջին որը՝ գործարանն ընդունելու ժամանակ, չերբ անհրաժեշտ էր քննում այցելել նրա ամեն մի անկյունը: Յեվ ամեն անգամ ընդունելու ձևականությունները վերջացնելուց հետո նոր կառավարիչը դիմում էր Մուկուչին այս հարհրդատար խոսքերով:

— Շա՛, դու էլի շարունակիր գործդ, մինչև այդ մասին կարգադրություն կանեմ:

Սակայն այդ կարգադրությունը չեր լինում և Մուկուչը՝ վորն իսկի չեր էլ հասկանում այդ առած լիմառտը, շարունակում էր մնալ իր պաշտոնում: Այնուհետև, ինչպես կարդն է՝ նա մոտացվում էր, կամ լավ է ասել՝ չեր նկատվում. կարճ ժամանակում նորեկ մարդու աչքն այնպես էր ընտելանում, վոր Մուկուչին նայելիս թվում էր, թե նա էլ գործարանի սյուներից մեկն է, վոր պիտի մնա ընդմիշտ և անփոփոխ:

Մուկուչի արտաքինն էլ հատուկ խոսք էր տվել անփոփոխ մնալու: Նա մեջին տարիքում էր, այսինքն այն հասակում, չերբ Մուկուչի նման մարդիկ առանձնապես չերկար կանգ են առնում և տահոզ ժամանակից դուրս մնում: Նրա մատուռ, կոշտ դծված թուխ դեմքը՝ իր լայնանիստ, հիմնավոր քթով ու ան-

ինում սեմ մարուքի մեջ թաղված, փքված տեսք ուներ: Ինչի՞ց էր ուռած նրա դեմքը. քաղցածությունի՞ց, թե՞ չար ննջեցուցամելի ճիշտը՝ չիմացան էլ: Անշարժ, խոշոր աչքերի մեջ մնայն մոռնկից տեսնողը կնկատեր քարացած հոգսի ու թախծի արտահայտություն:

Ամառ–ձմեռ կըտեսնեիր Մուկուչին նույն դիրքը, վերտի դուն հաղուստի մեջ: Թեպետ նրա կիսամերկության բարոյի, դինվորական կտրվածքից էր հավաքած (վորոնք վաղուց կորցրել էին նախնական դույնի հետքն անգամ), բայց նրա տակն այնքան լաթեր էր հագած, վոր հեռվից Մուկուչը նմանում էր չարժվող պարկի: Մաշված, սև մորթե վոտիների ամբողջությունն էր կազմում մարդերի հետ, կարծես հենց դրնից բուսած լիներ:

Բայց ամենից հետաքրքրականը Մուկուչի կոշիկներն էին, վորոնց վրա արձանագրված էր կաշվի թանդության ողջ պատմությունը: Նրանց հիմքը յերբեմն կազմում էին մի դույտ ամերիկական ծանր կոշիկներ, վորոնք յերկու մարդու վոտքերից անցնելով՝ յեկել հասել էին Մուկուչին: Կարկատանների թիվն այնքան շատ էր, վոր կոշիկների հիմնական կտորն այլևս չէր նկատվում: Յեվ ինչո՞վ ասես չէին ամրացրած կարկատաններըր՝ թելերով, մեխերով, յերկաթալարերով:

Ճիշտ է՝ պետք խոստովանել, վոր ամեն վատավարիչ հենց դրծարան մտնելու առաջին որից նկատում էր այդ տարօրինակ հանգամանքը,— վոր Հնացած Մուկուչը կաշեգործարանի պահատան է, նրա կոշիկները վաղուրվ վիճակի մեջ են, ու կարպատվում էր՝ թեկուզ որենքից դուրս՝ նրան կաշի տալ կոշիկների համար: Սակայն մի քանի որից հետո Մուկուչը վտհանակում էր այդ կաշին ալյուրի հետ, ու իր հին կոշիկները շարունակում էին մնալ իրանց վատավոր դրության մեջ:

Ուղիղն ասած՝ Մուկուչն այնքան էլ չէր մտահոգվում այդ առիթով, լավ իմանալով, վոր թեկուզ նոր կոշիկները կարել տար, մեկ է, նորերը պետք մաշվեյին, ինչպես սովորաբար մաշվում է ամեն մի կոշիկ, իսկ հները՝ նա արդեն համոզված էր՝ անմաշ, հավիտենական էյին:

2

Առաջին անգամ տեսնելով Մուկուչին, կասեյիք պաղպաղակ է, բայց վոր հարցնեյիք, կասեր՝ փոքր հասակում հոր հետ պաղել է այս ինչ դյուղը, այնտեղից էլ այն ինչ դյուղը, հետո

եւ մի ուրիշ գյուղ, իսկ թե ո՞րտեղից եր սկիզբն առել այդ թախտաոսկան հայը, մնում եր մշուշի մեջ:

Սաենք Մոկուշն այնքանով եր գաղթական, որ իր ամբողջ հարստութիւնը լաթերից կազմված անկողինն եր ու մի մաշված պղինձ, յեվ նա իր ամբողջ ունեցածը կարող եր հեսը մանածել: Այս հանգամանքն եվ մտահոգութիւն չեր պատճառում Մուկուչին, քանի որ նա ապրում եր այն տարիներում, յերբ ամբողջ հայ ազգը գաղթական եր դարձել:

— Դու առա հաց լուի, թե չե մնացածը գարշուկ բան ա,— կրկնում եր նա տոլորաբար:

Իր ընտանիքը՝ կնոջն ու չորս յերեխաներին Մուկուչը տեղավորել եր գործատանից մոտիկ մի ավերակ տան մեջ. յեթե այս անասնական հյուրերը չլինեյին, այդ տունը գժվար թե մարդու յերես տեսներ: Պատշգամբի տանիքն ամբ կողմից թեքվել եր ներքև, հետո կարծես փոշմանելով՝ հետադարձել եր վերևը:

Յերեխաները՝ վորոնցից ամենամեծը յոթ տարեկան եր, ամբողջ որը կատվի ձագերի նման մլավում եյին: Մուկուչը վաղուց եր ընտելացել այդ տարօրինակ լեզվին. դա հացի լեզուն եր:

— Հա՛ց,— այդ եր միայն հնչում որ ու գիշեր Մուկուչի բնտանիքում:

Այդ եր պատճառը, վոր ամեն անգամ պետական կարգերը փոխվելիս Մուկուչին հետաքրքրողը միայն հացն եր լինում: Որական մի քանի անգամ սրան-նրան կհարցնել:

— Ուղիղ ա՞. առում են հացը պետք ա եժանանայնեն:

Ո՞վ եր ասել, վո՞րտեղ եյին ասել. յեթե կուզեք՝ գուցե վոչ վոք ել չեր ասել, այլ միայն Մուկուչի ջերմ ցանկությունն եր թելադրում այդ լուրը:

Յերբ խորհրդային իշխանության որով Մուկուչին գործատանի հացը բերող նշանակեցին, ուրախությունից նրա լսակյաց լեզուն բացվեց, հենց իմանաս հացի բոլոր վտիտն ինքը պիտի վերցներ: Ել մարդ չհնաց, վոր չասեր.

— Բանվորի հացը յես պիտի բերեմ:

Վոր իմանաք ի՛նչ յեռանդով եր կատարում նա այդ պարտականությունը... Հացի մեծ պարկին ուսին նա վոչ միայն չեր հոգնում, այլ նույնիսկ համարյա վազում եր, կարծես մեկը խաղատում եր նրա մեջքը: Այնքան զուրեկան եր հացի մոտիկու-

թյունը, նրա տաքությունը, նրա անուշ հոտը, վոր նա կուզեր միշտ կպած լինել այդ պարկին: Յերբեմն նույնիսկ յերազանքի մեջ եր ընկնում.— մոտծում եր թե հանկարծ իրան են տալիս այն մեծ հացերից մեկն ու ասում.

— Մուկուչ, առ, քեֆ արա:

Բայց վոր հացը բաժանվում եր ու պարկը պատռվկվում, նրա յերազներն էլ վախչում էլին: Այդ չափած-ճեված հացի վրայից, նրա ստամոքսը բան չեր հասկանում...

Իսկ այն օրերին, յերբ հացն ուշանում եր և Մուկուչը ստիպված եր լինում ժամերով սպասել պարենավորման բաժնում, նրա սիրտը սեվ ամպերով եր պատում. միշտ նրան թվում եր, թե ևս և՝ վկլպան ու կատեն.

— Ել հաց չկա, լինչ ուզում եք, արեք:

Բայց հետո մոռացում եր՝ չե՞ վոր բոլոր բանվորներն ու ծառայողները միասին են հաց առանում. իհարկե, յեթե միայն Մուկուչի նման խեղճերը լինեյին, բանը բուրդ կըլիներ. բայց դե վոր մեջները կան կառավարչեն ու ուրիշ «աղա մարդիկ», այդ պատճառով հացը չեն կարել...

Որվա մեջ մի քանի անգամ Մուկուչը գնում եր տուն յեվ ամեն գնալով թշուառության մեջ եյին ընկնում թե ինքը, թե իր կինը: Մուկուչի քաղցած փորը թելադրում եր նրան, թե մի գուցե կինը բանջարեղեններից կերակուր և պատրաստել, իսկ կինն ել իր կողմից կարծում եր, թե Մուկուչը մի տեղից հաց և ճարել՝ բերում և տուն:

Հիասթափումը բաց եր անում առանց այն ել պատռված հոգով բերանը. նա սկսում եր նորից դիլ ճայնով իր սովորական «հացի կռիվը».

— Գլո՛ւխ ա բերել. աչքս լի՛ս, դարդակ- դարդակ տուն ա գալիս, ել չի ասում՝ յերեխեք ունեմ...

Ջայնը հետզհետե ուժեղանում եր. Մուկուչի ականջներում սկսում եր սովորական ծղրտոցը: Ջնայած նա Սոկրատի համբերություն ուներ, բայց ելի չեր համբերում.

— Ի՞նչ ես գուռնեղ չալել... ղե հերիք ե, ելի՛... Մի ես խալխին ել մտիկ ե:

Ասում եր ու չոտապում դեպի գործարան, բայց մինչև տեղ հասնելը նրան կարծես ուղեկցում եր իր հոգի՝ ականջները ծակող յերաժշտությունը:

Ցնկել եր խորհրդային իշխանությունը, ալևիոձել, ցնցել ամենքին, վորն ուրախ եր, վորն անիծում եր մոքում՝ հարստությունից, դիրքից զրկվելու պատճառով: Մեծն Մուկուչն եր, վոր կարծես ոտար հյուր լիներ այս բոլոր անցուդարձի մեջ:

Ամենք՝ նոր իշխանության առաջին որերի խանդավառությունը, այն վոգեվորված ճառերը, չարժվող կոմիքրները Մուկուչին էլ դրավեցին.— մխոհնդնելին, ժողովներին նա էլ մի քանի անգամ մասնակցեց: Կանգնում եր ամենահետևին տեղը, լսում ճառեր. յերբեմն թվում եր, թե ամեն ինչ հասկանում է. չե՞ վոր խոսում էին եր նման խնդիրի իրավունքների մասին:

Բայց ահա անցնում եր մի քանի որ.— հացը նեղում եր Մուկուչին. նրա մոքերը չխոթվում էին, ճառերը թվում անհասկանալի, տարոր, ու նա սկսում եր նահանջել...

Հա՛ց, հա՛ց... նա կուզեր՝ բոլոր ձայները, բոլոր ճառերը հացար բերանով մի խոսք ասեին, և այդ խոսքը լիներ իրան տանջող ու սպրող հացը:

Յեվ ահա Մուկուչն մոքում էլի եր հին հարցն եր մեյն չարժվում ու ամեն խոսելիս առաջը գալիս.

— Ուզիլ ա՞. ասում են հացի վաճերը պետք ա ավելացնեն:

Ի՞վ եր ասել, ո՞ւմ եր ասել,— զարձյալ մնում եր անհայտ:

Այն մեռցած բանները, վորոնք հացից դուրս էին, այն քարոզն ու ճառերը Մուկուչը համարում եր «խոսք ու գրից»: Այդպես գրուց են անում գյուղացիք՝ կիրակի որերը կամ ձմեռվա յերեկոները, յերբ կուշտ ուտելուց հետո խոսում են հենց այնպես, քեֆի համար: Իսկ քաղքցիք, վորոնց Մուկուչը համարում եր «ազա մարդիկ», այդ գրուցը վատող էին անել ամեն ժամանակ:

Այդ «ազա մարդկանց» թվին եր դասում Մուկուչը բոլոր քաղաքի շորեր հագած ու գրի ևս ու ավելտակը ջոկող մարդկանց, վորոնց մեջ եր հաշվում և խորհրդային ծառայողներին: Ջնացած, վոր հացը և ուրիշ մթերքները, նույնպես և առճիկները իր նեղիակությամբ էին բաժանում, բայց Մուկուչը մեչա այնպես եր կարծում, թե նրանք մի ուրիշ տեղից հաց էլ՝ «ամեն բան էլ» ստանում են:

«Սովին մեղ պես խելք մարդը կըլխմանա. աղա մարդը վո՞նց կըլխմանա,— ասում էր Մուկուչն ինքն իրան»։

Դե մանկամարդությանից սկսած Մուկուչն այդպես է տեսել աշխարհս կարգերը. իսկ այդ վարագույրա բաները նրա մեջ այնպես պինդ են նստած, ինչպես են անկատրում ընկուզիները— վոնց ինչքան էլ խփես՝ էլի միջուկին չես հասնիլ։

4

Մխայն այդ չի՛. Մուկուչը շատ բան է տեսնում ու լսում. ինչքան է փոխվել աշխարհը, բարձրինը ցած է ընկել, ցածրինը՝ բարձրացել. բայց պետք է լավ իմանաք, վոր ամեն բանի վրա Մուկուչն իր հանգի՝ «մուկուչամարկ» էր նայում։

Ի՞նչ խոսք,— մտածում է նա. լավ է, վոր հիմի ամենքն իրար «հընգիր» (ընկեր) են ասում. Մուկուչը սիրում է այդ խոսքը։ բայց վնչի՞ ցի է, վոր բոլորն իրան «առանամարկ» միայն Մուկուչ են ասում։ Ամենքը մտոմն անցնելիս կանչում են.

— Մուկուչ, քեֆդ վո՞նց ա։

Ի հարկե, Մուկուչը պանդատ չունի. գործարանում ամենքը հնարք սիրով են վարվում. բայց թե վոր կարդ է՝ պատիվ է՝ թող իրեն էլ «հընկիր» ասեն. թե չե Մուկուչի սիրտը շատ է պաչտում։

«Հիմի ասում են խելճերի, բանվորների իշխանություն է. բայց դե բանվոր էլ կա՝ բանվոր էլ.— մինը հրեն «նախատահ է, մյուսը՝ քարտուղար, մինը՝ բջիջ՝ մինը տեղկոմ։ Հրեն Սեորը վո՞նց է վոտը ձգում, կատամարչի հետ հավատար է ժամ պալես, Մուկուչի վրա յել վերևից է մոլիկ անում։ Ինչի՞ Մուկուչին էլ մի տեղ «պլխաոր» չեն նշանակում. ա՛յ, թե ուզում են՝ կարգն եզպես է, վոր մի մարդ նշանակեն, դա՝ ինչպես մայրը յերեխանց հաց է բաժանում, այնպես էլ նա բաժանի՝ մեծությունն էլ, իրավունքներն էլ.— ասի՝ ես էլ քեզ. թե չե Մուկուչին բան չի հասնիլ՝ հարյուր տարի յել վոր անցնի՝ նա էլի վճռա իր ծակ վտախով։

Մի ասեք ,,տեսննք՝ ինչի՞ պրծարանի սովրիչը միշտ Մուկուչին «ցանում է».— ամեն անգամ յերբ նա նեղա է մտնում սովրելու, միշտ ասում է.

— Մուկուչ, դու լա՛վ կանես՝ քիչ հետո գաս. ես հերթը վոչ պրծնեմ, կտատամեմ...

Այդպես՝ քանի անգամ Մուկուչը գնացել է սովրիչի մոտ

ու ելի այդ խոսքերը լսելով՝ հետ է դարձել. վերջին ել խոտվել է ու ել չի գնում: Նրա մորուքը դարձել է՝ ինչպես իր ամբողջ կերպարը ծածկել է: Մուկուչը հաշվին ել է կորցրել, թե ի՞նչ ժամանակվանից է, որ նրա մորուքին ածելի ու մկրատ չի դիպել:

Մուկուչը լավ է իմանում, որ ասիրիչը չի ուզում աշխատել իր նման հատարակ մարդու համար, ու իր կոչտ մորուքի վրա ածելիները մաշել:

Բայց դե Մուկուչը հո կույր չի՞, տեսնում է՝ ինչպես այդ ժուլիկ մարդը նոր առած ածելիները փոխում է իր սեփական հների հետ: Գողանում է դոմնոցի ու կերեսպրիչի համար աված կտորներից, այն ել՝ ես «Քանդ ու կրակ» ժամանակը: Մուկուչն իմանում է, որ այդ պոռչը–կտրած «փուչ» մարդը խորհրդային ասիրիչ է դառել, որ իր սեփական գործերը «դրսում», սարքը գողանա ու հետո իր համար չոկ արհեստանոց բաց անի:

Այդ բոլորը Մուկուչը դիտե, բայց չի ուզում վատամարդի լինել. իսկ տեթե դատաստանն էրեն ասի՝ ինչը գիտե, թե ինչ կանի այդ անէրամիլին:

...Ձիշտ որ՝ ամեն ինչ փոխվում եր, բայլ Մուկուչից...

## 5

Այս ել Մուկուչի բախտեցն եր:

Ցնդել և մի նոր կառավարիչ՝ մի համառ մարդ, կարճահասակ, նիհար, ակնոցներն աչքերին: Նախկին կառավարիչներին հակառակ՝ նա վոչ մխայն միշտ նկատում է Մուկուչին, այլև համարյա ամեն որ նկատողություն է անում նրան: Շարունակ դեսու դեն է վազում. մտնում, նայում է գործարանի բոլոր անկյուններն: Թե ինչ եր նրա մխքը, Մուկուչը չեր հասկանում: Նա չգիտեր ու չեր ինանում ի՞նչպես չարժվի, որ կառավարչին դուր գա: Մի ամսվա վրա Մուկուչի հույսն արդեն կտրվել եր՝ նա արդեն եր մտածում, թե կառավարիչը վճռել եր իրեն հեռացնել և մխայն մի պատճառ եր փնտռում:

Սակայն այս ծանր բեռն ել կրտաներ Մուկուչի համբերատար մեջքը, տեթե մի դեպք չպատահեր, որը նրան տակնուվրա արած.— մի առավոտ լսացվեց, որ գործարանի պահեստից մի մեծ կտոր կաշի չեն գողացել:

Ել ի՞նչ հարցնենք Մուկուչից.— Որտեղ քա՞նի անգամ նըրան հարցուփորձ եր անում կառավարիչը, հետո միլիցիա էլին տանում, էլի խոստացնում: Ու ամեն ազամ Մուկուչը մի պլուխ էն է լսում կառավարչից, թե՝

— Պահապան ես, ուրեմն մեղավոր ես:

Մուկուչը յե՛րկինք, դե՛մինք է անում, թե այդ պղտոքյանը անեկդոտ չի, բայց ինչպես նկատում եր՝ չէլին հավատում: Գնում-գալիս եր զորզած կառավարիչը, էլի իր ճին եր քշում.

— Պահապան ես, ուրեմն մեղավոր ես:

Այս ցավերը բավական չէլին, նրա կինն էլ մյուս կողմից եր Մուկուչի սիրտը տակնուվրա անում:— «Մուկուչին «չեկա» սրետք է տանեն»—լսեր եր նա հարևանի կանանցից: Ու՝ ամեն որ Մուկուչ կինը ծնկները թաղելով՝ սուգ ու չիվան եր անում.

— Բա՝ եսպես բան կըլի՞,— ասում եր նա,— վոր մարդուս չաոի մեջ գցեն, տուն տեղով կորցնեն... Բա մի մարդ չկա, վոք ախտություն անի, ես խոթից ազատի՞. բա չ՞նք տեսնում, վոր մեջը թշնամություն կա...

— Ի՞նչ ես ճղճղոցը վեր արել. մի իմ սրտին էլ մոխիկ ե՞,— ասում եր Մուկուչը, աշխատելով «տղամարդամարի» տուս կացնել կնոջը, բայց կինն էլի չարունակում եր իր սուգ ու չիվանը:

Նա լաց եր լինում, գլխին հավաքում հարևանի կանանց. յերեխաներն էլ նայում էլին, ու ամբոխահար՝ սկսում մեկը մյուսից բարձր հեկեկալ:

***

Որը մթնում է, Մուկուչի սիրտն էլ նրա հետ:

Մտել է գործարանի գավթում գոնվող խոնավ գարաջաը, վորի դուռն ու պատուհանների փեղկերը չկային. նստել է մի քարի վրա ու գլուխը քաշ նայում է գետնին:

«Եհ,— մտածում է Մուկուչը.— բանս վերջացած է... կըտանեն, բա ի՞նչ պիտի անեն... մթամ ո՞վ է իմ տերը... իմ գլուխը չհանձնամը, ի՞նչ պիտի անեն յերեխեքս»...

Ո՛վ պիտի դաղանար այդ անիծած կաշին... այն փուչ տախտակից ավել ո՞վ կարող եր անել... Աշխարհիս կուրությանը մոխի՝ քանի որ և եղ անկրակը փսփսում է կառավարչի ականջին... դե պարզ բան է, Մուկուչից է խոսում, նրա վրա յե գցում դաղտնյությունը...

Ալը մթնում է, Մանուկի սիրտն էլ նրա հետ...
Հանկարծ նրա ականջին պայթեց մի ձայն.
— Մանուկ, ես ո՞ւր եմ:
Մանուկը վեր թռավ ու խարխափելով, ուստից ձայն հասնելու դուռը գեղավ դավիթ:
Բանվոր Մարգարն էր:
— Ա՛յ ապա, վո՞րտեղ ես. մի ժամ է մոն եմ գալիս. դե չի՛կ հետս, գնանք:

6

Սա գել մի ուրիշ խաթա չի,—մտածում է Մանուկը.—դե են է մխանդամից ապահեն պրծնեն, էլ ո՞ւր են ժոդովում ուրիշների տակ խայտառակ անում: Հակառակի պես էլ Մարգարը առնում է նստացնում Մանուկին հենց առաջին չարքում.— դե պարզ բան է, գերեվում է՝ ուզում են այնպես անեն, վոր ամենքը լավ տեսնեն նրան ու մի լավ խայտառակեն:
Ա՛յ լինչքան մարդ է հավաքվել... բոլորն էլ բարկացած են... լավ էլ վոր Մանուկը մեռնի, կորչի ու այսքան մարդկանց մեջ առակ չդառնա՞...
Տեսնում է Մանուկը՝ բեմի վրա մեծ սեղան է դրած, կարմիր մահուդը վրան քաշած, շուրջը նստել են հինգ-վեց հոգի: Ծանոթ մարդիկ են, բայց ոտար են թվում: Մենք ասի՝ նրանց ի՞նչ վատություն է արել Մանուկը, վոր այդպես խոժոռած գիտեմ են նայում:
Վախը մի կողմից, ամոթը մյուս կողմից... այս ի՞նչ կրակի մեջ է ընկել Մանուկը. դարման տաք գեղանակ է, բայց նա ատաուզի մեջ է, այնպես է թվում՝ թե ևս է պիտի դողացնի...
Կողքին նստած բանվորները խոսում են, սիրտ են տալիս Մանուկին, բայց նա ասես չի լսում՝ նրա մտքը շատ հեռու է...
Չե՛, պրծած բան է... Մանուկը կորած է... ի՞նչ պիտի անի նա այսքան մարդկանց դեմ, վորոնք բոլորն էլ լավ խոսում, հասկանում են. դե պարզ բան է՝ կառավարչին կպաշտպանեն. չէ՞ վոր նա «ապա մարդ» է, իրա նման խնդճ ու կրակ չէ... Հրե՛ն, վռնց է նստել ու ակնոցի տակից այնպես է մռմռկ անում, հենց ֆամիան ատում է—եղ բոլորը վոր կաք, իմ բոի մեջն եք..
Ի՞նչ պիտի ասի Մանուկը, թե վոր էրեն խոսացնեն, դե կա-

ալ՝ չես մի խեղճ մարդ եմ, ի՞նչ պիտեմ, դոլնացել են. իսկ թե ո՞վ և դոդացել՝ չեմ իմանում...

Մուկուչն աչքին և ընկնում դիմացի պատին կպցրած Լենինի մեծ պատկերը:

«Սատա՛ն են լավ մարդ և,— մտածում և նա. ա՛խ թե այստեղ լիներ՝ ինձ կոգներ... չես ել ես ոլը չեզդ ընկնել...

Զանգահարում են. ժողովն սկսվում է. ինչ վոր բաներ են ասում, վոր Մուկուչը չի հասկանում: Նա ուշքի չի գալիս այն ժամանակ, երբ սկսում է խոսել բանվոր Սահակը. նրա ձայնը ամենքից բարձր և, խոսելն ել ամենքը հասկանում են: Ի՛նչ բարկացած է՝ ասես բերանից կրակ և թափում. յերևի Մուկուչի վրա չի բարկացել... մեյն պարմանալին այն և, վոր, հըմ՛ն, «հընդեր Մուկուչ» ասաց... թե չարացած է Մուկուչի վրա, բա ինչի չի պատիվ անում՝ «հընդեր» ասում:

Այդ դեռ բանական չե. նրա ճառի ժամանակ կառավարիչը վեր-վեր և թռչում, վոնց վոր ասեղների վրա լինի նստած, չուռչուռ մաս և բարձրացնում, մեկամ ուզում և չուռով պատասխանի...ու դեռ Սահակը խոսքը չվերջացրած՝ դուրս և պնում ժողովից՝ մինչև ականջները կարմրած ու փնթփնթալով: Բոլորը նայում են կառավարչին. իսկ Մուկուչի կողքին նստած բանվոր Սերգոն ասում և նրա ականջին.

— Հը՛, տեսա՞ր, Մուկուչ, վոնց հուշտ արինք քու կառավարչին. մեզ բանվոր կասեն, հա՛...

Չե՛, նա ուրիշ բան և դուրս գալիս... ելի յեն խոսում, ելի «հընդեր Մուկուչ» են ասում. պարզ և՝ նրանց դոլում են. ասում են՝ Մուկուչը վոչ յուրա և հարցրել, վոչ քաղցածություն. մի լավ դարձի վրա պինդ կաղնած և ելել, վոնց վոր մի պինվոր... թե կառավարիչը լավ կառավարիչ և, իսկի մի որ հարցրե՞լ և, Մուկուչը վո՞րտեղ և քնում դիշերը, վո՞նց և ապրում...

Ել ի՞նչ կասած... Մուկուչին ոգնում են, պաշտպանում են. և նրա սրտի կապված թելերը բացվում են. հենց լմանաս ասած յնկել և Մուկուչը ու հիմի տաքությունից յետ և գալիս:

Նա արդեն սկսել և տեղն անհանդիստ չարժումներ անել. լարված, չունչը պահած՝ լսում և ամենքին ու դարմա՞նք բան. ամեն ինչ հասկանում և:

Մեկ ել հանկարծ Մարդարը փնչիցը քաշում և.

— Ծոսքը պատկանում և ընկեր Մուկուչին,— նորից կրկնում և նախագահը:

Մարդարը մոտենում է Մանուչի անկողնին ու ասում.

— Մանուչ, հիմի դու պիտի խոսես. ինչ որ ասելու ես՝ ասա, մի՛ քաշվիլ:

Մանուչը վեր է կենում, շշմած, մինչև պատասում է, որ չանչը առեղը բերի ու հետո ասում է ցածր, խանձված ձայնով: Բոլորը լսում են և ուշադրությամբ լսում.

— Հընդերներ. ղե չես մի խնդճ մարդ եմ, բայց չես իմ նամուսը չեմ ծախել... չես նե դողուբջանը սեղչակ չեմ... մխոյն կասեմ՝ վատ մարդու ճանկ եմ ընկել... դուք դիտեք ու ձեր խիղճը...

Սասում է, ծանր շնչով նստում: Նախապահն էլի մինչև խոսք է ասում, մի չերկու մարդ էլ կարճ խոսում են ու ժողովը վերջանում է: Բանվորները չրջապատում են Մանուչին, ամեն կողմից սիրտ տալիս.

— Հընդեր Մանուչ, քեֆդ լա՛վ պահիր, չտեսվիցդ սարի պես կանգնած ենք:

Ոտում են, ձեռքներն ուսին դնում ու ամեն կողմից ընկեր կանչում...

Մանուչը դուրս է գալիս վագոց: Սկսում է սիրտը լցվել, որ հենց նամուսս էս աշխարհում չէիմ: Գնում է տուն, թե գործարան, ինքն էլ չի իմանում: Ես ի՞նչքան ապնական, ի՞նչքան պաշտպան ունի... բա ինչու մինչև հիմի դրանի չեր ընկնում... Սաես չորս կողմը հատար ձեն է գալիս ու ամենքը մի բերան՝ ընկեր Մանուչ են կանչում...

Սկսում է լցվել Մանուչի սիրտը, որ ի՞նչ հայ, ի՞նչ նեղություն.— նա թեկուզ վրանք էլ առ, մեկ հատը չէ: Սաես մեծանում է, աժ-պահս գառնում, կռնակը լցվում են արյունով ու նա հպարտ-հպարտ կանչում է, իմաց անում բոլորին:

— Հե՛յ, լա՛վ իմացեք. սրանից դենը էլ ինձ վուչ մի բան չի հաղթել...

## 7

Մտցել եր յերեք տարի, յերբ չես նորից վերադարձա իմ հայրենի քաղաքը:

Մի յերեկո գնացել էի բանվորական ժողով, վորը հրավիրված եր քաղաքական մի հարցի առթիվ: Լուսե էի խոսողները ու միաժամանակ նայում չորս կողմը նստած բանվորներին ու համեմատում մտիկ անցյալի հետ: Վո՛րքան բան եր փոխվել:

Յերեք թե չորս հոգու խոսելուց հետո ակամայից հասավ նախասահի՝ բանվոր Սահակի հուժկու ձայնը.

— Ասացը պատկանում է ընկեր Մուկուչին:

Բեմ յելավ՝ մարմերը կարճ խուզած մի բանվոր, որը լինչ կանգ առավ, սկսեց խոսել այն պզտիկած ոռնոզ, որ հատուկ է հեղափոխության վրա սերտահարված բանվորին:

— Ընկերներ, քաղնի ասելն յե, մեզ շրջապատել են, ուզում են խեղդել,— փորձեցին հացով խեղդել՝ չելավ, փորձեցին ոսկով՝ չելավ... Թող լավ իմանան՝ են ժամանակն անց է կացել՝ մեր մխաքը, մեր աչքերը բացվել են. ել սրանից դներ մեզ վոչ մի բան չի հաղթիլ:

Ծափահարությունները թնդացին ամբողջ դահլիճում:

Խոսողի դեմքը վարձեց ծանոթ լիներ. ուզում եյի հարցնել՝ վոլքես նստած բանվոր Մարդարին, բայց նա լինչ կանխեց.

— Գիտե՞ս, ո՞վ է նե խոսողը,— ասաց նա. մեր հայտնի Մուկուչն է:

— Ի՞նչպես թե Մուկուչը. բա ո՞ւր գնացին նրա խոպան մրտքը, նրա վիճաբոց կոչիկները:

Մարդարը ծիծաղեց.

— Հենց բաննել այդ է... Մուկուչի կոշիկներն ու նրա հացի պարիկը թանգարան ենք ուղարկել. մորուքն ել լինչպես տեսնում ես՝ ածիլի բերան է ընկել. թե վոր Մուկուչի կնիկը չլիներ, բեղերն ել կածիլեր:

Իսկ լինչպես վերջացավ այն գործը. մխաս է՝ այն ժամանակ լինչ վոր գողության հարց կար...

— Բա լինչ ես կարծում, մենք կիմանեյի՞նք, վոր մեր Մուկուչն էլ քնքին խզուր տեղը գիսչե՞ն. կառավարիչներ գահլա տանում: Երան հետացրինք, չատ եր հին կարգերի յետևից ընկնում... գողության ել մի սահման վրա բացվեց՝ այն անպիտան տափրիչն եր արել: Հիմի Մուկուչին բանվոր են ընդունել: Վոր իմանաս՝ լինչ մխրտ է բանում, կասես քսան տարեկան լինի...

... Յես վերադառնում եյի տուն պաշարված մտքերով: Գայլում եյի, վերհիշում անցյալը: Մտածում եյի թե լինչպես փոխվից մեր Մուկուչը, այն կենդանի արձանը, առանց վորի յես չեյի կարող յերևակայել իմ հայրենի քաղաքը:

Գայլում եյի, վերհիշում անցյալը... ու ակամայից շարունակ հնչում եր բանվոր Սահակի հուժկու ձայնը՝

— «Ասացը պատկանում է ընկեր Մուկուչին»...

1924

## Տ Ր Ա Կ Տ Ո Ր Ը

Մի շարաթից ավել էր՝ Դանելը մոքի յեսևից ընկած՝ հա-
լածված մարդու նման տեղ չէր գտնում պչուղում: Արդեն դուբա-
նավարի ժամանակն էր. ով լծկան ուներ՝ վարում էր, իսկ Դա-
նելը և իր նման չունեվորները մնացել էին կրակի մոտ: Ճիշտ և,
մի քանիսը կխոսվի վարել էին տվել իրենց արտերը, բայց այդ
ճամբան էլ փոս էր դանելի առաջ. նա շատ լավ գիտեր, որ յե-
թե գիմի ունեվորներից մեկին՝ հենց թեկուզ Տերտեանց Սահա-
կին, այնպես կդարձվի, որ մինչև վերջին շունչը չի մոռանալ:
Ինչպես և շատերին՝ Սահակը Դանելին էլ ոճի նման կիսայթի.—
նա կասի այն խոսքերը, որ ասել էր մի քանիսներին:

— Գնա, թող քու կառավարությունը քեզ տդնի:

Յեվ ի՞նչպես շատը, ի՞նչպես չհանի իր արտի վրայը, քանի որ
Դանելն իր բնակիներով միշտ Սահակի ու նրա նմանների դեմ է
խոսել: Հիմի այդ բոլորից հետո դնա նրա դուռն ընկնի, թե ինչ
է՝ լծկան տուր՝ արտս վարե՞մ... չե՛, դա լինելու բան չի. ման-
չը պրանից լավ է:

Դեռ հիմա յել Սահակը մեն-մին դաղում է Դանելին: Արդեն
յերկու կիրակի յե՝ նա վոչխարի բուդը ձեռին՝ անցնում է Դա-
նելի տան առաջով. նա դիտմամբ նրա կողմն է անցնում՝
ցույց տալու համար, թե՝ տե՛սեք, մեն ել ին առաջվա Սահակին
եմ, ել չի՛ս եմ մեղ ուռում, իսկ դուք՝ տկլորներդ՝ բերանները-
ջուրը պնալով մոխիկ եք անում: Հենց թեկուզ ամեն նասելիս ի՞նչ
է խոսում Սահակն իրեն ուղած մարդկանց հետ.— (մեկ-մեկ ձե-
նը հասնում է Դանելին): Նա ասում է՝ ագռաքն ինձ չարչափեցին,
հողերս խլեցին, անունս կուլակ դրին, ընտրելու իրավունքից
զրկեցին, վերջը ի՞նչ տարան... մեն ել ին ես, ել եղ անուղ-
նները պետք է գան վոտներս ընկնեն, լծկան ու գութան խնդրեն...

— Չե, նրա յեղակարծ եղ անհնազանդը,— մտածում էր Դանիելը,— լավ կլիներ մին էլ թաքի տայինք, բայց ի՞նչ անես, վոր հրաման չկա... պետք է թողնենք, վոր միքիչ լենանա... Հենց էդ էլ համոզում է, ենդուր է եղպես յերես առնում. մի տես՝ վո՞նց է վոտը հուպ տալիս, յերբ իր դուռը մարդ է գալիս՝ խնդրում, վոր կխոսվի արտը վարի. քա՛նի անգամ տանուբեր է անում, չարչարում, ճեռը լիզել տալիս, նոր վարում: Իսկ Մուքելի դլուխը ի՞նչ ոյին էր հանել. կարելի՞ յե մոռանալ. դեռ ասել էր՝

— Սրխայլն կաց, արտդ կվարեմ, վողն էլ հեչտ է, յերբ կունենամ՝ կտամ:

Բայց ժամանակը վոր յեկել էր, Սահակը լծել էր զուբանը, ամեն ինչ պատրաստել ու վերջին րոպեյին կանգնել, թե՝

— Փողը հանիր տուր, թե չե՝ դու գիդաս, վարիլ չեմ:

Ու մինչև որս էլ Մուքելի արտը մնում է վարելու:

Չե, Դանիելը Սահակի կամ նրա ոճանակի զուռը գնացողը չի, թեկուզ տասը տարի տված մնա վր ընտանիքով: Բայց ի՞նչ անի, վո՞րտեղից ճար գտնի... ցանիլ չես՝ հնձիլ չես... մի տուն յերեխեքդ վմնան քաղցած...

Մտածում էր Դանիելը՝ կանգնած իր տան սրտում, մխքը գես-դեն գցում, բայց մի ճամպա չէր գտնում: Ի՞նչ պայծառ, ցանելու որ է, բայց ինքը վեճի նման կանգնել է ու չի իմանում՝ ի՞նչ անի, ո՞ւմ գիմի...

Դանիելի կինը՝ նստած նույն սրտում՝ յերեխանց վարվատանն էր անում: Նա աչքի տակով հետևում էր մարդուն, գլուխ, վոր նա յել նույն գարդի մեջ է, ինչպես և ինքը: Մեկ-մեկ խորը չնչում էր, գսպելով ինքն իրեն ախ քաշելուց: Կանացի սիրտն անհամբերությունից պատռվում էր. «Ես ա որերը կանցնեն, խալխը կվարեն, կցանեն մեր արտը կմնա խոպան, ել ինչո՞վ ապրենք, ո՞ւմ գուռն ընկնենք...— մտածում էր Հոռոմախմբը ու մի ահռելի վհատում, վոր մարդուն էս բոլորն ավ, թեպետ ոչ էր անցնում, վոր դրա շուրջը խոսք չբացվեր:

Փոքրիկ Արտոն՝ Դանիելի տղան, բոլիկ վոտներով, վազեվազ յեկավ կանգնեց մոր առաջ ու հեվիհեվ վրա բերեց.

— Հաց եմ ուզում:

— Ինչ հաց. նոր չտարա՞ր,— ասաց մայրը,— հենց լսա-նում ես ամբարձնելդ լուրն ես... եղուց-ելոր հացը կվերջանա. փոքրիկ մկընչ հուսալ տուր: Գնա վերցրու քիչ կտրի, թե չես ինձանից էլես սրծնվել:

Ցերը յերեխան հացը կծոտելով դուրս գնաց փողոց, կինը գարձավ Դանելին.

— Ես որերմն անց են կենում... չորս կողմը վարում են, դու ինչ ես մտածում. եղուց-ելոր քեզ հաց է հարկավոր, յերեխանդ ինչ պատասխան ես տալու:

— Ինչ պիտի անեմ. մթամ դու չե՞ս լսանում, վոր վոչ լծկան ունենք, վոչ գութան:

— Դուռ մըչտ եղ. ես ասում. դե տեսնում ես՝ չունեցողն ունեցողին ե կպչում՝ հետը յոլա գնում, վարել տալիս. բա կանդնելով բան կըլի՞. հրեն Սահակը քանիսին ե վարել:

Սահակի անունը կարծես շամփուրով գցեց Դանելին. նա պատասխանից դրժավաճ.

— Հենց մի դրուխ տավլից-դվխից խոսում ես. յես քեզ ասել եմ՝ տղամարդու բաներում մի խառնվիլ:

— Հիմի են ժամանակը չի, վոր կնիկը բերանը կապի, տուն կենա. ինչի՞ յես ել իմ խորհուրդը չասեմ. խե՛, մենակ խելոքը դու յե՞ս...

— Բա քու նոր խելքդ վո՞րդի մնաց.— ասում ե՝ դնա Սահակին խնդրվի. բա վո՞նց չես մտել գցում՝ քանի անգամ ենք նրան խայտառակ արել, հիմի ինքն ու ժողը կուլ տալով գնանք մեղա գա՞նք:

— Ինչի՞ պտի մեղա գամ, ե՛ղ եր պահաս. քեզպես մի-քանիսդ գնացեք ճակատ-ճակատի կացնեք ու վարել տվեք արանքը:

— Ներողություն կանես. ել առաջվա պես չի... խաթրով, որենքով թե կարաս՝ կանես, թե չե՝ ճակատ-մակատ չկա... Համ ասում ես՝ յոլա գնա, համ ել թե՝ դուռ կացնենք:

— Վո՞նց թե իրավունք չկա. վոր տուն կենաս ու որենքորքենք անես, քեզ հաց տվողն ո՞վ ե: Նոր որենքն են և, վոր աղքատն ապրի. բա յերեխանդդ կուտրելո՞ւ չես: Թե ուզկից կուզես՝ տղամարդկից վարտս եք դառել. չատ եք խոսում, բայց թուրնեդդ կարուկ չի:

— Եղ լեղուդ առանց են ել մի բան չեր, հիմի յել ես նոր

բանները լսել ես, թթուն վճռու յես արել... Թուրը կարո՞ւկ չէ.. քեզ համար աշխատելս դուզ է... շատ էլ կարուկ է թուրս, բայց վոր կարելու բան չկա...

— Լավ, հիմի քո ասելը ի՞նչ է.— մենք պիտանք չուրն ընկենենք, իսկ Սահակի կնկին ու երեխեքը պաշտա ուտեն ու նախշուն չթեր հագնեն, վուխտա՞ն... մի տեսնեմ՝ վո՞րն է քու պրենքը. ապրելն է, թե՞ մեռնելը. իմ պատկն են է, վոր ձեր ձենը պակ լսել տաք. քարը պատուեք ու արտերը վարել տաք:

— Դու վոր եղպես մեծ-մեծ խոսում ես, նրանից է, վոր աշխարհից տեղյակ չես. հենց իմանում ես՝ քու հրամանքն է, վոր ինչ ուզես՝ անես. ախպեր, ասելը ի՞նչ է՝ քանի վախխոս գլխիս է յես Սահակի դուռը չեմ գնալ... Թե արտավճ է՝ դո՛ւ գնա:

— Էն է ասա՝ որս սեվ է, ելի՛... քա են մեծ-մեծ խոսելն ընչի՞ա ես, վոր ես որը պակ մթնացնելինք... Ե՛հ, վանց ուզում ես՝ արա, իմ որը սեվ է ըլել, սեվ էլ կմնա... էլ են ջոպրը, էլ են ջաղացը:

Ու կինն սկսեց լաց լինել՝ գոգելով իր հեծկլտոցը:

— Դե լավ, ի՞նչ ես քեզ ու քեզ վառվում. աղամարդու պրծ է՝ աղամարդն էլ կանի. դու լավ կանես՝ քու կարկատանն ու լվկկին մոխիկ անես, ասաց Դանելն ու գանգատ քայլերով դուրս յեկավ փողոց:

***

Գյուղխորհրդի սրահում հավաքվել եյին մի խումբ գյուղացիներ ու աղմկում եյին: Դանելին դուր եր գալիս այդ աղմուկը. կարծես հույս եր տալիս, ճամպար յեր բացում եր ծանր գրութիյունից դուրս գալու համար:

Մուտ գնալով՝ նա նկատեց երեն լավ ծանոթ գյուղատնտեսին, վորը խոսում էր գյուղացիների հետ և ինչ-վոր գրում ծոցատետրում: Նրա յերկար մորուքը, արեվից այրված դեմքը ցույց եյին տալիս, վոր վաղուց է դուրս յեկել քաղաքից: Իր գեմքի բարյացակամ և ուշադիր արտահայտութիյամբ նա շատ նման եր յերեխաներից սիրված ուսուցչի, վորն իր շուրջը հավաքած աշակերտներին՝ ներողամիտ ժպտով ամենքին էլ հավասար լսում է և բանավարում: Գյուղացիք՝ մեկը մյուսի

առաջը կտրելով խոսում էլին սրնապես բարձր, կարծես լսողը գյուղի մյուս ծայրին եր: Հատ ու կտոր լսվում էլին:

— Թե լծկանի ճար չարիք, լավ է գնանք ջուրը թափվենք..

— Մեր հույսը դուք եք. Թե ասկրենք, են և ձեղանով կապրենք...

— Մեղ մեր զորքանների ճանկը պի՛ք քցել...

Դանելը մոտեցավ գյուղապետեսին.

— Բարով եք գեկել:

— Ա՛յ բարով. վո՞նց ես, Դանել. դու ի՞նչ կասես ձեր գյուղի կարիքների մասին:

— Դե ել ի՞նչ ասեմ. են և բոլորը գրանից են խոսում. լավ աեսնում ես՝ ինչ որի կենք...

Ասպա նկատելով, որ Տերունանց Սահակի տղան գյուղացիների մեջ կանդնած լսում է, շարունակեց, ուզենալով ծածկել վր բուն ասելիքը.

— Դե դուք ել լավ հասկանում եք, Թե ի՞նչ գրության մեջ ենք. մի խոսքով՝ յես ձեղ լմաց եմ անում, որ բանն ուրիշ Թավուր է. պետք է ոգնությունը հենց հողուն վրա հասնի:

Գյուղապետեսը ժպտաց:

— Ասում ես՝ բանն ուրիշ Թավուր է... լա՛վ, որ եղպես է, մի ճար կանեմ ձեղ համար:

Գյուղխորհրդի նախագահ Պետրոսը, որը փոքրահասակ, նիհար դեմքով, ինքնահավան մարդ եր, իր պարտքն եր համարում ամենքի խոսելուց հետո բացատրել նրանց ասածը ու նրանց կրկնել ամեն ինչ: Նա փորձեց խոսել Դանելից հետո.

— Հընդեր, այ ասեմ, Թե մեր գրությունը վո՞նց է. ես մեր գեղը հո տեսնում եմ. մեզ մոտ շատ մարդ կա, որ լծկանի, որ դուքան, հիմի ասենք վարելու ժամանակն է հասել...

— Ներողություն,— ասաց գյուղապետեսը, կտրելով նախագահի խոսքը,— դե ինձ համար պարզ է ձեր գրությունը. ա՛յ ինչ եմ մտածել.—Թող ձեղանից յերկու հոգի գան ինձ հետ միասին՝ գնանք խորհրդային տնտեսություն, կխոսենք, որ ձեզ տան են նոր բերած մաշինի դուքանիներից, որ տրակտոր են ասում. կարելի յե տեսած լինեք՝ ասանց լծկանի վարում է:

— Ա՛յ չնորհակալ ենք,— ձայն տվին գյուղացիք:

— Ցվերք, խմացա՞ք,— ասաց Դանիելը.— դե յեկեք՝ յերեկա մարդ չունենք, վոր գնան մեր հընդեր պյուղատնտեսի հետ:

— Դե մինը մեր նախագահը կըլի, մինն էլ դու, էլ ի՞նչ չունենք,— ասաց պյուղացիներից մեկը, վորն ամենքից տարիքոտ եր:

— Հուժար ենք, ճարն ուլին պյուղացիք:

— Յեկեք գնանք՝ միքիչ դինջացիք,— ասաց նախագահը պյուղատնտեսին:

— Վո՛չ, չեմ կարող, հենց հիմա պիտի գնամ, շտապ գործ ունեմ:

***

Կարմրոտային տնտեսության կառավարիչը խոսում եր մշակների հետ, յերբ պատգամավորները ու պյուղատնտեսը ներս մտան: Կառավարիչը կարճահասակ եր, լիքը մարմնով, սրեվից թխացած կլոր դեմքով:

— Բարեվ ձեզ:

— Բարեվ. հը, ի՞նչ խաբար ե, յերեքով եք գալիս,— ասաց նա ժպտալով ու իր լայն, մաստ ձեռքը տվեց յերեքին էլ:

Պյուղատնտեսը բացատրեց գործի եությունը:

— Չա՛, բանն եսպես ե,— վերջացրեց նա,— հիմի ես մարդկանց հետը քեզ վրա յե, պիտի մի ճար անես:

— Գիտե՞ք ինչ կա,— ասաց կառավարիչը պյուղացիներին, վորոնք ուշադրությամբ հետևում եյին նրա դեմքին, ուզենալով դուշակել իրենց խնդրի վճիռը.— տեսնում եմ, վոր թուղթ նեղն եք ընկել. բայց վո՞նց անենք. յերկու տրակտոր ունենք. մեկը մեզ հարկավոր ե, մյուսն էլ վչացել ե:

Դանիելն առաջ ընկավ.

— Հընդեր չկա, վոր եսոր գուռ գուռն ենք յեկել՝ իմացիր, վոր տեղներս չատ նեղ ե. պետք ե մեր դորբաներից մեզ ազատեք. են ե առտամները սրած սպասում են, վոր մեզ դղեն. եսքանն իմացեք, վոր բանն ուրիշ թավուր ե...

— Ի՞նչ ասիր... բանն ուրիշ թավուր ե՞.— ասաց ժպտալով կառավարիչը.— չե տեսնում եմ, վոր չատ նեղված եք, բայց իմ բանն էլ դժվար ե... ուզիղն ասած՝ գործը մեր վարպետի ձեռքին ե. գնացեք տեսնեք՝ ինչ ե ասում:

Ու քայլերն ուղղեց դեպի բակի մյուս ծայրի շինությունները: Ցեկվորները հետևեցին նրան:

Վարպետ Վռամյանը փոքրիկ արհեստանոցում իր յերկար քրքը ցից՝ խորասուզվել եր գործի մեջ. խարտոցում եր լինչ-որ մեքենայի մասը:

— Ընկեր Վռամյան, ես մարդկանց հո տեսնում եմ. կարճ ասած՝ որանք վոչ յեղներ ունեն, վոչ դուբյան. յեկել են տրակտոր խնդրելու: Ես մեր տրակտորը պիտի նորոգենք, լրենց տանք. հենց գործը քեզ վրա յե, լինչ ուզում ես որա՝ հնարքով լինի, թե հրաշքով՝ պիտի ես մարդկանց տրակտոր տաս:

Վռամյանը՝ հանկարծակիի յեկած կատակարբչի վճռական տոնից՝ նայեց նրա դեմքին, կարծես տուժելով: Թե վորքան հաստատ ե նրա կամքը:

— Ընկեր Սրշակիր, ճիշ հայտնի յե, վոր գործով խնդրված եմ. մի կողմից էլ հարկավոր նյութեր ու գործիքներ չկան. կաշխատեմ, թե հնար կլինի՝ գրանց բանտան ե:

— Ընկեր, խմացած լինես, վոր մեր բանն ուրիշ թաղում ե,—ասաց գյուղխորհրդի նախագահը, կրկնելով Դանելին:

— Լա՛վ. ուրեմն վաղվանից կսկսես: Իսկ դուք, ընկերներ, հո լսեցի՞ք. են ե՝ մի շաբաթից հետո կդաք. թե պատրաստ կլինի՝ կառնեք տրակտորը:

— Շնորհակալ ենք, մնաք բարով:

Դանելն ու նախագահը ճանապարհվեցին դեպի գյուղը:

***

Ամբողջ շաբաթ գյուղն լրատանգման մեջ եր: Դանելի խոսքը՝ գյուղի ազգանունը՝ մեծ հուսով սպասում եյին «մաշինի դուքյանին»: Իսկ կուլակները՝ վորտեղ նստում, ծաղրում եյին հավատացողներին, ծաղրում եյին նոր տեսակի «դուքյանը» և կասկածում նրա գալու վրա: Բայց այսքանը կար, վոր քանի մոտենում եր սպասած ժամանակը, այնքան ավելի յեր ուժեղանում անհանգիստ, լարված զրույցները գյուղում: Աղքատները մեկ-մեկ ծաղրի ու կասկածանքի ազդեցության տակ լրենք էլ տարակուսանքի մեջ եյին ընկնում, մտածելով, թե՝ հանկարծ տրակտորը չգա, ու լրենք հարուստների սրտով լինեն, ավելի նեղն ընկնեն: Իսկ հարուստները նախանձից զրզռվում եյին կարծելով, թե կարելի յե այդ դուքյանը մի ենպես հրաշք ե, վոր աղքատներին լրենցից կբարձրացնի ու նրանց առանց այն էլ յերկար լեզուն ավելի կյերկարացնի:

Կլեոպատրի առաջուց զգլխահան Տիգոն,— խորհրդանշության բանալորը, — յեկավ Դանելի տունը։

— Դրախտը բաղդատատ է,— ասաց նա ցածր, խոպոտ ձայնով, մի աչքը չիլ անելով։

— Ի՞նչ դրախտը, ի՞նչ ես ասում։

— Դրախտը, մաշինի դուքանի չինած-բաղդատատ է։

— Պա՛, քեմատազ, դե ըռենց ասա էլի՛... ասլուն՛ս, քեզ մի խալաթ եմ տալու։ Դե ասի գնանք, տղերանցն իմաց անենք։

Յերբ նրանք անցնում էյին գյուղի գլխավոր փողոցով, Սարոյի խանութի մոտ, (նրա ամբել անունը «չորացած Սարո» յեր), գերանների վրա մի խումբ գյուղացիներ նստած զրուցում էյին։ Կենտրոնում Տերտնանց Սահակն եր, նրա շուրջը՝ գյուղի մյուս կուլակները, բայց նրանց մեջ կային մի քանիսը այն մինչև գյուղացիներից, որոնց չեր կարելի դասել ոչ ունեվորների, ոչ աղքատների կողմը, և որոնց մասին Դանելն ասում եր, թե նրանց մի ոտը տաքսումն է, մյուսը՝ ասոումը։

Սահակը նստած գրուքյամբ շատ նման եր այն կարճ ու հաստ կաղնիներին, որոնք ոչ մի կացնի մոտ չեն թողնում։ Իր թավթռիված բեղերի արանքից նա խոսքեր եր շաղ տալիս «մաշինի դուքանի» մասին։

— Հա, են ա էլի՛, գլուխները յեղում կըլի, բան ու գործ են չինել եղ չինմաշինի մաշինի դուքանը։ Ել չեն իմանում, որ տակը բան չկա։ խելքները կորցրել են, ուզում են, որ մենք էլ կորցնենք։ ախպեր, հա՛յ-հա՛յ անելով արտ չի վարվիլ։ Ասանց լծկան դուքան կըլի՞... քնչ ել կենան, գնանեն՝ յերկաթի մարդ և գալիս...

Դանելը մոտենում եր Սահակի յետևից։ Նա մտադիր եր անցնել առանց ճայն հանելու, բայց եղ վերջին խոսքերն այնպես վառեցին նրան, որ կանգ առավ։

— Վախիլ մի, Սահակի սրտովը չի ըվիլ։ Հենց լավ ել իմացած կենաս՝ մաշինի դուքանը գալիս է։ Հավիր են ասես, ինչ որ արտումդ է՝ դու չես ուզում, որ աղքատան ել որ քաշի։

— Ինչի՞ս վրա յես ասում, թե արտովս չի։ Հերիք չի՞ ինչքան տունս քանդեցիք։ բա յես խալխի լավը որ չուզենամ, լծկանս ու դուքանս եսքան մարդի կտա՞մ։

— Եղ որ տալիս ես, ձրի յես տալի՞ս։ տասն անգամ սերը

քաշում ես. չըլինի՞ թե՝ են ցրեն ու փողը վոր առնում ես, քու տունը չի մտնում: Ում տալիս ես՝ քու ճորտն ես չինում:

— Սխալեր, դե են ա մխանգամից դյուլի տակ տվեք, պրծեք ելի՛ թող մխանգամից քու ու փուչ ըլեմ, վերջանամ: Ջաթի ձեղանից որ չեմ տեսել. թող սրանից դենը չըլեմ... մի յերկու յեղն ունեմ, թող են ել չըլի՝ կարելի յա ձեր սիրտը ջինջանա:

— Դու չատ լավ դիտես, թե մեր ուզածն ինչ ե. եդ դո՛ւ յես, վոր ուզում ես՝ ինչ վոր կա, քոնը լինի, ու խալխն ել քու դուլը դառնա...

Դանելը չարունակեց իր ճանապարհը Տիգրայի հետ, իսկ Սահակը խելթ նայելով նրա հետևից՝ մոքում հայհոյում եր: Իրեն չըջապատող դյուղացիք բերանները հուպ տված՝ քաղաքացիներ լուռ լուռում եյին, չուխերով քշխոցելով դետինը:

— Ես ի՞նչ խարտար ժամանակ ե,— ասաց խանութպանը՝ պղուչությամբ դիտելով չորս կողմը իր չուած, վախ կերած աչքերով,— խելը հո կորել ե, լավ խոսքն ինչ ե՝ են ել ե չքացել: Հիմի դե գուբեան ննք բերում՝ կռիվ ե, եդ ել կոոպերատիվի նման ավելորդ բան ե ու տեղովը կռիվ ե. ո՞ւր ե տապչվա ժամանակը. եհաթերաթ կար, յոլա գնալ կար... չե՛, սխալեր, խելն ու լավությունը գնաց, ել յետ չի գալ...

Սահակը՝ առանց լսելու խանութպանին՝ վեր կացավ, վերչը թաղ տալով ու վնթփնթալով գնաց դեպի տուն:

***

Հենց վոր դյուղում ձայն ընկավ տրակտորի գալու մասին, ել մարդ չմնաց՝ գուրս յեկավ փողոց: Սկսած դյուղի ծայրի չրաղացից մինչև կոոպերատիվի առաջի հրապարակը տրակտորն անցնում եր «կեցցեների» ուղեկցությամբ: Մեքենավարի տեղը Վռամյանն եր. նա ամաչկոտ ժպտում եր այս անսպասելի բազմության հայացքների դիմաց: Տրակտորի ճակատին ամրացրած փոքրիկ կարմիր դրոշակը փոփոում եր ուրախ, կարծես պատասխանելով «կեցցեներին»:

Տրակտորը կանգ առավ կոոպերատիվ խանութի առաջ: Գյուղացիները չըջապատեցին մեքենան: Ամենքն աղահությամբ դիտում եյին անգամ նրա ամենաչոքր մասերը: Յերեխաները ճչալով ու մեկ-մեկու հրելով առաջ եյին ընկնում մեծերի խիտ շար-

քերից ու աչքերը չռած՝ դիտում ու շոշափում այդ տարօրինակ գումթանը: Ամեն հեռվից՝ վորը տան չեմքից, վորը կտուրից, նայում էին կանայք:

Դանելն իր մեքանի ընկերներով ուրախ ժպտալով կանդնել էր մեքենավար Վոսկանի մոտ, նրա թեվից բռնել:

Մաղոն՝ վորը դյուղի ռւնեվորներից եր, մոտեցավ տրակտորին, խնթ նայեց իր սովորական ծուռ հայացքով, վորի ժամանակ նա իր ձախ աչքը փակում եր:

— Ախպեր, թե իմ խնդքը բան ե կտրում՝ սա վարող պատշ չէ. թե սա մեր արտերը վարի, մինչ ուղում ենք սանք, թեկուզ քեղս կտրենք... ենպես էլի, թամաշի համար են բերել:

Մեքենայի մոտ կանգնած վարպետ Վոսկանը կատաղեց:

— Ինչ, չես հավատո՞ւմ, դե ապա՛սիր, ամբողջ որը քեզ պահ մանս ածում մեքենայի յետեվից, վոր դու ինքդ ես ճեռով քեղդ կտրես:

Մաղոն վախից յետ քաշվեց, մտածելով՝ վայ թե մի պատիժ նշանակեն իր խոսքերի համար:

— Ընկեր Վոսկան, դե պինանք մինչև հանդստացիր, մի բան կեր, հետո կվարենք,— ասաց Դանելը:

— Ջե՛, հենց ես լոպեյիս պետք ե սկսենք,— ասաց Վոսկանը — ձեր դեղում ենպես մարդիկ կան, իրանք չեն հավատում, ուրիշների սիրտն էլ ուղում են պղտորել: Եղ տեսակ մարդկանց աչքը պիտի ծակենք ու վարենք:

— Դե տանենք ես մտիկ ուսումնարանի արտը վարենք:

Վոսկանը պատեց տրակտորը ու դանդաղ շարժվեց դեպի ուսումնարանի արտը. նա դիտմամբ դանդաղում եր, վորպեսզի շատ մարդ հետևից գրեն:

Վարն սկսելուն պես սկսվեց և դյուղացիների ցնծալի զարմանքը.

— Ա՛յ տղա, սրան մտիկ, ե՛, հենց վարում ե հողը, կասես դարման ե չուռ տալիս:

Դանելի կինը վազելազ յեկել եր. մոռանալով իր ամոթխածությունը և մարդու կողքը կտրած ասում եր ցածր ձայնով, հրելով նրա կողքին.

— Ա. մարդ, դե մի սաս չուռ անի, մեր արտը վարի ե՛...

— Ա. կնիկ, տեսնում չե՞ս. հլա նոր ե փորձում. են ե մերն ել կվարի, ուրիշներինն էլ, վա՛խիլ մի, մեզ էլ կհասնի:

Կնոջ դժդոհ դեմքից յերևում եր, վոր նա ջի հավատում, թե իրենցն ել հասնի:

Յերբ Վասկանն արդեն վերջին ակոսումն եր ու մոտենում եր արտի ծայրին, վորտեղ կանգնած եր Դանելը, ուրախությունից դեռ վերջին չհասած՝ կանդնեցրեց տրակտորը ու բարձր ձայնով կանչեց.

— Դանել, բանն ի՞նչ թավլուբ ե...

— Բանն ուրիշ թավլուբ ե, Վասկան, ո՛չուրիշ թավլուբ ե...

Յերկուսն ել ծիծաղեցին մի առանձին հաղթական ծիծաղով, հիշելով մի չաբաթ առաջ ասած խոսքերը, վորոնց նշանակությունն իրենք եչին հասկանում: Դանելի չուրջը հավաքված գյուղացիք, դլխի ընկնելով նրանց գաղտնի խոսակցության, ժպտում եչին:

Գործը վերջացնելուց հետո Վասկանին տարան ճաշի: Ախտեղ ուրախությունն առանձնապես չաղացավ Դանելի չուրջը. ամեն կողմից նրան եչին դիմում.

— Դանել, բանն ի՞նչ թավլուբ ա:

— Բանն ո՛ւրիշ թավլուբ ա, ո՛ւրիշ...

Ծաղում եչին ու ծիծաղում:

Յերբ դուրս յելան ճաշից ու դնացին տրակտորի մոտ, Դանելը, յերջանիկ ժպիտը դեմքին, հենվելով տրակտորի վրա՝ ասաց.

— Ախպեր, թամամ բանն ուրիշ թավլուբ դառավ: Այ չանիք մատաղ տրակտոր՝ մինչա եսպես մեր նեղ մաջալին հասնես, ինչպես եսոր հասար: Տղերք ջան, հիմի տրակտորն ե մեր դեն-քը, սրանով ենք կռվելու...

Ու սիրալիր հայացքով նայում եր մեքենային, վորի մեջ կարծես՝ ամեն արդեյքներ հաղթող վոգի յեր նատած...

1926

# ԿԱՐՄԻՐ ՇԱՐՍՆԱՑՈՒՆ

*190··· թվի ամառը ուսանող Փանյանը աքսորվել եր Մոսկվայից, վորպես հեղափոխական և ապրում եր վտանգավորության հսկողության տակ:*

*Յերկու շաբաթ անդորձ ու անվող թափառելուց հետո, նա պտել եր մի մասնավոր դաս և նրա հույսով վարձել սենյակ քաղաքի հետ ընկած թաղում: Սենյակի մեկ պատուհանը նայում եր նեղ ու ծուռ փողոցին, իսկ հորիզոնը ծածկում եր դիմացի հին տունը, վորի պատը՝ ծծված յերկար տարիների խոնավությամբ, վազուց եր կորցրել իր յերեսվի ավազը, բացելով հին ձևի աղյուսների շարքերը: Սենյակն այնքան փոքր եր, վոր նրա մեջ դպալի տեղ\ելին դրավում ուսանողի դրքերը:*

*Տանտիրուհին, վորը հին սովորություններով մեծացած մի կին եր, յերկյուղ եր զգում այդ հաստ դրքերից, ու պատերին կպցրած յերկար մազերով պատկերներից: Բայց ամենից շատ նրան անհանգստացնում եր ուսանողի «անզործությունը». նա ամբողջ որը նստած դրքեր եր կարդում: Յերեք որ դիտելուց հետո՝ նա ասաց իր ամուսնուն, վորը ճոթեղենի վաճառական եր.*

*— Գիտե՞ս, մեր նոր կենտրը ուրիշ տեսակ մարդ է յերևում, մի ղլուխ դրքեր է կարդում ու պատերին էլ կպցրել է յերկար մազերով «Ֆարմասոնների» պատկերներ:*

*— Հիմի ասելը ի՞նչ է. վախենում ես յես էլ Ֆարմասիոն դառնա՞մ:*

*— Չե, են էլի ուզում ասել, վոր անզործ է յերևում. ինչո՞վ պետք է սենյակի վարձը տա:*

*— Հեր ախպոր, յեքա տղա յե, մի հինգ մանեթ չի՞ ճարի վոր տա:*

*Տանտիրուհին հանդստացավ, նկատելով վոր ամուսինը չի չարանում իր արած սխալի համար: Բայց նրա հետաքրքրությունը պրծնում եր ուսանողի տարօրինակ կյանքը, ուստի և չարունակ խուզարկու հայացքով հետևում եր նրան:*

Ամեն անգամ, երբ ծառան աշխույժ շարժումներով մաքրում էր ուսանողի սենյակը, տանտիրուհին ներս էր մտնում, իբր թե ողնելու համար, բայց իսկապես նրան տանողը կանացի հետաքրքրասիրությունն էր. նա ուշի ուշով դննում էր ուսանողի սեփականությունը:

Սեղանի վրա մի հատ գիրք կար. ո՞վ գիտե, «գակոն» էր, ավետարա՞ն թե մի ուրիշ, ավելի խորհրդավոր բան... Մի որ էլ չհամբերեց, կանչեց հարևանի փոքր տղային ու ցույց տալով գիրքը հարցրեց.

— Ցերվանդ, ես ի՞նչ գիրք է.

— Վրեն կապխատալ է գրած.

— Կապխատալը ի՞նչ է:

— Ռուսերեն է, չգիտեմ:

Ամբողջ որը տանտիրուհին կրկնում էր մտքում «կապխատալ»-ը խառնելով «կլապխատնի» հետ: Ցերը յերեկոյան վերադարձավ ամուսինը՝ նա հարցրեց.

— Սերգո, կապխատալը ի՞նչ բան է.

— Բա վաճառականի կնիկ ես ու կապխատալը չես իմանում— կապխատալը փողն է ելի...

— Փողը՞... ինչ խելոք է եղել մեր նոր կենաղը, մի գիրք ունի՝ վրեն կապխատալ է գրած, մլչա են է կարդում:

—Ցերևի ուզում է հարստանալ, ի՞նչ կա վոր, հիմի ամենքը գիշեր-ցերեկ հարստանալու մասին են մտածում:

«Խելոք տղեն» այդ որվանից նստեց տանտիրուհու մտքում: Շուտով նա ավելի ամրացավ այդ համոզմունքի մեջ, երբ իմացավ, վոր Փանյանը մանավոր դաս ունի: Այժմ աշակերտը ինքն էր գալիս պարապելու ուսանողի մոտ:

Ցեվ քանի վոր տանտիրուհին մի անբժշկելի հիվանդություն ուներ՝ իր բարեկամներին ու ծանոթներին ամուսնացնելու հիվանդությունը՝ ուստի այդ տեսակետից էլ սկսեց մոտենալ և Փանյանին:

«Խելոք տղա յե, ուշք ու միտքը փողի վրա... եսպես տղին կսազի մեր Նատալիյեն... Մեղք է քույրս, աղջիկը հասել է, էլ իմանում վո՞նց ճամբու դնի»:

Ցեվ ահա այդ մեծ հարցը սկսվեց քննության առնվել յերկու քույրերի մեջ: Տանտիրուհին հայտնում էր քրոջը իր դիտողությունները ուսանողի մասին, մասամբ, ծածկելով թերի կողմերը:

Ծրագիրն իրագործելու համար տանտիրուհին յերբեմն հրաւիրում եր ուսանողին թեյի կամ սուրճի, հիւրասիրում քաղցրաւենիներով, թխուածքներով ու դդուչութեամբ հարցեր տալիս, նոր «հանդամանքներ» իմանալու համար:

— Վոր ուսումն ավարտեք, ի՞նչ պետք է դառնաք.

— Ադվոկատ եմ լինելու:

— Լավ դործ է, Ալանովի պես սեփական տուն, սեփական կառք կունենաք:

— Չա՛, իհարկե, համաձայնվում եր Փանյանը, ժպտալով:

— Բայց մենակութիւնը լավ չի... ինչի՞ չեք պսակվում:

— Ցես վոչ թե ադվոկատ, այլ վարդապետ պետք է դառնաք,—կատակով պատասխանում եր Փանյանը:

— Չե՛, հանաքը դենը, յեթե մի լավ նամուսով աղջիկ ըլի,—որինավոր ընտանիքից, բաժինքով, չեք ուզի՞...

Ուսանողն ղդաց, վոր «ցանց» է պատրաստվում, բայց իրեն չհասկանալու ավեց:

— Չա, յեթե մի ենպես աղջիկ պատահի,—հարուստ, դեղեցիկ, սեվաչյա, են ժամանակ կմտածեմ...

Տանտիրուհին ժպտում եր, հյուրասիրում բաղմատեսակ մուրաբաններով ու մոքում ասում:

— Կամաց-կամաց կկակղես... մի որ եվ վոտդ թեվ կկապենք...

***

Ամառվա արևը մայր մտնելու մոտ եր: Քաղաքի վողոցները, տները, կարծես մեծ հրդեհից հետո անդրադարձնում են կուտակած տաքութիւնը, ջերմ ալիքներով վողողում անցորդներին:

Ուսանող Փանյանը վերջացրել եր իր դասը, մի ժամ եվ կարդացել Բելտովի գրքից՝ պատմական մատերիալիզմի մասին ու դուրս յեկել վողոց:

Վերջերս նրան տանից դուրս վանողը իր վողբալի ֆինանսական վիճակն եր, յերկու որ եր, չեր ճաշել, իսկ այսոր հավաքել եր Թամբաքվի վերջին փչրանքները ու հաղիվ մի անգամ ծխել: Սենյակի վարձն եվ պարտավորվել եր ակզբից վճարել, սակայն բացի խոստումներից դեռ վոչինչ չեր ավել: Լավ է, տանտիրուհին՝ նկատի առնելով, վոր ուսանողը վեսացու յե,

շատ քաղաքավարի և փափուկ ձևով էր հիշեցնում, թե չե այս կողմից էլ դրությունը վողբերգական կլիներ:

Միակ հույսը մասնավոր դատն էր, բայց սա էլ թարմել էր. ամեն որ մտաբերում էր փողն ուղել աշակերտից, բայց հենց վոր մոտենում էր ասելու բոլեն, հետաձգում էր մյուս որվան: Ուրեմն մնում էր պարտք անելը, բայց ո՞ւմից... բոլոր աղբյուրներն արդեն սպառված էին: Այնուամենայնիվ նա դուրս էր գալիս փողոց, հուսալով, վոր կհանդիպի վորևե ընկերոջ կամ ծանոթի և կխնդրվի այս դրությունից:

Նրա արտաքինի վրա աղքատ ուսանողի դրոշմ կար՝ հագին ուսական ձևի կապույտ բլուզ էր, ու վրան կապած փինջաձևը, բարակ գոտի: Շալվարը մաշված էր, սպոտված ու «հայելի» դարձած. ուսանողական դվոտրկը խուճապել էր՝ կապույտից կանաչի փոխվել, իսկ կոշիկները բավականաչափ կարևաններ ունեյին:

Փանյանի դեմքը իր խոժոռած, խիտ հոնքերով՝ ակնոցների տակից նայող քննական հարձակողական հայացքով «ժխտողական» արտահայտություն ուներ: Մեջը վխտացող նոր գաղափարներից թևավորված, նա պահանջ էր դդում վիճելու, նոր հավատի բերելու ամենքին, տապալելու «բուրժուական ամբոխթյուններըը»:

Փողոցի անկյունում նա կանգ առավ, վորոշելու համար, թե ո՞ւր պիտի դնա, ո՞ւմ պիտի դիմի պարտք անելու համար, բայց դրա փոխարեն հիշեց նոր կարդացած գիրքը:

— «Թեղիս, անաթեղիս, ուֆարեղիս» կրկնում էր նա մրթթում նոր կարդացած գրքի ազդեցության տակ, ձեռնափայտով խփելով գետին: «Ամեն ինչ, վոր գոյություն ունի խելացի չէ... Անտանելի չոլից ամեն քայլի հետ քրտինքը վրա չէր տալիս: Նեղ փողոցների ծանր, դարչահոտ ոդը ճնշում էր շնչառությունը: Հասնելով փոքր հրապարակին, Փանյանը հանկարծ ցընցվեց. — «Ելի ես կոլմոլն անցա՞... դրողը տանի, չե՞ վոր վճռել էյի դեսը չդալ...

Նրա չվոխության պատճառը պատուհանից նայող որիորդն էր՝ իր տանտիրուհու քրոջ տղկիկը: Որվա վոր ժամին էլ անցնելիք՝ կռեանելիք նրան հրապարակի կողմի պատուհանից դիտելիս: Նայում էր աչքի տակով, բայց նկատում ամեն ինչ, կարծես լուսանկարում էր անցորդներին:

Ամեն անգամ, երբ Փանյանն անցնում էր այս տան առաջից,

նա ընկնում եր չխոթության մեջ: Այնպես եր թվում, թե ուրիորդը նկատում է նրա արտաքինի վրա ինչ որ ծիծաղելի բան,— թվում եր, թե շորն է պատռված (մանավանդ չալվարը, որն արդեն հոպնավարքի մեջ եր), կամ մի բան թարս է հագել, բլուզի տակից չասլիկն է երևում, և այլն և այլն· ներևակայությունը պատկերացնում եր մի շարք այսպիսի պատահարներ:

Հենց որ ուրիորդը նկատում եր ուսանողին, նա մի առանձին հետաքրքրությամբ սկսում եր նրա վրա իր դարուկ դեմքը և աչքերը չռում ապահովությամբ, ասես վախենալով, որ կարող է մի բան բաց թողնել առանց նկատելու:

Ու ամեն անգամ լրատ սենյակում, նրանց մեջ սկսվում եր մի տարօրինակ լուռ խոսակցություն, որն այս անգամ կարելի եր թարգմանել այսպես·

Ուրիորդը—ինչ ես ավարա մանդալս—պատկվեր հետո... վոզ, բաժինք կբերեմ, տուն կղնես-կհարսանանաս...

Ուսանողը—Ես բաժինքի հետ դու կբերես և քո տահմանավոր, քաղքենի ուղեղը...

Ուրիորդը—Ինչ ես չաս յերևակայում—սես կոշիկը պատռվել և, սպասակ դուլպան յերևում է... (աչքերը չռած դիտում է ուսանողի կոշիկները):

Ուսանողը—(չխոթվում է, կարմրում մինչև վիզը) վո՛ւհ, մոռացա, որ կոշիկս պատռված է... դանե թանաքով սևացնելի սպասակ դուլպան...

... «Պետք է վերջ տալ այս կոմեդիային», ասաց ինքն իրեն Փանյանը, անցնելով ուրիորդի «քաշարանից»: Սակայն նա միշտ այսպես վճռում եր ու հետո մոռանում, իսկ ամեսիրուհին չարունակում եր հարճախոսությունը, չնկատելով ուսանողի դավեշտական վերաբերմունքը:

Ուրիորդն արդեն դիտեր հարճախոսության մասին: Ամեն որ մայրը ու աղջիկ կշռադատում եյին ուսանողին՝ մեկ վոգևորվելով նրա ապագա դիրքով, մեկ կասկածելով: Սակայն դրականը միշտ հաղթում եր բացասականին, և Փանյանն որ որի վրա ամրանում եր վեճացուի դիրքում:

***

Նեղ վոզոցից դուրս գալով, Փանյանն ընկավ խանութների շարքը: Վաճառականները՝ նոր զարթնած հետճաշյա քնից, նըս-

տել էին խանութների առաջ ու թմրած աչքերով նայում էին ղեմացը, ծուլ-ծուլ հովհարելով թաշկինակներով բաց կրծքերը: Գնդժակները հանած, ժիլետների կոճակները արձակած, ներանք զբաղանցում էին երար վրդված փորերով, կախ ընկած թշերով ու հասո, արյունակալած վզերով: Յերբեմն նրանցից մեկն ու մեկը կոպիտ ձայնով կանչում էր դործակատարին, ապրսպրում զովարար խմիչքներ, ու բերելուն պես խմում ուղղակի շշերից:

Փանյանն անցնում էր, Թունոտ հայացքներ ձգելով ճարպակալած դեմքերին ու խորհրդածում էր—«ա՛խ, հեղափոխություն, ո՞ւր ես մի դուրս չպրտես այս գիշատիչներին իրենց վորջերից»...

Մինչդեռ նա անցնում էր այսպես խորհրդածելով, հանկարծ նկատեց, վոր իր շուրջը իրարանցում է ընկել: Վաճառականները շտապ-շտապ, վեր էին թռչում, հագնում գնդժակները ու կանգնում խանութների առաջ:

Ուսանողը հետ նայեց: Հայտնի հարուստ Թարխանյանն էր դալիս: Այսոր նա բավական ուշ էր վերադառնում իր դրասենյակից՝ յերևի մի անակընկալ լուր էր ստացել:

Նրան ուղեկցում էին մի խումբ աչքի ընկնող վաճառականներ, վորոնք սովորաբար միանում էին չքամարին իրենց խանութներից՝ Համբարձում Գերասիմիչին մեծարելու, նրա աչքը քաղցրացնելու համար:

Թարխանյանը գալիս էր ծանր, նշանակալից քայլերով, ու քայլերի հետ դուգընթաց կանոնավոր շեշտով խփում էր գետնին իր արծաթադլուխ ճեռնափայտը: Մխահեծան իշխանի նման նա ծանրացնում էր իր ամեն մի շարժումը և Թունոտ հաճույքով ընդունում էր իր վրա դարձրած հպատակվող հայացքները: Նրա դոռող դեմքը՝ իր խոժոռած հոնքերով, ջղուտ կնճիռներով ու դաղտաղած աչքերով մի ձգտում էր դուցադրում՝ ընկճելու, սոսրացնելու մարդկանց: Խանութների առաջ չարված վաճառականները խոբը դլուխ էին տալիս, բայց Թարխանյանը ճևացնում էր, իբր չեր նկատում: Իր շուրջը պատած վաճառականները, մեկ մեկու առաջ կարելով, խոսում էին հետը, ամեն կերպ աշխատելով երենց վրա դարձնել ուշադրությունը, բայց նա չլսելու յեր տալիս ու այ ու ձախ դարձնելով դեմքը, մեքենաբար կրկնում.

— Հը՞.

Աղաղը նորից եր կրկնում իր ասածը, բայց Թարխանյանը եր արհամարհող բարձրությունից վողորմության պես ուշադրության մի փշրանքն եր ձգում ու համարյա մեքենաբար կրկնում.

— Հա՛...

Ու այս «հը՛»-ի և «հա՛»-ի մեջ նա դիրիժյորի նման ղեկավարում եր չղջասպատի քծնող յերաժշտությունը:

Մի րոպե Թարխանյանի և ուսանողի հայացքներն իրար հանդիպեցին. Թարխանյանի մեջ մի անախորժ զգացում անցավ Փանյանի չխոնարհվող դեմքից, վորը նրա աչքի համար անսովոր ու խորթ եր:

— Ես վարժապետին մտիկ,—ասաց նա իր կողքի վաճառականին, հենց իմանաս վեկսիլը «պրոտեստ» ե դնացել...

— Փաղցած ատուդենտ ե յերևում, ժպտալով ուղղեց վաճառականը:

— Հաշիվը մեկ ա, մաղերը յերկար, ջերը՝ դատարկ...

Ուսանողը կանգնել եր հպարտ ու ձիգ և հեղնող ժպիտը դեմքին, չեշտակի նայում եր Թարխանյանին ու ասում մըթքում.

— Պատմության դիալեկտիկան քո դերեզմանն ե փորում որ ու դիշեր:

Թարխանյանի չքախումբն արդեն անցել եր, բայց Փանյանը մի քանի րոպե դեռ նայում եր յետևիից: Ապա սթափվելով, նա ամուր խփեց գետնին ձեռնափայտով, ու շարունակեց իր ճամբեն:

***

Մեծ հրապարակի անկյունում նորից Փանյանի աչքին ընկավ «Պարիկմախեր ժորժ»-ի ցուցանակը: Բացի ճակատի մեծ ցուցանակից, կար և մի փոքրը՝ վարսավիրանոցի անկյունի ուղղությամբ: Ճամին ծռել եր ցուցանակը և «պարիկ-մախերի» տեղ թողել միայն «մախերը», բայց ինչպես յերևում եր ժորժը (կամ Ղազախեցի Մուքելը) դրա մասին իսկի չեր ել մտածում:

Ուսանողը ներս մտավ վարսավիրանոց: Նրա առաջ բացվեց մի հայկական տեսարան՝ մեծ հայելու առաջ, դլուխը, մարմարե սեղանին հենած, քնել եր ժորժը ու խռմփացնում եր իր մեծ քթով այնպես ուժգին, վոր հայելինները դողդողում եյին: Մի առանձ-

Նահատուկ վարպետության անուշահոտությունը եր ալրում ներ-
ը, որից այդ շուտ պահին կարելի չե ուշադրվել:

Ուսանողը մոտիկը եր հիմնովին ատելու մարդուն ու բե-
լերը, դեմքը փոխելու նպատակով, որովհետև չերեկոյան պի-
տի պնար բանվորական ժողովի: Բայց ժորժի քունը այնքան հա-
մոզիչ եր, որ նա սկզա չարամ դարձեցնելու, մանավանդ որ
ապատիկ պիտի ատրվեր:

— Ահա մի մարդ, որին հեղափոխություն չի հարկավոր,— ասաց Փանչանն ու լնքն լրեն ժպտալով դուրս չեկավ վարպետ-
րանոցից:

Անցնելով բուլվարը, նա ըստ սովորության կանգ առավ դրախանութի առաջ՝ նոր լույս տեսած գրքերին աչք ածելու հա-
մար: Յերբ ուզում եր անցնել վիտրինայի չերկրորդ մասը, հան-
կարծ նկատեց աչ կողմից մի մարդ, որը կապածելի թվաց. թեպետ հագել եր բանվորի հասարակ շորեր, բայց չերևում եր՝ ինտելիգենտ եր, և իրեն բանվոր եր ձևացնում:

Նրան մատնում եյին իր դաղտնի հայացքները, որ նա մեկ-մեկ աչքի տակով դարձնում եր ուսանողի վրա ու չինծու անտարբերությունը,—իրը թե իսկի յել չեր հետաքրքրվում փանչանի գործերով և միայն գրքերին եր նայում:

«Գաղտնի վոստիկան է» անցավ փանչանի մտքով. նա մի քանի րոպե դիտմամբ կանդնեց վիտրինի առաջ, իրը թե չի նկա-
տում վոչինչ, ապա հետացավ դանդաղ քայլերով վորպեսզի կապած չը հարուցի, մինչև որ հասավ փողոցի անկյունը:

Այստեղ նա մատնեց իր անհորձությունը—թեպետ դիտեր, որ չպետք է հետ նայել, բայց չհամբերեց, հետ նայեց: Գաղտ-
նի վոստիկանը դարձյալ կանդնած եր վիտրինի առաջ և աչքի տակով հետևում է ուսանողին:

Ծռելով ճամբեն դեպի աջ, փանչանն արագացրեց քայլերը. շատ չանցած՝ նա ընկավ նեղ փողոցների ցանցը ու պատկ ավելով նորից դուրս չեկավ քաղաքի կենտրոնը:

«Սա յել մի բան չեր, մտածեց նա,—վոխանակ հետանալու կենտրոնից, նորից յեկա այստեղ»:

Նա նեղ մտավ ժորժի վարպետրանոցը և ատելուց հե-
տո՝ չտապեց դեպի քաղաքային վոքրիկ այգին, վորտեղ պի-
տի հանդիպեր բանվոր Մարգարին:

## II

Մի փոքրիկ այգի էր, այնքան փոքր, որ միայն անճարացած քաղաքային կարող էր նրան այգի համարել: Մի քանի փոչոտված ծառեր, մի քանի մարդիկ, նստարաններ: Շրջապատի փողոցների փոշին ու աղմուկը ազատ մուտք ունեին այնտեղ, այնպես որ կարելի էր նույնիսկ հարց տալ, ինչո՞վ է զանազանվում այգին փողոցից: Կարճ ասած,—փոքրիկ այգին այն Ֆիքցիաններից էր, որոնց մարդիկ հավատում են, ուստի և նավել էր կատարում իր դերը:

Ամառվա յերեկոներն այստեղ էին հավաքվում՝ համեստ կարողության և համեստ յերևակայության տեր մարդիկ՝ մանր տնատերեր, յերեսուն–քառասուն տարեցող ծառայողներ, կոտր ընկած վաճառականներ, հանգստացող ծերուններ:

Կար մի խումբ, որը համարյա ամեն յերեկո գալիս էր, գրավում մի ևեթնուչյն նստարանն ու զրուցում, սկսելով յեղանակից, ապա անցնում արտաքին քաղաքականության, կրկնելով քաղաքի փոքրիկ լրագրի փոքրիկ դատողությունները՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի մասին:

Այնուհետև պատմում էին պատերազմներից, հին–հին բաներից ու վերջը գալիս, կանգ առնում հարուստների վրա, խոսում նրանց նիստ ու կացի, բնավորությունների, թողած կտակների մասին:

Զրուցում էին հանդիստ տոնով, առանց չտապելու ու մեջ–մեջ բարձր ձայնով հորանջում: Այնպիսի անդորրություն էր տիրում, ասես վաղուց սահմանված կարգով մի հին արբատրծված պատմություն էին կարդում:

Ու ամեն յերեկո, նույնպես վորոշ կարգով գալիս կանգնում էր յերկնքում՝ այգու դիմաց, Մեծ Արջի համաստեղությունն, ու ժպտալով նայում էր ներքև իր յոթն աչքերով, կարծես ուրախանալով, վոր յերկրի վրա յել կան համաստեղություններ, նույնպես հաստատուն և կանոնավոր ընթացքով:

Ներս մտնելով այգին, փանյանը յերկու անգամ պտույտ արավ, բայց չհանդիպեց բանվոր Մարտարին: Ծառուղիով անցնելիս՝ նա հանկարծ դիպավ իր ընկերոջ,— Միքայելյանին:

— Բարև, Աշոտ:

Միքայելյանը կարծես վեր թռավ:

— Փանյան, դու յե՞ս,— հարցրեց խանձված ձայնով:

— Հը՞ վո՞նց ես... բեր մի ծխեմ. եսոր յերջանիկ դրութեան մեջ եմ—վոչ ճաշել եմ, վոչ ծխել:

Միքայելյանը հանելով դրպանից ծխախոտի տուփը—տպա մի թղթադրամ ու դրեց Փանյանի ձեռքին:

— Ուրի՞շ ինչ կա, հարցրեց Փանյանը մեծ բավականութեամբ ներս քաշելով թամբաքվի ծուխը:

— Նուն դրությունը շարունակվում է,—տխուր պատասխանեց Միքայելյանը:

— Ցերևի այնքան ես տարված, վոր էլ ուրիշ բաների մասին չես մտածում. կարդացի՞ր են... հարցրեց նա ցած ձայնով:

— Կարդացի, բայց ուշքս վրես չեր. դիտես Լևոն, պարզ կասեմ—ինձանից սոցիալիստ չի դուրս գալ. թեկուզ էլուխս սոցիալիստ դառնա, մարմինս կմնա բուրժուա...

— Ուրեմն դեռ էլի վատով-էլիով տարված ես:

— Ես ի՞նչ ասեմ,—հառաչանքի տոնով պատասխանեց Միքայելյանը, ձեռքը հուսահատորեն շարժելով վերեվից ներքև:

— Դե՛հ, ցտեսություն,—ասաց Փանյանը չուզենալով խանգարել նրա մխայնությունը:

Միքայելյանը հազիվ լսելի ձայնով հրաժեշտ տվեց ու շարունակեց հետ ու առաջ քայլել:

Սրդեն մի չարաթից ավել եր, Միքայելյանը այնքան հաճախ եր դալիս այստեղ, վոր համարյա իր տունն եր դարձրել այս փոքրիկ այդին:

Նրա դաղտնիքն այն եր, վոր սիրահարվել եր դիմացի տանը ապրող որիորդի վրա, բայց նրա ծնողները, լրենց «լայեղ» չտեսնելով Միքայելյանին, խստիվ արդելել եյին որիորդին տեսնվել նրա հետ, նույնիսկ վերջերս տանից դուրս չեյին թողնում:

Սրանց յերեկո մի քանի անդամ որիորդը յերևում եր այդու դիմացի պատշգամբում, կանդնում եր լաստերի մոտ վորպեսզի «նա» տեսնի ու իր լուսնի նման սպիտակ, թխածոտ դեմքը դարձնում եր դեպի այդին:

Նույն րոպեին ուսանողն էլ դուրս եր դալիս այդուց ու կանդնում փողոցի լապտերի տակ, վորպեսզի «նե»-ն տեսնի, ու սիրաբորբոք հայացք եր նետում դեպի պատշգամբը, մրմնջալով սիրային խոսքեր:

Այսպես նայում էին իրար, մինչև վոր որխորդը հիշում եր Ձոր խաստուքյունը ու ներս մտնում սենյակը:

«Լուսինը» մայր եր մտնում և Մխքայելյանը արտակոտոր վերադառնում եր այդին ու շարունակում եր քայլերը մինչև ուշ գիշեր, լցնելով ծառուղին իր ախ ու վիշով ու թամբաքվի քուլա-քուլա ծխով:

***

Բաժանվելով Մխքայելյանից՝ փանյանը մտածում եր—«Ահա կանցնեն որեր, որխորդի ծնողները կհաշտվեն, Մխքայելյանն էլ կավարտի, կամուսնանա ու կդառնա մի զոնտիկավոր քաղքենի... Այո, նա էլ այդում նստած «համաստեղուքյանն» է պատկանում...

Իսկ «համաստեղուքյունն» արդեն հավաքվել եր, բազմել նստարանի վրա: Բայց այստվա խոսակցուքյան մեջ լինչ վոր անհանգստուքյուն եր նկատվում ու ձայներն էլ սովորականից քարձր էյին հնչում:

Խոսում եր տնատեր Բուդաղյանը:

— Ախպեր, յես ասել եմ, և կասեմ՝ որենքը պետք է ենպես պինդ ըլի, վոր ես ճամբից դուրս յեկած մարդկանց հախից պա: Հմի խոսքս լինչի վրա յե,— իմ տունը, կարելի յէ տեսած ըլնեք—լավ տուն է, ե՛հ լավ կենտղներ էլ շատ եմ ունեցել: Բայց հիմի մի բանվոր է պետում ներքևի սենյակում,— լինչ ասեմ, ուղղակի աստծու կրակ է... Առաջվա ժամանակը ո՞վ կլսեր բանվորի կամ արհեստավորի ձենը: Սա մի ուրիշ քան է. էլ դաղար չի տալիս:

— Ինչ է ուզում, հարցրեց կողքին նստող «նախկինն» վաճառականը:

— Ինչ է ուզո՞ւմ, կռիվ է ուզում. մեկ ասում է՝ տունդ խոնավ է, լինչի առաջուց իմաց չարիր, մթամ յես խարել եմ...: Են որն էլ կանգնել է, թե տունդ ճեղքված է, պետք է կամխես կանչել տամ, վոր քննեն, տեսնեն: Մեկն ասի—առաջինը՝ իմ տունը քանդվելու լինչ ունի, դրանից էլ լավ տո՞ւն... վրա յերկուսն էլ ապրանքը իմը չի՞, հավանում չե՞ս,—դնա ուրիշ տեղ, թող իմ խոնավ սենյակը ինձ մնա...

Հանկարծ նստարանի առաջ պայթեց մի անսովոր, ուժեղ ձայն, վորը բոլորովին խորթ եր համաստեղուքյան կարգերին:

— Սաի հերն անիծած՝ թե քո տունը չի քանդվո՞ւմ:

Բուդաղյանը վեր թռավ տեղից։

— Եսաեղ ել դաղար չես տալի՞ս— դրդռված պատասխանեց նա, ի՞նչ քո գործն ա, թե ում տունն ինչպես ե, չես ուզում՝ դնա ենսեղ, վորտեղից կեկել ես։

— Ձե՛մ դնա, մինչև դվխիդ կամխա չբերեմ. ինձ վոր խաբեցիր, խոնավ տունդ «տաղաղրիր» բա քեզ կմարսեցնե՞մ։

— Ախրանքը լմը չի՞... դնա ելի, թե չես ուզում։

—Ի՞նչ ախրանք, եղ վորտեղի՞ց ե, ախրանքը քո ձեռքով ե չինվա՞ծ. թե՞ ինձ պետնեցի։

— Նաթա կես դվխիս. ի՞նչ ես կուպրի նման կպել. կես պղաս, գու ուզում ես իմ տան դվխին խաթա բերես, համա նեղրոդություն կանես,—հենց գուրս աննել տամ քեզ, վոր իմանաս թե որենքը վորտեղ ա։

— Ո՞ւմ գուրս անես, մի փորձի տեսնեմ...

— Ախպեր, դնանք, եսաեղ ել չեն թողնում մարդ հանդստանա...

Ու արագ քայլերով գուրս դնաց այդուց։ Նրան հետևելին համատեղության մյուս անդամները, վախենալով վորևե անկարդությունից։

***

Փանյանը հենց սկզբից նկատեց, վոր խոսդը բանվոր Մարդարն եր։ Յերբ Բուդաղյանը գուրս դնաց այդուց, նա մոտեցավ Մարդարին ու թևքից քաշեց։

— Ես ո՞ւր ես, չերեվացիր ժամանակին։

— Դո՞ւ կես Լևոն... չճանաչեցի։ Գնանք խոսելով։

Նրանք գուրս կելան այդուց և կանդ առան մոտակա վոչ բանուկ մի փողոցում։ Խոսում ելին ցածր ձայնով։

— Ժողովը հետաձդեցինք վաղվան, նույն ժամին։ Եսոր չհաջողվեց։

— Ես ի՞նչ կուլի մեջ եյիր։

— Վոր իմանաս, թե ի՞նչ ավազակ մարդ ե իմ տան տերը, չես պարմանալ, եղ լիրը դնացել ե մատնել, թե մեր տանը ժողովներ ենք անում։ Լավ և առաջուց իմացա, թե չե կարող եյինք խաթի մեջ ընկնել։ Յեկան խուզարկեցին, բան չդըտան, դե իհա՛րկե, առաջուց մաքրել եյի։

— Մի քիչ անդդուշ եյիր խոսում։

— Ենպես կատաղած եյի եղ անլիմածի վրա, վոր հենց նրա

ադամի ձենը լսեցի թե չէ ել չկարողացա համբերեմ, վոր կախաղան ել տանեյին, ելի կասեյի: Ա՛խ, մի դրա դատաստանն ինձ տան, յես գիտամ, թե ի՞նչ կանեմ:

— Բայց ես յերեկո նրանց «դատեն» խանգարեցիր:

— Հա, լավ են իրար գտել, որանք վոր կան՝ են մեծ բուր-ժուանների մանր-մունր տականքներն են, բայց նրանցից ավելի յեն հարահրող անում: Հեղափոխականների մասին վոր լսում են, ենպես են խելքները կորցնում, կարծես ահել դատաստանն է գալիս: Սրանք հե՛չ, ավելի մեծերը՝ ուժեղները կան,— նրանք են մեր գլխավոր թշնամիները...

— Ուրի՞շ, ընկերները վո՞նց են.

— Լավ են. հետզհետե գործադուլի տրամադրություն է ստեղծվում: Պետք է ուժեղացնենք կռիվը, մինչ պատրաստ պահենք մեր գնդերը... Ընկեր Լևոն, ճիշտ է, մենք տանջվում ենք, բանտարկվում, աքսորվում, բայց վերջը կհաղթենք, ես ձեռքը վիա, կհաղթենք... Ասաց ու բռունցքը ուժեղ թափահարեց:

Տիրեց բոպեյական լռություն: Մարդարը ուշադրությամբ նայում եր փողոցի ուղղությամբ:

— Տենո՞ւմ ես Լևոն,—ասաց նա—հրեն մեկը են անկյունից մեզ հետևում է. կամ ինձանից է կպել կամ քեղանից. աչքենք դու «նորընծա» յես դժվար թե շուտ նկատվես:

«Նորընծա» խոսքից ուսանողը կարմրեց, ինչպես յերբեմն կարմրում եր, յերբ ասում եյին— «բեխերդ նոր են դուրս յեկել»: Զնացած, վոր նա նոր եր հեղափոխական ասպարեզ իջել, բայց իրեն փորձված հեղափոխական եր համարում:

— Ետոր մեկն ել ինձ եր հետևում:

— Դե, ցրվենք, թե չե կկպչի: Ուրեմն վաղը՝ ելի նույն տեղը ժամի 9-ին: Դու աչ գնա յես՝ ձախ:

Մարդարը հեռացավ արագ քայլերով, իսկ ուսանողը մի քանի փողոց անցնելով, մտավ կաթնատունը, չորաց կերավ մի բաժակ մածուն, դնեց ծխախոտ ու քայլերն ուղղեց դեպի տուն:

Լուսինը դուրս յեկավ, մի առանձին խորհրդավորություն և քնքշություն սփռելով ամեն ինչի վրա: Ուսանողը գնում եր տուն ամայի փողոցներով, ծխում եր ու խորհրդածում: Այսուհետև իր կյանքի նպատակը թվում եր վորոշ—նա պիտի արթնացնի ժամանակիս հսկային՝ պրոլետարին, ու ցույց տա նրան իր պատմական ուղին: Նա իրեն կոչված եր համարում մի մեծ, բայց դժվար գործի համար, և գիտում եր, վոր այդ գործը նախ

և առաջ պահանջում է անձնազոհություն: Ու յերբ մոտածում եք անձնազոհության մասին՝ թեթև ամպի նման մի տխրություն եր լցնում. թվում եր թե կասկածում է իր ուժերի վրա ու հարց եր տալիս ինքն իրեն՝ արդյոք պատրաստ է զոհվելու...

Տխուր ամպը զալիս եր, անցնում... լհա՛րևե, նա պատրաստ է զոհվելու այդ մեծ՝ նույնիսկ մեծագույն գործի համար...ինքնասիրությունը չոյվում եր, վոչ վաղվանից պիտի ուժեղացնի իր գործունեյությունը:

Լուսինը նայում եր վերևից ու թվում եր, ավելի յեր վեհացնում նրա մտքերը: Յերևակայությունը թռչում եր հեռու, ու մեկը մյուսից ավելի դրավիչ պատկերներ ստեղծում...

Ա՛հա բնդհանուր գործադուլ է.—Ընկեր Լևոնի ղեկավարությամբ խմբվել է քաղաքի հակայական բանվորությունը...Հանկարծ նա նկատում է, վոր գործը չրջապատել է իրենց.— այն վճռական մոմենտն է, յերբ գործը պիտի համազարկ տա, ու նա՝ ընկեր Լևոնը, մի բարձր տեղից դիմում է զինվորներին.

— Ընկեր զինվորներ. յեթե ձեր մեջ չի ցամաքել պրոլետարական արյունը, դարձրեք ձեր զենքը մեր ընդհանուր թշնամու դեմ...

Ցեվ հանկարծ... զինվորները ձգում են զենքերը ու զրկախառնվում բանվորների հետ... հեղափոխությունը հաղթանակում է ու ընկեր Լևոնը հայտարարում է բանվորական դիկտատուրա...

Տարված յերևակայությամբ՝ փանյանը չեր նկատել, վոր իր բնակարանից առաջ է անցել: Նա կանգ առավ մի վայրկյան առաջ ու հետ դարձավ:

Նորից մտավ իր վոջր սենյակը ու նորից վողջունեցին նրան Մարքսը, Լենինը, Պլեխանովը:

Կարդում եր ու յերբեմն կանգ առնում. թվում եր, թե մի ձայն կանչում է հեռվից—«մենք կհաղթենք... ես ձեռքը վկա, մենք կհաղթենք»...

## III

Ժողովը քողարկելու նպատակով բանվոր Սրամը սեղան եր սարքել, դրել եր մի քանի շիշ դինի, յերշիկ, պանիր, կանաչի, սեղանի մեջտեղն էլ բազմեցրել եր մեծ հեչտայեռը:

Դրսում նա կանգնեցրել եր իր տասյերկու տարեկան տղա-

յին, վորպեսզի վոսոխկան կամ ուրիշ կասկածելի մարդ տեսնելուն պես՝ իմաց անի:

Ժողովականներից արդեն վեց հոգի յեկել եյին: Վերջապես յեկավ և յոթերորդը—Պետրոսը, դունատ դեմքով բեխերը ցած թողած ու մի աչքը չիլ արած:

— Ֆեզ ենք սպասում, ասաց Մարգարը.—Հը՞, դուրսը կասկածելի մարդ հո չտեսա՞ր.

— Չկար: Ցես հենց դիտմամբ ուշ յեկա, վոր մի լավ աչք ածեմ.

— Եղ չները, ինչպես յերևում է, գործադուլի հոսն առել են, ել դիշեր ցերեկ դաղար չեն տալիս:

— Եղ նրանից է, Մարգար, վոր մենք պատավ նանի նման մի գլուխ խոսում ենք ու հետաձգում գործադուլը,—ասաց բանվոր Ստեփանը, վորն ամենից ջահելն եր նրանց մեջ.—խփե՛նք գնա... գործադուլ ենք անում—աննենք.ել ի՞նչ ենք մի ամիս փիլիսոփայություն անում:

Նա վեր կացավ ու ձեռքերը դրպանում քայլեց սենյակում. լեքը թմբլիկ մարմինը դղրդում եր քայլերից.

— Դու յել հենց քո ճին ես քշում,—պատասխանեց Արամը, քառասունի մոտ բանվոր, մորուքի ու բեխերի մեջ կորած դեմքով.—մի չորս կողմդ ել նայի, տես ինչքան անգիտակից ընկերներ ունենք. առանց պատրաստելու չի կարելի սկսել գործը.

— Ե՛հ, դուք ել մշտ հին յերգն եք յերգում,—ասաց Ստեփանը կանդնելով Արամի դիմաց—պա՛տրաստ չեն... Եղ վաղուց ենք լսել. իսկ յես ասում եմ, պատրաստ չեն լինիլ. դո՛ւ պետք և քո հետևից քաշես նրանց:

— Ֆաշելուն կտրվել ել կա. սլիտի ամուր կապենք հետները.

— Զարմանալի յե, ինչո՞ւ ամուսնացած բանվորներդ եղպես վամաց եք չարժվում:

Բանվոր Մարգարը մոտեցավ Ստեփանի յետևից ու նրա ականջից քաշեց.

— Դե՛, քաջ Ստեփան, չատ մի բռբռթալ. դու դեռ ժանդարմի ու բանտի յերես չես տեսել և լավ կանես՝ քո վորճված ընկերներին հետևես. չտապողին աղա չի ըսել:

— Իսկ վամաց դնացողին իսկի աղջիկ ել չի լինիլ:

— Դե՛, ընկերներ, սկսենք, ասաց Արամը, առաջարկում եմ նախագահ՝ ընկեր Մարգարին:

Մյուսները համաձայնվեցին և Մարզարը նստեց սեղանի մոտ:

Ուսանող Փանյանը նստել էր թախտի վրա ու հենված մուրթաքին՝ մտքում կրկնում էր դեկուցման սկիզբը պատրաստի վրիպանոներով:

— Ձոսքը ձերն է, ընկեր Լևոն,— ասաց Մարզարը:

Փանյանը յերկու անգամ հազաց, պոպելով իր չվոթուԹյունը ու սկսեց, բայց վոչ այնպես ինչպես ինքը յենԹադրում էր: Մի քանի րոպեյից հետո չվոթուԹյունն անցավ և դեկուցումն ընկավ իր բնական հունը: Նրա վոգևորուԹյանը հետևեու ավում էր, բերած որինակները մեկը մյուսից պերճախոս ապացուցում էին նրա տեսակետը:

Ունկնդիրները հետաքրքրուԹյունը լարած լսում էին ու վրակվում նրա վոգևորուԹյամբ: Պրոլետարիատի անցած արյունոտ կռիվները մշուշապատ հեռվից հանճնարարում էին չարունակել պայքարը. մինչև վերջնական հաղԹանակը: Մեջները կուտակված ժժդոհուԹյունը բռնկվում էր ու պահանջում—«Պետք է ւրավել, պետք է րոբծադուլ հայտարարել...»

Փանյանը վերջացրեց իր դեկուցումը կոմունիստական մանիֆեստի խոսքերով— «Պրոլետարները վոչինչ չեն կորցնի, բացի իրենց չղԹաններից, բայց ձեռք կբերեն ամբողջ աշխարհը»... Ու քրտինքի մեջ կորած կանգ առավ:

Վերջանալուն պես բանվոր Սահակյանը վեր կացավ տեղից ու Փանյանի ձեռքը պինդ սեղմելով, սկսեց Թափահարել:

— Ընկեր Լևոն, չնորհավորում եմ. տպամարդի պես խոսեցիր...

Բանվոր Պետրոսը ձայն խնդրեց Մարզարից:

— Ընկերներ, յես կարծում եմ, վոր մենք այսպիսի մանրամասն դեկուցում լսելուց հետո՝ ել հարցերով չդրաղեցնենք ընկեր Լևոնին, այլ ացնենք գործնական խնդիրներին:

— Ուղղակի խոսենք րոբծադուլի մասին, մեջամտեց Սահակյանը:

Այդ ժամանակ հանկարծ նեբս մտավ Աբամի տղան ու չնչաղատ ասաց.

— Մեր իրոքը պրկեցիա յե դալիս...

Բոլորը վեր ԹռանԹ:

— Լավ տեսա՞ր, հարցրեց Աբամը:

— Հա. յերեք հոգի եյին:

— Ընկերները, պետք է ցրվել, ասաց Մարգարը.

— Գուցե ավելի լավ է, նատենք իրը թե քեֆ ենք անում, առաջարկեց Սրամը.—մլևնուլեն է, արդեն ուշ է, վողոցում առաջներս կկարեն ու կբռնատեն.

— Չե, եղպես կարող ենք բոլորս թակարդն ընկնել. ասաց Մարգարը,— Թող մեկը դուրս գա, տեսնի պոլիցիան վորտեղ է, հետո յել գնան մնացածները:

Ուտանողը բանվոր Սրամի տղայի՝ Սուրենի հետ դուրս յեկավ գավիթ: Սուրենին ուղարկեցին հետախուզելու: Նա լուր բերեց, թե վոստիկանները հարևան տան մոտ կանգնած զննապանին են կանչում:

— Դե, Սուրեն գնա ասա, վոր բոլորը դուրս գան չուտով, տպատրեց Պետրոսը, իսկ ինքը ուտանողի հետ դուրս յեկավ վողոց:

— Դու առաջ գնա, պատվիրեց նա Փանյանին:

Մի քանի րոպե առաջ գնալով, Փանյանը առանց յերկար մտածելու՝ ճամբան ծունց գնալի կողքի վողոցը, բայց չուտով նկատեց, վոր առաջը վտակուղի յե: Յետ դառնալը վտանգավոր համարելով, նա ուղղակի ներս մտավ գնմագի տան գավիթը: Նրա բախտից տունը մուտք ուներ և մյուս վողոցի կողմից: Արագ քայլերով Փանյանը դուրս ընկավ վողոց, ուշադրություն չդարձնելով չան հաչոցի վրա:

Լուսինը դեռ չեր ծագել: Փողոցը մութն եր ու խորթ ու բորթ: Շտապելուց նրա վոտքը վտան ընկավ, և հավատարակչությունը կորցնելով, վռնդեց վողոցի խիտ փոշու մեջ: Իսկույն վեր կացավ, չուտպ-չուտպ թափ տվեց չորերը ու չարունակեց ճամբան:

Վերջապես հոգնած ու քրտինքի մեջ կորած նա հասավ իր բնակարանը:

***

Տուն վերադառնալով՝ Փանյանը նկատեց անդուխքների և պատշգամբի վրա արտակարգ լուսավորություն: Տան տիրուհու բնակարանից անսովոր ձայներ եյին լսվում. քսան յերևույթին հյուրեր կային:

Մոնելով սենյակը, ուտանողը մեկնվեց մահճակալի վրա ու

մտածում եր իր ընկերների մասին՝ թե արդյոք կարողացա՞ն ազատվել: Մտածում եր նույնպես թե վո՞րտեղ անցկացնի այս գիշերը, գուցե կարելի յե մի ավելի ապահով տեղ գտնել:

Դուռը ծեծեցին: Նա վեր թռավ, կարծելով, թե վոստիկանությունն է իր հետևից յեկել, բայց դուռը բացելով, տեսավ տանտիրուհուն:

— Ես ո՞ւր ես, լինչքան ժամանակ սպասում եմ. համե՛ցեք մեզ մոտ, հյուրեր ունեմ:

— Շնորհակալ եմ. գլուխս ցավում է, չեմ կարող:

— Եհ, ջահել տղեն կա՞ւ, թե գլուխս ցավում է... ա՛րի, գնանք որիորդների հետ ծանոթացնեմ:

— Շնորհակալ եմ,—նորից՝ կրկնեց Փանյանը:

— Ձե՛, չե՛, անպատճառ պետք է գաս. ես լ՞ինչ է վեր ես կնի՞ջ, լինչո՞ւ յեն չորերդ կեղտոտվել:

— Ձե, վողոցով կառք եր անցնում, նեղ տեղն ընկա, պատին քսվեցի:

— Դե—արի գնանք:

— Լավ, մի քիչ կարդի բերեմ չորերս ու կգամ:

«Սա լավ առիթ է» մտածեց Փանյանը, տանտիրուհու դուրս գնալուց հետո. «պետք է բուրժուական կյանքով ապրել, հեղափոխական գործունեությունը քողարկելու համար, թե չե վոստիկանության տեսակետից՝ յես կասկածելի կյանք եմ վարում»:

Շորերն ու կոշիկները մաքրելուց հետո՝ նա գնդեց ամեն լինչ լամպի մոտ, վորպեսզի «չխայտառակվի» վորևե պատուհածից:

Ցերը նա ներս մտավ, դահլիճում արդեն հավաքվել եյին մոտ տասնհինգ հոգի: Բոլորը հանկարծ լռեցին, հետաքրքիր հայացքները դարձնելով Փանյանի վրա:

Ուսանողի բնական չխորթությունը կրկնապատկվեց, յերբ հյուրերի մեջ նկատեց տանտիրուհու քրոջ աղջկան:

— Խնդրեմ, ծանոթանաք,—ասաց տանտիրուհին—քրոջս աղջիկն է, որիորդ Նատալիան:

Փանյանը կարմրած մոտեցավ որիորդին ու առանց նայելու նրա դեմքին, ձեռքը մեկնեց: Ա՛պա տանտիրուհին մոտ տարավ նրան բոլոր հյուրերին ու ծանոթացրեց:

Ցերկու որիորդ եյին հրավիրել, սևուկ ու տղեղ,—որիորդ Նատալիային «ֆոն» տալու համար՝ վորպեսզի նա ավելի դեղե-

ցիկ յերևար: Կային տիկիններ, գիմնազիստներ, մի պինվորական դպրոցի ուսանող ու տանտիրոջ խանութի գործակատարը:

Որիորդ Նատալիան նստած եր մի առանձին լարված, ձգված դրգռությով, կարծես մի դեր եյին հանձնել նրան և չարունակ կասկածում եր—կարո՞ղ և արդյոք կատարել այդ դերը: Կարճ մարմինը կոբսեռի մեջ ճնշվում եր, չնչառությունն արգելվում: Շիտթուբյունից կարմրում եր ու քողարկում իր բնական դալկությունը:

Փանյանը նստեց ազատ աթոռներից մեկի վրա: Գիմացի յեր-կու տիկինները սկսեցին քչփչալ, մեկ-մեկ հայացքը դարձնելով ուսանողի վրա:

«Յերևի արտաքինս են բամբասում, մտածում եր Փանյանը. ի՛նչ հիմարություն արի, վոր յեկա. պարզ է՝ բերել են այդ Նատալիայի հետ ծանոթացնելու և «գործը» սարքելու համար»...

— Ինչի՞ յեք սուս կացել, ջահելներ չե՞ք. ինչ յեղավ ձեր խաղը,—ասաց տանտիրուհին:

Գիմնազիստները վեր կացան ու չարունակեցին ընդհատված խաղը: Նորից սկսվեց չարժումն ու աշխույժ ծիծաղը: Ուսանողը ինքն իրեն տոկալելով մի կերպ մասնակցում եր, միորինակ ժպիտը պահելով դեմքին:

Խաղերից հետո մի տիկին նստեց խանդարված պիանինոյի մոտ ու սկսեց տրնկտրնկացնել վալսի յեղանակ:

Զույգերը սկսեցին պտտվել: Որիորդ Նատալիան սպասում եր, վոր Փանյանը իրեն կառաջարկի պարել, բայց ուսանողը չմանակցեց պարերին:

Ցերը որիորդ Նատալիան սկսեց պարել, գիմնազիստներից մեկի հետ, Փանյանը դիտելով նրա կարճ, ճնշված հասակը, ներս ընկած վիզը, խղճահարվեց ու տխրեց.—«Աղջկան ուզում են մի կերպ սաղացնել և չեն կասկածում, թե վո՛րքան հեռու յեմ յես վեսայի դերից»...

Ընթրիքի ժամանակ առաջուց ծրագրված «զուգադիպությամբ» որիորդ Նատալիան և Փանյանը իրար կողքի ընկան: Թամադա ընտրվեց տանտիրուհու առաջարկությամբ իրենց գործակատարը, վորին առանձին հրահանգներ եյին տված կենացնեբի վերաբերմամբ:

Խոսակցությունը որիորդի և ուսանողի մեջ չեր կապվում,

վորովհետև որխորդը՝ վախենալով տղետ յերևալուց, չարունակ «այո» կամ «վոչ» եր պատասխանում, իսկ ուսանողը մտադրած եր և դժվարությամբ եր նյութ պոնում խոսելու համար: Հաճախ նրա յերևակայությունն անցնում եր նոր խախանված ժողովին, պատկերացնում եր, թե ի՛նչպես ընկերները դուրս են գալիս վոզոց, դիտում են չորս կողմը... իսկ հետո, ո՞վ գիտե, ինչ...

Կենացները զուլդ-զուլդ եյին առաջարկում և ամեն անգամ յերգում եյին ազգային ու սիրային յերգեր: Մի առանձին վոգևորությամբ և աղմուկով խմեցին որխորդ Նատալիայի և Փանյանի «թանկագին» կենացները. բոլորը ցանկանում եյին, վոր «նրանք հասնեն իրենց մուրազին» ծագկեն ու առաջադիմեն: Մեկը նույնիսկ այնքան վոգևորվեց, վոր ասաց—«Թող յերկու-սով գնան գետի ափափան ձեռք ձեռքի տված»:

Ուսանողը ընկել եր տրադիկոմիքական դրության մեջ:

«Պետք է վերջ տալ այս հիմար դրության»... «վաղվանից բոլոր թելերը կը կտրեմ»...

«Թանկագին կենացի» վրա որխորդ Նատալիան խեղդվող կտավի ձայնով յերգեց «Զայն տուր ով ծովակ»: Վիրը ձգելով, ճիպ թափելով նա յերգում եր—

«Սրտյոք գալո՞ւ յե մի որ, ժամանակ տեսնել Մասխի գլխին մի գրոշակ»...

Իսկ ուսանողը մտածում եր—«Հիանալի պատկեր... Նատալիան կինա կլինի, Մասխի գլխին էլ մի գրոշակ»...

Վերջապես հյուրերը վեր կացան: Տիկիններն գրաժեշտ ժամանակ հրավիրում եյին ուսանողին իրենց տուն՝ «Որխորդ Նատալիայի հետ միասին», պատճառաբանելով, թե նա պիտե իրենց տունը:

Ձերբ բոլորը գնացին, տանտիրուհին մոտեցավ ու ասաց փանյանի ականջին,

— Հավանեցի՞ր.

— Ո՞ւմ.

— Որխորդ Նատալիային... վոր պիտենաս ի՛նչ վոսկի աղջիկ է. ատ քաղաքում սրա հատը չի գտնվի:

Ուսանողը ծիծաղեց և չնորհակալություն հայտնելով, գնաց իր սենյակը:

***

— Ո՛ւհ, վերջապես ազատվեցի ես կոմենդանտից,— ասաց ինքնիրեն, ձգվելով մահճակալի վրա: Մտածում եր, թե ի՞նչ ձևով վերջ տա այս հարսնախոստությանը, որը հանաքից դառնալի էր անցնում: Սակայն հոպնածությունից նա չէր կարողանում մտածության թելը առաջ տանել և ասում եր— «վաղը կմտածեմ...»

Անհաստելի կերտով նրա քունը յեկավ բայց մի քանի րոպեյից հետո հանկարծ զարթնեց:

Մուտքի դռան զանգը պինդ քաշեցին:

«Գալիս են խուզարկելու» անցավ նրա մտքով, բայց տեղից չշարժվեց:

Մի քանի րոպեյից հետո դրսի դուռը ծեծեցին: Լսվեցին վոտնաձայներ: Ծանր կոշիկներ եյին, բայց ղղույշ եյին քայլում:

Ականջները լարած—Փանյանը հետևում եր քայլերին: Սիրտը անսահման ուժով բաբախում եր:

Ահա բարձրանում են պատշգամբը, մոտենում են իր սենյակին...

Հանկարծ կոպիտ ձեռքով դուռը թխթխկացնում են:

— Ո՞վ է, հարցրեց Փանյանը:

— Վոստիկանություն է, բացեք:

Դուռը բացվելուն պես ներս խուժեցին ժանդարմական սպան, և վոստիկանները չրջապատեցին ուսանողին ու սկսեցին խուզարկել, նախ իրեն, հետո յել սենյակը: Ֆրքրեցին գրքերը, անկողինը, սալիտակեղենը:

Փանյանն իրեն համարում եր վորձված և ղղույշ հեղափոխական, բայց վո՛րքան յեղավ զարմանքը, յերբ հանկարծ գրքերից մեկի մեջ գտնվեց մի նամակ...այն էլ շատ վտանգավոր:

Ի՞նչպես եմ մոռացել այդ նամակը... գործը կբարդանա...

Խուզարկությունից հետո՝ յերբ արձանագրություն եյին կազմում, ներս կանչեցին տանտիրուհուն: Յերևում եր, նա չեր հասկանում գործի եյությունը, վորովհետև վոստիկաններից մեկը հանգստացնելու նպատակով ասել եր նրան, թե ուսանողին վկա յեն կանչում մի գործի համար:

Յերբ ամեն ինչ վերջացավ, ուսանողը հանձնեց իրեղենները տանտիրուհուն, ասելով թե ինքը դնալու յե, և կկարգադրի, վոր գան վերցնեն:

— Ֆա՛, դնում ե՞ս... Էլ չես զալո՞ւ... բա հարսնացո՞ւն...

Նա այնքան մխամտորեն ասաց այդ, վոր ուսանողը չկարողացավ ժպիտը պահել:

— Իմ հարսնացուն— կարմիր հարսնացու չե... ասաց նա քաղքերը ձգելով:

— Վո՛ւյ քա, ուրիշ հարսնացու չես ունեցե՞լ... բա լինչի՞ չես ասում, լացակումած վրա տվեց տանտիրուհին:

— Прошу не разговаривать!... հրամայական տոնով ասաց ժանդարմական սպան:

Ուսանողին տարան բանտը:

1927

## Ո Ղ Ա Կ Ո Ւ Մ

Ա. կամքի ընթերցարանում մնացել էին՝ բանվոր Մարքը և յերկու կոմյերիտականները:

Մարքը թվինել եր աթոռին և հանդստացող աշխատավորի բարյացակամ ժպտով նայում եր ջահելներին:

Նավթահանքերում յերկար տարիներ աշխատելուց հետո Մարքի դեմքն իր չեկ մորուքով ծծվել եր դարչ դույնով ու տեղ-տեղ սևին եր տալիս մանրիկ բծերով: Յերբեմնի կապտավուն, վճիտ աչքերը պղտորվել էին, կոպերը կարմրել:

Նա նայում եր ջահելներին ու խորհրդածում, թե ժամանակը վոխվել է, ու սրանք էլ այնպես չեն ապրում, ինչպես ինքը և իր ընկերները՝ տասնյակ տարիներ առաջ:

— Ընկեր Մարք, մի բան պատմիր հեղափոխական անցյալից, ասաց Ռուբենը:

— Ա՛յ ջահելներ, եղ վոր անցյալից տեղյակ եք տալիս, անցյալի դարերը լմանո՞ւմ եք:

— Ինչպես չէ, ընկեր Մարք, մենք շատ բարձր ենք դնահատում մեր հին ընկերներին,—ասաց Ռուբենը:

Մյուս ընկերը խորհրդավոր ժպտում եր, կարծես համաձայնվելով Մարքի հետ:

— Հենց, որինակի համար ես մեր վաղոն, չարունակեց Մարքը ձեռքն ուղղելով նրա կողմը, նստել է՝ փառավոր վոտք վոտի վրա դրել, գաղեթ ա կարդում. իսկի մտածո՞ւմ ա, վոր առաջվա ժամանակը յեթե ժանդարմը եղ տեսակ գաղեթի մի պուճուր կտորը գաներ բանվորի մոտ, բանտում կվեթացներ նըրան. բայց հիմի վոր վաղոյին խոսացնես, կասի Մարքը հին մարդ ա, կոմունիզմը լավ չի հասկանում...

Վաղոն լսելով խոսակցությունը, լրագիրը թողեց ու մոտեցավ Մարքին:

— Չե՛, ընկեր Մարք, քու անունը ա՛յ եստեղ եմ պահել,— ասաց նա, ձեռքը դնելով սրտի վրա:

Մաղաթը ժպտաց։—Պարզ յերևում ես, վոր նա չես նեղանում ջահելներից, այլ կատակով ես խոսում։

Րոպեաչափ նայելով վաղոյին, Մաղաթը թեթև տխրեց։

— Ինչ վոր տեսնում եմ, վաղո, միտս ե գալիս մեր հին ընկերներից մի լավ տղա.—մի քիչ դու նրան նման ես տալիս. ենպես կուզեյի, վոր նա էլ մեր մեջ լիներ...

Տղաները զգալով, վոր Մաղաթը պատրաստվում է պատմելու, նստեցին նրա շուրջը։

— Լավ միտս ե, շարունակեց Մաղաթը, աշունքվա վերջին եր, են թոռ ու թացին, վոր յեկավ են տղեն ու ծառայության մտավ մեր նավթահանքերում։ Նա նոր եր յեկել գյուղից, իսկ յես արդեն հինգ տարի յեր, աշխատում էյի ենտեղ։ Ջահել՝ հասակը տեղը, կրակոտ աչքերով տղա յեր։ Վոր տեսնում էյի նրան նավթի ու ցեխի մեջ, սիրտս ցավում եր, ասում էյի,— ախոր՛ա տղա. դու չել մեղ պես պետք է կյանքդ մաշես, նավթոտվես ու կերտարանքից ընկնես... եղպես մարդ ախտանում է, յերբ տեսնում է սարիցը յեկող թռվռան առջաններին,— մտածում է, թե նրանք էլ ծանր լուծի տակ կընկնեն, ու են սիրուն տեսքը կկորցնեն...

Ես տղեն յեկավ-չեկավ՝ վոնց վոր թխպի տակից արև դուրս յեկավ մեզ համար։ Ուրախ եր, սրտաբաց ու այնպես համոզճակ, վոր յես շատ քիչ եմ պատահել նրա նմանը։

Շատ լավ ձեն ուներ. մեկ էլ տեսար՝ մի յերգ, մի բայաթի վեր քաշեց, ու ենպես կլկլացրեց, վոր սիրտդ հետը տարավ։ Իրիկուններըը կազարմում յերգում եր, ասդ ածում, նադրեր պատմում, մեկ մեկ էլ սկսում եր կատակախոսին, ինժեներին ձևացնել. ծխամորկը թուլանում էյինք՝ համ էլ թաքուն ախանչին ատում.

— Ա՛յ մեռած, խելոք կաց, եստեղ լրտեսող մարդիկ կան, խաթի մեջ կդցեն քեզ։

Բայց նա վախեցող տղա չեր, շատ անդամ հենց ճակատին կխփեր խոսքը, վոր պարմանում էյինք, թե վո՞րտեղից է ել համարձակությունը։

Մեր հեղափոխական ընկերները միշտ պաշտպանում էյին նրան, մտածում էյին թե մի որ էլ՝ յերբ աչքերը կբացվեն, կմխանա մեզ հետ։

***

Ձեկավ գարունը: Դե մեր նավթահանքերում ի՞նչ գարուն,— ցեխից ազատվում էլինք, թոզի ճանկն ընկնում:

Հենց վոր արևը մի քիչ բարձրացավ, յերկինքը յերեսը պարզեց, ես մեր Սամելը (եղպես եր նրա անունը) ավելի տաքացավ. մխան եր բերում իրանց կանաչ սարերն ու սառն աղբյուրները, յերդում եր, հենց իմանաս՝ յերդով հարբում եր:

Նրա յերդի պատճառով հաճախ կռիվ եր ընկնում կառավարչի հետ: Եղ կառավարիչը մի կոպիտ, հաստկաչի մարդ եր, կարճ բոյով, սրչը կտրած վերարկվով, սապոգները հագին: Ամեն անգամ նկատողություն եր անում Սամելին. բայց չեր կարողանում շատ ձենը բարձրացնի, պատճառը վոր՝ վախում եր մեզանից—սեսնում եր՝ մենք նրան պաշտպանում ենք:

Մի որ էլ եղ կառավարիչը դլուխը կորցրած սպասում եր ինժեներին: Ինչ վոր դործ ես ուզում, շատ եր վախում. դիտեր, վոր ինժեները դա սեռք ա չան լավը դլին տա: Հենց եղ ժամանակ էլ Սամելն իրան բայաթին եր վեր քաշել: Կառավարիչը մի քանի անգամ դազդազած դնաց-յեկավ, խեթեց Սամելին.

— Սրա ձենդ կտրի, թե չե վերջը վատ կլի:

Սամելն էլ թե.

— Վատը թող վատին ըլի, ինչի՞ չսեռք ա յերդեմ:

— Եսա ինժեները վղա քեղ դուրս կանի:

— Թե նա մարդ ա— դրա համար չի դուրս անիլ:

— Դե սոված, դահլես մի տանիլ, թե չե յես ինքս դուրս կանեմ:

— Հետո վոր դուրս անես կմարսե՞ս...

Եղ ժամանակ մեր տղերքը մի քիչ ձեն ու ձուն արին, վոր վախեցնեն կառավարիչին:

— Սրա եղ ի՞նչ խաբար ա...ի՞նչ և ուզում. լավում էլին ամեն կողմից:

Կառավարիչը տեսավ, վոր Սամելի քամակին մարդ կա, դուրս յեկավ վնթինթալով:

Մեկ էլ տեսանք՝ ինժեները յեկավ Ֆայտոնով: Կառավարիչը նրա առաջն ընկավ, խոնարհ խոսքերով ուզում եր նրան քաղցրացնի, բայց յերևում եր, չեր հաջողվում:

Եղ ինժեները մի բայղուշ մարդ եր, մեծ, դուրս ցցված

քշով, մանր՝ բղով ծակած աչքերով, յերեան ել վոնց վոր յերեւում տախտակի մեջ տարակացրած: Վոր յերևում եր մեր աչքին, ենպես սրտներս սևանում եր: Ինչքան ել ամեն բան տեղը ըներ, ելի նա պետք ա անպատճառ նկատողություն աներ, գոռգոռար ու հայհոյեր:

Ցայտոնից վեր յեկավ, մի քիչ ժռաղ անցավ ու կանդնեց.— ախանջին ընկավ մեր Սամելի ձայնը՝ յերեսը ծռռեց ու վրա պըծավ կառավարչին:

— Դու եստեղ ինչացո՞ւ յես:

Կառավարիչը սիրմնեց:

— Ջե՛, մի սուս տեսնենք, դու ինչացո՞ւ յես, կառավարի՞չ ես, թե ժանդռտ յերկաթի կտոր. դու գործն մարի՞կ ես անում:

— Մարիկ եմ անում:

— Բա եղ վոր յերդում ե՝ չի՞ս լսում. մի գեսը կանչի տեսնեմ ո՞վ և եղ քուռակը:

Կառավարիչը վազեվազ դնաց կանչեց:

Սամելը յեկավ, առաջը կանդնեց:

Ինժեները մի խեթ նայեց Սամելին:

— Եստեղ թատրոն ե, վոր բերանդ գուռնա յես չինել:

— Ջուռնան քո բերանն ե, վոր եդպես անպատիվ բաներ ես ասում:

— Սո՛ւս, ինչպե՞ս ես համարձակվում եդպես պատասխանատալ,—գոռգոռաց ինժեները:

— Դու մարդավարի հարց ես տալիս, վոր յես մարդավարի պատասխան տամ:

— Դո՛ւրս, գո՛ւրս կորի, քո՛ վոռը չի՛ ես եստեղ:: պուխօքա կանչե՛ցեք...

Բայց եղ ժամանակ մեր տղերանցից մի՛ քանիսը գուրս յեկանք նրա առաջը: Մեզ տեսնելուն պես գուլնը դցեց, յերեե մնաց բանը վատ կլիներ. չատ եյինք գաղված նրանից:

— Ընկերներ,—ձեն տվեց բանվոր Դանելը. ել համբերելու տեղ չի մնացել. թե վոր բան ե՝ մեր Սամելին հեռացնեն, մենք պետք և նրան պաշտպանենք...

Սամելը զարմացած նայում եր. նա չեր սպասում, վոր երեն եդպես կպաշտպանեն:

— Սամել,—ասացի յես,—գոչող կաց, քամակիդ պինդ կանդնած ենք:

— Ձեզ էլ ձեզ հավասարիմ ընկեր,—ասաց—վորտեղ դուք՝ ենտեղ էլ յես:

Եղ դեպքից հետո Սամելի անունն ավելի վեր ելավ. բանվորներն ուրիշ աչքով եյին նայում նրան:

Մենք մի լավ կուսակցական ընկեր ունեյինք—անունը Մուքել եր. նա վոր առաջին անգամ տեսավ Սամելին, ասաց մեզ.

— Սրա մեջը բաներ կան, համաց-համաց առաջ քաշեցեք, ավտրեցրե՛ք:

Դրանից հետո մի չարաթ եր՝ ամեն որ ոպատում եյինք, Քե ես և Սամելին կհեռացնեն դործից: Հետո իմացանք, վոր ինժեները հենց դեպքի որը պահանջել եր Սամելին դուրս աներ, բայց եղ ժամանակ հանքատերն ասել եր.

— Եղ դործը թողեք, յես ինքս կկարդադրեմ:

Իհա՛րկե՝ մի ուրիշ ժամանակ հանքատերը մի րոպե էլ չեր պահել Սամելին, իսկ հիմա հանգամանքներն ենպես եյին, վոր վախենում եր դործադուլից: Բայց նա յել ուրիշ ճանապարհով եր բանը դրատում...

Մի յերեկո մեկ էլ տեսանենք՝ յեկավ պոլիցիեն. հարցրին Սամելին: Նրա բաղդից եղ ժամանակ տանը չեր: Խուղարկեցին առաջ նրա իրեղենները, հետո յել անցան նրա կողքի բանվորներին:

Իսկույն դլխի ընկանք, վոր Սամելին մատնել են: Մեր ջահելներից մեկին ուղարկեցինք, վոր իմաց անի: Ասպարեցինք, Քե «քեզ ուզում են բանտարկել, դլուխդ ազա՛տիր, դնա դյուղը, մինչև վոր դործը կմոռացվի»:

Եղ տղեն գտել եր Սամելի տեղը ու իմաց արել: Հենց եղ դիշերը նա դնացք եր նստել ու ճանապարհ ընկել դեպի իրենց դյուղը:

***

Գարունքվա կանաչի են անուշ ժամանակն եր: Սամելը վոչ գալիս և դյուղը, հերն ու մերը շատ են ուրախանում, բայց մի կողմից էլ անհանդստանում են, Քե ինչի՞ ենպես շուտ վերադարձավ քաղաքից: Սամելը հնարում է, Քե արձակուրդ և առել, յեկել և հորն ու մորը տեսնելու:

Նա ոչնում է հորը, տան դործերը կարգի գցում, իսկ ազատ ժամանակը դյուղացիների հետ խոսք ու դրից անում: Դու-

մի ասել՝ վորտեղ նստում է, մեղանից լսած բաներն իրար կապում, քարոզում է:

Պատահել է, վոր գյուղը պրոպագանդիստ ենք ուղարկել, նա ենքան բան չի կարողացել անի, ինչքան Սամելը: Խոսելուց բացի չի թողել նաչալնիկին, պրիստավին, երենց գյուղի քյոխվին, կուլակներին...

Սամելի խոսածները մի քանի որից հետո հասնում են պրիստավի ականջը ու նրա հանդստությունը խանգարում: Հանաք հա չի՞—պրիստավի ոայոնում հեղափոխական եր լույս ընկել...

Իսկույն կարդադրում է քյոխվին՝ վոր լավ հետևի եղ «բանտուվչիկին» ու իրեն իմաց անի ամեն ինչ: Ինքն էլ չի համբերում, մի որ գնում է Սամելանց գյուղը, վոր անճամբ ծանոթանա «զորձի» հետ:

Դե առաջվա ժամանակ պրիստավին գյուղում թաղավորի նման եյին ընդունում: Քյոխվեն ու քեթխուդանները դիմավորում եյին, նրա ձիու սանձը պահում, ղևսովը պոխտ գալիս: Ցերեկը չաո խմելուց ուռած բողկի նման կարմրած՝ բեխերն ոլորած ման եր գալիս ու ինչ ուզում եր, անում եր:

Որը կիրակի յե ըլում, վոզոցը լիքը գյուղացիներով: Պրիստավը՝ շրջապատած կուլակներով, անցնում է բազարով՝ չեքեզին հադին, զազախի վուախը թեք դրած՝ հաստ մտրակը ձեռին: Գյուղացիները մեկ մեկու յետևից վեր են կենում նստած տեղից ու ղլուխ տալիս:

Սամելն էլ եղ ժամանակ բազարում նստած գյուղացիների հետ գրից անելիս է լինում: Պրիստավը յերևում է թե չե՝ բոլորը վեր են կենում ու ղլուխ տալիս, իսկ Սամելը մնում է իր տեղը նստած:

Քյոխվեն պրիստավի յետևից աչքով-ունքով է անում Սամելին, ձեռքով նշան տալիս վոր տեղից վեր կենա, բայց նա յել ինչ տղա յեր, վոր եդպես բաներին ուշք դարձներ... Մինչև անգամ իր կողքի գյուղացիներին ասում է.

— Սրա ի՛նչ հիմար ժողովուրդ եք, դրանք ովքե՞ր են, վոր պատիվ եք տալիս. ձեր Թշնամիներն են, ձեր արյուն ծծողները...

Պրիստավը նկատում է, վոր մեկը տեղից վեր չկացավ, պռոշները կրծոտում ա ու հեռանում:

— Ո՞վ է եղ մերը, վոր տեղից վեր չի կենում,—հարցնում է պրիստավը:

Ֆյոխլեն էլ վախտում է պրիստավի ականջին.

— Եղ նստողը քաղքից յեկած են տղեն է, վորի մասին խոսացել եմ արել ձեզ:

Պրիստավը մանրամասն հարց ու փորձ է անում Սամելի մասին, տակն ու ղլուխն իմանում, ու հրամայում ֆյոխլին՝ վոր յերբ լավ մթնի, գնա ու բանտարկի նրան:

Սամելի բախտն եստեղ էլ է բանում. ղվիրներից մեկն իրանց բարեկամն է լինում, եղ հրամանի մասին հայտնում է նրա հորը: Լուրն առնելուն պես՝ Սամելն էլ ժամանակ չի կորցնում. նըստում է ձին, թռչում յերկաթուղու կայարանը, ենտեղից էլ գալիս է նորից քաղաք:

Պրիստավը ընթրիքի յե նստում ղյուղի ամենահարուստ կուլակի տանը: Ֆեֆի Թունդ ժամանակը, յերբ նա Թագավորի կենացն է առաջարկում, ու եղ կենացի վրա ցանկանում, վոր Թագավորի Թշնամիները կործանվեն, աչքով է անում ֆյոխլին ու կամաց ասում.

— Են բանի ժամանակն է, դնա...

Ֆյոխլեն էլ դնում է տեսնում՝ վոչ Սամել կա, վոչ էլ ծնողներն են իմանում, Թե ո՞ւր է գնացել: Հարց ու փորձ են անում ու գալիս սևերես ֆյոխլի ականջին հայտնում, Թե նապաստակը փախել է...

Դե հարբած մարդն ի՞նչ է իմանում, Թե իրան ի՞նչ են ասում. վոչ մի կարգադրություն չի անում, և Սամելը «վոգի աուղջ» հասնում է քաղաք:

***

Մի յերեկո ժողով եյինք արել մեր հայտնի ընկեր Մուքելի մոտ՝ Մայիսի 1-ին ցույց կազմակերպելու համար: Մեկ էլ տեսնենք՝ ներս ընկավ Սամելը: Մուքելի կինն ուզեցել եր մի քիչ դուրսը պահի նրան, վոր իմաց անի մարդուն (ո՞վ գիտե, կարելի յե կասկածելի մարդ եր), բայց Սամելը չեր համբերել, ուղղակի մտել եր սենյակը:

Նա բոլորիս մի բարև տվեց և լուրջ մոտ գնաց Մուքելին, բռնեց նրա ձեռքից ու Թափ տալով ասաց.

— Մուքել, թե ինձ սիրում ես, իմ անունը պրի բայլևիկ խոստակցության մեջ:

Մուքելը ծիծաղեց.

— Ա՛հ մեռած, շատ ես չոտապում. մի նսա՛ր, պատմի՛ր տեսնենք, ի՞նչ է պատահել:

Սամելը սկսեց պատմել իր դէմքին յեկածը:

Մուքելը մորուքը բռնած ժպտում եր:

— Տեսնո՛ւմ ե՞ս, Սամել,—ասաց նա— թե քաղաքումն ես՝ ասում են հեղափոխական ես. թե գյուղն ես գնում՝ էլի են են ասում. ինչպես յերևում է՝ դու վերջը հեղափոխական ես պատնաչու...

— Ա՛ջքս վրա—ասա ջուրն ընկի, կրակին ընկի, յես էլ կանեմ. միայն թե հիմի ինձ պրես կոստակցության մեջ:

— Դեռ ոտասիր, ծանոթացիր մեր ծրագրի հետ, հետո կգրենք:

Սամելի յերեսը ուրախությունից այրվում եր:

Դրանից հետո Սամելը սկսեց կանոնավոր հաճախել մեր հավաքույթներին ու կատարում եր իր ամեն ընկերների պատվերները:

***

Ցեկավ մայիսի 1-ը:

Եղ որը դուց եյինք կազմակերպել: Բանվորները խումբ խումբ ամեն կողմից յեկան, հավաքվեցին նշանակված տեղը՝ մեծ հրապարակը: Կարմիր դրոշակը բարձրացրինք ու բանվորական Մարսելյոզ յերգելով՝ շարժվեցինք առաջ...

Հանկարծ չորս կողմից թափվեցին ձիավոր զորախմբերը, չրջապատեցին մեզ ու սկսեցին խփել թրերով:

Մենք անզեն եյինք՝ նրանք զինված. ձեռք ընկած քարերով, փայտերով խփում եյինք, կամ ծառս ելում, ձիաներից վեր պըցում զորախմբերին:

Ամենից առաջ կռիվը դրոշակի մոտն եր. մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ: Յերբ մեկ ել զորախմբերը հարձակվեցին, ծանր վիրավորեցին դրոշակակիրը բանվոր Պյոտրին, Սամելն առաջ ընկավ ու քաշեց, տարավ դրոշակը: Բայց յերկար չմնաց նրա հաղթությունը.— զորախմբերը նորից վրա ավին ու առնեցին Սամելին...

*Եսպես վերջացավ նրա ծաղիկ կյանքը..*

. . . . . .

*... Տղաներն անշարժ նայում էին Մաղաքին. նրա աչքերում արցունքներն էին փայլում...*

1928

———

# ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Սովորաբար ծառայողներն առավոտից մի կես ժամ «մլուկ» էյին տալիս, ապա սկսում իրենց գրաղմունքները: Յերկար շարքերով ձգված սեղանների վրա վորը համրիչն եր չխկչխկացնում, վորը աչքի անցնում ստացված գրությունները, կամ թերթում հաստատիոր «գործերը»: Կեսորին մոտ հաճախորդները լցվում էյին բոլոր միջանցքները: Թամբաքիի ծուխը տարածվում եր բոլոր սենյակներում, ու գրամեքենանների աղմուկը հասնում եր պատշնակետին: Այդ ժամին ծառայողները գաղտում էյին. հաճախորդները թվում էյին բծախնդիր: Դաշտից յեկող գյուղացին՝ ներս մտնելով, մնում եր չվարած թե՝ «ես մարդիկ լինչի՞ յեն հերստեղ»:

Մեծ սենյակի պատից վերահսկիչի աչքով նայում եր ժամացույցը: Նրա սլաքները շատ խարուսիկ էյին.—յերբեմն արագ մոտենում էյին վերջին ժամին, կարծես ստիպում ծառայողներին շուտով տուն գնալ, յերբեմն էլ թարսվում էյին՝ յերկաք ձգձգում, կարծես առուստուր անում ամեն մի րոպեյի համար:

Ամենի համեստ եր նույն պատի վրա ամրացրած որացույցը. նա վոչվոքի չեր նեղացնում, յեթե հաշվի չառնեյինք մի-յերկու ծառայողների, վորոնք պիտի վեկուցում պատրաստեյին ամեն այսինչ կամ այնինչ որը:

Հերավոր անկյունի մի փոքրիկ սեղանի մոտ նստած եր հաշվապահ Մաղաքյանը: Նրա տեղը և սեղանը համապատասխանում էյին իր պաշտոնին: Մաղաքյանը մի հասարակ ծառայող եր: Միայն յեթե ասում էյին իրեն, թե համեստ է՝ նա զրանից նեղանում եր իր ներսում, կարծես վիրավորանք էյին հասցնում կամ ասում էյին՝ «Դու անբուժելի հիվանդություն ունես, չես կարող առողջ մարդկանց հետ լինել»:

Նրա դեմքն, ավելի լուրջ, քան անհրաժեշտ է՝ մռայլ եր: Իր ներսում նա բողոքում եր բնության դեմ, վոր այդպիսի

*ախաւր դիմակ և դրել իր դեմքին, յերբեմն նուչնիակ վորձում եր իր բնաւորութեան հակառակ դնալ, ուրախ լինել, մասնակցել մարդկանց հետ, բայց բնութիւնը նորից իր դերն եր ստանձնում՝ դեմքի պատուհանները չուտով փակվում եյին ու կարծեսում խոսակցին.— «կանգնիր, ել առաջ մի գնա, ներս մտնելն արդելված է»:*

*Սովորական այցելուն կարող եր ասել, վոր Մաղաքյանի դեմքին ծիծաղը. յերբեք չի հյուընկալվում: Պետք և ասած, վոր այդ կարծիքը սխալ եր.—նրա ուրախ րոպեները տեսնողներ կային: Նրան ճանաչողներն ասում եյին. «Լալ տղա յե Մաղաքյանը, բայց մի ծանր քար կա նրա ներսում»:*

*Կանայք չեյին սուսենում նրան, մտածելով, վոր «թեպետ Մաղաքյանը որինավոր ամուսին կլինի, բայց լուսնի տակ չատ բանաստեղծական մոմենտներ բաց կթողնի»:*

*Ինչ եր Մաղաքյանի գործը.—հեշտ և ասել՝ հաշիվների, պղտասկների, անհոդի ու դաժան թվերի հետ եր նրա գործը: Այդ հաշիվները, պատահում եր՝ գիշեր ել հանգիստ չեյին տալիս:— Շատ անգամ յերազում ուղիղ թվերը սխալ թվեր եյին դառնում ու բավական քրտինք քամում Մաղաքյանից: Պահանջկոտ, բծախնդիր թվեր եյին. յերբեք չեյին գիջում, յեթե գումարը թեկուզ մի չնչին բանով ավելի կամ պակաս եր լինում:*

*Մաղաքյանի մեկ բավականութիւնը այն ժամանակ եր լինում, յերբ նա ատուզելով գումարը՝ համոզվում եր, վոր ուղիղ է, վամ մանավանդ. յերբ գտնում եր սխալը. այդ րոպեներին թվերը վարժված գինվորների նման ուրախ շարժվում եյին ու վազջուն տալիս:*

*Առավոտից սկսած նրա գործն անպակաս եր. նրա առաջ հաշիվների, պղտասկների կույտը քանի գնում՝ մեծանում եր: Սակս բնական որենք լիներ՝ վոր ինչ անհետաքրքիր, խճճված գործ կար՝ ուղարկում եյին Մաղաքյանի մոտ: Նրա սեղանի վրա կտեսնեյիք այն մնացած, «ջանջալ» հաշիվները, վորոնցից ուրիշ ծառայողներն այս կամ այն պատրվակով հրաժարվել եյին, կամ թե այն չատ կամ «հրատապ» գործերը, վորոնք հենց իսկույն պիտի կատարվեյին:*

*Մի չատ այնպես եր պատահում, վոր մի ժամից հետո ժողով պիտի լիներ, և այդ անհրաժեշտ թվերը, պիտի դեկուցեյին,*

*Էամ յերեկոյան կառավարչէը պիտի մեկներ «Վենտրոն» և հետը տաներ պատվիրած աղյուսակները: Որվա մեջ քանի անգամ կվաեյիք.*

*— Հանճնեք Մաղաքյանին:*

*— Դիմեք Մաղաքյանին:*

*Յեվ նա տնքում եր այդ թվերի տակ, ինքն իրեն մռայնում, մի յերկու ժամից հետո նրա գնմքը՝ կարմրած լարված աշխատանքից՝ այնպիսի տպավորություն եր անում, կարծես կռվալեճի յեր բռնվել իր առաջը կիտած թղթերի հետ:*

*Գործի այդ բռնարար րոպեներին մի մխոք խուլ կերպով հնչում եր նրա ականջին, վորպես պատասխան իր բոլոր տանջանքի՝*

*— Ընկել ես՝ պիտի տանես...*

***

*Առավոտները Մաղաքյանը դալիս եր աշխատանքի ճիշտ իր ժամանակ, բայց դժդհում եր իր ճշտապահությունից:*

*— Ի՞նչ ես մեքենայի պես ճիշտ իր ժամանակին դնում-գալիս,—ասում եր ինքն իրեն.—դոնե մի արտակարգ բան արա, հենց թեկուզ մի քառորդ ժամ ուշացիր, վոր ասես, թե ապրում ես.— կյանքի համը չեղումների մեջ է...*

*Բայց այսպես մտածելով՝ նա զարմյալ շարունակում եր նույնը, և, ինչպես ասում եյին ծառայողները, դեռ մի դեպք չեր յեղել, վոր Մաղաքյանն ուշանար:*

*Հիմնարկը դնալիս լավ է, վոր բարձր չեր արտահայտում իր մաքերը, թե չե թշտւրխտացություններ կարող եյին ծագել: Տեսնելով չարան-չարան ծառայողներին, վորոնք թղթատանակներն կռնատակին շտապում եյին գործի, նա մտքում գիտում եր բոլորին մի արհամարհական խղճահարությամբ.*

*— Թղթի ստրուկներ,—ասում եր նա,—դուք արժանի յեք ձեր վիճակին. թղթերից ավել վոչինչ չեք հասկանում...*

*— Իսկ դու, Մաղաքյան,—ասում եր նա ինքն իրեն,—դու յել նույն ապրանքից ես. յեթե «ուրիշ» մարդ լիներիր, այդ թղթի գործում չեյիր լինի, վորը խոպան մարդ-մեքենայի գործ է... Դու կլինեյիր...*

*Բայց այստեղ սկսում եր գործել նրա յերևակայությունը.*

ահա նա, Մաղաքյանը՝ ժողովում է. բայց սովորական ժողովում չէ. նա բոլոր հինարարական և դյուղատնտեսական դործերի «սեհոն» է. թռչում է ավտոյով, թռչում է աերոպլանով ու վորտեղ էջնում է, այնտեղ մի նոր շենք է բարձրանում, լայնատարած ցանքսեր, այդիներ, բանջարանոցներ են ստեղծում...

Նա պտտվում է վողջ յերկրում, դործի յե հրավիրում ամենքին... Անորինակ յեռանդով հրաչքներ է դործում, բայց այդ բոլորը կատարվում է առանց թղթի. նա խիստ արդելում է դրասդրությունը, նույնիսկ պատժել է տալիս նրանց, վորոնք թուղթ են ներկայացնում:

Նրա յերևակայությունը վերջանում եր այն ժամանակ, յերբ հիմնարկության սանդուղքներով բարձրանալով՝ հանդիպում եր իրենց պատասխանին: Սերոբ եր անունը՝ կեղ քթով, յերկար ձեռքերով, վորոնք չարունակ փնտռում եյին իրենց տեղն ու չեյին գտնում: Նրա պիջակը չատ լայն եր, իսկ չալվարը՝ նեղ ու կարճ:

Իրար տեսնելով՝ Մաղաքյանն ու Սերոբը տարորինակ իրադրության մեջ եյին ընկնում. Մաղաքյանը անպատճառ աշխատում եր բացրեվել Սերոբին, վորպես հավատար ընկերոջ, իսկ սա յել խուսափում եր նրա բարևից, մտածելով, թե՝ «յերբ վոր բարձր ծառայողները չեն բարևում, ես բարևելն ի՞նչ եմ անում. չա՛տ հարկավոր է»...

Սերոբի կցկտուր բարևը կամ նրա յերես չուռ տալը անհարմար դրության մեջ եյին դնում Մաղաքյանին, մինչ ղպացնել տալով, վոր իր և Սերոբի մեջ մի պատնեշ կա: Նա ամաչում եր, վոր Սերոբից ավել է ռոճիկ ստանում, վոր նրանից ավելի բարձր դիրք ունի, ու ամեն անգամ այդ ճմլոտ ղպացումով նրա եր մոնում դրասենյակը:

Նա անցնում եր յերկար դահլիճով, նստում եր տեղը ու ընդհանուր սովորության հակառակ՝ իսկույն սկսում դործը: Կես ժամից հետո գալիս եյին բարձր ծառայողները ու բաղմում իրենց բաղկաթոռներին: Կարճատև հանդստյան րոպեներին կամ յերբ տվիճ եր լինում անցնել այդ բարձրերի առաջ, Մաղաքյանը տեսնում եր գլխավոր հաշվապահի ամբարտավան դեմքը, վորը կարծես ասում եր.—«ինձ հետ խոսելը արբատրծություն է»:

Գործավարի յերկար քիթը միշտ ձգտում եր դեպի վերև, մի արհամարհական ժպտի ուղեկցությամբ:

Բաց դռներից յերևում էին փոքրիկ սենյակում նստած յոթը «ապեղները», վորոնք կեղծ լրջություն տված դեմքերին՝ ջիշտ այնպիսի տեսք ունեյին, վոր թվում եր, թե դրաղված են ամենալուրջ և ծանրակշիռ հարցերով: Դահլիճի մյուս ծառայողները հեռվից մխապաղաղ պատկեր էյին ներկայացնում, իսկ մոտիկից յերևում եր, վոր ամեն մեկը յուրաքանչյուր մի հնարով աշխատում եր ինքն իրեն լուրջ և նշանակալից տեսք տալ, վորպես թե ինքն ամենակարևոր դործն է կատարում:

Ամեն անգամ, յերբ Մաղաքյանն անցնում եր իրենից բարձր ծառայողների մոտով, նկատում եր նրանց դեմքին մի դաղտնի արհամարհանք դեպի ինքը ու լցվում եր ատելությամբ:

«Մի՞թե նորից դալիս են «բարձրերն» ու «ցածրերը».. մի՞թե նորից սկսվում է այն հինը, վորը նա մոռացել է: Այդ րոպեներին նա հիշում եր անցյալը, յերբ ծառայում եր մանավոր բանկում ու առաջները կրճտացնելով հպատակվում եր դաժան կառավարիչներին:

Այն ժամանակ նրա չուրջը ծառայողները քծնում էյին բարձրերի առաջ, իսկ ինքն իր մոտյալ դեմքը դառնրեն ծամածռում եր դրվանքից: Ցերեկն մեծ ճիդեր էյին հարկավոր Մաղաքյանին իր մարդկային արժանապատվությունը պահպանելու համար. նրա ջղերը շարունակ լարված էյին, բռունցքները սղմած...

Անցել են այդ որերը. բայց ահա նորից տեսնում է վերին ու ներքին խավերը և դղում է իր մեջ հավատարության տենչեր: Սակայն այդ մոմենտներին նա ինքն իրեն բռնում եր հավատության մեջ.— «Ջե՛ր վոր մի քանի տարի առաջ, յերբ հավատարություն եր, յերբ Սերոբի ու կառավարչի մեջ տարբերություն չկար, դու յել դժդոհ էյիր, տնտնում էյիր, թե ի՞նչու թղթատարը քեղ հետ հավասար ոտքիկ և ատամնում. իսկ այժմ, յերբ քո ցանկությունը կատարվեց, դու նորից դժդոհ ես»...

Ի՞նչպես դոյացան այդ «բարձրերը»: Մի քանի անգամ ոտքիկների հավելում, և ահա դրվեց այդ պատնեշը: «Ամեն մի ծառայող կամ պոչն եր շարժում, կամ պոռը՝ իրեն առաջ քաշելու համար. «իսկ դու այդ չես արել, այդ պատճառով էլ մնացել ես ներքևի շարքերում»...

«Այժմ դու դժդոհ ես նորից. բայց վորո՞նք են քո խղճերը... հավատարությո՞ւն ես տենչում, թե՞ դուցե կամենում ես սան-

գործքների վերևը պատվավոր տեղ դրավել... Յեթե այդպես է՝ ի՞նչ կասես Սերոբի մասին. նա յի՛լ է մոնում քո ծրագրի մեջ... չե՞ վոր ամեն առավոտ նա սպասում է քո պատասխանին, քո հավատարութեան»...

***

Ամեն որ, վորոշ ժամին կառավարչի ոգնականի առանձնասենյակից դուրս եր գալիս Մելքումյանն ու անցնում ծառայողների յերկար շարքով: Անցնում եր թեքիկ-մեքիկ գալով, լինքն իրեն վրա սերտահարվածի տեսքով: Ծառայողներն առում եյին նրան, վորովհետև նրա հայացքի մեջ լինչ-վոր արհամարհանք կար՝ մանավանդ գեպի առորին ծառայողները: Փողոցում պատահելիս նա ակնհայտնի սպասում եր, վոր գլխարկները բարևի, հետո լինքը բարեհաճի պատասխանել: Իսկ ծառայութեան տեղը նա ուշադրութեուն եր դարձնում միայն «բարձրերի», կուսակցականների ու մեկ էլ կանանց վրա:

Ամենքը գիտեյին, վոր Մելքումյանը՝ կառավարչի ոգնականի բարեկամն է՝ նրա քրոջ տղան: Ծառայողներն այդ պատճառով վորոշ ակնածութեուն ունեյին գեպի նա: Իր գիրքն ավելի բարձրացնելու համար Մելքումյանը տարածել եր, թե կուսակցութեան թեկնածու յե և շուտով մտնելու յե նրա շարքերը: Միամիտ հավատացողներին այդ բանն ամենից ավելի յեր գրգռում.

— Ախր ո՞նց թե կոմունիստ... Մելքումյանը վոչ միայն սպեկուլյանտի տղա յե, այլև սպեկուլյանտի թոռը... Ախր Լենինը լինչ է ասել...

Սակայն, յեթե Մելքումյանը ուր ականջներ ունենար, կլսեր, թե լինչպես են հեգնում նրան յետևից.

— Վերևը պատարկ է ա՛յ,—ասում եր մի ծառայող մյուսին:

— Հա, մեջը գարման է,—պատասխանում եր մյուսը:

Բայց, իհարկե, նա այդ խոսքերը չեր լսում. փքված առավ եր գնում գեպի գահլիճի ծայրը, ուր նստած եյին գրամեքենաների վրա աշխատող որիորդները:

Աչքենը, վորին համակրում եր Մելքումյանը, այն պաշտոնական գեղեցկուհիներից եր, վորոնք առանձնահատուկ տեղ են գրավում ծառայող որիորդների մեջ: Բնականից ունեցած կոկետութեյունը այսանդ՝ ծառայող տղամարդկանց մթնոլորտում՝

աճում և մոլախոտի նման ու ամեն ինչ կլանում: Գաշտոնական հաճոյախոսություններով անվերջ՝ նրանց դեմքերը հետզհետե թատրոնական են դառնում և լցվում դերասանական ինքնաբավականությամբ:

Մինչև Մեջլումյանի մոտենալը որիորդ Աշխենը արդեն վրաչ «պոզա» չե ընդունում, ուսերը և դլուխը կոկետորեն շարժում: Յերբ Մեջլումյանը նստում եր իր կողքին, նա իր ձեռքը վերը-մորթելով տալիս եր նրան, բարևում. նրա խոշոր աչքերը լայնանում եյին երևոյթ սահմաններից դուրս: Սկսվում եր աչքերի ու ժպիտների մի ներկայացում:

Մեջլումյանը պինդ ժպիտը դեմքին՝ առաջ և քաշում մեքենացրած թղթերը, երբ թե սուդելու կամ թելադրելու համար, բայց դրանով միայն զողարկում և իր սիրաբանությունը: Նրանց հայացքներն արդեն իրար ընտելացած եյին և կյանքու խոսքերից միմյանց հասկանում եյին:

Այսքանը պարզ եր՝ Մեջլումյանը երեկն եր համարում Աշխենին, իսկ որիորդն ել սրտի խորքում մի գաղտնի հույս ուներ, թե այդ սովորական, թեթև սկսված կապը կհանդի ամուսնության: Այդ միտքը այնքան եր նրան վոգեշնչում, վոր լայն դեմքը մի թիզ ավելանում եր:

Դռների մոտ նստած տիկին Կարոտյանը, վորը հասակն առած եր ու միշտ աչքերը լացակումած, նայում եր որիորդին ու ասում մտքում.— «Ի՞նչ ես կոտրտվում. չա՛ռ-չա՛ռ մի դեղլուսին ես ել»: Նրա կարծիքով դյուղլուսինը մի առանձին, հատարակ տեսք ուներ:

Իսկ մյուս մեքենայի վրա աշխատող որիորդ Շողիկը, վորը նիհար, սուր դեմք ուներ և նախանիքներից ժառանգած դեղին, մալարիտոտ գույն, այդ րոպեներին ջղայնանում եր և սովորաբար չիմթում տառերը: Մոտյլ մտքերը, հուսահատ նախանձը հասնում եյին գաղաթնակետին:

Նրա ավելորդ անունը «որիորդ կրճատում» եր,—նրա վախկոտ և կասկածոտ բնավորությանը ամեն մի չնչին դեպք առիթ եր տալիս մտածելու՝ «Ձինի՞ թե կրճատում և լինելու»: Նրա վախը վորոշ հիմք ուներ, քանի վոր նրա վղին եյին ծնողները և վոչ քույրը:

Առավոտները որիորդ Շողիկը զարթնում եր ու մտածում

անկողնում—«Ինչի՞ցն է, որ Աչխենը յերջանիկ է: Մենք մեհենում մեքենայի վրա յենք աշխատում, նրա ոռճիկն էլ իմի չափ է, բայց ո՞րտեղից է այդպես հաղնվում ու պճնվում...նա արդեն յերկու կոշիկ է փոխել, իսկ իմը կարկատած դեռ քաշ եմ տալիս: Տղամարդիկ նրան վայելում են,—նա դեղեցիկ է իսկ յե՞ս...Մի՞թե Թառամելու յեմ այսպես ղրկված անձնական կյանքից»—հարցնում էր նա ինքն իրեն և կես ժամից հետո՝ նայելով բարձի տակ դրած փոքրիկ ժամացույցին, միայն մի պատասխան էր գտնում:

— Պետք է վեր կենալ. արդեն գործի գնալու ժամանակն է...

***

Կար մի մարդ ծառայողների մեջ, որին Մեջլումյանը մարանել չէր կարողանում. դա Մաղաքյանն էր, որի դուրթյունը նա կարծես մի հանդգնություն էր համարում: Մանկությունից՝ դեռ դպրոցական շրջանում, հարուստ լինելով՝ Մեջլումյանը սաստիկ ատում էր այն աղքատ տղաներին, որոնց մեջ փորձե ընդունակություն կամ «հպարտություն» էր նկատում: Հետագայում «աղքատ ու հպարտ» մարդիկ նրա կծու ատելությունն էլին չարժում: Այդպիսիների թվին էր պատկանում Մաղաքյանը:

Ամենից շատ Մեջլումյանը սիրում էր գործեր հանձնել ծառայողներին «ողնականի» անունից և հետո շտապեցնել, նկատողություն անել. նույնը անում էր և Մաղաքյանի վերաբերմամբ, բայց այս կետում միշտ ժայռի յեր հանդիպում ու միշտ կատաղում, որ չի կարողանում ընկճել «մի ինչ-որ Մաղաքյանի»:

Առաքուստ շատ համբերող էր Մաղաքյանը, ուղղի նման համբերող, բայց և ուղղի նման վրեժառու: Նա առանց հակաճառելու ընդունում էր իրեն հանձնած բոլոր գործերը, բայց նրա դեմքի վրա մի թաղնված հեգնանք կար, մի ապանիչ թույն, որը Մեջլումյանին մահու չափ ցնդում էր: Մաղաքյանի դեմքին նա տեսնում էր «քիմիական անալիզի» յենթարկող մի հայացք, որը կարծես մերկացնում էր իրեն:

Դեռ հեռվից նկատելով Մաղաքյանի պրոֆիլը, նրա ակնոցները, յայն՝ դուրս ընկած ճակատը, հեգնող կնճիռները՝ Մեջլումյանն արդեն կատաղում էր. նա այդ դեմքի վրա տեսնում էր

ինքնասիրություն, հպարտություն, որոնք իր մաղձը շարժում էին. նա մեծ ցանկություն էր ունենում այդ բոլորին վիրավորել, ստորացնել Մաղաքյանին, ցույց տալ, որ նրա այդ «հպարտությունը» մի ֆիկցիա է, որ ոչ մի հիմք չունի, որ ելի «հին» ժամանակվա նման կան հրամայողներ և յենթարկվողներ, որ նա մի հասարակ ծառայող է և ուրիշ ոչինչ, ուստի միայն պետք «հլպատակվիլ»: Սակայն այդ բանը չէր աջողվում Մելոումյանին:

Նա միայն մի զենք ուներ՝ զրկե էր ուղարկում Մաղաքյանին «ողնականի» անունից և չտապեցնում, որ զրկուի նրան. Բայց Մաղաքյանն ել՝ ամեն կերպ աշխատում էր շուտ և լավ կատարել, ու չատ անգամ ավելի առաջ էր վերջացնում և մինչև Մելոումյանի զալը ուղարկում էր ողնականին, որով ավելի էր զարմացնում նրան:

Ցավ այդպես՝ որ-որի վրա Մելոումյանն ավելի էր կատաղում, տեսնելով, որ այդ հպարտությունն ու ինքնասիրությունը, այդ «ֆիկցիան»—կարծես ավելի էր ամրանում Մաղաքյանի համառ դեմքին: Ցերե նշխանություն իր ձեռքին լիներ՝ նա, անշուշտ, անմիջապես կվռնդեր Մաղաքյանին որպես «ֆիկցիաները» տարածողի...

Պետք է ասած, որ իր կողմից Մաղաքյանն ել ատում էր Մելոումյանին: Իր ծոցատետրի մեջ նա գրել էր. «Ցես այնպես եմ ատում Մ-ին (Մելոումյանին), որ յերե լուսնի վրա էս և նա մենակ մնանք, կչարտեմ նրան դեպի մի ուրիշ հանդած մարտակ, որովհետև նա մեր յերկուսի մեջ ել կմացնի նշխողի և հպատակվողի տատիճաններ, իր դատարկ գլուխը ինձանից բարձր կպահի... Նա ընկերական կյանքի յերկվյալ թշնամի է, ևրա թուլոնն է»:

Որպես միջանցուկ քամին իր հետ հարբուխ և բերում, այնպես ել Մելոումյանի հայտնվելը դահլիճում մոայլ մտքեր էր ներշնչում Մաղաքյանին: «Ցերե Մելոումյանը՝ ոգևորվելով իր բարեկամական կապերից՝ կարող է այսպես թող տվչելով համարյա ոչինչ չլինել, բոլորի վրա վերևից նայել, ել ինչ ես շատ մտածում...ատում էր ինքն իրեն Մաղաքյանը—որքան ուզում ես մտածիր ու բարակ մանիր՝ անխուսափելի «վոմն» կդա և կնատի աղբյուրի ամենավերին ակի վրա...

Բայց զարմանալի է, այսպիսի հոռետես մտքերը գալիս ե-

յին, յերբ Մաղաքյանը հեռվից նկատում եր Մելքումյանին. իսկ հենց վոր նա մոտենում եր, մի զորեղ ալիք գալիս սրբում եր Մաղաքյանի այդ մտքերը, ու նրանց տակից իսկույն ծառանում եր մի բուռն դիմադրություն, վորը պատրաստ եր իսկույն գործի անցնելու: Նա ամբողջ հոգով «ժխտում եր» Մելքումյանին և պատրաստ եր նոր հեղափոխություն սկսելու, միայն թե նրան տապալեր...

***

Թարս որ եր: Սկսվոնից Մաղաքյանին հանճնել եյին մի քանի հին ամանոն հաշիվներ: Անկարդ կազմած եյին, վատ ձեռքով գրած և սխալներով լիքը: Մաղաքյանին դրդում եյին անկանոնությունները, սխալները, բայց մանավանդ դրդում եյին հաշիվը ներկայացնող անձերն ու նրանց ծախսած մեծ գումարները:

— Լրե՛ր,—ասում եր նա ինքն իրեն.—ո՞վ դիտե ես փողերի կեսը գավառներում քեֆի յեք-ավել, իսկ յես հիմա պիտի ձեր կեղտոտ չոպիկները մաքրեմ...

Այնուհետև յեկան մեկը մյուսի հետևից շատ և «հրատապ» գործերը: Ցերիսաը բերեց Մելքումյանը, գրեց Մաղաքյանի անունին ու արհամարհական տոնով ասաց...

— Ողնականի համար է, պետք է մի ժամից հետո պատրաստ լինի:

Մաղաքյանը այնպես զրդռվեց Մելքումյանի արհամարհական տոնից, վոր պատրաստ եր իր առաջի թանաքամանը նրա գլխովը տալ, բայց Մելքումյանը կարծես զգալով այդ՝ ասելն ու հետանալը մեկ արավ:

Մաղաքյանը յերկար ժամանակ չեր կարողանում կենտրոնանալ իր հաշիվների մեջ: Գումարները սխալ եյին դուրս գալիս ու զրդռում: Իսկ պատի ժամացույցն այսոր գլխովին թարսվել եր և ուշացած գնացքի նման ել գազար չեր տալիս. մի գլուխ վախում եր ու շտապեցնում Մաղաքյանին:

Զանգած մի կես ժամ՝ Մելքումյանն ուղարկեց ստատավորին իմանալու՝ վերջացրե՞լ և Մաղաքյանը թե չե: Պատասխան յեկավ, թե՝ չե: Մի քառորդ ժամից հետո նա նորից դուրս յեկավ ողնականի առանձնասենյակից, անցավ գահլիճով ու յետ գա-

նալով՝ նորից ուղարկեց ոստասավորին, ինքն էլ յուրից դնալով:

— Մաղաքյանն ասեց, դեռ էի վերջացրել, յերբ պատրաստ կլինի՝ կղրկվի,—ասաց նա:

— Ի՞նչ... Մաղաքյանի հերն էլ անիծած,—պատասխանեց Մելքումյանը դեմքը արհամարհական ծամածռությով: Ասաց դիտմամբ բարձր ձայնով, վրը Մաղաքյանն էլ լսի՝ նրա մտոք նրա ոողներն էլ:

Մաղաքյանը տեղից վեր թռավ ու բոունքը բարձրացրած՝ վազեց դեպի Մելքումյանը.

— Սրիկա, յես քո գլուխը կջարդեմ,—դոռաց նա կատաղած:

Բայց նրա վեր թռչելուն պես ծառայողները առաջը կտրեցին ու նա հազիվ միքանի քայլ արած՝ նրանց ձեռքումն էր:

— Թո՛ղեք, պիտի սպանեմ,—դոռում էր Մաղաքյանը մի տարօրինակ զարզանդ ազդող ձայնով:

Ձերեք հազով հազիվ էյին կարողանում նրան բռնել: Իսկ յերբ նա ղպաց, վոր անկարող է չարժվել, ծանր հեվքով ընկավ աթոռի վրա:

Ամբողջ դահլիճը տակն ու վրա յեղավ: Ծառայողները մեկ-մեկու յետևից գալիս էյին հարցական դեմքերով, համախմբվում Մաղաքյանի շուրջը՝ ոտա խմանալով գործի եյությունը՝ ամեն մեկը մի վորևե ածական էր տալիս.

— Ի՛նչ զզվելի... ի՛նչ ոգեղ բան է...

Կառավարիչն աղմուկի վրա դուրս յեկավ, մտեցավ խմբված ծառայողներին և խմանալով գործի եյությունը՝ դիմեց բոլորին.

— Հո չի՞ կարելի մի ինցիդենտ պատճառով ամբողջ հիմնարկության կարգը խանգարել: Գնացեք տեղներդ և չարունակեցեք ձեր գործը:

Ու ակնարկներն ուղղելով՝ լուրջ դեմքով վերադարձավ իր առանձնասենյակը, մտածելով,—«ոգնականիս Ֆրոնտը շատ է ուժեղացել. պետք է մի քիչ տեղը ցույց տալ»...:

Բայց մի հինգ րոպեյից հետո նա մոռացավ «ինցիդենտը»՝ մի հաճախորդի հետ զրույցի բռնվելով:

Անորինակ դեպքը կարծես մեխվեց հիմնարկության պատե-

բին: Մելթընդմելթ դրիչները ծառայողների ձեռքերին կանգ եյին առնում ու ասես հարցնում:

— Ի՞նչպես թե... ի՞նչպես թե այդ խոսքերը...այս ժամանակվին, այս հիմնարկության մեջ...

***

Տուն գալուն պես Մաղաքյանը պառկեց մահճակալի վրա ու յերկար ժամանակ մոածում եր, ավելի շուտ՝ անկապ պատանցում որևա պնակի շուրջը: Սկզբում յերևակայում եր, թե հարճանկվում է Մելչումյանի վրա ու վրեժը հանում, նույնիսկ սպանում: Ապա վոքր ինչ հանդստանալով՝ յերեսարճանակով սպանում: Ապա վոքր ինչ հանդստանալով՝ յերեսակայում եր, թե դատի յեն կանչում Մելչումյանին, ինքը ճառ է ասում, մեղադրում Մելչումյանին ու հիմնովին տապալում:

Մեկ-մեկ նա հանկարծ վեր եր թռչում, նստում մահճակալի վրա ու բռնկվում եր կասկածով, չլինի՞ թե նա այսոր մի բան անուշադրելի սխալ է արել, թուլ է տվել, վոր իրեն ծանր վիրավորվեն, չի դիմադրել, և այժմ վոչ մի կերպ չի կարող արրել իրվորին, չի դիմադրել, և այժմ վոչ մի կերպ չի կարող արրել իրենից այդ վիրավորանքը... դուցե բոլոր ծառայողները պիտեն բանից այդ վիրավորանքը... դուցե բոլոր ծառայողները պիտեն և խոսում են դրա մասին և միայն ինքը չգիտե...

Վեր է կենում, քայլում ու հետզհետե հանդստանում. չէ՛, այսոր նա արել է այն, ինչ վոր բնականաբար պիտի աներ ամեն մեկը...

Սեղանի վրա դրած եր մի շիշ գինի: Խմում եր, քայլում... նորից խմում: Արդեն շիշը դատարկվելու վրա յեր: Նրա տրամադրությունը գինու ալիքներով բարձրացել եր: Մոքերի, զգացումների մի խառնուրդ եր մեջը: Ահա վերջին բաժակն էլ խմեց ու նորից քայլեց: Ամեն ինչ մշուշի մեջ եր յերևում: Կանգ առավ Լենինի պատկերի առաջ.

— Մոռացե՞լ ես ինձ նմանների մասին,—հարցնում է պատկերից ու ինքը նրա տեղ պատասխանում.

— Կռվե՛ր, պայքարի՛ր...

— Իսկ յերթե գալիս և «անխոսափելին»... յերթե մանրանում են մարդիկ և նրանց կռիվները...

Պատկերը նորից պատասխանում է.

— Բայց կա ավելի մեծ և հզոր «անխոսափելին»—«միլիոնավորը»... այսուհետև ամեն ինչ նրա ոտակի մեջն է...

Քայլում եր նորից, ու մշուշի միջից բացվում էին մարդկային լայնածիր շարքերը։ բոլորը միաձույլ պալիս էին, խառնում ու փոթորկալից ձայնով կանչում.

— Կպաշտպանե՛նք, կպաշտպանե՛նք...

***

Անճրևային որ է։ Զրադմունքներից հետո յերիտ հոդի էին մնացել հիմնարկութեան մեջ՝ կոնֆլիկտային հանձնաժողովի նախագահ Պետրոսյանը և Մաղաքյանը։ Բավական ժամանակ նախագահը լուռ եր։ Դուրս եր նայում պատուհանից, սակայն ավելի դեմքը ծածկելու համար։ Մտածում եր՝ ինչպես սկսի, որ կարողանա համոզել Մաղաքյանին։ Փոքրիկ դեմքը ծռմռում եր, մի աչքը խուփ անում։ Վերջապես մտքերը ձևքով խառնելով՝ սկսեց.

— Ընկեր Մաղաքյան, դուք, իհարկե իրավացի յեք... շատ յավալի դեպք և այսպես ասած՝ ծառայողների ընտանիքում... Ինչ խոսք, Մելքումյանը շատ անկորնկիտ և վարվել ձեղ հետ, միանգամայն անթույլատրելի մեր՝ այսպես ասած՝ ծառայողների ընտանիքում... մենք պիտի աշխատենք ընդհանուր ջանքերով այդ անախորժ դեպքը լիկվիդացիայի յենթարկել...

Մաղաքյանը չհամբերեց.

— Ձես զարմանում եմ, որ դուք դիմում եք ինձ այդպիսի խոսքերով. իմ հարցը շատ պարզ է. Մելքումյանը վիրավորել է ինձ և պիտի ներողություն խնդրի. յես ուրիշ դեր չունեմ խաղալու, բացի Մելքումյանից ներողություն լսելուց...

— Ընկեր Մաղաքյան, դուք մոռանում եք, որ բոլորը միատեսակ դիտակից չեն. և այդպիսի դեպքերում դիտակիցները պիտի ոգնեն գործին...

— Այսինքն, ներեցեք, դուցե դուք կամենում եք, որ յես գնամ Մելքումյանից ներողություն խնդրեմ:

Պետրոսյանը կարմրեց:

— Դուք իրավունք ունեք, ընկեր Մաղաքյան, վրդովված մարդ՝ զրպռվելու. սակայն պետք է հարցին հանդիստ նայել...

— Այսինքն, ի՞նչպես, չի՞ կարելի, որ պարզեք ձեր միքը:

— Դիտե՞ք, կան հանդամանքներ... որինակ, կարող է պատահել, որ Մելքումյանը համառի և չանի այն, ինչ որ անհրաժեշտ է...

— Հետո՞: Իսկ դո՞ւք...ինչ է ձեր դերը: Դուք պիտի ինձ պաշտպանե՞ք, թե չէ...

— Ինչո՞ւ եք այդպես մոտենում հարցին. չե՞ որ մենք կոչված ենք՝ այսպես ասած՝ խաղաղություն մտցնելու...և այդ տեսակետից ցանկալի չեր, որ ձեր հաշտեցումը լիներ՝ այսպես ասած՝ փոխադարձաբար...ձեռք ձեռքի տված...

— Մխանդամայն հասկանալի չե ձեր ասածը, ընկ. Պետրոսյան: Շնորհակալ եմ, որ վերջապես պարզեցիք ձեր դեմքը: Իսկ չես հայտնում եմ, որ դուք շնորհիվ ձեր «հանդամանքների» դրծիք եք դարձել ուժերների ձեռքին և որը ցերեկով այդպիսի առաջարկություններ եք անում...

— Ի՞նչու չեք այդ տոնով խոսում: Ինձ թվում է՝ վիրավորելու կարիք չկա, չերբ մարդ ճգտում է իր պարտքը կատարելու:

— Դուք դա անվանում եք պարտք կատարե՞լ... Իսկ չես, պարզ լսեցեք՝ ձեր առաջարկը համարում եմ մի դավաճանություն: Ձես ձեր պաշտպանության կարիք չունեմ. կարող եմ դրծը տանել առանց ձեզ ել:

Ու դուրս գնաց:

***

Ահա այդ ժամանակ եր, որ Մաղաքյանը գրեց իր նամակը արհեստակցական մխության խորհրդին.

— «Ընկերներ, չեթե լուռնի վրա չեմ, ինչեցրեք, չեթե քնած եմ՝ արթնացրեք: Որը ցերեկով մեր հիմնարկում ինձ վիրավորեց չակերտավոր մի ընկեր, և մեր կոնֆլիկտային հանձնաժողովն առաջարկում է, որ վիրավորվածը ներողություն խնդրի վիրավորողից:

«Ընկերներ, վորքան ճիշտ է, որ գրում եմ սև թանաքով, նույնքան ճիշտ է, որ չի կարելի հանդուրժել այսպիսի վերաբերմունքին: Ուստի պահանջում եմ՝ պաշտպանեցե՛ք «ընկեր» անունը, որ անցել է բարբիկադներից և խոցվում է ձեր առաջ... ընկերներ, պաշտպանեցեք «ընկեր» անունը, որ բարձր է ամեն ինչից...

Նամակն առանալուն պես կարդարդություն յեղավ նշանակել ծառայողների ընդհանուր ժողով՝ արհմիության ներկայացուցչի մասնակցությամբ:

***

Սրահակարգ ժողով եր:

Համակրական ճառերը կնճ ջրի նման թափվում եր Մաղաքյանի վրա:

Կուսակցական Սպամյանի վճռական հայտարարությունը, թե՝ վերջին ժամանակներս մեր հիմնարկության մեջ «նեպի» ազդեցության տակ առաջ են եկել չերևույթներ, չեղումներ... կարծես պակաս եին Մաղաքյանի ներսից: Նրա ներսից ելին պակաս և անկուսակցական Կոզիկյանի խոսքերը, թե՝ «մեր հիմնարկության աշխատակիցներն այս հարցում ցույց ավին կատարյալ ոհասության. այսոր արհմիության խորհուրդը մեր ականջից լռնած հրավիրում և ժողովի»... Կամբերիա Սաղոյանը, իր յերկար մտքերը թափահարելով՝ բուռն կերպով հարձակվում և Մեջլումյանի և նրա «արբանյակների» վրա, պահանջում և մաքրել աշխատավորների չարքերը թունավոր ոճերից...

Մաղաքյանն ընկնում և տաք հոսանքի մեջ. այլևս չի կարողանում հետևել խոսողների մտքերին, վոչ ել կարողանում և կենտրոնանալ, հիշել, թե ի՞նչ պիտի ասի ինքը, յերբ «վերջին խոսքը» կտան իրեն:

Նա չի նկատում, թե ինչպես բոլորի հայացքներն ուղղված են իրեն, համակրական հայացքներ...

«Միայն «բարձր» ծառայողների մի խմբակ ճարպիկ թըղթախաղների նման ծածկում են ամեն ինչ իրենց դեմքերի չեզոք արտահայտությամբ. չի խոսվում, թե ո՞ւմ կողմն են—Մաղաքյանի՞, թե Մեջլումյանի:

Ոչխորդ Սչխենը հավիտ և դարձում իր կատաղությունը, նա սկզբից անհամբեր սպասում եր Մեջլումյանին, բայց չնկատ (քանի որ ե՝ չի տեսել). «Մի դար, տասպատեր ես մռութը կլուսած վիլլիսոսկային... Ինչի՞ համար են ապրում եսպես մարդիկ, վորոնք միայն ուրիշներին խանգարում են... ի՞նչ լավ եր. նա սիրահարված եր ինձ վրա, իսկ այժմ... ո՞վ դիտե, ինչ կպատահի...»

Որևորդ Շողիկը զարմանում է, թե ինչու այդպես վոխ-
վել է Մաղաքյանի դեմքը, կարծես լուսավորվել է. ինչո՞ւ ա-
ռաջ չեր նկատում, թե ինչ «հետաքրքիր» է յեղել... ուժեղ
մարդ է յերևում. համարձակ դուրս կգա...մի՞թե չի վախե-
նում կրճատումից...

— Ընկեր Մաղաքյան...—դիմում է նախագահը:

Մաղաքյանը չվոխված, այրվող դեմքով գալիս կանգնում
է նախագահի սեղանի մոտ. սկրտը բարախում է, կարծես մե-
նամարտի յե դուրս գալիս:

— Ընկերնե՛ր, ամեն անգամ, յերբ խոսողները իմ անունն
են տալիս, յես յերևակայում եմ մի ուրիշ Մաղաքյան, վորը
նստած է ձեզանից ամեն մեկի մեջ... Ընկերնե՛ր, այստեղ Մա-
ղաքյանի և Մելքումյանի դատը չէ... այստեղ վորձում է
դուրս բարձրացնել անցյալը... այստեղ խոսում է անխուսա-
փելին... Ցեխ ինձ այրում է այն միտքը, վոր Մելքումյաննե-
րը անվում են մեր մեջ... մեր այն աշխատակիցների հնացած
արտերում, վորոնց մեջ այսրվա ժողովի ընթացքում չկար
պայքար, բողոք, այլ չեղոքություն... բայց այս մոմենտին յես
զդում եմ իմ մեջ, ձեր մեջ, մի ուրիշ, ավելի հզոր անխուսա-
փելին... Նա անթեղած ապրում է մեր արտերում ու բռնկում,
յերբ ժամն է հասնում... դա «մելխոնավորն» է... Նա հետևում
է մեզ ամեն տեղ.—Թևկոտ յոթը սարի յետևը Թագնվեք՝ նա
մեզ կհասնի... այսուհետև ամեն ինչ նրա ոդակի մեջն է...

***

...«Հետացնել Մելքումյանին...շարքերից» անցնում է Մա-
ղաքյանի ականջներով:

Ժողովը վերջանում է: Ամենքը մոտենում են Մաղաքյանին,
ձեռքը սեղմում, խրախուսում, թվում է, թե մի հսկա, յեռուն
բանակ է բռնում նրա առաջ, վորի դեմ վոչ մի ուժ չի դիմա-
նալ:

«Ցեխ ինչո՞ւ առաջ պարզ չեյի տեսնում, վոր այս բոլոր
ընկերներն ինձ հետ են...», անցավ Մաղաքյանի մտքով, «չե՞
վոր նրանք Թագնված չեյին, իմ առաջ եյին...»:

Ընդհանուր հոսանքի հետ Մաղաքյանը դուրս յեկավ վո-
ղոց: Ելեկտրական լույսերն ուրախ վողջունում եյին նրան:

Թվում եր, թե ամեն ինչ փոխվել է, դարձել է մաերիմ, թվում եր, թե ամեն ինչ իրեն՝ Մաղաքյանի հետ է կապված...

Անցավ փողոցի մյուս կողմը, վորպեսզի մենակ մնա և մտքերը հավաքի: Ներս մտավ արճարանը, նստեց մի անկյունում,—թեյ պահանջեց, բայց մի քանի կում խմելով՝ թողեց ու դուրս գնաց:

Մի քանի քայլ անցնելով, հանկարծ յեռևից լսեց իր անունը.

— Ընկեր Մաղաքյան...

Յետ նայեց: Որիորդ Շողիկն եր:

— Ընկեր Մաղաքյան, չնորհավորում եմ ձեր հաղթանակը,—ասաց նա մի առանձին քնքուշ ձայնով:—Յես զարմանում եմ ձեզ վրա. դուք բոլորովին փոխվել եք, ել նման չեք առաջվա Մաղաքյանին...

— Այո, յես ել կարծես չեմ ճանաչում ինքս ինձ...

Որիորդը. ձեռքը մեկնեց Մաղաքյանին:

Ու հանկարծակի յերևան ել իրար ձեռք տված պատկին մի անհարմարություն, կարծես հանցանք եյին գործել, իրար համակրելով:

Բաժանվեցին: Մաղաքյանը քայլեց առաջ, նորից ընկնելով իր մտքերի հոսանքի մեջ:

Այդ րոպեյին մեկն ել թափառում եր փողոցներում, չեր ուզում տուն գնալ: Որիորդ Աչիենն եր, վորը թղթախաղում ամեն ինչ տանուլ տված ել ոչ մեկ բռնկվում եր, թուն թափում Մաղաքյանի վրեին, հետո՝ ինքն իրեն մխիթարում: «Դուցե Մելքումյանը նորից բարձրանա... կամ դուցե մի ուրիշը...»:

Մաղաքյանը անցնում եր փողոցով հարբածի նման, վոչինչ չեր նկատում: Նրան թվում եր, թե ելի չարունակում է իր ճառը յերկար, յերկար, հաղարավոր վառված ամբոխի առաջ... ամենքը լարված լսում են... «Ընկերնե՛ր...իմ և ձեր մեջ՝ «միլիոնավորների» մեջ, խոսում է անխտրապես... այսուհետև ամեն ինչ մեր ողակի մեջն է»:

---

## ԶԱՌԱՓԱԹԸ

*Ճանաչո՞ւմ եք ինժեներ Մելիք-Ղահրամանյանին...յնթե չեք ճանաչում, կնշանակի չեք յեղել Ծովափնա են մեծ քաղաքում:*

*Հիմի նա մի քիչ ուղղվել է, բայց են տարին նրա գործերը վիճուկ էյին.—պաչտոնից հեռացրել էյին կնչ-վոր չեղումների և «սաբոտաժի» պատճառով (ես խոսքը նա մինչև որս էլ չի կա-րողանում մտքանել): Ամեն յերեկո նա գալիս եր քաղաքային այ-գի, գնում եր ծանոթ թե անծանոթ մի մարդ ու խոսում եր, խոսո՛ւմ... Ֆա՞նկ ժամ ասեմ, ամբակածում եր խնդճի ականջ-ները, մինչև վոր լսողը բոլորովին թուլացած գնում եր տուն, անիծելով իր սև բախտը:*

*Բայց հետաքրքրականն այն է, թե յերբվա՞նից բացվեց ին-ժեներ Մելիք-Ղահրամանյանի լեզուն: Պատմենք գլխից:*

*Մի ժամանակ (ուզում եմ պնել՝ պատերազմից առաջ) յերբ նա հայոնի հարուստ Բեջանյանի նավթահանքերի կառավարիչն եր, շատ քիչ եր խոսում. նույնիսկ նրա ընկեր Մանուչարյանը պատմում եր, վոր ծառայության մեջ ընդամենը յերեք նախա-դասություն եր գործածում, են էլ անպատճառ Ղարաբաղի բար-բառով (կյանքում նա գրական բարբառով, կամ ինչպես ինքն եր ասում՝—գրաբառ խոսք չեր ասել): Նա առաջին նախադասու-թյունն ասում եր հանքատիրոջը՝—Բեջանյանին, վորին միշտ խորը գլուխ եր տալիս ու ամեն անգամ քիչ եր մնում վայր ընկ-նի, վորովհետև հաստ հաստ փորի պատճառով կռանալիս հա-վասարակշռությունը կորցնում եր:*

*— Սաղ ռաբոչուն (բանվորներին) կըկտրեմ, թաք քեզ նավթ տամ:*

*Յերկրորդ նախադասությունը նա ամեն որ կրկնում եր իր ոգնականին.*

*— Եղ տղոչանց՝ ռաբոչուն քանի կարաս, հո՛ւպ տուր:*

*Վերջապես բանվորների համար նա միայն մի պատասխան*

ուներ.— յեթե դանդաղվեր բանվորը, կամ պահանջեր՝ Մելիք–Ղասարից (այդպես եր նրա ազգանունը) միայն մի բան կլսեր՝

— Տյուս ըրեք (դուրս արեք) սրան...

***

... Բայց այս աշխարհում շատ թարս բաներ են լինում— մեկ էլ տեսար՝ տարվա որվա վերջը կարկուտ կեկավ: Ահա մի որ էլ կեկավ հեղափոխությունը, կեկավ ու կանգնեց ինժեներ Մելիք–Ղահրամանյանի առաջ:

— Թո՛ւհ, քուռ պլրոլին նահլաթ. ասրոչուն էլ հենց ես եր պակաս,—ասում եր նա ինքն իրան ոդ անիծում:

Մի չարաթի վրա տեսավ, վոր չե՛, սա «պատափաթ» (կատակ) չե. տեսավ ինչ–վոր ժողովներ են անում, ճառեր են ասում, մտածեց, վոր հարկավոր է «մի պեն» (մի բան) անել, թե չե խառը ժամանակ է, ո՞վ է իմանում...

Կնոջը պատմեցեց, վոր իր կարմիր փողկապը դանի ու հետո յերբ նրա բաղդից դանվեց, մոտ մի ժամ քրոնելով չարչարվում եր, վոր լավ կապի, յերևացնի: Այդ էլ վերջացավ: Նա հիշեց, վոր ճառ պիտի ասի ու սարսափեց,—ի՞նչ պիտի ասեր...վախենում եր հանկարծ ճառի տեղ ասի իր սովորական խոսքը.

— Քանի կարաս՝ հուպ տուր սրանց...

Նա գիմեց իր կնոջը: Յես ճանաչում եյի այն բարակ կնոջ՝ Հարությա Մինասբեկյանի աղջկան:

— Մարդա՛րիտ, մեն քանի դրաբառ խոսքեր աստ, տյուս ժողովներում ըլած ես,...

— Դե կասես եյի՛. ատատուԹյուն... միություն, դե յես ի՞նչ գիտեմ...հավասարուԹյուն...

Եզավես՝ կարմիր փողկապը կապած, գլուխն էլ մի յերկու «դրաբար» խոսք պահած՝ Մելիք–Ղահրամանյանը դնաց միխնդի: Տեսնելով բանվորներին, նրա սիրտն ահ ընկավ, այնպես եր թվում, թե բոլորն իրան են նայում ու ասում:

— Տյո՛ւս ըրեք սրան:

Մի կերպ ինքն իրան հանդստացրեց. «դե ի՞նչ կա. մեր աղերքն են, յեղ կըքանեմ, գործը կըդրվի»:

Հետո ձայն խնդրեց նախապահից, մի քանի անգամ հազաց ու սկսեց իր ճառը.

— Գիտեմ ը՞ք, հի՞նչ կա. եաքան տարի յա մունք լոխ մին պենուա (գործուա) ընք... մունք լոխ մին տեղան ընք՝ Ղարաղից... Մունք պետմա մին–մընի պահենք, մխանանք... համի լա՛վ ապատություն ա...

Բայց Թարխի պես՝ բանվորները չհոգին, վոր նա վերջացնի իր ճառը: Սկզբում աղմուկ բարձրացավ: Հետո ել լսվեց չվոց: Ցերբ նախապահը մի կերպ լռություն հաստատեց, բանվոր Սհակը (մխաներդ չի՞, վոր նոր եր դուրս եր յեկել բանտից) մի ղել ձայնով վրա բերեց Թե՝

— Եղ վոր կարմիր դալստուխ ես կապել, մեֆամ դիտում չե՞նք, տակին ի՞նչ կա:

Ես մեր Մելիք–Ղահրամանյանը քրանքի մեջ կորած՝ ծլկվեց, դնաց տուն:

— Թո՛ւհ, քու հալատն անիծեմ, պենեցս խարաբ ըլալ,— ասում եր նա կնոջը ու կատաղությունից սեղանի վրայի իրևղեններըը կոտրատում:

Հետևյալ որը բանվորները նստացրին Մելիք–Ղահրամանյանին «տաչկի» վրա ու դուրս բերին նավթահանքերից:

***

Դրանից հետո պատմությունը խառնվում է: Դե, յես մոռացվոր չեմ. դուք ել դիտեք, վոր քա՛նի բաներ յեկան անցկացան մեր քաղաքի պլխովը: Այսքանը դիտեմ, վոր այդ «գալմաղալի» մեջ Մելիք–Ղահրամանյանը իր գլուխը պահից: Ասում են «տաչկի» պատմությունից հետո դեսուդեն ընկավ, մարդիկ մեջ ըցից. դե, դիտեք, ելի՛, մարդ ասածդ հո քար չի, պնդել ել կա, կակղել ել... Մի խոսքով՝ ելի տեղավորվից, պաշտոն գտավ:

Բայց դե, խոմեն վոր գալիս է, հո մի տեղից չի գալիս. երբ թե մի հեղափոխությունը բավական չեր, մեկն ել վրան յեկավ՝ պակասը լրացրից: Ինարկե՛, իմացողները ասում եյին, թե կա վիտեբսկայան, կա Հոկտեմբերյան հեղափոխություն, կա մենշեվիկ, բայշևիկ, բայց դե մի Մելիք–Ղահրամանյանին ել հարցրեք, ե՛:

Դե ել ի՞նչ ասեմ, դուք ինքներդ մտածեցիք՝ Մելիք-Ղահրամանյան, և խորհրդային իշխանություն՝ իսկի իրար բռնում է՞ն...

Ա՛յ հիմա լեր, վոր պիտի տեսնեիք մեր ինժեներին. լերեք որ եք—զարմանքից ասեմ, թե՞ կատաղությունից—նրա դեմքը ծռվել եր, քարացել:

— Ա՛րա, զառամած ա՞—կրկնում եր նա.—մթամ երած եր՝ ըլալ խրնձրատա՞մ...ես իշխանությունը մեզ լա՛վ ակլորելու ա՝ Ա՛թամ-Ցեվա յա ընելու:

Մելիք-Ղահրամանյանը վրդովում եր, կատաղում. լա՛վ, ասենք են բանկի փողերը կորան, եղ մեկ ցավ. բա են կնդա բաժինքում բերած մեծ տունը ինչի՞ յեն խլում ձեռիցը.—եղ որե՞նք ա.—ասում եր նա—բա էս յեքա տունը վիր ունեն խալխին տա՞ն. խի՞, յես պարտական եմ, խալխի՞ն...

Լավ կլիներ, վոր եղ որերին մոտ չգնայիք Մելիք-Ղահրամանյանին, չհարցնեյիք նրա քեֆն ու հալը: Նրա դարդը միայն այն չեր, վոր ունեցած հարստությունը գնաց, մի ուրիշ մեծ ցավն էլ իր փորի հոգսն եր: Ուր էլ գնում եր՝ բուրժուա էյին ասում տալիս քաշվելու. դե բուրժուան էլ՝ իրան ասելով՝ «ապրնատանից» էլ բեթար եր (բանտարկյալից էլ վատ եր): Որ չեր անցնում, վոր եղ «անտեր փորի» համար մի տեղ յերեսովը չըտային: Գալիս եր դարպասի կնկանն ասում:

— Մարդարիտ, դիդում ըս, ես փորն ինձ լա՛վ խաթի մեջ պ քցելու:

Ճիշտ վոր՝ այդ փորը մի ուրիշ փոր եր: Իր ընկեր Մանուչարյանը նույնիսկ հաշվել եր, վոր նրա մեջ եր մտել տասը վագոն ուտելիք և հինգ հատար չիչ խմիչք. դե եղ հաշվի ավելպակասը ինքն է խմանում, յես այսքանը կասեմ, վոր այդ փորը յերեք մեր փորի չափ կըլիներ: Հիմի թե բուրժուա էյին ասում. այդ հա մեծ ցավ եր. բայց այն մյուսն էլ պակաս չեր՝ ախր նո «անտեր փորը» հարկավոր եր կերակրել, թե՞ չե:

— Փու պենը հեչտ ա,—ասում եր նա կնոջը, մին պուճուր պատ ես. մի պողունց բերանդ դցես՝ հերիք ա. բա յես ի՞նչ անեմ. զառամած ա՞. ես յեքա չվալը լցնել կինե՞մ— մին դրվանքա հացի պայտով...

Մի ուրիշ դարդ էլ կար,—այդ նրա շորերի հարցն եր: Դուք հո գիտեք, վոր նա միշտ հագնում եր իր ինժեներական համազ-

գետը՝ իր դեղին վայրուն կոճակներով: Այդ շորերը նա շատ էր սիրում, միշտ հագնում էր, պլպին էլ դնում մեծ կակարդով պլխարկը: Իսկ հիմա լինքը մնացել էր՝ լինչպես ճանճը մածնի պլխարկը: Իսկ հիմա լինքը մնացել էր՝ լինչպես ճանճը մածնի մեջ. ամեն տեսնող քիչ էր մնում աչքերով ուտի, յերբ նկատում էյին նրա հին ոճիմի հագուստը: Նա իր համապլեստը չհանեց, մխայն տակից ևս տաքնի բլուզ հագավ, վոր միքիչ էլ ա դեմոկրատ տեսք ունենար:

Հիմի իմացա՞ք, թե լինչո՞ւ էր Մելիք Ղահրամանյանը փըլփըրում, թե լինչո՞ւ նրա դեմքը կատաղությունից ծուվել էր:

— Սրա, ասում էր իր ընկերոջը,—գաթի կըլխումս էլ հու լնելք չի մնացել. հիմա փլի էլ՝ յես ես պեհերից պյան չըմ հակատնալ. լա՛վ չուտ են տվել ամեն լինչ, մթամ թաղա որենք են պլխըել... բա բուքիլկեն վոր չուտ ուտ, թարս անես, կըկաղնի՞... Սխալեր, ա՛ստուծ, յե՛րկինք, ես իշխանությունը իրեք ամսից ավել պիմանալու չի:

***

Բայց դե ամեն լինչ լավ կլիներ, նրա խոսելուն այնքան ուշք չեյինք դարձնիլ, յեթե մի դժբախտություն չպատահեր: Մի որ էլ իմացանք, վոր մեր Մելիք-Ղահրամանյանին գործից հեռացրել են, յերկու շաբաթ էլ նստացրել: Պատմում էյին, վոր նրան բանտարկել են պարենավորման ցուցակները կեղծելու համար. բերել էր իր բնտանիքի անդամների թիվը ավելացրել, հետո բանվորների համար ստացած մթերքներից լինքն էր ոգտվել: Ուղիղ էր ասում Մելիք-Ղասարը, վոր իր փորի պատճառով մի որ խաթի մեջ պիտի ընկներ: Բայց դրա մասին չէր խոսում, ծածկում էր. նրա սրտի ցավը մի «անիծված» նոր, խոսք էր՝ «սաբոտաժը», վոր նա հանդիսա կերպով չէր կարող ջնել... Նրան մեղադրում էյին նույնպես և «սաբոտաժի» համար:

Լավ կըլիներ, վոր այդ խոսքը նրա բերանը չընկներ, այն ժամանակ իր ընկերներն ու ծանոթները հանդատություն կունենային նրա ձեռից: Իր ընկեր Մանուչարյանն ասում էր, թե այն օրվանից լինչ նա այդ խոսքը լսել էր՝ նրա լեզուն վոչ միայն բացվել էր այլ՝ կարելի է ասել պատռվել էր: Ցավ դրանից հետո էր, վոր նրա ծանոթներն աշխատում էյին չհանդիպել նրան, վոր խոսելու ոմբակոծությունից ազատ մնան:

Հիմա իմացա՞ք, թե լինչ պատճառով Մելիք-Ղահրամանյանը

ամեն յերեկո գալիս եր քաղաքային այգին, վնտռում եր մի մարդ՝ ծանոթ թե անծանոթ, վոր խոսի ու խոսի, մինչև վոր աղցան անի լսողին ու հետո բաց թողնի: Դե մարդու լեզուն բացվել եր... մարդու մեջը «սարոտաժ» կար...

— Սարո՛տաժ... Ախա, եղ թարգա խոսքը ինձ համար եր պահա՞ծ... այս ինչ ըս սապոտաժ ասըմ. մին քու սարոչուն ել յեչի ե... ախա, պե՛նըմ չի, պե՛նըմ... այս նրան ասա. ինձ հո՞րըս ասում... պիրել են սարոչուն, մըղ հետ նասացրել, թե հալասարություն ա... բա յես ինժեներ տեղուվս նրա կողքին նասեմ, Մարքսիցը նադլ անե՞մ:Ձե՛, խելքս պեն չի կտրում: Ախա, հի՞նչ հալասարություն. ըսկի մեր հինդ մատները իրար հավասար չեն, այս ուզում ես վոր մարդիկ իրար հալասարվե՞ն... ...չե, թե դրուստ կուզես՝ ես իշխանությունը մին իրեք ամիս ել դիմանալ չի...

Ախպես խոսում եր, յի՛րար խոսում Մելիք-Ղահրամանյանը (վայ լսողին): Յես ինչ վոր ախանջովս լսել եմ, այն եմ ասում. թե չե վոր նրա խոսածները դրեմ, յոթին որ յոթը դիշեր չեմ կարող վերջացնել:

***

Բայց մի յերեկո մի չսեսնված բան պատահեց:

Յերբ Մելիք-Ղահրամանյանը իր ահագին մարմինը քաշ տալով յեկավ քաղաքային այգին, հետո գտնելով մեկին՝ սկսեց իր «սարոտաժի» պատմությունը, հենց այն թռունդ, տաքացած ժամանակ, յերբ նա ամբաստծում եր խորհրդային իշխանությունը, հանկարծ յերկու ոգա յեկան նրա առաջը.

— Դո՞ւք եք քաղաքացի Մելիք-Ղահրամանյանը,— հարցրին նրանք ոտաներեն:

— Յես եմ. ի՞նչ եք կամենում:

— Ձեզ հետ գործ ունենք, այս կողմը յեկեք:

Յերբ Մելիք-Ղահրամանյանը վեր կացավ տեղից ու մոտեցավ, ոգանները քաշեցին մի կողմ, ուր մարդ չկար ու ասցին.

— Հետևեցեք մեզ.

— Ինչո՞ւ:

— Առանց խոսելու հետևեցեք մեզ:

Յերկուսն ել տարճանակ ունեցին, այնպես վոր ավելորդ խոսելու տեղ չեր:

Մելիք-Ղահրամանյանը ահը սրտին՝ դնաց նրանց հետևից: Այս «խաթեն» այնքան սարսափելի եր, որ նա կարծես մի խոր, անտակ հորի մեջ ընկավ:

Յերկու տղաները տանում եյին նրան այդու մութ անդերը, ուր վոչ վոք չկար:

Յերբ կանգ առան, տղաներից մեկն ասաց.

— Փաղաքացի Մելիք-Ղահրամանյան, դուք չարունակ հայհոյում եք կառավարությանը, մինչդեռ դուք ինքներդ գիտեք, վոր մեղադրվում եք սարսուռի մեջ...

— Խնդրում եմ, աղաչում եմ... յես վոչինչ չեմ արել,— կրկնում եր չարունակ Մելիք-Ղահրամանյանը:

Բայց այստեղ չդիտեմ վո՞ր քամին փչեց, չդիտեմ ինչի՞ց Մելիք-Ղահրամանյանը յեղրակացրեց, վոր տղաները հայեր են, հանկարծ հայերեն ասաց լացակումած ձայնով.

— Մին բա՛խշի, քմատազ... մին բա՛խշի... լոխ, հինչ վոր ասել եմ, դառաւխաթ եմ արել:

— Մնացե՛ք այստեղ, մինչև մելիցիոներ բերենք,—ասացին տղաներն ու հեռացան:

Ու մինչև որս եկ դեռ ուղարկում են մելիցիոներին:

Յերկար ժամանակ Մելիք-Ղահրամանյանը կանգնած սպասում եր տղաներին: Սրտեն այդին դառարկվեց ժողովրդից, բայց դեռ ելի սպասում եր: Վերջապես նա չարժվեց քայլ առ քայլ դնում եր ու կանգ առնում, կարծես վորձելու համար, թե իրեն հետևող կա՞, թե չե: Այդպես նա հասավ մինչև այդու մուտքն ու հարյուր անգամ յես-յես նայելով դնաց դեպի տուն:

Ո՜ւֆ, ինչ դրություն եր...

***

Մի քանի յերկու չաբաթից հետո բացվեց դաղտնիքը:

Բանից դուրս յեկավ, վոր սարքողն իր ընկերն եր՝ Մանուչարյանը. նա մի կարճահասակ, հնարագետ ու կատակասեր տղա եր (մի՞թե դիտեր. նրա մասին ասում եյին թե բանվորներին հացի տեղ՝ առակներով եր կերակրում): Հա՛, մեկը իր յեղբորն եր քերել, մյուսը՝ իր մորաքրոջ տղային ու միասին կազմակերպել եյին այդ «ներկայացումը». իրենք ել՝ ծիծաղից թուլանալով՝ հեռվից դիտում եյին:

Յերբ ընկերները հրավիրեցին Մելիք-Ղահրամանյանին Մանուչարյանի մոտ ու բաց արին գաղտնիքը, նա կատաղեց, նույնիսկ սպառնաց դանգատվել, բայց վախենալով վոր դանգատի մեջ հանկարծ կըբացվի իր «հակառակ» խոսակցությունն ու մեկ էլ նորից կսկսեն «սարոտաժի» պատմությունը՝ վուրքը նստեց, մեղմացավ: Գինու չշերն էլ մնացածը լրացրին ու մեր պարոն ընկերները հաշտվեցին:

Յերբ քեֆի ժամանակ ընկերները ծիծաղում էյին, հիշելով «գառափաթը», Մելիք-Ղահրամանյանը, արդեն լրջությունը կորցրած, ժպտալով ասում էր.

— Էյա՛վ գառափաթ ըք անըմ... քիչ եր մնըմ մեռնեմ...

Յերկու ընկերները մինչև որս էլ ծիծաղում են:

Իսկ լինեներ Մելիք-Ղահրամանյանը այն որվանից չի սըրտում քաղաքային այդին: Գնում է ծուխուվ բուլվարը: Այժմ նա մի սովորություն է արել՝ մինչև չորս կողմը չնայի, չի նստիլ մի տեղ: Ամեն խոսք ասելիս՝ յետ է նայում, ու այնպես դժվարությամբ էլ մի բան ասում, ասես խոսքի տեղ վրդ է տալիս: Միայն մեկ-մեկ, յերբ նրա լեզուն էլի առաջվա նման քոր է գալիս, մի քանի անգամ ղղուշությամբ չորս կողմը նայելուց հետո ասում է ցածր ձայնով համակրողի ականջին.

— Սրա՛, գառափաթ ա՞... բուլիլիկեն վոր թարս անես՝ կըկաղնի՞...

## ՏԵՍԻԼԸ

*Ամեն անգամ, երբ անցնում եմ քաղաքի այն նոր, լայնացրած փողոցով, ակամա հիշում եմ անցյալը:*

*Առաջ այստեղ մի նեղ, ծուռ փողոց եր, իր հին, փոքրիկ տներով, որոնցից մի քանիսը դեռևս պահպանում էին կըղմինդրե տանիքներն ու դրսից համեստորեն ծածկված էին ցանկապատով: Մուտքի դռներին կտեսնեիք յերկաթե մուրճեր, որոնք դեռևս մրցում էին զանգերի հետ:*

*Այդ տների նեղ ու մութ բակերում, որոնք ծծված էին պարապոր խոնավութեամբ, որը ցերեկով, հանդիստ պատվում էին մեծ մկները, կերակուրի մնացորդներ փնտռելով: Յերբեմն էլ դիտողի աչքը հանդստանում եր, տեսնելով որևէ բակում արևպակաս մի թթենի կամ ունաբի ծառ:*

*Այստեղ վոչ վոք չեր շտապում: Թաղը լիքն եր ծանրաքայլ քահանաներով ու հին տարրալին հավատարիմ ծերուններով: Ամեն լինչ, վոր արագ ու սրընթաց եր քաղաքի կենտրոնում, հասնելով այստեղ, դանդաղում եր, կարծես համոզվելով, վոր շտապելու կարիք չկա:*

*Փողոցում կային մի շարք արհեստավորներ, վորոնք շրջնակում էին իրենց հին արհեստները, վորոնք այժմ այլևս չկան: Մանր խանութների ճակատին կտեսնեիք կախված էիբուխի պլուխների, խաչխաչի ու որորոցի չիբեքների չարաններ:*

*... Հիշում եմ այս բոլորը, բայց ամենից շատ հիշում եմ այն նեղ փողոցի մի փոքրիկ տունը և նրա փոքրիկ տիրոջը:*

*Այս տան մուտքի յերկաթե մուրճը շատ եր գրավում փողոցի յերեխաներին. ամեն անգամ անցնելիս նրանք գաղտագողի մոտենում էին, մի քանի անգամ պինդ չխկչխկացնում ու վախենում: Չխկչխկոցի վրա խկուն դուրս եր թռչում մի փոքրա-*

հասակ, մեծ մորուքով «էնոլինիկի» դրեստով, մի մարդ, արագ-արագ նայում էր աջ ու ձախ, վնտռում էր չարաճճի հանցավորներին, ու չգտնելով նրանց, վրնթիվրնթալով ու սպառնալով նեղս էր մտնում:

Ինչպե՞ս մոռանամ այն մարդուն... նա այնպես էր սպրում այդ թաղին, փողոցին ու այդ տանը, որ թվում էր, թե այդ բոլորի հետ հատուկ պատվերով ստեղծած մի ամբողջություն էր կազմում:

***

Թամարբեկյան էր այն վոքրիկ մարդու ազգանունը: Նախկին պետական պաշտոնյա՝ յերկար տարիներ համեստ պաշտոններն վրա թուխս նստած ու կենսաթոշակի չրջանը լրանալուց հետո ծառայությունը թողած:

Թե ինչպե՞ս եր նա ձեռք բերել այդ տունը, ի՞նչ խոչընդոտներ հաղթահարել, ո՞ւմ հետ գաղտ բռնվել,—այդ բոլորի մասին միայն ինքը կարող եր պատմել իր բոլոր մանրամասնություններով:

Այդ վոքրիկ տունը, լցնում եր իր միրոջ կյանքը հպարտ ու մի մանր մուն գործերով: Յեվ այդ գործերը նա կատարում եր ամենամեծ ուշադրությամբ, նույնիսկ կարելի յե ասել՝ վոգևորվում եր նրանցով, իսկ չեզած տեղը միշտ վնասում եր ու պըրոնում:

Ամբողջ որը նա վազում եր իր տան մեջ,—մի տեղ մեխ եր խփում, մի ուրիշ տեղ գոգան չանգալը վոխում, պատչգամբի թուլացած ճաղերն ամրացնում ու այսպես անընդհատ մի գործից անցնում եր մյուսին, վանդակի մեջ ձգած թռչունի նման պտտվելով իր տան մեջ:

Կիրակի որերը պատարագից հետո նա իջնում եր չուկա, գնում եր ամեն տեսակի մանր-մուն յերկաթեղեն, գոների ու պատուհանների պարագաներ, ու հետո ամբողջ շաբաթ զբաղվում եր իր բերած իրերն այս կամ այնտեղ հարմարեցնելով:

Այնուհետև կտեսնեյիք Թամարբեկյանին մուրացկանին կամ թափառական չանն իր գավթից վռնդելիս, գոնապանի կամ վոստիկանի հետ իր տան մասին խոսելիս, փողոցի յերեխաների վրա գոռալիս:

Իսկ ամառվա յերեկոները հաճախ կտեսնեյիք նրան պատըշգամբում վառարոր նստած հանդիստ զրուցելիս, վորևե/ պատվավոր մարդու հետ.—գինվորականի, վաճառականի կամ քահանայի հետ:

Այդ ժամերին նա իր սեփական տան բավականություն եր վայելում:

***

Ամբողջ փողոցի բնակիչները տարիների ընթացքում այնպես եյին ընտելացել Թավարբեկյանին, վոր թվում եր, թե մի տան մեջ եյին ապրում նրա հետ: Գիտեյին նրա սովորությունները— թե յե՞րբ և տանից դուրս գալիս, ո՞ւր և գնում, յե՞րբ և ճաշում, քնում, և այլն:

Հացթուխը, իմանալով նրա սովորությունը, «առանձին» ընտրովի հաց եր պահում նրա համար, կոշիկարն «անմաչ» կաշի յեր բանեցնում նրա կոշիկները նորոգելիս: Ծանոթականներն էլ գիտեյին, վոր նա սիրում և յերկար սակարկել, բայց չեյին նեղանում, վորովհետև դա նրա «խայտաթղթի» եր, վորին ամեն կերպ պետք և հարմարվել:

Ցերեկն միայն փողոցի, յերկու կոշիկարներից մեկը նեղանում եր Թավարբեկյանից, թե ինչո՞ւ նա իր կոշիկները հանձնել և նորոգելու իր հարևանին: Բայց այդ էլ չուտով մոռացվում եր, վորովհետև հետևյալ անգամ նա իր կոշիկները հանձնում եր մյուս կոշիկարին, վորպեսզի առաջինը յերես չառնի:

Փողոցի աչքի ընկնող բնակիչների—մանավանդ տնատերերի, վաճառականների հետ շատ սիրալիր եր Թավարբեկյանը: Բացառություն եր կազմում միայն իր տան հարևանը, վորի հետ տահմանավեճի կռիվ ուներ: Ամեն անգամ նրա անունը տալիս ավելացնում եր.

— Ցես եղ ավազակին Սիբիր պետք և ուղարկեմ...

Գանի վոր խոսքը յեկավ Թշնամության, պիտի ասենք, վոր նրա ամենամեծ Թշնամիները փողոցի յերեխաներն եյին, վորոնք մեծ անհանգստություն եյին պատճառում դռան մուրճը չխկչըխկացնելով: Նա միշտ դանգատավոր եր ուսուցիչներից, Թե ինչո՞ւ յեն յերես տալիս աշակերտներին, խիստ պատիժներ չեն նշանակում:

***

Թամարբեկյանի ստացած Թոշակի ամեն մի կոպեկը մի պատմութիւն ուներ: Ծախսում եր այնպես, կարծես ամեն մի փող իր մարմնից եր պոկում:

Առաւօտը վաղ գնում եր շուկա, հետն առած վոլքրկի ծառայեն, վորը լայն պլոժակի մէջ, թևքերը քաշ ընկած, չարժվող խրտվիլակի յեր նմանում, ու մեծ կոշիկները քարշ տալով հաղիվ եր հասնում իր տէրոջ:

Այստեղ Թամարբեկյանը յերկար պտտվում եր, անվերջ սակարկում, բարկանում պյուղացիների վրա, ապտռնում ու վերջապես մթերքներ առնելով վերադառնում տուն մեծ մասամբ հաղթական տրամադրութեամբ:

— Սոֆիա,—ասում եր կնոջը, հենց եժան ապրանք եմ բերել, վոր փողն էլ հետն է յեկել:

Իսկ տիկին Սոֆիան անխտիր գովում եր նրա գնած մթերքները:

— Հա, ի՛նչ լաւն է. եսքան եժա՞ն... ես հո պատած է...

Պետք է ասենք, տիկին Սոֆյան ատելված եր ամեն ինչ գովելու, քանի վոր փորձով գիտեր՝ յեթե մի ինչին գուտ գներ ամռանու գնած ապրանքի վրա, Թամարբեկյանն իսկույն վրդովմունք եր բարձրացնում վերաւորված ինքնասիրութեունից, նոյնիսկ ապտռնում եր ռուսերէն.

— Դու գիտե՞ս, ո՞ւմ հետ գործ ունես—նորին կայսերական մեծութեան չինովնիկի հետ...

Զարմանալի յե թվում, թե ինչպե՞ս այդ վոլքրկի մարդը յենթարկել եր այդ կնոջը, վորն իրենից յերկու անգամ մեծ մարմին ուներ:

Կինը միանգամից ընդունել եր ամռանու անսխալականութեունը և անշեղ գնում եր նրա յետևից: Նա ապրում եր ամռանու կյանքով—յերբ նա գուրան եր, ապատում եր նրան, յերբ տանն եր, նրա կարգադրութեուններին ու սովորութեուններին եր հետևում:

Իսկ Թամարբեկյանի սովորութեունները մի ամբողջ ծխատէրութեուն եյին կազմում: Նրա ճաշելը, ընթրելը, թեյ խմելը, բաղանիք գնալը, բոլորն իրենց կանոնադրութեուններն ունեյին:

Հետևելով ամուսնուն, կնոջ կյանքն էլ ընկել էր կարգ ու կանոնի մեջ. նույնիսկ նրա դեմքը կարծես մի անգամից կաղապարվել էր, ստացել «չինովնիկի» կնիկա պատվավոր արտահայտություն և այդպես էլ մնացել իր կլոր փքված դեմքով, կոթեռում ճևավորված հաստ մարմնով ու ծոծրակին—ցից արած մազերի մեծ զնդով:

Մի արտակարգ դեպք միայն խանգարում էր Թավարբեկյանի հանգստությունը.—իր միակ տղան, ավարտելով զինվորական դպրոցը Պետերբուրգում, առանց իր թույլտվության ամուսնացել էր, վորի պատճառով էլ հայրը խռով էր իր տղայի հետ:

Բայց այս էլ շատ չանցած կարգ ու կանոնի տակ էր ընկել: Տարեները յերկու անգամ ջրոցհնեքին ու զատկին վորդին նամակ էր ուղարկում ծնողներին, յերեխայի պատկերի հետ: Հայրը վինթինթում էր, բայց պատկերին նայում ու ժպտում, իսկ մայրը թաղուն պատասխան էր ուղարկում, նկարագրելով մի քանի ամսվա անցքերը:

Թող ուրիշները ճանձրանային այս կյանքից, վորը քաղաքային ժամացույցի նման միտրինակ էր: Թավարբեկյանը վոչ միայն չէր ճանձրանում, այլ ընդհակառակը—նույնիսկ վոգևորվում էր:

Կյանքը նրա համար մի ամուր որենք էր, հաստատված «նորին կայսերական մեծության» կողմից: Նրա կարծիքով մարդ միանգամից պետք է մտներ նրա չրջանակի մեջ,—իր աստիճանի համեմատ,— և դուրս չպար իր սահմանից:

***

Այսպես—քաղաքի այն հին, սրբապղծված թաղում, իր սեփական տանը, իր կնոջ հետ, որինավոր ու կանոնավոր ապրում էր նախկին աստիճանավոր Թավարբեկյանը:

Ապրում էր այնպես որինավոր, վոր բոլոր պետությունները, իրար ձեռքից կխլեյին այսպիսի «պոհար» հպատակին:

Ու կապրեր ննջաուն ննջը տարի, յեթե մնար «նորին կայսերական մեծությունը», յեթե չպար հեղափոխությունը...

***

Ցերեւակայեցեք, թե մի հազար ռումբ միանգամից տրաքվում են ու խլացնում, կուրացնում Թալարբեկյանին:

Կամ թե չե մի վիթխարի քամի, խառնում է ամեն ինչ, փոշով ծածկում աշխարհը, բարձրացնում է վերև ու պատում անվերջ չշմաճ Թալարբեկյանին...

Մի՛ք ասել նրան, թե հեղափոխություն է. ասեք—յերկինքը փոխ յեկավ, յերկիրն էլ հետը:

Փողոցում աղմուկ է, շարժում, հազարավոր ամբոխի վոգեվորություն, իսկ Թալարբեկյանի համար այս բոլորը սատանի հուզարկավորություն է, մեծ հրդեհ է, կամ ջրհեղեղ:

Մի քանի որ սխալմամբ դուրս եր գալիս, կարծելով թե այս բոլորը թյուրիմացություն է: Բայց հազարավոր ամբոխը սարսափելի վախ եր/ազդում նրան. Թվում եր թե պիտի հարձակվեն իր վրա և պատառ-պատառ անեն:

Փողոցներում Թվում եր, թե տները չարժում են և շուռտ պիտի վրվեն:

Իսկ յերբ լուր տարածվեց, թե բայշևիկները խլում են հարուստներից ամեն ինչ, նա խոպառ խելքը կորցրեց.

— Տներն էլ են խլո՞ւմ, հարցրեց վախվխելով.

— Տներն էլ:

Այլևս աշխարհը սևացավ նրա առաջ. վոտներն ու ձեռները սկսեցին դողալ ու այդպես դողում եյին յերկու տարի:

Պինդ փակվեց իր տանը ու մեծ ահը սրտին, սպասում եր ու դողդողում: Ամեն աղմուկ, վոտների ձայն սանդուղտների վրա մահվան հրեշտակի ձայն եր նրա համար:

— Գալիս ե՞ն,—հարցնում եր կնոջը:

— Ո՞վ.

— Բա են ի՞նչ ձայն է...

— Սղբի մշակն է...

— Վա՛յ թե դան տունս խլեն ու ինձ էլ անհաղորդ սպանեն...

Սրտի ծակոցներ, անվերջ նվազումներ—չնչի սպառում, մի կվատանա կյանք սկսվեց իր ահավոր յերթուղիով:

Կինը կանչեց իրենց ծանոթ բժշկին: Ցնկավ, նայեց ու ասաց իր անդիր սրած խորհուրդը.

— Հա՛նդիստ, հանդի՛ստ... չպետք է հուզվեք...

Ասում էր ու ինքն իր վրա խնդում: Ի՞նչ հանգստություն, երբ ինքն էլ անհանդիստ էր. նրա աչքերում էլ պարում էր իր սեփական տունը...

— Ես ժամանակին սիրտ կդիմանա՞, ասում էր բժիշկը Թավարբեկյանի կնոջը. ամեն ինչ քանդեցին...

— Հա՛, հա՛,—պատասխանում է կինն ու թաշկինակով արցունքները սրբում:

***

Անցել էր յերկու տարի: Շատերն էին հաշտվել ու հարմարվել նոր կարգերին, բայց Թավարբեկյանը չարունակում էր իր հին վախն ու դողոցն առաջին որվա թարմությամբ:

Մարդու և կնոջ դերերը փոխվել էին, այժմ դրսի աշխարհի հետ հարաբերությունները պահպանում էր կինը, իսկ «նախկին» Թավարբեկյանը վաղաս դարձած տանն էր մնում:

Կինն էր այժմ վնթվնթում մարդու վրա, նկատողություններ անում, պահանջում, վոր իր «կարգադրությունները» կատարի. և Թավարբեկյանը, մոռացած իր նախկին իշխանությունը, ստիպված էր լինում հնազանդվելու, վորովհետև նույնիսկ ամենամեծ ապառնալիքը, վոր տալիս էր առաջ— «նորին կայսերական մեծության» անունով, այժմ միայն ժպիտ կարող էր հրուցանել:

Կինը համոզում էր նրան դուրս գալ փողոց, մի քիչ շարժվել, հավատացնելով, թե վոչ մի վտանգ չկա, նույնիսկ յերբեմն էլ ասում էր—«համարյա թե առաջվա նման է», բայց Թավարբեկյանը կատակում էր,—հանկարծ դուրս գա, ընկնի «ետ նրանց ձեռքը». ո՞վ գիտե, կբռնեն կտանեն «անհայտը» կպահանեն...

Բայց վերջապես մի որ, մի պայծառ մայիսյան որ կարողը քաշեց, և նա ցանկություն ղգաց քաղաքը տեսնելու: Ինչ վոր չահելության հիշողություններ յեկան մեջը... իր սիրած փողոցները, իր պաշտած կայսերական տոների պարադները և էլ ո՞վ գիտե, թե ինչ:

Ու դուրս յեկավ կուչ ու կուզ արած, վիզը կնոջ չալով փաթաթած, ձեռնափայտը քաշ տալով:

Աչքերը մարած էին, ճպռտա, ու նրանց տակերին յերկհար-

կանչ կնճխոնների դողը: Շրթունքները չարունակ շարժման մեջ էին. փսփսում էր, ինքն իր հետ խոսում ու հաճախ կրկնում— «տե՛ր, վրկյա՛ զմեզ ի չարե»:

Շարունակ մրսում էր, չնայած վար տաք որ էր և շատերը ամառվա հագուստով էին մոն գալիս:

Կանաչազարդ ծառերը, ակացիների անուշ բուրմունքը, չարաճճի ծառերի ձայնը հիշեցնում էին վաղո՛ւց, յերբոյք նման անցած կյանքի մի կտո՛ր:

Բայց թվում էր, թե շատ հեռվից էր գալիս այս բոլորը ու աղոտ էր ամեն ինչ, վորպես լուսյակ խորը ջրհորի մեջ:

Փողոցներն էլ ասես առաջվանը չէյին, վոխվել էյին. չարունակ կանգ էր առնում ու զարմանում,— մթի՞ առաջ այսպես էր:

Մի տեղ նա գեմ ընկավ վողոցն ի վեր չարված ամբոխին ու ակամա կանգ առավ:

— Տեսնում ե՞ս, Նիկոլայի գործ ա,—ասաց Թավարբեկյանի կողքին կանգնածներից մեկը մյուսին. հե՛յ գիտի հա, ինչ գեներալներ են, ի՛նչ աֆիցերներ...

Կարծես յեռացրած ջուր սրսկեցին Թավարբեկյանի գեմքին, այնպես անսպասելի էյին այս խոսքերը. «Նիկոլայի գո՞րք»... ինչպե՞ս, վորտեղի՞ց...

Նրա լեզուն բացվեց:

—Ինչպե՞ս ասացիք, պարոն, ներողություն, ի՞նչ գորք...

— Թագավորի գորք է, ասաց նույն մարդն ու հեռացավ:

«Թագավորի, Նիկոլայի գորք»:

Թավարբեկյանի ականջին ասես մի մեծ, ահեղ զանգ հնչեց: Նրա սիրտն սկսեց վեր վեր թռչել, և ուրախության մի ալիք կուրծքը մտավ: «Տե՛ր, մեղա քեզ ասվածս, ես ի՞նչ բան եմ»...

Մի կերպ աստղ անցավ գեպի վողոցի մեջտեղը, աչքերը լարեց. ճիշտ վոր հեծելազոր էր անցնում չքեղ ու վայելուն պղեսաներով:

Սհա գորքի մի մասն անցավ վողոցի այս կողմով, բոլորովին մոտիկ Թավարբեկյանից:

— Տե՛ր մեղա քեզ ասվածս... ճի՛շտ վոր Նիկոլայի գորք է... ասնացիներով, վայելուն կոճակներով...

Սկսավ ձեռքը ճակատին գրել, կարծես աստղելու համար, յերազ է թե՞ իրականություն: Չե, սա իրականություն է, բայց

ինչպե՞ս յեղավ այդ բանը: Ուրեմն ճի՞շտ եր ասում այն պարոնը, թե Նիկոլայի ղորք է գալիս... «Նորին կայսերական մեծություն» ղորք...

Ա.հա կապակները են անցնում, իսկական կապակները... և վո՛րքան մոտիկ...

Յեվ անսպասելի ուրախությունից հուզված, աչքերը լրակալած, դողդողացող ձեռքերով գլխարկը վերցրեց ու խաչակնքեց յերեսը:

Անցան կապակները ու նրանց յետևից չարվեցին կառքերը, վորոնց մեջ նստած եյին կայսերական բարձրաստիճան մարդիկ, մեկը մյուսից վառահեղ հագնված, կրծքներին խաչեր, մեծ սպիտակ աստղեր, ժապավեններ, վայլուն գեղին մետաղյա կոճակներ:

Բայց վոր գլխավորն է, և վոր պարզ նկատում եր Թալարբեկյանը, նրանց գլխարկներն եյին, հին ձևի, յեռանկյունաձև:

Թալարբեկյանը նայեց այդ պաշտելի գլխարկներին, ուրախությունից լինչ վոր անվորոշ ճիչ արձակեց ու վազեց դեպի կառքերը:

Նա հրճվում եր, ցնծում, արտասվում ուրախությունից: Հուզմունքից չեր կարողանում մի բան ասել. նրան թվում եր, թե ուտա յե կանչում, բայց իսկապես նա միայն ա՛-ա՛ եր բղավում, կարծես վոչխար լիներ մայելիս:

Մոտենալով կառքերից մեկին, նա վայր ձգեց ձեռնափայտը և իր հին, չինովնիկի խուճապած գլխարկը հանելով, սկսեց յերեսը խաչակնքել:

Նրա յետևից ամբոխը բարձր ծլծաղում եր, ատլում, բայց Թալարբեկյանը չեր լսում, նա շարունակում եր յերեսը խաչակնքել:

Մխիթիոնները, վոր հսկում եր չարժմանը, նկատելով Թալարբեկյանին կառքի մոտ, իսկույն մոտ վազեց և թևքից բռնելով քաշեց իր յետևից:

Ամբոխի ծլծաղն ու սուլոցները բռնկվեցին կրկնակի ուժով: Գլխարաց, բերանբաց ու աչքերը չռած Թալարբեկյանը մեծ ծլծաղ եր հարուցանում:

Յերբ յերկուսով հասան վողոցի յեզրին, Թալարբեկյանին չրջապատեցին. ամենքն աշխատում եյին մոտենալ, տեսնել նրա դեմքն ու հենց յերեսին բարձր ծլծաղում եյին:

— Հա՛, հա՛,—բղավեց նրա ականջին մի տղա.—հենց իմանում է իսկական թագավորի զորք է...

— Ո՞վ, սա՞,— հարցնում է մի ուրիշն ու մոտենում է և նույնպես ծիծաղում:

Թավարբեկյանը նոր է նկատում, վոր իրեն վրա յեն ծիծաղում, բայց չի հասկանում պատճառը: Այդ ժամանակ մի տղա բերում է Թավարբեկյանի ճխլած գլխարկն ու խորը՝ մինչև ականջները հագցնում նրա գլխին:

— Հենց իմանում ես Նիկոլայը յեկել ե՞,—ասում է տղան ժպտալով.— ես հո կլինեյի համար են նկարում:

Թավարբեկյանն ապշած, զողզողալով նայում է տղային. յերևում է, չի հասկանում, թե ի՞նչ է ասում:

— Իմացա՞ր, ես զորքը վոր տեսար, սարքում յեր. եսպես անց են կացնում ու պատկերը հանում, հետո յել կլինոյում ցույց տալիս:

— Ես բոլորը իսկական չե՞ր.

— Չե, թամաշա յեր:

Թավարբեկյանի սիրտը ճմլվեց: Ձեռքերի զողզոդոցն ավելացավ. թուլությունից քիչ եր մնում վայր ընկնի:

Տղան տեսնելով նրա նվաղելը, թևքից բռնեց ու դուրս բերեց չբյապատ ամբոխից:

Այժմ նրան թվաց, թե այս բոլորը սարքել են, վորպեսզի իմանան, թե ո՞վ է «նրանց» կողմը... և մտածեց թե հիմի կդան ու կբանտարկեն իրեն...

Տղան դուրս բերեց նրան, մի քանի քայլ հեռացրեց ամբոխից ու բաց թողեց:

Թավարբեկյանը չարժվում եր դանդաղ, կարծես չդիտակատ լինելին վոտքերը:

Քայլում եր որորվելով, չնչատպատ. ամեն րոպե թվում եր, թե վայր կընկնի:

Նկատելով ծառը, մի կերպ վոտքերը տղ տալով մոտեցավ ու հենվեց, յերկու ձեռքով ընկնելով ծառի վրա:

Հանկարծ տղաների մի խումբ անցավ նրա մոտով:

Ականջների ճչոցի անտպատելի աղմուկի մեջ Թավարբեկյանը միայն զգաց, վոր մարդիկ մոտեցան. նրան թվաց, թե յեկել են բանտարկելու:

*Մի ուժեղ սրտի ծակոց ցնցեց նրան, ու վայր ընկավ.*

*Ցերբ մխիթիոնները յեկավ և սկսեց չարժել, Թավարբեկյանն արդեն մեռած եր:*

1928

---

## ԱՋՔԸ ՎԱԽԵՑԱԾ ՀԱՆԵՍԸ

*Ամեն անգամ, երբ քաղաքից մի մարդ եր գալիս՝ լիներ դա վոսպերատիվի հրահանգիչ, կոմերիտների ջրջիկ, նույնիսկ կին բաժնի վարիչ՝ միևնույն է, Հանեսը սիրտ նրա առաջը յերներ՝ մեծ մասամբ գյուղից գուրս, վոր մարդ չտեսնի, ու միշտ նույն խնդիրը կրկներ.*

*— Պարոն հրնգեր, խնդրում եմ՝ ինձ ոգնեք...*

*Սէջքերը չռած՝ հեվիհեվ, նա այնպիսի տեսք ուներ, կարծես հետևից վազում, հալածում եյին, և չուտափուլթ ոգնություն եր աղերսում:*

*Ֆաղաքի մարդը կանդնեցնում եր ձին՝ ու Հանեսն սկսում եր իր վարելահողի պատմությունը.—ես բալշեվիկի կառավարությունը վոր յեկավ՝ Մաթոսանց Սիմոնի արտը խլեց ու տվեց իրան՝ Հանեսին: Ու հիմի նա չի կարողանում տերություն անել արտին, ոգտվել նրանից.—Սիմոնը կռիվ է գյում, չի թողնում մոտ գնալ... իսկ եղ Սիմոնը ամենահարուստ մարդն է գյուղում:*

*— Ինդրում եմ մի ենպես հրաման տաս, վոր Սիմոնը վերջ տա, ել կռիվ չգյի, ու արտն ել ինձ վրա սինդ հաստատվի...*

*Նորեկը մնում եր չվարած, տեսնելով, վոր գործը իրեն չի վերաբերում, բայց խորհուրդներ եր տալիս, թե ո՞ւմ պետք և գիմել, կամ նամակ եր գրում այս ու այն պաշտոնյային անունով և շարունակում իր ճամբան: Սակայն Հանեսը գոհ չեր մնում վոչ տված խորհուրդներից և վոչ նամակից (վորը չեր հանձնում), ու ելի շարունակում եր իր գիմումները՝ ամեն մի քաղաքից յեկողին:*

*Հանեսին այնպես եր թվում, թե վոչ վոք չի ուզում հասկանալ իր գարդը ու ամեն մեկը, վորին նա գիմում է՝ միշտ աշխատում և գործը ձգել գյուղի մարդկանց վրա, վոխանակ իր ձեռքով վճռելու, կամ քաղաքից կարգադրելու: Վոչ վոք չեր*

մտածում, թե ևս Սիմոնը՝ գյուղի ամենահարուստ մարդը, (վորի մոտ Հաննեսը յերեք տարի նոքար է յեղել) որը ցերեկով իր արտը չի տալ եստեղի մարդու ասելով... են ել ո՞մ... ամենախեղճ, ձենը վորն ընկած մարդուն, վորի ավելորդ անունը «աչքը վախեցած Հաննես» եր...

***

Այդպես եր Հաննեսի ավելորդ անունը, և զուր չեր կպել նրան այդ անունը: Ասենք՝ պիտի խոստովանել, Հաննեսի վախը մի ուրիշ տեսակ եր,—նա չեր վախենում գաղաններից, ստահակներից. նա վախենում եր «աղա-մարդկանցից»: Դեռ մանկությունից պրծատակ, քյոխվա, կախարդավոր մարդկանց տեսնելիս՝ նա վախչում եր թաղնվում: Մի անգամ, յերբ Հաննեսը դեռ ութ տարեկան եր, քաղաքից յեկել եր մի կախարդավոր մարդ, հետն ել բերել եր իր վոջիլիկ տղային: Մի որ ել սա մորակ եր չինել ու վազվզում, խաղում եր: Հանկարծ տեսավ Հաննեսին, վազեց նրա կողմը: Հաննեսը վախից գլուխը կորցրած՝ սկսեց վազել, ու մի չնչում ընկավ իրանց տունը, զուրը չբրխկացնելով.

— Այ տղա, ի՞նչ ես վազում,—հարցրեց հայրը:

— Են տղի տղեն—հազիվ կարողացավ ասել Հաննեսը ու չվատահանալով նույնիսկ իր հոր պաշտպանությանը՝ դնաց թաղնվեց տանը:

Հաննեսը գիտեր, վոր հայրը չեր կարող պաշտպաններ իրեն աղա—մարդուց.—չե՞ վոր նա մի անգամ տեսավ, թե ինչպես մի կախարդավոր մարդ քյոխվի հետ մխասին ծեծեցին իր հորը հարկահավաքի ժամանակ...

Դեռ տանհինգ տարեկան եր Հաննեսը, յերբ նրա հայրը մեռավ: Թաղման որը ել բարեկամ, ել հարևան, բոլորը՝ ասես խոսքը մեկ արած՝ սկսա եյին տալիս Հաննեսին:

— Վախի՛լ մի Հաննես, ղոչաղ կաց. ոչով չի կարող քեզ մի չոռ ասի, տարի պես քամակիդ կանդնած ենք...

Բայց չատ չանցած՝ Հաննեսը ուրիշ խոսքեր լսեց: Են սկսա տվող հարևանը՝ Աստաքելը, վարելու ժամանակ Հաննեսի արտից գալիս, մեջ ղցեց բավական տեղ, ու յերբ Հաննեսի մայրը դնաց, վոր տանջն առնի, հարեվանը կատաղած գոռաց.

— Գնա, թե չե հենց կտամ, մարդուդ տեղը կընկնես:

Մի բարեկամ եւ մյուս արտը վերցրեց, խոստանալով կլսուվի վարել, բայց կեսի տեղ մի քառորդը տվեց, իսկ հետևյալ տարին այդ եւ չտվեց, ու արտը մնաց նրա ձեռքին:

Մայրը փորձեց դանդաղել, բայց շուտով համոզվեց, որ վտանգն ավելի յն մեծանում,—դեռ դանդաղը չվերջացած՝ դուզացան նրա մեկ կողը. բոլորը պիտեյին, որ այդ դաղությունը դանդաղի վրեժն եր: Ու մայրը լռեց, սարսափած ուժեղների շառից: Յերբ պատանի Հանեսը խոսում եր դրա մասին, մայրը միշտ լռեցնում եր.

— Վորդի, ատ՛ա կաց, են դառբանների հետ չենք կարող կըսվել. ոնոմ տեղով ջուրը կմտցվենք, մինչև վերջին թիքեն եւ կխլեն, լավն են ա՛ ատա ու փատա ապրենք. մի կատը հաց կճարենք. դնա նոքար մտի, հնազանդ աշխատի, մինչև որ կմեծանաս, հետո տեսնանք, կարելի յե մի ճար անենք:

Հանեսը նոքար մտավ, ու իր բախտի պակասը լրացավ: Աշխատում եր դիշեր-ցերեկ ու քանի շատ եր աշխատում, այնքան ավելի եյին հայհոյում, ծաղրում ու ծեծում: Որ-որի վրա նա խեղճացավ: Մի խորը վախ լցավ նրա վրա, ձայնը փորն ընկավ: Նա ման եր գալիս վախվախելով, լինչպես մի հալածված, քափտառական շուն, որը ամեն քայլափոխում հետ է նայում, սպասելով, որ կամ քարով կկսվեն, կամ մի տանու շուն վրեն կհարձակվի:

Յերբ մի քանի տարուց հետո Հանեսի մայրը մեռավ, նա ավելի խեղճացավ: Ամեն մի ուժեղ ձայն, ամեն մի խեթ հայացք նրան դող եր բերում: Ու այդ ժամանակ եր, որ նրա անունը կպավ «աչքը վախեցած Հանես»:

Այժմ Հանեսն իրեն լավ եր զգում մեյն դյուղից դուրս, հանդում, անտառում՝ տավարի ու վոչխարի հետ. նա ուրախ կլիներ, որ իսկի չվերադառնար դյուղը, ուր մարդիկ փչի մատյառների նման ճամբա չեյին տալիս նրան: Յեթե տավարը պահվելիս՝ մեկ յերկու ընկեր եւ պատահում եր, նա մոտանում եր իր ցավերը: Ամենից շատ նա մտերմացել եր իր ընկեր Սերաքի հետ: Սերաքը պատում եր հայոնի ավազակների մասին, հետո յերազում եյին, թե լինչպես իրենք եւ ավազակ են դառնում, գալիս են իրենց դյուղը, բոլոր դառբաներին դերի յեն տանում, իսկ

Նոքարներին ընկերացնում էրանց: Եղ տեսակ էդ էրիքին թևկոտ ասլաններն. ի՞նչ կար վոր. դժվարը ես նոքարությունն ա, ես հայ-հոյանքը, ծաղրը...

***

Դեռ մինչև բայլեվիկների գալը գյուղում հաճախ խոսք էր բնկնում նրանց մասին: Հանեսը չէր մասնակցում խոսակցությանը, վախենալով մի վատնդավոր բան թռցնել բերանից: Բացի դրանից նա լավ գիտեր, վոր թևկոտ իմաստուն խոսք ասեր՝ բանի տեղ չէլին դնել, կծաղրեյին, քանի վոր ինքը աղքատ էր:

— Էլը՛, դու էլը պակաս,— կասեր զորբաններից մեկը,— ի՞նչ ես հիմար-հիմար դուրս տալիս:

Դե, այդ խոսքին ի՞նչ պատասխան տար Հանեսը. կռի՞վ պըցնե՞... չէր կարող՝ կռվի համար «մեջք» և հարկավոր, իսկ ինքը մի խեղճ մարդ է: Ճիշտ է, հիմա նա տուն էր դրել, կնիկ, յերեխաներ ուներ, ել նոքար չէր, բայց սովի ճեռքից չէր կարողանում ազատվել:

Մի անգամ միայն, են ամենաթունդ սովի օրերին, յերբ նոքից խոսք ընկավ բայլեվիկների մասին, Հանեսն ել չհամբերեց.

— Ա՛խ, մի դան, է՛,—ասաց նա սրտով.—մի դան, ես անիբասվներից ազատեն:

Ասաց ու ինքն ել զարմացավ, թե եղ ի՞նչպես ասաց. չորս կողմը նայեց՝ տեսավ, վոր հավաքվածները էրան նման աղքատներ են. ունեվորներից միայն յերկու հոգի եյին, նրանք ել հեռու կանդնած՝ խոսում եյին:

Հանեսը սրտից էր խոսում,—սովը յեկել էր խեղդել՝ յերեխաները հաց եյին կանչում, իսկ էրեն քարքարոտ արտից նա համարյա վոչինչ չէր ստացել, մյուս կողմից ել պարտքի տակ ընկում էր: Մխոքը խառնվել էր, մի ճամբա չէր գտնում, վոր ազատվի ես նեղությունից: Դուրսը ինչ վոր կատարվում էր՝ Հանեսը գժվարությամբ էր գլխի ընկնում: Պատերազմը, թագավորին գցելը, այս խառը բաները նրա համար, ամպով ծածկված սարերի նման վոչինչ չեյին յերևացնում: Միայն այն էր տեսնում Հանեսը, վոր քանի գնում՝ սովը հաղթում էր, վոր գյուղի ունեվորները որ-որի վրա ավելի եյին ազահանում և քիչ էր

մնում «մարդ ուտեն»: Այնքանը պիտեր Հաննեսը, վոր առում եր նրանց. առում եր մահից ավելի, ու թե դատաստանն էրեն առյինք, ով պիտեր՝ թե ինչ կաներ... Բայց նրա ձեռքից ինչ կըդար, չե՞ վոր նա խեղճ, անճեն մարդ եր...

Այսպիսի որերին, յերբ Հաննեսը լսում եր «բալշեվիկի» մասին, այդ խոսելը մոտացնում եր նրա ցավերը: Ինչ վոր առում էլին նրանց մասին, վեր եր քաղում ու ինքն էրան մտածում, ապատում, անհամբեր ապատում, վոր մի որ գան ու մի արդար արենք բերեն:

Այսպես խոսեցին—խոսեցին դյուղում, մեկ էլ տեսան՝ յեկան... Հանկարծակի մի բան եր, ինչպես դետի վարարելը: Մինչեվ Հաննեսը կհասկանար, թե ինչ և կատարվում, յեկան, նրան էլ տեղահան արին, ժողովի կանչեցին: Գնաց տեսավ, վոր դյուղի ազքատները նստած՝ ալինդ-ալինդ խոսում են, հենց իմանաս՝ ամեն մեկը տաս որավար հող ունի ու չորս լուծը յեղներ: Ինքն էլ ուրախացավ, բայց մի չատ զարմանում եր.

— Ազքատների իշխանությո՞ւն... վո՞նց թե. բա ազքատների իշխանություն կլի... նոքարը խաղեյինից բարձը՞ր. եղ հու ամեն բան թարս ա գալիս. բա եղ ամեն բան շուռ ուղտն ո՞վ ա...

Այդ էլ դեռ վոչինչ. ամենից զորեղն այն եր, վոր դյուղի հեղկոմը՝ քաղաքից յեկած ընկեր Բաղրատի առաջարկությամբ՝ վճռեց ամենաազքատ դյուղացիներին հող տալ, խլելով հարուստների մասից: Հաննեսին ընկավ Մաթոսանց Սիմոնի արտը: Այնքան զարմացավ Հաննեսը, վոր կասկածում եր՝ չլինի՞ թե կատակ են անում:

Մինչև այսպես կասկածում եր, տեսավ մի որ էլ դուքան, յեղներ էրար հավաքեցին ու Հաննեսի ներքևի արտը ուրիշների հետ վարեցին:

Այստեղ արդեն Հաննեսը մտածեց.

— Դե էլ ի՞նչ դես ու դեն. ենա Թալա արենք ա... արենքի դեմ ո՞վ կարա խոսի...

***

Հաննեսին աված վարելահողը յերկու կտոր եր. մեկը ճամփի տակը, մյուսը՝ վերևը: Ներքևի մասը, հենց սկզբից վարեցին ու ցանեցին, իսկ վերևինը թողած եր խոպան՝ աշուն-

քավարի համար, և այժմ խոսել տեղ էր: Հենց վոր խոսքը հասավ, Հաննան պերանդին առավ ու դնաց հնձելու:

Ման-ման սկսեց հնձել. ու քանի հնձում էր, այնքան ավելի ձեռները բացվում էին ու Թաին ինքն էր առնում-բերում պերանդին. արդեն Հաննան դժվով տարվել՝ ինքն իրեն մոռացել էր, յերբ հանկարծ ականջովն ընկավ Սիմոնի ձայնը.

— Դու եղ ո՞ւմ չունն ես, վոր արտս հնձում ես:

Հաննան ցնցվեց նրա ձայնից, կանգ առավ. նրան թվաց, Թե ինքն էլի առաջվա նման՝ նոքար է Սիմոնի մոտ. ու հիմի նա յեկել է գործի ժամանակ ճղճղում է, հայհոյում, ինչպես առաջ էր անում:

— Ձես որենքով եմ հնձում,—ասաց նա հազիվ լսելի ձայնով:

— Ի՞նչ որենք. քիթ ու պռունգդ վոր կջարդեմ՝ են ժամանակ կիմանաս, Թե որենքն ի՞նչ ա:

— Որենքը ընդունում չե՞ս. դե յես կդնամ նախապահին կբվանչեմ, տենամ ի՞նչ Ջուզար կտաս նրան:

— Ջհանդամը դնաս, ինչ ուզում ես՝ արա, յես իմ արտը քեզ չեմ տալ. են վոր ցանեցիր ներքևվը են էլ քիթդ կհանեմ... գո՛ւբս կորի, ասըմ եմ...

Հաննան նկատեց, վոր գալիս էր և Սիմոնի մեծ տղան՝ ձեռքին մի գաղանակ: Պարզ էր՝ յեկել էին Հաննային այնպիսի ջարդ տան, վոր ձեռք քաշի այդ արտից: Ուժը նրանց կողմն էր. յերկու հոգու դեմ ի՞նչ կարող էր անել:

Ու պերանդին ուսին դնելով, Հաննան շտապ քայլերով հեռացավ արտից: Սիմոնի տղան ճամբեն ծռեց, վոր նրա առաջը կտրի, բայց հայրը չթողեց:

— Թող գնա կորչի եղ չունը. ինքն ա փախչում, էլ ուր ես գնում:

Տղան կանգ առավ. կարծես տատանվում էր. ապա նորից քայլերն ուղղեց դեպի հայրը:

Հաննան գնում էր, կատաղությունից արագ հեվալով, հայհոյելով Սիմոնին:

Ուղղակի գնաց Հեղիմի նախապահի մոտ:

— Սիմոնը Թողնում չի արտս հնձեմ:

— Գլուխը քարուվն ե տալա: Ի՞նչի չի Թողնում:

— Կռիվ է գցում. յեկել եյին ինքն ու տղեն՝ վեստերը ձեռներին. հիմի դու գիտաս, թե արտը ինձ ա տվաճ՝ հընձեմ, թե չե՝ ես ի՞նչ բան ա...

— Ախա, մի գնացեք Սիմոնին կանչեցեք,—ասաց նա իր քարտուղարին:

Սիմոնը յեկավ վինթինթալով:

— Ի՞նչի չես թողնում վոր ես մարդը հնձի:

— Բա իմ արտը թողնեմ ուրիշը հնձի՞...

— Դու եղ խամ-խամ խոսելը թող...թե չե կբանտարկեմ:

— Ջհաննամը, յեկեք սաղ տուն տեղս էլ տարեք, ձեզ ըլի...

Ասաց ու վինթինթալով հեռացավ:

Հանեսը մյուս որը գնաց, հնձեց արտը: Էլ Սիմոնը չեկավ: Բայց յերբ խոտը չորացավ, Հանեսը հավաքեց, բլուլեց ու մինչև սայլ ու լծկան կղտներ, վոր տուն տանի՝ մեկ էլ յեկավ տեսավ, վոր խոտը չկա...

Սիմոնը խոտը հավաքել տարել եր: Էլի գործը հասավ նախագահին: Ախ անգամ Սիմոնին յերեք որ բանտարկեցին. տուպեցին, վոր խոտը հետ տա. բայց Հանեսը մխայն կեսկ չափ ստացավ ու գրանով էլ բավականանալով՝ էլ չգանգատվեց:

Ահա այդ որվանից սկսվեց Հանեսի արտի պատմությունը:

— Չե,—ասում եր նա ինքն իրեն.—հաստատ որենք չկա, սրանից բան չի գուրս գալ. են ա՝ թե քաղաքից յեկած մարդն արավ՝ , թե չե եստեղի մարդու բանը չի: Մեր գեղի մարդիկ ի՞նչ են հասկանում, վոր ի՞նչ վճռեն. միշտ ուրիշի ձեռին, ուրիշի խոսքին են մտիկ անում: Որինակի համար Հանեսը գնում է գանգատվում նախագահին. դե նա յել աղքատներից է. ինչքան չլի՝ մի քիչ քաշվում (է Սիմոնից, կարելի յե արտասվը մի քիչ էլ վախում է. մտածում է՝ ո՞վ է իմանում, ժամանակը ինչպես շուռ կգա... Ուղիղ է, կարգադրություն անում է, բայց այնպես պինդ բան չի բռնում, վոր մխանգամից կտրցնի, ու Հանեսը հանգիստ վայելի իր արտը: Չե՛, հաստատ որենք չկա...

Նա վոչ մի կերպ չեր հաշվում այն մտքի հետ, թե իրենց գյուղացիք կարող են նոր իշխանություն կազմել: Գյուղում մի մարդ չկար, վորին Հանեսը վստահեր ես նոր որենքը. նա կուզեր, վոր բոլոր իշխանավորները քաղաքից գային. թող գան, նստեն, մի անգամից իրանց ձեռքով հաստատեն ամեն ինչը, թե

չե՝ «մեր մարդը ելի հին որենքով կանի, ամեն բան կվչացնի»...

Ու դրանից եր, վոր Հաննեսը աչքը բռնեց քաղաքի ճամբին: Միշտ սպասում եր, թե մի մարդ կգա ու իրան ձեռքով դարձը կվճռի, կհաստատի. այնպես պինդ կհաստատի իր վրա են հողը, վոր էլ հազար Սիմոններ գան, չեն կարող քանդել...

Այդ եր պատճառը, վոր Հաննեսը ամեն քաղաքից յեկողի առաջ եր դուրս գալիս, իր արտի պատմությունն եր անում ու խնդրում, վոր կարպատրություն անեն, վոր Սիմոնն էլ կռիվ չդցի...

***

Գանի մտաենում եր վերևի արտի հնձելու ժամանակը, Հաննես ավելի յեր անհանգստանում: Նա ելի չարունակում եր դիմումները ամեն մի քաղաքից յեկած մարդու, բայց միշտ դժգոհ եր մնում: Մի նոր հույս էլ բացվել եր Հաննեսի համար. յերկու շարաթ առաջ ընտրել էին նոր նախագահ, վորը թեպետ տեղացի յեր, բայց յերկար ժամանակ յեղել եր դուրսը՝ յեղել եր բալշեվիկի կռիվներում. նրանից ոտարի հոտ եր գալիս և դրա պատճառով էլ նա Հաննեսի արտին մոտ եր: Բայց ելի Հաննեսը տատանվում եր, դանդաղում՝ թե չե.—վա՛յ թե նա յել ուրիշների նման կխաբեր կարպատրություն անի:

Վերջապես, յերբ արդեն արտը հասել եր, և էլ ուրիշ յելք չեր մնում, Հաննեսը սրտապնդեց ու գնաց նախագահի մոտ:

Սպասման եր. նախագահը մորակը ձեռքին՝ պատրաստվում եր գնալու շրջանի կենտրոնը, յերբ մոտեցավ Հաննեսը:

— Հը, ի՞նչ կասես, Հաննես:

— Սաղություն. խնդրում եմ, ինձ ողնություն անես...կարելի ա քեզ հայտնի ա, թալա կառավարությենը ինձ վրա նշանակել ա Սիմոնի արտը. հիմի ես Սիմոնը չի թողնում, վոր ոգտվեմ, արանից առաջ յերկու անգամ կռիվ ա դցել, հիմի յել՝ ես ա հընձի ժամանակն ա, ելի կռիվ ա ընկնելու. խնդրում եմ ենպես կարգադրությենն անես, վոր ես Սիմոնը ել մոտ չգա:

Նախագահը ժպտաց, մի աչքը կուչ ածելով.

— ... Ես վո՞ր որն ա, վոր վախում ես. գնա հանգիստ հնձի, վոչով կարալ չի բան ասի:

— Ի՞նչ անեմ, մենակ մարդ եմ, նրանք յերկու հոգով են գալիս.ասենք՝ թե յեկան խլեցին, ի՞նչ ասի անեմ:

— Ձես քեզ ասում եմ՝ գալ չի. հիմի նա մի թաքուն տեղի ա մտան գալիս, վոր մեղնից ծածկվի:

— Չե՛, չե՛ Յերվանդ ջան, նա ենպես կատղած մարդ ա, հենց դուռ գալիս ա՝ փետը ճեռին, ել որենք—բան չի հարցնում:

— Ա՛յ տղա դու՝ վոնց վոր աենում եմ՝ հանաք չես անում. քա չի՞ս ամաչում, եսորվան որը վախենո՞ւմ ես Սիմոնից:

— Յերվանդ, դու վոնց վոր տեսնում եմ, Սիմոնին լավ չես ճանաչում. նա ես թագա բաները չի ընդունում. նա մենակ մի բան ա իմանում, վոր ետ արտը իրանն ա, նրանից դենը՝ ով ուզում գա՝ խոսի, նրա համար մեկ ա... խնդրում եմ՝ ենպես սաստես, վոր ել կռիվ չդցի:

Նախապահը ժպտալով նայում եր Հանեսին:

— Հենց ես խնդրում, կասես խելճ, անողնական ըլես. ենդո՞ր են անունդ դրել աչքը վախեցած Հանես. ամոթ ա, ել մի խոսիլ, դնա հնձիր, թե Սիմոնը համարձակվի գա կռվելու՝ հենց, ծղրտա վրեն, վոր հետ փախչի: Աչքերդ բաց արա՝ հիմի աղքատների իշխանությունն ա. նա՛, ասի քեզանից վախի և վոչ թե դու, իմացա՞ր...

— Չե՛, չե՛, յես հաստատ գիտեմ՝ նա եղ բաներից քաշվողը չի. խնդրում եմ, մի բան արա, եղուց հնձելու յեմ...

Նախապահի դեմքը լրջացավ. նա աչքը ավելի կուչ ածեց. իարծես մտածում եր, թե ի՞նչ ասի անի: Հանկարծ նա նկատեց դիմացի պատին կախած գլխարկը ու նորից ժպտաց:

— Դե՛,— յես գնում եմ չրջանը. ելի ասըմ եմ, գուշտ կաց մի մտքիդ ել չեն կարող գիտչիլ. իսկ յեթե վախում ես, ահա տալիս եմ ես գլխարկը (նա վերցրեց պատից իր գլխարկը). կտանես արտի ծերին մի փետի վրա կը կախես. թե վոր կդա Սիմոնը, ասա՝ նախապահի գլխարկն ե, կարդադրել ե, վոր արտին մոտ չդա, թե չե՝ մեծ պատիժ կտա... իմացա՞ր... ես գլխարկը իմ ընկերոջ հիշատակն ե. բալշեվիկի կռվում սպանվեց. մեռնելուց առաջ ինձ տվավ: Տեսնում ե՞ս ես կարմիր աստղը վրեն քաշած: Դե գնա՝ խղճի նման կպաշտպանես...

Հանեսը վերցրեց գլխարկը.—սեվ, կոշտ մահուդից եր, վրան կարմիր աստղ: Նայեց, հետո, աչքերը բարձրացնելով՝ դի—

ատամ եր նախատահի դեմքը, կարծես կտոկածում եր նրա ասածները վրա.

— Ասըմ ես տանե՞մ,—հարցրեց:

— Վոնց վոր քեզ ասի, ենպես արա. տղա՛մարդ կաց. դե՛, մնաս բարով, յես գնում եմ:

Հաննեսը ծոցը դրեց դլխարկը ու գնաց տուն: Գնում եր ու մտածում.

— Ա՛յ տղա, վո՞նց թե ես գտակը... ես հանա՞ք ա անում... բա են կատաղած մարդուն ես վախեխն ի՞նչ պտի անի...ի՞նչ առեմ... հանդստացնում եր ինքն իրեն Հաննեսը. կարելի ա թե ես վախեխի մեջ մի զորություն կա, վոր մարդը տվեց...դե նախատահ ա, հո հասարակ մարդ չի՞...

***

Առավոտը ծեգին Հաննեսը վեր կացավ, մի յերկու բուռը ջուր ավեց յերեսովը, մաշված աղլուխով սրբեց, հետո պատի մեխից վերցրեց դլխարկը ու ծոցը դրեց: Կինը շորերը հադնելիս նկատեց այդ:

— Դու յել յերեխա յե՞ս. շատ ել նախատահը քեզ յերեխի տեղ ե դնում, բա քու խելքը ի՞նչ ե ատում. բա են մարդ ուտող Սեխոնը եղ գլխի գդակից կը վախի՞, հանաք ա անո՞ւմ...:

— Դե մարդը նախատահ ա, վոր խոսք ե տվել՝ հու իր խոսքը պետեն չի գցել. ես գդակն իրան նշանն ե, կարելի ա իմանում ա, վոր զորություն ունի, թե չե՝ ի՞նչվ պետք ե ինձ տար:

— Ցես ինչ գլուխ, ա՛ մարդ, շարը շատ ա. սիրտս ատում ա՝ թող եղ արտը, կարելի ա մի բան կճարենք, կապրենք:

Հաննեսը վոչինչ չպատասխանեց, մի չոր հաց վաթաթեց աղլուխի մեջ, վերցրեց մանգաղն ու յեղանը, ճամբա ընկավ դեպի արտը:

Գնում եր վարանում քայլերով, կարծես մեկը հետ եր քաշում. ու քանի գնում եր՝ ավելի յեր սիրտը պղտորվում. ինչ ասես՝ չեր անցնում նրա մտքով:

— Հիմի վոր դա ինձ տա սպանի, իմ տեղն ո՞վ ա. յերեխեքս վորբ կմնան, դունե դուռը կըննկնեն. ձեռից եղ մի թվանքից խանչալից չկա...

«Հիմի յես հնձելու յեմ գնո՞ւմ, թե կռվի. ես ինչ որ ա... ավելի լավ չի՞ մյանգամից տամ սպանեմ են չանը. ինչ ուզում՝ են թող անեն. մի որ ել մեռնելու չե՞նք. եհ, յերեխանցս ել մի ճար կլի...»:

Հանկարծ հիշեց նախապահի խոսքերը—«տղամարդ կաց. գլխարկի պատիվը պահիր»— ու սիրտ առավ:

— Ինչի՞ պիտի յես նրանից վախենամ. նա ել ինձ նման մի մարդ չի՞. նա վոր եղպես քարճր ճղճղում ա, եղ ել նրանից ա, վոչ յերես ա առել առաջվանից. հիմի նրա ժամանակն անցել ա. հիմի յես պետք ե բղավեմ: Թե ինձ մի վնաս տա՝ ինքն ել պատասխան պիտի տա... խելքի յեկ, Հաննես, տղամարդությունն արա, ի՞նչից ես վախում:

Այսպես դնում էր Հաննեսը, մեկ խեղճանում, մեկ սիրտ առնում՝ հիշելով նախապահի պատճները: Վերջապես հասավ արտին:

Ջով առավոտ եր. արտերից հաչանի դուրեկան հոտ եր գալիս: Կանաչով յեղերված արտն որորվում եր քամուց: Մորհոդավոր լռություն եր տիրում. կարծես ցողունի մեջ մարդիկ եյին քաղնվել, տապ արել:

Հաննեսը մի քանի քայլ առաջ անցավ արտի յեղերքով, յեղանը հրեց դեռնին ու վրան կախեց գլխարկը, կարմիր աստղը գարձնելով ճանապարհի կողմը:

Սկսեց հնձել: Ծանր եր չարժվում ձեռքը. կարծես մի բան ճանգաղի առաջն եր ընկնում:

Սրեվի առաջին չողքերը խփում են արտին ու հանկարծ աչքերը ծակող լույս սիրտում... Վախկի յեր, ամեն ինչ ել վոսկի յեր այդ լույսի մեջ:

Հեռվից լսվում են հնձվորների ձայները:

Հաննեսը վեր ե կենում, մեջքը քիչ հանգստացնելու համար ու մտածում ե.

— «Յերեսում ա՝ են անիծած Սիմոնը ձեռք ա քաշել, ել չի գալ... յեկող եր՝ առաջուց կզար...»:

Բայց հենց ուզում եր կռանա, չարունակի հունձը, մեկ ել հանկարծ մի ճղավոց լսեց, ասես մի բան տրաքվեց նրա ականջի մոտ:

— Ա՛խ, հե՛յ, ա՛յ շուն, եղ ո՞ւմ արտն ես հնձում, դո՛ւրս կորի, թե չե՝ վերջդ յեկել ա...

Հանեսը նորից ցնցվեց այդ դաժան ձայնից. նրան թվաց, թե լինքը պապանձվեց, մի խոսք անգամ չի կարող ասել: Բայց հանկարծ՝ վորքան ուժ ուներ՝ հավաքեց ու մի անորոշ ձայն հանեց, մի ճղավոց, ու ղրանից սիրտ առավ:

— Դուրս կորի, ասում եմ, թե չե՝ գալիս եմ ջարդեմ:

— Ի՞նչ ես զահլա տանում,—հանկարծ ծղրտաց Հանեսը, ավելի բարձր, քան լինքը սպասում եր,—տեսնում ե՞ս են դղակը, են նախագահի դղակն ա. թե կարաս՝ նրան պատասխան տուր... որենքով եմ յեկե՞լ, թե չե...

Մի րոպե Սիմոնը վարանեց՝ աչքը դարձնելով դեպի դլխարկը. չլինի՞ թե նախագահն ե հրամայել: Բայց մեկ էլ վոր նայեց Հանեսին, տեսավ նրա դղդղված չորերը, խճճված մորուքն ու խոր ընկած աչքերը, տեսավ նրա խեղճ նոքարի դեմքը ու եգ խեղճի ձեռքին մանգաղը, վորով նա իր արտը հնձում եր՝ էլ չհամբերեց,—«ո՞վ, ես ճիճո՞ն՝ իմ նոքարը իմ արտը խլի՞...»:

Ու արագ վազեց դեպի դլխարկը:

Նկատելով նրա չարժումը դեպի դլխարկը՝ Հանեսը մի կատաղի ուժով թռավ, ու դեռ Սիմոնը չեր հասել դլխարկին, հանկարծակի յետևից մի ուժգին հարված տվեց իր մանգաղով, Սիմոնի վղին, մի հարված, վոր յերբեք կյանքում չեր տվել Հանեսը:

Սիմոնը ընկավ դետին, լինչ վոր ձայն հանեց, մի քանի չարժումներ արավ ու մնաց անշարժ: Արյունը յերևաց վղին, հոսեց ներքեվ ու ներկեց դետինը:

«Սպանեցի»,—անցավ Հանեսի մտքով. բայց այդ միտքը էլ նրան չեր զարմացնում: Այդ րոպեին նա դիտեր միայն մի բան՝ վոր յեթե Սիմոնը վեր կենա, կենդանի մնացած լինի՝ նա նորից կխփի ու կսպանի:

Բայց Սիմոնը չեր վեր կենում, չեր չարժվում նույնիսկ:

Հանկարծ հավաքվեցին դյուղացիները, կարծես մեկը նրանց կանչել եր. յեկան, հավաքվեցին Սիմոնի չուրջը, չարժեցին նրան, դլուխը տմբտմբացրին:

— Հանես, ա՛յ, քու տունը չքանդվի, ես ի՞նչ ես արել. բանը բանից անց ա կացել...

— Հա, իմացե՛ք ա՛յ խալխը.—յես եմ սպանել,—ասաց Հանեսը մի չտեսնված վճռական ձայնով.—հա՛, սպանել եմ, լա՛վ իմացեք...

Ու կանգնել եր մի չտեսնված տրամադրությամբ. հենց իմա-նաս տարինների ծանր բեռը՝ վերցրել եյին վրայից.—տարինքի տանջանքի, հայհոյանքի ու. ծաղրի վրեժն եր մի անգամից լու-ծել:

Կանգնել եր Հանեան անշարժ, ինչպես մի գինվոր՝ պատ-րաստ ամեն վտանգի. իսկ նրա դիմաց յեղանի վրայից նա-յում եր նախապահի դվնարկը իր կարմիր ատաղով, նայում եր ու թեթև քամուց տարուբերվում...

---

# ՓՈՒՇ ԱԲԵԼԸ

## I

*Ցեթե առաջներում հարցնեյին, թե մեր գյուղում ի՞նչ նշանավոր մարդ կա, կասեյի—Փուշ Աբելը:*

*Ցավ ճիշտ վոր—Փուշ Աբելի անունով լիքն եր մեր գյուղը, իսկ նրա այղին, նրա տունը՝ մի-մի հեքյաթ եյին մեզ համար:*

*Փուշ Աբելի դեմքը մի անգամ տեսնողը չեր կարող մոռանալ: Նույնիսկ հանդիստ ժամանակ նա այնպիսի արտահայտություն ուներ, կարծես հերսոտած, մեկի հետ կռվում եր: Աչքերն արյունակալած, բերանը կիսաբաց, յերեսի կնճիռները դեպի ականջները յետ քաշած, նա հիշեցնում եր հարձակման պատրաստվող, մոմռացող դամփռի:*

*Աբելի անունը տվողն անպատճառ սխտի հիշեր և նրա տունն ու այղին. ինչպես Թուրն առանց պատյանի՝ դժվար եր յերևակայել այս յերրորդությունն իրարից բաժան: Աբելի տունը գյուղի վերևն եր, առանձնացած ու չրջապատված բարձր ցանկապատով: Ի՞նչ կար այդ ցանկապատի ներսը—մի սովորական գյուղական տուն, իր մառանով ու կողքի դոմով: Բայց միշտ թվում եր, թե այնտեղ մի՛ ուրիշ, չտեսնված տուն է, նրա բնակիչներն էլ խորհրդավոր մարդիկ են ու զբաղվում են ինչ վոր անհասկանալի գործերով:*

*Մի առանձին վախով եյին անցնում գյուղացիք այդ տան մոտով—միշտ ահ կար, վոր Աբելն ահա, կատաղի դամփռը կարող եր բաց թողած լինել, իսկ նրա ձեռքից ազատվելու հնար չկար:*

*Տունը նայում եր դեպի լայն ճորը, վորի յերկու ափին փռված եյին այղիները: Մի քանի քայլ հեռանալով իր տնից, Աբելը կարող եր պարզ տեսնել վերևից իր այղին, վորն ամենախոշորն եր գյուղում և զբաղեցնում եր ամենալավ տեղը:*

*Աբելի այղին էլ նրա տան նման առանձնացած եր մյուսնե-*

բից: Վոր կողմից էլ մոտենայիք նրան, ձեր առաջ վեցվեր բարձր ու խիտ փշե ցանկապատը, վորի սուր փշերը սպառնում էին մոտեցողին: Գյուղում այդպիսի բարձր ցանկապատ վոչ վոք չուներ:

Ամբողջ տարին Աբելը իր ցանկապատի հոգսին եր, նույն իսկ այն ամիսներին, յերբ մյուս այգեպետերը մոռանում էին ցանկապատների պատրաստելու մասին: Այդ նրա հիմնադրությունն եր— միշտ վշտապատում եր, վշտապատում ու չեր հագենում: Գյուղացիք յերբեմն սրախոսում էին, թե «Փուշ Աբելի ճեռքից վոր դա— յերկինքն կողմից էլ կփշապատի իր այգին...»

Գյուղում պատմում էին, վոր հենց այդ պատճառով էլ նրա անունը դրել էին Փուշ Աբել:

Այգին մի փոքր դուռն ուներ, վորի բաց տեղները նույնքան հազվադյուտ եր, ինչպես բնության մի պրոտեստ կերևույթ: Միայն այդ բացերն, յերբ խաղողով լիքը կողովները դուրս էին բերում սայլի վրա բարձելու համար, դուրս հաջողվեր րոպեապես, դաղտագողի ներս նայել. բայց նայողը սիրտ խնդուն հեռանար դռնից, վորովհետև այդ հետաքրքրությունը շատ թանգ վարող եր նստել:

Այգու նեղտը մի տարօրինակ վայրենի խնամք եր նկատվում: Սյունն մի վազը, ամեն մի ծառի վրա նկատվում եր Աբելի չորշումը, ամեն ինչ,— կարելի յե ասել՝ նման եր Աբելին: Սյնտեղ վայրի նեղ, ճնշող ծառուղիներ, մութ ու խոնավ անկյուններ, բազմաճյուղ ու խիտ անկված վազներ ու ծառեր, վորոնք իրենց տակերներով խանգարում էին իրար: Աբելն ապահովությունից շատ ճղներ և թողնում ու վազները խտացնում, կարծելով թե դրանով ավելի արդյունք կտանա:

Նրա այգում խաղողն ամենից ուշ եր հասնում և մնում եր կանաչ ու թթու: Սյնտեղ շատ կային ճմեռվա պինդ, տատմները կոտրող տանձեր, դառնահամ, մատնոտվող խնձորներ ու սերկևիլներ:

Համարյա ամբողջ տարին Աբելը չեր բաժանվում իր այգուց: Մինչդեռ այգեքաղից հետո յերեխաներն ազատ շրջում էին բոլոր այգիներում, խաղողի մնացորդները վնասելով, Աբելի այգին պարծյալ մնում եր անմատչելի նրանց համար: Աբելը չարունա-

հում եր հանել նույն ցեռանդով, կարծես խաղողը նոր եր հասնում:

Այդպես բաժանվելը Աբելի համար հիվանդությունից վատ եր: Ատում եյին, որ նա այդպես պաշտպանում եր մինչև ցուրտը վտանգներն առնելը: Նույն իսկ ձմեռը, յերբ տաք որ եր լինում, նա չեր համբերում, դնում եր այդուն «ակը տալու», ձերբեմն ուշը չհատնվելով ցնծալի վրա, որտեղ խոհագին ճամփեր եր կռահում նրա վոտքերի վրա:

Տաք ամիսներին նա գալիս եր այդին ամենից վաղ և վերադառնում ամենից ուշ, մթնում: Շատերը չհասկանալով նրանց վերադարձնալիս, կարծում եյին, թե նա դիշեր-ցերեկ այդումն է անց կացնում, բայց այս յենթադրությունը սխալ եր.— նա միայն խաղողի հատած ժամանակ եր դիշերում այդում:

Գյուղում ատում եյին ծիծաղելով, թե Փուչ Աբելը չի մեռնելու, քանի վոր չի կարող բաժանվել այդուց—կամ հետը պիտի տանի, կամ ինքը մնա նրա հետ...

***

Ճնշող լռություն եր տիրում Աբելի այդու շուրջը: Բայց բավական եր, վոր ճամփով անցնողը մի վոքր կանգ առներ նրա ցանկապատի մոտ, իսկույն նրա ականջին կպայթեր մի դարշանք ձայն.

— Եղ ո՞վ ես. ինչ ես չինում հասել:

— Ֆեղ ինչ, յես ճամփովն եմ գնում:

— Ջահրումար գնաս. թե միտքդ ծուռ չի ինչի յես կպնել:

— Ճամբեն էլ հո քոնը չի. դու քո բաղին մտիկ արա...

— Հա՛յ չո՛ւն... շա՛ն...— վրա յեր տալիս Փուչ Աբելն իր ամենալսնելի հայհոյանքները: Ցերեկն նրան ձայնակցում եր իր վիթխարի դամփռը, վորի հաչոցը թնդանոթի ձայնի նման ցնցում եր լողլին:

Ահաբեկված անցորդը շտապում եր հեռանալ, հետզհետե արագացնելով քայլերն ու ինքն իրեն նախատելով, թե ինչու խոսքի բռնվեց եղ «բայղուշ» մարդու հետ:

Աբելի մասին այն կարծիքը կար, թե նա սատանի նման յերևում և այնտեղ, վորտեղ իսկի չես սպասում: Ցերեկն խաթրելով լռությունից, կարծելով թե Աբելը այդում չի, յերեխաները դրսից քար եյին նետում նրա ծիրանու վամ ընկու-

պենու վրա: Բայց հանկարծ, կարծես պետնի տակից լույս եր ընկնում Փուշ Սբելը, դիշատիչ գազանի արագությամբ հարձակվում յերեխաների վրա ու արյունաշաղախ անելով, թողնում հեռանում:

Սվելն մեծ ահ եր ազդում, յերբ նա քայ եր թողնում այգում կատած գամփռին, վորից տղաները ավելի եյին վախում, քան պատկից ու արջից:

Սակայն տղաները յերբեմն վրեժը հանում եյին Սբելից. նրանք յերկու խմբի եյին բաժանվում ու, առաջուց ապահովելով լրենց վախտատի տեղը, բարձր ձայնով վանչում եյին երգ.

— Եհե՛յ... առաջ...

— Ո՞վ, ո՞վ...

— Փուշ Սբելին... Փուշ Սբելին...

Հա՛յ չուն... չան... խնդուն արձագանքում եր Սբելի Ծղոցը, բայց, ավա՛ղ, նա վոչինչ չեր կարող անել— տղաները խնդուն թաղնվում եյին մոտակա այգում:

Այս հանգամանքը սովորական եր. շրջակա այգիներում բանող գյուղացիները հաճախ լրար ձայն եյին տալիս նույն ձևով: Սբելի ավերող անունը պիտչում եր նրա ամենախոցելի կետին: Յեթե հնար լիներ, նա հազար գամփռ քայ կթողներ այդ հանդուգն մարդկանց դզելու, խեղդելու համար:

## II

Զմեռվա ամիսներին, յերբ Փուշ Սբելն եր այգին չեր գնում, նրա տունը գատնում եր մի կատարյալ ամրոց: Յեթե նրա բացակայության ժամանակ այս կամ այն բարեկամի կինը պատիս եր նրա հնոջ մոտ, այժմ այդ ել եր կտրվում: Այստեղ ել, ինչպես և այգում, Սբելը կատակածում եր իր տան մոտ անցնող ամեն մարդու, ու չան հաչոցի հետ լինքն ել եր ճղճղում ու հայհոյում:

Ուրիշ մարդկանց գուռ եր գալիս տախակի, ատյակի ձայնը, իսկ Սբելի ամենաանբուծ ձայնը եր չան հաչոցն եր: Գանի շատ եր հաչում շունը, նա ավելի յեր խրախուսում նրան ու կերակրում:

Այդ ձմեռվա որերին գյուղի վերի կողմից շարունակ լսվում

եր Փուշ Աբելի դիմ ձայնը: Որսկան քա՛նի անգամ նա դուրս եր գալիս, վանդնում ձորափին ու դիտում վերևից իր այդին: Ցերեկ պատահմամբ մի ճամբորդ իր եշուվ կամ չեղնոցով կանգ եր առնում այդու ցանկապատի մոտ, Փուշ Աբելն արդեն «լուծ ասում եր»:

— Եհե՛յ,— դոռում եր նա, դղրդացնում ձորը, ու չեթե ուշք չէին դարձնում, մահակի առած լծկում եր, ծեծում թե ավրոջը, թե անասուններին:

Իսկ տանը նա կռվում եր ու բղավում ամենաչնչին առիթով,— Ինչո՞ւ կինը հարևանին ու տվել մաշառը, ինչո՞ւ չեն հայ տվել աղբատին, ինչո՞ւ շանը լսել չեն նայել, և հազար ու մի այսպիսի պատճառներով:

Ու ամեն քանի պատահմանատուն վերջ ի վերջո եր կինն եր, վորի անսպառ համբերությունը մեյայն կարող եր դիմանալ Աբելի անվերջ կռիվներին:

Նա մի հյուծված, վոսկրացած այտերով կին եր, ամառ-ձմեռ դլուխը վարխաչած հատատ շալով, աչքերը միշտ կարմրած ու լացակումած, առնս թանձր ծուխի մեջ եր մաշ գալիս:

Նա չարունակ ահարեկված եր իր ամուսնուց ու շշկլված ծառայի նման չդիտեր, ի՛նչ անի, վոր գոհացնի նրան: Միշտ ցրված, ինքն իրեն խոսում եր ձայնով, այնպես վոր չեթե մեկը նրան ծածկուկ հետևեր, կարող եր այդ մենախոսությունից իմանալ, թե ինչ և կատարվում Աբելի տանը:

Ցերը Փուշ Աբելը վերադառնում եր այգուց, նա դեռ տուն չհասած գոռում եր փողոցից·

— Ե՛յ, շներ, դուրս չեկեք:

Կինը, յերբեմն հարևանն ու աղջիկը դուրս եյին ընկնում ջեղապատառ: Մանավանդ կինը այնքան եր ինքն իրեն կորցնում, վոր չվարած կանգնում եր առաջը:

— Ի՞նչ ես աղոթած եչի նման կաշնել,— ասում եր Աբելը, տա՛ր և ես խուրջինը:

Խուրջինը տանում եր, եչը կապում, առաջը խոտ գցում, հետևում, վոր մարդու ամենաչնչին հրամանը կատարվի, բայց Աբելի վիճվիճոցը չեր դադարում:

— Ես խոտը վո՞նց եմ ածել... ա՛յ սատկեք դուք... տամ ազանե՛մ...

Այնուհետև կռվի հերթը գալիս էր իր տղաներին: Նրանք հոգնած, ջարդված, վտանգը լիանալուց հետո թիկնում էին վհատի վրա, մոլեգնին: Սրբից խնդրում էր նրանց, համաձայնել նրանց թիկնելն անթույլատրելի ծուլություն:

— Մ՛յ պչատնիք, են տրտը վարեցի՞ք,— հարցնում էր նահանգ առաջին խոսքից:

— Հա, կեսը պրծանք:

— Հայ թամբալ եք ե՛... Բա են Մադոյանց կոզմից լ՞ինչ արիք:

— Ենպես թողինք,— պատասխանում է մեծ տղան, որն իր ավտաքինով հար նմանակին էր ու ճղճղան:

— Բա կարացիք վոչ նրանց տրտից մի քիչ մնչ պցե՞ք:

— Ուզում ես մնչ տան ապանե՞ն... նրանք չատվոր են ե՛,— ձայնը բարձրացնելով պատասխանում է մեծ տղան:

— Կռվեք ե՛... ձեր հերն էլ կգան, թե տղերք ունեմ:

— Ի՞նչ ես չատ խոսում, դնա դու լնդդ տրա՝ թե ուզում ես.

Ու կերկուսն էլ սկսում էին աղմկել, հին ու նոր հիշել, լրտար հայհոյել: Դրանից այնպես էր թվում, թե հայրը ու տղա պետք է լրտար ապանեն:

Մյուս որը հայրը հետները գնում էր, հարևանի տրտից բավական տնկ վարում, երեն տրտին մխացնում: Սյդ պատճառով սկսում էր մի տրյունալի կռիվ ու կերկու կողմն էլ ջարդված դրսիններով վերադառնում էին տուն:

Գյուղում արդեն բոլորը համոզված էին, որ Փուշ Սրբեի հետ հարեվանություն անելն անկարելի չի, վորովհետև սահմանակիցներն ու կիսիմները անտպատ էին: Առաջներում նա կռվում ու ծեծում էր այդու կերկու հարևաններին «գրսիը կերել էր»— մեկի ուսը ջարդել, մյուսի աչքը կուրացրել: Ամեն տարի նա նորոգում էր իր ցանկապատը և հարևանի հողից «գավթում»: Վերջը կերկու հարևաններն էլ, ահաբեկված լինելով, ստիպված էին չնչին դեպքով ծախել իրենց այգիները Սրբեի վրա:

Սրբեի համատ ստլորական բան էր և մշակների հետ կռվելը: Առանց վարձը կտրելու և ծեծելու նա կերբեք մշակ չէր արձակել. մշակները փորձում էին պահպանվել, բայց թե գյուղում, թե նրանցից դուրս բոլոր իշխանությունները ձեռք էին քաշել Փուշ Սրբեից և աշխատում էին ազատվել նրա «գործից»:

Տանջվելիք միշտ ահ ու սարսափի մեջ էին նրա անվերջ կռիվներից: Հենց վար միջտեղից փոքրի ճայն էր գալիս, Աբելի վիճը խոսուն թռլատում ընկնում էր գետին ու ծնկներին վեր հառում:

— Վա՛յ քոռանամ յես, երեխանցս, մարդիս սպանեցին... հասե՛ք, ոգնեցե՛ք...

Առում էր ու նվաղում: Ցերեսովը չուր էլին տալիս ու հաղիվ ուշքի բերում:

Կռվում էր Աբելը ամեն տեղ—այգում, արտում, տանը: Նրա համար կռիվը նույնքան սովորական էր, ինչպես հացն ու չուրը:

## III

Բայշևիկների գալուց Աբելը սխալվեց: Նա կարծում էր, թե գալիս են առաջվա ռուսները և չէր հավատում այն ամենին, ինչ վոր նրանց մասին պատմում էլին: Առհասարակ նա անհավատ էր հենց հեղափոխության սկզբից: Գուրսը պատռվող բերբերը նրա մի սկանջից մտնում, մյուսից դուրս էլին գալիս:

Ցերը նրան ասացին, թե թագավորին վեր են գցել, հարցրեց:

— Բա նրա տեղն ո՞վ ա, սխտերն ա՞, թե՞ տղեն:

—Ոչով, հենց ընենց, առանց թագավորի յեն կառավարվելու:

— Ի՞նչ ես սարսող խոսում,— հարճակվեց Աբելը,— խելի մի բաղն առանց տիրոջ չի կառավարվում, մի թագավորություն կ'կառավարվի՞...

Մի բան նրա համար պարզ էր,— պատերազմից սկսած՝ Թամանուկը խառնվեց, հացը պակասեց, մշակը յերես առավ, երեն ինչնամիներն ու վնասողները չատացան:

Աբելի գործն այդ տարիներին բավական դժվարացավ,— առաջվա նման ել չէր կարողանում մշակի վարձը կտրել և մեծ ճիգեր թափելով էր պահպանում իր բարձր ցանկապատը, վորը կարծես առաջվա պորությունը կորցրել էր և ել չէր վախեցնում մարդկանց:

Ցերը յեկան բայշևիկները, և Աբելը համոզվեց, վոր նրանք իր ուզած մարդիկը չեն, մի մռայլ ամպ իջավ նրա վրա: Նա տասլ արավ, թաղնվեց իր այգում ու մտածում էր,

թե գուցե ես «պատուհասն» էլ անցնի, հարկավոր է մխայն աչքի ջերևալ, որ իր վրա ուշք չդարձնեն, իր ունեցած հարբասությունը չ'իմանան:

Նա իր ամանջները վաճել էր «ղրսի» խոսակցություններից, որովհետև նրանք թշնամուց եկին գալիս, իրեն հակառակ էին:

Ու վաճված իր ճյղում՝ տեսնելով, ինչպես բույսերը, վաղուց սահմանված կարգով գարնանը կանաչում, ծաղկում էին ու աշնանը թառամում, թվում էր նրան, թե աշխարհումն էլ վոչինչ չի փոխվել ու հին էր, հաստատված կարգով վազնա...

Շատ անգամ նա նույնիսկ սիրտ էր առնում, մոտենում, թե ո՞վ պիտի խլի իր ճյղին, չէ՞ որ պյուղացիները, իսկ նրանցից նա յերբեք չի վախեցել, միշտ լինքն է նրանց ճնշել, լինքն է ուրիշից բաղերը խլել, էլ ո՞վ կ'համարձակվի մոտ գնալ իրեն...

Այդ ժամերին նա մոռանում էր ղրսի ալեկոծ, խառնիխուռն գործերը, պղտամ էր իրեն իր թաղավորության մեջ—ելի են վաղներն էին, են ծառերը, ելի են Աբելն էր, հրամայող ու ակրության անող Աբելը...

***

Աշնան մեղմ, ամպամած որ էր: Այդ ինեներում դեղնած վազնեերն ու ծառերն առել տալ արած սպասում էին, թե յե՞րբ կփչի պորեղ քամին, տերևաթափ կանի իրենց:

Աբելն այդու առաջ կանդնած էին չորս հոգի — պյուղխորհրդի քարտուղարը, յերկու վատարածու և մի միլիցիոներ:

Դուռն ուժգին թմկում էին ու ճայն տալիս Աբելին:

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում,— լսվեց հանկարծ Աբելի ծղրտոցը:

— Միլից ա յեկել, քաց արա:

Կատարածուն պիտմամբ սկսեց «միլիցից», որովհետև Աբելը կարող էր հակառակվել, չբացել դուռը: Այդ խոսքը նրան կակղացրեց— դուռը ճռռալով բացվեց ու յեկվորները կռանալով ու կողքերը քսելով ներս մտան:

Աբելը կասկածոտ հայացքով պիտում էր նրանց վոտից գլուխ, աշխատելով իմանալ նրանց գալու նպատակը:

Քարտուղարը,— մի ցածրահասակ, խոնարհ դեմքով յերիտասարդ,— Աբելին առանձնելուն պես չխոթվեց, կարծես սխալ հրացանաձգություն սկսվեր: Նա խնդուն քացեց իր հասարակ կտորից շինած թղթապանակը և ոգնության կանչեց թղթերին:

— Աբել, մենք յերկու անգամ քեզ կանչել ենք, բայց դու չես ներկայացել. հիմա յեկել ենք հայտնելու դյուղխորհրդի վորոշումը. ահա կարդում եմ...

Նոր եր սկսել կարդալ քարտուղարը, յերբ Աբելն զգալով մի չարագուշակ բան, խնդուն կտրեց թելը.

— Ինչի՞ համեն եք յեկել:

— Դյուղխորհուրդը վորոշել և քո այգին հանձնել գպրոցին, իսկ քեզ նոր համայով տալ...

— Ի՞նչ,— ծղրտաց Աբելը, վառոդի նման բռնկվելով: Նա ավելի շուտ կհավատար, վոր ինքն այդ որը սխալ մեռներ, քան թե այս վորոշմանը:

— Ո՞ւմ բանն ես տալի... Քո հոր բանն ա՞, թե տեղը մնացած ա...— գոռում եր նա:

— Ուրեմն դու չես ուզում կատարել դյուղխորհրդի վորոշումը,— ասաց քարտուղարը, վարակվելով Աբելի հուզումից:

— Ի՞նչ ես դվխես պատարագ անում, յես սաղ տեղովս բաղ չեմ տալ, իմանում ե՞ս թե չե...

— Դե սրան տարեք դյուղխորհրդի գրասենյակը,— կարգադրեց քարտուղարը:

Անմոռանալի տեսարան եր: Աբելին բռնած դուրս բերին: Նա այնպես եր ճղճղում, կարծես չիվացած յերկաթով դաղում եյին: Քաշքշում եր, աքացում ու փրփրած բերանով հայհոյում: Յերեք կատարածմանեըն ու մլիցիոներնեըն այսպես ծանր գործ չեյին ունեցել:

Յերբ նրան նեղս տարան դյուղխորհրդի գրասենյակը, կարծես միանգամից հարյուր մարդու ձայն նեղս խուժեց:

— Հայտնեցի՞ք վորոշումը,— հարցրեց նախագահը, աչքխատելով լուրջ տեսք տալ իրեն:

— Այո, հայտնեցինք, բայց չի ուզում կատարել,— ասաց քարտուղարը:

— Գործը հանձնեցե՛ք մլիցիային, սրա հետ մարդավարի

Խոսելն անկարելի չե,— կարգադրեց նախագահն ու շարունակեց իր ընդհատած խոսակցությունը:

***

Մի շաբաթ ուղղիչ տանը նստելուց հետո Աբելը դուրս գալուն սրես՝ վազեց դեպի այղին: Ձերը նա տեսավ դուրը կխաբեց, նոր մեկին դգաց, որ խնկասես մի դժբախտություն է պատահել իր այղուն: Ներսից լսվում էին աշխույժ ձայներ: Այնտեղ աշխատում էին աշակերտները ղեկավարությամբ:

Կատաղությունից լինքն էրեն կորցրած— Աբելը նետս մտավ ու մի ձող հանելով գետնից, վազեց հայհոյելով դեպի աշակերտները:

Վաղուց ծանոթ այդ գաժան ձայնից սարսափած, աշակերտները մի ակնթարթում ցրվեցին վաղնելի մեջ, ուրտեղից հաստածված ճռատերի նման: Ծառուղիում մնաց միայն ուսուցիչը, որն ոտար լինելով, չդիտեր, թե ինչ է կատարվում:

Հանկարծ ձողի ծանր հարվածն իջավ նրա ուսին: Սաստիկ ցավից նա ճչաց:

— Սրիկա. ի՞նչպես ես համարձակվում...

Ու յերկու ձեռով պինդ բռնեց ձողից: Աբելն սկսեց քաշքշել ձողը և մոտ էր հաղթելուն, յերբ աշակերտները՝ նկատելով ուսուցչի կռիվը, ամեն կողմից գուրս թափվեցին ու շրջապատեցին Աբելին: Վո՛րը վեչից բռնեց, վո՛րը ձեռից, վոսից ու բոլորովին կաշկանդեցին նրան:

Աբելը հրում էր աշակերտներին, աքացում, բայց նրան չէր հաջողվում ազատվել այդ վոջրիկ, բայց բազմաթիվ ձեռքերից:

Ուսուցիչն արդեն ազատվել էր Աբելից ու սաստիկ հուզված գոռգոռում էր.—

— Լե՛րը, սրի՛կա, դու գիտե՞ս, ում հետ գործ ունես... յես քեղ ցույց կտամ...

— Բաց թողեք ե՛, մի տամ ապտնեմ... եղ ո՛ւմ բաղն ես յեկել...

Շուտով գուրս յեկան և մնացած աշակերտները. նրանց մի մասը պիոներների նման ձողերն առած՝ պահակ կանգնեցին:

Հենց վար Աբելը շարժվում էր, նրանք էլ լքեցնում էին ճաղերը և սոխում նրան հանդարտվելու: Կատաղությունից նա հայհոյանքներին էր դուռ տալիս:

— Յերկու հոգով պնացեք իմաց արեք դյուղխորհրդին,— վարդապետից ուսուցիչը:

Աշակերտներից յերկուսն խնդուն վազեցին դեպի դյուղը:

Վերջապես յեկան կատարածուներն ու միլիցիոները և տարան Աբելին նուն աղմուկով ու տաժանակիր չարչարանքով, ինչպես առաջին անգամ: Ավելի հեշտ էր հարյուր մարդ տանել, քան փուչ–Աբելին:

## IV

Աբելը յերկրորդ անգամ նստեց ուղղիչ տանը և դուրս յեկավ այնտեղից չատ ընկճված: Նա այժմ համոզվեց, որ իր ազգին լսել են, և որ ինքն էր ուժով — վո՛չ վայրով, վո՛չ խանչալով ու հրացանով չի կարող վերապարծնել...

Նրա մեջքը կոտրում և այն, որ հույս չուներ նուվնիակ էր տղաների վրա: Ընդհակառակը՝ նրանք խորհուրդ էին տալիս համաձայնվել ամեն ինչի հետ: Մինչև անգամ ամենախիստ կերպով արդելել էին վրեն «պարմաղալ» անել այդու մասին: Ու նա տխրված լռում էր, ու դղում էր իրեն աղմված ու ճնշված, ինչպես այն որը, յերբ ամեն կողմից շրջապատված էր աշակերտներով:

Նրա ձեռքը դործի չէր վպչում: Շարունակ մանր էր գալիս մտամոլոր, չուած աչքերը պետնին հառած, ասես մի վթանգաւոր ալնեղեն էր կորցրել ու վնտռում էր յերկար ու անհույս: Գայլում էր անընդատակ, հետո նստում մի քարի վրա, աչքերն ուղղում մի կետի, հետո վեր կենում, նորից գայլում, ախ ու վիչ անելով:

Յերբեմն լչնում էր ձորը, մոտենում իր այգուն, տեսնում էր իր բարձր ցանկապատն ու պարմանում, որ այդ ցանկապատն այժմ լրեն տիրոջ դեմ է, իրեն ներս չի թողնում...

Ինչ անի, կոտրի՞ դուռը, պատռի՞ չարխարը (ցանկապատը)... չե, նա նզտես բան չի անի... նա ավելի շուտ ժամկէոդոպտի, քան թե իր ցանկապատի վրայով կանցնի:

Ախ էր քաշում ու մեծ սպասվորի նման ընկճված վերադառնում տուն, վոչ վոքի չնկատելով ճանապարհին:

Նրա կինն արդեն թաղուն ատե եր անում մարդու վրա, համարելով նրան խելագարված, ու մի ճար եր փնտռում ազատելու համար: Գրքացն ասել եր, թե խաչվեցն և, պետք և մատաղ անել, բայց այդ բանը դժվար եր իրագործել— Փուշ Աբելի հետ խոսելն անկարելի էր:

Մի որ էլ, նկատելով, որ Աբելը մանե և դալխս տատանվելով աչ ու ճախ, կինը լեղապատառ վազեց տերտերի մոտ:

— Տերտեր ջան, մի տխրություն արա, մարդս ձևից գնում ա...

Ու սկսեց իր ազավորի լացը:

Տեառերն ակզբում չվարվեց, վորովհետև լինքն էլ— կորցրած նախկին «ժողովուրդն» ու վատքը, Աբելից վատթար գրության մեջ եր, բայց իր հին վեշակը հիշելով, խոստացավ ճանապարհի բերել Աբելին: «Ելի ինչքան էլի, մի կրճունք մնացած կլի ինձ համար», մտածում եր նա, հույս տածելով, վոր կարող և ոգտվել Աբելից:

***

Նոր եր տերտերը պատրաստվում Աբելի մոտ գնալու, յերբ լինքն Աբելը ներս մտավ, ձևին մի կապոց բռնած.— բերել եր մի գավաթ գինի, հաց և մի յեփած հավ:

Առանց «որհնյա և տերի» նա լուռ նստեց թախտին:

Տերտերի աչքերը վայրեցին, կապոցը տեսնելով:

— Աբել, խեր ըլի, եդ ինչի՞ եդպես ախուր ես...

Աբելը լուռ եր:

— Ես այհոյինը ասա տանեն պատրաստեն,— ասաց Աբելը խոժոռած դեմքով:

Տերտերն խնդուն կանչեց տիրուհուն ու պատվիրեց սեղան սարքել ու ավելի վոգևորվեց, ուշքի յեկավ, ինչպես չոլից խեղճացած բուլյը՝ անձրևից հետո:

— Աբել, վոնց վոր տեսնում եմ, շատ ես քեզ դարդին տուր տալիս. մի՞թե չես տեսնում՝ ամենքս էլ նեղացած ենք, բայց համբերում ենք, մոքիդ յեռևից մի ընկնիր. յերևի մի որ աստոծ քաղցր աչքով կնայի մեզ վրա ու կարողությունը յետ կտա...

Աբելը լուռ եր: Նա չեր նկատում՝ ինչպես տիրուհին սուփ-

քեն գյուտ եր, ինչպես տերտերն ազահությամբ ուտում եր ու իրեն էլ հյուրասիրում: Նա ուշքի գեկալ այն ժամանակ, երբ տերտերն ուժով նրա ձեռքին դրեց հավի մսի կտորը հացի հետ:

— Տերտեր, մի խորհուրդ ունեմ քեզ հետ,— ասաց Աբելը յերեսը ծռմռելով, կարծես ինչ վոր կծու բան եր ուտում:

Տերտերն արդեն կատարը տաքացած՝ լսում տվորության ախանց մորուքը չոր գել:

— Խորհուրդ մարդո, կամք ասածդ, մի ասա տեսնանք...

***

— Տերտեր, քու խելքդ վո՞նց ա կտրում, ես մեր աշխարհը տեր ունի՞, թե չե:

Տերտերը մի քանի անգամ չոր գեց մորուքը:

— Դե առաջ ասում գեկնքից եր տիրություն անում, թագավորն ել յերկրից. հիմի թագավոր չունենք, յերկիրն անտեր ա մնացել: Ասում ել խոռվել ա մեր գլխին:

— Բա ասում են Լենինն ա մեզ կառավարում ու շատ ել խելոք մարդ ա...

Տերտերը զարմացած նայեց Աբելին, բայց խնդուն հարմարվեց:

— Հա, ասենք թագավորի տեղ Լենինն ա, ուղիղ ա, բայց ի՞նչ... Նրա ասածները չեն կատարում. բա նա ասել ա, թե ժամը թատրոն չինեցի՞ք...

— Ձես ել եղ եմ մտածում. թե նա աշխարհիս գլուխն ա, խելոք մարդ ա, բա կհրամայեր, վոր իմ բազը խլե՞ն... Նա վոչ իմանար, կհրամայեր եղ բանն անողներին Սիբիր ղարկեն:

— Ուղիղ ես ասում, Աբել: Դրանից ա ես մեր անաքանդությունը, վոր Լենինի հրամանները ծուռ են կատարում:

— Ի՞նչ ծածկեմ քեզանից, տերտեր... Ուզում եմ գնամ Լենինի մոտ գանգատ անեմ, հասկացնեմ... բազս ազատեմ եղ տնաքանդներից:

Տերտերը նորից զարմացած նայեց Աբելի վրա. «ես Աբելից չե. վո՞նց թե եսպես բան»... անցավ նրա մտքով:

— Լավ ես ասում,— համաձայնվեց նա,— բայց առաջինը, վոր Լենինը, ասում են, հիվանդ ա, յերկրորդն ել՝ նրա տեղը հեռու ա, ծախս շատ կուզի:

— Ինչ անեմ. մոտը կգնամ, վոտները կընկնեմ, աղաչանք կանեմ... ինչ ունեմ-չունեմ կծախեմ, կգնամ. յես առանցի իմ

բաղմ չեմ ապրի... մնում մի բան եմ ընդրում— վոր մեծ տղես համոզես... մի խոսքով կասես— Թե վոր չեն Թողնի գնամ— Թող մի Թվանք տան ինձ, պրծա տամ ապանեմ: Ես— պես ա բանը...

— Լավ, աչքս վրա, կխոսեմ, կաշխատեմ համոզել,— համաձայնվեց տերտերը, զարմանալով այս տարօրինակ մտադը— րության վրա: Ու շորերը կարդի բերելով, դավազանն առավ, դուրս չեկավ տնից Աբելի հետ:

## V

Զյունը հանդարտ գալիս եր ու վատուկ Նաում, վարծեա մտածության ծածկելով ամեն ինչ: Աբելը նստել եր մոխրատան ճիու վրա, հատա քուրքը հագին, մեծ վատխոը դրխին, վերե— վից ել բաշտուղը կապած: Իր հագած հատա շորերով նա համար— յա յերիտ անգամ ավելացել եր մարմնի ծավալից:

Ձին պանդաղ քայլում եր, խակ Աբելը տարվել եր իր մտած— մունքներով: Նա գնում եր յերկաթուղու կայարանը, այնտեղից ել պիտի գնար Մոսկվա, Լենինի մոտ: Գնում եր վորպես ուխ— տավոր, լցված մեծ ապատեղիքներով:

Ի՛նչ դժվարությամբ գլուխ բերեց այս բանը— տղաները մի շարաթ եր, կռվում եյին, չեյին Թողնում, վոր գնա, բայց չը— կարողացան «կոտրել», համոզել նրան:

Գանի հեռանում եր գյուղից, այնքան ավելի նրա մտքերը Թռչում եյին հետս: Ահա նա մտածում եր, Թե ինչպես կհասնի Մոսկով, կգնա Լենինի մոտ, վատխոը կվերցնի ու խոր գլուխ տալով կդնի վոտների առաջ ու կասի.—

— Պարոն Լենին, ատոծ հատատատ պահի քո կատարյա— լությունը. գոս հրամայել ես, վոր ամենքն հնգեր ասեն. բայց յես վո՞նց կարամ քեզ հընդեր ասեմ. յես քու վոտի Թոզն եմ... («պետք ե մարդու պատիվը պահես, վոր նա յել խոզերքե լոխ քաղցր աչքով»)... Պարոն Լենին, Թեկուզ հրամայիր գլուխս կտրեն, մխայն Թե ես խոզերս կատարիր... Գոս մարդիկ խլել են իմ բաղը... գոս ներանց հրամայել ես, վոր մեր ունեցածին մի բան ել ավելացնեն, բայց ներանք քո հրամանը չեն կատար— լում, երածն ել խլում են... (Կատեղ Փուշ Աբելը վաց կվի, վոր Լենինի սիրտը մղկտա):

— Քու փամիկն ինչ ա, դու վո՞ր գեղից ես,— կհարցնի Լենինը:

— Իմ փամիկն Սրբել Քաչքոտյանց ա, ամեն անուշիկ էլ ինե հարցնես— Փուչ Սրբել ենե ասում... մեր գեղն էլ Տանձատրճին ա...

Լենինի աչքերը պճնճին–պճնճին կանեն, նա չարացած վոտները գետին կթափկի ու կհրամայի.

— Ես ո՞վքեր են իմ հրամանը վոտնատակ տվել, ի՞նչպես են համարձակվել մեզնից պատշաճ մարդուն նեղացնել...Ես բոլորին թելեգրամ տվեք, վոր Տանձատրճի խորհրդի մարդկանց չաթիեն ու թերեն մեզնեղ, վոր յես խիստ պատիժ տամ...

Սրբելի մտածմունքները կանգ առան, յերբ նրա դիմաց յերեվաց կայարանի կամքիր չենքը: Յերբ մոտեցավ, տեսավ մի խումբ չահելներ պրոշակը բարձրացրած՝ կանգնել են չենքի առաջ:

«Ձլինվ ինե խմացել են, վոր յես Մոսկով եմ գնալու ու յեկել են ճամբես կտրեն, խափանեն...»

Իսկույն ձիու յերեսը շուռ տվեց ու յերկար պտույտ անելով գնաց յերկաթգծի մյուս կողմն ու կանգ առավ խանութի առաջ: Ձին հանձնելով խանութպանին, ինքը դանդաղ քայլերով, վախվխելով գնաց դեպի կայարանը:

Նորից նկատեց մի ուրիշ խումբ բանվորների, վորոնք գնում էլին պրոշակը բարձրացրած: Նա թաղնվեց պահնաոի յետևն ու զաղտագողի դիտում եր այդ յերթը:

Հանկարծ չոգեկառքը սուլեց: Կարծելով ինե գնացքը մեկնում է, Սրբելը դուրս յեկավ թաղատոցից ու չտապեց դեպի կայարանի չենքը:

Ճանապարհին պատահեց) ալաքսակարը:

— Պոեզդի ժամանակն ա,—հարցրեց:

— Չե:

— Ես ի՞նչ խաբար ա, ինչի՞ յեն բայրաղներով գնում:

— Բա խմացել չե՞ս...Լենինը մեռել ա...

— Վո՞նց թե մեռել ա...ի՞նչ ես մարդկերանց խաբում:

— Ի՞նչ խաբել, հեռագիրը ա յեկել:

— Ի՞նչ ես ասում...դրո՞ւստ:

— Ուզում ես, գնա հեռագիրը տես. ա՛յ, պրոշակներն էլ սևով են պատել...

Առաջին րոպեին փուչ Աբելը ասես ուրախացավ ու հեռանալով կայարանի շենքերից, նստեց մի թաց քարի վրա: Բայց շատ չանցած՝ նա ընկավ փակուղու մեջ.— Լա՛վ, Լենինը մեռավ... բայց չե՞ վոր ինքը դնում եր նրան պանդասվելու, չե՞ վոր Լենինն եր իր վերջին հույսը... Նա պետք և հրամայեր, վորպեսզի վերադարձնեն իր այդին...

Չե՞ վոր իր այդին և ամեն ինչը. հիմա ո՞վ կարող և վերադարձնել այդին... ո՞ւմ պետք և դիմի Աբելը, ո՞ւր գլխի գնա...

Ու նրա միտքը մոլորված չարժվում եր փակուղու մեջ. գնում եր, դիպչում պատին ու ետ հետ գալիս, նորից ակռում... Նա կուչ եր յեկել նստած թաց քարի վրա ու չդիտեր, ի՞նչ գլխի անի...

Այժմ նա նման եր այն գյուղացուն, վորը քաղաքում մոբիլիզացիա յանելուց հետո նստում և գյուղի ճանապարհին՝ մի թադան տեղ ու ժամերով հաշվում և փողերը, հաշվում և անվերջ ու չի կարողանում պարզել իր հաշիվները...

1929

---

# ՀԱՐՄԱՐՅԱՆԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԻՑ

## Հուլիս 18.

*Ամառն է—չոգի; վոչու և քաղաքի ամայության սեզոնը: Կնոջս ու յերեխայիս ուղարկել եմ ամառանոց, մնացել մենակ: Բնակարանս ասես չատ վաղուց մարդու յերես չի տեսել ու քարացել է իր սառը ու կարգով, վոչոտվել: Ամեն ինչից նկատվում է, վոր Մարգոյի ձեռքը բավական ժամանակ չի դիպել:*

*Ճաշից հետո դուրս եմ գալիս պատշգամբ ու նստում մի հին, խարխուլ բազկաթոռի վրա, վորը ժառանգություն է մնացել տանտիրոջից: Զարմանալի բազկաթոռ է—հենց վոր նստում եմ վրան, իսկույն ընկնում եմ անուրջների–յերազների մեջ ու վրաս լցնում եմ ներդաշնակության—«հարմոնիայի»...*

*Ցես, Հարմարյանս, չարունակ վայելում եմ քեզ, մեջս այդ հարմոնիայի, վորը յերևում է աչքերիս վորպես անվրդով մի կյանք, վտիտուկ կահավորված բնակարանում,— վարդապուն լուսյանըի ու յերազային յերաժշտության մթնոլորտում, վորտեղ նշխում եմ և իմ պաշտելի, իմ չքնաղ Մարգոն...*

*Պատշգամբիս առաջ մի թռքախտավոր, վիրը ճգած թթենի յե, բայց յես յերևակայում եմ նրա տեղ հավատուն անտառ, աղբյուրներով, թռչուններով... Ընկնում եմ մի յերջանկության աշխարհ, ուր վոչ ամառն է խայթում, վոչ ձմեռը...ուր մարդիկ ապրում են առանց պայքարի...*

*Բայց հանկարծ սթափվում եմ ու իմ չնաշխարհիկ հարմոնյան խանգարվում է.—Դիմացի բակից կանչում է աքաղաղը, թևերը ոսկառնալից թափ տալով, նրան պատասխանում է մեր բակի աքաղաղն իր զոռոզ ու ահեղ ձայնով, և ահա սկսվում է նրանց տարօրինակ մենամարտը: Թվում է, թե կռվի վոչ մի առիթ չեր կարող լինել, քանի վոր յերկու բակերը բաժանված են իրարից, տախտակե բարձր ցանկապատով. տակավին որտեղ*

քա՛նի անգամ աքսորականները ծոանոտում են ցանկապատի մեջ մնացած մի նեղ արանքն, վորից հազիվ անցնում են նրանց դլուխները ու սկսում են կատաղի կռիվն իր բոլոր կանոններով:

Նայում եմ աքսորականներին ու ինքս ինձ հարց տալիս—կարո՞ղ է արդյոք ներդաշնակություն, համաձայնություն լինել այս աշխարհում, յերբ նույնիսկ իրարից բարձր ցանկապատով բաժանված արարածները կռվում են այնպիսի թափով, կարծես աշխարհս սրի բաժանվի նրանց մեջ...

## Հուլիս 22.

Յես, Հարմարյանս, խոհական հայ եմ,—ծնվել եմ Արարատյան դաշտի Հնաշեն գյուղում: Հայրս քահանա յեր, այն հին քահանաներից, վորոնք ուսում–խաղաղ եյին յերբ մարդու չարը ու քնում այնպիսի խոմփոցով, վորից դողդողում եյին պատուհանների ապակիները:

Սակայն բնության թարս քմահաճույքով, յես՝ վոխանակ հորս— ժառանգել եմ մորս վոխ մարմինը: Պետք և խոստովանեմ, վոր յես աշխարհ եմ յեկել կիսակենդան, անճարն, և մինչև տասմոր յերկար թանկ տալուց հետո ուշքի յեմ յեկել ու վռշտացել: Կարող եմ ասել, վոր այդ վռշտալն ու նրա հետ հարությունն առնելը մինակ նշանավոր հեղափոխական ակտն և յեղել իմ կյանքում:

Դպրոցում յես «որինակելի» այրինքն դժբախտ աշակերտներից եյի: Ուսուցիչները շատ անգամ ստում եյին չար աշակերտներին.

— Ա՛յ, որինակ առեք Հարմարյանից.— տեսե՛ք, ի՛նչ խելոք և նատած...

Այդ հաճախ կրկնվող խոսքերն առիթ եյին տալիս չարերին ավելի մեծ թափով բարձրելու դլխիս ծաղրական անուններ—նրանք յեռևեցս կանչում եյին վանկերը ձգելով—«Ա-ր–հա–մար–յան» ու հաճախ զմռսում եյին: Ինչ ասել կուզի—այդ ծաղրն ու զմռսոցը ավելի յե աղդում, քան ուսուցչի դովտառանքը: Ավելի վատե՞ յես ուրախությամբ կուզեյի չար լինել, նախանձում եյի նրանց: Այդպիսով պարզվում է, վոր յես դեռևս դպրոցական հասակում նահատակվել եմ «առաքինության» պատճառով:

Դպրոցն ավարտելուց հետո, յես՝ ինչպես ասում են, կյանք

մտա, այնինքն սկսեցի պաշտոններուն չարանը: Մի առ մի նկարագրել, թե ինչպես կեցել եմ ուսուցիչ, քարտուղար, վարիչ և այլն—մանրամասն ձանձրալի կ՚ը: Սակայն, կամ նայելով դեպի իմ անցյալը՝ նկատում եմ այնտեղ կերկու աչքի ընկնող կետեր, որոնք խոսում են հիշողության հետ. դրանցից մեկը հեղափոխությունն է, մյուսը—Մարդոյի կերևան գալը:

Փետրվարյան հեղափոխության սկզբին արյանս սակավաթիվ կարմիր բջիջները չարժվեցին. վոգևորություն այնտեղ հասավ, վոր ճառ արտասանեցի մեր հնաչենցիների հայրենասիրական ժողովում: Բայց կերբ կեկավ խորհրդային իշխանությունը, կես վախեցա ու կրկին նման դրսխա պատյանիս մեջ առնելով՝ մնացի սպասողական դրության մեջ:

Ամեն մի ցնցումից հետո ասում եյի ինքս ինձ—«ահա այսեղ հեղափոխությունը կանդ կառնի, կհանդստանանք», բայց դալիս եր մի նոր ալիք, ու կարծես նորից սկսում ամեն ինչ... Վերջ ի վերջո կես համոզվեցի, վոր հեղափոխություն առաջ չատ անհանդիստ բան և և չի սորում Հարմարյանին...

Քանի վոր բանը հասավ հեղափոխության, բնական կլիներ հարց տալ, թե վո՞ր կուսակցության եմ պատկանում: Այդ կոչնակությանն եմ պատկանում—այսպես կոչված անմիկ կես մի կերջանիկ անորոշություն եմ—այսպես կոչված անկուսակցականն եմ... կես ընտրել եմ ինձ համար մի կուսակցական մշուշային մի դրություն, վորը չատ հարմար և գալիս ինձ: Այդ և պատճառը, վոր կերբ վեճի կեմ բռնվում ընկերոջս—կորնկյանի հետ, նա սովորաբար ասում է, վորպես կեղրակացություն.

— Ձո հայացքները պարզելու համար անհրաժեշտ և մի հանճնաժողով հրավիրել...

Այնուամենայնիվ պիտի ասեմ, վոր կես ընդունում եմ սոցիալիզմը, վորպես ապագայի մեծ հարմոնյա... բայց կես վախենում եմ այդ մեծ հարմոնյայի ճանապարհին կորցնեմ իմ փոքրիկ հարմոնյան— իմ ընտանեկան իդիլիան՝ իմ Մարդոյին...

Մարդոյի կերևան գալն իմ կյանքի հորիզոնում մի կատարյալ հեղափոխություն եր ինձ համար: Ձերեք ամիս սիրահարված եյի և գտնվում եյի «վերածական» դրության մեջ: Տարօրինակ ցանկություններ եյին գալիս մեջս—ինչպես հին բանաստեղծներն եյին ասում—«ապաանել ջինջ կերեսում»... «ննջել բնության ծոցում»... «զրկախառնվել անհուն տիեզերքի հետ»...

Վոզևորությունս այնքան մեծ եր, վոր նույնիսկ բանաստեղծությունն դրեցի,—նվիրված Մարդոյին... Նրա առաջին տողերը մինչև այժմ մնացել են հիշողության մեջ—

Ո՛վ Մարգո,
Մարգո,
Սիրում եմ ֆեզ
Խոնարհ ու հեզ...

Մի որ էլ, այդ վերաբերյալ տրամադրության տակ, առաոտնոցի վոդոցով անցնելիս, տեսնելով մի հորթ՝ բուռն կարոտով համբուրեցի նրան....

Իմ ընկեր Կորեկյանը, չունենալով իր ներսում հարմոնյա, սիրահարությունը համարում եր խելագարություն, իսկ հորթին համբուրելը—հայրական զգացմունքների արտահայտություն:

Ա՛յո՛, Մարգոն...

Ցնս չեմ կարող հանդիստ կերպով արտասանել այդ անունը.. Ա՛յժմ նա իմ կինն է, և պարզվել է ինձ Սեղիկին... Ցնս չարունակում եմ սիրել նրան, թեպետ և վոչ առաջվա բուռն «եկսցես-ներով»—վոտանավորներով, ու հորթերին համբուրելով, բայց նա կազմում է իմ փոքրիկ իդիլիան, վորի մեջ յես զգում եմ ինձ—ինչպես բանաստեղծները են ասում «յերջանկության որրան»...

## ՀՈՒԼԻՍԻ 26.

Ա՛յսոր ճիշտ վոր ձախլիկ որ եր:

Հենց առավոտից գործս թարսվեց: Անցյալ յերեկոյան կոշիկներս հանձնել եյի նորոգելու և պատվիրել կոշիկարին, վոր քերի այսոր՝ գործի գնալուց մի ժամ առաջ:

Առավոտը վեր կացա, թեյ խմեցի, պատրաստվեցի գնալու, բայց կոշկակարը դեռ չկար: Նշանակած ժամանակին անցյալ. արդեն պարզ եր, վոր պիտի ուշանար: Սկսեցի ջղայնանալ.—դուրսանները հաճախ անմիտ քայլում եյի սենյակում ու թունդ խոսքեր առաքում կոշկակարի հասցեյին:

Վերջապես՝ յերբ ջղերս արդեն կտրել, վեր-վեր եյին թռչում, դուռը հանկարծ բացվեց ու ներս մտավ կոշկակարը: Ցնս արդեն պատրաստվել եյի չանթ ու կայծակ թափել նրա գլխին, բայց մի ակնթարթում չգիտեմ ինչպե՞ս յեղավ, վերցրի կոշիկներս ու առացի մեղմ, հարմարյանքին հատուկ ձայնով.

— Շնորհակալ եմ...

Կոչվակարը նայում էր զարմացած: Նա ուզում էր պատճառաբանել, թե ինչու չէ ուշացել, բայց չես լուռ ցույց տվի մատով սեղանի անկյունը, վորտեղ դրած էր փողը: Նա վերցրեց և շնորհակալություն հայտնելով, դուրս գնաց:

Ցերբ կես ժամով ուշացած ներս մտա մեր հիմնարկը, քարտուղարը նայեց ինձ զեմքի մի առանձին արտահայտությամբ, վորը նշանակում էր և նկատողություն և մի ներքին ուրախություն: Նա հանձեց ժամացույցը, նայեց ավելի չերկար, քան թե անհրաժեշտ է ու կարծես քիչ տակ նշանակեց իմ ուշանալը: Թվում էր, թե նա ասում էր.—«ընկեր Հարմարյան, մենք ի նկատի կունենանք ձեր ուշանալը, վորպես «նյութ» չերբ կգա հարմար մոմենտը...»

Ինձ համար պարզ է, վոր նա ինձ ատում է, քանի վոր ներսն խանգարում եմ... Նա ուզում է ինձ «կրճատել», իմ պաշտոնը մխացնել իրենին, իսկ հետո այդ առիթով ավելացնել իր տոճիկը:

Ցես, իհարկե, աշխատում եյի ցույց տալ, վոր ինձ համար վոչ մի նշանակություն չունի նրա մեծ քիչ «արտահայտությունը» բայց պետք է խոստովանեմ— այդ ինձ դժվարությամբ եր աջողվում—կյանքում դերասանություն անելն այնքան էլ հեշտ բան չէ:

***

*Ո՛վ կին, ինչ է քո անունը.—վերջ ի վերջո կին...*

Հարմարյանի ափորիզմներից



Մի չարաթ է չեմ դրել...

Այնքան փոթորկալից եյին անցած որերը, վոր Հարմարյանից ուժեղ մարդիկ էլ կկորցնեյին հավասարակշռությունը: Այժմ, հանդարտվելուց հետո, նորից ձեռք եմ առնում գրիչս:

... Այդ որը մեր հիմնարկում սովորական որ եր, և վոչ մի նշան չեր ցույց տալիս, թե Հարմարյանի գլխին դժբախտություն և լինելու:

Ժամը մոտ յերկուսին հանկարծ տատնուկ եմ մի նամակ՝ կապույտ ծրարի մեջ, կանացի ձեռքով հասցեագրած:

Ծրարը բացելով, նկատեցի, որ անանուն նամակ է... ու սկսեցի սիրտս լքլքալով կարդալ.

— «Ընկեր Հարմարյան,— գրում էր անհայտը,— մինչդեռ դուք այրվում եք քաղաքի չոլից, քայլում եք փոշոտ փողոցներով ու քաղցր յերազներ տեսնում ձեր պաշտած Մարդոյի մասին, նա այստեղ յերջանիկ ժամեր է անցկացնում իր «հոգու հատորի» հետ, ամառանոցի հովի, թարմ կանաչների ու բուրաստեր ծաղիկների մեջ...

«Նա» գալիս է ամեն որ և Մարդոյին մենակ է գտնում (յերեխային ուղարկում է հարևանուհու մոտ), իսկ այնուհետև...իմ գրիչն անզոր է նկարագրելու, թե ի՛նչ յերանավետ ժամեր են անցկացնում մեռանին...

«Նամակս թողնում եմ անտարակույս... (ի՞նչ կարիք կա խառնվելու ուրիշի ընտանեկան գործերում...)»:

. . . . . .

... Այս րոպեյիս էլ, յերբ արդեն մի շաբաթ է անցել, հուզմունքից գրիչս դուրս է ընկնում ձեռքից... իսկ այն որը այնպես չմեռնի, կարծես սենյակի առաստաղը վուլ յեկավ գլխիս: Թվում էր, թե ընդմիշտ հրաժեշտ կտամ կյանքիս, բայց այդպես չեղավ (ըստ յերեվույթին, մահմանիս մեջ բավական հակաթույն է յեղել այդպիսի կատաստրոֆիկ դրություններին դիմադրելու համար):

Յերկար նստած եյի անշարժ, արձանի պես ու նայում եյի առջևս թափված թղթերին, վոչինչ չնկատելով: Ներսս ալեկոծվում էր՝ խելագար տենդով բռնկված, ու մի ձայն կանչում էր ականջիս— վե՛րջը, վե՛րջն է գալիս քո յերջանկությանը, քո ընտանեկան հարմոնյային... դուցե և կյանքին...

«... «Ի՞նչ... Մարդոն ինձ դավաճանե՞ց է... ասում եյի ինքս ինձ... ուրիշի՞ն է սիրում... Չե՛, սա աշխարհի վերջն է... «Մարդո, դու խորտակեցիր իմ կյանքը... վրե՛ժ, սոսկալի՛ վրեժ...»

... Սպասեցի մինչև պարապմունքների վերջը ու ներս մտա կառավարչի առանձնասենյակը: Կարծես յերազի մեջ եյի. խոսելս ձայնս այնպես տարօրինակ եր հնչում, ականջներս ծակում, ասես իմ ձայնը չեր, այլ մի ուրիշ ոտար մարդու...

Ասածս միտքն այն եր, որ կինս ու յերեխաս հիվանդ են,

Նրանց պահող չկա, անհրաժեշտ է դնալ ամառանոց դոնե յերեք որով:

Կառավարիչը համաձայնվեց: Ասա նայելով ընկճված դեմքիս, ասաց.

— Վոչինչ, ընկեր Հարմարյան, շատ մի՛ք մտածիլ. հիվանդություն է, կգա էլ, կանցնի էլ...

Անմիջապես դնացի տուն, վերցրի պայուսակս ու ճանապարհ ընկա յերկաթուղով:

Վագոն նստելով, կարծում եյի, թե փոքր ինչ կցրվեմ, բայց ընդհակառակը՝ ջղերս սկսեցին սաստանի պար... Թվում եր, թե չարունակ ընկնում եյի ակների տակ, ապա նորից դուրս պալիս, նորից ղլորվում...

Մոտս նստած մարդիկ լրար հետ զբուցում եյին, սրախոսում, իսկ յես յերեվակայության մեջ արյունարբու վագր եյի դարձել.— չարունակ մտածում եյի սպանության մասին: Մեկ պատկերացնում եյի, թե ինչպես դնում եմ ամառանոց, ներս եմ մտնում... և տեսնում «նրանց» միասին, ու յերկուսին էլ խեղդուռեղը սպանում... կամ սպանում եմ սիրեկանին, իսկ Մարգոյին թողնում, վոր կսկծա ինձ նման...

«Գուցե և այսպես կլինի»— մտածում եյի: Իջնում եմ ամառանոցում, վոչ մի նշանով չեմ ցույց տալիս, վոր մի բան գիտեմ, բայց գաղտուկ առաջ եմ տանում իմ հետախուզումը, պատելով Մարգոյի չուրջն աներևույթ ցանցով: Վերջապես մի որ բացում եմ գաղտնիքը... Մարգոն զգալով, վոր ցանցի մեջ է, թպրտում է ու հուսահատորեն ընկնում, արցունքներով վոշխրում վոտներս, աղերսում, վոր ներեմ: Բայց յես անողոք լինկվիտորի սառնասրտություն եմ պահպանում,— վո՛չ մի գութ, վո՛չ մի գիջում չեմ ցուցադրում դեմքիս, միայն մտածում եմ իմ «դիվայինն» վրեժի մասին...

Մինչև գիշերվա կեսը այսպիսի սարսափելի տեսարաններից մեջ չուռ ու մուռ գալով վերջապես քնեցի ու ընկա ավելի սոսկալի արյունալի յերազների մեջ.— սուրը ձեռիս անցնում եյի անթիվ «գալերի» միջից ու մի սպանությունը հազիվ վերջացրած, մյուսին եյի գիմում, թողնելով յեռևից գիակների չարքեր...

***

Սառավոտը զարթնեցի նախասենյակին կայարանում, հոգնած ու ջարդված, ասես ամբողջ գիշերը ծանր քարեր էի կրել: Տեղ հասնելուն, դուրս եկա կայարան: Սառը, խոնավ ոդից ուշքի գալուս, կարգ նստեցի ու նոր միայն հիշեցի, որ առթճանակ չունեմ...

«Սպանել ես ուզում և զենք չունե՞ս... մտածում էլի ես, երբ կարգն անցնում եր ամառանոցի յերկար փողոցով.— դա մխանգամայն ծիծաղելի յե...»:

Յերբ կարգը կանգ առավ և յես ինձ նետքև, հանկարծ մի տարօրինակ ինձ կծկեց.— «իսկ յեթե ներս մտնեմ ու տեսնեմ Մարդին նրա հե՞տ...»— անցավ մտքովս:

Մի քանի վայրկյան յես չգիտեյի ի՞նչ անեմ... Նույնիսկ մի անհեթեթ միտք ծագեց.— անմիջապես նստել կարգ ու գնալ կայարան՝ հետևյալ գնացքով վերադառնալ քաղաք...

Կառապանի ձայնից սթափվեցի. նա հանձնեց ինձ պարտատոմս: Փողը վճարեցի և դարձյալ մնացի տատանումների մեջ.— գնա՞մ, թե չգնամ:

Նորից հիշեցի, որ առթճանակ չունեմ ու հեգնանքով ասացի մտքումս— «խոստովանի՛ր, Հարմարյան, որ դու ստեղծված չես տրագիքական մոմենտներ լուծելու համար»...:

Վերջապես նկատելով, որ գիմացի ամառանոցից յերկու տրէտրներ գիտում են ինձ, յես անհարմար զգացի կանգնելուց և ներս մտա մեր ամառանոցի պարտեզը:

Հազիվ մի քանի քայլ էյի արել— հանկարծ աչքերիս յերեվաց Մարդոն՝ Սեղիկին գրկած... Կարծես մի հսկայական բեռ իջավ ուսերիցս. ուրախացա, որ կարող եմ առայժմ չմտածել ապանութեան մասին...

Իսկ յերբ Մարդոն մոտեցավ ինձ, մի տարօրինակ հիասթափություն յեկավ վրաս.— յես յերևակայում էյի, թե նա կկանգնի առաջս մի առանձին, «գիմային» դեմքով, «սև դաղտնիքից» այրվող աչքերով... Բայց գրա տեղ իմ առաջ յերևաց սովորական ընտանեկան Մարդոն, ամոթխած դեմքով, նույնիսկ մի տեսակ խեղճացած, ինչպես լինում են սովորաբար յերկար ժամանակ ամուսիններից գատված կանայք:

Մայր ու յերեխա ժպտալով, բացականչերով դալիս էին պարտեզի ծառուղիով: Յետ համբուրեցի Մարգոյին, գրկեցի յերեք տարեկան Սեդիկիս, համբույրներով չշմեցնելով նրան, ու պլպլայի, վոր մի վայրկյանում իմ ապանութեյան դիտաւորութեյունը թռչնեց աշնան տերևների նման:

«Գուցե թյուրիմացութեյուն է...» անցալ մտքովս.— «մի՛ նեթե համակրանք, ընկերական վերաբերմունք կարող էին սիրտ առել ընդունել... կամ գուցե մի ինտրիգ և «թշնամու» կողմից՝ մեզ իրարից բաժանելու նպատակով...»:

Այսպես մտածում էի, գուրգուրալով յերեխայիս ու ցրված ուշադրութեյամբ լսելով Մարգոյին, վորն աչխուժ շաղակրատում եր այնպիսի անմեղ ու միամիտ տոնով, վոր չեր կարելի կասկածել, թե նրա մեջ կա վորևե կեղծիք կամ դավաճանութեյուն:

— Եղ ինչպե՞ս կարողացար գալ, Գուրգեն. մի՞թե արձակուրդ ես առացել,— հարցրեց Մարգոն քնքշորեն:

— Ջե, ենպես, կարդից դուրս եմ յեկել. յերեք որով արձակուրդ եմ վերցրել, շատ եյի կարոտել Սեդիկիս...

— Իսկ ինձ չե՞...

— Ֆեզ ել, իհարկե:

— Գիտե՞ս, Գուրգեն, Սեդիկը շատ է տխրում առանց քեզ. շարունակ քո անունն է տալիս:

«Յեթե իսկապես հանցավոր է»,— մտածեցի յես,— «ապա չալ տակտիկ է բանեցնում,— յերեխային է մեջ գցում, վորպեսզի վտահացնի ինձ...»:

— Ուրիշ ի՞նչ կա քաղաքում, շոշ է՞... վո՞նց են մերոնք... վերա յեր տալիս Մարգոն, յերբ մենք արդեն տանն եյինք:

— Անյերևակայելի շոշ է,— ասացի յես,— չդիտեմ, ինչո՞ւ չափազանցնելով շոշի ասելիքը:

— Գիտես, Գուրգեն, շատ դժվար է առանց ֆեզ... Մյուս տարի ինչ էլ լինի՝ առանց քեզ վոչ մի տեղ չեմ գնալ: Հիմա յել, ճիշտն ասած, յերեխայի պատճառով եմ եստեղ, թե չե մի րոպե չեյի մնալ...

«Սա էլ հավատարմության հավաստիքներն են...» մտածում էյի յես. «ի՞նչպես և չհաստում «առանց քեզ»-ը... յեթե ծրագրված և տանում գործը, ապա պետք և ասել, շատ հաջող է...»

— Հետո, Գուրգեն, մի ուրիշ բան էլ կա... կոկետուրեն, խոսված յերեխայի նման ասաց Մարգոն, իր դեղեցիկ, սև աչքերը պտուցներով. (ո՛, այդ աչքերի առաջ յես հանձնեցի համարյա բոլոր դիրքերս)— չարունակ անհանգիստ եմ. ասե՞մ... ինչ-չո՛ւ... մտածում եմ... թե իմ Գուրգենն ուրիշ կանանց հետ է ման դալիս, նրանց է սիրում...

Ու յերկու ձեռներով բռնելով դլուխս, Մարգոն խորը նայեց աչքերիս...

— Ասա, Գուրգեն, իսկի ուրիշներին չե՞ս սիրել...

— Ի՞նչ ես ասում, Մարգո... մի՞թե յես ինձ թույլ կտամ...

— Այժմյան տղամարդիկ ուրիշ տեսակ են... դուցե դու յել նրանցից վարակվել ես...

— Իսկ կանա՞յք... մի՞թե նրանք պակաս են:

— Հա, իհարկե, այդպիսի կանայք էլ կան, բայց նրանք դծից դուրս են...

Ու կամենալով խոսքը փոխել, շտապով վրա բերեց.

— Չե՛, Գուրգեն, յես քո աչքերից տեսնում եմ, վոր դու ինձ սիրում ես, ուրիշ տղամարդկանց նման չես:

Ասաց ու համբուրեց շրթունքները այնպիսի դուրդուրանքով, վոր շատերը կհամարեյին այդ տեսարանը մեք ընտանեկան յերջանկության դաղաթնակեսը:

Յես շարունակում եյի իմ «ներքին» մտքերի թելը— «ինքը նախահարձակ յեղավ, վորպեսզի կասկածներս թուլացնի»— ասում եյի ինքս ինձ. «իսկ աչքերիս խորը նայեց հետախուզելու նպատակով— արդյոք լուրջ կասկածներ չունե՞մ իր դեմ... սա յել լավ տակտիկ է...»

— Բայց ինչո՞ւ, Գուրգեն, այդպես դոհնատ ես, աչքերդ ջեղնած... ու մի տեսակ ցրված ես...

— Վոչի՛նչ. հոդնած եմ... դլխերս չեմ քնել,— վազոնում տեղ չկար...

— Ախ, յես մոռացա, վոր նախաճաշիկ պիտի տամ Սեդլիկիս... հանկարծ խոսքը կտրեց Մարգոն ու յերեխային ինձ հանձնելով, սկսեց դբաղվել նախաճաշի պատրաստությամբ:

***

Նոր եր Մարդոն կաթը դրել կրակի վրա, յերբ ներս մտավ ժպտացող Գարիկը, ամառային, խորը դեկոլտեյով բլուզ հագած:

— Բարև ձեզ,— ասաց նա չփոթվելով, ըստ յերեվույթին՝ հանկարծակիի գալով լինճ տեսնելուց:

Մարդոն խոհուն մոտեցավ նրան:

— Բարև, ընկեր Գարիկ,— ասաց նա կեղծ-քաղաքավարի տոնով.— յերևի յեկել եք նամակ ուղարկելու Գուրգենի ձեռքով հա՞...

— Այո, նամակ ուղարկելու: Ցե՞րբ եք գնում,— դիմեց նա լինճ:

— Ցերկու որից հետո,— պատասխանեցի սառը, պաշտոնական տոնով:

«Ցերևի սա յե Մարդոյի օիրելին»,— մտածեցի ու մի ակընթարթում կասկածի ալիքները ներս խուժեցին մեջս: Ցերեխային ցած դրի ու աչքի տակով դիտում եյի Գարիկին: Նա մեր ծանոթներ. քաղաքում ել յերբեմն գալիս եր մեր տուն, բայց յերբեք կասկածի տուիթ չեր տվել: Իսկ այժմ... ո՞վ դիտե... ամառանոցում, դեղեցիկ բնության մեջ... մխայնակ... յերկտասով... Ո՛, ժժոխք...

— Ի՞նչպես և ձեր մայրիկը,— հարցրեց Մարդոն, աշխատելով «լուծել» լարված դրությունը:

— Լավ ե,— պատասխանեց Գարիկը կարմրած ու չփոթված աշակերտի նման:

— Նստեք, ընկ. Գարիկ:

— Վոչ, չտապում եմ, գործ ունեմ... ուրեմն ընկեր Գուրգենն վաղը կբերեմ նամակը. ցտեսություն:

— Ցը՛:

... Գուցե և կապ կա սրանց մեջ,—ասում եյի ինքս լինճ, բայց ի՞նչ կարող եմ անել.. արդեն ուշ և— այժմ հեշտությամբ կարող են ծածկել ամեն ինչ, նույնիսկ կվնդան վրաս, իմ պնդուց հետո... Ա՛խ, Հարմարյան, քո բանը չէ կնոջդ սիրականին ջունելը— յեթե ուզում եյիր մի լուրջ գործ տեսնել— պիտի վորոշ

ծրագրով չարժվելիքը, «սարսափելիայի» և «տակտիկի» մասին մտածելիք...

— Սրանք էլ ժամանակ են գտել նամակ հանձնելու,— ասաց Մարգոն, շատ դժգոհ տոնով.— կարծես չեն կարող փոստով ուղարկել... Գարնիկի մայրիկին հարցում եմ, թե չե կոպիտ պատասխանով կետ կդարձնեցի:

Ցես վոչինչ չպատասխանեցի և աշխատում էի ցույց տալ, թե չերեխայով եմ զբաղված, բայց պատուհանի դիտում էլ Մարգոյին: Շարժումներից կերևում եր, վոր ջղայնացած է,— ամաններն իրար վրա չեր ճգում անտեղի ազմուկով ու մի գործ մյուսի հետ խառնում: Շուտ-շուտ կերեսն իմ կողմն եր անում, իբր չերեխային նայելու համար, բայց ավելի զբաղված եր ինձ դիտելով:

Ցերկուսս էլ մտազբաղ էինք, կերկուսս էլ տանջվում էինք— կես այն հարցից՝ թե կամ արդյոք կասի Մարգոյի և Գարնիկի մեջ... իսկ Մարգոն— ինձ թվում եր՝ մտածում եր— «գիտե՞մ արդյոք «այն բանը», թե չե...»

Մի հանգամանք վորոշ չափով հանգստացնում եր ինձ— Գարնիկն ինձ թվաց շատ անհետաքրքիր, չարլոն գեմքով, անտաղանդ քիթ ու պռունգով... Միակ բանը, վորի վրա դուցե կարելի լիներ ուշադրություն դարձնել— դա նրա դանդուր մազերն էին:

Ցերեխային կերակրելիս Մարգոն հայացքն ինձանից չեր հեռացնում:

— Գուրըեն, ինչո՞ւ կես ախուր. դուցե մի բան և պատահել, ինձանից թաքցնում ես...

— Չե՛, վոչինչ չի պատահել... Միայն հոգնած եմ... Գլուխս չեմ քնել...

— Ցես գիտեմ, Գուրըեն, կերբ հոգնած ես լինում, այդպես կես փոխվում... չե՛, կես նկատում եմ, մեջդ ինչ վոր բան կա... ասա՛, մի ծածկիր, թե ինձ սիրում ես...

— Սում եմ, վոչինչ չկա:

Զգում էլի, վոր Մարգոն գլխի կ՚ընկնում իմ կասկածների վերաբերությամբ և իր կանոցի համաոությամբ ուզում եր դուրս քաշել պատմելքս: Ցերբ նա նորից թախանձից, կես տեղի տվի:

— Ինչ ասեմ, Մարգո, գիտես էլի... կերբեմն լինում են

այնպիսի դրուԹյուններ... հիմնարկուԹյան մեջ հաճախ ծագում են ինտրիգները...

Մարգոն վեր Ճռռալ տեղից:

— Ջլինի՞ Ըե կրճատել են քեզ:

— Ջե, այդպես բան չկա:

— Ե՛հ, ուշադրուԹյուն մի դարձնիլ... ինտրիգները միշտ կլինեն...

Մարգոն այժմ ավելի հանդիստ եր յերեվում— գուցե նա րոպեապես հավատաց, վոր «գործը» իրեն չի վերաբերվում...կամ գուցե նրան հանգստացնում եր այն, վոր յես այդպես հեշտուԹյամբ սկսեցի տեղի տալ և ծայրը բացել,— մի վոքը պատուհան բանալով դեպի իմ ներսը, նա հավատացած եր, վոր շուտով մնացածն էլ կբացվի: Հետո նա պիտի նկատեր, վոր յես այնքան էլ բարկացած չեյի, վոր անկարելի լիներ հաշտվելը...

— Հիմա մեր մասին մոռացենք,— ասաց Մարգոն ժպտալով.— շուտով նախաճաշը պատրաստ կլինի:

Նախաճաշը յեկավ ու յես մեծ ախորժակով կերա: Ինքս էլ զարմանում եյի, Ըե ինչպես «այդ դրուԹյան մեջ» գուցադրում եմ այդպիսի ախորժակ, բայց փաստ եր և Մարգոյին էլ շատ հաճելի՝ նա իր կողմից նպաստում եր իմ «հիմնավոր» ուտելուն:

Ցերբ աշխարհահռչակ Դրեյֆուսին հարցրել եյին, Ըե ինչպես ե նա կարողացել դիմանալ այդքան տանջանքներին, նա պատասխանել եր.—

— Ամեն պարապմունքում, ինչ էլ լիներ, յես շատ լավ քնում եյի, դա ինձ փրկում եր...

Ցես էլ կարող եմ ասել— ամեն պարապմունքում լավ ուտում եմ և դա ինձ փրկում ե...

Ուտելու վրա տրամադրուԹյունս էլ բարձրացավ. նույնիսկ սկսեցի սրախոսել, ծլծաղել:

Մարգոն, տեսնելով, վոր մոայլ ամպերը քաշվեցին ճակատից, և սովորական ընտանեկան հունի մեջ ընկա, ինքն էլ Ըե առավ և սկսեց առջևս փռել իր ամբողջ հմայքի փունջը.—ղլուխը քնքշորեն Ըեքում եր, աչքերը կոկետորեն ինձ դարձնում, զաղտնի ցանկուԹյուններ ներշնչում, անտես Ըելերով ինձ պատում: Ցերեխային խաղացնում եր,— բարձրացնում, համբուրում, հետո ինձ տալիս, վոր յես էլ համբուրեմ:

Յես աննկատելի կերպով անձնատուր կեղա ընտանեկան լռությանը:

Յերեկոյան թեյից հետո յես ու Մարգոն մխասին քնացրինք Սեղիկին: Նորից աչքս առաջ եկին Սեղիկի «թաթիկները» ու «առուիկները», նորից լսում եկի նրա մանկական թոթովանքը, շնչում նրա մարմնի կաթնահոտ բուրմունքը: Յերեխային քնացնելուց հետո Մարգոն թիկնեց մահճակալին մի առանձին գեղեցիկ պոզայով:

Նա իր նազուկ մարմնով, կրակոտ աչքերով ու տենչող շրթունքներով, այնպիսի հրապուրը եր ստեղծում, վոր յես ինքս ինձ կորցնում եկի, հալվում նրա առաջ:

Յեվ յես ամբողջ եյությամբ անձնատուր կլինեի Մարգոյի սիրուն, յեթե այդ րոպեին հանկարծ չհիշեի Գարիկին.— «ո՛վ պիտե,— անցավ մտքովս,— դուցե Մարգոն այս նույն պոզայով հրապուրում ե Գարիկին, և նա համբուրներ ե քաղում այդ վառ շրթունքներից... ո՛ հրեշավոր յենթադրություն...»

Սկսեցի քայլել սենյակում: Մի կողմից ինձ ալեկոծում եր «հրեշավոր միտքը», մյուս կողմից դրավում, քաշում եր Մարգոն իր դիցուհուն հատուկ հրապույրներով: Յես ատում եկի մտքումը— «տես, Հարմարյան, չմոռանաս, ինչի համար ես յեկել... Իմացի՛ր, վոր Մարգոն կաշխատի իր համայքներով քեզ պատել... դու պիտի ամուր կենաս, չյենթարկվես, չհանձնես զենքերդ, ցուցադրես քո տղամարդությունը...»

Սակայն հե՛շտ ե ասել.— Մարգոյի ձգողական ուժն այնքան մեծ եր, վոր յես դողդողում եկի... Այդ րոպեին մեջս հալվեց, չքացավ Հարմարյանի կամքը. զդում եկի միայն, վոր մի ուժ տանում ե ինձ դեպի յերջանկություն... Ինքնամոռացության մեջ յես մոռեցա Մարգոյին... ու ինքս ել չիմացա, թե ինչպես ընկա նրա գիրկն ու հալվեցի անուշ շրթունքներին... և այդ մոմենտին արցունքները հորդառատ սկսեցին թափվել աչքերիցս:

Ո՛վ Հարմարյան, վե՛րջքան սանտիմենտալ ես յեղել դու, վո՛րտեղ մնաց քո «սուպատեղիան», քո վրեժը...

Յերբ Մարգոն նկատեց, վոր արտասվում եմ, վեր թռավ ու նայեց աչքերիս.

— Գուրգե՛ն, լա՞ց ես լինում... լո՞նչ ե պատահել, լինչո՞ւ յես թաղցնում ինձանից...

Նա վախեցած նայում էր ինձ, իսկ յես ավելի եմ ուժեղացնում լացս: (Այս րոպեիս, դրելու ժամանակ յես մոռացում եմ— պուցե Մարդոն վոչ թե վախենում էր, այլ ուրախանում, ասելով մտքում— «սա լավ նշան է— անձրև է գալիս, ուրեմն չեւտով հաչտության ծխածան կկապվի»):

— Գուրգեն, ի՞նչ է պատահել... Մի՞թե յես քո Մարդոն չեմ,— ասա, մի տանջվիր ինձ...

Ցերբ նա մի քանի անգամ այդպես թախանձեց, յես լուռ հանեցի ծոցիս կապույտ նամակը և ձեռքիս դանդաղ շարժումով ձգեցի նրան:

— Սա ի՞նչ է,— ասաց նա ձայնը խզված ու արագությամբ վեր թռչելով տեղից, մոտեցավ լամպին:

Մատները դողդողալով, դեմքն այլայլված, նա բացեց ծրարն ու չունչը պահած սկսեց կարդալ աղահության:

Վերջացնելով, նա մի կողմ չպրտեց:

— Ի՛նչ լրբություն... ասաց ու նվաղած ընկավ աթոռին, ձեռքը ճակատին դնելով: Ապա չդաճգորեն բռունցքները սեղմելով, շարունակեց.

— Ո՛ձը, կարիճնե՛ր... ի՛նչ կեղտոտ միջոցների յեն դիմում մեր ընտանեկան յերջանկությունը խորտակելու համար...

Ապա սկսեց հեկեկալ այնպես ուժգին, վոր յես ամեն ինչ մոռացած, վեր թռա տեղիցս:

— Իմ անարատ անունը ցեխի մեջ են ձգում... ասում էր նա հեկեկալով,— իմ անբիծ սերը ապականում... և դո՛ւ, Գուրգեն, հավատո՞ւմ ես.— այո՛, դու հենց այս նամակի պատճառով ես յեկել... սուտելու Մարդոյին... Ո՛, յես այլևս մոտիկ մարդ չունեմ...

Մարդոն չարունակում էր հեկեկալ, իսկ յես, դլուխս կորցրած, կանգնել եյի նրա առաջ ու չգիտեյի ի՞նչ անեմ:

Հանկարծ նա թեք ընկավ աթոռին ու ընչացավ ասաց.

— Ո՛, յես չեմ կարող դիմանալ... յես կմեռնեմ...

Սկսվեց այնպիսի հիստերիկային դրություն, վոր յես կատարելապես պանիկայի մեջ ընկա: Մի կերպ տեղափոխելով Մարդոյին մահճակալի վրա, չոքեցի առաջն ու դրված մեծ ճիպ եյի գործ դնում ուշքի բերելու համար:

— Մարդո, հանգստացիր,— ասում եյի յես քնքուշ աղեր-

*սանքով,— յես քեզ սիրում եմ.. պաշտում եմ... չեմ կասկածել յերբեք... իսկ նամակը ցույց տվի, վորովհետև քեզանից չեմ թաքցնում...*

*Այսպես յերկար աշխատում էյի ուշքի բերել Մարդոյին. վազաքշում էյի, շոյում մազերը, համբուրում ձեռքերը, բայց Մարդոն յերեսը թաղած բարձի մեջ— շարունակում եր հեկեկալ:*

*Յես բոլորովին փափկել, «կաթուկ» էյի դարձել ու դառնըբեն վոշմանում էյի, վոր ցույց տվի չարաբաստիկ նամակը:*

*— Ների՛ր, Մարդո, ների՛ր,—շարունակում էյի յես,—ներիր քո Գուրգենին.— յես չեյի յենթադրում, թե քեզ վրա այդպես կազդի... Սպասում եմ հանդարտվիր... յես քեզ առաջվանից շատ եմ սիրում...*

*(Ո՛վ Հարմարյան, խոստովանի՛ր, դու այդ կնամն էլ հասար, վոր վոխանակ ապանելու Մարդոյին, ներողություն էյիր հայցում նրանից):*

*Մարդոն վոչինչ չեր պատասխանում, բայց նկատում էյի, վոր իմ «ներիր»–ների ազդեցության տակ հեռվհեռե հանդարտում է: կարծում էյի, հենց այդպես նվաղած կքնի, բայց հանկարծ գլուխը բարձրացրեց ու սրտակից հայացքով նայելով ինձ, ասաց.*

*— Գուրգեն... ասա՛... հավատո՞ւմ ես այդ նամակին...*

*— վո՛չ, վո՛չ, յերբե՛ք... դա մի կեղտոտ ղրպարտություն է...*

*— Ո, յեթե իմանամ, վոր դեթ մի րոպե դու կարդաց ես հավատալ, յես. ինձ կսպանեմ...*

*Նորից սկսեցի հանդարտացնել, համբուրներով ծածկելով դեմքը: Սկզբում Մարդոն թժյլ կերպով դիմադրում եր, իսկ հետո ինքն էլ սկսեց համբուրել... և շատ չանցած— մենք կրկնակի այնպիսի բուռն սիրային տենդի մեջ, ասես նոր էյինք սիրահարվել...*

*Այդ յերջանիկ րոպե մեջ յես հավիտեյն, մոռացա ամեն ինչ. ու յեթե այդ մոմենտին մեկն հիշեցներ, թե յեկել եմ «պալաճան» Մարդոյին սպանելու, անշուշտ յես հենց այդ տողին կսպաներ:*

*(Սակայն այժմ, յերբ անցել են օրեր, յես հարց եմ տալիս—*

ո՞վ կարող է հասկանալ կնոջ «ֆանտերը»... ո՞վ կարող է ասելի ծայրով բաժանել իրարից կնոջ կեղծն ու անկեղծը: Ցես, Հարմարյանս, անպոր եմ այդ հարցում... Ա՛խ, Մարդո, դու կին ես.. դու միամամանակ իմ յերջանկության ու տանջանքի աղբյուրն ես...):

***

Ցերկու որ անցկացրի ամբողջովին տարված սիրո քնքշանքով: Ցես ընկել եյի այնպիսի անուշ հուվվերդության մեջ, վորի նկատելությունն իմ զրչի ուժերից վեր է:

Ա.յն գժբախտ կատույա նամակի կոշմարը մենք վճռեցինք ընդմիշտ մոռացության տալ, այլևս նրա մասին չխոսել:

Ամեն ինչ լավ կընթանար, և «հարմոնյան» ընդմիշտ կթևավորեր ինձ, յեթե յերկրորդ որը, յերեկոյան մեզ չհանդիպեր Գարիկը:

Նա մոտեցավ մեզ, յերբ վերադառնում եյինք զբոսանքից:

Նրան տեսնելուն պես վերջս նորոշվեց, կասկածները նորից չարժվեցին մեջս: Բայց յես և մի հավաքելով Հարմարյանի սառնասրտությունը, կարողացա ինձ պահել հանդիսատ: Մենք մխաս.ին դնացինք տուն ու թեյի ժամանակ չարունակեցինք մեր զբոսյը պանապան հարցերի շուրջը: Ի միջի այլոց Գարիկը պատմեց իր մի ծանոթի մասին, վորի կնոջ հետապնդելիս և յեղել իր ընկերը. յերբ վերջինս նկատողություն և տացել այդ առթիվ, նա պատասխանել է.

— Ի՞նչ, դու քո կնոջը անհավանությո՞նդ ես համարում...

Առիթից ոգտվելով, Գարիկն սկսեց մեծ ապլոմբով, մազերը թափահարելով խոսել կնոջ ազատագրման մասին:

— Կինը պիտի անպայման ազատ լինի... Նրա առաջ չպետք է լինի վոչ մի խոչընդոտ վոչ ծնողների, վոչ ամուսնու կողմից...

Ցես համեստ կերպով առարկեցի.

— Դա շատ անշրջ է. անպայման ազատությունն անհատականալի յե... կան անխուսափելի պարտականություններ, վոր պնում են կնոջ վրա բնությունը և ընտանիքը... որինակ՝ յերեխաների հարցը...

Գարիկն իմ այս խոսքերի վրա ավելի քե առավ ու մի ամբողջ դասախոսություն թափեց ղևխա՝ կնոջ ազատության մասին, կրկնելով այն, ինչ շատ անգամ կարդացել ու լսել եմ:

— Դա ապատան է,— ասացի,— իսկ մենք խոտամ ենք նեղկայի մասին...

— Ի՞նչպես քե ապատա չե. դուք ընդունո՞մ եք սոցիալիզմը,— հարցրեց նա չեչոտակի.

— Ցես ընդունում եմ սոցիալիզմը... վորպես ապագայի հարմոնյան... ասացի չես և ուղեցի պարզել մտքերս, բայց նա խոսքս կտրեց.

— Դա ի՛նչ կրոնական վերաբերմունք է. դուք սոցիալիզմը պարծրել եք քարացած հանդերձյալ կյանք, ինչպես քրիստոնեությունն եր անում... Ձեր ուղղումները տանում են կանանց հարցը դեպի բուրժուական հասարակակարդը, յերբ կինը տղամարդու սեփականությունն եր համարվում...

Կարծես ղևխա վհատով խմեցին: Ցես սկսեցի առարկել, քե ինձ սխալ է հասկացել, բայց տպավորությունն այն եր, վոր Գարիկն է հաղթողը, նա չե կանգնած նոր տեսակետի վրա...

Մարդոն ղղույշ քաղաքականություն եր վարում.— նա չեր մանակցում վեճին: Ցես յերկու անգամ նկատեցի, վոր նա գաղտագողի ժպիտ նետեց Գարիկին ու խոսքն դեմքը դարձրեց իմ կողմը, ժպիտը փոխելով «պաշտոնական-ամուսնականի»:

Նա այնպես հանդիստ-դիջողական արտահայտությամբ եր նայում ինձ, կարծես ասում եր—

— Թեպետ դու. հին տեսակետն ես պաշտպանում, բայց չեմ չարանում:

Ցերբ Մարդոն նկատեց, վոր վեճը յերկարում է, նա միջամտեց.

— Իմ կարծիքով չարժե այդ չարչոն հարցի շուրջը յերկար խոսել, մանավանդ վոր չես նկատել եմ՝ տղամարդիկ յերբեք լուրջ չեն խոտամ կանանց մասին. ուստի, եթե կին, առաջարկում եմ այդ հարցն որակազրկից հանել...

Բոպեյապես տիրեց լռություն, վորից ոգտվելով, Մարդոն փոխեց խոսակցությունը:

— Ընկեր Գարիկ, ինչո՞ւ ձեր քույրը չի յերևում:

— Նա այժմ զբաղված է. արդեն ստացել է իր զրքերը և պատրաստվում է քննության...

— Իսկ ձեր յեղբայր— վազիկն վոտքը լավացա՞վ:

— Այո՛, բանից դուրս յեկավ, վոր բժիշկները չեն հասկացել...

Ցերևի զգալով Մարդոյի դործելակերպից, վոր իր յելույթն անտեղի յեր, Գարիկը վեր կացավ և հրաժեշտ տալով, դուրս գնաց, վոչ մի խոսք չասելով իր ուղարկելիք նամակի մասին:

Գարիկի գնալուց հետո յերկար ժամանակ տրամադրությունս յես չեր գալիս: Ցերեկոն համարյա եյի թունավորված, մեր ընտանեկան հարմանյան խանգարված... Նորից յերկինքը մթնեց աչքերիս ու կասկածներս սկսեցին ասեղների նման մարմինս ծակծակել:

«Այո՛, Մարդոն նրան սիրում է.—մրմնջում եյի յես,—նրա թաղուն սիրաժպիտ հայացքներն այդ եյին ասում... պարզ է... Գարիկը սիրել է նրա սիրտը...»:

Հետո—մի ուրիշ «կետ» ել եր ինձ այրում.— հոգուս խորը ծալքերում յես զգում եյի, վոր Գարիկը ճիշտ եր ասում—ինձ կարծես սիրելի յե հին տեսակետը... Ամեն անգամ, յերբ լսում եմ կանանց ազատագրման մասին, թվում է, թե Մարդոյես պիտի խլեն ինձանից, և սկսում եմ մտածել մի ամուր, անբաժանելի կապ ստեղծելու մասին: Ներկա դրությունը, յերբ կինը ազատ կերպով կարող է բաժանվել ամուսնուց—վախեցնում է ինձ՝ վորպես ապառնալիք իմ ստեղծած հարմոնյայի դեմ:

... Այս ձախորդ տրամադրության մեջ յես Գարիկի դնալուց հետո սկսեցի հարձակվել նրա «անհեթեթ» հայացքների վրա: (Այսպես է միշտ Հարմարյանը—նա հարձակվում է իր ախոյանի վրա, յերբ վերջինս բացակայում է...):

Մարդոն այժմ բացարձակ ինձ եր պաշտպանում:

— Գուրգեն, դու ուղղակի ինձ զարմացնում ես... Չե՞ վոր Գարիկը մի անփորձ տղա յե և դաղափար չունի ընտանեկան կյանքի մասին... Սրժե՞ր ուշադրություն դարձնել նրա միամիտ դատողությունների վրա: Թո՛ղ այդ փիլիսոփայությունը, արի մեր Սեդիկին քնացնենք... սա յե մեր ուրախությունը... Ես հյուրերը ուղղակի ցավ են՝ միշտ խանգարում են մեր յերջանկությունը:

Մարդն բերանում այնպես լավ հնչեց այդ յերջանկութիւնը, վոր յես ամեն ինչ մոռացա. Նորից հեռացան ամպերն ու ընկա ընտանեկան խրխինջի մթնոլորտը: Սեդիկին քնացնելուց հետո Մարդոն եքսպրոմտով ընթրիք պատրաստեց, վորը կերանք իրար անընդհատ հյուրասիրելով, ապա սկսեցինք սիրտ-սրտի զրուցել: Իսկ այնուհետև— կուզեմ բանաստեղծական ոճով պրել— «յերջանկութեան թևերով մենք սավառնեցինք դեպի յերջանկութեան աշխարհը»:

***

Առավոտը վեր կացա Թարմացած, յերջանիկ տրամադրութեան մեջ: Ինձ թվում եր, թե այնուհետև մշտապես հաստատվել և վաղուց յերազած հարմոնյան ու այլ ևս վոչ մի ամպ չի կարող մթագնել իմ յերկինքը...

Նախաճաշելուց հետո պատրաստվում եյի կայարան գնալու, յերբ յեկավ Գարիկը, հետը բերելով նամակը:

Ցես նրան ընդունեցի բարեկամաբար, ձեռքը սեղմելով ու վոչ մի թշնամանք չեյի զգում նրա դեմ: Բոլորս միասին դուրս յեկանք փողոց, վորտեղ ինձ սպասում եր կառքը: Ցերկար համբույրներ տալով Մարդոյին ու Սեդիկին, յես այնուհետև առանձնապես զգացված սկսեցի սեղմել Գարիկի ձեռքը:

Այդ բոպեյին դիմացի ամառանոցից լսվեց կանացի բարձրաձայն ծիծաղ, վորն ավելի ճիշ կարելի յեր համարել: Ծիծաղը նորից կրկնվեց, ավելի բարձրաձայն, բայց Մարդոն խնդուքն ու-շադրութեամբ զրավեց իր կողմը: Ցես նկատեցի նրա դեմքին մի զգալված կատաղութեյուն, վորը նա ամեն կերպ աշխատում եր քողարկել: Հանելով ծոցից «կապույտ» նամակը, նա մեկնեց ինձ, դեմքին չինծու ժպիտ ձևացնելով, ձեռքը կոկետաբեն շարժելով:

— Գուրգեն, վերցրու այս նամակը, քեզ պետք կգա...

Այդ մոմենտին յես մի անմեղ բան համարեցի այդ քայլը, վերջես մեր հաշտութեյան և սիրո մի նոր նվաճում, բայց այժմ կարծում եմ, վոր Մարդոն այդ արտալ դիմացի սրճարանները դաղելու համար, իրրև պատասխան նրանց ծիծաղին: Նա զրանով ասում եր— «այս անգնիմ նամակը յերևի դուք եք զրել, բայց տեսե՛ք—նա իմ ձեռքին է և յես շատ հանդիստ՝ նույնիսկ խնդա-

լով վերադարձնում եմ իմ ամուսնուն, վորը վոչ մի ուշադրություն չի դարձնում ձեր խծրծանքի վրա և շարունակում և սիրել և՛ պաշտել ինձ...»

Կառքը շարժվեց: Անցնելով ամառանոցի յերկար փողոցով, յես վերհիշեցի այն մռայլ տրամադրությունը, վորի մեջ գալիս էի քաղաքից ու ինքս ինձ հարց տվի—«Հարմարյան, ի՞նչպես յեկար և ինչպես ես գնում... յեկար կատարության սպառնալիքներով, Մարգոյին սպանելու մտադրությամբ և գնում ես այնպես խաղաղ, ասես վոչինչ չի պատահել... խոստովանիր, Հարմարյան, վոր դու ստեղծված չես տրագիքական մոմենտներ լուծելու...»

Սակայն այդ րոպեյին մեջս խոսեց հոգուս «ներքին պարտականությունը»— «Հարմարյան լռի՛ր և լռի՛ր... ասում եր ներքին ձայնը,— քո կյանքի հարմոնյան հաստատվել և և քեզ մնում և միայն պահպանել և պաշտպանել նրան...

Լռի՛ր:

***

Քաղաք վերադառնալով, յերեք որից հետո նորից նամակ ստացա նույն կապույտ ծրարով.—

«Ընկեր Հարմարյան,— պրոտ եր իմ անանուն թղթակիցը, մինչև այժմ յես այն կարծիքին եյի, թե յերջանկությունը յերկտող և լինում... վորքա՜ն միամիտ եմ յեղել... յես չգիտեյի, վոր յերեքով ավելի լավ և լինում... յերբյակ արտարուղը պղտմնեղրով...

Չափազանց ուրախ եմ այս դյուտի համար, վորի շնորհոտը դուք յեղաք... կաշխատեմ ամեն կերպ հետևել ձեր յերջանիկ արինակին...»

«Ձեր բարեկամ—
Յերեք կետ ( . . . )

«Իմ հասցեն— լուսանի վրա՝ հանդած հրաբխի մոտ...

«Հ. Գ.— Յեթե նորից գալու լինիք ամառանոց, կուզրի ակնոցներ պրեք ձեր աչքերին.— դա անհրաժեշտ և լիակատար յերջանկության համար...

Նույնը»

Կարդացի ու նորից ալեկոծվեց սիրտս, նորից առաջս բացվեց անդունդը... Յես ղդում եյի, վոր կապույտ նամակի մեջ Թույն կա, այդ պատճառով էլ առանալով հիմնարկեցա, խակուն չբացեցի ծրարը, այլ պահեցի մոտս տանը կարդալու համար:

Ֆայլում եյի սենյակում ու անդոր ցասումի ալիքները ուղարկում տարածության մեջ:

«Ո՛, Թույն ե, Թույն ե Մարդոն ամբողջովին,—ասում եյի ինքս ինձ.— ի՛նչ դևլային նենդությամբ նա կարողացավ վոչ միայն ճարպկիորեն քողարկել դավաճանությունը, այլ և ավելի սիրելի դառնալ իմ աչքում...»

Ու նորից կանչում եյի մտքումս— «սպանե՛լ, սպանե՛լ Մարդոյին... հետո ինքս ինձ... վե՛րջ տալ ամեն ինչին...»

Բայց քանի քայլում եյի, այնքան ավելի յեր ուժեղանում «հոդում պարունակությունից» յելնող մի ձայն, վորն ասում եր— «Հարմարյան, պետք ե ի նկատի առնես, վոր կարող ես սխալվել Ոթելլոյի նման և զրկվել քո Մարդոյից... Ինչո՞ւ սպանել... Չե՞ վոր հենց այդ են ցանկանում քո թշնամիները՝ նամակ զրողները— տեսնել ատրճանակը ձեռիդ... Ուզում են սպանություն, հուզիչ տեսարաններ, քո յերջանկությունը կործանելու համար... Վո՛չ, դու չպետք ե ընկնես այդ վորոգայթի մեջ. մի՞թե վայել ե Հարմարյանին ատրճանակով վճռել հարցը, այս սոցյալիստական դարում... Ի՞նչու սպանել, քանի վոր կա խաղաղ միջոց, որինակ—բաժանվել Մարդոյից...»

Բայց հենց վոր պատկերացրի այդ բաժանումը, զգացի խոթապես, վոր աչքերս պատվում են սպասվոր ամպերով: Ահա յերևակայում եյի— Մարդոն, Սեդիկն ինձ հետ չեն... Յես մենակ եմ, տխուր, վորպես մի բու... կործանվում ե իմ յերջանկությունը և յես տխուր խորհրդածում եմ— կարո՞ղ եր արդյոք դառնալ մի նոր Մարդո, վոր վերադանդնի նորից իմ հարմոնյան...

— Վո՛չ, վո՛չ, յես չեմ կարող բաժանվել Մարդոյից— ասում եմ ինքս ինձ:

Ա.յս վճռին հանդելով՝ յես արագացրի քայլերս, և վորովհետև կես գիշերից շատ եր անց, հարևանս սկսեց թխթխկացնել միջանկյալ դուռը, վորպես բողոք իմ աղմկալի քայլելու դեմ:

«Յեթե քո կինն այդպես լիներ,— ասացի մտքումս,— կտեսնեիր թե ինչպես յերկու ոչխիկ կմաշեյիր քայլելով...»

Ո՛, յերբե՛ք, յերբե՛ք, չեմ բաժանվել իմ Մարդոյից,— կրկնում եր մի ձայն իմ ներսում, յերբ յես անկողնում պառկած յերազում եյի նրա մասին:

## ՈԳՈՍՏՈՍԻ 20.

Նորից նստում եմ պաշտպամբում՝ իմ հին բազկաթոռի վրա և ննջում— անրջում եմ...

Սրտիս մեջ խաղաղություն և սիրտս... ել չի տատանվում իմ լուլլիան.— Մարդոն դարձյալ իմ անբաժան կինն է...

Նստած բազկաթոռի վրա նորից վերանում եմ մոքով դեպի այն աշխարհը, ուր վարդագույն յերազն է իշխում, ուր Մարդոն, վորպես սիրո դիցուհի՝ առաջնորդում է ինձ դեպի յերջանկության տաճարը...

Բայց հենց այդ մոտացության մոմենտին բակում կանչում է աքաղաղը, թևերը սպառնալից թափ տալիս, նրան պատասխանում է ղիլ կանչով իր ախոյանը՝ հարևան բակից, և ահա սկսվում է աքաղաղների մենամարտը— բարձր ցանկապատի նեղ արանքից, վորից Հապիլ են անցնում նրանց ղլուխները:

Նայում եմ աքաղաղներին ու նորից հարց տալիս ինքս ինձ— կարո՞ղ է լինել ներդաշնակություն— հարմոնյա— այս աշխարհում, յերբ նույնիսկ իրար հետ վոչ մի առնչություն չունեցող արարածները կատաղի կռիվ են մղում իրար դեմ...

Արդյոք թյուրիմացություն չե՞ իմ խաղաղությունը... իմ փոքրիկ հարմոնյան, վորը մի փոքրիկ նավակ է դուռ ալիքների մեջ... առագաստները պատառոտել են փոթորիկից, դեկը ճեղքված է, իսկ յես համառությամբ կառչում եմ նավակին ու յերազում փոթորիկի մեջ...

... Բայց այդ հարցին յես չեմ պատասխանում. նորից ննջում— անրջում եմ... մի քնքուշ շշարշ ե լսվում «Հոգուս պարտեզի» վրա ու պարուրում ինձ հարմոնյայի յերաժշտության...

1929

# ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Դանելյանը նոր եր վերադարձել հայրենի քաղաքը յերկարատև բացակայությունից հետո:*

*Յերեկոյան, յերբ նա նստս մտավ սրճարանը, նրան մոտեցավ բանվորի արտաքինով մի մարդ:*

*— Ներողություն, յեթե կարելի յե... ձեզ հետ ուզում եմ խոսել,— ասաց նա, չխոթվելով:*

*Դանելյանը ճանաչեց: Այդ մարդն անախորժ հիշողություններ զարթեցրեց մեջը, սակայն դժվարացավ մերժել նրան:*

*— Խնդրեմ,— ասաց նա կիսաբերան, կարծես մի ծանր պարտավանություն եր կատարում: Ու ակամա մնաց կանգնած սեղանի մոտ:*

*— Մոտքս մի քիչ յերկար ե լինելու... յեթե կարելի յե, մյուս տվնը ձեզ մոտ նստեմ...*

*Դանելյանը նստեց, ձեռքով հրավիրելով նրան նստելու դիմացի աթոռին:*

*Յեկվորը մի յերկու րոպե աչքերը ձգեց գետնին, խուսափելով Դանելյանի հայացքից: Շփոթվելուց նա կարմրել, քրտնել եր:*

*Դանելյանն աչքի տակով դիտում եր նրա դեմքը: Անցյալի համեմատ բավական փոխված եր յերկաը,— յերկար, անկանոն բեղերը կրճատվել եյին, թողնելով քթի տակ մի փոքրիկ, ոև կաոր: Թեթև, հազիվ նշմարելի կնճիռները ճակատին ու աչքերի մոտ խոհուն, կենտրոնացած արտահայտություն եյին տալիս դեմքին:*

*— Ընկեր Դանելյան, դուցե դուք ինձ մոռացել եք... յես Յերամյանն եմ, ձեր նախկին հարևանը,— ասաց նա, փորձող հայացք ձգելով Դանելյանի վրա:*

*— Այո, չեմ մոռացել,— սառը պատասխանեց Դանելյանը:*

— Ցես պիտեմ, վոր դուք լինձ վատ մարդ եք համարում են առաջվա գնալքից հետո... հենց դրա մասին էլ ուզում եմ խոսել ձեզ հետ...

Դանելյանը գլեմքը խոժոռեց: Վերջին խոսքերը նրան զարմացրին.— «Ցերևի հարբած է, թե չէ այսպես չէր սկսիլ», անցավ նրա մտքով:

— Շատ անգամ եմ ուզեցել ձեզ նամակ գրել, բայց քաշվել եմ,— չարունակեց Ցերամյանը,— հիմի վոր պատահեցի, վճռեցի անպատճառ խոսել ձեզ հետ... կարծում եմ, չեք նեղանալ... յես հաճախ հիշում եյի ձեզ... լինձ տանջում եր են միտքը, թե ընկել եմ մի մարդու աչքից, վորին հարգում եմ. յես ձեր մասին լավ բաներ եմ լսել...

— Լա՛վ, յեթե այդպես պահանջ եք զգում բացատրվելու՝ խնդրեմ, յես պատրաստ եմ լսելու,— ասաց Դանելյանը լուրջ տոնով:

Ճաշարանի սպասավորը յեկավ կանգնեց նրանց առաջ:

— Մի չիշ գարեջուր,— պատվիրեց Դանելյանը:

Ցերամյանը վառեց ծխախոտի գլանակն ու մի քանի անգամ էրար վրա ներս քաշելով ծուխը, սկսեց.

— Դուք ի հարկե, հիշում եք, են ժամանակ շատ ալեկոծված եր մեր կյանքը: Յորհրդայնացումից մի տարի առաջ ընտանիքիս հետ գաղթել եյի դյուղից քաղաք ու տեղավորվել ձեր էակի գետնահարկում: Իմ ունեցած տան տարբը մի կարպետ եր, յերկու գղգղված վերմակ ու մի պղինձ: Դուք եղ բոլորը յերևի նկատում եյիք տանդուխներից իջնելիս:

Կինս վոտի վրա հիվանդ եր, յերկու յերեխան վզին: Փոքր յերեխաս շարունակ լաց եր լինում, մոր ծիծը բերանը դնում, լմլմացնում, հետո տեսնելով, վոր մեջը կաթ չկա, բաց եր թողնում ու ավելի ճչում: Մյուսն էլ քաղցած, մի գլուխ լացակումած հաց եր ուզում:

Սիրտս մղկտում եր յես սուզ ու հիվանդի մեջ, բայց ի՞նչ անեյի, տավի տարի եր, յես էլ, դատարկ՝ մնացել եյի մոլորված: Ո՞ւմ գիմեյի.— վոչ ծանոթ ունեյի, վոչ բարեկամ, քաղաքն էլ լինձ ուզղակի վախեցնում եր իր մեծությամբ:

Մի քանի անգամ գնացի յերկաթուղու կայարան՝ մշակություն անելու, բայց տեսա, գործը քիչ եր՝ ցանկացողը շատ, միմյանց ձեռքից խլում եյին: Գնացքների ժամանակն էլ վորոշ

*չեր,— պատահում եր, վոր յերկար ապատում եյի, հետո հույսս կտրելով, վերադառնում տուն՝ դուր տեղը չտեսես մաշելով, ու յերկար ճանապարհից հոդնելով:*

*Մեկ-մեկ ել դնում եյի շուկա, բայց ենտեղ ել հապարից մի ախպամ բեռն եր ընկնում ինձ, իսկ մեծ մասամբ ժամերով կանգնում եյի, հետո մի տեղ նստում ու թուրթյունից նեղվում: Ես ու ժամանակ նապես մնում եյի, հետս կարծես քնից զարթնելով, ասում եյի ինքս ինձ— «ի՞նչ եմ նստել, մի գնամ տեսնեմ՝ յերեխաներս ի՞նչ դրության մեջ են...»*

*Բայց յերբ տուն եյի վերադառնում, լսում յերեխաներիս լացը, տեսնում կնոջս ապակոր դեմքը, սիրտս տակն ու վրա եր լինում, ու ելի ասում եյի մտքումս— «ի՞նչ եմ տուն մտել, մի դուրս գամ դես դեն ընկնեմ, կարելի յե մի բան ճարեմ...»*

*Նապես՝ վոչ մի տեղ հանգիստ չունեյի: Ամեն րոպե կարծես մեկը մտրակում եր ինձ, ու քշում, վոր գնամ ապրուստի ճար գտնեմ:*

*Ե՛հ, ծանր որեր եյին. ով քաշել և եդ որերը, նա ինձ լավ կհասկանա...*

***

*Սպասավորը բերեց գարեջուրը: Դանելյանը լցրեց բաժակները ու առաջարկեց Յերամյանին, բայց նա չնորհակալություն հայտնելով՝ մերժեց:*

*— Ի՞նչու ինձ չեյինք գիմում,— ասաց Դանելյանը. յես կարող եյի ձեզ համար գործ գտնել:*

*— Ի՞նչ ասեմ... դուք՝ վորպես ինտելիգենտ, քաղաքակրթություն եյիք բանեցնում, չեյիք խառնվում իմ «նեղքին գործերի» մեջ, չեյիք հարցնում, թե ի՞նչ դրության մեջ եմ, յես ել պյուղից նոր եյի յեկել, քաշվում եյի, մոռածելով թե՝ վոնց կլինի են «ողա մարդու» հետ խոսեմ: Եղպես իրար չեյինք մոտենում և յես մնում եյի անոգնական:*

*Տեսնում եյի չորս կողմս, ինչպես հարուստները ապրում են լուսի, քեֆերի մեջ, նկատում եյի նրանց կուշտ դեմքերը, վորոնք ինպես խեթ եյին նայում— արհամարհում եյին ինձ ու*

կատարելություն պակաս եր: Բայց դյուղից բերած իմ հասկացողությունն ինչ եր.— վոր եղ բոլորը եղպես էլ պետք է լիներ— բախտը մինին հարստություն է բերում, մեկելին՝ աղքատություն. աշխարհս եղպես յեկել է, եղպես էլ կդնա...

Տեսնում եյի՝ ինչպես որ-որի վրա թուլանում եր, հյուծվում ընտանիքս, ուզում եյի բղավել, մռնչալ, բայց ո՞ւմ վնչն եր. սուկ տարի եր, աղքատը չուներ վոր տար, հարուստն էլ՝ թևկուղ տնով մնանեյի, ուշադրություն չեր դարձնիլ...

Գաղցածությունից ու հոգսից ենպես եյի թուլացել կարծես ծանր հիվանդությունից նոր եյի վեր կացել.— դլուխս պտտվում եր ու վոտներս հաղիվ եյի քաշ տալիս:

Յերբ մի վորևե կենդանի քաղցած է լինում, նա էի կանդնում կերակուրի առաջ ու ասում— «գողությունը վատ բան է...» նա հեռանում է իր ստամոքսի հրամանին և ուղղակի ուտում է: Իսկ մարդը՝ թևկուղ քաղցած՝ հաղար ու մի բան է մտածում, ու բերանի ջուրը դնդալով անցնում է ուտելեղենի մոտով: Բայց վերջապես պակաս է մի որ, յերբ նա էլ էի կարողանում իր մեջը ճնշած կենդանու առաջն առնել: Եղ ժամանակ նա էլ գողությունը գողություն չի համարում, վոնց վեր թե՝ ես բանն իրենն է, պակաս է ու վերցնում...

Յես էլ հենց եղ որն ընկա: Յերբ անցնում եյի խանութների մոտով, տեսնում եյի մի ուտելու բան՝ խնկուն մտածում եյի գողանալու մասին... Հիշում եմ, մի անգամ մսի խանութի առաջից անցնելիս ենպես քաղցած եյի, վոր մեջս դանկություն եր գնա վաճառի դմակը թռցնել ու հենց ենպես՝ հում-հում ուտել... ինչ թաղցնեմ, յերկու անգամ հաց գողացա մի անգամ էլ մսի կտոր...

Կամաց-կամաց մխքս ամբողջովին ընկավ եղ ճամբեն ու գողությունը սկսեց յերևալ աչքիս՝ վորպես մի տավրական ապրանքի մեջից:

Սկզբում յերևակայում եյի, թե մի խոշոր գողություն կանեմ՝ մի անգամից կապահովեմ ընտանիքս, բայց հետո իմ բարձր ամպերից ու վճռեցի ավելի համեստ ծրագիր ընտրել, այսինքն՝ մեր տան հարևաններից գողանալ... Սրանց մեջ էլ բարձր ու ցածր անելով, վերջապես կանգ առա ձեզ վրա...

— Բայց մի՞թե չեյիք նկատում, վոր ներքևը, ձեր կողքին

բնակվող արհեստավորներն լինձանից շատ ավելի լավ էլին ապրում... Գիտե՞ք, վոր այն ժամանակ յես եվ շատ նեղ վիճակումն էլի...

— Ի՞նչ էլի հասկանում. լնտելիգենտը շատ անպամ քաղցած է լինում, բայց դրանից վոչինչ էլի յերևում: Տեսնում էլի՝ ամեն առավոտ մաքուր, քաղաքավարի հագնված դնում էլիք գործի, յես եվ նորից դյուղացու աչքով դասելով, ձեզ համարում էլի հարուստ, մանավանդ, վոր լինձ հետաքրքրողը շորերն էլին:

Սասենք թեկուզ լսանայի ձեր դրությունը, գարձյալ կասեմ՝ քանի վոր դուք լինձանից լավ էլիք ապրում, իմ պակասավոր աչքը պետք է ձեզ վրա ծուռ նայեր.— մարդիկ տեսնում են կյանքի անհավասարությունը եւ դրա համեմատ էլ չարժվում են նրանց մաքերը:

Ցերը արդեն վճռեցի ձեղանից դողանալ, սկսեցի բակից դուռ տալ, ուսումնասիրել ձեր բնակարանը: Ի՞նչ յերկարացնեմ, մի պիշեր էլ, յերբ դուք Թատրոնումն էլիք, յես նախորոք պատրաստած բանալիով բացի ձեր բնակարանի դուռն ու տարա շորերը...

Դուրս գալով, էլ չմտա իմ բնակարանը, այլ ուղղակի քայլեցի դեպի մոտակա դյուղը: Գնում էլի ու չարունակ յերեակայում, Թե հետևիցս մարդիկ են վազում:

Փոքր ինչ հանդարտվեցի, յերբ արդեն քաղաքից դուրս էլի: Ճանապարհից չեղվեցի, մտա մի ձորակ ու պառկեցի, դլխիս տակ դնելով իմ բեռը:

Ցերկար ժամանակ քունս չեր տանում: Նայում էլի աստղերին ու մտածում, վոր իմ կյանքն արդեն ուրիշ հունի մեջ ընկավ, վոր սրանից հետո հալածված մարդու նման չարունակ պիտի մի տեղից մյուսն անցնեմ, Թաղնվեմ, կասկածեմ ամեն մի աչքի, վոր ինձ վրա կընկնի:

Մյայն շատ ուշ՝ մի քանի րոպե յես քնել էլի ու յերազով ընկել: Տեսնում էլի յերազում, իբր Թե ինձ հրջապատել է մի ահագին բազմություն. ամենքը յերեսները ծամածռած, բերանբաց ճղճղում էլին, ցույց տալով ինձ իմ դողացած սպիտակեղենի կտորները...

Զարթնեցի՝ ահով բռնված ու ականջ դրի: Հեռվից չների հաջոց եր դալիս, և ճամբորդների ձայները: Նկատելով, վոր լուսնալուն մոտ է, վեր կացա ու չարունակեցի ճամբես:

***

Լուսանալուն պես Թաղնվեցի մոտակա թփերի տակ ու սկսեցի կարդալ բերել «ապրանքս», վորպեսզի գնողները դլխի չընկնեին, թե զողացած է, ապա դործը վերջացնելուց հետո գնացի գյուղն ու ներս մտա մի հարուստ գյուղացու բակը: Դեռ նոր էի բացել ապրանքս՝ կանայք վրա թափվեցին դլխիս: Մի ժամ չանցած՝ վերջացրի առևտուրս, մոտս պահելով մխայն յերկու կտոր սպիտակեղեն՝ մտադրվելով վոխանակել մթերքների հետ:

Բոլորը զարմանում էին, վոր յես վաղով եմ ծախում, մինչդեռ քաղաքից յեկող վաճառականները մթերքների հետ էին վոխանակում: Գյուղացիների տեսակետից իմ արածն անմտություն էր, բայց նրանք չդիտեին, վոր յես ստիպված եմ եղել անում, դողությունս ծածկելու համար:

Առևտուրս վերջացնելուց հետո սկսի վերադառնալ քաղաք,— չարունակեց Յերամյանը,— բայց մտածելիցի, վոր ցերեկով կարող եմ նկատվել, ուստի վճռեցի սպասել մթանը:

Նորից դուրս յեկա գյուղից ու թփերի տակ պառկելով, անցկացրի որս: Փորս կշտացնելով հաց ու պանրով ու աղբյուրի ջուրը վրան խմելով, սկսեցի մտածել ապագա «գործունեության» մասին: Զարմանալի անհոդություն յեկավ մեջս դեպի իմ վիճակը. շատ հանդիստ էի մտածում այն մասին, թե ինձ կհետևեն, կբռնեն. և անտարբեր էի դեպի ընտանիքս: Հենց առևտուրն ինձ թև տվեց, վոդևորեց: Թղթախաղում առաջին անգամ տարած մարդու նման նորից ճղտում էի դեպի խաղը՝ դողությունը:

Ցես ասում էի ինքս ինձ— «արանով ի՞նչ պիտի դառնա... Թե դողություն եմ անում, կարդին անեմ...»

Ցեվ ահա դլխումս պատրաստվեց դողության նոր ծրագիրը...

Ցերեկոյան դեմ գնացի նորից գյուղը, ներս մտա են հարուստ տունը, վորտեղ ծախել էի ապրանքս: Ծոցումս պահած յերկու կտոր սպիտակեղենը ընծայեցի տանտիրոջ և խնդրեցի, վոր թողնեն ինձ դիշերելու իրենց տանը, պատճառաբանելով, թե մոտակա գյուղում գործ չատ ունեյի, ուշացել եմ, իսկ մթնով չեմ ուզում գնալ, վորովհետև կարող են թալանել:

Տան տերն ուրախությամբ համաձայնվեց: Ինձ տեղավորեցին յերկրորդ հարկի սենյակում, վորը մաքուր պարզարված

պահում եյին «ապիզ» հյուրերի համար: Իմ ծրագիրն էլ հենց եղ եր, վոր գիշերն անցկացնեմ եղ սենյակում ու «գործս տեսնեմ»:

Բարձրացա վերև ու աչք ածելով չորս կողմը, մանրամասն դիտեցի պահարաններն ու պահեցի, ապասելով, վոր ներքևը լորը քուն մտնեն:

Յերբ համոզվեցի, վոր ներքևում էլ ձեն— ձուն չկա, վեր կացա, բոլիկ վոտներով մոտեցա պահարաններին ու մեծ զգուշությամբ բաց արի, հանեցի նրանց մեջի կտուցի հատուտաներից մինչ վոր ազատեր եր ու պարկս լավ լցնելով կամաց ինչա ներքև:

Տան տիրոջ շունը բլթաց կարճ հաչոցով ու սկզբում տեղից չարժվեց, բայց հենց վոր գուրս յեկա բակից, վազեց հետևիցս: Նրա ձայնի վրա գուրս թափվեցին վազգի մյուս շներն ու հարձակվեցին վրաս: Յես արդեն լինձ կորած եյի հաշվում, ապասում եյի, վոր գյուղացիք կղարթնեն, կրռնեն լինձ, բայց եղպես չեղավ: Միայն մի գյուղացի գուրս յեկավ չապկանց, մեջքը քորելով, «աշուն կո՛րի», բղավեց ու նորից տուն մտավ:

Զեռքիս վայրում մի կերպ պահելով շներին՝ քրտնքի մեջ կորած, վերջապես հասա գյուղի ծայրը ու նստեցի մի տեղ հանգըստանալու: Ընպես եյի ուրախ, հենց իմանաս նոր եյի մահից ազատվել:

Ուշ գիշերին հասա քաղաք: Թեպետ վճռել եյի տուն չգնալ, բայց հոգնած եյի, ուզեցա մի յերկու ժամ հանգստանալ, հետո ճամբա ընկնել:

Դուռը թխկացրի: Կինս աչքերը տրորելով, յեկավ բացեց:

— Դո՞ւ ես... վո՞րտեղ եյիր... ես ի՞նչ պարկ ե,— ասաց նա հագիվ կարողանալով աչքերը բացել:

— Շորերեղեն ա, պիտի ծախեմ.

— Ո՞վ ե տվել քեզ շորերեղեն,— զրպռված ասաց կինս:

— Սո՛ւս, կամաց խոսիր... մեկի հետ ընկերացել եմ...

— Հագիր ասա դուրացել ե՛մ... հիմար մարդ չկա, վոր քեզ շորեր տա...

— Ի՞նչ ես ասել— պակաս խոսում... ի՞նչ, նամուսս ծախել ե՞մ, վոր գողությամբ ապրեմ...

Զարմանաք՝ կյանքում եսպես չաստ ե պատահում. ով անցնում ե բոլոր խաղերից, նա ամենից բարձր ե խոսում նամուսից ու ազնվությունից...

Եսպես հարճակվելով կարողացա կնոջս համոզել, բայց ա՛րի առա, վոր կես պիշերին նրա կանոցի հետաքրքրությունը բռնեց— ուզում եր պարկը բաց անի, իրեն համար չորեր ընտրի:

Մի կերպ հետ կացրի, խոստանալով առավոտը ընծայել մի ղչեռա, բայց դեռ լուսը չբացված՝ պարկը վերցրի ու դուրս յե-. կա ենպես զգուշ, վոր կինս չնկատեց:

Գնացի դեպի յերկաթուղու կայարանը: Գնում եյի ու ինքս ինձ նախատում—ի՞նչ հմարություն եր տուն գնալը, չե՞ վոր նոր եյի եղռնել դողություն արել և կասկածի տակ եյի... և հետո, մի՞թե չպետք և առաջուց իմանայի, վոր կինս «անհուսալի տարր» և այս դործում...

Չեմ յերկարացնի պատմությունս,— յնկա կայարան, նսեցի ապրանքատար վադոնն ու ինչա յերրորդ կայարանում:

Գնացի մոտակա դյուղը, ապրանքս փոխանակեցի մթերքների ու հետևյալ գիշերը վերադարձա քաղաք:

Յերբ կինս տեսավ մթերքները, ուրախությունից ամեն ինչ մոռացավ:

— Ես վո՞րտեղից ա,— հարցրեց,— բայց յերևում եր՝ շատ ել խորը չեր հետաքրքրվում, թե ի՞նչ աղբյուրից և: Զարմանում եյի, թե ինչպես նա՝ չորերի պարկը տեսնելով հերսոտեց, իսկ մթերքների պարկի առաջ ուրախանում, հրճվում եր:

Իսկույն իր ընթրիքները հավաքեց, իրիկնահաց պատրաստեց: Մեծ յերևաս՝ կերակուրի հոտն առնելով, վեր թռավ ու հաց ու պանիրը, յուղը իրար խառնեց: Փնկոտ աչքերով կանչնել եր առաջս ու խոր—խոր կծոտելով դյուղական հացը, բերանն ենքան եր լցնում, վոր դժվարությամբ եր ծամում:

Նա մոռացավ ինձ՝ ուրախության արցունքներն աչքերին. ուզում եր ինչ վոր ասի, բայց բերանը լիքն եր, չեր կարողանում խոսել:

Ես համբուրում եյի նրան, ուրախանում, վոր ապրեցնում եմ, կյանք եմ տալիս նրան...

Սրցունքներս թաղցնելով, ասում եյի մտքումս.

— Վոր իմանաս, ո՞ւմ չորերն ես ուտում...

***

Ցերամյանը բոլեյասլես կանդ առավ:

— Ամենք դարնջուրը,— առաջարկեց Դանելյանն ու լռքը խմեց: Ցերամյանը վերցրեց բաժակը. ծխում եր, ապահովթյամբ: Սպա վերջացնելով, շարունակեց.

— Ցերկու որ եր, տանից չեյի դուրս գալիս. կնոջս էլ պատվիրել եյի, վոր մթերքները ծածուկ պահի, ասելով, թե մելիցյան կարող ե գրավել: Զգիտեմ, նա եղ բոլեյին հավատացած եր, թե իմ «հալալ» աշխատանքով եմ ձևաք բերել այդ բոլորը, թե դուցե ճևացնում եր, վոր հավատում ե: Համենայն դեպս նա շատ հանդիստ եր վայելում, իսկ յես վոչ ուտելն եյի իմանում, վոչ խմելը. ամեն մի չիլիմոցից, ամեն մի վոտնաձայնից վեր եյի թռչում, իսկույն մտածում— «ես ա գալիս են ինձ տանեն...»

Ցես նկատում եյի, վոր գալ եմ դնում— գալիս եք, քրեյական միլիցիա եք բերում, ցույց տալիս ու մեր կողմը խեթ նայում: Սատճ ե գող— սիրտը գող: Ցես վախենում եյի, վորովհետև յենթադրում եյի բոլոր նշաններով, վոր գող պիտի ինձ մատնանշեյիք, վորպես գողի:

Ցերեք որ տանը թաղնվելուց հետո էլ չհամբերեցի, գուրս յեկա շուկա, իբր թե մշակություն անելու: Մի քիչ պտտվեցի, հետո ուզում եյի մորդ առնել յերեխաներիս համար, մեկ էլ հանկարծ մի մարդ պինդ բռնեց ինձ հետևից:

— Ա՛յ, սա յա,— բղավեց նա ու իր ուժեղ ձեռներով յերկաթի ողակի նման պինդ սեղմեց ինձ:

Փորձեցի ազատվել, բայց իղո՛ւր. սկսեցի բղավել, ոգնություն կանչել, բայց իսկույն վրա հասավ մյուս դյուղացին ու բռունցքով ննջես խփեց գլխիս, վոր քիչ մնաց ուշքս կորցնեմ: Ախողն են դյուղացին եր, վորի տանը խայտառակ նամարդություն եյի արել...

— Ա՛յ անաղուհաց չուն,— ասում եր նա կատաղած ու խփում, սիրտը հովացնում:

Աղմուկի վրա յեկավ վոստիկանը և, ուշադրություն չդարձնելով իմ հնարովի բացատրություններին վրա, տարավ ինձ յերկու դյուղացիների հետ...

Առաջին կալանքը թևսես շատ վախեցրեց ինձ, բայց բանտում նստած «կազմակերպված» բանդիտներն ինձ սովորեցրին

արհամարհել վտանգն ու դատարանում պաշտպանվելու միջոցները: Մի ամիս չանցած՝ բանտում տեղ չլինելու պատճառով ինձ արձակեցին ժամանակից առաջ: Դատն ել ձգձգվեց, վորովհետև դյուլացին չներկայացավ նշանակված որը: Եվ միջոցին վրա հասավ քաղաքացիական պատերազմը, և ինձ մոռացան...

Ցնկալ խորհրդային իշխանությունը, բայց յես նրան հանդիպեցի վոչ երբև աշխատավոր. յես արդեն սովորել եյի ուրիշի հաշվին ապրելու— «հեշտ ապրելու» միջոցը, և մտադիր չեյի թողնելու իմ արհեստը: Ինձ առաջարկում եյին աշխատանք, պաշտոն, բայց յես չեյի վերցնում: Իմ տեսակետից յես մինչև անդամ ուրախանում եյի, վոր «խառը ժամանակ ե» կարելի յե «դրծ տեսնել» այսինքն գողանալ, թալանել, քանի վոր նոր կառավարությունը դեռ խորը չի դնացել... մեկ-մեկ գնում եյի միտինգ, լսում եյի ճառերը, բայց նոր խոսքերը ոգեշնչում եյի ինձ համար՝ ծռում եյի դեպի իմ կողմը: Շատ կարճ եր իմ դատողությունը.— յես մտածում եյի.— բոլշեվիկները լավ են անում, վոր հարուստներից խլում են, աղքատներին տալիս, յես նրանց վերջնական նպատակի խորքերը չեյի մանում, այլ ասում եյի ինքս ինձ,— յես կվերցնեմ ունեցողներից իմ մասը, թող մնացած մարդիկ էլ իրենց մասը վերցնեն...

Ահա այդ ժամանակ եր, վոր յես կապվեցի գողերի խմբի հետ: Մենք մի գիշերում կողոպտեցինք հինգ տուն: Սկզբում ուրախ եյինք, կարծելով թե լավ «պարտակեցինք» բայց մի շաբաթ անց տուտը բացվեց, յես էլ՝ մյուսների հետ ընկա խորհրդային դատարանի ձեռքը...

Թե ինչպես ինձ դատեցին ու դատապարտեցին, չեմ պատմում.— իմ նպատակն եդ չի. կասեմ միայն, վոր սկզբում վճռել եյի ուրանալ հանցանքս, բայց քննչի մի յերկու հարցերից հետո չփոթվեցի ու ամեն ինչ խոստովանեցի...

Դատարանը վճռեց ուղղիչ տուն՝ յերկու տարով...

***

Ուղղիչ տունը... մինչև կյանքիս վերջը չեմ մոռանա ուղղիչ տունը...

Հիշում եմ, ինչպես սրտակոտոր գնում եյի ենտեղ, ինչ ծանր մաքերով. ինձ թվում եր, թե գնում եմ նորից իմ առաջվա պա-

ժան բանտը, վրի պատկերը տպավորվել եր մեջս մի քանի ամիս առաջ: Ու այդ մռայլ հիշողությունը հալածում եր ինձ առաջին օրերը: Ինձ ճնշում եր և այն միտքը, թե ընտանիքս, մնալով անոգնական՝ սովամահ կլինի, չես ել դուրս ընկնելով սովորական մարդկանց շարքերից, ո՞վ պիտե թե ինչ վիճակի մեջ կընկնեմ,— կզառնամ կենդանի մի դիակ, կկորչեմ...

Անցավ մի շաբաթ: Նամակ առացա կնոջիցս. դրում եր, թե կին բաժնի ոգնությամբ յերեխաներին կցել և մտուրին, ու ինքը դործ մանել, ու հետո ել դրպիտություն և սովորում.. իմ մասին ել դրել եր.— հուցս ունեմ, վոր աշխատանքով կջնջես քո հանցանքը...

Հետզհետե սկսեցի ուշքի դալ ու հասկանալ չարս կողմիս կյանքը. ու տարտրինակ դարմանքի մեջ ընկա: Տեսնում եյի— հետս ենպես են վարվում, կարծես խելի դողություն չեմ արել, այլ մի փոքրիկ սխալ եմ դործել ու պիտի ուղղեմ. տեսնում եյի պիր, արհետ են սովորեցնում, ու հարց եյի տալիս ինքս ինձ—բա ո՞ւր և պատիժը... Առաջի տրիբին նուչնիակ մտքովս անցավ, թե սկզբից եսպես քաղցր են վարվում, վոր չխրտնենք, իսկ հետո՝ ինենք դիտեն, թե ի՞նչ կանեն: Բայց անցավ ժամանակը, և յես տեսա, վոր այս բոլորը, վոչ թյուրիմացություն և, վոչ սարքավի բան, այլ իրականություն, վոր հին բանտը այլես չկա, ու յես ընկել եմ մի անողոքելի վայր, մի տարտրինակ դպրոց...

Մի թարմություն, կենդանություն յեկավ մեջս յերբ յես ընկա ընդհանուր հոսանքի մեջ: Սկսեցի հաճախել դրպիտության դասերը մի առանձին յեռանդով. սիրահարն այնպես չի դնում իր սիրուհու մոտ, ինչպես հրճվանքով յես դնում եյի դասերին, ժդրվիներին, դասախոսություններին, ուշքս միտքս տալով նրանց...

Ցերեկը չեմ մոռանա ուղիչ ասն պատին կպցրած մի պատկեր. նրա վրա նկարած եյին բանվորն ու դյուղացին, վորոնք ձեռները մեկնած դուրս եյին տալիս մի լուսավոր չենք: Պատկերի տակը խոշոր տառերով գրված եր.

— Աշխատավոր, ուսումորի՛ր միտքդ, վոր ինքդ կառավարես քո առեղծած պետությունը...

Եվ պատկերը կարող և վիպել, թե ի՞նչպես որ–որի վրա յես աճում եյի, միտքս բացում: Շատ անգամ եմ կանդնել նրա առաջ,

նայել տառերին, ուրիշներին խնդրել, վոր կարդան: Բայց մի որ ել կատարվեց իմ հրաշքը— յես ինքս կարդացի են անմոռանալի բառերը...

Եղ որվանից, կարող եմ ասել, յես սկսեցի ժամերով մեծանալ. դիշեր-ցերեկ պրպտում էյի գրքերի մեջ: Հետզհետե աչքերս բացվեցին, ու սկսեցի հասկանալ, թե ի՞նչ և ասում ես մեր նոր աշխարհը, ու ընդմիշտ ընկերացա նրան...

Բայց մի բան տանջում եր ինձ՝ իմ անցյալը: Ամեն անգամ, յերբ հիշում էյի իմ անցյալը, եղ բոլշևիկներին տեսնում էյի ձեր դեմքը, և թվում եր, դուք չեյիք ներում ինձ... Թվում եր, թե չեմ կարող ազատվել անցյալի արատից...

Յես ասում էյի մտքումս՝ մինչև չտեսնեմ նրան՝ այսինքն ձեզ, մինչև չլսեմ նրա ընկերական խոսքը՝ չեմ կարող հանդիսա լինել, չեմ կարող ընդել այն սև բիծը...

... Հիշում եմ վերջին որը... յեկա կանդնեցի են պատիների առաջ. ու խոսք տվի՝ սկսել նոր կյանք, կռվել աշխատանքի ու ամենից առաջ ներկայանալ ձեզ, բայց դուք քաղաքում չեյիք...

Ուղղիչ տանից դուրս գալուց հետո յես մտա դործարան և բռնեցի նոր կյանքի ճամբան: Յես միշտ վնտռում էյի ձեզ ու վերջապես գտա...

... Ահա յոթ տարվա իմ կյանքի պատմությունը յես դնում եմ ձեր առաջ ու սպասում եմ ձեր ընկերական դատաստանին...

Դանելյանը բոլշեյաչափ մնաց լուռ: Նա պտում եր իրեն ընկճված՝ խաղը տանուլ տված մարդու նման: Ապա սթափվելով, նա ասաց.

— Դուք յեկել եք իմ դատաստանի առաջ, վորպեսզի ասեք, թե ահա՝ այն մարդը, վորը գող եր, դարձել և ոչտակար աշխատավոր, լծվել և սոցիալիստական, շինարարության մեծ գործին: Յես վոչնչանում եմ ձեր վերածնությունը. դա ինձ համար ամենամեծ ուրախությունն և... ավելին կասեմ— յես վոչ միայն ուրախանում եմ և մոռանում անցյալը, այլև դատապարտում եմ ինքս ինձ այդ անցյալի համար, թե ի՞նչու յես չեմ կենտրոնացրել ուշադրությունս ձեր վրա: Ցերբ յես գիմում եյի քրեական բաժնին ու յենթադրում, թե ձեզ՝ իբրև գող կալանքի կյենթարկեն, յես չեյի խորանում այն հարցի մեջ, թե ի՞նչը ձեզ դրդեց գնալ այդ ճանապարհը... Այդպիսով՝ մենք փոխադարձաբար

ՄԵՂԱՎՈՐ ԵՆՔ ԻՐԱՐ ԱՌԱՋ. ՄՎԻ՛Ք ԻՆՁ ՁԵՌՔԸ. ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԱՆՑՅԱԼԸ ՀԱՄԱՐԵՆՔ ՉՆՉՎԱԾ...

Ու սեղանի վրայից նա պինդ սեղմեց Յերամյանի ձեռքը: Ապա բաժակը լցնելով, շարունակեց.

— Իմ ենք ձեր կենացը.— այժմ, ղիտեմ, չեք մերժիլ. ձեր վերածնունդը մեր ամենամեծ հաղթություններից մեկն է:

## Լ Ո Խ Յ Ս Ե Ր Ը

*Ամեն յերեկո, յերբ խաւարը սև քուլաներով սփռւում և ճորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պայծառ ու զվարթ չարվում են լուսները: Շարվում են էլեկտրական լուսներն ու ժպտում ուրախ ցոլքերով ասես կանչում են նայողներին դեպի ժամանակավոր շենքերը, ուր մինչ քնելը լսվում և բանվորների խոսք ու պրույցը, ծիծաղն ու յերաժշտությունը:*

*Բայց ահա հետզհետե լռում են ձայները բանվորական տներում, ու համատարած լռության մեջ սկսում և իշխել դետի վերացը, կարծես դիշերները՝ ոգտվելով խաւարից, դետը թագուն վարարում է:*

*Ցերեկն այդ միալար համերգը խանգարում և յերկաթուղու շոգեկառքի անհանգիստ սուլոցը, վորը կրկնվում և ճորում արձագանքելով ու հետզհետե հանդչում: Ցերեկն էլ մի մոլոր քամի և գալիս ճորն ի վեր, թեթև սուլում և ու պատեպատ ընկած ճամբա յե վնտռում իր համար:*

*Իսկ ճորի յեզրերին, հանդիպակ ժայռերի վրա ճգվում են, պատկում հսկա սովերները, նայում չարաշուք աչքերով ներքևի լուսներին ու մեղամաղձ հոգով սկանչ դնում դետի հին, միալար վերացին:*

*Գիշերվա այս հանգստյան ժամերին տոննելներում անընդհատ յեռում և աշխատանքը: Այնտեղ, լեռան ներսը, ինչ վոր խորհրդավոր մարդիկ, իրենց լարված մկանները միացրած մեքենաներին, համատորեն պատռում են ժայռի վրձրծքը, ուղի յեն բանում ջրի համար:*

*Գիշերվա այս ժամերին ճորալանջի կածաններով լուսներ են շարժվում, յերբեմն խումբ-խումբ, յերբեմն, զատ-զատ: Տոննելի բանվորներն են դրանք, վոր վերջացրած իրենց հերթը՝ վերադառնում են մոտակա-դյուղերը հանգստանալու: Նրանք բոլորը լապտերներ ունեն ձեռներին՝ վառնդավոր նեղ կածանները լու-*

ասլորելու համար: Ծորհրդավոր են թախուռող այդ լույները, նրանք մերթ ծածկվում են ժայռերի հետևում, մերթ նորից հայտնվում: Ու թվում է հետևից, թե մարդիկ չեն շարժվողները, այլ լույսերն իրենք են թռվռում հսկա լուսատուների նման— ոճապատում կածանների վրայով:

***

Այս դիշեր Ակոբն էլ լապտերը ձեռքին բարձրանում է ճոթամի կածանով: Նա մենակ է. ինչ վոր գործով ուշացել և հետ մնացել ընկերներից:

Ծանր է ճամբան,— խորշ ու թորշ, Ակոբի վոտները դիպչում են թափված քարերին, ընկնում են ջրի ու ցեխի մեջ, դեմ ընկնում ժայռերին:

Ծանր է վերելքը, բայց նա սովոր է, չի նկատում: Նա քայլում է, մտածում որվա դեպքերի շուրջը, ու այս ու այն թվիլ, ժայռի նշանով սովոր աչքերով հաշվում է իր անցած տարածությունը: Յերբեմն նա կանգ է առնում շունչը հետ բերում, նայում ներքևի լույսերին: Ու մի րոպեներին մի արտասովոր ուրախություն է գալիս Ակոբի մեջ, կարծես մի նոր, խանդավառ աշխարհ է այնտեղ, ուր ընկնողը մոռանում եր իր անճնականը, իր առորյան:

Բազմից է յեկել Ակոբը, յեկել է այնպիսի յեռանդով, ասես մի յերկու որում ուզում է վերջացնել ամբողջ հիդրոկայանը: Տոննելի աշխատանքից հետո հանգստյան ժամերին էլ նա դյուղում կոլխոզին է լծվում ու իր թափով վարակում բոլորին:

Կանգնում է Ակոբը ճամբին շունչ առնում, նայում ներքևի լուսաչխարհին. մտածում է՝ ահա կանցնի մի յերկու տարի, հիդրոկայանը կյանք կտա նոր գործարաններին, իսկ այնտեղ՝ ձորի լանջին, ժայռի վրա կբարձրանա Լենինի հսկա արձանը, ու լույսերով վողողված աչքերը կդարձնի դեպի հեռուները...

Ու այդ ժամանակ Ակոբը՝ նայելով այդ բոլորին, կզգա, վոր ծանր աշխատանքի որերից միայն մի մեծ, քաղցր հիշողություն է մնացել...

Յերբ Ակոբը մոտեցավ ապրյուրի ժայռին, հանկարծ ինչ վոր չիլթոց ընկավ ականջը,— կարծես մեկը կածանի մի կողմից մյուսն անցավ, հետևից չարժելով մանր քարերը: Նա կանգ առավ

ականջ դրեց: Լուռ եր չորս կողմը. ներքևից լսվում եր միայն գետի վշշոցը:

«Գուցե գայլ եր, կամ թափառական շուն», անցավ նրա մտքով. բայց հսկույն նրան ցնցեց մի սարսիչ յենթադրություն.— «Իսկ յեթե թշնամիներից՝ դյուղի կուլակներից ե՞ր... չե՞ վոր ամենոր նրանք սպառնում են կոլխոզի պատճառով...»:

Նա չարժվեց առաջ դանդաղ, ղեռւյշ քայլերով. մտածում եր, թե ի՞նչպես պիտի անցնեն պաշտպանվի հարձակման դեպքում: Բայց մինչ այդ մտածելը հանկարծ յետևից դուրս թափվեցին յերկու հոգի ու հարձակվեցին նրա վրա: Պայման եյին դրել— լուռ մնալ վոր չճանաչվեն, բայց մեկը նրանցից չհամբերեց, կատաղած ձայն տվեց:

— Ա՛յ յձա քու յեկած ճամբեն...

Մի ակնթարթում Ակոբը հետ դարձավ, նկատեց խանչալի վայրը, բայց նույն վայրկյանին մյուս հարձակվողը վայրի հարվածով, փշրեց նրա լապտերը: Ու սկսվեց կռիվը մթության մեջ: Ակոբը վրա ընկավ, ձեռքերն արյունոտելով բռնեց մեկի խանչալից, ու ճղնում եր խլել նրա ձեռքից, այդ ժամանակ մյուս ընկերը՝ մեկ մեկու վրա խփում եր յետևից խանչալի բերանով: Յերբ Ակոբը մի ուժեղ հարվածով ղլորեց գետին իր դիմացինին, հսկույն յերեսը դարձրեց դեպի մյուս ախոյանը, բայց վերջինս, նկատելով իր ընկերոջ անկումը, թողեց ու փախավ:

Ակոբը մի վոքր առաջ անցավ՝ ականջը ձայնի պահած, ապա կանգ առավ մի քանի րոպե, վոր թվաց մի յերկար ժամ: Ձայն— ծպտուն չկար: Վերջապես համոզվելով, վոր վտանգ չկա, նա շարունակեց իր ճամբեն: Հանկարծ վոտքի տակը զրնգացին ապակու կտորներ: Նա խորը թախծով կանգնեց իր կոտրած լապտերի մոտ, ասես հրաժեշտ եր տալիս մեռած ընկերոջ, ու վերցնելով լապտերի յերկաթե կմախքը, առաջ անցավ:

Հազիվ մի քանի քայլ արած՝ նա ղղաց, վոր արյունահոսությունն ուժեղանում է: Վերքերը մժմժում եյին. արյունը ծծվում, սառչում եր շապիկի մեջ: Նստեց մի քարի վրա, հանեց շորերն ու պատառոտելով շապիկը, մի կերպ կապկպեց վերքերը: Յերբ վեր կացավ տեղից, ղլուխը պտտվում եր, թուլացած մարմինը հրաժարվում եր շարժվելուց: Ծարխափելով մթնում, շարունակ դեմ ընկնելով, քարերին թփերին՝ նա յերկար չարչարանքից հետո ուժասպառ տուն հասավ:

***

Մի փոքրիկ, գյուղական տուն եր Ակոբի կացարանը.— առջևը սրահ, ներսը յերկու սենյակ— մխոտած առատաղով: Մի սենյակը լուսավորված եր հասարակ լամպի պղտոր, աղոտ լույսով:

Ակոբը թխկացրեց դուռը: Ներսից մեկը չտապով մոտեցավ ու բացեց:

— Ես ինչի՞ ուշացար, Ակոբ.

— Գործ ունեյի,— յեղացա.— ասաց Ակոբը նվազած ձայնով:

Մարդոն եր, իր նշանածը: Նա առաջ ընկավ, վառեց լամպը Ակոբի սենյակում:

Հանկարծ լույսի մեջ նկատելով Ակոբի ապրշնած դեմքը, արյունոտ, կապկպած ձեռքերը, Մարդոն մնաց սարսափած:

— Ի՞նչ ե պատահել Ակոբ,— հարցրեց նա ընչասպառ, հազիվ կարողանալով արտասանել խոսքերը:

— Վոչինչ:

Չե՛ Ակոբ, մի՛ ծածկիլ,—ասաց Մարդոն լացակումած, դողդողուն ձայնով:

Ակոբը նայեց Մարդոյին դեմքին ու ղպաց, վոր այդ սիրող, թափանցող հայացքից չի կարող ծածկել յեղելությունը:

— Մի վախիլ, Մարդո... ճամբին վեր ընկա...

Մարդոն սկսեց հեկեկալ ու ընկավ Ակոբի կրծքին:

— Մարդո, ասում եմ մի վախիլ, եղուց ելի գործի կղնամ:

Բայց Մարդոն չարունակում եր իր լացը:

Աղմուկից զարթնեց մյուս սենյակում Մարդոյի մայրը. նա ներս յեկավ ու տեսնելով յերկուսին գրկախառնված՝ ուզեց ասել— «աղչի, բա ամոթ չի՞...» բայց սիրտ չարավ ու մնաց ասաց.

— Մարդո, դնա քնի, յես մոխիկ կանեմ Ակոբին:

— Ել ի՞նչ քնեմ, մի տես ե՛, Ակոբն արյունալվա յե ելել...

— Վա՛յ, աղչի, ի՞նչ ես ասում...

— Վոչինչ, մայրիկ, ուշ մի դարճնի, բան չկա,— հանդըստացնում եր Ակոբը:

Մայրը մոտեցավ Ակոբին, տնտղեց վերավոր տեղերը, ու ծնկները վերհատելով, մնաց շշկլած: Հետո հիշելով, վոր մի բան պիտի անել՝ դնաց չտապով, խարխափելով, դես դեն դիպչելով կրակ վառեց, ջուր դրեց՝ վերքերը լվանալու համար:

Ասպա զարթեցրեց իր տղային, Մարգոյի վոքր յեղբորը, ու մի մեծ մահակ տալով ձեռքը՝ չներից պաշտպանվելու համար, ուղարկեց բուժակի հետևից:

Մինչդեռ մայրը՝ ուշքը կորցրած, վախտում եր կրակի շուրջը, ատեպ-ատեպ լինքն իրեն խոսելով, Մարգոն ձգեց թախտի վրա Ակոբի անկողինը, հետո նստեց կողքին ու քնքշորեն շոյում եր նրա ձեռքերը ու նայում աչքերին:

Մարգոյի յեղբայրը ներս մտավ, դուռը շրխկալեն բացեց ու քլթը թևքով սրբելով հայտնեց, վոր բուժակը տանը չի,— նրան չտապ կանչել եյին հարևան գյուղը:

Մարգոյի սիրտը ճմլվեց այս լուրից: Դժբախտ պատահարից ճնշված՝ նա մի նոր աղետ եր համարում այս գուգադիպությունը: Նա ոդնեց մորը, լվացավ տաք ջրով Ակոբի վերքերը, կապեց մաքուր վալաններով ու պառկեցրեց անկողնում, չկարողանալով գսպել իր արցունքները:

Նա շարունակ պատվում եր Ակոբի շուրջը,— մեկ վերմակն եր ուղղում, մեկ բարձը. նայում եր աչքերին, ականջ դնում շնչառությանը: Ակոբը պառկած եր կխաբեուն. նա կսկծում եր վերքերի ցավից, ու խոժոռած դեմքի վրա արտահայտում մի գսպված գայրույթ. խիտ, սև հոնքերը մոտեցել եյին իրար, կնճռել ճակատը: Ցերեկն նա ցնցվում եր, բռունցքները սղմում, և բացելով աչքերը, զարմացած նայում մոտը նստած Մարգոյին: Նայում եր ու հանգստանում մղձավանջից:

Ցերբ Ակոբը յերկրորդ անգամ զարթնեց, Մարգոն խոնարհվեց նրա դեմքի վրա:

— Ակոբ, ուղիղն ասա, ո՞վ եր քեզ խփողը... դու ասում ես— վեր ընկա... եղպես չի յերևում...

— Մարգո, քեզանից ի՞նչ թաղցնեմ— լինձ վրա հարձակվեցին յերկու հոգի:

— Ո՞վքեր եյին:

— Մթնում չիմացա՝ յերեսները բաչլուղով ծածկել եյին, միայն մեկի ձենը Սարոյենց Մկիչին նման տվեց: Ասենք դե ո՞վքեր պետք և լիներյին— մեր գյուղի կուլակները, մեր կոլխոզի թշնամիները... բայց վոչինչ, վրեժը կգա իր ժամանակ...

— Չե, Ակոբ, եդ ավազակների հետ գլուխ մի՛ դնիլ, կտան կսպանեն...

— Ձեռ նրանց դեմ ոտք ու հրացանով չեմ դուրս գալ՝ ուրիշ ղենքով կկռվեմ,— նրանց աչքի վուշը մեր կոլխոզն ա. յես եք հենց դրան դուռ կտամ. դա նրանց ավելի կսպանի:

— Ձես էլ քեզ կոգնեմ, Ակոբ, սիրտդ լավ պահի:

Ակոբը ժպտում է, մոռանալով ցավերը. նրան մեծ ուրախություն և պատճառում Մարդոյի ակտիվության այդ առաջին թոթովանքը:

Մարդոն լսում էր նրա խոսքերը, ուրախանում, վոր Ակոբի ուշքը վրան է, վոր դրությունը չատ ծանր չի, ու թաց աչքերով ժպտում էր նրա ժպտի դիմաց, պղտրով հոգեկան մի ջերմություն էր սիրած մարդուց, վորի հետ պիտի մի յերկու ամսից հետո ամուսնանար:

Նա յերևակայում էր դուրեկան ընքնարավականությամբ, թե ինչպես Ակոբի հետ գործի կմանի, ինչպես դուրս կգա կխոսի ժողովներում, ինչ յեռանդով կաշխատի գյուղի կանանց մեջ...

***

Ակոբը քնած էր անհանգիստ. հաճախ չխոթվում էր, դեռ ճգում վերմակը, ինչ վոր անկապ բաներ ասում: Մարդոն չարունակ նստած էր նրա գլխավերևվը. արտի մորմոքով նա լսում էր Ակոբի գառանցանքն ու մռայլ մտքերի մեջ ընկնում. նրա ծանրանալու հետ ինքն էլ էր ծանրանում:

Ակոբին այրվում էր տենդից: Նրան թվում էր, թե մահճակալի տակից վառում են իրեն, հետո իրը վառվում է տունը, ու ինքը դուրս թռչում ընկնում պաշտերը, սարերը... Անցնում է կանաչներով, ծառնորակ աղբյուրների մոտով, բայց հենց մոտենում է վոր խմի, ինչ վոր գինված մարդիկ հարձակվում են ու չեն թողնում...

Նա առավ և դնում, հասնում է ձորին: Նայում է ձորին ու զարմանում.— դիմացը բարձրացել է մի հսկա արձան: Սրձան է կարծես, բայց մինչնուն ժամանակ և կենդանի մարդ,— Լենինն է իր առավ, բռնյալ վողովված: Նա խորաթափանց աչք է ածում չորս կողմը:

— Ընկերնե՛ր...

Ջայնն արձագանքում է ձորում, անցնում է հեռո՛ւ, հեռո՛ւ ու

Հասնում հաղարավոր ընկերներին: Ակոբը տեսնում է՝ ահա ձորում շարվեցին հիդրոկայանի բանվորները՝ լապտերները ձեռներին. ահա և ձորամտի կածանների յերկայնքով ճպվեցին լույսի ժապավենները: Ուր էլ նայում էր Ակոբը, վորքան աչքը կտրում է,— նույնիսկ աննշան չավիղների վրա յերևում էին լապտերներն ու չարան-չարան գալիս էին գեպի Լենինը...

Նայում է Ակոբը լույսերին ու հանկարծ սթափվում.— չէ՞ վոր ինքն էլ պիտի առնի լապտերն ու գնա ընկերների հետ... Ջի՞ վոր Լենինն այս գիշեր զորաւեսի յե հրավիրել բանվորներին...

Շտապում է Ակոբը գեպի տուն՝ լապտերի յետեվից, բայց ներս մտնելով տեսնում է կոտրած է լապտերը, մնացել է միայն յերկաթե ցանցը... Դառնացած սրտով վերցնում է այդ մնացորդն ու գնում, միանում չարքերին:

Ֆայլում է Ակոբը լուսավոր շարքի մեջ, տխուր, դլխիկոր: Թվում է նրան, թե բոլո՛րը, բոլո՛րը, իրենե են նայում, վոր գնում է կոտրած, խավար լապտերով:

Բայց հանկարծ հնչում է նորից, ցնցում է ահեղաղղորդ ձայնը Լենինի.

— Ընկերնե՛ր...—

Ու բոլորը կանգ են առնում տագնապահար:

Ընկերնե՛ր...

Շարքերը ճեղքված են...

«Լույսը մարած է մի տեղ,

«Մթին է տալիս մի տեղ...»

Իրարանցումը բռնկում է շարքերը.— ո՞վ է, ո՞վ է,— անցնում են հարցերը խռովահույզ ալիքներով.—«Ակոբն է»—գալիս է պատասխանը հակառակ ալիքներով ու խոսքը հասնում է Լենինին.

— Ընկեր Ակո՞բը... հարցնում է նա.— ինչո՞ւ, ինչո՞ւ է խավար նրա լապտերը...

Ակոբը դուրս է գալիս շարքից ու գնում գեպի Լենինը.— ախ ի՞նչպես նա պիտի կանգնի Լենինի պայծառ աչքերի տակ իր կոտրած, խավար լապտերով...

Մի պահ Ակոբի լեզուն կապվում է, մնում է լուռ, բայց յերը բարձրացնում է գլուխը, տեսնում է Լենինի գեմքը, նրա ջան սրտից ինքն էլ սիրտ է առնում...

— Ընկեր Լենին,— ասում է,— գիշերս տուն էլի գնում դուրս եց. ճամբին հարձակվեց դասակարգային թշնամին, վիրավորեց ինձ, կոտրեց լապտերս...

— Դասակարգային թշնամի՞ն... Դեմքը խոժոռում է Լենինը:

— «Դասակարգային թշնամին...» անցնում է շշուկը յերկար շարքերով:

Ու գալիս են ընկերները, կուտակվում Ակոբի շուրջը: Այնքան շատ են լուսերը, այնպես այրում են Ակոբին... Ջգում է նա՝ բոլոր լուսերն իրենն են ու էլ չի տանջվում կոտրած լապտերից...

Ու խոսում է Լենինը մի ուրիշ՝ հրեղեն լեզվով, վորի նմանը չի լսել յերբեք Ակոբը, խոսքերն ընկնում են դարնան թարմ վրտնների նման ու ցնցում սրտերը...

... Զարթնում է Ակոբն ու զարմանքով նայում իր շուրջը... չկա գիշերվան տեսիլը... Իր առաջ Մարդոն է ժպտում, ժպտում են պատուհանից արևի առաջին ճառագայթները... Ջե՛, իր վերքերը վտանգավոր չեն. նա դեռ կապրի ու կգործի...

***

.. Ամեն գիշեր, յերբ խավարը սև քուլաներով սկսվում է ձորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պահակները նման շարվում են լուսերն ու ժպտում ուրախ ցոլքերով:

Գիշերվա այդ ժամերին ձորամտի լանջերին չարժվում են լապտերները՝ տոննելի բանվորները: Նրանց մեջ է դարձյալ Ակոբը՝ իր նոր լապտերը ձեռքին...

## ՀԱՋԱՐ ԳԼԽԱՆԻ

Գարնան առավոտի մեղմ, դուրգուրող արևի տակ սփռվել եր գյուղն իր այգիներով ու հանդերով։ Արտերում կանաչն արդեն զգալի չափով բարձրացել եր, իսկ դրսի դաշտերում ու մացառուտ բլուրների վրա նոր ծիլերը դեռ խառնված եյին անցած տարվա խոտերի հետ։ Թեթև քամին յերբեմն անցնում եր, շարժում չոր ու մերկ ցողուններն ու բերում հետը խոնավ հողի ու թարմ կանաչների բուրմունքը։ Ա.րտուտները՝ անընդհատ շարժման մեջ, մերթ մոտեցնում, մերթ հեռացնում եյին իրենց խուսափուկ, զիլ ճուվողյունը։

Այգիներում արդեն դեղնին եյին տալիս նոր ծաղկած հոնի ծառերը, ու լսվում եր դարունը բացող թռչնիկների մեղմ ծլվլոցը։ Տեղ-տեղ գյուղացիք վարում եյին այգիները, սև չերտեր բանալով չոր խոտերի դեղին ֆոնի վրա։

Որ-որի վրա դարունն աճում եր, անհանդիստ հույզերով լցնելով գյուղացու սիրտը։ Նա նայում եր արևին, ու թեկուզ դոջծի մեջ՝ չարունակ մտածում, թե ևս «վոսկի» որերն անցնում են, իսկ ինքը դեռ բան չի չինել, չի կարողանում հասնել արևի յետևից։

Գյուղի վերի ճանապարհով, վորն անցնում եր այգիների ցանկապատի գծով,— յերկու ձիավոր եյին իջնում,— մեկը գյուղի լիազոր և կոլխոզի նախագահ Մինասն եր, մյուսը՝ գյուղխորհրդի քարտուղար Սողոմը։ Մինասը մեկ քշում եր իր կարմիր նժույգը, մեկ սանձը քաշում, դանդաղեցնում ընթացքը, ամբողջ մարմնով որորվելով թամբի վրա։ Նրան հետևում եր քարտուղարը, վոր նստած եր մի բարձրահասակ, նիհար, վոսկրները ցից ձիու վրա, ու չարունակ մտրակում եր, ձգտելով հասնել լիազորին։ Մեծ դժվարությամբ,— ձիու սինդ-սինդ տալուց նստատեղը ջարդելով, նա մոտենում եր նրան։

«Բեֆա լավ է»— այս եյին ասում Մինասի չարժումները։ Նրա

ճխլած, կեսլի դլխարկը թեքվել եր մի կողմի վրա, լոթու արատահայտություն տալով դեմքին: Պղտոր, հարբած աչքերը նայում եյին առանց ուշադրության, ու կկոցելով խնդում՝ մոտակա դյուղում նոր անցած քեֆի տպավորության տակ:

Նա մոտ քառասուն տարեկան եր, ածելած, լիքը դեմքով, ինքնահավան, ցից քթով ու ներքև թափված խիտ բեխերով:

Ֆարտուղարը տարիքով ավելի փոքր եր նրանից, կարճահասակ, վախտ մարմնով, դյուրաշարժ աչքերով:

Ցերը ճանապարհը թեքվեց դեպի դետը, Մինասը բնազդաբար զգալով, վոր մոտենում է դյուղին, փորձեց ինքն իրեն հավաքել,— ձիու քայլերը դանդաղեցրեց, ու իր պատիվը ճանաչող վարդապետի նման մարմինը դիք ձդեց, ու դեմքը խոժոռեց: Բայց նրան այդ չեր հաջողվում,— չարունակ ոգորվում եր դես ու դեն ու մոռանում, եվի իր նախկին դրության մեջ ընկնում:

Ձիանները կանգ առան դետի մեջ,— ջուր խմելու համար: Ֆարտուղարը քիթը սրած դես ու դեն եր նայում, կարծես հոտոտելով, ու իր մանր աչքերով դիտում եր չորս կողմը:

— Ընկեր Մինաս,— ասաց նա հանկարծակի, կարծես դյուտ եր արել,— մի տե՛ս, Մադոյանց Բենոն բանում է կոլխոզի այգու մեջ:

— Վ՞որ Բենոն,— հարցրեց Մինասը,— առանց մտածելու:

— Են եվի՛,— «կանդիտատը»,— կրկնեց նա ավելի բարձր ձայնով, իր ասածը հասկացնելու համար:

Մինասը դլխի ընկավ՝ Բենոն կոլխոզի այգում... Բենոն՝ չքավորներից, «բերան-պատռածներից» մեկը, վորն ընտրություններին ժամանակ աշխատում եր իրեն տպպալել... կատաղությունից նրա դինովությունը թռավ:

— Սրա՛, մի դնա տես ի՞նչ ա անում,—դիմեց նա քարտուղարին, դղրդված ձայնով:

Սողոմը ձին չարժեց, բայց հենց վոր մի քանի քայլ հեռացավ, Մինասը չհամբերեց, ինքն էլ քշեց ձին նրա հետևից:

Նրանք առաջ անցան առվի ամբարտակի ուղղությամբ և փչե ցանկապատի պատռած տեղով ներս մտան նախկին կալվածատերի մեծ այդին, վորն այժմ հանձնված եր կոլխոզին: Նրա մի մասում խաղողի վազերն եյին, մյուսում՝ պղատու ծառերը, իսկ դետափի փոքր մասը հատկացրած եր բանջարեղենի համար:

Այդին ներս մտնելուն պես նրանց աչքերին զարնեց առվի տակ նոր վարած դիծը,— յերեք չարք թարմ հողի չերտերը, վորոնց ճումբերը վայրում էին բահի կտրած տեղերում: Ցերեկում եր, Բենոն սկսել եր վարը, հետո թողել, անցել եր առվի մաքրելուն: Նա արդեն հեռվից նկատել եր ձիավորներին, բայց չըտեսնելու եր տալիս, ու յերեսը հակառակ կողմն արած, շարունակում եր առվի մաքրելը, հողը չպրտելով ափերին:

Բենոն յերեսունհինգին մոտ եր, խոշոր դիմագծերով, մի-ջահասակ, նիհար, մեջքի թեթև սապատով: Գյուղում նրա ավելորդ անունը «Կանդիտատ» էին դրել, վորովհետև լինչ վոր ընտրության ժամանակ մի քանի անգամ կրկնել եր,— «յես կանդիտատ եմ, անգամ չեմ»:

Մինասը նայեց Բենոյին ու հանկարծ անողոք պարզությամբ նրա առաջ բացվեց դաղտնիքը. Բենոյի արարքը նրա վրա այնպես եր աղդում, կարծես նրա ձեռքին բահի տեղ հրացան եր, վոր պիտի տաղդեր իր դեմ:

— Ետեղ ի՞նչ ես չինում,— դոռաց նա, ձիուն մտրակելով ու մոտենալով արխի յեզրին:

Բենոն շուռ յեկավ դեպի Մինասը ու բահի վրա հենվելով հանդիստ պատասխանեց.

— Տեսնում չե՞ս ինչ եմ անում,— առուն մաքրում եմ:

Բենոյի հանդիստ տոնը ավելի յեր խայթում Մինասին:

— Վո՞նց թե մաքրում ես, քեվ ո՞վ իրավունք տվեց. դու քանի՞ գլխանի յես, վոր առանց իմ կարգադրության գործի մեջ ես խառնվում:

— Քանի գլխանի յե՞մ... եղ գնա մեր ժողովրդից հարցրու, նա քեզ կասի...

— Ձենդ կտրի՛, խելքիդ դոռ մի՛ տա... դո՛ւրս գնա, կո-րի՛:

— Ի՞նչի պետք ա դուրս գնամ, ի՞նչ վատ բան եմ անում,— առուն եմ մաքրում:

— Դու գնա քու քիթը մաքրի. քեզ ոչով իրավունք չի տվել, վոր մեյդան ես յեկել:

— Ի՞նչի, բա մեր կոլխոզի ծրագիրը հացի հետ ես կերե՞լ... ա մեր իսկական գործն ա, վոր կա...

— Գնա կորի՛, ծուռաիկ կչեղակ. դու եյիր պակաս ծրագրներով. դո՛ւրս յեկ, թե չե են տեղը կգցեմ, վոր յեկած ճամբեդ կմոռանաս:

— Ի՞նչ ես հերսոտվում, վոչ մի իրավունք չունես հայհոյելու, բա վոր դու քեֆի յես նստում, մեր կոլխոզի գործն ո՞վ պետք ա առաջ տանի. հրես ժամանակն անցել ա:

— Դո՛ւրս յեկ, ասում եմ, բերանդ մի շաղ տալ, թե չե ղամչու տակ կտամ, դուրս յեկ «ասում եմ». իմանում ե՞ս, թե չե:

— Ջեմ դուրս դալիս:

— Ա՛յ յես քու կուզիկ հերն անիծեմ,— ծղրտաց Մինաան ու մտրակեց ձին, վոր մանր առվի հունը ու խուխ Բենոյին, բայց այդ րոպեին քարտուղարն արդեն իջել եր, ու Մինասի ձիու սանձից բռնել:

— Ընկեր Մինաս, սպասի՛ր, յես կհամոզեմ, ասաց Սոզոմը:

— Ե՛ս րոպեյիս սրան կձերբակալես,— ասաց Մինաան սպառնալով իր ձեռքի մտրակով:

— Դու ո՞վ ես, ի՞նչ իշխանություն ես, վոր ձերբակալես:

— Ձերը վոր կնստես են ժամանակ կիմանաս, թե ո՞վ եմ յես:

Ասաց ու ձին քշեց դեպի մյուս ափը, սպասելով, վոր քարտուղարն իր հրամանը կատարի:

Նրա հեռանալուց հետո Սոզոմը սկսեց վախուկ խոսքերով «համոզել» Բենոյին:

— Ախր, Բենո, դե ենա վոր ասում ե, հոժարվի՛ր դուրս յեկ, էլ ո՞ւր ես հակառակում:

— Ի՞նչի, յես նրա ստրուկն ե՞մ. շատ էլ նախագահ ա, հո մեր թագավորը չի. են էլ ի՞նչ— կուլակների մարդն ա, մերը չի, եղ բանն ինձ հարցրու...

— Ինչ վոր ա՝ իշխանավոր ա. հիմի էլ հո դիտես լիազորի տեղն ա:

— Եղ յո՞րը դառավ լիազոր... ենդուր ա ձենը բարձրացրե՞լ:

— Բա ես ա մի չարաթ ա, Մարտինը գնացել ա բանֆակում սովորելու, սա նրա տեղն ա. պետք է կատարես նրա կարգադրությունը:

— Ախպեր, արածս ի՞նչ ա.— խորհրդային ծրագիրն ասում ա՝ աշխատիր, յես էլ աշխատում եմ կոլխոզի համար:

— Բայց դու իրավունք չունես առանցի կարգադրության հաստատական գործն սկսելու:

— Ի՛նչի մասին ես խոսում.— եղ մարդը ձոքումը դրել ա, կոլխոզը քանդի, կուլակների սրտովն անի, իրան ել քեֆի ա տըվել, բա մենք չաշխատե՞նք:

— Դե եղ ուրիշ հարց ա, դա յել իրան կարդով կգնա. իսկ եստեղ հակառակելու կարիք չկա. զուր տեղը հակաճառեցիր... հիմի լա՛վ ա. հո լսեցի՞ր, ասում ա— տար ձերբակալիր...

— Թող ձերբակալի, յես վախեցողը չեմ. տեսնենք ո՞ւմ ա— րածը դուրս կգնա. սաղ մեր խորհրդային աշխարհը չեն ու չենք ա քարոզում, հիմի հենց մեր դեղո՞ւմ մթնեց աշխարհը,— մեր Մինասի վրա՞...

Գետի մյուս ափից լսվեց Մինասի կոպիտ ձայնը.

— Դե չո՛ւտ արա, բեր եղ քոստունը:

— Բե՛նո, դե արի գնանք. վախիլ մի, բան չկա, քո գործը կդրատեմ, միայն թե հետը խռսալիս չհակառակես:

— Գալիս եմ. թող ինչ ուզում ա անի, յես վախենալու բան չունեմ:

Սողոմը նստեց իր ձին, ու սպասեց, մինչև Բենոն, բահի վրա հենվելով քարերի վրայով անցավ գետի մյուս ափը, ապա ինքն ել հետևեց նրան:

Մինասը, նկատելով, որ գալիս են, իր ինքնասիրությունը բավարարված զգաց ու ձին քշեց դանդաղ քայլերով: Նա մի քանի անգամ հետ նայելով նորից ստուգեց,— գալի՞ս են, թե չե, ապա վերջնականապես հավաստիանալով, մտրակեց ձիուն ու հեռացավ նրանցից:

Ֆարտուղարը մի թունդ հայհոյանք փսփսաց նրա հասցեին, այնքան բարձր, որ Բենոն լսի: Նրա համար անախորժ եր այն, որ Մինասը թշնամացնում ե իրեն Բենոյի հետ, որը չքավորականների աղքեցիկ անդամներից մեկն եր, և այժմ ցանկանում եր մեղմացնել դրությունը, ցույց տալ, որ ինքը նույնպես հակառակ ե Մինասին:

— Թո՛ւհ, քո նամուսին,— ասաց նա բարձր ձայնով,— սիրտը ասում ա— աղատվիր գնա, խայտառակությանը վերջ տուր:

— Թող ա՛նի, թող խրխնջա կուլակների հետ. մի որ ել վատը քարին կդիպչի, գլխկոնծի կտա:

— Դե ի՞նչ անեմ, Բենո, տեսնում ես ելի՛, ինչ արուածն եմ.

Հասկես անխնելք բան ա սարքում, հետո յել կուժն ու կուլեն իմ գլխին կոտրում: Ե՛հ, յերբ պետք ա աղաուլեմ ես ցավից:

Գյուղի ծայրին քարտուղարը, ձին հանձնեց դիմացից յեկող մի տղայի, և ուղարկեց տիրոջը, իսկ ինքը վոտքով գնաց Բենոյի հետ, վորպեսզի չնկատվի, թե տանում ա նրան ձերբակալելու:

***

Յերեկոյան դեմ գյուղի միակ հրապարակում ուր և շուկան էր, և կոոպերատիվն ու գյուղխորհրդի դրասենյակը,— աղմուկը սովորականից ավելի ուժեղ էր: Ոտաակցության ու վեճերի առիթը Բենոն էր, վորի գլխին յեկածն արդեն տարածվել էր գյուղում: Դրսից մոտեցողին թվում էր, թե բոլորը միանգամից խոսում են, առանց միմյանց լսելու, ու ամեն րոպե կարող է բռնկել մի կատաղի կռիվ:

Հրապարակի կենտրոնում առանձնապես աղմկում ու բողոքում էր նորակազմ կոլխոզի անդամների խումբը, իսկ նրանց չուրջը՝ ավելի փոքր խմբերով վիճում էին «անհատականները»— վորն զգուշավոր ձևով հարձակվում էր Մինասի վրա, վորն էլ կես բերան պաշտպանում էր Բենոյին:

— Սրա բա մենք մեռած ե՞նք,—ասում էր կոլխոզնիկների մեջ Պետրոսը,— բա պիտի մարսե՞նք ես խայտառակությունը, Թողնենք, վոր մեր կոլխոզի գլուխն ուտի՞... ասում էր Պետրոսը աստամները կրճատացնելով: Նրա խիտ, սև հոնքերի տակից ապառնալից փայլով նայում էին կրակոտ աչքերը:

Պետրոսը քսանհինգ տարեկանի չափ հաղթանդամ յերիտասարդ էր, կոլխոզի հիմնադիրներից մեկը:

— Մի տաքանալ, Պետրոս,—ասաց Ոհանը՝ հասակն առած, նիհար դեմքով մի գյուղացի՝ ալեխառն խիտ մորուքը տմբտմբացնելով.— Գիտե՞ս ի՞նչ կա,— կացնի բերանին խփողը իրան ձեռը կարյունոտի... չաո եր բոթբոթում Մինասը, բայց դե հիմի լավն են ա՝ յերեսը բացվեց, ել չի կարող գառան մորթի հագնի...

Կոլխոզնիկների խմբի մոտ ականջը կախ լսում էր նրանց խոսակցությունը Ապրեսանց Գրիգորը: Նա կամաց-կամաց մոտեցավ խոսողներին:

— Ես ի՞նչ պալմաղալ եք հանում,— ասաց նա հեգնական

ժպիտով, իր դեմքին հավաքելով բազմաթիվ կնճիռների ցանցը, ու աչքերը կուշ ածելով—դե մի՛ մարդ ա ելի, կբանտարկեն էլ, բաց էլ կթողնեն:

— Ինքը, կուլակի դծով մի խոսիլ,— վրա ընկավ Պետրոսը:

— Ա՛խպեր, յես ձեր դասակարգը չեմ հասկանում. միայն ասում եմ՝ Մինասն էլ ձերն ա, Բենոն էլ. եղբես ա դուրս գալիս, վոր աչ ձեռքը ձախ ձեռքին բանտարկել ա.

— Բա մենք էլ հո քնած չենք...

— Դե ինչ վոր ա՝ ձեր ընտրած մարդն ա Մինասը, պետք ա նրա կամքովը գնաք. թե վոր տարել նստացրել ա Բենոյին, նշանակում ա վոր Բենոն մեղավոր ա:

— Դու էլ ինչ ես Մինասի փեշից բռնում,— հարձակվեց Պետրոսը,— չլինի՞ դու յել նրա համփոռներից ես:

— Ա՛յ ողա, դու էլ հենց վրա ես պրծնում, յես ի՞նչ մեղք ունեմ. ասում եմ մթամ որենքի կողմից կարելի ա վոր մի բան ա արել, թե չե յես ի՞նչ համփոռնի մարդ եմ. չես իմանո՞ւմ, վոր յես մլջակ եմ...

Ոտաակցությունը ընդհատեց կողքի մի ուրիշ խմբակի աղմուկը: Կուլակի ողա՝ ճղճղան Ակոփի ձայնն եր: Նա դիտմամբ ավելի յեր բարձրացնում ձայնը, վորպեսզի լռվխոզի անդամները լսեն:

— Հենց ասում են Մինասը ըսենց-ընենց. մի տեսեք, կարելի ա եղ մարդը իշխանության որենքով ա ժամ գալիս: Զաթի վոր տաներ ես կոլխոզի մարդկանց բոլորին նստացներ՝ լավություն կաներ— մի քիչ խելքի կգային...

— Ի՞նչ ես բերանդ չաղ տալիս. հը՞ ականջդ ուրախ ձեն ընկա՞վ— ասաց Պետրոսը.— ապասիր, մի ձեր հոտը կկտրցնենք...

— Դու ի՞նչ ես քեզ ու քեզ յեփվում,— վրա տվեց Ակոփը. ձեր նախագահն ա բանտարկել, թե ի՞մը:

— Եղ մենք լավ գիտենք, թե վրայն ո՞վ ա պատրաստել: Ես ա աշխարա կանենք, արխային կաց:

— Շատ ես սպառնում, վա՛յ թե դու էլ Բենոյի որն ընկնես:

— Ջո սրտովը չի ըլիլ. ականջիդ բամբակը հանիր, կուլակների թագավորությունը պրծավ:

— Ի՞նչ ես մեծ-մեծ բրդում,— մի քանի խլնքոտների հավաքել ես, թե կոլխոզ եմ սարքում. մի ասա տեսնենք մեջն ի՞նչ կա:

— Մեջը կուլակների դեբեղման կա:

— Սուս կաց, թե չե կտամ կատակացնեմ:

— Դու առանց են էլ սատկած ես, քեզանից վախող չկա:

— Ա՛յ թե չկա,— ասաց նա ու մոտ յեկավ, վոր խփի Պետրոսին, բայց շրջապատողները մեջ ընկան, բաժանեցին նրանց:

Սկսվեց մի ուժգին աղմուկ. հրապարակի ամբոխը խառնվավ, կուտակվեց կոլխոզնիկների շուրջը: Կուլակները վախենալով բարդություններից, խնդրին հեռացրին Սկոտինն ու իրենք էլ հեռացան:

Պետրոսը դիմեց իր ընկերներին:

— Ի՞նչ եք եսաեղ կաղնել. դործի պիտի անցնե՞նք, թե չե գնանք են կողմը խորհրդակցենք:

Նրանք քաշվեցին վողոցի անկյունը:

— Ընկերներ,— ասաց Պետրոսը.— հիմի տեսնում եք, ամեն ինչ պարզ ա.— Մինասը կուլակների հետ միացած՝ մեր մասսաներին դավաճանում ա. մենք անդիտակից ենք յեղել, թողել ենք, վոր նա շողոքորթելով մտնի մեր մեջ, և կոլխոզի նախագահ, հետո էլ լավագոր դառնա ու մեր քամակից խփի. հիմի ի՞նչ պիտի անենք.— մենք պետք է մի քանի մարդով գնանք Մինասի մոտ, քաղաքենք նրա արարմունքի դեմ, պահանջենք, վոր ազատի Բենոյին... համաձայն ե՞ք:

— Համաձայն ենք— կանչեցին չորս կողմից:

Հետզհետե հանդարտվելով, հրապարակի ամբոխը ցրվեց. ցրվեցին և կոլխոզնիկները, բացի յերեք հոգուց:

***

Մինասին արդեն իմաց եյին արել իր համախոհները՝ հրապարակում տեղի ունեցած աղմկալից վեճերի մասին, և նա, զգալով, վոր Պետրոսն իր ընկերներով անպատճառ գալու յեն իրեն մոտ, պատվիրել եր տանըցոց, վոր յեթե գան՝ ասեն թե տանը չի: Բայց յերբ նրանք յեկան, բարձրացան վայտե յերկար սանդուխքներով, ու այդ պատասխանը ստանալով, հետ գնացին, Մինասը, տեսնելով, վոր թաղնվելը անկարելի յե, վճռեց ընդու-

ՆԵԼ ՆՐԱՆՑ ԴՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ, ՎՈՐՏԵՂ ՆԱ ԿԱՐՈՂ Է ՑՈՒՑԱՂՐԵԼ ԷՐ ԱՄԲՈՂՋ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՆԱ ՈՒՂԱՐԿԵՑ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՅԵՏԵՒԻՑ, ՊԱՏՈՒՀԻՐԵԼՈՎ, ՎՈՐ ԳՆԱ ԴՐԱՍԵՆՅԱԿԸ:

ՆՐԱՆ ԱՅԺՄ ԸՆԿԵԼ ԷՐ ԻՐ ԱՐԱՐՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅԱՆ ՎԱԽԸ, ՈՒ ՅԵԹԵ ՎԱՏԱՍԽՐՈՒԹՅԱՆ ՑԱՎԸ ՉԼԻՆԵՐ, ԻՍԿՈՒՅՆ ԱՂԱՏ ԿԹՈՂՆԵՐ ԲԵՆՈՅԻՆ ՈՒ ԿԱԿԱՑ ՍԻՐԱՇԱՀԵԼ ԿՈԼԽՈՂՆԻԿՆԵՐԻՆ»

«ԵՍԱԼԱՑ ԵԼ ՃԱԽԼԻԿՈՒԹՅՈՒՆ», ՄՏԱԾՈՒՄ ԷՐ ՄԻՆԱՍԸ, ՅԵՐԲ ՊԵՏՐՈՍՆ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ԴՈՒՐՍ ԿԵԿԱՆ ԻՐ ՏՆԻՑ.— «ԲԱ ԿՈՂԽՈՒՂԻ ՆԱԽԱՊԱՀԸ ԿՐԱՆՏԱՐԿԻ ԿՈԼԽՈՂԻ ԱՄԵՆԱԱԿՏԻՎ ԱՆԴԱՄԸՆ... ՔԹԻՑԴ ԿՀԱՆԵՆ, Ա՛Յ ՄԵՌԱԾ... ԱՆՏԵՐ ԴԻՆԻՆ Ա ԽԵԼՔՍ ՏԱՆՈՒՄ.— ՊԵՏՔ Ա ԹԱՐԴ ԱՆԵՄ...»

ԲԱՅՑ Ւ՞ՆՉԱԼԵՍ ՈՒՂՂԵՐ ԻՐ ԱՐԱԾԸ— ԱՐԴԵՆ ՅԵՂԱԾԸ-ՅԵՂԱԾ ԵՐ... ԻՐ ԹՔԱԾԸ ՅԱՏ ԼԻՂԻ՞, «ՆՐԱՆՑ» ԱՌԱՋ ԽՈՆԱՐՀՎԻ՞, ՎՈՐ ՀԵՏՈ ՎՐԱՆ ԾԻԾԱՂԵՆ ՈՒ ՔԱՑԻ ՏԱՆ ԴԵՆ ՉԱՐԱԵ՞Ն... ՉԵ՛, ՉԵ՛, ՄԻՆԱՍԸ ՄԻՆԱՍ ՊԵՏՔ Ա ՄՆԱ... «ՄԻ ՔԻՉ ՎՌԱՂԵՑԻ, ՌԱՆԴԱՍ ՉՈՒՏ ՑՈՒՑՑ ՏԱԼԻ, ԲԱՅՑ ՎՈՉԻՆՉ, ԱՍՏՎԱԾ ՍԱՂ ՊԱՀԻ ՄԱՐԴՈՒՆ ՔԱՂՑՐ ԼԵՂՈՒՆ,— ԱՄԵՆ ԲԱՆԻՑ ԿԻՐԿԻԼ...

ՈՒ ՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՆՉՈՎ ՆԱ ՄՈՏԵՑԱԼ ՍԵՂԱՆԻ ՎՐԱ ԴՐԱԾ ԴՐԱՖԻՆԻՆ, ՈՒ ԼԱՄԵԼՈՎ ՅԵՐԿՈՒ ԲԱԺԱԿ ՏՂԻՆ, ԴԵՆ ՉԱՐԱԵՑ ԻՐ ԱՀՆ ՈՒ ՔԱՂԸ:

«ԲԱՆ ՉԿԱ, ՊԼԻՆԴ ԿԱՑ»,— ԱՍՈՒՄ ԷՐ ՆԱ ԻՆՔՆ ԻՐԵՆ, ԻՋՆԵԼՈՎ ՔԻՐ ՏԱՏԱՆՎՈՂ ՃՌՃԱՆԱՆԴՈՒԽՔՆԵՐԻՑ— «ՁԻԴ ՋՈ՛ՒԲ ՏՈՒԲ, ՔՉԻ՛, ՅՆԵՒԻ ՄԻ ՏԵՂ ԿՀԱՍՆԵՍ...»

ՈՒ ՀԱՄԱՐՁԱԿ ՔԱՅԼԵՐՈՎ ՆԱ ՆԵՐՍ ՄՏԱՎ ՊՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԴՐԱՍԵՆՅԱԿԸ:

ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԻՐ ԸՆԿԵՐԸ՝ ՈՀԱՆ ԲԻՃԵՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԻՏ ԳՈՒՐԳԵՆԸ ՄԻՆԱՍԻՆ ՎՆՏՌԵԼՈՎ ՆՈՐԻՑ ՎԵՐԱԳԱՐՁԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԵՒ ՆԿԱՏԵԼՈՎ ԴՐԱՍԵՆՅԱԿԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԸ, ՆԵՐՍ ՄՏԱՆ:

ՄԻ ՀՈՂԱՀԱՏԱԿ, ՅԵՐԿԱՐ ՍԵՆՅԱԿ ԵՐ, ՄԽՈՏԱԾ ԱՌԱՍՏԱՂՈՎ ՈՒ ԿՈՊԻՏ ՍՎԱՂԱԾ ՊԱՏԵՐՈՎ: ԾԱՅՐԻ ՊԱՏՈՒՀԱՆԸ ՏԱԽՏԱԿՆԵՐՈՎ ԾԱԾԿՎԱԾ ԵՐ, ՄՅՈՒՆԵՐԻ ԱՍՊԱԿԻՆԵՐԸ ՄԻ ՄԱՍԸ ԿՈՏՐՏԱԾ ՁՅԻՆ ՈՒ ԹՂԹԻ ԿՏՐՆԵՐՈՎ ՓԱԽԱՐԻՆՎԱԾ: ՎՈՏՆԵՐԸ ԾՈՎԱԾ ՍԵՂԱՆԻ ՎՐԱ ԴՐԱԾ ԵՐ ՄԻ ՀԱՍԱՐԱԿ ԿԱԶՄՈՎ ՄԱՐՅԱՆ, ՈՒ ՓՈՉՈՒՎԱԾ, ԽՈՒՆԱՑԱԾ «ԴՈՐԾԵՐԻ» ՈՒ ՔՂԹԵՐԻ ՄԻ ԿՈՒՅՏ:

ՄԻՆԱՍԸ ՆԱՍԵԼ ԵՐ ՍԵՂԱՆԻ ՄՈՏ ՈՒ ԱՌԱՋԻՆ ԱՌԱԾ ԹՂԹԵՐԸ՝ ՃԱՑՆՈՒՄ ԵՐ, ԼՐԸ ԽՈՐԱՍՈՒԶՎԵԼ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԵՋ: ՆՐԱ ԱՉ ԿՈՂՔԻՆ ՆԱՏԱԾ ԵՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍՈՂՈՄԸ: ԼՈՒՐՋ ԵՐ ՄԻՆԱՍԸ, ԲԱՅՑ ԹՎՈՒՄ

եր, թե նայում է իր քթի ծայրին, և վոչ թե թղթին. լուրջ եր և Սոդոմը, բայց նա էլ թվում եր՝ ճգնում եր տեսնել իր հոնքերը:

— Բարի իրիկուն,— ասաց Պետրոսը, և նրա հետևից կըրկնեցին մյուս յերկուսը:

— Բարեվ,— պատասխանեց Մինասը, ու իրեն արժեքն իմացող մարդու տոնով.— ի՞նչ կա:

Մի քանի վայրկյան Պետրոսը նայում եր Մինասին խոժոռած դեմքով, կասկածոտ հայացքով:

— Մենք յեկել ենք Բենոյի մասին...

— Ի՞նչ կա,— նորից հարցրեց Մինասը, ուզենալով ցույց տալ, թե նրա համար Բենոն փոքրիկ հարց է.

— Վո՞նց թե ի՞նչ կա.— դու նրան ձերբակալել ես, մենք յեկել ենք պահանջելու, վոր ազատես....

— Բա ինձ ի՞նչի համար են ես դործի վրա դրել, վոր իմ կարպադրության մեջ պետք ա խառնվեք:

— Ընկեր Բենոն դնացել ա առուն մաքրելու, կոլխոզի այդին վարելու, նա մեր մասսաների դործն ա կատարել, իսկ դու դրա համար նրան ձերբակալե՞լ ես:

— Յեթե ամեն մարդ իշխանություն բաներեցնի, ո՞ւր կդնա. ձեզ հայտնի ա՞, վոր յես ես դյուղի լիազորն եմ, իսկ եդ Բենոն դնացել ա առանցի հրամանի, իրանդլուխ դործը սկսել. եստեղ խորհրդային իշխանություն կա՞, թե չե. մի ասեք տեսնեմ...— ավելի համարձակվելով վերջացրեց Մինասը:

— Ընկեր Մինաս, խորհրդային որենքը սոցիալիստական ծրագիրն ա. մենք բոլորս պետք ա չինարարություն անենք, իսկ դու չինարար մարդուն բանտարկում ես...

— Ի՞նչ, դու ծրագիրն ինձանից լավ ես հասկանո՞ւմ, դնա քու աշկերտին վարժապետություն արա.— Բենոն որենքի հակառակ դործ ա բռնել, յես էլ նրան պատժել եմ:

— Հիմի քու արածին ի՞նչ անուն տանք. քեղ կոլխոզի նախագահ են ընտրել, վոր դործն առաջ տանե՞ս, թե դործ անողին պատժես. ինքդ դնաս լուսլակների հետ քեֆ նստես ու նրանց սրտովն էլ անես— կոլխոզը կործաններ:

— Եդ քո դործը չի,— տեղից վեր թռչելով, զրդռված պատասխանեց Մինասը, իմ հաշիվը յես դիդամ. դրա մասին քեղ չեն հարցնում:

Կոմբերիա Սահակը հուզված չարժումներ էր անում, ուզում էր խոսակցության մեջ խառնվել, բայց, բիձա Ոհանը վեր չէր քաշում, հետ էր պահում:

— Լա՛վ, յերբ վոր դու եղպես ծրագրին դեմ ես գնում, մենք էլ մեր ճամբեն կգտանենք— կդիմենք կենտրոնին. թող գան տեսնեն, ինչպես են մասսաները տուժում, կոլխոզն էլ դեռ չսարքված քանդում են...

— Եվ դու ասած ճամբեքը յես արդեն ավարտել եմ... ինձ մինուճար չկարծես...

— Կտեսնենք, ո՞վ ա մինուճար... միայն լավ իմանաս, մեր կոլխոզը չեր կարող քո համփոն կուլակների հետ կուլ տալ— բողոքին դեմ կընկնի...

— Կուլակն էլ դու յես, աչ թեքումն էլ, ոպորտունիստն էլ. կոլխոզն էլ քեզ նմաններն են կործանում, յես քեզ ցույց կտամ, թե վոնց պետք է իշխանության հետ խոսես...

— Մենք եստեղ չենք խոսիլ, մենք կխոսենք, վորտեղ ինձ էլ, քեզ էլ լավ ճանաչում, հասկանում են...

— Ուր ուզում եք գնացեք, ձեռներիցդ բռնող չկա. իսկ յեթե կչարունակեք ձեր «հակա» գործերը, յես ստիպված կլինեմ խիստ միջոցների դիմել...

— Ի՞նչ. եղ վո՞ր որվանից յես «հակա» դառա՝ դու ակտիվ, բարեկամ. չի լի՞նի մի փորձես քո խիստ միջոցները:

— Դո՛ւրս գնացեք եստեղից, թե չե ձեզ էլ կքանտարկեմ,— պոռաց Մինասը.

— Հը՛, հանգիստ կաց. դեռ Բենոյին մարսի, հետո խոսի...

... Սողոմը, տեսնելով, վոր կարող է ընդհարումը բարդանալ, իսկույն վեր կացավ և Մինասի թևքից բռնելով, ինչ վոր փսփսաց: Հետո յել մոտեցավ Պետրոսին ու առաջը կտրեց, ասելով.

— Դե լա՛վ, լավ, չարժի տաքանալ...

Պետրոսի հետ յեկած Ոհան բիձեն նույնպես աշխատում էր հանդստացնել նրան, ու թևքից քաշում էր:

— Լավ միտդ պահիր քո խոսքերը, ասաց Պետրոսը, դուրս գնալուց:

— Կպահեմ, քո մարգարիտ խոսքերն էլ հետը...

— Կուլակներիդ աչքալիսեք կտաս Բենոյի մասին...

Պետրոսը դնում եր բարձր խոսելով, չհեռրոդանալով հանդըստանալ իր հուզմունքից:

Իսկ Մինասը քարտուղարից առավ նրա թամբաքուն, մի պապիրոս վերցրեց ու սկսեց արագ-արագ ծխել, խորը ներս քաշելով ծուխը:

— Հը՛մ, յես ձեր ճաշը կյեփեմ, ասաց նա ու դուրս գնաց դրասենյակից:

***

Շրջդործկոմի նախագահը նոր եր վերադարձել միամսյա արձակուրդից, փակվել եր իր առանձնասենյակում ու աչքի յեր անցնում ստացված դրություններըը: Նրա ուշադրությունը դրավեցին յերկու ծրար, վորոնցից մեկի վրա դրած եր— «պաղտնի», իսկ մյուսի վրա— «խիստ պաղտնի»:

«Խիստ պաղտնին» Ալեք գյուղի լիազոր Մինասից եր. նա գրում եր.

«Մեր գյուղում մի խումբ մարդիկ հակա յեն քարոզում և իշխանության կարգադրությունները խանգարում են: Մադոյանց Բենոն, Թառյանց Պետրոսը, ու նրանց հետևից քաշված էլեմենտ տարրերը հակա պրոպագանդա յեն անում: Ինդրում ենք խիստ միջոցներ նշանակել և կտրուկ պատիժներ ձեռք առնել վերոհիշյալ անձանց և նրանց թայֆաների անհատ խմբերի մասին, հակառակ դեպքում իշխանությունը կտուժվի և ցեցը կտարածվի գյուղում: Ալեք գյուղի լիազոր Մինաս Գառնակերյանց.— քարտուղար՝ Սողոմ Հացիկյանց»:

Յերկրորդ նամակը հինգ ստորագրությամբ եր, իսկ իր բովանդակությամբ առաջինին հակառակ:

«Ալեք գյուղի Մինաս Գառնակերյանը կոլխոզի նախագահ ա, բայց ընկերներ, պետք է իմանաք, վոր նա մեր կոլխոզնիկ չքավոր գյուղացիների թեկնածուն չի.— նա հին ուժիմ կուլակների հետ ա նստում վեր կենում, և մեր կոլեկտիվ մասսաների գործը ուզում ա քանդել: Այս աղաղակող փաստերից մեր կոլեկտիվ կոլխոզը զրկվում ա— պատճառն ի՞նչ ա, վոր խորհրդային ծրագիրը տուժվում ա: Օրինակի համար մեր գյուղացի ընկեր Բենո Մադոյանը դնացել ա առուն մաքրելու, կոլխոզի այդին վարելու, իսկ լիազոր նախագահ Մինասը կուլակների արտին յեղ ա

քանել ու ընկեր Բենդային կալանք ա տրել: Խնդրում ենք, ընկեր նախագահ, կոլեկտիվ գծով ուշադրություն դրավեք այս հարցի վրա, թե չե վաղը կարող ա ծագել մի կատաստրոֆային պայթյուն, որի պատասխանատուն կլինի Մինասը: Խնդրվում ենք քննեք գործը— պատճառը ի՞նչ ա, որ կոլեկտիվ մասսաները տուժվում են»:

Մի քանի ժամ անցավ նախագահի դեմքով նամակագրությանը հասցեին: Վորպես չըջավայրին ծանոթ մարդ, նա հեշտությամբ պատկերացրեց գյուղի դրությունը, բայց ինքն այնտեղ չեր յեղել, և գործող անձանց մեջ փոփոխություններ եր նկատում, որոնք տեղի եյին ունեցել իր բացակայության ժամանակ: Անհրաժեշտ եյին քարտուղարի բացատրությունները:

Նա ձեռքը մեկնեց դեպի ելեկտրական զանգի կոճակը, մի քանի անգամ սեղմեց, բայց վոչ մի հետևանք չունեցավ:

Նա վեր կացավ տեղից ու դուռը բանալով դուրս նայեց: Միջանցքում կանգնած եր ցրիչ Վարշամը:

— Մի Սրամին կանչի՛ր,— պատվիրեց նախագահը:

Ցրիչ անց ներս մտավ քարտուղարը, ձեռին մի թղթապանակ, վորը վերցրել եր հետը, կարծելով, թե պիտի դեկուցի:

— Ընկեր Սրամ,— ասաց նախագահը, ծխախոտը վառելով,— Ձեզ յերեկոյան արի դեկուցքը, տեսնենք ի՞նչ ե կատարվել իմ բացակայության ժամանակ: Ընկեր Թառայանը չտապով գնաց ֆենտրոն, չկարողացա հետը խոսել: Իսկ այժմ զրաղվենք այս նամակներով,— մի նտիր կարդա և պարզիր քո տված տեղեկությունների համաձայն, թե այս դրություններն տակին ի՞նչ կա:

Քարտուղարը փորձող հայացքով դիտեց նախագահին, մտածելով— չլինի՞ թե մի բան ե պատահել, որի համար ինքն ե պատասխանատու,— բայց նրա զսպված դեմքի վրա,— չեշտակի նայող աչքերում, լայն, փոքր ինչ ճաղատ ճակատին, վոչ մի փոփոխություն չեր նկատվում, բացի արճակուրդի հետեվանքով առաջված թարմությունից: Նա վարանոտ ղդացումով վերցրեց նամակները, բայց կարդալուց հետո կասկածները չքացան և նրա յերիտասարդ դեմքի ժպտուն արտահայտությունը նորից վերադարձավ:

— Հը՞, կարդացի՞ր,— ի՞նչ կասես այդ մասին:

— Այստեղ յերկաւ նամակ է, յերկու էլ թայֆա— սովորական պատմութիւն է մեր գիւղերում...

— Թայֆա՞... ծանոթ է՞ս այդ գիւղին:

— Վա՛յ, չեմ յեղել այնտեղ. ճանապարհից դուրս է, բայց ստացված տեղեկութիւններից այն կարծիքի յեմ յեղել, թե այնտեղ գործերը վատ են ընթանում:

— Ճամբից դուրս՝ աչքից դուրս...

— Այո, բայց պետք է ասեմ, ճիշտ է, այնտեղ կուսակցականները քիչ են, իսկ հիմա յել քչինը համարյա ամբողջովին ղըսված է, բայց ընդհանրապես հանգիստ գյուղ է...

— Հենց կասկածելին այդ արտաքին հանգստութիւնն է, այդպիսի գիւղերից շատ անգամ գալիս են ասում— «Դե մենք ուրիշ գեղերի նման չենք— մեր մեջ բոլորս էլ չքաւոր ենք ու վոնց վոր մի ընտանիք՝ ենպես ենք ապրում»: Բայց հենց վոր գիւղի խուսիը վերցնում ես— տեսնում ես տակը կուլակներ են նստած:

Նախագահը վեր կացավ տեղից ու ձեռքերը տուժուրկայի պրպանում դրած սկսեց քայլել նախկին ընկերական կանոնաւոր քայլերով:

— Իսկ ի՞նչ յեղաւ այն բատրակը, վորն առաջ լիազոր եր և կոլխոզի հիմնադիրը:

— Ընկեր Մարտի՞նը— նա դնաց բանֆակ ուսանելու:

— Իսկ այս նոր լիազորն ի՞նչ մարդ է, յես դրան բոլորովին չեմ հիշում:

— Դրա մասին ձեր տեղապահ ընկեր Թառայանը լաւ կարծիքներ եր հայտնում...

— Հըմ... իմ բացակայութեան ժամանակ վերափոխութիւններ են տեղի ունեցել... Ընկեր Թառայանը...

Նա ուզում եր ինչ վոր բացատական բան ասել Թառայանի հասցեին, վորին տեղաւորել եյին ուրիշ շրջան, բայց զգուշացաւ, չուզեց քարտուղարի մոտ արտահայտվել նրա մասին:

— Դե, խմա՛րկե, ինչպես ընկեր Թառայանը կարգադրում եր, այնպես էլ ընթանում եյին գործերը,— ասաց քարտուղարը, կարծես արդարանալով:

«Պետք է ատուդել»,— մտածում եր նախագահը քայլերով.— «Գուցե ոգտվելով իմ բացակայութիւնից, այն տիպերը նորից սկսել են իրենց ինարկիներն իմ դեմ...»

— Ձa— ասաց նախապահը, կարծես վռակելով իր ներքին մտքերի դառը.— այդպես ուրեմն, ի՞նչ և առում ստրատեգիայան դրությունը... .

— Ինձ թվում է,— չարունակեց նա,— վոր կարասի մեջ մուկն է ընկել,—պետք է դնալ այդ դյուղը և անձամբ ստուգել: Վաղվան համար կպատուիրես, վոր ձին պատրաստեն, իսկ յերեկոյան կգաս զեկուցման. լա՞վ:

— Լավ:

Ֆարտուլարը դուրս դնաց, իսկ նախապահը չարունակեց դրություննների ընթերցումը:

***

Դեպքի հետևյալ առավոտը Մինասը զարթնեց Հանկարծակի, կարծես մեկը նրան հիշեցրեց ինչ վոր կարևոր, մոռացված բան— Բենոյի ձերբակալելը: Նրա առաջ պատկերացան իր արածի հետևանքները ու համակեցին նրան վախով:

«Քթից կհանեն, դուրս կվռնդեն, թե վոր դրանից վատն էլ չանեն»,— մտածում էր նա.— «պետք ա են մարդուն ազատեմ, ծուռը շտկեմ, ու ենպես անեմ, վոր մոռացվի, դնա, մթամ խակի էլ յել պատահել...

Ամբից քանի չուտ պրծնի, ենքան լավ է, բայց վոր եսոր ապատի Բենոյին, ինչ կասեն,— կասեն վախեց, ենդուր չուտ արձակեց, ու դրա վրա յել յերես կառնեն, իրեն տակը կփորեն...

Այս տատանումների մեջ Մինասը դուրս յեկավ տնից, մի քանի րոպե կանգ առավ զավթում, ապա քայլերն ուղղեց նեղ փողոցն ի վեր— դեպի Առաքելի տունը:

Առաքելը «հին դասակ» կամ կուլակների խորհրդատուն էր: Առաջներում նա դյուղի «մատով հաշված» իշխաններից էր, և այժմ էլ դեռ պահում էր իր դիրքը՝ իր նմանների չրջանում: Յածրահասակ, նահապետական խոշոր դիմագծերով, յերկար, ալեհեր մլրուքով, մանավանդ իր լուրջ ու խոժոռած տեսքով նա դեռ վորոշ պատկառանք էր ներշնչում իր դասակի անդամներին, թեպետ նոր ժամանակն արդեն դրել էր իր դրոշմը,— կընճիռներով պատել դեմքն, ու կասկածոտ, վախկոտ դարձրել հայացքը: Քայլում էր ծանր՝ ասես մտածված ու չափված քայլե-

րով: Ամառում եր յերկար պատրաստվել, մատնեցով մորուքը չոյում, և դրանով ավելի յեր զորացնում իր խելոք մարդու հռչակը:

Գավթում շունը թեթև հաչաց: Դուրս յելավ ղլուխը փաթաթած մի կին, ու Մինասի հարցին պատասխանեց ղվխի չարժումով, թե Առաքելը տանն է:

— Բարի աջողում:

— Աստծու բարին. նստի՛ր, Մինաս, ախչի, մի մուքաքաբեր:

— Առաքել ասի, վո՞նց ես...

— Եհ, մեզ ել կասեն վո՞նց ես... Ընկել ենք սանդերքի ոտքան ու մի ղլուխ ղվլում ենք, հա՛ ղվլում...

— Առաքել ասի, յեկել եմ քեզանից խորհուրդ հարցնեմ....

— Եղ վո՞նց ա, իմ խորհուրդը պետքն է գալիս. հիմի ջահելներն են խորհուրդն ել, Սողոմոնի իմաստությունն ել:

— Դե քեզ ել հայտնի ա, վոր յես եղ ջահել-ջուհուլի ճամբին չեմ: Ենպես եմ չանց տալիս երեսանց, մլմամ նրանց կողմն եմ, բայց մոքինս են ա, վոր մեր գեղի պատվավոր մարդկանց թըշնամու ձեռքից ազատեմ: Են ել քեզ հայտնի ա, Առաքել ասի, կոլխոզի մասին խորհուրդ արինք, ասինք՝ քանի վոր եղ կոլխոզ ասած ցավը մեզ մոտ ելա գալու, պետք է մեջը մեր մարդն ունենանք, վոր գործը քանդի, իսկ թե բան է՝ չիարողանա՝ դոնյա ձգձգի: Դե յես ել հենց եղ՝ ճամբով եյի տանում, բայց են չունը հենոն մեր բանը ծռեց. լսած կլես, նրան բանտարկել եմ: Մխքա են եր, վոր յերեք որ պահեմ լավ խեղճացնեմ, հետ ել ուրիշներին խրատ ըլի,— իմանան վոր յես եմ ըսեղ տերն ու տիրակալը: Բայց դե ժամանակն ուրիշ ա,— պղտոր ա, չես իմանում մեջն ի՞նչ կա. առավոտը վեր կացա, ասի գնամ Առաքել ասիլի մոտ խորհուրդ անեմ...

Առաքելն ըստ իր սովորության խոհուն չպատասխանեց. նա լուռ շոյում եր իր փառահեղ մորուքը, կարծես նրանից պատասխան եր ուզում:

— Գիտես ի՞նչ կա, Մինաս, բանն անելը չի, բանը մարսելն ա: Թե ինձ կհարցնես, եղ Մադոյանց դյադին վոչ թե իրեք որով, մի տարով պետք ա փթացնես: Բայց դե ես ժամանակին գործը կարող ա ենպես շուռ գալ, վոր սաղ մեր հին գաստեն ել

մի քոսոտ Բենոյի տակը մնա, չունքի վոր նրա յետևը իշխանութ-
թյուն կա կանգնած... Հիմի ասելս ի՞նչ ա,— քննություն ա ըլե-
լու, թքածը լիզելու ա դառնալու,— լավն են կլինի, հանդամանք-
քին մոխիկ աննես, չատ հեռու չդնաս...

— Շատ դրուստ ես ասում, Առաքել ասի, պետք ա հանդա-
մանքին մոխիկ աննել, բայց ախր շատ են դազում մարդու յի՛,
վոնց դիմանաս: Են որը, վոր ես բանը պատահեց,— քեզանից
ի՞նչ թագցնեմ,— մի քիչ քեֆով էյի, բայց ի՞նչ ասեմ— ես րո-
պեյիս էլ ըլեր, էլի չէյի համբերիլ: Եղ մուտաքը հենց իմանաս
չան պես հոտն առել ա՝ մոքինս իմացել ա ու դործն սկսել: Հի-
մի վո՞նց չճիլես դրան, վոր վեր ընկնի, ճենը կտրի:

Առաքելն ականջը կախ լսում եր, ու մատներով չփում մո-
րուքը:

— Գի՛դամ, դի՛դամ Մինաս. դժար տեղն ես ընկել, պահես
Բենոյին՝ վայ ա, չուտ բաց թողնես՝ էլի վայ ա, պետք ա ենպես
աննես, վոր վոչ խորովածն երվի, վոչ չամփուրը...

— Խելք խոսք ես ասում, Առաքել ապի. յես էլ հենց հան-
դամանքին եմ մոխիկ տալիս: Ես արանքումը մեր դործն աչողակ
ա. դեղումը նրանցից էլ մարդ չի մնացել. բլիլը վռնդել են, կոմ-
սոմոլի դյադեքը դեռ խոխա են, մնում են ես քյասիբը, թոզոտ
կոլխոզնիկները, աստծով սրանցից էլ կաղատվենք:

Առաքելը վերցրեց տերողորմյան ու հատիկ-հատիկ դցում
եր, հետո էլ գլուխը չարժում:— «Թեթև ա, բլբլացնում ա, ամեն
հովից ժաժ ա գալիս,— մտածում եր նա Մինասի մասին— «սրա-
նից էլ բան չի դուրս գա...»

— Եհ Մինաս, ասաց նա,— քաղցր խոսքդ անպակաս ըլի.
յերանի թե քո աստծով ըլի. բայց հալատալու ույժ չի մնացել.—
դե հաղար դլխից վոր մինը՝ թեկուզ յերկուսը կտրես— դրանով
բան կլինի՞... վախում եմ եդուց էլ դան թե՝ են ձեր լավ հոդե-
րը, ձեր ջաղացը տվեք կոլխոզին: Մենք վոր կանք՝ թալաք ըն-
կած մկներ ենք, ինչքան էլ դես դեն վաղվղենք էլի վերջը թա-
լաքի մեջն ենք...

Դուրսը չունը հաջաց: Առաքելը կասկածոտ հայացքով նայեց
դռան կողմը:

— Սխչի մի տես ո՞վ ա, դիմեց նա իր թոռանը:

Բայց մինչև աղջկա գնալը ներս մտան յերկու գյուղացի.—

մեկը Ոսեփն էր, բարձրահասակ, հասուսամարմին, մյուսը,— Պողոսը, նիհար, դուրս ցցված տափակ դեմքով ու մանր մարող մատած աչքերով:

Ոսեփն իր վաղեմի քաղաքի ձևի չերքեզկի չուխան էր հագած, ու գլխին էլ, նույնպես քաղաքից բերած մորթե գլխարկը. յերկուսն էլ բավական մաշված էյին, բայց լինքը համարյա չէր նկատում: Նա ըստ իր սովորության— ներս մտալ ձախ ձեռքը մեջքին դրած, ուշադրություն չդարձնելով չան վրա, վորի մեջ բնավորության արդեն ծանոթ էր:

— Բարի աջողում Աստքել, քեզ էլ հետը, Մինաս:

— Ա՛յ աստծու բարին.— համեցեք նստեցեք թախտին:

— Ել ի՞նչ նստենք.— ասաց Ոսեփը.— յես վռազում եմ. Աստքել ապի, գլուխդ ունե՞ս:

— Ունեմ, համա տղես տարել ա:

— Ե՛հ ափսոս:

— Ի՞նչի համար ես ուզում:

— Ի՞նչի համար... դրտատն ասեմ... ուզում եմ գոմիս յետևի պատը քանդեմ, վոր եզուց-ելոր կոլխոզի ճանկը չընկնի...

— Վախել մի, յես չեմ թողնի,— ասաց Մինասը:

— Սաղ ըլես, գիտեմ, վոր սարի նման կանդնած ես. համա պե բան ա ելի, պատահմունքի առաջն առնում եմ... Մինաս, մի ես մարդուն մոխիկ արա,— ասաց նա, ցույց տալով իր հետ յեկած Պողոսին,— մի այնի-ոյնի խանութի ուներ, նալոդով խեղդեցին, վաիել տվին. հիմի ել տղի անունով ա խանութը, ենքան նալոդ են դրել, վոր հավխայան տակից չի դուրս գալ:

Պողոսը կանդնել եր իր յուղոտված, կեղտոտ վերարկվի մեջ, խեղճացած, հիվանդ հավի նման:

— Լա՛վ, մի բան կանենք,— ասաց Մինասը, ուղենալով ցույց տալ, վոր լինքը շատ բաներ կարող է «դրստել»:

— Մինաս, Պողոսը քեզ եր ման գալիս, դե եսա գտավ, ինչ վոր անելաս ա, կանես: Մի ուրիշ բան էլ կա— եսոր մի խաբար իմացա— ասում են մեր հողերը կոլխոզին են տալու. դրուստ ա՞...

— Արխային կաց,— ասաց Մինասը,— յես կթողնե՞մ... բա ի՞նչի համար եմ կոլխոզ մտել...

— Բենոյին ի՞նչ արիր:

— Նստած ա:

— Ա՛յ կես դրա չուն հերն անիծեմ. մի լավ նստացրու, թող վերթի...

— Չե՛, Ոսեփ, մի դուխլ— մեջ մտավ Առաքելը, վեսը վոչ շատ կռացնես կկոտրի...

— Ը՛հ, շատ վախելն էլ մի բան չի.— մեկ ա մինչև դրանց հոտը չկտրի, մենք որ չենք տեսնելու: Մինաս, ախր մի հավաքվենք, խելք-խելքի տանք...

Դրսում չունը նորից հաչաց:

— Ախչի,— ասաց Առաքելը, այս անգամ բոլորովին անհանդստացավ իր տան անսպասելի «ժողովի» պատճառով:

Աղջիկն առանց ասելու դուրս թռավ ու քիչ հետո ներս կավալ մի յերիտասարդ կատարածվի հետ:

— Մինաս, չըչդործիմի նախապահն եկել ա, քեզ վռազ կանչում ա,— ասաց կատարածուն— նախկին բատրակը,— աչքի տակով հեգնորեն դիտելով ժողովվածներին:

Մինասը վեր թռավ տեղից ուրախացած.— «ա՛յ թե գործվոր եր իմ «խոխտ գաղտնի դրությունը»,— մտածում էր նա.— «դե հիմի կտեսնեք, վո՞նց կանի ձեր դատաստանը, ձեր թոզը կկարցնի եստեղից...

— Դու դնա, յես կգամ,— ասաց նա, ցանկանալով իր դիրքը ծանր պահել:

— Չե, նախապան ասեց— անպատճառ հետը կբերես...

Մինասի յերեսը մթնեց.— «Ի՞նչի պետք ա եղպես բան ասեր-մտածում էր նա.— վայ թե նրանք են բերել տվել, նախապահին, նրանց դանգատով ա յեկել... Հանկարծ հիշեց, վոր Բենոն դեռ արձակված չի, և ո՞վ գիտե-կարելի յե նախապահն ուրիշ աչքով նայի այդ բանի վրա...

Ու անկամ քայլերով նա դնաց կատարածվի հետ: Ոսեփն ու Պողոսը խոսուն հետացան, իսկ Առաքել ապին սկսեց ջղայնորեն արագ-արագ ճղել տերտղորմիայի հատիկները, վախից «անունհոր» կրկնելով մտքում:

***

Մինասը դնում եր դատաստած, կարանավորի նման: Նա իրեն վերավորված եր զգում նախապահի խոսքերից— թե «անպատ-

ճառ կբերես հեռուդ», և լավ բան չէր սպասում նրա այդ «հրամայողական» վերաբերմունքից:

— Վո՞րտեղ ա ինչել նախագահը,— հարցրեց նա կատարածվին:

— Պետրոսանց տանը:

«Պետրոսանց տանը... եղ լավ չեղավ... Նախագահի տակը լցրած կլենն»— անցավ նրա մտքով,— դռնյա արճակած ըլելին բենոյին...

Վարանոտ քայլերով նա ներս մտավ Պետրոսենց տունը: Նախագահի մոտ էյին՝ բացի Պետրոսից, կոլխոզի անդամներից յերեք հոգի: Բոլորի դեմքերից նկատվում եր, վոր քիչ առաջ տաք խոսակցություն է տեղի ունեցել, իսկ հանկարծ լռելուց Մինասը յեղրակացրեց, վոր խոսքն իր մասին է յեղել:

Նա մոտ գնաց չրջդործկոմի նախագահին ու ձեռք տվեց:

— Բարով եք յեկել,— ասաց նա, հագիվ զսպելով իր չխոթությունը:

— Բարև,— կես բերան պատասխանեց նախագահը:

— Գնանք մեր տունը,— հանգստացեք:

— Վո՛չ, յես չոտապում եմ— գործ շատ կա...

«Ես էլ լավ նշան չի... շուտ են տվել իրանց կողմը»:

Նա նստեց թախտի վրա, սպասելով նախագահի խոսքին: Տիրեց լռության:

— Ընկեր Մինաս,— ասաց նախագահը.— յես յեկել եմ ծանոթանալու ձեր գյուղի աշխատանքներին, կան մի շարք հարցեր.— յես սկսում եմ առաջինից.— ճի՞շտ է, վոր դուք բանտարկել եք կոլխոզի անդամ Բենոյին:

— Այո, պատասխանեց Մինասը ընկճված ձայնով:

Նրան հուզում եր մանավանդ այն հանգամանքը, վոր «քաջատրությունը» տեղի յեր ունենում իր տեղի Պետրոսի մոտ:

— Դուք այժմ և լիազոր եք, և կոլխոզի նախագա՞հ:

— Այո.

— Դա թյուրիմացություն է. դուք չեք կարող միաժամանակ լինել և այս, և այն:

— Ի՞նչ կոլխոզի նախագահ,— մեջ ընկավ Պետրոսը.— ընկեր Մարտինն եր մեր նախագահը: Նրան հեռացրով կանչել եյին բանֆակ, չոտպով գնաց, սա էլ մեղանից թաղուն հավաքել ա կոլխոզի անդամներին ու իրեն ընտրել տվել:

— Ի՞նչ ես ասեր հնարում, ո՞վ կա հավատացողը— վրա ընկավ Մինասը:

— Սաղ դեղը, բացի քո համքարներից:

— Հա՛ կտեսնես...

Կտեսնեմ քեզ...

— Սպասեք ընկերներ,—չարունակեց նախագահը. դուք ի՞նչ պատճառով եք կալանքի յենթարկել ընկեր Բենոյին:

— Նա առանցի կարգադրության դնացել եր գործն ակսել:

— Իսկ . ձեր-իրրև կոլխոզի նախագահի— պարտականության եւ— գործն առաջ տանե՞լ, թե՞ չե:

— Իհարկե, յես միշտ առաջ եմ տանում չինարարությունը... յես կոլեկտիվ գործի համար եմ...

— Ընկեր Մինաս, այսքանը կասեմ,— վոր կալանքի յենթարկելով կոլխոզի անդամին միայն այն պատճառով, վոր նա ուզեցել է աշխատանքները արագացնել՝ դուք դրանով վարվել եք մեր կոլխոզային ծրագրի հակառակ: Թե ի՞նչն եր ձեզ դրդել այդպիսի բան անելու,— այդ մենք կքննենք հետո, իսկ այժմ նախ և առաջ պետք է անմիջապես կարգադրեք, վոր ազատեն ընկեր Բենոյին: Յեթե նա խախտել է աշխատանքային դիսցիպլինը, դրա դեմ կարելի յեր ուրիշ միջոցներ գործադրել:

Մինասը կարմրեց ու ամոթից չեր լսանում ի՞նչ ասի: Նա չեր սպասում, վոր հարցն այդ ծայրից կսկսվի:

— Դե յես կկարգադրեմ... ասաց նա չփոթվելով,— միայն խնդրում եմ դուք ձեր կողմից... Ենպես վոր իշխանության հակառակ բաներ չանեն...

— Ուրեմն ա՛յդպես... ասաց նախագահը վճռական տոնով, ուզենալով հասկացնել Մինասին, վոր իր վճիռը վերջնական է:

Մինասն իրեն կորցրած, դուրս յեկավ սենյակից՝ կարգադրություն անելու Բենոյին ազատելու մասին:

— Ուրեմն ընկերներ,— ասաց նախագահը նրա դնալուց հետո,— ստրատեգիական դրությունը պարզ է...

— Ինչ դրություն ասացի՞ք, ընկեր Սարդիս,— խոսքը կտրեց Պետրոսը:

— Վոչինչ,— ժպտաց նախագահը— ուզում եմ ասել դրությունը ձեր դյուղում ինձ համար պարզ է, այն բոլորից հետո, ինչ վոր դուք ինձ պատմեցիք: Կուլակները ոգտվել են խառը դրությունից, յերբ թուլացել եր դյուղի ղեկավարությունը: Մինասը

դիմակ և դրել դեմքին, մոտ բարեկամ ձեվացրել, ու ներս ապրդել մեր շարքերը, բայց չտեսով այդ դիմակը պատռվեց. դեռ վոտը չամրացրած— քարին դեմ ընկավ: Պարզ և, վոր կատող ենք հարց դնել՝ նրան մեր շարքերից հեռացնել, իսկ այժմ անցնենք գործնական խնդիրներին— մենք պետք և անպայման վաղը սկսենք թե ռումի մաքրելը, և թե կոլխոզի աշխատանքները...

Դուռը բացվեց և ներս մտավ Բենոն, իսկ նրա յետեվից Մինասը:

— Բարով ձեզ,— ասաց Բենոն, դեմքը խոժոռած, ու լուռ կանգնեց:

— Ընկեր Բենո, բարև. շատ ցավում եմ, վոր ձեզ հետ այդպես են վարվել. ձեր գործն առանձին քննության կդնենք. նրանցից, մենք խոսում ենք գարնանային աշխատանքների սկսելու մասին:

— Չե՛, ընկեր նախագահ, յես չեմ նստել դասակարգային թշնամու մոտ, նրա հետ խորհուրդ չեմ անել:

— Ո՞վ և նստել դասակարգային թշնամին,— հարցրեց նախագահը, թեպետ գիտեր, թե ո՞ւմ և ակնարկում Բենոն:

— Ա՛յ սա յա,— ասաց նա— ձեռքով ցույց տալով Մինասին:

— Դասակարգային թշնամի ել ես, հակա ել ես. դո՛ւս ես մեր գեղի քանդողը,— վրա տվեց Մինասը:

— Ա՛յ, եսոր կերևա, ո՞վ ա կուլակների հետ մեր ընկերների աշխատանքը կործանում: Մենք քո յերեսը եսոր կպարզենք...

— Դու քո յերեսը պարզ արա. դո՛ւս յես մեր խորհրդային կարգերը խանգարում, ինքնագլուխ իշխանություն ես բռնացնում:

— Վերջը մտեցել ա, լեզվիդ ես դռռ տալիս. բայց դե դուրս չի գնալ ասածդ,— տակը չատ ա թաց...

— Ինչ ես բերանդ չաղ տալիս:— Ես մարդը յեկել ա չրջանից, վեր քու ավել-պակաս խոսքերը լսի...

— Չե, ներողություն կանես, սա յեկել ա, վոր քեզ պես յերկու յերեսանի թշնամուն մեր մեջից հանի... Բա ինչ եյիր կարծում–մեր ընկերները մեռած ե՞ն...

— Ընկեր նախագահը շատ լավ ա հասկանում, թե ո՞վ ա խառնակիչը:

— Խառնակի՛չը,— հա յես ձեզպեսներէն խառնակիչին եմ. դու հենց լմանում եյիր խորհրդային իշխանութիւնը վերջացո՞վ. չե՛ շատ սխալ ես...

— Ընկերներ, յես առաջարկում եմ վերջ տալ մասնաւոր խոսակցութիւններին,— ժպիտով նախագահը:

Ծերկուան էլ լռեցին: Մինասը սիրտ առաւ, կարծելով, թե նախագահը նկատողութիւն է անում միայն Բենոյին: Նա ուզում էր նորից առաջարկի նրան— դալ իրենց տուն, «հանգստանալու» (նա արդէն տանը պատուիրել էր ճաշ պատրաստել), բայց այդ րոպէին դուռը բացվեց և ներս նայեց իր քարտուղար Սողոմը, իսկ նրա յետևից նախկին խանութպան Պողոսը:

Մինասը չտապով դուրս յեկաւ, վորպեսզի նախագահի աչքը չընկնի, թե ինքն ողնում է մասնաւոր խանութպանին:

— Ի՞նչ ես հետևից մեզ գալիս,— բարկացավ նա,— Սողոմի վրա,— տեսնում ես գործ ունեմ, կենտրոնից մարդ ա յեկել...

— Հա՛, յես չեյի իմանում... հնարեց Սողոմը:

Մինասի դուրս գնալուց հետո նախագահը նորից շարունակեց.

— Ընկերներ, ուրեմն, կրկնում եմ,— առաջարկում եմ վաղն անմիջապես սկսել առվի մաքրելը և կոլխոզի աշխատանքները. դուք այսոր յերեկոյան կղնեք այս հարցը կոլխոզի ժողովում և ինձ կհայտնեք: Համաձայն ե՞ք:

— Համաձայն ենք, ասացին բոլորը:

— Այնուհետև անհրաժեշտ է ընտրել մի ղեկավար վաղվա աշխատանքների համար.— յես առաջարկում եմ ընկեր Բենոյին, դեմ վոչ վոք չկա՞: Ուրեմն, ընդունվում է: Գործը պետք է կազմակերպել խիստ դիսցիպլինար կարգով. այժմյանից պիտի հրահանգել, վոր լմացնեն աշխատավորներին:

— Ինդրում եմ դուք կարգադրեք,— ասաց Բենոն,— Մինասը կարող է մեր գործը տապալել:

— Լա՛վ. այդպես էլ կանեմ: Ընկերներ, ինչ վերաբերում է մյուս խնդիրներին— բջիջի վերակազմման, և առհասարակ ղեկավարման՝ դրանք կղնան հերթական ժողով:

— Ընկերներ, յես առաջարկում եմ հենց հիմա դնենք նրան հեռացնելու հարցը,— նորից առաջարկեց Բենոն.— վաղվա աշ-

Խաստանքների ժամանակ յերթե նա ելի լիազոր, կամ կոլխոզի նախագահ մնա, յես ինձ մեռած կհամարեմ...

— Դուք կարող եք այս յերեկո կոլխոզի անդամների ժողով հրավիրել և նրան կոլխոզից հեռացնելու հարցը դնել: Ուրեմն, ընկերներ, վերջացնենք. կարծում եմ, վաղը առավոտ մենք կլինենք արդեն աշխատանքի վայրում...

— Հա՛, հա՛ կլինենք անպատճառ,— ասացին բոլորը:

***

Հարսանիքի երարանգում եր տերում դյուղի առվի յերկրորդ թյամբ՝ սկսած կոլխոզի այդուց: Բահերը ձեռքին շարվել եյին դյուղացիները: Կոլխոզնիկների խումբն այդում վար եր անում: Ջուռնան նվագում եր «կոխի» յեղանակը, վորը պարի նման կռներն եր ընկնում, աշխուժացնում աշխատանքը: Կարծես մեկ մեկու հետ մրցման մտած— բոլորը յեռանդով մաքրում եյին առուն, հողի սև ճմբերով բարձրացնելով նրա ափերը:

Կուլակներին դատել եյին ընդհանուրից, ու ամեն մեկին դատավորել վորոշ տարածության վրա, ամեն մեկին երեն բաժինը տվել,— ինչպես ասում եյին,— անհատական տուրք եյին նշանակել:

Շրջգործկոմի նախագահը կանգնած եր Բենոյի հետ, կոլխոզի այդում: Նրանց մոտեցավ դյուղի դարբինը, յերկու բահ ձեռքին:

— Համեցեք, հյնդեր, ես բահն ել քեզ համար եմ բերել. ձեռդ միշտ վինարար ըլի:

— Շնորհակալ եմ, ընկեր,— պատասխանեց նախագահը, ընդունելով բահը:

Դիմացից՝ առվի ափին կանգնած կոմյերիտը, վորը լսում եր այդ խոսակցությունը, ձայն տվեց.

— Ա՛յ դու կեղծավոր դարբին,— դուրսը քահանա, տանը սատանա. քեզ ել հարկավոր եր կուլակների հետ աշխատեցնել: Ա՛յ թե դռխում ես ե. մի ասեղի չափ բան ես չինում, մի տուն փող ես ուզում:

— Բալես, սո՛ւս կաց, հա՛րսանիքին հաչիվ չեն անիլ. հիմի ել ես ա մի շաբաթ ա, արտել ենք դառել, ել ի՞նչ ես ուզում:

— Ի՞նչ արտել, հավաքել ես բարեկամներիդ, թե մթամ արտել ա...

— Բալնա, քու հերը սուս ու փուս մարդ էր, դու եղ ո՞ւմ վողմն ես դցել:

Աստց ու անախորժ խոսակցությունից հեռացավ:

Նախապահը՝ բահը ուսին դրած, Բենոյի հետ անցավ առվի ափով. ամեն տեղ նրանց հանդիպում էին «կեցցեներով». ցնծումի մի ալիք անցավ աշխատողների մի ծայրից մյուսը:

— Ընկեր նախապահ,— ասաց Բենոն,— են որը, վոր. յես յեկել էյի եսաեղ աշխատելու, Մինասն ինձ ասում եր— դու քանի՞ պլխանի յես, վոր եսաեղ բանում ես. հիմի ձեզ եմ հարցնում— քա՞նի պլխանի յեմ:

— Հիմի հազար պլխանի յես, ընկեր Բենո:

Նրանք հետ դարձան նույն չարքերով, նույն ցնծագին կեցցեների միջով ու մոտեցան կոլտնտեսականների խմբին:

— Ընկեր նախապահ, եստր մեր կոլխոզին քսան հոգի անդամագրվեցին, ասաց Պետրոսը:

— Ընկերներ, դուք պետք է չարունակ ավելացնեք ձեր անդամների թիվը, ուժեղացնեք աշխատանքը, դուք պետք է արդյունացնեք մեր ծրագիրները...

— Պատրաստ ենք, ձայն տվին բոլորը:

Նախապահը սկսեց բահով աշխատել նրանց հետ. Բենոն հետևեվեց նրան:

Ջուռնան նվագում եր, ժամանակ առ ժամանակ տեղը փոխելով: Դարբինը՝ վոր մի քիչ խմած եր, ինքնակոչ խրախուսողի դերն իր վրա եր վերցրել:

— Ա՛յ տղերք, ա՛յ ղոչաղներ, ով լավ աշխատի, նրան ոչ-դուն հարս կընկնի,— ասում եր նա դիմելով ջահելներին:

— Եղ ի՞նչ ասացիր ուստա, մեկ էլ ասա,— հարցրեց ջահելներից մեկը:

— Հը՛, քեֆդ եկա՞վ. ամոթ քեզ, առանց կաշառքի չես բանում...

Տղաները ծիծաղեցին, իսկ դարբինը ինքն էլ սկսեց աշխատել:

Նախապահը Բենոյի հետ յետ ու առաջ եր գնում, չարքերի ուղղությամբ: Ամեն տեղ աշխատանքը յեռուն թափով չարունակվում եր: Ցերը հետ դառնալիս Բենոն նորից յերեվաց, Պետրոսը հեռվից ձայն տվեց.

— Հե՛յ Բենո, հե՛յ...

— Հե՛յ,— պատասխանեց Բենոն:

— Սրա, քանի՞ դվխանի ես:

— Հա՛ զար, հա՛զար դվխանի յեմ, եհե՛յ...

Ծիծաղում եր Պետրոսը, ծիծաղում եյին կոլխոզնիկները, ու նոր թափ առած՝ վառնելով ավելի սլինդ խխում բահին:

Բենոն ժպտում եր խոշոր կնճիռներով, ու զարմանում, թե ես վո՞նց յեղավ, ես վո՞նց չուռ յեկավ ամեն ինչ...

Ու չդիտեր Բենոն, վոր այդ որվանից նրան կոչեցին յեր մի նոր անուն՝ «Հազար դվխանի...»

1931 ·

## ՆԵՂ ՓՈՂՈՑԻ ՍԻՄՖՈՆԻԱՆ

*Գավթական դործվոմի աչխատակիցների դասակն եր: Ժամէ ինդիյ դահլիճն արդեն ծայրեծայր լիքն եր ու նոր յեկողների համար դարճել եր անհատնելի: Բեմի վրա, կարմրով ծածկված սեղանի մոտ, մեջտեղը նստած եր կենտրոնից յեկած նախադահը,— հոդնած, դունատ դեմքով ու խոնված, սև մազերով: Նա լուռ եր ամբիոնի մոտ կանդնած դասդին, առանց յերեսը դարձնելու, կկոցելով իր քնատակաս, կարմրած աչքերն ու ինճուա հայացքով նայում եր դեմացի հասարակութեան, վորով առիթ եր տալիս մի քանի վախտա ծառայողներին կարծելու թե նա ուղում է «թափանցել իրենց ներսը»: Նրա կողքին, աչ ու ձախ, չարվել եյին դասդան մասնաժողովի անդամները:*

*Փողոցի կողմի պատուհաններից չեղ ընկնում եյին ամառվա արևի ճառագայթները, տանջանքի մատնելով իրենց դասում նրստածներին, ու առանձնապես վայելով իրար կողքի նստած յերկու հին ծառայողների ճաղատ դլուխներին: Գործից դուրս նրանք միշտ միասին եյին լինում, այդ պատճառով էլ անունները դրել եյին «Թաղևոս և Բարդուղիմեոս»:*

*Բեմի վրայից նոր լրջավ Ֆին-բաժնի վարիչ Նահապետյանը՝ փափուկ մարմնով, փափուկ ձևերով մի մարդ, վորի մասին կարելի յեր ասել, վոր նա ծառայել է, ծառայում է ու կշարունակի ծառայել,—և ուրիշ վոչինչ: Մի ժամից ավելի նա պատմում եր, ավելի շուտ՝ կարդում եր իր յերկարամյա գործունեության մասին: Միաբար, վորպես պատուհանի ապակու վրա պնդված ճանճի բզզոցը, անցնում եր ականջից ականջ նրա ձայնը, հիշատակելով այն բազմաթիվ հիմնարկները, վորտեղ նա ծառայել եր: Սեղանի վրայի դրաֆինը յերկու անդամ դատարկվեց ու նորից լցվեց, բայց նա դեռ չարունակում եր իր «ցուցակ ծառայությանցը»:*

Դահլիճում նստած աշխատակիցները, նեղված չոլից, հեղձուցիչ ոդից, ու ձանձրալի հոսից, թուլացած հետ եկին ընկել աթոռների մեջքին, ու վոտը վոտի վրա դրած, կենտրոնացրել եկին հայացքները իրենց կոշիկների ծայրերին, ասես այնտեղ եր թաղնված իրենց կրծող դժնավոր պատասխանը,— «կդասվե՞մ», թե՞ չեմ «դասվի», կմնա՞մ թե՞ չեմ մնալ...»

Ցերբ Նահապետյանը ցած իջավ բեմից, կարծես սարից հով փչեց բոլորի դեմքին: Մի կենդանի շարժում անցավ շարքերով, իսկ պատի մոտ կանգնած կոմկերիտականները թեթև քմծիծաղում եկին, կրկնելով Նահապետյանի մեջ բերած հիմնարկների սարսրնական անունները. նրանց համար «բարեկործական ընկերությունը» և «մարզասիրական ընկերությունը» նույնքան ծիծաղելի եկին հնչում, վորպես «տերտեր», «փիլոն», «յեպիսկոպոս» բառերը:

Կարճատև, ինքնահոս ընդմիջումից հետո նախագահը կանչեց.

— Սդելինա Փորսողյան...

Թուչունի մանր, արագ քայլերով բարձրացավ փոքրահասակ մի կին՝ կապույտ, համեստ հագուստով ու թուխ, սրված դեմքով: Նա ինքնավստահ կանգնեց ամբոնի մոտ ու շրթունքները սեղմած՝ մի քանի վայրկյան նայում եր դիմացի նստողներին: Չոմանն մատնաժողովի անդամներից մեկը, թեքվելով դեպի իր կողքին նստածի ականջը, ասաց ժպտալով.

— Նանը չմեռնի տիկին Ջանիկին, ասեղի ծակով էլ կանցնի...

Այսպես եկին անվանում նրան ծառայողները իրար մեջ խոսելիս:

Սդելյան թեթև հառաչ, դլուխը թեքեց, վիզը ձդելով թուչունի նման ու սկսեց փոքր ինչ խզված ձայնով.

— Ընկերներ, յես ծնվել եմ Ջախչախ դյուղում...հայրս քահանա յեր, սկզբնական կրթությունը ստացել եմ ծխական պարոցում...

Քանի դնում, նրա ձայնն ամրապնդում եր ու առնում արագություն: Նա թուուցիկ անցավ նախախորհրդային տարիների վրայով, ու յերկար կանգ առավ խորհրդային շրջանի վրա: «Վորբանոցի կառավարչուհի... ճաշարանի դանձապահուհի, վարժուհի, հիվանդանոցի տնտեսուհի...» անցնում եկին իրար հետևից նրա վարած պաշտոններն ու, ամեն մեկի մասին խոսելիս, մի չոր ավելացնում

եր—«ունեմ վկայական ծառայության մասին» և դուրս եր տալիս ձեռին բռնած թղթերը: Անընդհատ ու արագ ղլուխը շարժելով, նա անցնում եր հիմնարկից հիմնարկ՝ անդիր արած աշակերտի նման: Հեռվից այնպիսի տպավորություն եր անում, ասես կտցահարում եր ոդը, իսկ ձայնն այնպես եր հնչում, կարծես բարակ չոր ճողեր եր կոտրատում ճռճռացնելով: Վերջապես նա կանգ առավ իր վերջին եառապի՝ գործկոմի ճաշարանի վրա ու վոգևորված ավելացրեց, վոր ներկայումս կոոպերատիվի խանութային հանձաժողովի հարվածային անդամ է:

Նա արագ չնչելով՝ հուզված կանգ առավ, մաքուր թաշկինակով սրբեց ճակատի քրտինքն ու սպասդուն, արագաշարժ աչքերով նայում եր հանդիսականներից վերև, ղեմացի պատին:

Նախագահն ինչ վոր թղթերով զբաղվելով, ուշացնում եր իր խոսքը: Կոմկերիտների շարքում ժպտալով նայում եյին տիկին Աղեյային, կարծես ապատելով, վոր ելի վշտրունակվի:

— Շա՛տ փորձված է յերևում,— ասաց նրանցից մեկն իր կողքինին,— դատ անդիր արած պատմեց ...

Իսկ «Բարդուղիմեոսը», յերեսը դարձնելով «Թադևոսի» աքցաղի նման ճղված բարակ վղին, ասաց.

— Հիմար չկարծես հա՛, տիկին Ջանիկը վորտեղ ուտելու ու հագնելու բան կա, ննջեղ է ծառայել:

— Աչխարհն ուտողինն է,— պատասխանում է «Թադևոսը», փիլիսոփայական տոնով, առանց յերեսը դարձնելու,— բա մեզ պես հո չոր տեղերը չի արածում...

Նախագահը ղլուխը բարձրացրեց.

— Ծորհրդայնացումից առաջ վո՞ր կուսակցության եյիք պատկանում,—հարցնում է նա.

Անկուսակցական եյի,—ժպիտ ճևացնելով պատասխանում է Աղեյան:

— Ձե՞յիք համակրում վորևե կուսակցության:

— Վոչ, յես միայն ծառայում եյի:

— Իսկ այժմ ի՞նչ համեմատության մեջ եք դնում անցյալը և ներկան:

Անցյալը թողնելով, Աղեյան պատասխանում է «այժմ»-ի մասին.

— Յես այժմ մեծ համակրությամբ եմ վերաբերվում խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության:

— Ի՞նչու ձեք համաձայնում խորհրդային իշխանության.

— Վորովհետև նա բոլոր աղքատների պաշտպանն է:

— Մի բան այդքա՞ն. ե՛հ, մի բարեզործական ընկերություն էլ կարող է ասել, թե աղքատների պաշտպան է:

Սդելյան փոքր ինչ շլոթվում է, բայց հանկարծ նրա հիշողությունն ինչ վոր թռիչք է անում, ու վրա յե տալիս.

— Վորովհետև մենք կռվում ենք իմպերիալիստական բուրժուազիայի դաժանագործ ճշմամների դեմ... սոցիալիստական շինարարության ատաքարիզում...

— Ուրեմն դուք կռվում եք բուրժուազիայի ճշնամիների՝ այսինքն պրոլետարիատի դե՞մ,—ժպտում է նախագահը.

Դահլիճը քմծիծաղ է տալիս:

— Վոչ, յես սխալվեցի.—մենք կռվում ենք բուրժուաների և իմպերիալիստների դեմ:

Նախագահն իր անցյալ գործունեության փորձի հիման վրա պարզված է համարում գործի մտավոր-քաղաքական դեմքը, ասելով մտքում— «ինչ վոր կա, սա յի, եվ ավելի բան չի քամվիլ...» ու դիմում է հատարակությանը.

— Ո՞վ ունի հարցեր, կամ առարկում:

Բոլեաչուն վոչ վոք չեր արձագանքում: Սակայն նատարանների հետ են նայում, տեսնելու համար, թե ո՞վ է խոսելու:

Հանկարծ հետևի շարքերից մեկը բարձր ճարմով ասաց.

— Յես ուզում եմ խոսել:

Բազմի բանվոր Սարգիսն եր, վորն արձակուրդին յեկել եր հայրենիք հանգստանալու: Նա մեծ դժվարությամբ խիտ շարքերը հեղքելով դուրս յեկավ, կանգնեց բեմի առաջ. նրա լիքը, փոքր ինչ գոնատ դեմքը աշխատում եր լրջություն պահպանել, բայց հեղնող աչքերը խանդարում եյին:

— Ներողություն,—հարցնում է նա, դառնալով գործուին,—դուք տիկին Իզելյան չե՞ք:

— Սդելյան,—ուղղում է գործուը, դեմքը խոժոռելով ու չարագուշակ նայում է Սարգիսին, աղոտ վերհիշելով նրա դեմքը:

— Հո՛, դուք Յերևանում են նեղ փողոցում չեյի՞ք ապրում, հրատարակի դիմաց...

Սդելյան հանկարծ մտաբերում է Սարգիսին ու վախով բռնկված՝ ճիգ է անում չճանաչելու տալ նրան:

— Դուք խառնում եք, ես Իդիլյան չեմ...

Բանվոր Սարգիսը քմծիծաղ է տալիս. Նա խոսում է, ու թվում է, թե խոսողը նրա ևս, թախանցող աչքերն են:

— Դե վոր ձեր անունով չեք ուզում ճանաչվել, ուրիշ անունով կասեմ,— դուք սիկին Ջանիկը չե՞ք:

Դահլիճը ժպտում է ու թևթև շարժում անում:

Ադելյան պինաֆոռն է լինում, վոչինչ չի պատասխանում ու գլուխը թեքում է:

— Հա, ես սիկին Իդիլյան է, ընկերներ,— ասում է Սարգիսը, յերեսը դարձնելով հասարակության,—իմ հարևանն եր Ցերևանում...

— Ադելիա,— ուղղում է նախագահը:

...Մի նեղ փողոցում եյինք ապրում,— շարունակում է Սարգիսը,— մի տան մեջ, հենց կողք-կողքի: Դաշնակցության ժամանակ ես իմ հարևան, սիկին Իդիլյան, վորբանոցի մայրապետն եր...

Դահլիճն ուղղում է «մայրապետ», նրա տեղ «կառավարչուհի» առաջարկելով, բայց ընկեր Սարգիսը չարունակում է առանց ուշադրության դարձնելու.

— Ես սիկինոջ բնակարանը, ինչ ասեմ, դառել եր վոնց վոր դնաց—գալու բյուրո. ամբողջ որը խմբապետների վոտը չեր կտրում. գալիս եյին, մթերքներ, խմիչքներ բերում, տոնը լցնում, հետո յել մինչև ուշ գիշեր խնճույքներ սարքում, աղմկում, չեյին թողնում, վոր հանգիստ քնենք...

Ադելիայի առաջ հանկարծ ամբողջ մերկությամբ պարզվում է բանվոր Սարգսի յելույթի իմաստը, ու ահը սրտին նա վճռում է պաշտպանվել ամեն կերպ, ինչ ել վոր լինի...

— Սո՛ւտ է, յես եղպես բան չեմ արել,— բողոքով, բարձր ձայնով ասում է նա:

Նախագահը նկատում է լրջորեն.

— Թույլ տվեք ընկերոջ վերջացնել իր խոսքը:

Ընկեր Սարգիսը հեղնանքով վոտից գլուխ չափում է Ադելյային, ու դառնալով հասարակության, նորից կապում թելը:

— Հա՛, շարունակում եմ խոսքս— վորբանոցի մայրապետն եր, ամբողջ որը բերում եր, վառ բերում եյին կոնսերվներ, խտացրած կաթ, գարեհներ, ու հազար մի բան: Ես սիկինը մի գլուխ հենց «Վարդուշ ջան», «Սուրիկ ջան» եր ասում, բեր-

Նիցը մեկն քաղցը «Ջան» ու «Ջանիկ» եր դուրս գալիս, իսկ նաղդն են եր, վոր տունը լցնում եր քաղցը բաներով: Հենց դրա համար էլ, տիկին Իզելյայի անունը դրել էին «տիկին Ջանիկ»... Հիմի ես բոլորը, ընկերներ, նրա համար եմ պատմում, վոր չկարծեք, թե չեմ ճանաչում. ինչես եմ հիշում, ինչպես էսորվա բանը...

Աանենք եղ մի կողմը թողնենք, անցնենք պլեսավորին—ցավն են եր, վոր ես տիկին Իզելյան որ չեր անցնում, վոր մի խոթաղեան ցուցց չտար մեր բնակարանի կողմը և ոտառնալով չասեր.

— Ես բայշևիկների քոքը պետք է կոտրել...

Տիկին Ազելյան լինչ վոր անորոշ ձայն հանեց, ուզեց առարկել, բայց նախադասը ձեռքի շարժումով լռեցրեց:

...Եղ էլ վոչինչ... դրան էլ դիմացանք. ամեն լինչ անցավ, կեկավ խորհրդային իշխանությունը... տեսնում հենց առաջին որը ես տիկինը կարմիր փալասներ և կպցնում իրենց դռների վրա, հետո էլ վորբանոցի աղջիկներից մի խումբ հետևն արած, անցնում և մեր նեղ փողոցով ու կանչում.

— Կեցցե՛ խորհրդային իշխանությունը:

Ցես նկատում եյի վոր նա եղ բաները ենպես եր ասրքում, վոր չես տեսնում. ընտանիքիս հետ էլ քաղցրացել եր վոնց վոր մեզը ու չաքար: Պատշգամբով անցնելիս մի քանի անգամ ականջովս ընկան նրա խոսքերը. բարձր եր ասում, վոր լսեմ:

— Ցերանի մի քիչ վաղ դար խորհրդային իշխանությունը, ես անիծված դաշնակների հատը կտրցներ...

Ցես էլ լսում եյի, մտքումս ծիծաղում ու լսում: Դե, ընկերներ, մենք իշխանությունը նոր եյինք վերցրել, հասարը ու մի գործ կար, շատ անգամ պատահում եր, առավոտը վաղ դուրս եյի գալիս ու վերադառնում ուշ գիշերին. ո՞վ ժամանակ ուներ ուշադրություն դարձնելու ես տիկին Իզելյայի վրա. գրանից շատ մեծերը կային, իսկ դա, վորպես մեր ֆշնամի,—յեղած-չեղած մի հաշիվ եր:

Տիկին Ազելյան վոքր լինչ հանգստանում է, ու խորը շունչ քաշում. «ես մեկը լավ եր»,— մտածում է նա,—ան՛ր ասելած, յերանի սրանով էլ վերջանա...»

...Անցավ ժամանակ,—շարունակեց Սարգիսը, յեկավ դաշնակների ավանտյուրան: Գործն ենպես խառնվեց, վոր չկարողացա ժամանակին դուրս գալ Ցերևանից ու ստիպված յեղա

առաջին որը թաղնվել մեր տան ներքնահարկում: Բարձրացել էյի պատի վրա, մի փոքրիկ պատուհանի նեղ անցքից դիտում էյի մեր դավիթը: Մեկ էլ տեսնեմ, տիկին Իզիլյան տանից դուրս բերեց դաշնակների յեռադույն դրոշակն ու հենց դավիթից սկըսած, մի քանի ավարա տղաներ շուրջն առած, դուրս գնաց բղավելով.

— Կեցցե՛ մեր յեռադույն դրոշակը, կեցցե՛ դաշնակցությունը...

Դարպասի բաց դռներից յերևում եր փողոցը. տեսա, վոր մի քանի անգամ իրա չքախմբի հետ գնաց յեկավ փողոցով, ելի դաշնակցական կեցցեներ կանչելով:

Հիմի յես մտածում էյի՝ թե ես վնիկը, վոր դիմակը փոխեց, դրա վրա պարմանալու բան չկա մանր-բուրժուական ճահճներում պետք է մանր—բուրժուական դորտեր կռկռան... բայց դե հարց եր դալիս—կմատնի՞ ինձ, թե չե... մտածում էյի՝ կարելի յե չմատնի,—այն բոլորից հետո, ինչ վոր կատարվել եր... ինքս ինձ ասում էյի՝ կմնամ մինչև յերեկո, իսկ հետո դուրս կգամ թաղատից, կպատասխանեմ...

Բայց ինչպես յերեկոց, յես շատ միամիտ էյի,—դեռ եղ մտածելս չեր վերջացել, մեկ էլ տեսնեմ՝ ես տիկին Իզիլյան՝ հետն առած մեծ բեհեզով մի մատրեխտա, յեկավ մեր տուն: Հետո իմացա, վոր սրանք մտել են մեր բնակարանը, ահաբեկելով կնոջս, վրան ատրճանակ բռնել, թե՝ ասա, վո՞րտեղ է ամուսինդ. նա յել, ի հարկե, պատասխանել և, թե չգիտեմ: Յերբ ներքև իջան, յես լսեցի նրանց խոսակցությունը—տիկինը քաշեց իմ բպպակների տակն ու ասաց.

— Հենց վոր տուն գա, իսկույն իմաց կանեմ քեզ:

Ամբոխը մորակով խլեց այտնին, սպառնաց, մի հայհոյանք ուղղեց մեր հասցեյին, ու գնաց:

Հիմի ընկերները, ինչպես առաջվա ժամանակ ասում էյին, պատիվ ունեմ ներկայացնելու ձեզ տիկին Իզիլյային. դուք լսեցիք, թե ինչպես նա փրկությունը բերավ ինձ իրան դռները եր. յես ել ես հայելին առաջն եմ դնում, վոր լավ տեսնի իր իսկական պատկերը...

Տիկին Ազելյան ընկճված, նայում է վառների առաջ. նրան

քիվում է, թե մեջը ինչ-որ թելեր են կտրվում, թե մարմինը ճկվում է, ու պիտի գլորվի խոր անդունդը...

Բոզենյական լռության մեջ նա կարծես սպասում է, որ գոնվոր Սարդիսը կշարունակի իր խոսքը: Նա ճիգ է անում, ինչ-որ արհեստական թռիչք անելու ու հանկարծ բղավում է խռովիկային ձայնով.

— Սո՛ւտ է... զրպարտություն է... չես բողոքում եմ... չես կապացուցեմ...

Նա շարունակում է իր անկապ բացականչերը: Նախապահը ելեր է կենում տեղից զանգահարում: Կարծես հուզումն անցնում է ժողովականներին. սկսվում է ընդհանուր շարժում. ամեն մեկը չտապում է հարևանին հայտնելու իր տպավորությունը: Հավատարկությունը կորցնում է նուիրական նահապետյանն ու դառնալով իր կողքինին, ասում է տխնոջ մասին.

— Սա վոչ թե ծառայություն է, այլ թյուրիմացություն...

«Թաղևոն» ու «Բարդուղիմեոսը» չվարած նայում են իրար յերեսի:

Սպմուկի մեջ մի պատանի մեծ դժվարությամբ առաջ է գալիս խիտ չարքերի արանքով ու հասնելով բեմին՝ նախապահին հանձնում ձեռին բռնած թուղթը:

Հանդիսականների ուշադրությունն անցնում է պիոների վրա, վորը կանգնել եր գինվորական պոզայով, դեմքը խոժոռած, մռայլ արտահայտությամբ. մի կենտրոնացած միտք էր խոսում եր նրա դեմքի վրա, կնճռում թարմ ճակատը, դունատում այտերը...

Ձերբ լռությունը վերականգնեց, նախապահը կարդաց:

— «Մայրիկ, դու պատճանել ես մեր կարմիր դրոշակին. յես այլևս չեմ կարող ապրել քեզ մոտ. յես հրաժարվում եմ քեզանից ու այսուհետև կապրեմ իմ ընկերները—պիոներների հետ:—Գարիկ»:

Նախապահը նայեց արճանացած պիոների սպառնացող աչքերին և ուզում եր ինչ-որ բան ասել, բայց այդ վարկյանին հանկարծ պատից տիկին Սպեյայի հիստերիկային ծղրտոցը.

— Վա՛յ վոտքիս, եղ ի՞նչ արիր... վո՛րդիս... քեզ հատար եմ արել...

— Ուրեմն ճի՞շտ եյին ընկերոջ սպանները,— բարձր ձայ-

նով հարցրեց նախագահը, բայց տիկին Սդելյան չպատասխանեց, նա նորից բղավեց,— վո՛րդիս, ու նվաղելու նշաններ արավ...

Իսկ վորդին՝ պլոնները զինվորական ձևով պտտվեց ձախ կողմի վրա ու չարժվեց դեպի մուտքը:

1931

## ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

*Լուսյոը նոր եր բացվել, յերբ Սուքիասը զարթնեց դռան թխկոցից: Նա խնդուն վեր թռավ անկողնից ու շապկանց, վռազ-բռլվի մոռեներալով դռանը, հարցրեց.*

*— Ո՞վ ե:*

*— Յես եմ՝ Յերմանդը, — լսվեց դրսից մի խուլ ձայն:*

*— Մի քիչ ապա՛սկը, ես բոպեյկա,—ասաց Սուքիասն ու դառնալով դեպի թախտը, սկսեց չտապով հագնվել: Մինչ այդ նրա կինը, մի ակնթարթում վրան ձգելով իր դերխանը, հավաքեց անկողինները, թողնելով պառկած յերկու յերեխաներին:*

*Սուքիասը բացեց դուռը: Յեկողը դյուղխորհրդի նախագահն եր:*

*— Բարի լո՛ւյս,— ասաց նա, քունը կոտրած մարդու թավ ու խռհուն ձայնով.—ներողություն կանես, խոչի գալու ժամանակը չի, բայց դե հանգամանքը պահանջում ա...*

*Վռչինչ, ընկեր Յերմանդ, համե՛ցեք, նստի՛ր մեր գործը ժամանակ-անժամանակ չի հարցնում:*

*— Գիշերս լամացա, վոր յեկել ես. ինչի՞ ուշացար:*

*— Դե ի՞նչ ասեմ, դիտես ելի քաղաքի բանը—գնում ես վարչչի մոտ, ուղարկում ե գործավարի մոտ, նա յել հաչվապահի, վերջն ել ենպես ե դուրս գալիս, վոր վաղը պիտի գնաս. եղպես մի յերկու բյուրոկրատի պատճառով գործը ձգձգվում ե, մի թուղթ գրելը գառնում ե պատասխանատվություն:*

*— Հիմի դու են ասա, ցորենն ու տրակտորը գալիս ե՞ն թե չե:*

*— Շուտով կուղարկեն. հաստատ խոսք եմ առել, վոր մեզ առաջին հերթին տան:*

*— Բա եղ լավ չեղավ... հանգամանքն ենպես ա, վոր մենք մինչև ետը պետք ա անպատճառ ստացած լինենք. մեզ համար մի որն ել ահագին նշանակություն ունի...*

— Ի՞նչ է պատահել—անհանդիստ տոնով հարցրեց Սուքիասը:

— Կուլակները դատեն նորից ուզել ա պրավակացիանեք տարածել...

— Էլի ուտե՞ց...

— Չա, քու դնալուց հետո նրանք նորից չարժվեցին. սկսեցին տարածել, թե վերևից կարգադրություն ա յեկել, վոր կոլխոզնիները ցրեն, բայց տեղական իշխանությունը իրր թե չի ուզում հրամանը կատարի: Ենել են ասել, թե վոչ հայ կստանան, վոչ սերմացու. ով խելք ունի, որ առաջ իր գլխի ճարը տեսնի՝ դուրս գա կոլխոզից...

— Բա դուք չեյի՞ք կարող առաջն առնել:

— Գործը շատ դպրոնի յենն տարել. բայց գլխավորն եղ չի. նրանք նպատակ են դրել տապալել զարմանացանը, իսկ դրա հետ էլ հույս ունեն, վոր կքայքայվի կոլխոզը. բանն եսպես ա.— յերեք որ առաջ կուլակ Մարտինը հրապարք ա տարքել, մեհամ յերեխի կնունքի հանդամանքով, կանչել ա մի քանի հոգի էլ մեր տատանվող կոլխոզականներից: Յերբ գինին ընկնում ա մերոնց կատակները, են գատեն սկսում ա ուստավարի կծիկի տուտը բաց անել— ի՞նչ ևը, ասում են, քաղցած-ծարավ նստել եղ կոլխոզի անապատում. դուրս յինք, փորնեղ մի բան տեսնի. չե՞ք իմանում, վոր Մոսկվայից կարգադրել են, վոր ցրեն կոլխոզները: Մերոնք էլ ասում են, թե եղ հրամանը դեռ մեզ հայտնի չի. յեթե դուրս գանք, աչքի կընկնենք, մեզ «հակա» կասեն... նրանք էլ թե՝ անունը դուրս գալ մի՛ք դնի, բայց ցրվեք մի կողմի վրա, մեհամ աշխատանքի եք գնում... հայի մասին էլ արխային կացեք, մենք մեր մեջ կպահենք ձեզ, մեհան թե մեր ասածն անեք... Եսպես իրաք են կատում, վոր յերեք որից հետո՝ աչքինքն այս առավոտ, ցրվեն...

Սուքիասը զարմացած աչքերը սևեռեց Ջելալեդի վրա, կարծես չհավատալով նրա ասածին: Իր կինը՝ քիչ հետու կանգնած յեկյուղով լսում եր խոսակցությունը, թե ինչ վոր դժբախտություն է պատահել:

— Բա դուք ի՞նչ եյիք չինում,— ասաց նա հարճակոզական տոնով:

Դե չյեր գործով խեղդված եյի, ժամանակ չունեյի, մեր

տղերքն էլ հենց նոր են ինձ պատմեցին՝ ես ա տանեն ինչ պրծավ. էլ չեն մտածում, թե ինչքան խուճիկներ պետք է դրսավեն, որ գործը դյուս գա: Թարսի պես բջնջի քարտուղարն էլ հենց ջո հետևիցդ գնաց քաղաք. պատահել չի՞ս:

— Չէ, դուրս գալուց մի քիչ առաջ նամայա, որ հիվանդ պառկած է:

— Մի հանգամանք էլ կա մեջը. ես մեր փուչ Բարսեղանն էլ կուսակիսելի հացին ա յեղ քաշած...

— Բարեգամը... ա՛յ կես նրա նամուսին ինչ ասեմ:

— Հա՛, դու հո գիտես, նա աչքը գրել եր Մարտինի աղջկա վրա. ասում են պեղեցիկ ա, համ էլ նրա հորը մի քիչ պահած վիճակ ունի: Հիմի ես մտաբերում ա պրծնեն բարեկամացել, նշանվել ա, ու գնում թասի վրա ինչ ասես միջամ ա իր մասին. հավատացնում ա, թե նամակ ա գրել կենտրոն, չուտով ինձ ու քեզ պետք ա հետացնեն... խակ մեզ բոլորի աստառն են ա, որ նա ընկել ա աղջեցության տակ, ուզում ա կոլխոզից դուրս գա, բայց վորպեսզի աչքի չընկնի ու շուտ էն, հարմար ա առնում ներսից քայքայել...

— Քայքայե՞լ... նա ինչ է, վեր եղ բանը դյուս բերի. ինչեր ինքն էլ կան կարող է քայքայել, մի անգամ արդեն կուսակցությունից հանել են, հետո վերականգնել են, հիմի էլ ինչպես կերևում է, գլուխը ցավում է, ուզում է բոլորովին հետացնեն... ջո անելիքները ճիշտ են...

— Հասասա.

— Ո՞ւմից լսացար:

— Կոմյերիա Սամվելից. եղ անպիտանը կարծես հետևից էլ աչքեր ունի:

— Ո՞վքեր են մեր կոլխոզականներից կուլակները աղջեցության տակ:

— Սամվելը յոթ հոգու անուն տվեց, բայց խնկահանն ետը կիմանանք, թե ո՞վքեր են նրանց կողմը. դե քեզ հայտնի ա էլի, ովքեր կլինեն. են վոր ուզում եյինք պահել...

— Հը՛մ... եղպե՞ս. ուրեմն դավադրություն են կազմել և ուզում են պայթեցնել մեր կոլխոզը...

— Հա՛, ենդուր եմ ասում, վոր ուրիշ հանգամանք ա. լավ

կլինեը, վոր հետևհետ բերելիր ցորենն ու տրակտորը. դրանով նրանց պոզերը կկոտրեյինք...

—Ճիշտ ե, ցորենն ես մոմենտին մեծ գործ կարող եր տեսնել. դյուղացիք նեղված են անցյալ տարվա բերքի պատճառով, բայց ելի կասեմ, վոր շատ եք աչքաթող արել... ինչ և ե— նրանք ոգտվել են իմ բացակայությունից և մի նոր փորձ են արել կոլխոզը տապալելու, բայց տակը կմնան...

— Հիմի ի՞նչ կասեն, ընկեր Սուքիաս. յես առաջարկում եմ գնալ մխաին դյուղի ծերին հանդիպել մեր դասալիք կոլխոզականներին. առաջինը՝ կվճանանք, թե ո՞վքեր են կուլակների ազդեցության տակ ընկել, վրա յերկուսն ել՝ մեղ տեսնելը նրանց ուշքի կբերի:

— Եա ի՞ր քո ասելիքը. բայց արժի՞ եղքան մեծ ուշադրություն դարձնել. լավ չի՞ր լինի մի ուրիշին ուղարկեյինք:

— Ջե՛, մեր գնալն ուրիշ ա. գործը պետք և հենց դլխից կարդի բերել. բավական ա, վոր նրանք իմանան, թե երանց ֆանդերը մեզ համարի յեն, արդեն կապերը կկտրվանան...

— Լա՛վ, թող քո ասածը լինի:

— Դե վեր կաց, գնանք, թե չե կուշանանք:

Ու մխաին դուրս յեկանք տնից:

***

Արևի առաջին ճառագայթները խաղում եյին դյուղի չրջակա բլուրների վրա, դաշտերն ջերմություն խոստանալով. հեռվում, լեռների լանջերին, ոգիտակին եյին տալիս ծեպ-ծեպ ճյուները, վորոնք որ-որի վրա պահպանում եյին ու լայնացնում յեկող գարնան սահմանները: Դրսում դգացվում եր այն մեղմացած, թարմացնող յեղանակը, վորը հիշեցնում եր աշխատանքի մասին:

Սուքիան ու Յերմանդը արագ քայլերով գիմեցին դեպի դյուղի ծայրը, պատրաստվով նեղ փողոցներով, վորպեսզի կոլխոզականները չնկատեն: Հետևից նրանց ծածուկ հետևում եր կոմկերիա Սամվելը. նա գիշերը «գաղտնիքը» Յերմանդին հայտնելուց հետո ել չեր քնել, ու լուսադեմին յեկել եր կանգնել նրա տան մոտ, վորպեսզի իմանա, թե ինչ և անելու: Յերբ

Սուքիասն ու Յերվանդը կանդ առան խճուղու մոտ, Սամվելն էլ վանդ առավ, թաղնվելով մի տան հետևը:

— Մի քանի րոպեյից հետո նա մոտալ հանդիպակի նեղ փողոցը, դուրս կանչեց իր ընկերոջը, ու լինչ վոր հրահանգներ տալով, նորից վերադարձավ իր առաջվա տեղը:

Մոտ մի ժամ սպասելուց հետո Սուքիասն ու Յերվանդը, նկատելով հեռվից յեկող կոլխոզականներին, շարժվեցին դեպի խճուղին: Սամվելը նույնպես մոտեցավ խճուղուն ու նորից թաղնվեց, ղղուշությամբ հետևելով իր դիտարանից:

Յերբ կոլխոզականները մոտեցան, Սուքիասը ժպտաց.

— Ես է՛ սրանց դավաղրությունը. ուղտը ծնեց-ծնեց, մի մուկ ծնեց. ընդամենը հինգ հոգի են:

— Սպասիր, հարելի ա ելի յեն գալիս— ասաց Յերվանդն ու մոտ գնալով, առաջինը բարեվեց.

— Բարեաջողում,— ասաց նա, աշխատելով, վորքան կարելի յե հանդիստ ձևանալ:

— Բարի լույս,— մեկ-մեկու յետևից ձայն տվին կոլխոզականները, չկարողանալով ծածկել իրենց շփոթությունը: Բոլորի մտքով անցավ, թե առաջները կարել են, վորպեսզի պատժեն դասալքության համար:

— Ինչ ըլի, եղ ո՞ւր եք գնում:

Վոչ վոք չպատասխանեց. ճնշող լռության մեջ ամեն մեկը սպասում եր, թե մի ուրիշը կխոսի: Վերջապես լռությունը խզեց ամենից հասակավոր Մաղաքը:

— Դե ընկեր Սուքիաս, քեզ հայտնի ա, վոր հացի պակասենք... Գնում ենք մշակության...

— Բա եղ վո՞նց ա, բոլորդ միանգամից իրար հետ ընկել:

— Իրար հետ ընկել, վոր մեկ-մեկու քոմակ անենք, համ էլ միասին աշխատենք...

— Վոսկի խոսքեր ես ասում, Մաղաքի, միայն լինչ մեր կոլխոզումն էլ եղավես չես խոսում. կարծեմ, վոր մեր կոլխոզն էլ իրար ոգնելու, իրար հետ աշխատելու համար ա...

Մաղաքը կամ ընկավ, վոչը լուց ասած վորձնց ջուրս գալ անհարմար դրությունից.

— Դե հացը պակաս ա, վո՞նց աշխատենք, ընկեր Սուքիաս:

— Դուք ձեր հայրը թողնում եք, գնում ուրիշ տեղ հայ փնտռում,— ասաց Սուքիասը.— դա չե՞ ձեր խելացի գործը:

— Բա վոր ես բոլշեվիս հայի պահապան ունենք,— նորից խոսեց Մադաթը:

— Դուք չդիտե՞ք, վոր յես գնացել եմ քաղաք հայի ու սերմացուի համար. իսկ յեթե շատ նեղված եյիք, ինչո՞ւ չեյիք գիմում ընկեր Յերվանդին. նա մի բան կաներ, մինչև իմ գալը...

Կոլխոզականները գլուխները կախեցին, ճնշվելով Սուքիասի խոսքերից: Առաջ յեկավ Յերվանդը:

— Իսկ ձեզ հայտնի ա՞, վոր գարնանացանի աշխատանքները պետք է եռուգվանից սկսենք. չե՞ վոր ձեզ համար եմ տվել. սա անելու բան ա՞. վեր եք կենում, առանց հայտնելու գնում:

Կոլխոզականները լուռ եյին:

Լարված դրությունից նրանց ազատեց Բարաղամը, վորը գալիս եր տայլով, իր անող—Մարտինի և նրա կնոջ հետ: Նրանք գնում եյին քաղաք բաժնվելու իրենց աղջկա համար: Բարաղամը նստել եր խոտի վրա, վոտները կախել, ու մեծամիտ դիրք տվել իրեն, խոժոռած դեմքով ու ցից պահած պխոով:

Նկատելով Սուքիասին ու Յերվանդին, նա պխոի ընկավ, վոր կոլխոզականները ճախորդ վիճակի մեջ են ընկել, ու յերեսը դարձրեց մի կողմը, ցույց տալու համար, թե ինքը վոչ մի կապ չունի նրանց հետ:

— Ընկեր Բարաղամ, խնդրեմ իջնես պայլից, հետդ խոսելիք ունեմ,— դիմեց նրան Սուքիասը:

Տայլը կանգ առավ:

— Ֆաղաք եմ գնում, շտապ գործ ունեմ, չեմ կարող—ասաց Բարաղամը մեծամիտ տոնով:

— Ընկեր Բարաղամ, վորպես կոլխոզի նախագահ, պահանջում եմ, վոր դու մնաս այստեղ, հակառակ դեպքում յես քեզ կհամարեմ դեզերտիր:

Սուքիասի վճռական տոնից Բարաղամը սթափվեց. նա պատց, վոր հակառակվելու դեպքում գործը կարող է վատ հետևանք ունենալ ու անզոր կատաղությունը մեջը խեղդելով,

լջալ սայլից: Նա դժկամ մոտեցավ խմբին ու կանգնեց, չբերեց ինքնավստահությունը խոցվում էր այս պարտությունից, մանավանդ էր անոր, որ նա միշտ պարծենում էր իր դիրքով ու այդ հեղինակությամբ:

— Դուք կարող եք գնալ, դիմեց Սուքիասը բարտպահի անորը, որը սայլը կանգնեցնելով, սպասում էր:

Բարտպահին հետ պահելը ընկճող տպավորություն թողեց կոլխոզականների վրա: Նրանք չէին սպասում, թե նա այդպես կհպատակվի Սուքիասին: Նրանք՝ ընդհակառակը՝ կարծում էին, թե նա վոչ միայն ինքը «կճղի» կանցնի, այլ և իրենց էլ կքաշի յետևից:

Մարաթը նորից դիմեց Սուքիասին խեղճացած ձայնով.

— Բա մեզ բաց չեն թողնելո՞ւ... ախր հացի համար ենք գնում...

Մյուսները ձայնակցեցին.

—Թողեք գնանք մի ճար անենք...

— Մեր ընտանիքները ո՞վ պետք ա պահի...

Սուքիասը ձեռով նշան արավ, որ լռեն, ապա յերբ ձայները դադարեցին, ասաց.

— Ընկերներ, դուք մոռացում եք հացի մասին, բայց պետք է իմանաք, որ յես ձեզանից ավելի յեմ մոռացում. դուք դիտեք, որ յես եղ մասին գնացել եմ քաղաք, դիմում արել. խոստացել են մի քանի որից հետո ուղարկել ցորենն ու տրակտորը: Իսկ մինչև պռոմնալն էլ մի ճար կանենք, բայց հիմի դուք ասեք, ի՞նչ և ձեր արածը. դուք թողնում եք կոլխոզն ամենապատասխանատու մոմենտին, յերբ աչքերիս առաջ գարնանացանն է: Մի թեթև ձեղ համար հասկանալի չե, որ դուք եք գործել կոլխոզի թշնամիների ձեռքին և ինքներդ եք վնասում ձեր ընդհանուր գործին: Ձեզ չեմ կասկածում, որ շատ շուտով կզղաք ձեր արած սխալը և ինքներդ կդատապարտեք ձեղ...

Սուքիասի խոսքը դեռ չէր վերջացել, յերբ խճուղուց լսվեց թմբուկի ձայն: Գյուղից դալիս էին պիոներական յերթով վոմբրախոների ու պիոնիերների միացած խումբը: Նրանց նկատելուն պես, կոմյերկա Սամվելը դուրս յեկավ իր թաղամասից ու արագ քայլերով գնաց միանալու իր ընկերներին:

Մինչ այդ նա սպասում էր անհանդիստ, ու չարունակ կատաղած մեջ էր, թե էր ընկերները կուշանան ու իր «ծրագիրն» էլ չէր հաջողվիլ:

Թմբուկի աչխուժ ձայնը քանի մոտենում, ավելի էր զոչում ուշադրությունը: Սուքիասն ակամա լուեց, համակված մի ցընծուն ուրախությամբ, կարծես յերկար թուխպ օրերից հետո արև էր ծագում: Ժպտուն դեմքերով նա ու Յերվանդը դիտում էին աչխուժ յերթը, մոտացած իրենց գալու նպատակը: Կոլխոզականները յերեսը զարձրած, նայում էին ամոթխած, առես իրենց թագուն հանցանքն այժմ պիտի հայտարարվեր թմբուկներով բոլոր առաջ:

Յերթը հասնելուն պես կանգ առավ. Սամվելը դուրս յեկավ յերկու քայլ շարքերից առաջ ու ասաց առույգ ձայնով.

—Ընկեր Սուքիաս և ընկեր Յերվանդ, մեր գյուղի կոմկուսյանների ու պիոներների միացած կոլեկտիվը վորոշել է ոգնության գալ կոլխոզի գարնանացանի աչխատանքներին և այտորվանից ձեր տրամադրության տակ է. ոգտվեցի՛ք մեր ուժերից, ինչպես հարմար կզտնեք...

Անակնկալից հուզված՝ Սուքիասը մի քանի վայրկյան դժվարանում էր խոսել:

— Սիրելի ընկերնե՛ր,—ասաց նա,—վողջունում եմ ձեր գեղեցիկ վորոշումը. դուք մեզ ձեռք եք մեկնում այն մոմենտին, յերբ կուլակները աչխատում են խլրտում ձգել մեր շարքերում. ահա ձեր առաջ կանգնած այս մի քանի ընկերները՝ ականջ դնելով նրանց սուտ լուրերին, ուզում են ըրել մեր գործը հենց գարնանացանի ակզբին: Սրանք այն տատանվող տարրերից են, վորոնք դեռ յերեսը չեն զարձրել անցյալից ու կանգնել են սոցիալիզմի դռների առաջ մոլորման մեջ. հին ցավը՝ հին սեփականության ժանր քարերով դեռ քարշում է սրանց վեհերից. յես չգիտեմ, կարողացա՞ արդյոք համոզել այս ընկերներին, վոր դառնան իրենց աչխատանքին, բայց յես դիտեմ, վոր յերբ լսեցի ձեր ձայնը, յես լցվեցի մի մեծ ուրախությամբ. և ասի մտքումս—քանի վոր մեր յեռանից ծլում, զարձրանում են այս շարքերը, վոչ մի դժվարանք չի կարող լինել մեր առաջը...ընկերնե՛ր, դուք դիտեք, վոր յես յեկել եմ քաղաքից, բանվորական շարքերից՝ ձեր կոլխոզում աչխատելու. յես յեռանից կգան և ու-

բիչները, բայց շատ էլ անցնել՝ դուք լինքներդ կվոխարինեք մեզ. սակայն դուք չեք նմանվել այս ընկերներին. ձեր հաղթական շարքերը կմտնեն սոցիալիզմի դռներով առանց վարանման, առանց հետ նայելու... այսօրվանից հայտարարում եմ գարունը բացված— (ասաց նա սխալմամբ, փոխանակ ասելու «գարնանացանը բացված») դուք կղնաք խմբովին մեր մտավիկ արտերը քաղերը հավաքելու... կրկին և կրկին վողջույն ձեր մատաղ յեռանդին...

— Կեցցե՛ք... մի՛շտ պատրաստ,—մխարերան թրնդացրեցին շարքերը:

— Այժմ ձեզ եմ դիմում, ընկերք կոմսոդնիկներ— շարունակեց Սուքիասը.— ի՞նչ և ձեր վճիռը. ուզում եք գնա՞լ, խտացնել մեր թշնամիների շարքերը, թե՞ վերադառնալ ձեր կոլեկտիվ աշխատանքին:

Կոմսոդականները դարձյալ լուռ էյին, կաշկանդված տրամադրության մեջ: Լուսթյունը խախտեց ծայրին կանգնածը, որը շարունակ կնճռոտած, մռայլ դեմքով նայում եր գետնին:

— Ա՛յ ժողովուրդ, ի՞նչ եք առա կացել— դիմեց նա, յերեսը պարձնելով դեպի խումբը— բա չի՞ք ամաչում, մեզ խաբել են, որ ապրուստից գցեն ու հետո թշնամուն սրտով ուրախանան. մեզ ասում էյին, թե Մոսկվայից կարգադրել են՝ կոլխոզները ցրեն. ո՞ւր ա եղ հրամանը— ասեք մեզ, առա ենք ասել... բա մեր նամուսն ի՞նչ կասի, եմոր մենք գործը թողնենք, գնանք ու ձա յերեխեքը դան մեր տեղն աշխատեն... չե, սա անելու բան չի. մենք պետք ա շուտ տանք յերեսները, վոնց վոր յեկինք մենք, ենպես էլ հետ գնանք, մեր աշխատանքին վրա չենք...

Տատանման շարժումն անցավ խմբի վրայով, բայց վոչ վոք չեր խոսում ամաչելուց: Սուքիասը նորից դիմեց նրանց:

— Դե, ընկերներ, վերջին խոսքն եմ ասում.— ով ուզում ե, թող գնա, ով չե— վերադառնա մեզ հետ...

Սամվելը նշան արավ: Կոմսոդիա-սլեսարյանի խումբը պինվորական կարգով յերեսը դարձրեց պետի դյուղն ու քայլեց առաջ: Նրանց յետևից չարժվեցին կոլխոզականները՝ ամոթխած դեմքերով: Բարաղամը քայլում եր դժվարությամբ, ասես վոտները բռնված էյին, իսկ ամենից վերջը դնում էյին Սուքիան ու Յերվանդը և Սամվելի հետ, չարքերից վոքը ինչ հետու:

Նորից լսվեց թմբուկի ձայնը. քարշերն սկսվեց աշխուժացան. յերթը համակեց բոլորին հաղթական աշխատանքի զգացումով:

1932.

# ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Աշտան և՝ Զորադվխին թառած դյուղը վերջացրել, և իր դաշտայինն աշխատանքները: Սամալի վրայերտամ յերեվում են խոշոր դարմանի մնացորդները, վորոնք հետզհետե դժդումում են խոնավությունից, իսկ նրանց չուրջը, տեղ-տեղ կանաչվում են տալիս ցորենի ծլած հատիկները: Ծանր, մոայլ քաթուխը դալիս է, կանդնում շրջակա բլուրների վրա ու սպառնում ներս խուժել դյուղը: Պարտեզներն որ-որի վրա դեղնում են, ու տերևները, կարծես վախեցած, անհանդիստ սոսափում են ցրտաշունչ քամիներից:

Գյուղը դատարկվել է տղամարդկանցից. նրանք բոլորն էլ աշխատում են ներքևի ձորում, վորտեղ արդեն մի տարի յեր, ինչ սկսվել եր հիդրոկայանի կառուցումը: Տներում մնացել եյին կանայք, յերեխաները ու կաթոլիկ ծերունիները: Միայն Մուքելն եր, վոր չեր մասնակցում այդ աշխատանքին, ու մենակ մնալով՝ տխրում եր աշնան ծառի նման:

Մուքելը հիսունից անց եր, բայց դեռ առույգ եր ու յերիտասարդի նման աշխատունակ: Նա դյուղը յեկողի աչքին եր ընկնում իր հին տարազով, վորը համառորեն պահպանում եր անխախտ: Նրա չուրջն ինչ ասես հավնում եյին, խառնելով դյուղն ու քաղաքը, իսկ Մուքելին միշտ կտեսնեյիք իր պարզ կանաչ չալմայով, արխալուղով ու ծանր, մոթալի վտիտ-խով. հավնելիքի մնացած պարագաներն էլ պահպանվում եյին հրենց կարգով: Գյուղացիները դոդում եր Մուքելի այդ մոլեռանդ ճգտումը դեպի հին տարազը, բայց մանավանդ դոդում եր այն, վոր նրա հագուստը միշտ կարդին եր, միշտ նոր եր թվում: Իրենք քաղնի չոր եյին մաշել նրա չուխայի հետ, բայց տես, նրանն ասես մի չարաթ առաջ յինի կարած: Նրա խնամոտ ու դդուշ վերաբերմունքը դեպի իր հագուստն առակ եր դարձել գյուղում. նրա մասին պատմում եյին, վոր

մեկն էր թուրքական զորքերից վախչելու որն էլին տեսել շորը– րը ցեխոտ. յերբ մեկին տուում էլին, թե շորդ մաշվել ե, նա պատասխանում էր.

— Ինչ անեմ, Մուքելի հուխան հո չի, վոր անմահ մնար:

Մանավանդ նա արքունյան նման վայելում էր իր պատ– վավոր մոթալի վտակները, վորը սև դույնի էր, կոնաձև, գա– զաթը վոսած: Տուն գառնալիս նա հադցնում էր այդ վտակ– ները կարմիր չթից կարած մի տոպրակի մեջ ու այդպես դնում պատի մեջ չինած պահարանի մի առանձին դարակի վրա, վոր– պեսզի չմաշվի ու չփչանա փոշուց:

Յերբ Մուքելը պնում էր դլխին այդ վտակները, նա հին Լբատվոտպի պատկառելի տեսք էր առնում: Ու իր խո– շոր, նահապետական դիմագծերը,— մեծ, հիմնավոր քիթը, ծանրախոհ աչքերն ու ակոսված ճակատը, առատ քեղն ու մո– րուքը, արմատես ներդաշնակում էլին վտակի հետ: Իսկ յերբ նա նստում էր դյուղի հավաքատեղն ու դրուցում հասակավոր մարդկանց հետ, այդ բոպեներին թվում էր, թե շուրջը վոչինչ չի փոխվել, թե մի հին նահապետ և խոսում ծանրակչիռ խոսքերով, ու իր սև աչքի տերողորմյայի խոշոր հատիկներն էլ դանդաղ չրխկալով իրար յետեվից, հատատուում են նրա ա– սածները, վկրկնելով.

— Ճշմա՛րիտ ե, ճշմարիտ ե...

Մուքելի հետ դրուցողները մեծ մասամբ ծերուններ էլին կամ իր հասակի մարդիկ, նրանք իրար լավ էլին հասկանում ու իրենց հավանություններն տալիս գլխի շարժումներով: Նստում էլին հին մարդիկ, գավառանում հին, «աստծու որհնած» աշ– խարհն ու քննադատում, ժխտում նորը: Ու վոչ վոք չեր զար– մանում նրանց քննադատությունից, լինչպես չէլին զարմանում, վոր ծերունիները ճեռնափայտով են մանր գալիս ու սիրում են ժամ գնալը: Գյուղի կոմյերիտները, ջահելները, նրանց մոտով անցնելիս քմծիծաղ էլին տալիս ու իրար ասում.

— Ծանր արտիլերիան հավաքվել ա...

Բայց յես մոռացա ասել ամենգլխավորը.— Մուքելը մի արքունյան ուներ, վորը պահպանում էր ջերմեռանդ կրոնա– վորի յերկյուղածությամբ: Դա մի հին, կաշեկազմ աստվա– ծաշունչ էր, վորը ժառանգություն էր մնացել իր հորից, իսկ

նա նվեր եր ստացել մոտակա վանքի մի վարդապետից: Այդ աստվածաշունչը պահվում եր հատո, քաթանի պարկի մեջ, դրլարի նույն պարակի վրա, վոլտեղ և միսիանին եր դրած:

Ինքը դրացիս էլինելով, Մուքելը յերբեմն հրավիրում եր տիրացու Գրիգորին, հյուրասիրում եր նրան, արաղ խմացնում, ու Վարդան տալիս ջրհեղեղի ու Բաբելոնի աշտարակի շինուվթյան պատմուվթյունները, ասա վերջը՝ յերեք գլուխ աղմոս: Շատ եր Մուքելի սրտին մոտ դալիս վերջինդեր պատմուվթյունը—աստծու բարկուվթյունը նրա պատիժների ու նրա հանդիսավոր հաշտուվթյունը—, ծնածանի կամարն նշանում: Այդ սկսում եղին ցածր, խորհրդավոր ձայնով յերկար ու բարակ պրուցել աստվածաշնչի պատմուվթյունների շուրջը, աշխատելով նշաններ վինտռել նրանց մեջ ներկա ժամանակվա վերաբերմամբ, ու բաժանվում եղին լրտարից, ամեն հոգտաղրված լրենց աստծու հզորուվթյան ու վրեժխնդրուվթյան վրա:

Շատ եր պատվում ու պաշտում իր աստծուն Մուքելը, բայց վատ որերի յեր հանդիպել.— ամեն կողմից քննադատում եղին, տատանում նրա ամոգր, «անաստան» դահը: Ինքն իր մեջ ուժ չղդալով պաշտպանվելու համար, նա դաղտում եր ջահելների հարձակումներից ու խախտում իր նահապետական հանդստուվթյունը:

Ահա այդ աստծու պատճառով եր, վոր նա թշնամացել եր խորհրդային իշխանուվթյան հետ, վորովհետև նա այնպես եր մտածում, վոր յերեխ աստված չկա, որենք ել չկա. մարդ կարող է սպանել, թալանել, ամեն լինչ անել:

Մնացած բաներում նա յերեխ բարեկամ չեր, թշնամի յել չեր և «յոլա եր տանում» իր դործը: Իբրև միջակ դյուղացի նա մեծ զդուշուվթյամբ պահպանում եր միջակուվթյան նորման, ծառի նման քշտելով իր տնտեսուվթյան ամեներդ չիվերն ու ճյուղերը, վորպեսդի չընկնի կուլակների և ուռճացածների շարքը:

Վախենալով, վոր կդկիպչեն իր աստծուն, կխախտեն իր հավատն ու ծեսերը, նա խուսափում եր ժողովներից, ընտրուվթյուններից և առհասարակ «տերուվթյան» հետ դործ ունենալուց: Այնինք այդ մեկը ժառանգական եր նրա մեջ. հոր մասին ել պատմում եղին, թե նա յել խուսափում եր «տրենդի» հետ

չվելուց և իր ցարական հարկերը վճարում եր պատուհանից, որ նրանք չկպչեն ու մի շատ չդժգոհ լրանա:

Բայց այս ընթացքը տանելի չեր, չերբ հարցը վերաբերվում եր ժողովներին, ընտրութիւններին. իսկ այժմ դյուղի բոլոր տղամարդիկ աշխատում են հվդրոկայանում, միայն նա մնացել և մենակ ու տխրում է աշնան ծառի նման, և՝ որ դլխավորն և՝ նա տատանվում է...

Նա ինքն իրան պատճենում եր, որպեսզի կարացնի իր մտքերը, բայց կղուր. տանը միասում եր դանազան մանր-մունր դործերի շուրջը— դոմն եր մաքրում, սայլի կոտրած ճաղը փոխում, շտկում ցանկապատը, հետո նստում եր մնոջ մոտ, ճարակի առաջ, բամբասում եր մեծ տղային, որը քաղաքում բանվոր եր, ապա դուրս եր դալիս փողոց ու հանդիպելով հատու ու կենտ ծերունիներին, պրոցում եր նրանց հետ, հորանջում ու վերադառնում տուն, չերբ սոամոքսը պղտոնել եր տալու ուտելու ժամանակը: Ու վորտեղ ել լիներ, մտքում չարունակ վորոճում եր այն միտքը, թե ահա, բոլորն ել աշխատում են ձորում, միայն նա մնացել է տանը: Ինչո՞ւ չե նա այդպես զատվում մյուս դյուղացիներից... Նրա մեջ ինչ-որ մի կսկածկա, որ չեթե բանվոր դրվի, մի պատուհաս կդա դլխին, վկորցնի մի թանկագին բան, կկորցնի իր հին,—պապերից սրբապղծված հավատը...

Բայց այժմ նա տուն է վերադառնում փողոցից, դանդաղ քայլում է ու նորից տատանվում.— «Չ՞ը, դնա՞մ, թե չդնամ... առաջինը՝ փողը քաղցր բան ա, վրա—յերկուսը՝ ետքան մարդ բանում ա ձորում, բա չես ի՞նչ եմ, տանձի կոթ չ՞մ... չես ել նրանցից մեկը... ոչով չի ասում, թե ձմեռը նեղություն են տալիս...»

***

Վերջա՛պես...

Մուքելն ել բանվոր և դրվել հվդրոկայանում և աշխատում է խոտա կանոնավոր, դես ու դեն չընկնելով, վեճի չբռնվելով ընկերների հետ:

Ընդհանուր յեռուղեռը, աշխատանքի լարված թափը վարակում է Մուքելին, արագացնում նրա ձեռն ու վոտը: Զորս կողմը

մարդ ու մեքենա իրար խառնված մի յեռանդուն ժխոր էլին առաջացնում: Վերև ու ներքնի մրջյուններին նման վխտում էլին բանվորները, քանդում հողը, ձեռնասայլակներով կրում չինացիները. վաղոնիկներն անընդհատ բարձրանում ցած էլին ռելսերի վրայով: Յերբեմն Մուքելը բոլորապես կանգ էր առնում շունչը տեղը բերելու համար, նայում էր շուրջը սիրված խառնիճաղանճ բազմութեյան վրա ու զարմացած բացականչում.

— Պահ, եսքան էլ մարդ, եսքան էլ մեծ գործ...

Միայն մի բան ծանրութեյուն էր տալիս նրա մտքին.— ի՞նչպես պետք է հիդրոկայանը ջրից լույս առանար. վերջապես էլ նա հարց ու փորձ էր անում արան ու նրան, էլի չէր վարողանում վխտին հասկանալ, ու դրանից թերահավատում էր, մտածելով,— «Մեքի բան չի, ջրից լիս չի դուրս գալ...»

Բայց շատ չանցած պատահեց այն, ինչ վարող էր պատահել միայն Մուքելին. մի որ՝ գործից հետո յեկան լճացը լվալն, թե ժողով է լինելու: Մուքելն ըստ իր սովորութեյան, ուզում էր չգնալ, բայց իր համաշխատացի ջահել բանվորները, իմանալով նրա բնավորութեյունը, ուզեցան ձեռք առնել, ու այնպեսին, թե ժողովը մթերման հարցերի մասին է, և անպատճառ պետք է բոլորը ներկա լինեն: Մուքելն ակամա հպատակվեց, նրանք էլ տարան դիտմամբ նստեցրին ակումբի առաջին շարքում, լավ իմանալով, որ բազմամարդ ժողովից Մուքելը նահանջելու տեղ չի ունենալ:

Մի քառորդ ժամ հապիկ տևեց, ժողովը սկսվեց, բայց ո՛վ սարսափ, կենտրոնից յեկած մի ընկեր սկսեց խոսել վոչ թե մթերման հարցերից, այլ հակակրոնական մի դասախոսութեյուն արած...

Մուքելը նստած էր մոտիկ, վա՛յ ձեն նստելուն, ասես փշերի վրա յեր. ու պարզ լսում էր ամեն ինչ— վա՛յ են լսելուն. ամեն խոսքի վրա մերթ կարմրում էր, մերթ սևրթնում. ինչքն իրեն կռծում էր, անիծում բախտը, ուզում էր դուրս գալ, փախչել, բայց խիստ կանդնած ամբոխի միջով վոչ մի հնար չկար ճամբա բանալու:

Ու մնաց Մուքելը մինչև վերջը, և դուրս յեկավ բոլորի հետ, քրտնքում կորած, այլայլված...

Գնում էր դյուղը՝ կարծես համաճարակից էր փախչում:

չհկլված յեզի նման խուսափելով մարդկանցից, անիծելով դասախոսին, քարեկարկուտ կանչելով անասունածնների ղևին:

Ու են գնալն եր, վոր գնաց, ել չվերադարձավ իր աշխատանքին, նույնիսկ աշխատավարձն ստացավ ուրիշի միջոցով: Հիդրոկայանը մթնեց նրա աչքերին.— «Վոտս կոտրեր՝ չգայի եղ Բաբելոնի աշտարակը չիննելու»,— կրկնում եր նա հաճախ ու վրա տալիս իր թունդ անեծքները:

***

Մի չարաթ եր, Մուքելը լուռ ու մթագնած եր, կարծես ջաֆուխտ եր ինչ-որ տալին: Ժամերով նստած զրուցում եր իր աերոպորմիայի հետ: Նա կուզեր փոխել միանգամից իր լսած դասախոսությունը, ազատվել նրանից, բայց ընդհակառակն եր լինում,— հակակրոնական մտքերը մեկիկ-մեկիկ հանվարծ գալիս եյին հիշողության մեջ ու աներես հարցնում—«բա թե վոր ասածած կա, սրան ի՞նչ կասես...» Ու նա ակամայից սկսում եր վորոճալ այդ մխտքը, ու վերջը պղտվով, վոր անզոր և հերքելու, հերստում եր, կորցնում եր հավատարակշռությունը: Մտաղրաղ ու ցրված զրույցի մեջ՝ նա նույնիսկ սկսել եր աչքաթող անել իր հաղուստը. նրա ուսերին յերբեմն նկատվում եյին զարմանի հետքեր, չսեերն ել առաջվա նման չեյին փայլում:

Մեծ տղայի գալն ուշքի բերեց նրան, մտացության տալով իր ճնշող մտքերը, բայց դա յել յերկար չտևեց. յերեկոյան թեյից հետո, Պետրոսը, մաթեմատիկան ու կիսահնդնական ժպիտն յերեսին, սկսեց հակց ու փորձ անել հորը:

— Մ'պէ, եղ վո՞նց ա քո բանը զրուխ չի յեկել հիդրոկայանում...

— Վոտս կոտրեր, չգնայի են բրիչակը,— ասաց Մուքելը մռայլ տոնով:

— Վո՞նց թե... Ասքան ժողովուրդ բանում ա. ի՞նչ պակաս բան ա:

— Հա՛, եղբան մարդ են հվաքել, վոր ճամբիցը հանեն, անասունած դարձնեն. բայց թող եղ անողները լավ իմանան, վոր իրանց արարմունքն անպատիժ չի մնալ. հեն ժամանակ ել, յերբ Բաբելոնի աշտարակը սկսեցին չինել, ուղում եյին զրուխը մինչև

յերկինքը դուրս բերել, բայց աստված իմացավ անօրենների ծուռ միտքը, լեզուները խառնեց ու աշտարակը վտով յեվրալ: Հիմի էլ սրանք յեվել են ասում, թե աստված չկա, մենք մեր հնարքով պետք ա Ջրիցը վեր հանենք. «իսկ աստված լսում ա եղբոլրն ու ոտաստում», վոլմէ որ իրանն ասի,վոր պատիժը տա...

— Ելի քո Բաբելոնի աշտարակը չես մոռացե՞լ, եղ հեքյաթները հնարել են տերտերները ժողովրդին խաբելու համար... դու աչքդ բաց արա. տես, թե մարդն իր գիտությամբ, իր աշխատանքով ինչե՞ր է ստեղծում...

— Բա Ջրիցը վես դուրս կգա՞... տե՛ր, մեղա քեզ...

— Մենակ ես մեր հիդրոկայանը հո չի. քանի տեղ են չինել, կարող ես գնալ քո աչքով տեսնել:

— Ի՞նչ տեսնեմ– հրեն մեր գեղամն էլ աներ են անկել, մթամ էլեկտրականի համար, կբերեն անելի մեջ նամբի կածեն, վերեվի ծերից կվառեն, հետո կասեն, թե Ջրիցը վես ենք հանել. դա սուտ բան ա, աչքակապություն ա, անաստվածների սուտ հրաչքն ա...

Պետրոսը չկարողացավ ծիծաղը պահել:

— Դե լավ, ասի, թե վոր եղպես չես հավատում, արի պայմանն կապենք. յես վկանդրեմ ոտաուչչին, վոր քեզ հետ պարապի, համ դրադիտություն սովորեցնի, համ էլ ամեն բան բացատրի, ինչ վոր հարկավոր է. հետո էլ, յերբ հիդրոկայանը վերջացնեն, լույսը վառեն, դոշ էլ համոզվես իմ ասածին, քո պարտքը լինի, վոր դուրս գաս, ժողովի առաջ հայտնես, վոր սխալվել ես, և քո աստվածաչունչն էլ դնես էլեկտրականի նեխ տակ:

Անապատալի առաջարկից Մուքելը հանկարծակիի յեկավ ու դեմքը խոժոռեց, վոչինչ չպատասխանելով:

Բավական յերկար պատվազից հետո նա ասաց, կշտամբանքի ձևով գլուխը շարժելով.

— Ուրեմն դու էլ են անօրեն–անաստվածների հետ միացել լո՛ւ, մի ասա տեսնեմ, թե վոր աստված չկա, քա ո՞վ ա ստեղծել ես յերկինքն ու յերկիրը...

Ընդհատված վեճը նորից սկսվեց. խոսք խոսքի վրա բռնկվեց հայր ու վորդու հին կրոնական կռիվը: Հետզհետե տաքանալով, նրանք բարձրացնում էլին ձայները, դրավելով հարևանների ուշադրությունը և չհոգեցնելով Մուքելի կնկան, վորն այժմ մեկն ցանկանում էր իր վորդու կարծան առնել: Նա մեկ–մեկ

մինչամառում եր, վորպեսզի դաղարեցնի վեճը, բայց վոչ մի ազդեցություն չեր անում:

— Ասի, յես քեզ բան եմ ասում, դու աչքդ բաց արա. եղ տերտերը, վարդապետ, յեպիկոպոս, ա՛սուլած, ա՛սուլած են կանչում ժողովրդին խարելու համար. հարուստներն աղքատների արյունը ծծում են, հոգևորականն էլ որհնում ա, վոր ինքն էլ մասն ստանա...

Բայց Պետրոսն իր դվխավոր զենքը դեռ պահում եր վերջին:

— Մի խարեբա ավազակ էլ մեր տեր-Մաթևոսն ա, այ, թե չես հավատում, կարդամ նրա դրած հրաժարականը...

Ասյա ասելով նա հանեց ծոցից լրագիրն ու կարդաց.

«Հարգելի հայրենակիցներ,

«Ցերեսուն տարի շարունակ քահանայություն անելով, յես խարել եմ ձեզ սուտ առասպելներով ու հեքյաթներով ու դրանցով շահագործել եմ ձեզ: Այժմ, դղջալով և դղալով իմ վնասակար գործունեյությունը, խնդրում եմ ներողամիտ լինեք և մոռացության տալով իմ անցյալը, թույլ տաք ինձ այսուհետև ապրել ճակատիս քրտինքով և արդար վաստակով: Այսուրվանից յես հրաժարվում եմ քահանայությունից:

Նախկին տեր-Մաթևոս Դանելյան»:

Հարվածն այնքան ապշեցնող եր, վոր մի րոպե Մուքելին թվաց, թե Պետրոսը հնարում է, բայց ի՞նչ... Լրագիրը ձեռին եր, եվ ի՞նչ հնարել...

— Թո՛ւհ քու նամուսին... ասաց նա ու զենն չպրտեց իր ձեռքի աերողորմյան, վոր նա անում եր իր կյանքի ամենահուզված րոպեներին:

Նա վոքը ինչ լռեց, ապա մեր կացավ տեղից.

— Լա՛վ, Պետրոս, քու պայմանին համաձայն եմ. թող եղպես լինի, վոնց վոր ասեցիր, կամ դեսը, կամ դենը... ա՛յ, ձեռք եմ տալիս քեզ....

Պետրոսը լռչություն տալով դեմքին, մեկնեց իր ձեռքը...

***

Մի տարի եվ անցավ, անցավ ձմեռն ու յեկավ թարմ ու պայծառ գարունն իր բուրվառից կանաչներով, ծաղիկներով: Նոր ծաղիկների հետ նոր լուրեր եկին գալիս, թե հիդրոկայանը

վերջանալու վրա չէ և մայիսի մեկին պետք է լինի նրա բացումը։ Բանկ մտաենում էր ժամանակը, Մուքելն ավելի չէր անհանդրտանում, հիշելով Պետրոսի հետ կապած պայմանը։ Բայց ի՞նչ... Մուքելն իր խոսքի տերն էր, նա պետք է աներ այն, ինչ որ խոստացել էր...

Այո, Մուքելն իր խոսքը կկատարի, միայն նա անհանգստանում է, թե վոնց պետք է դռբա գա ժողովրդի առաջ, ու հայտարարի իր «նոր հավատի» մասին... այդ է նրա դժվարությունը։ Իսկ որ ինքն առաջվա Մուքելը չէր, ինչ կասկած կարող է լինել. իր առաջվա սրբությունը—աստվածաշունչը վոշակալել է արդեն տոլստոում, ու ինքը խակի ձեռքը չէր տալիս, և վոչ ել թողնում է, որ տանեցիք ձեռ տան... նա արդեն ոտար էր լրեն համար։

Փոխվել է Մուքելը ու ինքն ել է զարմանում, թե ինչպես կեղավ այս բոլորը, ինչպես հետզհետե անցնող օրերի հետ պոկվեց հին հավատից։ Ու պարզեց իր մտքերը, որոնք այնպես խառնվեցին տեր-Մատթևոսի հրաժարականից հետո։ Բայց նա մինչև այժմ ել չէր մոռանում «խարբերա» տերտերին, չէր կարողանում ազատվել իր հերսից. ամեն անգամ նրան հիշելիս մլչտ կրկնում է— «Թուհ քո նամուսին...» նրա լինքնասիրությունը վաուվում է, որ տերտերն իրեն ել ուրիշների հետ խաբել է կերեսուն տարվա ընթացքում։

Բայց կես դարձյալ մոռացա ամենադլխավորը.— Մուքելը պարապում է ուսուցչի հետ այն ժամանակից, կերբ նա պայման կապեց իր վերդու՝ Պետրոսի հետ։ Այժմ վոքրիկ դրքեր է կարդում, կերկար մտածելով ամեն կերեսի վրա։ Համարյա ամեն որ գնում է ուսուցչի մոտ, զրուցում նրա հետ, կարդում դասը, լսում նրա բացատրություններն ու նոր բեռնով ծանրացած վերադառնում էր տուն, լինքն իրեն ասելով— ախ, թե ես քանի առաջ կլիներ...

Փոխվել է Մուքելը... Այժմ ամեն անգամ իր տերտերմիայի հետ դրուցելիս մլչտ ասում էր մտքում.

— Ա՛յ տղա, եսպես ել բա՞ն... Լլեկտրականը դո՛ մի ասիլ իմ տերտերմիայի մեջ ա ելել, չես անտեղյակ...

Վերաջապես յեկավ Հիդրոկայանի բացման որը... Ահա նա կանգնած է դյուղի հրապարակում, բազմության կենտրոնում, ելեկտրական այսնի մոտ... Միտինգն արդեն վերջանալու մոտն է, և դյուղխորհրդի նախագահը վերջին ձայնը տալիս է Մուքելին...

Նա մոտենում է նախագահին, բարձրանում է տախտակամածի վրա, ձեռքին բռնած իր աստվածաշունչը:

Հանկարծ յերեկոյան մթնաշաղը ցնդվում է ելեկտրական լույսից ու ժողովուրդը միաբերան վանչում է ցնծագին.

— Կեցցե՛...— հնչում եր յերկար ու կրկնվում նորից ու նորից:

Ցերը նախագահը հանդարտեցնում է ժողովականներին, բոլորի ուշադրությունն ակսում է կենտրոնանալ Մուքելի վրա:

— Ա՛յ ժողովուրդ,—ասում է նա,—եսոր մեզ համար մեծ աչքալուսեք ա, մեծ ուրախություն ա. յես էլ ձեզ հետ ուրախանում եմ, բայց յե՛րանի մեր ջահելներին, նրանք հենց տակից ապրելու են ես լուսավոր կյանքով: Ասում եմ ուրախանում եմ, բայց սրտիս վրա մի բան կա ծանրացած, վոր ուզում եմ ձեզ հայտնի անել. յես չատ եմ մեղանչել, չատ եմ վատ խոսել, թե ես հիդրոկայանն անաստվածների, անօրենների գործ ա, ու ենպես էլի մտածում, թե աստված կպատժի ու կկործանի նրանց չենքը, ինչպես վոր կործանեց Բաբելոնի աշտարակը: Ա՛յ ժողովուրդ, չատ ժամանակ իմ աչքերը խավար էյին, յես չէյի հասկանում, վոր ես նորի լիսը վոչ թե ատրբներից ու աստծուց ա, այլ թե մարդու գիտության, նրա հանարի, աշխատանքի գործ ա. յես ես բոլոր պայծառ բանները ատա ու կեղծ էյի համարում, իսկ ես աստվածաշունչը, ճշմարիտ. հիմա յես աստվածամ—ատա ը մեր հին աստվածն եր, հոգևորականներն էյին, վոր իշխանավորների հետ ապրում էյին ժողովրդի աշխատանքով: Դրանցից մեկն էլ մեր տեր-Մաթևոսն եր, վոր ինքն իր բերնով խոստովանվեց, վոր յերեսուն տարի խաբել, մոլորեցրել է ժողովրդին: Հիմի յես բերել եմ հետս մեր հին օրենքի, մեր խավար ժամանակի գիրքը— աստվածաշունչը. առաջ տեր Մաթևոսն ու իր նմաններն էյին: Հիմի, ա՛յ ժողովուրդ, լմացեք՝ յես բերել եմ ես մոլորեցնող գիրքն ու ձեր առաջ դնեմ պդում:

Այս ասելով նա աստվածաշունչը դրեց ներքև:

Ամբողջ ժողովուրդը մնացել էր ապշած Մուքելի խոսքերից ու մանավանդ այդ վերջին վարմունքից:

Պետրոսը կանդնած էր հոր յետևն ու հրճվում էր. կարծես նա յել մի ուրիշ հիդրոկայան էր կառուցել իր հոր սրտում, իսկ հրապարակորեն հայտարարելով նրա նեղ համոզմունքը, նույնպես հիդրոկայաններ պիտի կառուցվեին և բոլորի սրտում....

1932

---

2546

# ՄՈԼԱԽՈՏԸ

Վաղ առավոտից կոլխոզականները սկսել էին քաղհանը ճակնդեղի ու ծխախոտի ցանքերում: Ընդարձակ դաշտում՝ սկսած կոլխոզի մեծ այգուց, ավուլել էին մի քանի տասնյակ տղամարդիկ ու կանայք ու մաքրում էին մատաղ ծիլերը մոլախոտից: Որը պարզ եր ու վճիտ. պայծառ արևը լիուլի բացել եր հորիզոնը: յերկնքի ջինջ կապույտը, աչես նորոգված ու թարմացած բնության հետ, զրավում եր աչքը, տանում հեռուները ու լքեցնում հանաչատարդ սարերի վրա, մեղմ յեղերելով նրանց յերկարաձիգ գագաթները:

Պետրոսի մասն ընկել եր այգու մեջ, մի մեծ բացատում, վորի յերկու կողմից պողատաու ծառեր էին: Գլխին մի աղլուխ փաթաթած, կռացած մարդի վրա, նա խնամքով քաղում եր մոլախոտերը ու ձգում առվակոսը, վորտեղ նրանք թառամում էին, ուշաթափ լինում արևի հուրքից:

Առավոտյան հովը հետզհետե տեղի յեր տալիս կեսորվա տապին. տաքացած հողն ալիքում եր ներքևից իր տոթը, ծանրացնում չունչը, ու քրտինք տալիս ճակատին. արևը խայթում եր կրացած մեջքը, յերբեմն միայն պիջելով սարից յեկած հովին, վորը թեթև անցնում եր իր ախորժելի շնչով ու գանգազում գլմացի ծառերի վրա: Դարավոր ընկուզենին ծանրախոհ, խուլ աղմկում եր իր խոշոր տերևներով, կեռասենին բացվում, կարմրին եր տալիս իր նորահաս պտուղներով. իսկ սալորենիների մանրիկ տերևներն արագաշարժ պար էին բռնում:

Պետրոսն սկսել եր աշխատանքն արտի ծայրից ու գնում եր դեպի ներքև: Մերթ ընդ մերթ, յերբ նրա մեջքը բողոքում եր յերկար ճկվելուց, ու արևի տապից, նա կանգնում եր, ճղվում ու հանգիստ տալիս մկաններին: Այդ րոպեներին այգու ծառերի խիտ տերևները գայթակղիչ դրավչությամբ կանչում էին, բայց նրա հայացքը գառնում եր դեպի ներքև, վորտեղ յերևում

եր Սրխիկը ղել կարմրած դեմքը սպիտակ դլխաշորի մեջ: Կանգնում եր Պետրոսը, ամեն անգամ աչքով չափում իրենց բաժանող տարածությունն ու ասում.

— Հա՛, քեզ մատաղ, հա՛, մոտենում ենք իրար...

Նա ասում եր ինքն իրեն, հազիվ լսելի ձայնով, բայց կասկածով հետ եր նայում,— չլինի՞ թե վորևե մեկը լսեց իր ասածը: Յերբեմն նա վոքը ինչ ձգում եր իր հանդիսատը, ավելի յերկար եր նայում, բայց յերբ Սրխիկը, ղդալով իր վրա հառած հայացքը, ինքն ել եր նայում, Պետրոսն իսկույն կռանում եր նորից ու չարունակում պռկոտել անթիվ մանրիկ մոլախոտերը: Սրխիկի հայացքն իր մեջ առնելով, նա յել չեր նկատում շոգն ու տոթն ու կրկնապատկում եր յեռանդը, ախորժելի թեթևություն ղդալով ամեն մի վերջացրած, քաղհանած մարդից հետո:

Բայց ահա մոտենում ե դադարի ժամը. բոլորն ղդում են այդ րոպեները, կարծես մեկն անտես չչնչում ե նրանց ականջին ու հանդստի հրավիրում: Վերջապես ճաշ բերողը յերևաց բացատի ծայրին: Մեկ մեկու յետևից բոլորը թողին գործն ու խմբվեցին մեծ ընկուզենու տակ: Աշխատանքի լռությունը խախտվեց. սրախոսելով, ծիծաղելով, խմբակը նստեց ճաշի:

Ճաշից հետո կոլխոզականները գրվեցին այգում: Ընկուզենու տակ մնաց մեյն Սրխիկը: Պետրոսը, թեպետ մեծ ցանկություն ուներ մնալու նրա մոտ, բայց բամբասանքի սովից չտալու համար նույնպես քաշվեց անկամ, դանդաղ քայլերով:

Ինչ անց դիմացի այգուց դուրս յեկավ Սրխիկի մարաքույսը՝ Հերիքնազը, ու աչ ու ճախ աչք ածելով, մոտեցավ նրան:

— Բարով Սրխիկ ջան, վո՞նց ես:

— Լավ եմ,— ասաց Սրխիկը, վորձող հայացք ձգելով նրա վրա:

— Ցնկել եյի մեր այդին, ասի մի դնամ տեսնեմ... ի՞նչի չես յերևում:

— Ժամանակ չկա, մորքիր. նստի՛ր:

Հերիքնազը նստեց կանաչ խոտի վրա՝ Սրխիկի մոտ, ու ձեռքերով կղակը բռնած վոքը ինչ լռեց տատանման մեջ, ապա սկսեց փսփսքոդ ձայնով.

— Սրխիկ ջան, չարչարվում ես, ելի՛. բա սա քու բանն ա՞:

— Ինչի՞ չի իմ բանը. ուրիշներից ինչո՞վ եմ պակաս կամ ավել:

— Ը՛հ, ասում ես էլի... դե դու յել դիպաս, Արփիկ, քու մոր տեղն եմ... վոր տեսա քեզ եստեղ մենակ նստած սիրտս ճուռ յեկավ...

— Ինչի՞ յեմ մենակ. բա եսքան ընկերներն ի՞նչ են:

— Ձե՛, իմ ասածն ուրիշ ա... բա քու բանը վո՞նց պետք ա լինի, Արփիկ ջան, էլի պետք ա բաժանված մնա՞ս...

— Նոր ես իմանո՞ւմ, վոր վերջացած պրծած ա. ասելդ ի՞նչ ա:

— Դե լավ էլի ե՛լի...

— Բա քու լավը վո՞րն ա. տեղում ես էլի պնամ են տալարի ցավլի մո՞տ:

— Արփիկ ջան, բա վո՞նց անենք, տղամարդ ա, եսպես էլ կլինի, ենպես էլ...

— Ինչի՞ պետք ա կնիկը համբերի,— վրա պրծավ զայրացած Արփիկը.— յես նրա ճորտն ե՞մ. զոռով մարդու յեն տվել, հիմի խելքի յեմ յեկել, չեմ ուզում. ինձ հետ ապրող մարդը պետք ա իմ սրտովը, իմ ընկերը լինի, թե չե խակի մարդ չեմ ուզում:

— Բա առանց տղամարդու, առանց տեր ու տիրականի վո՞նց կլինի. տղամարդու վրտի ցեխն էլ տանը զարդ ա...

— Եդ հին խրատները քեզ համար պահի. առաջդ յերեխա չեմ. յես գիտեմ, ով ա քեզ գրկել. նա հենց ինքը տեղովը մին վրտի ցեխ ա... դու լավ կանես, ճեռք քաշես. մի անգամից իմացիր, վոր կուժը կոտրել, փշրվել ա, էլ կոծկել չի լինիլ:

— Դե լավ, լավ, սիրտդ շուռ մի բերիլ. խոսք ա էլի, ասում եմ. ի՞նչ անեմ, սիրտս ցավում ա:

— Ա՛յ, վերջին անգամն եմ ասում, մորքիր, գործը գաղտուկ հատուցված, պրծած ա. թե վոր մեկ էլ խոսք ես գցել դրա մասին, բերանիցս կծու խոսք կլսես:

— Լավ, վոր սիրտդ նեղանում ա, էլ բան չեմ ասիլ. գնա վոր վերջացած ա, էլ ի՞նչ խոսք. որենքի բան ա...

Հերիքնապը լսում է ու նայում չորս կողմը սպասողական դրության մեջ. ապա, կարծես ինչ վոր հիշելով, հարցնում է.

— Աղչի, Արփիկ, ասում են սիրտդ ուրիշի վրա յա, դրուստ ա՞...

— Ելի բողչեղ բայ ասի՞ը— զայրացավ նորից Սրվիկը.— լավ կանես գրանից չխոսես. եղ բամբասողները ինչ ուզում են, թող կուկուան. յես ուշք դարձնողը չեմ— յես ոչխարի հաշիվ չունեմ տալու:

— Դե Սրվիկ ջան, կարելի ա մեծացել եմ, խելքից ընկել. ի՞նչ անեմ, զլմանում չեմ. ուսանում եմ քեզ պես ջահել, սիրուն կնիկն առանցի մարդին, առանցի ոջախ... իմ սիրտը հո քար չի...

Սրվիկը լուեց ու զժգոհ նայում եր պետնին: Հերիքնազը ջըզայնորեն շոյում եր կզակը, նորից զգուշությամբ աչք ածելով շորս կողմը: Զանցած մի քանի րոպե, զլմացի այգուց դուրս յեկավ խուճացած սիկջակով մի գյուղացի, ու փոքր ինչ մոտենալով կանգ առավ:

Նրա գեղնած, ջղոտ դեմքի ամեն մի կնճռից զաղափած մարդ եր նայում.— զաղափած եյին փոս ընկած կարմրած աչքերը, ծամածռած բերանը, ալեխառն, ամելանման մորուքը:

Հերիքնազը նրան նկատելուն պես վեր կացավ տեղից, իսկ Սրվիկը մնաց նստած, յերեսը զարձնելով մի կողմը:

— Բարի աջողում,— ասաց Սարիբեկը (այսպես եր նրա անունը), զիմելով Հերիքնազին:

Հերիքնազը պատասխանեց զլխի շարժումով:

— Բա զու մեծ կնիկ ես, Հերիքնազ, մոր տեղն ես, կարում չե՞ս խրատես եղ կնկան, վոր նամուսը հվաքի տուն զա...

— Ի՞նչ ես փչի նման վեշից կպել,— վրա պրծավ Սրվիկը,— քեզ հարար անդամ առել եմ, վոր բաժանվել եմ որեքից...

— Բա ես որենք ա՞, վոր կնիկարմատը վեր կենա տուն ու տեղ թողնի, թե բաժանվում եմ մարդո՞ւց...

— Բա վո՞րն ա որենքը,— վոր զոռով մարդու տան, ուշունգի ու ծեծի վայ աննո՞ւն. զնա զու ուզած կնիկը ճարի. յես քոգ ընկերը չեմ. զու ձայնապուրկ ես, յես աշխատավոր...

— Եղպես ա, հա՞, մենք մարդահաշիվ չե՞նք. մի աստ տեսնեմ, ո՞վ ա եղ որենքն անողը.— իմ տանը նոքար եր, հիմի մեծ մարդ ա զառել, ինձ ձայնից զրկում ա՞:

— Ցես քեզ հետ զրուխ չունեմ. ինձ հանգիստ թող:

Պետրոսը հեռվից զիտում եր այս տեսարանը. նկատելով, վոր ձայները բարձրանում են, նա մոտ յեկավ այնքան, վոր լսե-

վի լիներ խոսակցությունը ու ականջը պահելով նրանց կողմը, այնպես ձևացրեց, իբր թե դիտում և մարդերը: Տաքտիկական նկատառումներով նա չեր ուզում խառնվել խոսակցությանը, բայց ուզում եր պաշտպանել Արփիկին, յեթե Սարիբեկը վիրավորեր նրան կամ բռնություն գործ դներ:

Սարիբեկը, նկատելով Պետրոսին, ավելի մոտայլվեց, ու սիրտը վախ ընկած՝ ուզեց վերջ տալ խոսակցությանը:

— Բա հիմի ասելդ ի՞նչ ա,— դիմեց նա նորից:

— Են ա, վոր քու ճամբեդ գնաս, ինձնից ձեռք քաշես:

— Լավ, յես հո գիտեմ, քեզ գլխից հանողն ո՞վ ա,— ասաց նա, խեթ նայելով Պետրոսի կողմը.— եդ ել չի մնալ քեզ...

— Ինձ ոչով հրամայող չկա.. յես եմ իմ գլխի տերը. ինձ սովորեցնողը խորհրդային իշխանությունն ա, գնա նրա հետ խոսի. ինձ հանգիստ թող, թե չե ժողդատարան կդնամ.— դրա համար մեծ պատիժ կա...

— Հը՛մ, հաթա (ապառնալիք) ել ես տալի՞ս... դե կտեսնես սրանից յետը...

— Ինչ ուզում ես արա. քեզանից վախող չկա. դու ինձ համար վոնց վոր են մոլախոտը, քաղի ու դեն գցի...

Սարիբեկի դեմքը ծամածռվեց կատաղությունից. նա ուզում եր թունդ հայհոյանք թափել Արփիկի գլխին, բայց Պետրոսի ներկայությունը կաշկանդեց նրան:

— Հա՛յ յես... մոմոաց նա ատամները կրճատացնելով ու յերեսը դարձնելով, հեռացավ, չեղելով ճամբեն, դիպչելով ծառերի ճյուղերին, ու ընկնելով ավազոտները:

Պետրոսը՝ նկատելով նրա նահանջը, հանգիստ ժպտում եր յետևից:

Արփիկը վեր կացավ տեղից, թափ տվեց փեշերը, ուղղեց գլխաշորը, ու նկատեց Պետրոսին: Նրանց հայացքները վայրկյանաբար իրար առան թեթև ժպիտով:

«Ե՛հ, մարդ ել կա, մարդ ել,— անցավ Արփիկի մտքով. նրա մեջ ցանկություն յեկավ մոտենալ Պետրոսին, փաթաթվել վզովը, ասել, վոր նրան չատ ե սիրում, բայց այդ անկարելի յեր... պետք եր համբերել, մինչև վոր Պետրոսը բացի խոսքը:

Աչքի ծայրից նչան տվին կարմիր դրոշակով: Դաշտերը վերջացավ ու նորից սկսվեց քաղհանը: Հերիքնազը մնաս բարով ասելով, հեռացավ, իսկ կոլխոզի կանայք շրջապատեցին Արփիկին:

***

Իրիկնապահի արևն անզոր սահում, անցնում եր, անցնում աշխատավորների վրայով. լեռների հովն իր առաջ ընչով ուշքի յեր բերում հոգնած մարմինները. բացատի մի կողմից, ծառերի յերկար սուլերները թեք կտրում եյին մարդերն ու գնում, ծալվում դիմացի ցանկապատի վրա:

Պետրոսն ու Սրսիկն արդեն հասել եյին իրար ու միասին աշխատում եյին վերջին մարդի վրա, զուգընթաց գնալով՝ մեկն աջ, մյուսը ձախ կողմից: Յերկուսն էլ հազիվ եյին զսպում իրենց ուրախությունը, վոր միասին են, այսպես մոտիկ, ու կարող են խոսել մինչև մարդի վերջանալը:

— «Ա՛յ, հիմա կասեմ»,— անցնում եր Պետրոսի մտքով, բայց նա խոսում եր բոլորովին այլ բաներից.

— Սրսիկ, եսոր արտաժամ ենք, կարող եյինք մի մարդ էլ ավել քաղհանել:

— Դե շատ զոռելն էլ լավ չէ. եզուցվա համար էլ պիտի ջան պահել...

Պետրոսը լռում է մի պահ, հետո ասում.

— Եղ քու մարդը ի՞նչ եր բոլբոլում, բա բաժանված չե՞ս:

— Բաժանված էլ եմ, մտքից հանած էլ. բայց դե հաչոցը չի կտրում. զահլես գնացել ա.

— Թե վոր եղպես դաղար չի տալիս, չարչարում ա, դիմի՛ր ժողդատարան, դրիր թե հալածում ա...

— Ջեմ ուզում բամբասանքի մաստակ դառնամ, թե չե վաղուց դրա պոչը վոլորած կլինեյի. բայց եսոր փիս դամարին կպա. կատաղեց...

— Վո՞նց:

Սրսիկը ժպտում է, կամար անե հոնքերը բարձրացնելով:

— Ասի դու վոնց վոր մի մոլախոտ՝ պոկի ու դեն գցի...

Պետրոսը ծիծաղեց.

— Ի՛սկը մոլախոտ... բայց դրանց լավ պահելինք. Քող գնան առաջվա աղայությունը միտը բերեն...

— Յերանի մի քիչ շուտ գար եղ մաքրելը, դրանց քաջը կարեր միանգամից:

— Ջաղսին արդեն հայտնել ե՞ս:

— Վո՞նց չե, քանի՛ ժամանակ ա...

Նորից մեջ ե ընկնում լռությունը, նորից Պետրոսի մտքով անցնում ե — «ա՛յ հիմի կասեմ»... բայց վճռական րոպեին նա կանգ ե առնում.— «չե՛ մի քիչ կարդի բերեմ գործերս, սենյակը նորոգեմ... հետո...»

Ու խոսում ե ուրիշ նյութերից:

— Դրանք հո չահագործող են, ես խոտերի նման ուրիշի հյութերով ապրող. ինչ վոր նոր բան կա, դրանց դլխովին վնաս ա. դրանց մոտ սոցիալիզմի անուն տաս՝ մեկ ե, թե խանչալը կողքը խրես... Բայց ի՞նչ կասես, վոր մեր կոլխոզնիկների մեջ էլ կան մին-մին փչեր. չեն հասկանում, վոր գործը փչացնում են...

— Դե հասկանալը մի որում չի լինել, սովորել ա հարկավոր,— ասում ե Արփիկը մտերմաբար նայելով Պետրոսին, կարծես ասելով— «ինձ էլ կսովորեցնես, չե՞...»:

— Ախոռս վոր մեզանից քչերն են յեղել Կարմիր բանակում, ենտեղ շատ բան են սովորեցնում...

Ապա փոքր ինչ լռելուց հետո նա չարունակում ե իր մտքերը.

— Գիտես ի՞նչ կա Արփիկ, ես սոցիալիզմի, կոլխոզի մարդն ուրիշ բան ա. նա սեռք ե հասկանա աշխատանքը. չսեռք ե ասի՝ յես իմ փայ գործը վերջացրի, ու դրաղ կքաշվեմ. չե՛, նա սեռք ե ասի՝ իմ փայը կանեմ, ես ավելն էլ պլանի փայը... կարելի ա վոր մի հիվանդ ընկեր կա, կամ թոռյլ, չի հասցնում գործը. նրա տեղն ավելացնեմ իմ աշխատանքը... եղավես վոր լինի, ել ո՞վ կհասնի մեր յեռեից. են ժամանակ յերկիրը դրախտ կդառնա...

Մարդը վերջանում ե, բայց զուլդը ելի դեռ մրսել ե տալիս: Արդեն դաղար ե. կոլխոզնիկները խմբվել են արտի ծայրին ու հետաքրքիր հայացքներն են ուղղում Արփիկի ու Պետրոսի կողմը: Արփիկը, սթափվելով, ձիրադ քայլերով դնում ե դեպի խումբը. Նրան ավելի հանդարտ հետևում ե Պետրոսը: Իրար ընտելացած խումբը թեթև զրույցով քայլում ե դեպի գյուղը, մի ընտանիքի անդամների նման:

Նրանց հանդիպում է դյուզի ծայրին կոլխոզի ցրիչ Պավլիկն ու հայտնում.

— Ընկերնե՛ր, ես որ ժողով ա...

***

Յերեկոյան արտադրական ժողովից հետո Պետրոսն ու Սրիկը կարծես լրար խոսք տված, դուրս չեկան մխաին, ու նեղ փողոց մտնելով արտաքին քայլերը, վրտիալեցի մենակ մընան:

Յերկուսն էլ հրճվանքի մեջ էյին, մանավանդ Սրիկիկը. յերկուսն էլ այդ ժողովին հայտարարվեցին հարվածայիններ...

Չարմանում եր Սրիկիկը. վո՞նց թե ինքը մի թույլ կնիկ, տանջված, խեղճացած իր մարդուց, հիմի տղամարդկանց հետ ուս է դնում, ու մինչև անգամ հարվածային է դառել...

— Տեսա՞ր, Սրիկիկ, վոր ասում եմ մեր մեջ փչեր կան... Սարդիսը, մեկ էլ Շուշանը վրա ընկան ինձ, չնորհքները ցույց տվին.— ասում են եղ ի՞նչ խնամխություն ա. դնում եք հեչտապըրծուկ անում, մի յերկու խոտ պոկում, թե հարվածային եք... յես էլ ասի— դե յեկեք ձեր աչքով տեսեք թե մի մոլախոտ կգտնե՞ք մարդերում... դե հաղար ասա, վոր հասկանում չեն...

— Նախանձում են, չեն էլ ամաչում...

Նրանք քայլում են լուռ, յերկուսն էլ ապասելով թե ինչ-վոր արտասովոր դուրեկան խոսք և ասվելու. Սրիկիկն ապասում է, վոր Պետրոսը պիտի «բացվի», բայց զարմանում է, յերբ հասնում է իր բնակարանին ու ելի նա լռում է «եղ մասին...»

Իրար ձեռք են սեղմում ու բաժանվում, յերկուսն էլ մոտածելով իրար մասին...

Պետրոսը գնում եր նեղ ու մութ փողոցներով, մտածելով թե ահա, մի քիչ անցնի՝ եսպես մի ամիս, գործերը կարգի կբերի, ու իր մխաքը կհայտնի Սրիկիկին. դե նրա սիրտն էլ, յերեվում է, իր վրա յե... ու կապրեն մխաին, կաշխատեն... հետո մխաքն անցնում եր կոլխոզին, մտածում եր, թե ի՞նչ պետք է անել, վոր բոլորն էլ ուրիշ տեսակ, «սոցիալիզմի մարդիկ» դառնան ու հասկանան աշխատանքը... պետք է սովորեցնել, դեռ շատ պետք է սովորեցնել...

Նա մոտենում է գյուղի ծայրին, վորտեղ իրենց տունն է: Ծալելով դեպի մի ցանկապատի անկյունը, նա հանկարծ չմում է ատրճանակի ձայնից, ու ակամա հետ է ընկնում, ղպալով մի ցնցող հարված ուսին: Մի ակնթարթում ինչ-վոր միտք աում է.— վա՛յ ընկիր, ձևացի՛ր սպանված... ու նա ընկնում է, փռվում դետնին. մեկը վազում է թմփթմփալով ու հետո տրոում է լռություն:

«Վիրավորված եմ... մեռնում եմ...» անցնում է Պետրոսի մարող գիտակցության մեջ. մահվան ոտարտի միտքն ընդդեմ կում է նրան...

Բայց ահա լսում են մարդկանց ձայները, գալիս են լսոտերնելով ու խմբվում իր շուրջը. ուսի վրա արյուն է աում, հոսում է ներքև: Իրեն բարձրացնում են, տանում տուն: Ինչ վոր մոռացություն է գալիս վրան, կարծես ուրիշ աշխարհում լիներ...

***

Ցերեկ որ է անցել: Պետրոսը լսմանում է, թմբիկը քանի անդամ նայել է ուսի վերքն ու ասել, վոր վտանգ չկա: Մայրը հաղիվ է ուշքի յեկել, ու նրա վախենում է, հարցնում բոլորին, վորպեսզի ատուդի՝ ճիշտ ե՞, վոր վտանգ չկա ու չհիվանդ է, ինքն էլ չի լսմանում թե ի՞նչ է անում:

Սարիբեկը հենց նույն դիշերն լսմանալով գեպքի մասին՝ մոռացավ ամեն ինչ, խակուն վազեց Պետրոսանց տունը, ու մինչև հլմա էլ դիշեր ցերեկ խնամում է նրան, թողած հին գյուղի ամոթխածությունը: Քանի լսմանում է Պետրոսը, մորն ավելի ու ավելի խորթ է թվում ես «ատար» կնիկը, բայց համբերում է, վորովհետև կոլխոզից է:

Ցերեկ որ է անցել, բայց դեռ չի անցել էրատանցումը կոլխոզում. ժողովները են անում, գնում, գալիս Պետրոսի մոտ, սիրտ տալիս նրան: Կոլխոզի նախագահ Մխաիլը, քրանքից այրված դեմքով, մեծ բլոկնոտը ղրսի կրծքազրպանից դուրս ցցած, հարցնում է թրոխա ձայնով.

— Պետրո՞ս, եղ վո՞ր ճակատամարտում ես վերք ատացել... մի՛ վախիլ,— թշնամին ձեռներիս է արդեն. Սարիբեկը բռնված է. տեսնող է յեղել վախչելիս, ատրճանակն էլ գտել են գոմում...

Պետրոսն ուզում է ինչ-որ ասի, բայց նախապահը ձիջոց չի տալիս.

— Ղոչա՛ղ կաց, Պետրոս, ես թշնամիները «կուզան ու կերթան». մենք ելի մեր հարվածային գործը կշարունակենք...

— Սխէյ՛ Սրսիկ, յերևում է, լավ ես մտիկ անում, շուտ է լավանում, միայն թե տե՛ս, մենակ աչքով մի մտիկ տա, մի քիչ էլ վորը կշտացնու.. Դե յես գնացի, գործ ունեմ, մնաք բարով...

Նախապահի ակնարկը ժպիտներ է թողնում Սրսիկի ու Պետրոսի դեմքին: Սրսիկը նայում է գետնին ու անհարմար զգալով, խոսք է գյուտ տալիս բանի վրա:

— Պետրոս, իմացա՞ր Սարիբեկը բռնվել ա... ուզում եր քու գլուխն ուտի, իրանը կերավ...

— Հա՛, Սրսիկ, քո մոլախոտը գնաց... Հիմի կտպրես նոր կյանքով... Մի բան ունեմ ասելու Սրսիկ, արի մենք մշտական մոտ ընկերներ լինենք, ապրենք միասին... Թե վոր դու դեմ չես...

Սրսիկը լռում է:

— Դե վոր մոտ ընկեր ես, Սրսիկ, ձեռք տուր ինձ, ապրենք միասին, աշխատենք մեր կոլխոզում...

Ու առաջ ձեռքը հանում է անկողնից.

Սրսիկը ձեռք է տալիս և ուզում է շուտով ելի հետ տանել, բայց Պետրոսը սեղմում է, չի թողնում:

Ներս է մտնում մայրն ու կանգնում ապշած.

— Մա՛յրիկ, խնդրում եմ դու էլ ձեռք տուր Սրսիկին. հիմի աս իմ մոտ ընկերն ա, պետք ա միասին ապրենք...

Մայրը լեզի նայում է Սրսիկին իր հին, խամրած աչքերով. յերևում է, նա զժգոհ է, բայց վորդու խաթրը չի կոտրում, մոտենում է ու իր չոր, սառը մատներով բռնում Սրսիկի ձեռքը: Ապա ետևից գալիս է գնում բակը ինքն իրեն մնթմնթալով.

«Եսպես էլ աշխարհ կլի՞... Կոլխոզ, կոլխոզ— ասելով յերեխա իրան կապեց... բա ազատ տղեն մարդաթող կնիկ կանի՞...»

1932

---

# ԳԱՅԼԵՐԻ ՁԱՄԲԻՆ

## I

Աչնան անձրևը մաղում եր անվերջ այնքան բարակ, վոր հազիվ եր նշմարվում նրա սկիզբն ու վերջը: Շրջակա լեռները պլուխները ծածկված թանձր մշուշով՝ թաղնվել եյին հորիզոնից: Գյուղի պարտեղներում ծառերն արդեն մերկանալու մոտ եյին տխուր ցուցադրելով իրենց տերևների վերջին մնացորդները: Փողոցների ցեխը հետզհետե խորանում եր, թողնելով իր մեջ քամու բերած տերևները: Յերթևեկությունը նվազել եր այնքան, վոր փողոցներով անցնողներին կարելի յեր հաշվել մատներով:

Այդ յեղանակին փառատարան Մարկոսյանի գալը մի արտակարգ յերևույթ եր և զարմանքով նկատվեց գյուղի գլխավոր փողոցի բոլոր պատուհաններից: Բերողը մանավոր կառապան Մարտինն եր, վորը վաղուց ծանոթ եր գյուղին իր արևից ու փոշուց անացած դեմքով, իր նշանավոր ֆայտոնով, վորի մասին չատերն եյին զուշակել թե «դեն գցելու ժամանակն է», բայց նա կար և իր տերոջ կարծիքով՝ մտադիր եր դեռ յերկար մնալու: Ի՞նչ անենք, թե նա հին, կարկատած մասերի մի ժողովածու եր և չարժվելիս իր քայքայման համերպն եր տալիս:

Կառքը կանգ առավ գյուղխորհրդի առաջ: Ծածկոցի տակից դուրս յեկավ մի մարդ՝ խունացած վերարկվով ու հին՝ ջարդված յեվրոպական ձևի գլխարկով, վրին կապած սև չարշֆ, ու ձեռքին բռնած մի պորտֆել, վորը նույնպես հին եր ու խունացած:

Իջնելով կառքից, Մարկոսյանն ուղղեց վերարկուն, հետ բացեց վրին չատ ուռուցիկ փաթաթած չարշֆը, վորը իսկապես կազմած եր կանացի հին, գործած սև չալի մնացորդներից, ապա իր տարիներից մաշված դեմքին ժպիտի արտահայտություն տվավ, վորն անհրաժեշտ եր իր այցելության հաջողության համար:

Նա բարձրացավ դյուղխորհրդի պատշգամբը, դժվարությամբ քայլելով էր՝ կառքում շատ նստելուց ընդարմացած վոտներով: Գրասենյակում նա բարևեց ծառայողներին, շորքորթ ժպտով ու ձայնով, առանձնապես դիմելով ամեն մեկին, ու անցավ նախագահի սենյակը:

— Հարգանքնե՛րս.. Բարև՛ ձեզ, ընկեր Թադեվոսյան,— դիմեց նա նախագահին, հին ձևով խորը գլուխ տալով ու պինդ սեղմելով նրա ձեռքը:

— Բարև,— զուսպ ձայնով ասաց նախագահը, խորշելով Մարկոսյանի քաղցրալի տոնից:

— Ինչպե՞ս եք:

— Վոչինչ,— ասաց նախագահը սառը տոնով, վորը նշանակում էր, թե այդ հարցն ավելորդ էր:

— Կարծեմ լինձ կանչել եյիք,— ասաց Մարկոսյանը, նորից քաղցր ժպիտ ներկայացնելով իր դեմքին:

— Այո՛, նստեցեք, այս րոպեյիս,— ասաց նախագահը, ու իր առաջի թուղթը ստորագրելով, մի կողմ քաշեց:

Ամբողջ մի քանի տալով, նա դիմեց նորեկին.—

— Ֆաղաքացի Մարկոսյան, ձեզ կանչել եմ նախազգուշացնելու՝ եթե չեք բնակվելու ձեր ամառանոցում, դյուղխորհուրդը կը գրավի այդ տունը:

Մարկոսյանը, թեպետ ոգաում եր այդ առաջարկին, ընկճվեց նախագահի խոսքերից:

— Բայց, ընկեր Թադեվոսյան,— ասաց նա, ժողովելով իր բոլոր ժպիտները,— յերեվի ձեզ չեն տեղեկացրել... յես ամբրել եմ ամառը և այժմ էլ յեկել եմ նայելու...

Նախագահը՝ յերեսունի չափ մի յերիտասարդ, լիքը մարմնով, դործնական, կարուկ հայացքով նայում եր Մարկոսյանին, բոլորովին անտարբեր նրա ժպիտներին:

— Վոչ, գուք պիտի մշտապես ապրեք այդ տանը, հակառակ դեպքում լինչպես ասացի՝ կգրավենք,— ասաց նա վարժակի, կարծես դանակով յերշիկ եր կտրատում:

Հին ադվոկատի ջիղը չարժվեց Մարկոսյանի մեջ լինչ վոր խորքերում և ուզեց պաշտպանել լինքն իրեն՝ թեկուզ և շատ մեղմ ձևով:

— Իհարկե, հարգելի ընկեր Թադեվոսյան... յես չեմ ուզում

քննադատել ձեր վորոշումները, բայց կուզեյի ասել... քանի վոր ինձ տված է սեփականության իրավունք...

— Ի՞նչ իրավունք. մենք՝ ի նկատի առնելով, վոր դուք ինտելիգենտ եք, վորոշ դյուրություններ ենք տվել ձեզ, հավասարեցնելով աշխատավոր դյուղացիներին, բայց մի պայմանով՝ վոր դուք ապրեք, ոգտվեք այդ ամեց...

Ներս յեկավ քարտուղարը՝ ձեռքին բռնած ինչ վոր թղթեր ու անհամբեր հայացքով կանգնեց քիչ հեռու, սպասելով խոսակցության վերջին ու դիտելով Մարկոսյանին:

— Այո՛, ճիշտ է, իհա՛րկե,— ասաց Մարկոսյանը ավելի փափկելով,— բայց ուզում եյի ասել՝ քանի վոր դուք թողնում եք իմ սեփականության իրավունքը... նա պիտի կիրառվի՝ այսպես ասած՝ իր բոլոր սորիբուսներով...

— Ինչպե՞ս թե,— հարցրեց նախագահը, չհասկանալով նրա վերջին բառը:

Մարկոսյանն ուղղեց ակնոցները, կարծես պատրաստվում եր խոսելու դատարանում:

— Ձես ուզում եյի ասել՝ վոր ինձ տրված է սեփականության իրավունք, իսկ սեփականության սկզբունքի՝ նրա սորիբուսների մեջ մտնում է ոգտվելու և չոգտվելու իրավունքը... դեռևս հնեցում հռոմեական իրավունքն այդ ձևակերպում եր այսպես՝ jus utendi iet abutendi...

Նախագահը նայեց զարմացած, կարծես մի ոտար մարդ եր իր առաջ, վորի լեզուն չեր հասկանում, կամ դիմացինը հանկարծ ցնդվել եր:

— Դե յես փաստաբան չեմ, վոր լատիներեն խոսեմ,— ասաց նա թեթև հեղնելով, բայց խնդրեմ ասեք, ի՞նչ և նշանակում չոգտվելու իրավունքը:

Մարկոսյանն այդ հարցից փոքր ինչ աշխուժացավ, կարծես մի կաթիլ ընկավ նրա մեջ. «գուցե համոզեմ».— անցավ նրա մտքով:

— Ես թոպելիս բացատրեմ միտքս. որինակ՝ յես ապրում եմ իմ տան մեջ և հետո թողնում եմ, ել չեմ ապրում. թե առաջին և թե յերկրորդ դեպքում նա մնում է՝ վորպես իմ անձնական խնդի սեփականությունը...

Նախագահը քմծիծաղ տվավ «անձնականխնդի» խոսքից, կարծես իր առաջ մանկական ներկայացում եր:

— Ես հին իրավունքների մասին դուք կարող եք կարդալ ձեր հին դրքերում. յերեվի դուք դեռ չեք լսել, վոր մեզ մոտ խորհրդային կարգեր են, և այնպես եք խոսում, կարծես ցարական դատարանում եք... Հարցը պարզ է՝ յեթե դուք չեք ապրել այդ տան մեջ, մենք կոդտապարծենք դպրոցի համար...

Փաստաբանն ղժաց, վոր իր գենքը ծալվեց թղթե դանակի նման, ու նորից դիմեց իր ժպիտներին, վորոնք այժմ կարծես նեղդուխյուն եյին խնդրում:

— Այդ՛, իհարկե՛... դե յես այսպես ասած՝ ձևական տեսակետից եյլ մոտենում... Լա՛վ, վոր այդպես է, յես մշտապես կապրեմ իմ ամառանոցում, ինչպես դուք եք առաջարկում...

Մարկոսյանն եյլի եր ուզում խոսել, բայց նախագահը կըտրեց՝

— Այդ եր իմ ասելիքը,— վերջացրեց նա, յերեսը դարձնելով դեպի քարտուղարը:

— Յոնեսկյուն,— ասաց Մարկոսյանը, վեր կենալով տեղից. նա նորից հանդիսավոր կերպով խորը գլուխ տվեց նախագահին ու քարտուղարին գլինը սեղմելով նրանց ձեռքը: Անցնելով դեպի դրասենյակը, նա նույն կարգով հրաժեշտ տվավ և ծառայողներին:

Նրա հեռանալուն պես նախագահի սենյակում բռնկվեց մի ծիծաղ:

— Են վո՞նց եր ասում— չոգտվելու իրավո՞նք... հա՛ հա՛... ծիծաղում եր նախագահը,— այ՛ թե ազվակատ ա ե...

— Ձերազ և տեսել,— վրա բերեց քարտուղարը,— դիտե՞ս, ասում են մի քիչ ուղեղը շարժվել ե...

— Հա, եդպես ե յերևում...

Մարկոսյանն անցավ յերկար պատշգամբով, լքավ ցածրիկ սանդուխաններով դեպի փողոց: Կառապանը՝ ուսերին ձգած մի պարկ, խոսում եր դյուզացու հետ:

— Եդ ո՞ւմ եք բերել,— հարցրեց դյուզացին:

— Ձմեռվա դաչնիկ եմ բերել,— պատասխանեց Մարտինը, չնկատելով, վոր Մարկոսյանը դալիս ե:

Գյուզացին տեսնելով Մարկոսյանին, դլխի ընկավ, թե ումի համար ե խոսքը, քմծիծաղ տվավ ու շարունակեց իր ճանապարհը:

Մարկոսյանը րոպեապես կանգ առավ, աչքերը կկոցելով նայեց իր առաջ, կարծես ուզենալով մտաբերել ինչ վոր մոռացած բան: Նա լսեց կառապանի ասածն իր հասցեին ու մռայլվեց, ցրելով իր բոլոր ժպիտները: Սարերի թանձր մշուշը, խոնավ յեղանակը, ցեխը, ու նոր իր կրած պարտությունը մի հուզարկավորական տխրություն բերին նրա վրա: Նրան թվում եր, թե Մարտինի այս քայքայված, կարկատած կառքն իսկապես իր դիակառքն եր...

Նա ավելի խորն լծեցրեց դեմքին իր տրադիկ գիմակը, ու նստեց կառքի մեջ: Սրճանացած կառապանը նորից չարժեց անձրեվից լոզացած փոքրացած ձիերին:

Կառքն անցավ գյուղի յերկար փողոցով, պտտվեց ու դուրս յեկավ գաշտը:

— Ամայությո՛ւն ամայության...— ասում եր ինքն իրեն Մարկոսյանը, նայելով գաշտին.— «Պարզ և,— մտածում եր նա, ուզում են նեղը ցցել, վորպեսզի ինքս փախուստ տամ իմ ամառանոցից, բայց յես կենդանի աչքով չեմ թողնի իմ կայքը. ավելի շուտ մարմինս ինձանից կբաժանվի, քան թե իմ սեփականությունը...»

Նա մտածում եր, ատեպ-ատեպ ցնցվելով ճանապարհի անհարթություններից ու ակների տակ ընկնող քարերից:

— Նոր մարդիկ, նոր որենքներ... կարծում են հե՛շտ և տապալել հին որենքները... սպասե՛ք, յերբ յես կջախջախեմ իմ գրքի մեջ ձեր մոլորությունները, այն ժամանակ դուք վերջ կտաք ձեր սոցիալիստական եքսպերիմենտներին...

Նրա մտքերը կանգ առան կառքի հետ՝ իր ամառանոցի առաջ: Դա մի սպիտակ չենք եր, կիսառոմանական վոճով, յերկու թեվերին աշտարակներ եյին, պլուխները գմբեթաձև: Տան առաջը մի ընդարձակ պարտեզ եր, վորի մի մասը հատկացված եր զարդական, հազվադյուտ ծառերին՝ ակսած Հայաստան կիսաբիանեից ու վերջացած արհեստական կլոր ձև տված, փոքր ծառերով:

Նա լջալ ներքև, մոտեցավ ցանկապատի յերկաթե դռներին: Մինչ նա փնտռում եր պրպանում բանալիները, նրա աչքին ընկավ ցանկապատի մի փոքրիկ վրվածք. նա մի հայհոյանք ուղղեց գյուղի յերեխաների հասցեին, վորոնց նա վերագրում եր

այդ «վոճիրը» ու փորձեց բանալ դուռը: Ժանգոտած կողպեքն ու բանալին յերկար կռվում եյին իրար հետ, չարաղուշակ նախապաշարմունք հաղորդելով տանտիրոջը.— «աա վաա նշան ե,— մտածում եր Մարկոսյանը,— դուռը չի բացվում, յերեվ կըխլեն ձեռքից...»

Բայց վերջապես յերկաթե դուռը բացվեց, իր ժանգոտած խաղերի ձլոցով: Նա ներս մտավ իրեն այնպես սովոր ծառուղիով ու գնաց դեպի տունը: Նրա յետևից գնում եր կառապանը, հետը տանելով մի մեծ չեմոդան ու անկողնի կապոց:

Ծառուղիները ծածկված եյին թափված դեղին տերեվներով, վորոնք անձրևից հետո հետզհետե կպչում եյին գետնին: Ձորս կողմը մի ամայություն եր տիրում, ասես գերեզմանատուն լիներ: Նրբից դժվարությամբ բանալով դռները, նա բարձրացավ յերկրորդ հարկն ու վերջապես ներս մտավ իրեն սիրած մեծ սենյակը, վորի հետ կապված եյին շատ հիշողություններ...

Նա շտապով բացեց մի պատուհանի փայտե փեղկերը, կարծես վախենալով ինչ վոր թաղնված մարդկանցից, ապա վճարից կառապանի վարձը, ու նստելով կոտրած աթոռին՝ սեղանի մոտ, մնաց այդպես անշարժ, ստեպ-ստեպ հառաչման ձայներ հանելով:

Այս բոլոր սարք ու կարդը վո՛րքան ծանոթ եր նրան, բայց այժմ թվում եր խորթ, ոսոր... դատարկ, մերկ թախթերը, սեղանները, պահարանը, սենյակի հատակին ընկած հին, դեղնած լրագիրը, անկյունում թողած աղբի մնացորդը... այս բոլորը վհատություն եր ներշնչում նրան:

Մի ժամանակ ամեն ինչ այս տան մեջ կանչում եր, հրավիրում նրան, իսկ այժմ կարծես ասում եր՝ «ինչո՞ւ յես յեկել, գնա...»

Ցերկար նստելուց հետո, նա վեր կացավ, բացեց մնացած յերկու պատուհանների փեղկերը ու սկսեց հետ ու առաջ քայլել սենյակում:

«Հեյ գլուխ, ինչ ժամանակ եր... մտածում եր նա անցյալի մասին. այս որին եվ արժանացանք, վոր ձմեռը ամառանոց յեկանք... Sic transit dloria mund*)

Ու անցյալի հիշողությունները մեկ-մեկու յետևից գալիս եյին նրա առաջ:

---

*) Այսպես և անցնում աշխարհիս փառքը (ավետ փառաց անցավորի):

Փաստաբան Մարկոսյանի անունը վաղուց ներս կապված եր վոչ միայն այս ամառանոցի հետ, այլև նրա տակի հողամասի հետ: Այդ հողամասը շրջակա անտառների հետ պատկանում եր մի կալվածատիրոջ յերևոտասարդ ժառանգին, վորը՝ զբաղված լինելով իր քեֆերով, բավական անուշադիր եր դեպի իր կալվածքի սահմանները: Ժառանգի այդ «ջահելությունն» ու «անխելքությունը» չարխելով, գյուղի հայտնի կուլակ Սիմոնը վճռեց, վոր ժամանակ է գործ տեսնելու: Մի որ նա ներկայացավ քաղաքում իր ծանոթ Մարկոսյանին, և հարցեր տվեց նրան «գավեոտի», վաղեմիության որենքի մասին, ապա բացեց նրա առաջ մի բավական «փափուկ» և իր տեսակետից բավական գաղտնի մի ծրար: Մարկոսյանը պատշաճ վարձատրությամբ հանձնառավ այդ «գործը» և ահա մի որ դատարանում յերկու կաչառված վկաների միջոցով հաստատվեց, վոր այս լինչ կալվածատերի այս լինչ հողամասը ավելի քան տասը տարի «հանդիստ տիրել և վայելել է» այս լինչ գյուղի բնակիչ Սիմոն Զանթողյանը, վորն այդ հողամասի կողքին կլերամիղի գործարան ուներ:

Այդպես՝ վաղեմիության որենքով հողամասն անցավ Սիմոնին:

— Գո՛ղ, ավազա՛կ,— ասաց կալվածատերը Սիմոնի հասցեին, իմանալով իր կառավարչից դատարանի վճռի մասին ու շտապեցավ իր քեֆերը:

Այնուհետև այդ հողամասի պատմությունը նորից կապվեց Մարկոսյանի հետ, յերբ հայտնի վաճառական Ցեղոր Մարտինիչը վճռեց զբաղվել հողային գործերով: Նա գնեց գյուղի շրջակայքի հողերը և փոքր մասերի բաժանելով՝ վաճառում եր ջանկացողներին՝ ամառանոցներ կառուցելու համար:

Այս ձեռնարկության մեջ բավականին աչքաչափ դեր եր կատարում և Մարկոսյանը՝ վորպես Ցեղոր Մարտինիչի մշտական փաստաբանը:

Ցեղոր Մարտինիչը իր «ընկերության» մեջ եր առել նաև մեր հայտնի կուլակ Սիմոնին: Սակայն այս մարդը, վորի խորամանկության մասին շատ բաներ եյին պատմում գյուղում, ընկավ ու խճճվեց այդ գործի մեջ, վորպես ճանճը սարդի վոստայնում: Ցեղոր Մարտինիչն այնպես պատեց նրան իր մուր-

հակնելի ցանցով, վոր Սիմոնը նույնիսկ զրկվեց մեզ հայտնի հողամասից: Նա տուն վերադարձավ, անիծելով քաղաքացիների խարեբայությունը և Մարկոսյանի դավաղրությունը, վորն այս անգամ դատարանում պաշտպանում էր Յեզոր Մարտինիչին՝ ընդդեմ Սիմոնի:

— Են ա միանգամից ասենք, թե ես անտեր աշխարհում արդարություն չկա ելի՛.— ասում է նա դատից հետո դյուղ վերադառնալիս իր բարեկամ դյուղացուն:

Յեզոր Մարտինիչը մի կլոր դումար չահեց այդ գործում, վորը մի անպատկառ ժուռնալիստ անվանել էր «հողային սպեկուլյացիա». բայց պատվավոր հասարակության համար լինչ նշանակություն ուներ մի կիսագրագետ լրագրական գործիչի արածը: Այժմ նրա մտքում մի «ֆանտազիա» ծագեց՝ կառուցել մի ամառանոց իր սեփական հողի վրա:

Չանցած մի տարի՝ ամառանոցն արդեն պատրաստ էր և ամառվա մի գեղեցիկ որ նա գնաց էր անում իր նորաշեն ամառանոցի պատշգամբում, ընդացնելով շրջակայքն իր հյուրերի դոռում-դոչյունով:

Բայց շատ չանցած՝ Յեզոր Մարտինիչի ֆինանսական դրությունը խախտվեց. մուրհակների ժամկետները խճճվեցին և նա ստիպված եղավ վաճառել իր ամառանոցը: Նորից յերեվան յեկավ Մարկոսյանը. նա վորպես Յեզոր Մարտինիչի գատական գործերը վարող, պիտի հետևեր վաճառման ձևականություններին:

Ամառանոցը գնեց գնդապետ Տեր-Սահակյանը, վորը հարբառանալով գործի մատակարարման կաշառքներով «ֆանտազիա» ունեցավ՝ ապրելու իր սեփական ամառանոցում: Ջնայած իր հիսունից անց հասակին, նա ամուսնացել էր մի յերիտասարդ կնոջ հետ և նոր զարուն էր ապրում:

Մարկոսյանը ամառանոցի վաճառման առթիվ գործ ունենալով մտերմացավ գնդապետի հետ, բայց առավել ևս՝ նրա յերիտասարդ կնոջ՝ Աննայի հետ: Այդ մտերմությունը, հետզհետե աճելով՝ հասավ սիրային կապի: Այդ վեպի մեջ Մարկոսյանը խաղաց մի դեր, վորն արժանի չե հիշատակության:

Այն տարին՝ ամառը նա հաճախ այցելում էր գնդապետին, վորն արդեն բնակվել էր իր սեփական ամառանոցում:

Մարկոսյանը գալիս եր քաղաքից իր սպիտակ ձիու վրա նստած, իսկ Աննան հեռվից՝ ամառանոցի պատշգամբում կանգնած սպասում եր նրան: Փաստաբանը հրճվում եր. և ինչպե՞ս չուրախանար— նրա գործերը հաջող ելին առաջ գնում, և դրա հետ մխասին՝ այս յերիտասարդ կնոջ թոթռուն սիրտը իրեն եր պատկանում...

Ահա նա իջնում և ձիուց ամառանոցի առաջ. Աննան դուրս և թռչում, սեղմում և նրա ձեռքը ու հետը տանում վերև: Հյուրերը բավական շատ են: Ժամանակն անցնում և անհոգ.— նախաճաշում են, զբոսնում ձիերով, ճաշում, թղթախաղի նստում: Ընթրիքը տևում և մինչև կես գիշեր: Աննան ուղեկցում և Մարկոսյանին սանդուխտներով ձեռքին բռնած մոմակալը: Ներքևում հանկարծ մոմը հանդչում և, կարծես թե քամուց... Աննան թեքվում և դեպի Մարկոսյանը ու տաք շնչով այրում և նրա ականջը:

— Վաղը՝ առավոտյան ամուսինս մեկնում և մի չաբաթով... Ի՜նչ յերջանկություն...

Ու մի հապճեպ համբույրով, ձեռքի ամուր սեղմումով նրանք բաժանվում են իրարից:

Յերկու տարուց հետո խանդարող ամուսինը մեռավ և Մարկոսյանը մի քանի ամիս սուգի տեղ թողնելով, ամուսնացավ Աննայի հետ:

Մինչ Աննան գտնվում եր յերջանկության գագաթին՝ Մարկոսյանի գլխում պտտվում եր մի նոր ծրագիր՝ ձեռք առնել իր կնոջ՝ Աննայի դրամապուրսը և հաստատել իր վրա քաղաքի տունը և ամառանոցը: Աննային նա հավատացնում եր, թե առանց նրան չի կարող ապրել՝ նույնիսկ մի որ, և միաժամանակ խորհուրդներ եր տալիս՝ իրեն թողնելու գործերը—գանազան անախորժ ձեռնարկությունները՝ այսինքն հաստատել տներն իր վրա:

Վերջապես, յերկար թախանձանքից հետո այդ ել կատարվեց— Աննան հաստատեց իր քաղաքի տունը և գյուղի ամառանոցը իր ամուսնու՝ Մարկոսյանի վրա: Ու այդ որվանից, հասնելով իր նպատակին՝ նա սկսեց սառչել Աննայից: Ամեն ինչ արվում եր՝ նրան հոգիկոնից հեռացնելու համար, վորովհետև Մարկոսյանի առաջ հետզհետե բացվում եր մի նոր ծրագիր...

նրան շատ եր դրավում հարուստ Մխիթարյանի աղջիկը և նրա ժիխտի դառմարը...

Աննան տանում եր այդ վիրավորական դրությունը, բայց որըստորե հալվելով: Վերջապես նա հիվանդացավ թոքախտով և մեռավ, թողնելով վորպես ժառանգություն իր վերջին որերի խոսքերը Մարկոսյանի հասցեյին— գո՛ղ, ավազա՛կ, լի՛րբ... Ապա ավելացնում եր ռոմանտիկ վեպի տանջված հերոսուհու տոնով.

— Դու գողացար իմ տունը և իմ սիրտը...

Մարկոսյանը ամուսնացավ հարուստ Մխիթարյանի աղջկա հետ, ու սկսեց նոր կյանք...

Ամեն ամառ նա գալիս եր իր վիլլան՝ լորդի նման, շրջում եր սպիտակ ձիու վրա: Գյուղացիները հանդիպելիս գլուխ եյին տալիս, վախենում եյին նրանից: Որերն անցնում եյին հյուրերի հետ, խնճույքներով, ուրախ յերգերով:

Բայց այդ որերն էլ անցան, յեկավ հեղափոխությունը... Նախկին հարստությունից միայն հիշողություններն եյին մնացել, ու մեկ էլ այս ամառանոցը, վորը նույնպես գրավման վտանգի տակ եր...

Այս եր համառոտ պատմությունն այն ամառանոցի, վորը գրավումից ազատելու համար նա այժմ յեկել եր բնակվելու նրա մեջ...

## III

Քաղաքում հեշտ եր թվում ամառանոցում ճմեռն ապրելը: Բայց այժմ, հենց առաջին քայլերից Մարկոսյանի առաջ ծառացան հազար ու մեկ դժվարություններ: Հարկավոր եր փայտի պաշար տեսնել, հարկավոր եր ջուր բերող, ծառայող գտնել, մթերքների մասին մտածել, մի խոսքով՝ հնարավորություն ստեղծել ապրելու համար, բայց այդ բոլորը դժվար եր. գյուղացիք այժմ խորշում եյին նրանից, և ամենաշատը, վոր կցանկային նրան՝ այն եր, վոր Մարկոսյանն իւնքն աշխատեր, քրտներ իրենց նման:

Այս ու նման հարցերի ծանրության տակ ճնշված՝ Մարկոսյանը մնացել եր տարակուսած: Վերջապես նա սթափվեց իր ընդարմացած դրությունից, մի արհեստական ճիգով սկսեց խրախուսել ինքն իրեն:

Վո՛չինչ, վո՛չինչ, նա կհամբերի, կապրի այստեղ. նա կը-ձանչի գյուղից կխսախելագար Մարթային, մի բան կխոստանա, ու կբաննեցնի... ամեն ինչ հետզհետե կարգի կընկնի... իսկ ժամանակը նա կոգտագործի այնպես, ինչպես ծրագրել է.— կգրի իր աշխատությունը՝ սեփականության մասին: Այս գիրքը՝ նա հաստատ գիտե՝ կցնցի ամբողջ աշխարհը, միանգամ ընդմիշտ կսթափեցնի բոլոր սոցիալիստորեն մտածող մոլորվածներին... Հետո էլ նա կգրի իր մեմուարները, որոնք նույնպես խոշոր նշանակություն կունենան, որովհետև նրանց մեջ կարտացոլի իր վերաբերմունքը դեպի ժամանակակից կարգերը:

Նա վճռեց աննկատելի գործի անցնել, կազմել գրքի ծրագիրը: Հենց իր բերած թղթերն ու սևագրությունները, գրքերը: Թղթի առաջին յերեսի վրա խոշոր տառերով գրեց՝ «Մասնավոր սեփականությունը վտպես տիեզերական որենիք», ապա, նրա տակ՝ նույնպես խոշոր տառերով՝ «Ներածություն— սեփականության կենդանական աշխարհում»:

Նա վեր կացավ տեղից ու սկսեց քայլել սենյակում, մտածում եր, ու առնչ-առնչ մոտենալով սեղանին, նշանակում իր ծրագրած գլուխների վերնագրերը:

Իհարկե՛, նա կսկսի կենդանիներից, այնուհետև կանցնի պատմական տեսության, ցույց կտա, վոր քաղաքակրթությունը զարգացել և միայն այն չրջանում, յերբ «սրբազան սեփականության» հիմունքները յեղել են անխախտ:

Մինչդեռ նա այսպես ծրագրում ու մտորում եր, հանկարծ դռաց, վոր մուքը պատում է չորս կողմը: Նա չտապով վերցրեց իր թևյամանն ու դնաց աղբյուր ջուր բերելու: Մեծ դժվարությամբ քայլելով ցեխից ծանրացած կրկնակոշիկներով, վերջապես նա հասավ աղբյուրին: Մի պառավ կին և մի փոքրիկ աղջիկ պատկառանքով իրենց հերթը տվին Մարկոսյանին: Նա անառվոր չարժումներով մոտեցավ աղբյուրի ծորակին, լցրեց թևյամանն ու փուքիկոտ հեռացավ, կարծես զղաց իր եր վախեցնում: «Ի՞նչ կասեն, կծաղրեն...» այս եր պատվում նրա մըտքում: Մարդկանց տեսնելը փոքր ինչ ուրախացրեց նրան, բայց յերբ մոտեցավ իր ամառանոցին, մռայլ մուքը նայեց նրան ծանր ու չարագուշակ: Նա բարձրացավ իր սենյակը, վառեց հնոը բերած փոքրիկ լամպը, վառեց նույնպես կերոսինի քուրան ու վրան դրեց թևյամանը:

Թեյը խմելուց հետո նա սկսեց գրել իր «Ներածությունը» «Սեփականությունը կենդանական աշխարհում», ոգտվելով քաղաքում արած իր սևագրություններից: Բայց հազիվ մի յերես եր գրել, յերբ հանկարծ լսեց զայլերի վոռնոցը, վորը այս միայնության մեջ կրկնակի ահ ու զարղանդ եր բերում իր հետ: Նա թողեց գրելն ու ամբողջովին ականջ դարձած՝ հետևում եր վոռնոցին: Շատ չանցած, սկսեցին արձագանքել դյուղի շները, բայց նրանց հաչոցն էլ թվում եր չարագուշակ:

Վոռնոցը հետզհետե թուլացավ, անցնելով դեպի ուրիշ կողմերը, սակայն չանցավ նրա բերած տագնապը: Այժմ նրա մենավոր կյանքում բացվեց մի ահավոր էջ, վորի հետ սիրտ մնալ կապված հետագայում: «Կարելի յե՞ ապրել այս պայմաններում՝ զայլերի մեջ»,— հարցնում եր ինքն իրեն, բայց մնում եր անպատասխան, վորովհետև հարցի այն կողմը մի ուրիշ սարսափելի եր՝ սեփականությունից զրկվելը...

Նա չկարողացավ շարունակել իր «Ներածությունը», վերցրեց իր մեմուարների տետրը ու արձանագրեց որվա դեպքերը:

«1926 թվի նոյեմբերի 13-ին,— այսոր յես սկսեցի գրել իմ մեմուարները... ապագա մարդկությունն անկասկած կգնահատի իմ բոլոր զոհողությունները մասնավոր սեփականության ապարիզում...

«Այսոր յես ժամանեցի Ֆ. գյուղը: Անձրև եր, ցեխ: Գյուղխորհրդի նախագահը ուլտիմատումի ձևով առաջարկեց ինձ մշտապես ապրել իմ ամառանոցում, ապառնալով հակառակ դեպքում՝ գրավել և լրտվագրկել ինձ իմ սեփականությունից: Ինձ մնում եր հպատակվել ուժին, բայց վոչ լրտվությանը, ընդհակառակը՝ այդ կետում նա ընկավ վտանգու մեջ, յերբ յես գրի նրա առաջ հին և անխախտ սկզբունքները... լրտվաբանական տերմիններին առաջ նա մնաց բերանը բաց:

Այստեղ գալուն պես յես սկսեցի գրել իմ մեծ աշխատությունը՝ «Մասնավոր սեփականությունը, վորպես տիեզերական որենք...» սկսում եմ մեծ հույսերով նրա հավատով: Յես գիտեմ, այդ գիրքը կթարգմանվի բոլոր լեզուներով, և կցնցի ամբողջ աշխարհը Յեվրոպայից մինչև Ամերիկա...

Հենց նոր եյի սկսել գրել Ներածությունը սեփականությունը կենդանական աշխարհում, յերբ զայլերը սկսեցին վոռնալ... Զայլերը վոռնում եյին, յերբ յես գրում եյի իմ նշանավոր աշխատությունը...»

## IV

Ապրում էր Մարկոսյանը... ցերեկը իր ապրուստի դժվարություններով հետ, իսկ գիշերները՝ գայլերի վոռնոցի սարսափի մեջ: Պինդ փակված սենյակում՝ վախից գլուխը վերմակի տակ առած, նա գիշերները մտածում էր, թե անմտություն է այստեղ ապրելը, վաղը կեցցա քաղաք, իսկ առավոտը՝ յերբ լուսանում էր, նրա մեջ սկսում էր խոսել մի ուրիշ մարդ, վորն ասում էր մի անդիմադրելի ֆանատիզմով՝ «պիտի մնամ իմ սեփականության հետ,— այս է իմ վերջնական վճիռը...»

Ցերեք որից հետո բնությունը ժպտաց. արևը յերևաց, վոքը լինչ չորացավ գետինը ու Մարկոսյանը կարողացավ շարժվել ու հուսալ: Նախ նա կանչել տվեց գիժ Մարթային, խոստացավ վող տալ, յեթե նա կհամաձայնվի ծառայել իրեն: Մարթան աչքերը չռած նայում էր, կարծես չհասկանալով նրա ասածը, բայց վերջապես գլխի ընկավ և համաձայնվեց: Այնուհետև նա տեղեկացավ մթերքների մասին: Այդ բոլորը բավականաչափ հանդստացրեց նրան:

Նա ուրախացավ նույնպես, յերբ իմացավ, վոր դեռ ևս յերկու ուրիշ ամառանոցներ չեն գրավված: Բայց այդ ուրախությունը շատ կարճատև եր. մեկում ապրում էր տիրոջ սգավոր կինը, մյուսում՝ իր տերը, բայց սա էլ խլուրդի նման մի շտ ձգտում էր թաղնվել. ամեն հանդիպողի նայում էր կասկածով, ասես նա գալիս էր գրավելու իր ամառանոցը:

— Ամիրջա՛ն, բա յե՞րբ նստենք, խոսենք, խելք-խելքի տանք,— հարցրեց նրան Մարկոսյանը, յերբ մի տր հանկարծ հանդիպեց իր ամառանոցի մոտ:

— Ի՞նչ խոսենք. ավելի լավ է սուս կենանք տու տապ անենք. թե չե ո՞վ է իմանում ի՞նչ կլինի...

Ամիրջանի կարծիքով՝ յեթե վտանգավոր եր կալվածատիրոջ յերևալը դյուղի իշխանության առաջ, ապա ավելի ևս վտանգավոր եր յերկուսի, յերեքի յերևալը. դա արդեն դավադրություն պետք է թվար իշխանության աչքին: Ա.ոհասարակ նա շատ հաղվադեպ եր դուրս գալիս տնից. մեյն ստիպողական կարիքը կարող եր նրան վողոց տանել:

Մարկոսյանը իր միայնությունից ազատվելու համար վորճեց այցելել քահանային, բայց սա, պատուհանից նկատելով նրան,

Թաղնվեց գոմում և կնոջը պատվիրեց, վոր ասի՝ թե տերտերը տանը չի: Նա խուսափում եր խոշոր «նախկիններից» և ուշադիր եր հետևել միջակ գյուղացիների վրա: Փողոցում պատահելիս նա ցածր, դաղտնի ձայնով, վորևե մխիթարական բան եր ասում Մարկոսյանին՝ խորհրդային իշխանության մոտալուտ վախճանի մասին, բայց խոսքն բաժանվում եթ նրանից, իրը թե շատ և չտապում:

Հետո նա սկսեց հաճախել գյուղի կոոպերատիվը: Մանրամասն դիտում եր խանութի բոլոր ապրանքները, հարցնում եր դները գործակատարից, ապա սկսում եր զրուցել նրա հետ: Ս.յատեղ լավ ճանճրանալուց հետո նա գնում եր կոշկակարի մոտ, սկսում եր չաղակրատել, պատմել, ինչ վոր գլուխն եր գալիս: Կոշկակարն անուշադիր լսում եր նրա ասածները, ավելի զբաղված լինելով իր գործով, իսկ մտքում ասում եր՝

— Ֆան թե եղբան ավել-պակաս դուս ես տալիս, ավելի լավ կանեյիր՝ կոշիկդ տայիր կարկատեյի...

Վերջապես ս.յատեղ էլ դադարով իր պատճառած ճանճրությը, Մարկոսյանը դուրս եր գալիս ու անցնում գյուղի փողոցներով, տեղ-տեղ կանդ առնելով տների առաջ:

— Պետրոս, հորթդ ինչ մեծացել և, ինչ սիրուն և,— ասում և նա ու մոտենում, ձեռք տալիս գյուղացուն կեղծ ժպիտով:

— Հա, էլ կովը կաթ չի տալիս,— սառը պատասխանում և գյուղացին:

Մարկոսյանը դդում և, վոր իր հաճոյախոսությունը տեղ չի հասնում ու գնում և գեպի մի ուրիշ տուն:

— Եղ ի՞նչ բոլ փայտ ես բերել անտառից, կեսն իմն և,— սրախոսում և նա, բայց խոսքը քարին և դիպչում. գյուղացին պատասխանում և հեգնելով:

— Են վաղ եր, վոր կեսը քոնն եր:

Մի ուրիշ տեղ նա ասում և.

— Ստեփան, յերեխեդ ինչ լալն և:

Յերեխայի մայրը ժպտում և, իսկ հայրը հեգնում և Մարկոսյանի հետևից:

— Գործ չունի, գնդն ա ընկել դատարկ բաներից ա խոսում...

Նա վերադառնում եր տուն հետո առած զանազան մթերքներ ու խոհուն իր ցամաք ճաշի պատրաստությունն եր տեսնում:

ճաշը շատ կարճատև եր լինում: Ապա պառկում եր անկողնի վրա ու սկսում կարդալ: Շատ չանցած՝ աչքերն սկսում եյին պղտորվել. նա խորը հորանջում եր ու քիչ անց արդեն խռմփացնում. ձեռքի դիրքը յերբեմն ընկնում եր ներքև, վիզում հատակին:

Նա զարթնում եր ծանրացած դլխով, դուրս եր գալիս պարտեզ և ուրվականի նման շրջում ծառուղիներով, վոտներով խշխշացնելով թափված տերևները, շրջում եր խորհրդավոր լռության մեջ և մտածում սարսափով, թե նորից պիտի դա գիշերը, նորից պիտի լսի գայլերի վոռնոցը: «Սա դժոխային կյանք ե»— մտածում եր նա. «Պետք ե վերջ տալ...» բայց հենց հասնում եր յեղրակացության՝ «ուրեմն պետք ե թողնել և գնալ քաղաք...» նա խռովն կանգ եր առնում— «յես չեմ կարող թողնել իմ սեփականությունը ինչ ել լինի...»

Մթի առաջին հոսանքից անհանգստացած՝ նա շտապում եր իր սենյակը, վառում եր լամպը: Սկսվում եր անտանելի յերեկոն: Նա ճիպ եր անում, վորպեսզի ինքն իրեն զբաղեցնի, սակայն պարապելու, բայց իր «նշանավոր» աշխատության դրելը հետզհետե դժվարանում եր, կարծրանում: Յերբեմն նա չվոթվում եր դատողությունների մեջ, կամ վոխանակ դրելու, բռնկվում եր պոլեմիկայով «սեփականության թշնամիների» դեմ ու քայլում ինչ վոր անկապ մտածմունքներով: Բայց դլխավորն այն եր, վոր նրա ականջները շարունակ լարված հետևում եյին դրսի ձայներին, ահաբեկվելով ամեն մի չվլթոցից: Նա ստեպստեպ կանգ եր առնում ու վախեցած ականջ դնում. շների հեռավոր հաչոցն անգամ ահ եր ազդում նրա վրա:

... Այս յերեկո նա կարդում եր Պրուդոնի գիրքը՝ «Ինչ ե սեփականությունը». կարդում եր, մատիտով տեղ-տեղ գծեր քաշելով, բացականչական նշաններ դնելով: Ջանի կարդում եր, այնքան ավելի եր ջղայնանում, կարծես մոտը կանգնած մի մարդ մերկացնում եր իրան և ասում՝ «ահա տեսեք այս մարդը մերկ ե...»

Նա վեր կացավ ու սկսեց արագ քայլել. մի ձայն մուրճի նման խփում եր նրա ականջին ու կրկնում՝ «սեփականությունը գողություն ե...»

Ու նրա մտքով անցնում եր իր ամառանոցի անցյալը. յե՞րբ չեր նա գողություն... կուլակ Սիմոնը գողացավ կալվածատիրոջից իր՝ Մարկոսյանի ոգնությամբ, սրանից ել գողացավ Ցա-

զոր Մարտինէսը՝ նուչնպես Մարկոսյանի ոգնությամբ, իսկ հետո՞... Նա ուղղակի ինքը զողացավ զնդապետի այրուց՝ Աննայից... Յետ ամեն անգամ զողությունը սրբագործվում եր որևնավոր վաստաթղթերով, հիմնարկների կնիքներով...

Նա հիշում եր Աննային ու նրա վերջնախոսքերը՝ «գո՛ղ, ավա՛զակ...» ահա թե ո՞րտեղ եր այրվում նրա հիշողությունը... Աննային նա սպանեց ոչ թե ատրճանակով կամ թունով, այլ մի ուրիշ, աննկատելի, բայց, ավելի սոսկալի մահով...

... Աննայի ձայնը կարծես հալածում եր նրան, ու փախչելով այդ ձայնից, նա նորից նստեց սեղանի մոտ ու վճռեց շարունակել իր պարապմունքը:

Բայց հանկարծ խորին լռության մեջ հնչեց զայլերի ոռնոցը նոցը չարագուշակ յերկար ձայնով: Նա կանգ առավ, ցնցվելով ամբողջ մարմնով այդ ահավոր ձայնից ու ականջները լարած հետևում եր նրան: Այս անգամ ոռնոցը գալիս եր ավելի մոտիկից. նա ավելի ահաբեկվեց, յերբ համոզվեց, որ ձայնը մերթ դադարելով, հետզհետե մոտենում է:

Բայց նրան սպասում եր ավելի մեծ սարսափ. հանկարծ նա լսեց ոռնոցը իր պատշգամբից, հենց մի քանի քայլի վրա. զայլերը ոռնում էլին, սպա կողկոնձում, հրում պատշգամբի դուռը, փորձելով կոտրել ու ներս խուժել: Դռան զորեղ ցնցումներից Մարկոսյանը զողում եր, բոպե առ բոպե սպասելով, թե զայլերը կարող են դուռը կոտրել: Յերբեմն նա մոտենում եր դռան, թափում եր վայտով, կարծելով, թե կվախեցնի զայլերին, բայց իզուր:

Նա քաշեց սեղանը, կպցրեց դռներին, քաշեց պահարանը, նույնիսկ աթոռները. չարեց բոլորը իրար հետևից, իսկ ինքը հետացավ սենյակի խորքը, կանգնեց պատի մոտ ու նայում եր սրտատրոփ դռան կողմը:

Վերջապես յերկա՛ր ժամերից հետո զայլերի ոռնոցը զադարեց, լույսի շերտերը նշմարվեցին պատուհանների ճեղքերի արանքից և նա զգաց ինքն թեթևացած: Շուտով թեյ խմեց, հետո փորձեց պարապել, բայց խկուն աչքերը փակվեցին. նա թեք ընկավ անկողնի վրա ու անմիջապես քնեց հարբածի նման:

Նա զարթնեց կեսորին մոտ չորամատրության մեջ: Դուրսը խոնավ եր, ամպամած: Նորից նրա առաջ ծառացավ գիշերվա ահաբեկումը՝ իր «ժոխքը»: Ինչ անել... Յերկու ուժեղ զգա-

ցուցներ կռվում էին նրա մեջ, մի կողմից սեփականությունն էր քաշում նրան իր ամուր կապերով, մյուս կողմից՝ «ժողովքն» էր վանում իր սարսափներով. բայց սեփականությունը միշտ հաղթում էր հիվանդագին, ճիվաղային ֆանատիզմով...

## V

Թեպետ Մարկոսյանն ապրում էր գյուղից դուրս, բայց այնտեղ հետաքրքրվում էին նրանով. դիժ Մարթան տնեստուն մանգալով, տարածում էր Մարկոսյանի կյանքի բոլոր մանրամասնությունները: Գայլերի պատմությունն արդեն բոլորին հայտնի էր:

Սկզբի օրերին նա փորձեց մի ճար անել գայլերից պաշտպանվելու համար. նախ մի թակուռական շուն ճարեց, բայց սա չմնաց, փախավ, հետո բերեց մի փոքրիկ շուն, որն իհարկե, ոչ մի ոգնություն չեր կարող անել, քանի որ ինքն ավելի եր վախենում գայլերից, քան թե իր տերը:

Մի դիշեր գայլերի ոռնոցի հետ նա լսեց իր շան աղիողորմ կլանչոցը, ու նրանից հետո չիմացավ, թե ի՞նչ յեղավ շունը. նա անհետ կորավ:

Գյուղացիներից մեկը խորհուրդ տվեց նրան պատուհանի վեղկերը բաց թողնել, որպեսզի գայլերը տեսնեն լույսը և քաշվեն. բայց Մարկոսյանը չհավատաց, նա վախենում եր, որ գայլերը ապակին կկոտրեն և ավելի հեշտությամբ ներս կընկնեն սենյակը:

Նա փորձեց դործադրել և իր փոքրիկ ատրճանակը, բայց անոգուտ:

Այսպես՝ հարցը մնում եր նույն վիճակում: Իսկ ահաբեկումը դիշերից սկսում եր տարածվել և ցերեկվա վրա: Ամբողջ որը Մարկոսյանի միտքը զբաղված եր գայլերով. ինչ էլ անում եր՝ կարդում եր թե ճաշում, այլ հարցը միշտ հետևում եր նրան: Նա չարունակ մտազբաղ եր, անուշադիր. խոսելու ժամանակ, յերբեմն հանկարծ լռում եր ու մտածմունքների մեջ ընկնում:

«Ցնդվել է»— ասում էին գյուղացիք, ասում եր կոչիակարը և ղռոպերատիվի գործակատարը:

Մարկոսյանի կինը նամակով հաճոզում եր նրան՝ վերադա-

նալ քաղաք, բայց նրա հորդորները ապարդյուն էլին անցնում։ Մարկոսյանը պատասխանում էր, թե չի կարող թողնել իր տունը։

Նամակը տանող դյուղացին պատմեց նրա կնոջը, թե իր մարդը ծանր վիճակի մեջ է, շարունակ դայլերի հետ է կռվում, և բոլոր նշաններից յերևում է, վոր խելագարվում է։

Կինը դիմեց իր տղային, վորը կարմիր հրաժանատար էր։ Նա հեղափոխության առաջին որերից փախել էր հորից և կտրել հարաբերությունները։ Այժմ նա յեկել էր գործուղման Մոսկվայից, վորտեղ ապրում էր մշտապես։ Մայրը շատ թախանձեց, վորպեսզի նա հանձն առնի համոզելու հորը և վերադարձնի քաղաք։

— Ձես արդեն վաղուց եմ հրաժարվել նրանից,— ասաց Լեվոնը (այսպես էր նրա անունը),— լինչ ուզում է անի։

— Ի՞նչպես թե լինչ ուզում է անի,— նա կարող է խելագարվել, արդեն դյուղացիք այդպիսի կասկածներ են տածում։ Դու դիտես, վոր նա առանց այն էլ աննորմալ էր դարձել... յես փորձեցի, բայց նա լինձ չի լսում, դու գնա՛, կարող ես համոզել։

Խոսակցությունը տևեց մոտ մի շաբաթ։ Վորքան էլ անհաճելի էր Լեվոնի համար, բայց նա ստիպված յեղավ համաձայնվել և մի որ էլ ձին նստած յեկավ հոր մոտ։

Մարկոսյանը դուրս էր յեկել պատշգամբը, յերբ վորդին յեբեվաց ձիու վրա՝ ցանկապատի վերևից։ Սկզբում նա չճանաչեց, բայց յերբ մոտեցավ, իմացավ ով է, տեսավ նրա յերիտասարդ, թարմ դեմքը, նրա հաստատուն ուղիղ լրանը, նա հրճվեց իր ծնողական զգացումներով. դա մի հեքյաթ էր թվում այս ամայության մեջ։ «Ինչ տղա յե...» ասաց նա մտքում, յերբ մոտենում էր դիմավորելու համար։

Իսկ վորդին ընդհակառակը՝ ապշեց յերբ տեսավ հորը. նա թվում էր վերացած, շշմած. նիհարել էր, կարծես հյութաղուրկ յեղել. աչքերի մեջ լինչ վոր աննորմալ, կասկածոտ փայլ կար։ Իր բարևով, իր սառը ձեռքի սեղմումով նա սարսուռ էր ազդում Լեվոնին։

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, վոր յեկել ես, Լեվոն. ի՞նչպես են մերոնք, լա՞վ են, մայրիկը, Սոնիկը... ասում էր հայրը անբնական հուզումով, ջղայնարեն։

Ձին տեղավորելուց հետո տղան գնում եր հոր հետևից խոր-
հելով ամեն բանից. ինչ վոր ծանրություն կարծես հետ եր քա-
շում նրա քայլերը: Անախորժ եր այս ամայությունը, լռությու-
նը, իր քայլերի ձայնը սանդուխքների վրա, ու այս ծերացած
վաստաբանը, վորն իր հայրն եր կոչվում... Շուրջն ինչ վոր
միջնադարյան մռայլություն, անշարժություն ճնշում եր նրան,
կարծես նրան ուժով վերադարձնում եյին դեպի մի կոշմարային
վայր, վորի անունը անցյալ եր...

Սենյակում նա նստեց հոր դիմաց: Սովորական հարց ու
փորձը տևեց բավական յերկար. դրանով Մարկոսյանը կարծես
ուզում եր վարատել իր միայնությունը, կամ դուցե խուսափում
եր գալիք վոչ ցանկալի խոսակցությունից: Վերջապես Լեվոնը
դիմեց բուն խնդրին:

— Հայրիկ, քեզ հայտնի յե, վոր մենք հայացքներով իրար
չենք բռնում, և իրարից կտրված ենք, բայց մայրիկի խնդրան-
քով յես յեկել եմ քեզ մոտ՝ համոզելու, վոր վերադառնաս քա-
ղաք...

— Ի՞նչպես թե վերադառնամ,— խսկույն դրդռվեց Մարկոս-
յանը,— իսկ մեր ամառանո՞ցը:

— Ի՞նչ ամառանոց,— ասաց Լեվոնը կտրուկ արտահայտու-
թյամբ,— պարզ ե՝ ամառանոցը կթողնես, նույն իսկ ինքդ
կհանձնես դյուղխորհրդին:

— Ի՞նչ, դյուղխորհրդի՞ն... իմ տո՞ւնը... վո՛չ, այդ բանը
չի կարող լինել, քանի դեռ յես կենդանի յեմ:

— Վերջապես սթափվի՛ր, հայր,— ասաց Լեվոնը, նույնպես
դրդռվելով,— չե՞ վոր դու ինտելիգենտ մարդ ես, չե՞ս տեսնում
մթթե, վոր մասնավոր սեփականությունը այժմ դարձել ե դիակ:

— Ցես արթուն եմ և լավ դիտեմ, թե ինչ ե կատարվում...
Ցես կմերկացնեմ, այն ժամանակ...

— Ինչո՞վ պիտի մերկացնես, առայժմ միայն դու ինքդ քեզ
ես մերկացնում:

— Ցես կմերկացնեմ իմ դրքով. յես պատրաստում եմ մի
աշխատություն՝ մասնավոր սեփականության մասին...

Տղան զարմացած նայեց հորը. նա նոր եր իմանում այդ
գաղտնիքը:

— Ցեվ ի՞նչ,— հարցրեց նա,— ի՞նչ ես ապացուցելու այդ
դրքի մեջ:

— Ճես ապացուցելու չեմ, վոր մասնավոր սեփականությունը տիեզերական օրենք է և ապրում է անխափան ամեն մարդու մեջ:

— Տիեզերակա՞ն,— ժպտաց Լեվոնը,— այդպես հեռո՞ւ չես գնացել... քո այդ գիրքը միայն կարող է գավեշտական լինել... Մոտ ժամանակներս չես լսացա, վոր հեղափոխությունից քիչ առաջ մի հաստատուր գիրք և լուսս տեսել՝ այս վերնագրով՝ «Մի հահեծանության անհրաժեշտությունը Ռուսաստանում...» և ի՞նչ, այդ գիրքը իհարկե, չպաշտպանեց ռուսական միապետությանը, այլ մնաց վորպես գավեշտական մի վորձ...

— Վո՛չ, սխալվում ես,— վրա բերավ հայրը հուզված,—այդ գիրքը դեռ ևս կապրի. նա նորից սեղանի վրա կդրվի, և կասեն հեղինակի հասցեին՝ «դու իրավացի եյիր, դու մարդարե եյիր...»

Լեվոնը հիշեց մոր ասածը՝ հոր աննողմալության մասին:

— Հայր,— ասաց նա մռայլվելով,— մինչև ի՞րը պիտի դու այս նոր կյանքի արշալույսի առաջ կանգնես սև սքեմ հագած, վորպես մի սգավոր... Ճես ամաչում եմ իմ ընկերների առաջ, յերբ նրանք հարցնում են, թե ի՞նչ հայացքների տեր է իմ հայրը... այո՛, նա իմ դասակարգային թշնամին է... յես իմ ասելիքն ասի, այժմ դու դիտես...

Նա վեր կացավ տեղից: Հայրը լուռ եր:

— Ինձ վոչինչ չի հարկավոր,— ասաց հայրը խռրատես վիրավորված, գլուխը ճայնով ու նույնպես վեր կացավ տեղից:

— Դե, մնաս բարով— ասաց Լեվոնը, ձեռքը մեկնելով հորը.— չարունակի՛ր ապրել այստեղ, պաշտպանիր քո մինչդարյան ամբոցը, և գրիր մասնավոր սեփականության ապոլոգիան...

— Կտեսնե՛ս... կտեսնե՛ս, ի՞նչ կանի իմ գիրքը. ամբողջ աշխարհում... իմ գիրքը— սպառնական տոնով ասում եր Մարկոսյանը՝ չեշտակի նայելով վորդուն, բայց կարծես չտեսնելով նրան:

Լեվոնը ձին նստեց ու քշեց դեպի քաղաք: «Ներապարվում ե... և վրկություն չկա...» անցավ նրա մտքով:

## VI

Տարօրինակ եր Մարկոսյանի կյանքը. կարծես մի պատիժ եր, յուրահատուկ պատիժ.— դիշերն անընդհատ սարսափ, իսկ ցերեկով ապուշ դրութիւն:

Ցերեկվա մի մասը նա քնած եր լինում, հետո նա ինչ վոր գրում եր, բառերը չարունակ ընդգծելով, կարդում եր ղրքեր: Ցերեմն մոռանում եր դիրքը ու նստում ապուշի նման, մտածելով գայլերի մասին: Մտամոլոր գնում եր դյուղը, ինքն էլ չիմանալով թե ո՞ւր ե գնում և ի՞նչի համար:

Սրդեն դյուղում վերջնականապես համոզվեցին, վոր Մարկոսյանը խելագարվել է: Շատ անգամ ծիծաղում եյին, յերբ նկատում եյին, վոր նա ինքն իրեն խոսելով կանգ ե առնում վողոցում, չնկատելով դիմացից յեկող մարդկանց: Հետաքրքիր տեսարան եր ներկայացնում նրա հուշատետրն այդ որերին— մի տեղ մի քանի տող եր գրած անկապ, ապա բազմակետեր՝ մինչև յերեսի վերջը. մյուս տեղը միայն վերնագիրը եր, ապա իրար յետևից չարված եյին գծերը: Վերջապես կային յերեսներ ծուռ ու մուռ գրած, բոլորովին անկապ... «Գայլերը վոռնում ե— յին...» Պետք ե հրավիրել սիրաշահել նրանց...մասնավոր սեփականութիւնը սրբազան ե, չի կարելի նրա մասին գրել հասարակ լեզվով— պետք ե բանաստեղծութիւն գրել... Մարքսը, Ենգելսը, Պրուդոնը դատապարտված են կախաղանի... դատավճիռը կարդալ հետևյալ յերեսում...»

«Զեռքներդ հեռո՛ւ իմ ամրոցից...

«Իմ սեփականութիւնը իմ ամրոցն ե... իմ դիրքը սեփականեութեան մասին ալեկոծում ե վողջ աշխարհը... Ամերիկայից հեռագիրները են գալիս չնորհավորում են... վերջապես՝ ասում են, յեկավ իսկական փրկիչը... նոր պատգամները հնչում են ամեն տեղ,— մասնավոր սեփականութիւնը միակ փրկութիւնն ե վողջ տիեզերքի...»

«Դանաեյի դժոխքի լիններորդ շրջանը գտնվում ե Բ. դյուղի մոտ, Մարկոսյանի ամրոցի տակ...»

«Գայլերը վոռնում եյին...»

Նույնիսկ դիժ Մարթան նրան խելագար եր անվանում և ամեն տեղ պատմում նրա անհեթեթութիւնների մասին. մի անգամ Մարկոսյանը բաժակ տվեց Մարթային, ասելով՝

— Գնա, մի վեդրո (դոյլ) ջուր բեր...

Մի ուրիշ անգամ կեղտոտ ափսեն դիտմամբ կոտրեց ու ասաց.

— Ես լավը չի, մի ուրիշը բեր... Մի անգամ էլ, յերեկոյան մթնաշաղին, բահը ուսին կանգնել եր պարտեզի դռների մոտ: Ցերը Մարթան հարցրեց, թե ինչո՞ւ յե կանգնել, նա ասաց.

— Գահակ եմ այտար. յեթե անցաթուղթ չունես, չեմ թողնիլ...

Այս բոլոր նորությունները մանրամասնորեն տարածվում եյին գյուղում. դիտեյին նույնիսկ, վոր Մարկոսյանը փայտեր եր շարել սենյակի պատերի մոտ, կարծելով թե հրացաններ են: Վերջին նորությունն այն եր, վոր նա առաջարկել եր դիմ Մարթային՝

— Արի ամուսնանանք, շատ յերեխաներ կունենանք, գայլերին միասին կը քշենք...:

Այժմ նա որը մի քանի անգամ պտտում եր տան սենյակներում, բացում բոլոր դռները, նորից կողպում, իբր թե փորձելու համար՝ թե ամո՞ւր են արդյոք. յերբեմն առաջին անգամ թողնում եր բաց, հետո յերկրորդ անգամ գալով՝ կողպում եր:

Բայց վոչ վոք չդիտեր այն, վոր նա՝ մի շաբաթ եր՝ գայլերի ահից դիշերներն անց եր կացնում պահարանի վրա նստած ու այդպես մնում մինչև առավոտ: Գայլերը գալիս եյին, վոռնում, փորձում՝ կոտրելու դուռը, իսկ նա լուսաբացին իջնում եր՝ աչքերը չռած՝ լուանոտի նման և ուժասպառ ընկնում անկողնի վրա:

## VII

... Բարակ անձրևը հոդեմաշ դանդաղությամբ չիշխում եր տանիքի վրա: Սեփականատեր Մարկոսյանը վառել եր լամպը, բայց ապակին չեր դրել: Ձեռքին բռնում եր մերթ Պրուդոնի «Ի՞նչ է սեփականությունը» դիրքը, մերթ Ենգելսի «Ընտանիքի, սեփականության և պետության ծագումը», նա չարունակ մոտեցնում եր լամպին դրքերի ծայրերը ու լինչ վոր տարօրինակ բացականչություններ անում, լինքն իրեն խոսում:

— Հը, տապալվեցի՞ք... վճռված ե ձեզ այրել խարույկի մեջ... ա՛յ միջնադարի հանճարեղ միջոց... դե գնացեք...

Սենյակում տարածվում եր այրված թղթի հոտը...

Հանկարծ հնչեց գայլերի վոռնոցը: Նա հապճեպ թողեց ամեն ինչ ու աթոռը մոտ քաշելով, բարձրացավ պահարանի վերևը:

Լամպի լույսը հետզհետե թուլանում էր: Նավթն արդեն ամբողջովին այրվել էր: Ինչ անց նա հանդավ. մթության մեջ նա սևեռած էր աչքերը, կարծես ձգտելով ինչ-որ բաներ տեսնել...

Վոռնոցը մոտենում էր... Հանկարծ նա դադարեց. լռության մեջ չռինդով բացվեցին հետևի կողմի դռներն ու լսվեց կողկոնձոց. ինչ-որ կենդանի ընչերը լցվեցին սենյակը...

Մարկոսյանը բնազդաբար կծկվեց, կպավ պատին:

... Հետևյալ որը գիժ Մարթան նկատեց, որ բոլոր դռները գավթի կողմից բաց էին: Ներս մտնելով՝ նա մնաց ապշած— ճահճակալի վրա անշարժ ընկած էր Մարկոսյանը: Վորքան էլ Մարթան ջանքեր դրեց նրան զարթնեցնելու համար, ապարդյուն անցավ: Նա արդեն մեռած էր:

Սեղանի վրա էին Պրոմեթևսի և Ենգելսի դրքերը՝ այրած անվյուններով...

1934

---

# ԼՈՒՍՆԻ ՇՈՂԵՐՈՎ

## I

— Ա. Հքէ լույս Գուրգէն, մեզ մոտ մի ուսանողուհի յե գալու,— ասաց խորհանեստութեան վարիչն իր մոտ կանչնած պրակտիկանտ ուսանողին, ցույց տալով նոր ստացած նամակը.— կարծում եմ քո գիտական հետազոտութիւններից ավելի հետաքրքիր դրաղմունք կունենաս...

— Զուր ես կարծում, վոր մի ուսանողուհու պատճառով ամեն ինչ կմոռանամ,— ասաց ուսանողը վճռական տոնով:

— Կասկածում եմ... ասա տեսնեմ, յեթե գա մի դեղեցիկ որիորդ, ժպտա յերեսիդ, չե՞ս տարվիլ վոսկե յերազներով, չե՞ս դավաճանիլ գիտութեանդ:

— Ընդհակառակը, յես նրան ել կլծեմ գիտական աշխատանքի և խստապահանջ կլինեմ...

— Յերիտասարդութիւնն ավելի լուրջ է ձևանում, քան է իսկապես...

— Բայց կատակ ես անո՞ւմ, թե ճիշտ գալու յե:

— Հը՞, արդեն հետաքրքրվեցի՞ր,— ասաց դյուղատնտեսը, թեք նայելով ակնոցների տակից ու ժպտալով իր դեմքի կնճիռների:— բայց ել վոչինչ չեմ ասիլ.— պետք է տեղ թողնել յերևակայելու համար...

— Ռոմանտիկ յերազները ձեր հին սերնդին են պատկանում. մենք նայում ենք կնոջն առանց մշուշի, առանց քողի...

— Ելի ինձ հին աշխարհն ուղարկեցի՞ր. ուրեմն քո ասելով, յես ել փրկութիւն չունե՞մ անցյալից:

— Դու թեպետ անցել ես հեղափոխական ուղիով, բայց ամբամա կոշիկներիդ հետ բերել ես անցյալի փոշին...

— Հե՛յ գիտե անցյալի հերոսներ, մի զարթնեք, տեսեք, ինչպե՛ս է փորակում ձեզ ընկեր Գուրգենը...

— Հարցից չեղվում ես, ընկե՛ր Մ[illegible]քայել— խոսքը ռոմանտիկ արամադրությունների մասին է. ո՞վ է ուրանում, որ անցյալում պայքարել են հերոսաբար:

— Այո, պայքարել են, տանջվել բանտերում, տապալել հին կարգերը, որպեսզի հետո Գուրգենիկները դան նստեն պատրաստի սեղանի շուրջն ու մեզ էլ քննադատեն:

— Ելի՞ ձեր մեջ խոսեց հին ինքնասիրությունը. լես, իհարկե, բարձր եմ գնահատում անցյալի պայքարը, բայց մի՞թե մեր սերնդի վրա պակաս ծանրություն է դրած:

— Ուզում ես ասել, թե դուք լարված աշխատանքի մեջ եք,— լես այդ անտես չեմ անում, բայց դու հաճախ մոռանում ես, որ կա մի ուրիշ՝ բարձր պայքար, որը կապված է հերոսության հետ...

— Ուրեմն, քա ասելով, մեզ փրկություն չկա՞, մինչև չանցնենք հեղոսության կամուրջով:

— Այո՛, ճիշտ ես, և ասեմ ինչո՞ւ.— Միայն փոթորիկի ժամին է վարոչվում, թե ո՞վ է հերոսը, ո՞վ է պատրաստ ճակատագրի յելնելու, և ո՞վ է պատրաստ քանդ ու չորս ժամում տրանալու ամեն ինչ... Դուք, նորերդ՝ մեծ բանաստեղծի ասելով՝ դիտեք թե ի՞նչ եք, բայց չդիտեք թե ի՞նչ եք լինելու...

— Բայց չե՞ որ մեր խոսքն ընթանում է գործի հետ. ուրեմն ի՞նչ է նշանակում քո այդ անողոք «փորձության ժամը»:

— Ձեր աշխատանքը մոտեցում է միայն, բայց վոչ լիակատար հատուցում... յերբ մինչդարյան ասպետը յերդում եր տալիս իր տերտին, նա դիտեր, որ մի որ պիտի գնա մինչև վերջը.— մինչև անձնազոհություն... Անցյալում հեղափոխականի համար միջին ճանապարհ չկար...

— Անձնազոհությո՞ւն... ահա թե ինչ.— կներես ընկեր Մ[illegible]քայել, բայց դու անցյալի մեթոդներով ես մոտենում նոր կյանքին. այժմ մեր առաջ ծավալվում է աշխատանքի, շինարարության պայքարը...

— Մեթոդները փոխվել են մեր առօրյա աշխատանքի վերաբերմամբ, բայց հերոսության հեռանկարները մնում են նույնը, յեթե աչքի առաջ ունենաս, որ մենք գտնվում ենք մի վիթխարի, յերկարատև կռվի մեջ, որի ընթացքում կարող են լինել «փորձության ժամեր...»

— Բայց յեթե յես տալիս եմ բոլոր ուժերս սոցիալիստական շինարարության, ուրեմն ի՞նչ ուրիշ հեռանկարների մասին է խոսքը:

— Մի՞թե պարզ չէ իմ տեսակետը.— ամեն անգամ, յերբ գոռ համոզում ես քեզ և ուրիշներին, վոր կոմունիզմի անշեղ գինվոր ես, սկսի խմանաս, վոր այդ խոսքերը կարող են հատուցում պահանջել, պահանջել, վոր դնաս մինչև վերջը՝ մինչև անձնազոհությունը...

— Մինչև կամո՞ւրջը... ուզում ես ասել, թե վճռական մոմենտներին կլինեն լքողնե՞ր... բայց ասա խնդրեմ, մի՞թե ձեր սերունդը միայն անձնազոհության չավղով եր ընթանում պայքարելիս:

— Գնացողը գնում եր մինչև վերջը, լքողը լքում եր, բայց գլուխն առաջանում եր առաջին քայլերից, և ամենամաքուր գլուխը— անձնազոհության հեռանկարն եր...

— Ընկե՛ր Միքայել, մենք նորից սկսում ենք մեր հին վեճը, և կարծում եմ, երբար չենք համոզելու, ավելի լավ չե՞ն, քանի վոր տեղը յեկավ, պատմես, թե ի՞նչպես և սկսել քո հեղափոխական գործունեությունը, գոռ մի քանի անգամ ինձ խոստացել ես...

— Լավ, քանի վոր խոսքը յեկավ, պատմեմ, թե ի՞նչպես առաջին անգամ պրակտիկայի դնացի. առայժմ այդքանով բավականացիր... Այն ժամանակ, ամառվա սկզբին, ինձ ուղարկել եյին պրակտիկայի Հարավային Ռուսաստանի մի խոշոր կալվածք: Նրա տերն ամեն ամառ ընդունում եր միայն մի պրակտիկանտ-ուսանող, վախենալով յերկուսից, և առհասարակ հոգնակի թվից, վորովհետև նրա կարծիքով դրանից կարող եր հեղափոխություն ծագել: Գնալով այնտեղ, յես շուտով համոզվեցի, վոր այդպիսի մթնոլորտում անկարելի յե վորևե լուրջ գործ ձեռնարկել: Հաղիվ աշխատանքս սկսած, առաջս յեկավ կալվածատիրոջ կինը,— հղիացած մի դեղեցկուհի, վորը վնասում եր միայն հաճույք, նորություն. գալիս եր այդին, մոտս կանդնում, ու սկսում շաղակրատել աչքերիս չեշտակի նայելով, ինչ վոր գաղտնի ներշնչումներ անելով:

— Այս բոլոր խոսքերը դո՞ւք եք հավաքել— հարցնում եր.— ինչ դեղեցիկ են... բայց դիտնական չդառնաք. նրանք շատ ձանձրալի մարդիկ են,— իսկի չեն կարողանում կանանց զբաղեցնել... Այ-

որ շատ աշխատեցիք, կհոգնեք, դնանք վերև, կակաո խմելու.. այնտեղ կպատմեք ինձ այս հետաքրքիր բաների մասին...

— Այդպես մոտ յերկու շաբաթ նա պտտվում եր իմ շուրջը, իսկ յես Հովսեփ— գեղեցիկը ղերը կատարելով, խուսափում եյի նրա ցանցերից. նա շարունակ առաջ եր խաղում, իսկ յես ամոթխածությունից հետ եյի նահանջում: Հաճախ խնդրում եր ինձ ուղեկցել իրեն մինչև կալվածքի ծայրին գտնվող մատուռը, որի շուրջը թաղված եյին իրենց տոհմի ներկայացուցիչները: Գնում եր թախծոտ դեմքով, երբ թե աղոթելու, բայց իրապես սիրաբանելու նպատակով: Ինչպես հետո իմացա, ամեն ամառ նա նույն կերպ սիրաբանում եր բոլոր պրակտիկանտների հետ:

— Իսկ ամուսինը,— հարցրեց Գուրդենը:

— Ամուսինը, «պամեչչիկը», մատների ափանքով եր նայում. նա յել իրեն հաշիվներն ուներ.— կալվածքն ստացել եր կնոջ բաժինքի հետ, այդ պատճառով էլ կնոջ ձայնն ավելի ուժեղ եր հնչում:

— Ա'յ քեզ լավ պրակտիկա.— Ֆեոդալական–բուրժուական կուլտուրան ես ուսումնասիրել— փարթամ կյանքը, սերն ու աղոթքը...

— Շտապում ես, ընկեր Գուրդեն, դեռ կարդա մյուս յերեսը, հետո ասա.— յերկար չտևեց այդ խաղը. պետք է ասեմ որ յես այդ ժամանակ արդեն տարված եյի հեղափոխական գաղափարներով: Ինձ համար ավելի քան պարզ եր, որ այդ հեքիաթային չքեղությունը հիմնված և քաղցած գյուղացիների ուսերի վրա. ու ներսս կուտակված հեղափոխական տրամադրությունն ավելի բռնկվեց: Հիշում եմ մի լուսնյակ գիշեր, յերբ կալվածատիրոջ հյուրերը հարբած գոռում–գոչում եյին պատշգամբում, յես քայլում եյի այդու յերկար ու ճիզ ծառուղիներով ու խորհրդածում եյի այդ հին կարգերի մասին... Ու այդ գիշեր յես յերդվեցի ընդմիշտ նետել իմ ուժերը հեղափոխական պայքարի մեջ... Հետևյալ առավոտը, պատրվակ բռնելով, թե անհրնկալ գործով ստիպված եմ մեկնելու, թողի կալվածքն ու գնացի Մոսկվա... այնուհետև սկսվեց իմ հեղափոխական կյանքն իր բանտերով, աքսորներով, բայց դա յերկար պատմություն է, դրա մասին մի ուրիշ անգամ...

— Բայց չմոռանաս, ընկե՛ր Միքայել, վոր քո հեղափոխական յերդումն արել ես ռոմանտիկ լուսնի չողերի տակ...

— Իսկ դու յել չմոռանաս, վոր չկա ավելի անաչառ վկա, քան լուսինը, և վոխանակ ինձ քննադատելու, ավելի լավ է խոստովանես վոր դո՛ւ ել ունես այդ յերազներից...

— Վո՛չ, մենք հեղափոխական ենտուզիաստներ ենք, բայց վոչ ռոմանտիկներ:

— Դու այն հասակումն ես, վոր վոչ միայն լուսինը, այլև արևը ռոմանտիկ կղարձնես... բայց լավ, թող քո ասածը լինի, ենտուզիաստ ասենք: Ցես ել հենց այդ քո ենտուզիազմի վրա մի դաղտնի պլան եմ հիմնել, վոր այժմ պիտի բացեմ,— այստեղ մոտիկ մի գյուղ կա, վորի չեֆը մեր խորհտնտեսությունն է. այդ գյուղը կուլակների ազդեցության տակ խորշում է կոլխոզից: Ահա թե ի՞նչն է սպասում քո ենտուզիազմին...

— Ի՞նչպես կանխեցիր իմ ծրագիրը— յես ել հենց նույն մտադրությունն ունեմ:

— Ուրեմն այս կետում հին ռոմանտիկն ու նորագույն ենտուզիաստն լրիվ ձեռք են մեկնում:

— Այդպե՛ս, ընկեր Գուրգեն, մոռացիր այդ ծրագրի չուրջը. իսկ յես դնամ աչք ածեմ մեր տնտեսությանը, տեսնեմ ի՞նչ նվաճումներ ու աճումներ ենք ունեցել այսոր:

Ասաց ու հեռացավ արագ, կարծես սթափվելով վոչ-դործնական խոսակցությունից:

... Արևը մայր էր մտնում, ըռաալորելով հեռավոր լեռների դագաթները: Ամառվա յերեկոյի հովն էր փչում, թարմություն ներշնչելով ցերեկվա չոգից թմրած մարդկանց: Խորհտնտեսության ծառուդիներով վերադառնում էին բանվորները: Նրանց մի մասը խմբվել էր կոոպերատիվի դռանը, սպասելով հացի հերթին, իսկ մյուսները, նոսած ճաշարանի առաջ, յերկար սեղաններ մոտ, թեյով էին դբաղված: Մշտական բանվորների կանանցից, վորը ջուր էր տանում աղբյուրից, վորն ել յերեխային էր վնտռում, կամ սամովարը բորբոքում էր չոր փայտի կտորներով: Շենքերից մեկի ճակատի ռադիոյի բարձրախոսն լինչ վոր ասիական յեղանակ էր սկսել:

Ցերեկոն իջնում էր, հեռվհեռե խտացնելով իր գողը: Տեղ-տեղ փայլդղ էլեկտրական լամպերը, մթին հակառակ՝ քանի գնում, ավելի ու ավելի էին պայծառացնում լույսերը:

Գուրգենը դանդաղ քայլերով հետ ու առաջ էր գնում ծառուդիով, մոռանալով Միքայելի հայտնած լուրի չուրջը՝ թե ու-

ամոդուհի յե գալու: Մի ուրախություն եր ինչոում վրան.— «Ի՞նչ արտաքինով, ի՞նչ բնավորության տեր կլինի նա», կարծես հարցնում եր նա ինքն իրեն ու յերևակայության մեջ ստեղծում եր ցանկալի պատկերը... Ահա նա գալիս է, իր գեղեցիկ, պայծառ դեմքով, ու լցնում իր սիրտը մի նոր զգացումով... Ծանոթանում է իր՝ Գուրգենի ծրագրերի հետ, հավիշտակվում, թե և տալիս... Ապա միջուցապատ հեռվում նկարվում եյին իր ապագա գիտական հետազոտումները, գյուտերը, իրենց միասին գործունեյությունը, մի արտակարգ վոգեվառ թռիով...

## II

Հինգ որից հետո՝ յերեկոյան դեմ, խորհանոետության գլխավոր չենքի գավթում մի կառք կանգ առավ: Կառքից իջավ մի տրիտոր, մոխրագույն, համեստ զգեստով, գլխարաց, կարճ մազերով: Նա բարձրացավ վերև, պատշգամբ, աչք ածեց պատուհաններին: Գուրգենն այդ ժամանակ, ինչ վոր կարևոր գործ վերջացրած՝ ինքնամոռացության մեջ բարձր չվշվացնելով քայլում եր սենյակում: Պատուհանից նկատելով որիորդին, նա խնդուն յենթադրեց, վոր յեկողն ուսանողուհին է, ու ակամայից շտապունեց, կարծես տեղն ու տեղը բռնել եյին հանցանքի մեջ: Նա խնդուն դուրս յեկավ պատշգամբ:

— Այստե՞ղ է ընկեր Սամվելյանը,— հարցրեց ուսանողուհին թեթև հուզվելով, յենթադրելով, թե Գուրգենն է խորհանոետության վարիչը:

— Այո՛, նա այստեղ է ապրում, բայց յերկու որով գնացել է քաղաք:

— Ես յեկել եմ վորպես պրակտիկանտ Աղբրեջանից:

— Ընկեր Միքայելին արդեն գրել են ձեր մասին:

— Ուրեմն յես կարո՞ղ եմ այստեղ իջևանել:

— Այո՛, իհարկե... դուք այստեղ նստեք, յես կբերեմ ձեր իրերը:

— Վո՛չ, յես ինքս կբերեմ,— ասաց ուսանողուհին ու արագ քայլերով իջավ սանդուխտներով: Գուրգենը հետևեց նրան: Կարծես յերկուսն էլ մրցում եյին իրար հետ, թե ո՞վ շուտ կհասնի կառքին: Որիորդն ուզում եր մի հանգամից վերցնել բոլոր իրերը. Գուրգենը հազիվ կարողացավ վերցնել մի կապոց:

Իրերն առժամանակ տեղավորեցին Գուրգենի սենյակում: Սկսվեց սկզբնական ծանոթության կցկտուր խոսակցությունը:

— Դուք ո՞րտեղից եք գալիս, ընկեր:

— Բաքվից.— իսկ դուք ո՞ւց և այստեղ եք:

— Մոտ քսան որ:

— Մի՞թե մեկն դուք եք այստեղ վերջես պրակտիկանտ:

— Մի շաբաթ առաջ հորս ուսանողները եւ կային, բայց նրանց շտապ կարգով ուղարկեցին գյուղերը. յես մնացի, որովհետև ինձ հանձնարարված են գիտական աշխատանքներ:

— Իսկ ո՞վ է փոխարինում վարիչին:

— Առայժմ յես:

Ուսանողուհին հանեց իր վկայականները և տվեց Գուրգենին:

Գուրգենը կարդաց լուրջ արտահայտություն տալով դեմքին: Վկայականը Հասմիկ Հախվերդյանի անունով եր:

— Առայժմ պահեք,— ասաց Գուրգենը.— հետո յերբ կդա ընկեր Մելքայելը, նրան կհանձնեք:

— Իսկ ձեր ազգանունը կարելի՞ յե իմանալ:

— Գուրգեն Սաղաթելյան:

Մի քանի սովորական հարցերից հետո Գուրգենը, ցանկանալով մեյնակ թողնել ուսանողուհուն, վերցրեց նա կարգի բերի իրերը, առաջարկեց.

— Դուք այստեղ հանգստացեք, իսկ յես կներքամ սամալյոտը պատվիրելու:

Կես ժամից հետո սամոլյոտն արդեն սեղանի վրա յեր: Հասմիկն աննկատելի ստանձնեց տանտիկնոջ դերը,— սկսեց կարգի բերել սեղանը, թեյի համար տեղ բաց անելով: Նա ժպտում եր, մաքրելով սեղանի փոշին, հացի ու պանրի մնացորդները, թղթի կտորները, իսկ Գուրգենը կարմրում եր, աչքերը սեվեռելով նրա վրա: Ամեն անգամ, յերբ Հասմիկը հայացքը դարձնում եր սենյակի վորևե կողմը, Գուրգենը փշաքաղվում եր. նրան թվում եր, թե ուսանողուհին քննադատում է մտքում իր վրիպել սարք ու կարգը, վեր ինքն ել այժմ պարզորեն նկատում եր՝ նրա աչքերն եյին ծակում թաղիքվածք, փոշոտ գրքերը, անկարգ դես ու դեն ընկած սերմերի պարկերը, սրվակները:

Ամեն ինչ պատրաստելուց հետո, նրանք նստեցին թեյի իրար դիմաց ու սկսեցին խոսել, սկզբում գյուղատնտեսական հարցերից, ապա անցան ուսանողական կյանքին,— պատմում

էլին ծխծաղելի դեպքեր պրոֆեսորների կյանքից: Սակայն նրանց հետաքրքրողն ավելի լրաւ լսելն էր, քան խոսակցության նյութը: Մի դուրեկան, զուրզուրալի զգացում էր պալիս մեջները, կարծես վաղուց մտերիմ էլին ու յերկար բացակայությունից հետո գտել էլին իրար:

Աննկատելի կերպով վրա հասավ մոջը: Գուրգենը վեր կացավ, վառեց էլեկտրական լամպն ու ոգտվելով ընդմիջումից, սկսեց կարգի բերել իր պարապմունքների սեղանի վրայի գրքերը ու իրերը:

— Վերջերս շատ վինթի յեմ դարձել, ընկեր Հասմիկ, կներեք, որ ձեր ներկայությամբ եմ դասավորում գրքերս:

— Վո՛չինչ. յերևի շատ եյիք տարվել դիտական աշխատանքով:

— Այո, այդ ել կար:

Մինչ Գուրգենն գրաղված էր իր գրքերով, Հասմիկը դիտում էր նրան.— «Լուրջ տղա յե յերևում,— մտածում էր նա,— յերևի պրոֆեսոր և դառնալու... մի քիչ վինթի յե, բայց վոչինչ, կանցնի... պրոֆեսորի արտաքին ունի— լայն ճակատ, խոշոր դիմադծեր, խիտ հոնքեր... վոդեվորված կխոսի...»

Ու խոհուն Հասմիկն ինքն իրեն յերևակայեց նրա ոգնական.— «իրար կսազենք,— նա չաղանակադույն, դանդուր մազերով, կապտավուն աչքերով, իսկ յես սևուկ... իմ սև, խոշոր գերով, կապտավուն աչքերով, իսկ յես սևուկ... իմ սև, խոշոր աչքերով յես զարմացած կնայեմ նրա դեմքին մի քիչ ներքևից, (յես ցածր եմ նրանից)... բայց լինչ ծխծաղելի ազջիկ եմ, այնպես եմ համեմատում ինձ նրա հետ, ասես հետն ամուսնանալու յեմ...»

Գուրգենը յեկավ նստեց տեղը: Յերկուսն ել լուռ եյին:

— Ընկեր Գուրգեն, վորտե՞ղ եմ դիշերելու:

— Այս հարևան սենյակում:

— Իսկ յեթե վարիչը վերադառնա՞:

— Նրա սենյակն այն մյուսն է:

— Ուրեմն սենյակն ապահովվա՞ծ է:

— Վոչ մեկի սենյակը, այլև ամեն տեսակի սեփականություն:

— Շնորհակալ եմ:

Գուռը կկոսով չսպ բացվեց. արտնքից ներս նայեց այդեպան Մուկուչը:

— Ինձ կանչո՞ւմ եյիք:

— Սրի՛. լավ ժամանակին յեկար. սամովարը կտանես, թեյ կիմանես. հետո էլ կասես կնկանդ, վոր դա ես կտղքի սենյակը մաքրի. ընկերը պետք է այդտեղ ապրի:

— Բարով եք յեկել,— ասաց Մուկուչը, ձեռքը Հաամիկին մեկնելով սեղանի վրայից.— ես վո՞նց ա բանը, հընկեր Գուրդեն, հարմանայուղ ա՞:

— Չե,— ասաց Գուրդենը ծիծաղելով.— ընկերը պետք է մեզ մոտ աշխատի:

— Հա՛ ապրանամ ա սովորելո՞ւ. ա՛յ թե կնանիք սովորում են ե՛. մի թվանք դեղն ա մնում, վա՛յ թե են էլ ձեռներից խլեն: Մենակ իմ կնիկն ա, վոր ամեն բանից վախենում ա. գընում ա ես մռութիկ դեղերը. կնանոցից սուտ խաբարներ լսում, ու հուչտ լսում. մթամ ասում ա, կոլխոզում կանանց «որչե» (ընդհանուր) են անում: Ցես դեր սովորեցի, խակ նա ասում ա դժար ա, կարալ չեմ...

— Ցես կհամոզեմ, կսովորեցնեմ,— ասաց Հաամիկը:

— Ա՛յ լավ բան կանես:

Նա հավաքեց բաժակները սինու վրա, վերցրեց բոլորը սամովարի հետ ու տրեխները հատակին քսմսելով դուրս գնաց:

Մի քառորդ ժամից հետո, պատշգամբ բարձրացավ նրա կինը, գրնդալեն բացեց հարևան սենյակի դուռը, ու սկսեց թրըխկացնելով մաքրել: Մի ուրիշ անգամ նա կմաքրեր ու առանց լսաց աներու, կիջներ ներքև, բայց այժմ, լսելով Մուկուչից, վոր Գուրդենի մոտ աղջիկ է յեկել, հետաքրքրությունը բռնել եր: Նա ներս մտավ, կանդնեց զուռն չեմքին, աչքի տակով դիտեց Հաամիկին ու ասաց.

— Սենյակը պատրաստ ա:

Ու նորից հայացքը նետելով Հաամիկի վրա, դուրս գնաց:

Հենց նոր եյին տեղափոխել Հաամիկի իրերը մյուս սենյակը, յերբ ներս մտավ ընկեր Միքայելը:

— Ա՛, բարով Գուրդեն, բարով եք յեկել ընկեր,— ասաց նա Հաամիկի ձեռքը սեղմելով.

Հաամիկը հայտնեց իր գալու նպատակը:

— Թեպետ յես տանը չեյի, բայց կարծում եմ, ընկեր Գուրդենը ձեզ լավ ընդունած կլինի:

— Ա՛յո՛,— չնորհակալ եմ հյուրասիրությունից:

— Դե՛, ընկեր Գուրգեն, պատրաստվիր— աչքի առաջ ունեցիր, որ սոցմրցում է լինելու քո և ընկերոջ մեջ:

— Մի՞թե,— ասաց Հասմիկը,— ուրեմն դործս բավական դժվարանալու կե:

— Վոչ թե ձեղը, այլ ի՛մն է դժվարանալու,— վրա բերեց Գուրգենը:

Սովորական հարց ու փորձից հետո, ընկեր Միքայելն ասաց.

— Ես ինչ լավ եր ձեր գալը— ընկեր Հասմիկ. մեկ-մեկ տանտիկնոջ աչքով կնայեք մեր սարք ու կարգին, ապրուստին:

— Տղամարդիկ չարունակ պնդում են,— ասաց Հասմիկը,— թե կնոջ պիտի ազատել ընտանեկան մանրունքից, բայց հարմար բոլեյին իրենք են մղում մեզ դեպի այդ մանրունքը:

— Անցյալի ժառանգությունն է,— ասաց Գուրգենը թեք նայելով ընկ. Միքայելին:

— Դե՛, Գուրգեն, սկսի՛ր, անցյալի բոլոր մեղքերն ինձ վրա բարձի՛ր...

— Կենացի ժամանակ չե, որ ասում են— Թույլ տվեք հանձինս ձեր՝ խմելու... և այլն,— ասաց Գուրգենը ծիծաղելով:

— Հա, լավ ես գտել «անձս»... ընկեր Հասմիկն, իհարկե, այդպես չի մտածում:

— Ցես ձեր խաղի մեջ մի առանձին բան չեմ տեսնում,— պատասխանեց Հասմիկը,— իսկ ինչ վերաբերում է տնային գործերին, կարծում եմ, պետք է կոմունայով աշխատենք:

— Ցես համաձայն եմ,— ասաց ընկեր Միքայելը:

— Ցես էլ իհարկե,— ավելացրեց Գուրգենը:

— Դե ինձ կներեք,— ասաց ընկեր Միքայելը.— յես միայն մի քանի րոպեյով յեկա— չատ կարդով պիտի դեկուցում ներկայացնեմ, դուք էլ հոդնած կլինեք, պիտի հանդստանաք:

Ամեն մեկը քաշվեց իր սենյակը: Գուրգենը, քառորդ ժամի չափ մտամոլոր քայլեց սենյակում, անուշադիր թեղթեց գրքերը, ապա դուրս յեկավ պատշգամբը: Հասմիկի դուրս գնալուց հետո սենյակը կարծես հանկարծ դատարկվեց, դարձավ անհրապույր, ամայի:

Նա նստեց պատշգամբում թողած մի խարխուլ աթոռի վրա:

Դիմացը՝ յերկնքում, լուսնեղջյուրն եր, իր խոացրած լույսով, ու կողքին մեղմ, պայծառն աստղը։ Յերկնակամարում սիրուած աստղերը նայում եյին հեռաւոր ժպիտով, աւես մղելով իրար հետ, թե վո՛րն աւելի պարզ կյերևա։

«Ինչո՞ւ յես այսպես անհանդստանում, ղժացումներիս տեղէ տալիս»,— մտածում եր Գուրգենը.— մի՞թե ընկեր Համլիկի գալու պատճառով... Գուցե նրանից է, վոր մխայնութեան մեջ եյի,— կտրված ընկերներից, խոմացած, ու առաջին պատահած ուսանողուհին պետք եր վոր ուժեղ տպաւորութեան անեը վրաս...

«Կուզեյի գարձյալ Համլիկի հետ լինել, և այս վոջրիկ ցանկութեունը խոսեցնում է ինձ աստղերի հետ... Ի՞նչ ծիծաղելի յեն ղժացումները... Հիմա յեթե դուրս գա ընկեր Մխքայելը, տեսնի ինձ այս տանտիմենտալ դրութեան մեջ, կասի.— հը՛, վո՞նց ես, մեր տղա, յերազո՞ւմ ես լուսնի հետ...»

Ու այդ մտքից սթափված, նա չուտպով ներս մտալ սենյակը, խնդուն հանվեց, պառկեց անկողնում։ Բայց յերկար ժամանակ քունը չեր տանում. պտտվում եր անկողնում, ականջ դնում հաբելան սենյակին, վորտեղ Համլիկն եր.— վոչ մի ձայն չեր լսվում։ «Համլիկը յերևի քնած է ճամբորդի խորը քնով ու յերազում ծիծաղում է իմ տանտիմենտալ դրության վրա»։— ժպտաց Գուրգենն իր մտորումների վրա ու հոգնած ուղեղով ծանր ընկավ քնի գիրկը։

## III

Հետևյալ առավոտ Գուրգենը զարթնեց սովորականից աւելի ուշ, դռների թխկթխկոցից։ Սրևն ընկել եր պատուհանից ներս ու տարածել սենյակում թուլացնող շոգը։ Նա վեր թռավ շշմած, ու սկսեց հագնվել անկամ, կարծես վոչ մի ցանկութեուն չուներ շարժվելու։ Բայց հանկարծ ականջին ընկավ պատշգամբից Համլիկի ձայնը, ու կարծես սառը ջրից ցնցուղն ընկավ աչքերին, մխանգամից զարթեցրեց։ «Ջե՛ վոր Համլիկն այնտեղ է», անցավ նրա մտքով, ու շտապ շտապ հագնվելով դուրս յեկավ սենյակից։

— Բարև,— վողջունեց նրան ընկեր Մխքայելը.— ի՞նչ են

տեսնում, ընկեր Գուրգենն, այսքան քնե՞լ. սա քեզանից չի. հենց առաջին որվանից տեղի յես տալիս:

— Հա, դիշերս կարդալով ընկա, ուշ քնեցի,— հնարեց Գուրգենը:

— Յես ու ընկեր Համլիկը քեզ ենք սպասում:

— Յես պատրաստ եմ,— ասաց Գուրգենը:

Նրանք մխասին թեյ խմեցին ու հետո գուրս յելան՝ ընկեր Համլիկին ծանոթացնելու խորհոնտեսության հետ:

Համլիկը հագել եր բացկապույտ, բարակ զգեստ, գնկոլտեյով, թևերը կիսաբաց: Նրա մեջ արդեն չքացել եր նորեկի անվըստահությունը, և իրեն զգում եր, վորպես իր հարազատ միջավայրում:

Հասնելով գոմին ընկեր Միքայելն ասաց.

— Ընկեր Գուրգեն, թեպետ իմ պարտականությունն է ընկեր Համլիկին ծանոթացնել մեր տնտեսության հետ, բայց կներես, վոր չատ եմ դրաղված, խնդրում եմ քեզ վրա առնես այդ դործը:

— Լավ,— ասաց Գուրգենն ուրախանալով. կարծես հենց իր ցանկությունն էլ այդ եր: Նա իսկույն Համլիկին հետն առած, ճանապարհը ծռեց դեպի խորհոնտեսության այդինն:

— Գուցե ձեզ համար ժամանակի վատնում է ինձ ծանոթացնելը,— ասաց Համլիկը, վորձելու նպատակով:— Յես կարող եմ հետաձգել մի ուրիշ անգամի...

— Ընդհակառակը, յես շատ ուրախ եմ, վոր ինձ վիճակվեց ձեզ բացատրություններ տալ. բայց ինչո՞ւ այդ միտքը յեկավ ձեր մեջ:

— Սենյակից դուրս յելաք մռայլ ու դժգոհ դեմքով, և յես յենթադրեցի թե պատճառը յես եմ:

— Վո՛չ, դա թյուրիմացություն է. յերեկ դիշեր ուշ քնեցի, հիմա էլ վեր կացա ծանր դլխով. դա եր պատճառը, և ուրիշ վոչինչ. այժմ արդեն անցավ:

Նրանք անցան ծառուդիներով, տեղ-տեղ կանդ առնելով այս կամ այն ծառը դիտելու համար: Յերկուսի վոխադարձ ձգտումն եր— լինել մխասին և վորքան կարելի յե՝ մարդկանցից հեռու:

Կես ժամի չափ այդում շրջելուց հետո, Գուրգենն առաջարկեց.

— Նստենք այս ծառի տակ, մինչ հանդստանանք:

Նստեցին ծառի լայն ստվերում ու լուռ նայում էին իրար, խոսելը պոկոտելով: Բուլյաների բուրմունքի ալիքների հետ մի ինչ-որ սիրտ լցնող զգացումն էր գալիս: Ցերեկուան էլ զգում էին, որ ուրախ էին իրար մոտ լինելուց, բայց խոսում էին այլ բաներից:

— Համլիկը հանեց թաշկինակը և ուզեց դրպանը:

— Այս ինչ շատ բաներ կան ձեր դրպանում:

— Շատ չէ, բայց մի մեծ բան ունեմ:

Ու հանեց մի ատրճանակ:

— Ատրճանա՞կ,— զարմացավ Գուրգենը.— ինչու համար եք պահում:

— Սիրային դոզերի համար:

— Սիրային դոզերի՞... դա ինչ տոկալի պրոշա յե...

— Ընդհակառակը, դա մի բանատեղծական արտահայտություն է:

— Հետո՞,— անվհատկյաբար հարցրեց Գուրգենը:

— Հետո՞... յերբ գնում եմ պրակտիկայի, հետս տանում եմ այս ատրճանակը... բայց ինչո՞ւ այդպես հուզվեցիք...

— Վո՛չ, չեմ հուզվում... բայց ինձ մի քիչ տարօրինակ թվաց... Ցերևի ձեզ անցյալում մի դժբախտություն է պատահել:

— Դժբախտություն չե, բայց յեղել է մի անախորժություն:

Գուրգենը լռեց: Մի հիասթափումի անցավ վրայով, ասես կանաչ ծառը հանկարծ սերևաթափ յեղավ նրա առաջ: Նա պատկերացնում եր Համլիկին նուրբ զգացումներով մի կին, և հանկարծ՝ այդ ատրճանակը, ու մանավանդ՝ այդ սարսափելի բառերը— «սիրային դոզեր...»

— Շարունակենք մեր եքսկուրսիան,— ասաց Համլիկը, լռությունը խախտելով ու տեղից վեր թռչելով: Գուրգենը հետեվեց նրան: Գնացին բանջարանոց: Մուկուչն աշխատում եր ճարպերում, գլխին կարմիր աղուխ կապած:

— Բարև, Մուկուչ,— ասաց Գուրգենը— ինչպես և բանջարանոցդ:

Մուկուչը բարձրացրեց կորացած մեջքն ու հենվեց բահին:

— Բարով եք յեկել· քալամի վրա վորքն ա յերևացել:

— Վո՛չինչ, վաղվանից դեղ կանենք:

Ցերբ նրանք բավականաչափ հեռացան, Գուրգենն ասաց.

— Մուկուչը մեր հին այգեպաններից է. նոր բաներից հեռ այնքան էլ չունի, բայց շատ յեռանդով աշխատող է:

Հետևյալ մարդերում աշխատում էին յերիտասարդ դյուղացիները:

— Սրանք մեր նոր պրակտիկանտներն են,— բացատրում էր Գուրգենը,— լսել են կարճատև կուրսերը և այժմ անցել են գործնական աշխատանքի:

Բանջարանոցների շարքը դիտելուց հետո, նրանք վերադարձան կաթնատնտեսական մասը: Մի քանի չենքեր բաց թողնելով, ներս մտան նոր կառուցած դոմը:

— ՄանկուԹյունից իմ առաջ պատկերացել է դոմը, վորպես մութ, նեխված, աղբի մեջ կորած մի վորջ,— ասաց Գուրգենը ժպտալով— և հիմա ամեն անդամ, յերբ ներս եմ մտնում այս լուսավոր դոմը, տարօրինակ և թվում, վոր վոչ մի մութ անկյուն չկա, հատակը բետոնից է, կանոնավոր բաժանած ընդարձակ մասերներ են ու մաքրուԹյուն...

Դոմի մեջ մնացել էին մի քանի հորթեր ու մի հիվանդ կով, վորը պատված եր դեսնին:

Համակը չոյեց, դուրգուրեց ցեղական խոշոր հորթին: Դուրեկան չոյանքից ղգացված, հորթը բարձրացրեց գլուխն ու մանկական պարզուԹյամբ լայն բացած աչքերով նայում եր, կարծես խնդրելով վոր ելի չոյե իր վիզը:

Նրանք դուրս յեկան դոմից, անցան լայն ծառուղիով ու դարձյալ բաց Թողնելով մի շարք պահեստաչենքեր, կանգ առան արևկող մի բացատի առաջ, վորտեղ շարված էին կարդով փեԹակները: Ուզում էին ներս մտնել, բայց մեղվանոցում աշխատող չրջանային հրահանգիչն ու մեղվաբուծը ղգուշացրին:

— Ընկերներ, դուք պինված չեք ցանցով, մեղուները կարող են հարձակվել ձեզ վրա:

— Պիտի հպատակվենք,— ծիծաղեց Գուրգենը.— մի ուրիշ անգամ դիմակներով ներս կմտնենք:

— Իսկ վո՞րտեղ են Թռչնաբուծարանը,— հարցրեց Համլիկը:

— Ամենածայրին. հենց այստեղով էլ պիտի գնանք:

Ցերկար ծառուղին բերավ նրանց Թռչնաբուծարանը: Ըն-

դարձակ այդու մի մասում, որը դրսից ցանցով պատած էր, կանաչի մեջ ծաղիկների նման տարածվել էին սպիտակ հալերը: Նրանց մի մասը ճյունաթռչուր դծով չարվել էին աուլի դծով. ու կարմիր կատարները չարժելով, ջուր էին խմում առանց շտապելու, կարծես խաղալով:

Նրանք ներս մտան ճուտերին հատկացրած շենքն ու այնտեղ հանդիպեցին Թռչնաբուծարանի վարիչին, որը մտահոգված, ինքնամփոփ դիտում էր ցանցապատ շրջանում ծլվլացող սպիտակ ճուտերին:

— Ինչպես են ճուտիկները,— հարցրեց Գուրգենը բարևվելուց հետո:

— Հիվանդությունը շարունակվում է:

— Մասսայական բուծարանները միշտ համաճարակի վտանգի մեջ են, անշուշտ մենք պիտի սովորենք մի շարք ախտերը անելուց հետո...

— Կռվում ենք որ ու դիշեր, տեսնենք ինչ կլինի:

Վարիչի առաջնորդությամբ նրանք այցելեցին ինկուբատորների բաժանմունքը, հալաբները, դիտեցին հետևի այդում հալերի ու հնդկահավերի զանազան ցեղերը: Ցերը դուրս չեկան Թռչնաբուծարանից, նրանց առջևից անցան յերեք Թիսական, յերեքն էլ սպիտակ. նրանք միացած մաս էին ածում նորելուկ ճուտերին:

— Մի՞թե չեն կռվում,— հարցրեց Համլիկը:

— Վո՛չ, չեն կռվում,— ասաց վարիչը,— դոյության կռվի աղդակները վերացած են, կերն ապահովված է. նշանակություն ունի և այն, որ բոլորը մի դույնի են, Թե ճուտերը, Թե Թըխամանները:

— Ա՛յ քեզ կոմունա,— ասաց Համլիկը, չկարողանալով աչքը հեռացնել տարօրինակ յերևույթությունից:

— Ինկուբատորից դուրս եկած ճուտերը միշտ լինչ ավելի հիվանդոտ են լինում, քան Թիսականներինը,— շարունակեց վարիչը.— սրանք ավելի աշխույժ են ու առույգ տեսք ունեն. բացի դրանից Թիսականը բավական բան և սովորեցնում իր կչկչոցով:

— Այստեղ շատ բան կա անելու,— ասաց Համլիկը, յերբ նրանք դուրս յեկան այդուց ու դնում էին դեպի փորձադաշտը.— յես պրակտիկայի ժամանակ աշխատում եմ ծանոթանալ տեղում յեղած բոլոր ճյուղերի հետ:

— Դուք ուզում եք ենցիկլոպեդիա դառնալ:

— Այնքանով, որքանով այդ չի խանգարիլ իմ հիմնական մասնագիտությանը:

Փորձադաշտում շրջանային դյուղատնտեսը բացատրություններ էր տալիս մի խումբ կոմյերիտներին:

— Զարմանալի չե,— ասաց Հասմիկը,— վոր տնտեսությունն էլ դնում եմ, ամեն տեղ դպրոցի տպավորություն եմ ստանում:

— Այո՛, մենք էլ հենց դրան ենք ձգտում:

Փորձադաշտը դիտելուց հետո նրանք վերջացրին առաջին թեռւցիկ ստուգման ու վերադարձան իրենց բնակարանը:

— Իսկ այստեղ կա՞ լաբորատորիա:

— Այո, կա, ներքևի հարկում, բայց դեռ կարգին սարքավորված չե:

— Կարելի յե՞ տեսնել:

— Ինչո՞ւ չե:

Նրանք իջան մի կիսախավար սենյակ, վորտեղ պատերի մոտ շարված էյին մի քանի պահարաններ զանազան նմուշներով ու քիմիական նյութերով: Սեղանի վրա անկարգ թափված էյին զանազան իրեր և նյութեր՝ փոքրիկ պարկերով:

— Ներեցեք ընկեր Գուրգեն, պիտի ասեմ, վոր շատ անկարգ պրոեքտյան մեջ է լաբորատորիան. յեթե թույլ կտաք, յես կարգի կբերեմ:

— Ընկեր Միքայելը թույլ կտա:

—Վաղվանից կսկսեմ: Բացի դրանից յես կուզեյի, վոր մեր աշխատանքները վորոշ պլանով ընթանային:

— Այդ պլանն արդեն կազմված է, և քննենք և կաշխատենք խիստ կարգով հետևել նրան:

Գուրգենը մի առանձին շեշտով արտասանեց «խիստ կարգով» բառերը, ցույց տալու համար, վոր ինքը լուրջ է վերաբերվում գործին:

Հասմիկը նայեց նրան նույնպես լուրջ և միաժամանակ թաղնված մտերմական հայացքով, վորը կարծես ասում էր.— «յես կլինեմ քո լավ և գործունյա ընկերը...»

## IV

Որհնանեաւթյան վարիչը նորից քաղաք է գնացել: Գուբդենն ուրախ է, վոր մենակ է մնալու Համիկի հետ: «Գուցե նա քաշվում է ընկեր Միքայելից,— մտածում էր նա,— այժմ այդ արգելքն էլ չկա, կարող է ամեն պարզ արտահայտվել...»

Առավոտը վաղ, արևածագին, երանք միասին գնում էլին այդին ծառերի վնասատու միջատներ վնտռելու:

Առավոտը շրշդրում է, զուրզուրում, հրապուրում և այդ հրապուրանքի կենտրոնում Համիկին է:

Երանք միջատներ վնտռելով հեռանում են, խորասուզվում յերկար ծառուղիների մեջ:

Ահա դարձյալ մի ծառ, վորի վրա միջատներ կան: Համիկը քչխորում, կանչում է Գուբդենին, մոերմարար նայելով նրա դեմքին:

— Տեսե՛ք, ընկեր Գուբդեն, վորտե՞ղ են թաղնված:

Գուբդենը մոտենում է ու անպետակցաբար ձախ ձեռը դնելով Համիկի ուսին, նայում է նրա ցույց տված տեղը: Այդ րոպեին Համիկը՝ առանց վռխելու իր դիրքը, ձեռքը դրպանն է տանում ու իր ուսի վրայով հանկարծ դեմ է անում Գուբդենի աչքերի առաջ ակ ատրճանակի բերանը...

Գուբդենը հետ է քաշվում, ու մինչև ականջները կարմրած՝ աչքերը հառում է դեմքին, կոշիկի ծայրով քանդելով գետինը:

«Ինձ էլ է «սիրային դողերի» թվին դասում,— մտածում է նա, ու նորից իջնում է վրան հետաքրքրությամբ, նորից կանաչ ծառը տերևաթափ է լինում, ու Համիկին ընկնում է «առակալի պրոպայի» վրանը...

Իսկ Համիկը, դրպանը դնելով ատրճանակը, մի քանի րոպե կենտրոնացնում է ուշադրությունը ծառի վրա, իբր միջատներին գիտելով, բայց խնդալես միջից է տալիս Գուբդենին «ինչն իրեն հավաքելու»: Ապա ցանկանալով մոտացության տալ յեղածը, նա ասում է բարձր ձայնով:

— Ընկեր Գուբդեն, հիշո՞ւմ եք այս միջատի լատիներեն անունը:

— Վո՛չ, մոռացել եմ,— պատասխանում է Գուբդենը լրջությեն, չնայած վոր հիշում է:

«Ուզում է հանդստացնել», մտածում է նա,— բայց արժե՞ արդյոք լուրջ ուշադրություն դարձնել...

Ու ցանկանալով կատակով անցնել միջադեպի վրայով, նա ասում է.

— Տվե՛ք ինձ ձեր ատրճանակը, ընկեր Հասմիկ, այդ խաղալիքը բավական խանդարում է ձեզ...

— Վո՛չ, նա ինձ չի խանգարում, իսկ այսուհետև ձեզ էլ չի խանգարիլ... և հետո՝ սա Թուլլերի զենքն է, իսկ յես ձեզ ուժեղների թվին եմ դասում...

«Ուժեղների թվին»—ը չոյում է Գուրգենի ինքնասիրությունը, բայց միաժամանակ մտածում է,— «դուցե հեղնանք է... ինչ և է պետք է վերջ տալ այս տղայական զեղումներին, ամբողջովին թաղվել գիտական զբաղմունքի մեջ...»

Ու վերադառնում են լուռ յերկար ծառուղիով: Կարծես նույն Հասմիկն եր, նույն Գուրգենի առաջ, բայց քողով ծածկված, ոտար, անհասկանալի...

Թռչնաբուծարանի մոտ Հասմիկը բաժանվում է:

— Յես պիտի լինկուբատորների ջերմաչափը ստուգեմ,— ասում է նա, ներս մանելով ներքևի հարկը:

Գուրգենը մտացիր անցնում է ծառուղիով, բարձրանում է վերև իր սենյակն ու նստում սեղանի մոտ: Պիտի թեյ խմել, պիտի սկսել զբաղմունքները, բայց ձեռքին գործ չի կպչում: Նա հանում է իր հուշատետրն ու գրում նոր յերեսից:

«Հենց առաջին տեսնելուց Հասմիկը չարունակ պատվում է յերևակայության մեջ ու խառնում զբաղմունքներս: Յես սեր չեմ ընդունում, միայն զղում եմ ուրախություն նրան տեսնելիս ու տխրում եմ բաժանվելիս: Յերբեմն մտածում եմ ամուսնանամ Հասմիկի հետ, բայց կասկածում եմ... հանկարծ մերժի, դուցե և հեղնի... Յես սեր չեմ ընդունում, բայց ամեն անգամ, յերբ ուզում եմ պարզ ձևով վճռել այդ կարդի հարցերը, անսպասելի կերպով միտքս խճճվում և ինչ վոր բարդություններից և ընկնում եմ հակասությունների մեջ: Ահա այդպիսի մի ատրոբինակ բարդություն և և ընկեր Հասմիկը... Մաթեմատիկայի մեջ կան իրրացիոնալ, յերևակայական թվեր. կյանքում էլ կան ատրոբինակ, իրրացիոնալ բնավորություններ, վորոնց թվին և պատկանում ընկեր Հասմիկը: Նա կարծես ունի և սովորական կնոջ

հաճախությունները, բայց այդ բոլորը ծածկված է մի քմահաճ ինքնասիրության տակ, որը զարգնում է նրան անհասկանալի, անբռնելի...

Տարօրինակ եմ և յես... յերբ Համլիկն ուզում եր պարզ արտահայտել իր մտքը և «սիրային դողերը» բառերն արտասանեց, յես նրա մեջ զանհկություն, մերկություն տեսա ու հիասթափվեցի: Կարծես յես ուզում եյի, որ նա լինի ավելի նուրբ, ավելի մշուշապատ... Բայց յերբ յես ծառի մոտ ձեռնոցս մոռացա դրի Համլիկն ուշին, նա էլ զուգե իմ քայլը համարելով զանհկություն, մերկություն՝ հետ մղեց ինձ... ատրճանակով, «ինչո՞ւ յես անախորժություն ղգացի, որ նա բարդացնում է մեր հարաբերությունները... Ցերկուսս էլ նույն ցավով ենք տարված, և սակայն, մեր պայքարի մեջ կարծես մի վոխադարձ մոռերմություն և թաղնված... կամ զուգե դա իմ յերևակայությունն է...»

Գուրդենի մտքերն ընդհատեց Մկքայելը, վորը նոր վերադառնալով քաղաքից, ներս մտավ իմանալու, թե ի՞նչ և կատարվել իր բացակայության ժամանակ:

— Ընկեր Գուրդեն, բարևներս... հը՛, վո՞նց ես, կարծում եմ հիմա գիտությունը թողած՝ բանաստեղծությամբ ես զբաղվում:

Գուրդենին թվաց, թե Մկքայելը նկատեց իր այժմյան «զբաղմունքը», և հանկարծակի դալով, կարմրեց:

— Վո՛չ,— այդպիսի բան չկա,— ասաց նա, շտապով ծածկելով տետրը:

— Ի՞նչպես են ընթանում գործերը,— ասաց Մկքայելը, նստելով աթոռին:

— Վոչինչ, լավ են:

— Եհ, վերջապես թափ տվի վրայից գեկույցներն ու թվերը: Իսկ դու, Գուրդեն, ի՞նչ փուլի մեջ ես, հուսով եմ, վոր դու դեռ չես սիրահարվել...

— Ե՛հ, ընկեր Մկքայել, դու կարծես թե ծրագրել ես ինձ շաբունակ կարմրացնել:

— Ի՞նչու պիտի կարմրես. ձեր սերունդը մերի համեմատ մի տաս տարի առաջ է դայթակղվում և այդքան էլ շուտ է թաղնում կարմրելը: Բայց կատակը մի կողմը— ի՞նչ տպավորություն է անում ընկեր Համլիկը:

— Ցեա նբանից չատ բան եմ սպասում,— պատրաստված ու ջեռանդուն աղջիկ է, ու կարելի չե ասել—լիովին «սոցուղղված» է, միայն բնավորության մեջ կան տարօրինակ դծեր...

— Եհ, վո՞ր կրթված կնոջ մեջ չկան տարօրինակ դծեր. գա նրանից է, վոր ազատագրված կինն իր ներևակայությամբ ավելի չատ է ցանկանում, քան կյանքը կարող է տալ ներկա-յումս. իսկ յերբ մարդ իր «կարողությունից» ավելի չե պահանջում կյանքից, նա ջղայնանում է... մենք հետաքրքրվենք միայն նրա աշխատանքով:

— Աշխատանքի կողմից հարվածային է. ամեն տեղ հասնում է,— գյուղատնտեսության բոլոր ճյուղերին հետևում է, և վոչ-միայն ուսումնասիրում է, այլև ողնում գործով: Աշխատում է անդրապիտության վերացման գործում, ել ի՞նչ մնաց...

— Լա՛վ է, լա՛վ է... չատ ուրախ եմ. մեր խորհրդանեսության-յանը հենց ձեզ նման յերիտասարդներ եյին պակասում. այժմ այդ ել կա. ուրեմն կարող ենք մեր ծրագրերները լիովին իրագործել, մանավանդ այն կոլխոզի ծրագիրը, վորի մասին քեզ արդեն ասել եմ: Մի քիչ կարդի բերեմ մեր տնտեսության գործերը, այն ժամանակ դրանով կզբաղվենք միասին...

Ե՛հ, ցտեսություն:

— Ցտեսություն,— յես սպասում եմ քո հրամանին,— ասաց Գուրգենը, մոտենալով մանրադիտակին:

Մի քանի րոպե չատ քայլերով իջավ ներքև:

## V

Կյանքն ընթանում եր յեռուն աշխատանքի մեջ: Համայնքն արդեն վաստրեն դարձել եր Գուրգենի ոգնականը՝ նրա գիտական հետազոտությունների մեջ: Նա սիստեմատիկաբար գիտում եր մորճաղաչոի բույսերը, հավաքում եր նմուշները, հետևում եր բոլոր ճյուղերի աշխատանքներին: Յերբեմն ել Գուրգենին քչում եր դաշտ, իսկ ինքն զբաղվում մանրադիտակով:

Աննկատելի կերպով նա դարձել եր և Գուրգենի վերահսկիչը.— մի առանձին խանդով հետապնդում եր նրա գործերին ու հետևանքով նկատողության արժանացնում նրա անկարգությունը: Գործի չուրջը նրանք բավական մոերմացել եյին և «դու»-ով եյին խոսում:

Այստր ել նրա ձեռքը ընկավ Գուրգենի տետրերը, վորոնց մեջ չավարտված հոդվածներ էյին պահպան հարցերի շուրջը։ Սեղանի արկղում դիտողության թերթիկները տեղավորելիս նա հանեց տետրերն ու սկսեց թերթել։

— Ես ի՞նչ բաներ են,— ասաց Համլիկը, նայելով վերնագրերին։

«Պահպանողականների արշավանքը միջավայրի ազդեցության դեմ...»

Գուրգենը վեր թռավ տեղից։

— Վորտեղի՞ց ձեռք ընկավ այդ տետրերը,— ասաց նա կարմրելով. դա մի հոդված է դարվինիզմի հարցերի շուրջը։

— Կուզե՞ս, ել չեմ կարդալ. կարծում էյի դիտողություններ են, ուզում էյի կարդի բերել։

— Սրդեն ուշ է արդեյոք.— կարող ես շարունակել։

Համլիկը շարունակեց։

«Կոլեկտիվը կենդանական աշխարհում...»

— «Եներգիայի կուտակումը բույսերի սերմերի մեջ կամ գենետիկայի հեղաշրջումը...»

Գուրգենն սկսեց քայլել սենյակում։ Ապա մոտեցավ Համլիկին, վորը պարմանքով դիտում եր նրան ու, ձեռքը խրելով իր խիտ մազերի մեջ, ասաց.

— Զարմանալի յեռուն, նշանակալից ժամանակում ենք ապրում, ընկեր Համլիկ, ասաց նա,— մարդ ուզում է հազար ուղղ, հազար ձեռք ունենա, ամեն գործի հասնի... Մի կողմից մեջս վառվում է դիտության ծարավը,— գլխումս վխտում են գենետիկայի հարցերը. թվում է, թե մի նշանավոր գյուտ պիտի անեմ, հեղաշրջում կատարեմ, հարյուրտպատակեմ բերքատվությունը...Մյուս կողմից՝ ել մի ուրիշ ձգտում է պալես մեջս, ուզում եմ վոտով-գլխով նվիրվեմ սոցիալիստական շինարարության գործնականին, վորից հետու յե թվում ինձ դիտությունը...Մի տա՛ր այդ տետրը։

Համլիկը մեկնեց տետրը հեղնող զարմանքով նայելով նրան։

Գուրգենը վերցրեց տետրը ու սկսեց թերթել։ Բայց րոպեական աչք ածելուց հետո ձգեց սեղանի վրա ու նորից սկսեց քայլելը։

Համլիկը շարունակեց կարդալ։

— Ոհո՛, սա արդեն կարդից դուրս է,— ասաց նա ժպտա-

լով— «Սերը կամ սերը պայծառ արևի տակ·— չհողարկված խոհեր···»

— Ջե՛, մի՛ կարդալ,— կանգ առավ Գուրգենը,— դրանք թռուցիկ նկատողություններ են···

— Վորոնք սպառնում են լուրջ տրակտատներ դառնալ և ամեն ինչ հեղաշրջել···

— Հեղնանքը Համմիկի տարերքն է:

— Իսկ յերևակայությունը՝ Գուրգենի··· յերբ այդ սերո մասին հոդվածդ վերջացնես, թույլ տուր վերնադրի տակ, փակագծերի մեջ դրեմ— «Ընկերը Գուրգենի հաղար ու մեկ հակասությունների մասին···»

Իսկ դրա տակ յես կավելացնեմ— Ընկերը Համմիկի հազար ու մեկ քողարկումների մասին···

— Թողնենք այս վերտուրամարտը և անցնենք գործի·— քեզ սպասում է մանրադիտակը,— իսկ ինձ փորձաղաշարը··· Մի քան մխային կուզեյի նկատել, հարկելի պրոֆեսորացու, վոր այս բոլոր հոդվածներն սկսած ու թողած են· յեթե այդպես չարունակվես, ամբողջ կյանքդ կվատ կմնա···

— Լավ պտուղն ուշ է հասնում···

— Անուրջնե՛ր և կամուրջնե՛ր··· Թևերդ շատ ես լայն արձակում, բայց մոռանում ես, վոր ամենաուշ հասնող պտուղը դկեռն է, վորի հասնելը միաժամանակ և փտել է նշանակում···

— Ճաշակիդ ի՞նչ ասեմ, յեղեմական պտուղները թողած, ընկել ես դկեռի յետևից:

Յեղեմական պտուղները բավական վտանգավոր են քեզ համար,— ասաց Համմիկը ժպտալով ու դուրս գնաց:

Գուրգենը շարժեց գլուխը, նույնպես ժպտալով· նա մի քանի րոպե լուռ քայլում եր, ապա հանեց պորտֆելից իր հոդվածները, ու սկսեց գրել:

«Վորքա՜ն սղջիկներ կային քաղաքում, վորոնք այնպես թեթև եյին նայում իրենց փաղաքշանքներին, իսկ ինձ վիճակվել է մի ինչ վոր հանելուկային կարծրություն··· Մեկ տեսնես մոտ մոտերիմ է թվում, մեկ էլ հանկարծ դառնում է խուսափուկ՝ սրնդիկի նման··· վո՞րտեղ է վերջապես Համմիկի «կվինտ-էսսենցիան···»

Այստեղ էլ տերբերիս հասավ, իմացավ իմ կարծիքը սերո մասին— վոր յես չեմ ընդունում սերը··· Այդպես՝ որ-որի վրա յես

Մերկանում եմ իմ պատմիչքներից, իսկ Հասմիկը մնում է անլուծելի մի «սֆինքս...»

Նա դադարեց դրելուց ու դլուխը ձեռքերի մեջ առած, նայում եր տեսրին: Ապա վեր թռավ, ինքն իրեն ասելով— «Եհ, ի՞նչ եմ պատճառաբանելու հետևից ընկել... աչխատա՛նք, դիտությո՛ւն, սոցիալիստական շինարարություն...»

Ու նորից վրա ընկավ իր մանրադիտակին:

Իսկ Հասմիկն այդ ժամանակ դնում եր դեպի փորձադաշտ արևակեզ ճամբով ու մոտենում Գուրգենի մասին.— «Ճիշտ է, նա արդեն ընտելացել է իր բնավորությանը, և դուռ ընկերական հարաբերությունների սահմանից դուրս չի գալիս: Բայց նրա դիտողությունները լսելած են. թվում է, թե ամեն րոպե պատրաստ է արտահայտվելու... իսկ յեթե այդ լինի, ի՞նչպես կլինի, միթե իր հոդվածի «չքողարկված» ձևով... և ի՞նչ կհետևի այդ բոլորին...»

«Յերկու կին են պայքարում իմ մեջ. մեկը չարունակ ճըղատում է մոտ լինել Գուրգենին, «քնքուշ մոմենտներ» է վրնտռում, իսկ մյուսը խոժոռած դեմքով հետ է ճղում նրան, հիշեցնելով ինչ վոր անդրդվելի պահանջներ»:

Նա անցնում եր դաշտով, տարօրինակ յերևակայական վեճի բռնված Գուրգենի հետ, ճգնում եր համոզել նրան ինչ վոր բանի՝ Հասմիկի համար կարևոր հարցում, վորը Գուրգենը կարծես դժվարությամբ եր հասկանում:

Մտաբերի խշխշոցը նրան սթափեցրեց. կանգ առավ, կարծելով թե ոճ է, բայց խակուն նկատեց, վոր լրտուկ է անցնում տան դալարումներով: Վրա վազեց բռնեց ու հետո յերկու ձեռքով պինդ պահելով սկսեց դիտել:

«Յեթե դու թույն ունենայիր, անշուշտ մարդիկ քեզ ավելի կհարգեին» ասում եր մտքում Հասմիկը, դիտելով լրտուկի անողնական, աղերսող դեմքը— «ոճի նման քո մեջ էլ կաճեցնեին իմաստության խորհրդանիշը: Յեվայի և ամբողջ մարդկության մեղքի սկզբնապատճառը կհամարեին, և վոչ թե անպատկառ ձեռներով կշոշափեին քեզ»:

Լրտուկի հնարավորս ուժեղացող չարժումներից տարուբերվելով, Հասմիկը բաց թողեց նրան ու չարունակեց ճանապարհը:

«Ձե՛, Գուրգեն,— չարունակում եր նա իր վեճը,— յես մար-

մին ու հաճույք չեմ, յես ուրիշ եմ... յես «փոքր ինչ թուլն եմ քեզ համար...»

«Փոքր ինչ թուլն անհրաժեշտ է նրա՝ տղամարդու մեջ նստած հին կենցաղի մնացորդների դեմ... չե՛, մինչև նա չբե-տակցի իմ մեջ նստած յերկրորդ կնոջ, յես նրա մտերիմը չեմ լինելու»:

Նա մտավ վորձաղաչան ու սկսեց իր սովորական դիտողու-թյուններըը: Բայց հազիվ մի ուսս րոպե՝ եր անցել, յերբ նրա ականջին հասավ խոսակցության ձայն: Հետ նայելով, նա նկա-տեց Միքայելին ու Գուրգենին, վորոնք միասին խոսելով մոտե-նում եյին:

— Վողջուններս, ընկեր Համիկ,— բարձրաձայն կանչեց Միքայելը:

— Բարև.

— Ի՞նչպես ես, դո՞հ ես մեր խորհանոեսությունից:

— Գոհ եմ, մանավանդ նրա համար, վոր այստեղ շատ բան կա անելու:

— Ա՛յ, ի՛նչ հրաշալի խոսք եմ լսում... Բայց չմոռանաք, վոր մեյան ձեր պրակտիկայով չպիտի սահմանափակվեք. մենք ուրիշ գործ էլ ունենք անելու.— մոտակա գյուղերից մեկում պետք է կոլխոզ հիմնենք, մենք նրա չեֆն ենք. չգիտեմ Գուր-գենն ասել է՞, թե չե:

— Ասել է, և յես էլ իմ պատրաստակամությունն եմ հայտ-նել:

— Լա՛վ, շատ լավ. ուրեմն ընկերներ, դուք յերկուսով կլի-նեք ավանդապետը, իսկ յես էլ կղամ ձեր յետևից, վորպես արի-յերդարդ. նախապատրաստական աշխատանքները վերջացնելուց հետո կդիմենք գործի...

Սոցարշավի յեռյակը հայտարարում եմ կազմված,— ասաց Գուրգենը,— վորովհետև կայացած է:

— Սարքվում եմ,— ասաց Համիկը:

— Ցնս էլ հատատում եմ գաշտային կինիքով...,— ասաց Միքայելը.— իսկ այժմ, ընկերնե՛ր, սկսենք մեր վորձաղաչոի ուսումնասիրությունը...

## VI

Աշունն մի չարաթ եր, Գուրգենն ու Համլիկը բանակցություններ էին մղում գյուղի ղեկավար ընկերների հետ,— կոլտնտեսություն հիմնելու առթիվ: Նրանք չտապում էին, իսկ Մկքայելը չարունակ հետաձգում եր, պատճառ բռնելով, թե պետք նախորոք ուսումնասիրել գյուղի պայմանները, բայց նրա մտքն ուրիշ եր,— նա ուզում եր կազմակերպել «արշավը» գյուղատնտեսական մեքենաների ուղեկցությամբ, որոնք նորոգելու կարիք ունեյին: Այս կետի մասին նա չեր հայտնում Գուրգենին ու Համլիկին, ցանկանալով նրանց հանկարծակի բերել մեքենաների հանդիսավոր յերթով:

Վերջապես Մկքայելը հայտնեց, որ կարելի յե սկսել «արշավը»: Այդ որը Գուրգենն ու Համլիկն արտակարգ հուզման մեջ եյին. չարունակ ոգևորում եյին ամեն մի առթիվ, որ թողնեն գործն ու խոսեն կոլխոզի մասին:

Նրանք յերկուսով գնում էին խորհանեստությունից ճաշելու հետո: Վորոշված եր ժողով հրավիրել յերեկոյան: Մկքայելը պետք գար առանձին:

Ձուլ որ եր. թեթև քամին ծփում եր հասած արտերի վրայով, հետը բերելով թարմ ծղոտի բուրմունքը:

— Ի՞նչ ես վազում, Գո՛ւրգեն,— ասաց Համլիկը ծխածելով.— կարծես հրդեհի յես չտապում:

— Իսկ դու, ի՞նչու յես ծխծղում. դու ավելի յես կամածելի:

— Յես նայում եյի յեռևիցդ ու մտածում, թե. բնավորություն վո՞ր գծերը կծաղրեն ապագայում, յերբ պրոֆեսոր կըդառնաս:

— Ո՛հո՛, դեռ պրոֆեսոր չդառած արդեն ավանտով ծալբում ե՞ս:

— Ի՞նչ կա վոր. դա մի սովորական յերևույթ ե. ամեն մարդ ծխծղելի յե դառնում, յերբ նրա բնավորության գծերն ընդհանուրի անփականություն են դառնում:

— Ե՛հ, թող հաջողվի պրոֆեսոր դառնալ, համաձայն եմ մի քիչ էլ ուսանողների բերանում ծամոն դառնալ. իսկ յեթե Համլիկը լիներ ուսանողների մեջ, իակի յել չեյի նեղանալ:

— Ինչո՞ւ դեպի ինձ այդպիսի բացառություն:

— Դեպի քեզ յես առանձին վերաբերմունք ունեմ...

— Ջես էլ նկատում, որ քայլերդ քեզ հակասում են. չքնաղ առաջ ես ընկնում, թողնում ես ինձ միայնակ...

— Այո՛, ընկեր Գուրգենի քայլերն են հակասում, իսկ ընկեր Համլիկի լեզուն...

— Դա շատ համարձակ հիպոթեզ է,— յես էլ քո վերաբերմամբ մի հիպոթեզ ունեմ, որ ավելի մոտ է ճշմարտության:

— Այսի՞նքն:

—Ինձ թվում է, որ ընկեր Գուրգենը, չնայած իրեն նոր ու նորագույն մարդ է համարում, դեռ չի ազատագրվել հին կենցաղի հոգեբանությունից...

«Փորձում է»,— անցավ Գուրգենի մտքով:

— Ինչ վատ պահած բաներ ես դուրս բերում,— ասաց Գուրգենը.— անսպասելի դյուտեր ես անում.— յեթե քո ասածը ճիշտ է, նա վերաբերում է ընդհանուրին, ուրեմն կինը նույնքան յուճողված է հին կենցաղով, որքան և տղամարդը:

— Բայց պատմը պիտի սկսել տղամարդուց, որպես նախկինի իշխողից... մի բանաստեղծի ասելով, կինը վոչ միայն բնության ստեղծածն է, այլ և տղամարդու յերևակայության... ա՞ա այդ «յերևակայող» տղամարդը տեսականում կնոջը դարձրել է մի «յերկնային» եյակ, իսկ իրականում— միայն իր հավելվածը...

— Այո, առաջ այդպես եր, իսկ ա՞յժմ:

— Իսկ այժմ յենթադիտակցական ծալքերում դեռ չարունակվում է նախկին «հավելվածային» վերաբերմունքը...

— Ուրեմն յես, որպես տղամարդ, մահացու մեղքե՞ր եմ ունեցել... Իսկ ինձ թվում է ընդհակառակը, որ դու տարված ես հիվանդագին ինքնասիրությամբ,— տղամարդու ամեն մի խոսքը քեզ թվում է կնոջ իրավունքների խախտում... Դա նշանակում է, որ դու հոգեբանորեն դեռ չես մարսել կնոջ և տղամարդու հավասարությունն ու ընկել ես հակառակ ծայրահեղության մեջ, ստեղծելով կնոջ մասին մի ուռճացած կարծիք...

— Հրաշալի ես վիճաբանում Գուրգեն... ուղղակի հարճակումներս հետ ես տալիս, ինձ մեղադրում ես, փոխանակ արդարանալու...

— Իմ ասածը զուտ ճշմարտություն է,— յեթե առաջ կար

նեղ—տղամարդկային մոտեցում, այժմ հանճինս Հասմիկի արտահայտվում է նեղ—կանացի մոտեցումը. պետք է ընդունենք, որ կինը, իր յենթադիտակցական ծալքերի շնորհիվ, դեռևս չի կարողանում հարմոնիզացիայի յենթարկել իր զգացումներն ու ընկերական հարաբերությունները:

— Ոհո՛, դուռ դեռ պրոֆեսոր չդառած, արդեն կեղծ վկայություններ ես տալիս դիտության մասին:

Երանց վեճն ընդհատեց յեռևից յեկող ավտոմոբիլի թավ ու յերկար սուլոցը: Երանք փութկոտ քաշվեցին՝ ճանապարհի մի կողմը, ու յերկուսն էլ հանկարծ բացականչեցին.

— Ընկեր Միքայելն է...

— Ավտո—ապրանքատարը դալիս եր, յեռևից քաշելով կալեռու մեքենան. ապա դալիս եր տրակտորը, վորը քաշում եր հնձելու մեքենան:

Ավտոյի շոֆերի կողքին նստած եր ընկեր Միքայելը:

— Վա՛հ, ա՛յ քեզ անակնալ. ես լինչ մեքենայական յերթ եք կազմակերպել, ընկեր Միքայել,— ասաց Գուրգենը մոտենալով ավտոյին, յերբ նա կանդ առավ:

— Սա մեր առցարշավի արտիլերիան է,— ասաց Միքայելը,— առանց այս ծանրակշիռ արդումենտների ձեր ենտուզիազմը կարող է ջուր կտրել.

— Դա ի՞նչ աջ թևքումային մարքեր են:

— Թող կոլխոզը դլուխ դա, հետո ուզում ես աջ թևքման մեջ մեղադրիր, ուզում ես— ձախ... իսկ դու այն ասա, ի՞նչպես ե ձեր ենտուզիազմը...

— Մեր ենտուզիա՞զմը.. ամբողջ ժամանակ վեճ մեջ եյինք:

— Ի՞նչի մասին:

— Նոր կինոջ մասին:

— Կոլխոզո՞ւմ:

— Վոչ, ընդհանրապես:

— Ո՛, ամոթ ենտուզիաստներին. դա ուղղակի դավաճանություն է. չո՛ւտ արեք, բանվոր մարք, թե չե բաններդ բուրդ է... դե՛, նստեք ավտոն. տեմպերից չեղված մարդկանց մեքենան կչտակի...

— Ընկեր Միքայել, հակաճառելու չաս բան ունեմ, բայց առայժմ հետաձգում եմ,— ասաց Գուրգենը:

Գուրգենն ու Համլիկը նստեցին ավտոն: Մեքենան նորից չալժվեց, խուլ աղմուկ հանելով:

Նրանք էլ չկարողացան խոսել, վորովհետև ավտոն ինչ վոր փոս ընկավ, սաստիկ ցնցեց նրանց: Ցերկուսն էլ սկսեցին լրջքալ:

Մինչև գյուղ հասնելը տերտեր տրամադրությունը հեռացել եր նրանց:

## VII

Արտասովոր յերթը նկատելով, գյուղի յերեխաները խումբ-խումբ վազում եյին մեքենաների հետևից, իրենց ճչերով ուժեղացնելով աղմուկը: Իրիկնադեմի յերկար ստվերներում նստած հատ ու կենտ ծերունիները վեր եյին կենում տեղերից ու զարմանքով նայում, ապա դանդաղ քայլերով դիմում դեպի գյուղի կենտրոնը,— իմանալու, թե «ի՞նչ խաթար է»· Ջրի դնացող կանայք պլշած, չեղ հայացքով դիտում եյին նորեկներին:

Մեքենաները կանգ առան գյուղի հրապարակում, դպրոցի առաջ: Իջնելուն պես Միքայելը մարդ ուղարկեց գյուղխորհրդի նախագահի յետևից, ապա նկատելով, վոր հետաքրքրվող գյուղացիները հետզհետե խմբվում են իր շուրջը, սկսեց բացատրություններ տալ մեքենաների մասին:

Արևը մայր եր մտնում: Ամառվա յերեկոյի այն ժամերն եյին, յերբ ցերեկվա չոգից թմրած գյուղը նորից արթնանում, աշխուժանում է: Կանայք չտապ ջուր եյին կրում կժերով, կամ ավելում բակերը· փողոցներով անցնում եյին կանաչ խոտ բարձած ձիաներն ու եշերը, շուրջը տարածելով նոր հնձած խոտի թարմ բուրմունքը:

Գուրգենն ու Համլիկը անց ու դարձ եյին անում մոտակա նեղ փողոցներով, դիտելով տների բակերը: Մի տան առաջ նրանք կանգ առան: Աչխատանքից նոր վերադարձած գյուղացին յերկու ձեռով բռնած իր փոքրիկ յերեխային, վեր-վեր եր թռցնում, մեծ զվարճություն պատճառելով նրան: Ցերեխան անընդհատ քրքջում եր, ու ձեռները չարժում: Կինը քչքչացնելով ջուր

եր ածում կժից պղնձի մեջ, աղջիկն ավելում եր բակը, սաստիկ փոշի բարձրացնելով, իսկ պառավ նանը կովն եր կթում:

— Ահա քեզ մանավոր սեվականության իդիլլիան,— ասաց Գուրգենը— սեվական տուն, սեվական պարտեզ ու այգի, սեվական կով, և այլ բարիքներ... միանգամայն կարելի յե հիանալ...

— Բայց ավա՛ղ, այդ իդիլլիան իր վերջալույսն ե ապրում... մի նայի՛ր, յերեխան լավիկն ե, չե՞:

— Հենց այդ լավիկն ել մեծանալուն պես քար ե ձգելու մանավոր սեվականության դլխին:

Նկատելով նորեկներին, գյուղացին դադարեց յերեխայի հետ խաղալուց ու զարմացած նայում եր նրանց, կարծելով թե իրեն մոտ են յեկել: Անհարմարություն զդալով այդ անհանգիստ հայացքից, Գուրգենն ու Համլիկը հեռացան, վերադառնալով նորից դեպի հրապարակը:

Այնտեղ արդեն բազմություն էր լցվել եր: Տիրում եր մի ժխոր, որի լեյտ-մոտիվը կազմում եր ավտոյի ու տրակտորի խուլ դղրդոցը: Միքայելը դիտմամբ չարժման մեջ եր պահում նրանց՝ «արտիլերիային» հաղթական տոն տալու համար:

Վերջապես յեկավ գյուղխորհրդի նախագահը,— մոտ յերեսուն տարեկան, դեմքն արևից այրված ու անխնամ մազակալած. նա ամոթխած բարևեց Գուրգենին ու Համլիկին, ապա ամբոխը ճեղքելով, մոտեցավ Միքայելին, որն այդ րոպեին բացատրում եր տրակտորի մասերը:

— Բա՛րև, բա՛րև,— բացականչեց Միքայելը, ձեռք տալով նախագահին.— ահա ինչպես տեսնում ես— յեկել ենք. ժամանակը կարճ ե, պիտի չուտով սկսենք ժողովը:

Ապա մի կողմ քաշելով նախագահին, հարցրեց ծանր ձայնով.

— Իմաց ես արե՞լ տղերանց. չքավորականների ժողով արել ե՞ս:

— Հա՛, ինչպես չե, հիմա ել յես ինքս եմ ասել ամենքին:

Շուտով յեկան գյուղի ղեկավար ընկերներն ու բարևելով նորեկներին, շրջապատեցին նրանց: Գյուղացիներն ուշադրությամբ դիտում, շոշափում եյին մեքենաները, կամ անկարդ խմբվելով, սպասողական հայացքով նայում եյին հյուրերին, յուծը ձայնով զանազան նկատողություններ անելով իրար մեջ:

Գյուղի քահանան թաղնվել եր հասա չինարու յետևն ու պաղտա-պողի դիտում եր ամեն ինչ:

— Հը, ի՞նչպես ե մեր սոցիալիստական սեկտորի տրամադրությունը,— հարցրեց Գուրգենը բջիջի քարտուղարին:

— Վա՛չինչ, լավ ե— պատասխանեց քարտուղարը, իր նիհար դեմքի կասկածոտ հայացքը հառելով Գուրգենի վրա, կարծես ի-մանալու համար, թե ինչ մտքով ե հարցնում:

Փոքր ինչ զրուցելուց հետո, դյուղխորհրդի նախագահն ա-սաց.

— Դե՛, ընկերներ, կարող եք սկսել ժողովը:

Նրանք ներս մտան զպրոցի դահլիճն ու չարվեցին բեմի սե-ղանի չուրջը: Մի խումբ դյուղացիներ չտասով ներս գնացին նրանց յետևից ու զբավեցին առաջին կարգերի նստարանները: Մյուսներն ավելի դանդաղ, հետզհետե լցվեցին դահլիճը, բեր-լով իրենց հետ զրսի աղմուկն ու դաշտային աշխատանքի քրտնքի հոտը, որով ծծված եյին նրանց շորերը: Նստարանների վրա այլևս տեղ չկար. նոր յեկողները խմբվում եյին դահլիճի յետևը, կամ միջանցքներում:

Աղմուկը հետզհետե կենտրոնանում եր մի կետում, որտեղ յերկու խումբ վեճի եյին բռնվել իրար հետ: Դրանից լսվում եր մեքենաների աղմուկը:

Լուսնի խոշոր բոլորակը յերևաց սարերի յետևից ու յերե-կոյան մթնաշաղն աննկատելի կերպով մթագավ նրա մեղմ լույսի հետ: Բակում ժլժլում եյին յերեխաները, յերբեմն մագլցելով պատուհանների վանդակներով ու հետաքրքիր հայացքներ նե-տելով դահլիճի ներսը: Պատուհանների տակ խմբվել եյին դյուղի կանայք ու ճչում, աղմկում եյին տարօրինակ իրարանցման մեջ:

Լսվեց զանգի ձայնը: Դահլիճը ներս բերին յերկու լամպ, մեկը դրին բեմի սեղանի վրա, մյուսը կախեցին պատի մեջտեղ: Նախագահը կանգնած փոքր ինչ սպասեց, դիտելով իր սովոր աչքերով դիմացի հասարակությունը, մտքում դուշակելով, թե ի՞նչ յելք կստանա ժողովը, ապա սկսեց փոքր ինչ չփոթվելով հյուրերի ներկայությունից.

— Ընկերնե՛ր, ձեզ բոլորիդ հայտնի յե, որ ամեն տեղ հիմնում են կոլեկտիվ տնտեսություններ, իսկ մեր դյուղը հետ ե մնացել եղ ծրագրից. պատճառը նա յե, որ մեզ մոտ մի շարք կուլակ էլեմենտ–տարրերն իրենց մութ պրոպագանդայով մղո-

բեղնում են չքավոր ու միջակ գյուղացիներին, վոր նրանք հետ կենան կուլակներից: Հիմի ի՞նչ և մեր անելիքը՝ մենք պետք և առաջ տանենք սոց-շինարարության գիծը, պետք և միջոցներ ձեռք առնենք եղ մուտ ելնմենա տարրերի դեմ, ու ասենք չքավորներին ու միջակներին. ահա այս և մեր խնկական խորհրդային ծրագիրը. ես հարցում աջակցելու համար մեզ մոտ հյուր են եկել ընկերները. նրանք ողնելու յեն մեզ վոչ միայն իրենց խորհուրդներով, այլև գործով: Ընկերները կբացատրեն մեզ կոլխոզի նշանակությունը: Այժմ կխոսի ընկեր Գուրգենը:

Գուրգենը, հանկարծակի գալով իրեն անունը տալուց, տեղից վեր թռավ, անպատասելի հարցից շփոթված աչակերտի նման. մի քանի վայրկյան նա հայացքն ուղղեց ունկնդիրների վրա, ու ձեռքով անդիտակցաբար շոյելով յերկար մազերը, սկսեց.

— Ընկերնե՛ր, մենք յեկել ենք ձեզ մոտ նրանից անելու այն սոցիալիստական շինարարությանը, վոր ծավալվում և մեր ընդարձակ Միության մեջ: Խորհրդային իշխանության առաջին տրերից ամենքի համար պիտի պարզ լիներ, վոր պրոլետարիատի հաղթանակը նշանակում և սոցիալիզմի հաղթանակ, ու յեթե այդ սոցիալիզմի յերթը մինչև այժմ հապաղել և գյուղացիական տեկտորում, դրա պատճառն այն և, վոր պրոլետարիատի լծակիցը՝ գյուղացին, իր հետամնացության պատճառով չի կարողացել մի անդամից թոռի տալ իրենից հին կյանքի ժառանգությունը: Իսկ այստեղ արդեն մեր չքավոր ու միջակ գյուղացիությունը գիտակցում և իրեն շահերը, և գյուղի սոցիալիստական շինարարության հենարանն և կազմում: Բայց մենք դեռևս ունենք դասակարգային թշնամիները— կուլակները, ունենք և անհատները, չքավոր ու միջակ գյուղացիների մեջ, վորոնք իրենց անդիտակցության շնորհիվ յենթարկվում են նրանց: Ինչ վերաբերվում և կուլակներին, մենք գիտենք, վոր հետզհետե ցամաքեցնելով շահագործման այն հյութերը, վորոնք նրանց կյանք են տալիս, կդարձնենք նրանց արհամարհելի մի ուժ. իսկ անդիտակից չքավորներին ու միջակներին դեռևս պիտի անդուլ համոզենք խոսքով ու գործով, ցույց տանք իրենց դասակարգային իսկական ուղին...

Հետզհետե խորանալով հարցի մեջ, Գուրգենը կանգ առավ կոլտնտեսության նշանակության վրա, պարզեց նրա գերազանց հանրոգուտ ուժը թե տնտեսական, թե կուլտուրական առաջարկը-

ներում: Ապա նա դիմեց բատրակներին ու չքավորներին, հրավիրելով նրանց հիմք դնել կոլխոզին, ու հետզհետե լայնացնելով իրենց շարքերը, ամբողջ գյուղը դարձնել կոլտնտեսության մի խոշոր բջիջ:

Թնդացող ծափահարությունները վոգևորեցին Գուրգենին. ինքնամոռացության մեջ, նա ժպտաց իր կողքին նստած Հասմիկին, թաչվինակով սրբեց ճակատի քրտինքը: Հասմիկի վոխադարձ ժպիտը նրան ավելի թևավորեց. այդ ժպիտի մեջ նա տեսնում եր քաջալերում, և վոր դլխավորն է՝ մի նոր մտերմություն: Մի պահ նա կարծեց, թե իր ճառի չնորհիվ կոլխոզի հաջողությունն ապահովված է, բայց հենց վոր ծափահարությունները դադարեցին, մեկ-մեկու յետևից լսվեցին հիասթափիչ ձայները...

— Մեզ պե՛տք չի կոլխոզը... ո՛չդում չենք...

Նախագահը խեթ նայեց հետևի շարքերին ու զանգահարելուց հետո ձայն տվեց Միքայելին:

— Ընկերնե՛ր, նախագահը ձեզ բացատրեց մեր գալու նպատակը, ասաց Միքայելը,— մտերմական ղրույցի տոն տալով իր ձայնին,— ճիշտ է, մենք յեկել ենք ձեզ ոգնելու, բայց մի ուրիշ կերպով.— մենք ուզում ենք մի ենպես հիմնավոր գործ բռնենք, վոր մի անգամից ձեր ձեռքից բռնի, վեր քաշի: Շատ անգամ եմ ձեզանից լսել, թե ոանչպարությունը մենակ մարդու գործ չե, բայց ի՞նչ կասեք, յեթե ձեր ուզած չորս-հինգ մարդու տեղ հարյուրավոր մարդիկ միասին աշխատեն. ահա ես կոլեկտիվ գործն է, վոր ձեզ թև կտա, ձեր ուժը շատ և շատ անգամ կավելացնի...

Միքայելն սկսեց բացատրել կոլեկտիվի առավելությունները անհատ տնտեսության հանդեպ, ապա անցավ մեքենաներին, որինակներով ու թվերով բացատրելով մարդու և մեքենաների աշխատանքի տարբերությունը:

— Հիմի յես ձեզ հարց եմ տալիս,— շարունակեց նա,— ուզո՞ւմ եք, վոր ձեր աշխատանքը մեկի տեղ տասն անգամ ավելի արդյունք տա:

— Ուզում ենք,— վրա տվավ մոտիկ նստածների մի խմբակ:

— Ուզում ե՞ք ձեր աշխատանքի տերը լինել, ազատվել կուլակների շահագործումից:

— Ուզում ենք,— նորից լսվեց նույն խմբակի կողմից, բայց իսկույն այս ու այն կողմից ձայն տվին...

— Չե՛նք ուզում կոլխոզը... մեզ հարկա՛վոր չի...

Ձայները հետզհետե սաստկացան: Նախագահը չարունակ զանգահարում եր, բայց չեյլին հանդարտվում:

Յերբ աղմուկը վոքը լինչ մեղմացավ, Միքայելը բարձր ձայնով առաջարկեց.

— Ընկերներ, ձեր միջից մինն ասում է՝ ուզում ենք, մյուսն ասում է՝ չենք ուզում, բայց դրանը լղալվելով չի, բանը համոզելով է. թող եղ հակառակները բացատրեն մեզ, թե ի՞նչու չեն ուզում. կարելի յե թե նրանք մեզ համոզեն...

Գուբրենը ջղայնորեն ձեռքը չարժեց ու ասաց Համիկի ականջին.

— Ելի ընկեր Միքայելն իր հին մեթոդը գործադրեց. հիմի ամեն լինչ չիլափլալ կդառնա:

Դրան աղմուկն սկսեց սաստկանալ, ու բոլորի ուշադրությունը գրավեց. խառը ձայներով կանայք ու յերեխաները կանչում եյին.

— Չե՛նք ուզում կոլխոզ...

Շուտով կանայք խմբով ներս մտան, հետևի չարքերի մոտ վոքը լինչ կանգ առան ու սկսեցին ճլճլալ, ապա առաջ անցան ծանր քայլերով, ու կանդնեցին բեմի առաջ, անկարգ խմբվելով: Նոթերը կլուսած, ապառնալի հայացքով, նրանք դլուխները սովրականից ավելի բարձր եյին պահում, բայց խուսափելով դեմ առ դեմ նայելուց:

Նախագահը նկատեց խմբի մեջ իր կնոջ ու հազմունքից կարմրեց. սաստիկ զրգռումից նա կուզեր կնոջ ձեռքից բռնել ու դուրս քաշել դահլիճից, բայց գիտեր, վոր այդ անկարելի յե, ու այդ անկարողությունից տանջվում եր, ասես վշերի վրա յեր նստած: «Չե, եղ անզգամից պիտի բաժանվեմ,— մտածում եր նա,— ել համբերություն չկա. խայտառակ արավ ես ընկերներիդ առաջ»:

Նրան թվում եր, թե վոչ միայն գյուղի ընկերները, այլև նորեկները, գիտեն վոր իր կինը գիմացը կանգնած է:

Մի պառավ կնիկ նշանով մոտ կանչեց նախագահին ու քթկալը յետ քաշելով, ասաց.

— Սրտիդ մուրազը կատարվի,— բալաս,— վորդկերանցդ

բախտին աբժանանաս, մի հարցրու եղ քաղաքից յեկած տղերանց, մեր Համբարձումին յե՞րբ են բաց թողնելու. ես ա յերկու ամիս ա խաբար չկա...

— Ֆո գործն եսոեղ չի, նանի, պետք է դատախազին, պրո-կուրորին դիմես, ասաց նա կտրուկ ու ելի հետ դնաց իր տեղը:

Սակայն նանը չհամոզվեց ու ղլուխը տմբտմբացնելով քաշ-վեց մի կողմը:

Րոպեաչափ լռությունից հետո, նախագահը հարցրեց դեմքը խոժոռած:

— Ինչի՞ համար եք յեկել, ընկերներ:

Կանանցից մեկը, արդեն տարիքն առած մի կին, բարձրահա-սակ ու նիհար, վոսկրոտ դեմքով, առաջ յեկավ.

— Մենք ուզում չենք կոլխոզը. տարեք ձեր պրտկերես քա-ղաքի աղջկերանց նստեցրեք ենտեղ...

Համբիկը նրա ասածի վրա չխկնեց ու աչքերը խոնարհեց իր առաջի թղթերի վրա, ապա դարձնելով հայացքը Գուրգենի ժըպ-տացող դեմքին, ինքն ել սկսեց ժպտալ: Մյուսներն անհարմար դրության մեջ եյին:

Փոքր ինչ հանդիսավոր պատւզայից հետո, կինը յետ դարձ-րեց յերեսը, ու կարծես նշան տալով, նորից նայեց բեմի կողմը. մյուս կանայք վրա տվին իրար խառնվելով.

— Ո՛ւզում չենք կոլխոզը... տա՛րեք, ձեզ ըլի, չենք թող-նիլ...

Տիրեց սպասողական, ծանր լռություն. նախագահը, նկա-տելով, վոր ել չեն խոսում, ասաց, առանց նայելու նրանց վրա.

— Լավ, մենք կքննենք ձեր խնդիրը. դուք նստեցեք...

Բայց կանայք չնստեցին. նրանք վախ խմբով, համարյա իրար կպած, դուրս յեկան, նորից կանգ առնելով բոպեաչափ հետևի չարքերի մոտ ու սաղերի նման անկարգ ճչալով:

## VIII

Մի քայելից հետո խոսողը պիտի լիներ Համբիկը, բայց չըկո-ղ քարտուղարն առաջարկեց նրան դնալ բակը և պրոպագանդ մղել կանանց մեջ: Համբիկը վեր կացավ ու արագ քայլերով դուրս գնաց:

Դահլիճում, ընդհանուր աղմուկի մեջ մի քանի հոգի մատ էլին բարձրացրել, խոսք էլին խնդրում:

Գյուղի կուլակները չեն յեկել,— ասաց բջիջի քարտուղարը Դուբրովնի ականջին,— բայց նրանք իրենց տեղը ուղարկել են մի քանի մեջակ յենթակուլակներին: Հիմի նրանց ենք ձայն տալիս, վորպեսզի ողակի մեջ առնենք:

— Խոսքը պատկանում է ընկերը Հովակիմին,— ասաց նախագահը:

Տեղից սկսեց խոսել մի գյուղացի, խոշոր ու վոսկրոտ դեմքով, հագած թեպետ հին, բայց խնամքով պահած չուխան: Նա նայում էր թեք հայացքով դեպի աջ, իր լայն ու խիտ բոած սև մորուքը դուրս ցցած, կարծես նա բոլորի գլխների վերևից դիտում էր մեկին, վորը ժողովից դուրս էր նայած:

— Ենպես վոր մենք չնորհակալ ենք, վոր մտածում եք մեր մասին. բայց մեզ հարկավոր չի կոլխոզը: Որինակի համար ասենք, յես աշխատավոր մարդ եմ, առավոտը վաղ, մութը-մութը վեր եմ կենում, գնում գործի. իսկ մեր մեջ ենպես թամբալներ կան, որը ճաշ ա դառնում, նոր են աչքերը սրսրում, վեր կենում: Հիմի յեթե բերենք իրար խառնենք թամբալին ու աշխատավորին, նրանց ունեցածը հավասարեցնենք, ի՞նչ դուրս կգա. են դուրս կգա, վոր եչը կդատի ձին կուտի. եղ կոլխոզը վոր կա, թամբալների համար ա. դրանից մենակ խանգարմունք առաջ կգա.— թամբալը չի լավանա, իսկ են լավի, աշխատողի ձեռները ել կթուլանան.—նա յել կասի— ինչի՞ յեմ չարչարվում ուրիշի համար: Հիմի իմ ասելն են ա, վոր թողնք ամեն մարդ իրեն տան, իրեն ունեցածին տեր ըլի, են ժամանակ ամեն բան լավ կդնա...

Հանկարծ մեկը դիլ ձայնով նրա խոսքը կտրեց.

— Եդ վո՞նց ա, յերբ յես քու բաժրակն եյի, յես քանում եյի, դու մոխկ եյիր անում, թամբալը դու չեյիր, ուրիշն եր... Թե կուզես թամբալը նա յա, ով վոր ուրիշի աշխատանքով ա ապրում:

Գյուղացին լայն յերեսը դարձրեց նրա կողմը, ուզեց ինչ վոր ասի, բայց նրա ձայնը խլացրին, սկսեցին ամեն կողմից վրա տալ նկատողություններով.

— Բա վեր մանեթին մանեթ չահ եյիր առնո՞ւմ, միտը չէ՞:

— Մշակի հախը վո՞նց եյիր կտրում...

Գյուղացին նկատելով, վոր իրեն բուրդը գզելու չեն, ձեռնտու համարեց լռել ու նստեց, տապ արավ: Բայց այդ ել չոդ-ննց-դուրս յեկավ խոսելու իր նախկին բատրակ Ցերվանդը:

— Ընկերներ,— ասաց նա.— եստեղ մեզ ասում են թե կոլխոզ հարկավոր չի. բայց ո՞վքեր են ասողները.— յենթակուլակները, կուլակի մարդիկ. կուլակների համար, ի՞նչ ասել կուզի, չի հարկավոր վոչ կոլխոզ, վոչ ել խորհրդային իշխանություն. դրանց համար միայն հարկավոր ա, վոր ամեն բան մնա իր առաջվա տեղը,— վոր իրանք տեր ըլեն, մենք նոքար. բայց եդ հին դուլրն անցավ: Ձեզ համար կոլխոզը մահ ա, դնացեք ձեր դլխներին վայ տվեք, իսկ մենք չքավորներս ու բատրակներս ուզում ենք, վոր կոլխոզ լինի, և մեր ուզածն ել կանենք...

Նրա խոսելու վրա հետևի չարքերից ձայն տվին.

— Եդ խելքով միշտ չքավոր կմնաս...

— Շա՛տ ա հասկանում, խելքին զոռ ա տալիս...

— Փիլիսոփա յա դառել դլխներիս:

Ցերվանդը խիտ հոնքերը խոժոռած, իր տեղից արհամարհոտ հայացքով նայեց հետևի չարքերին, ու ասաց հեգնող չեշտով.

— Ինչքան ուզում եք վոռնացեք, ձեր հայ-հայը դնացել ա, վայ-վայը մնացել...

Ադմուկը դեռ չեր դադարել, յերբ բեմին մոտ յեկավ մի դյուղացի, դլխաբաց, կեղտոտ քաթանի չապիկ հագած, բոբիկ վոտները տրեխների մեջ ձգած: Նա չապկի վղկապը բաց եր թողել, ցուցադրել իր կրծքի մալախոտի նման իրար կծկված մազերը: Հինգ մատը միանգամից բարձրացնելով, նա մոտենում եր. մեծ քիթը ցից արած, մանր աչքերը մեծամտորեն հառելով նախագահի վրա.

— Խոսք եմ ուզում, տալիս ե՞ք թե չե, բղավում եր նա այնպես բարձր, ասես մի սարից մյուսն եր ձայն տալիս:

— Խոսիր տեսնենք,—ասաց նախագահը, հազիվ զսպելով իր բարկությունը:

Դահլիճի ուշադրությունն անցավ խոսողի վրա, և աղմուկը դադարեց:

— Եդ վոր դուք ասում եք, թե կոլխոզ գրվեցիք, իսկի մեր գարդը քաշում ե՞ք թե չե. դուք քաղաքում լավ ուտում խմում եք, լավ հագնվում ու գալիս մեզ ասում, թե ընկեր-հընկերնե՛ր, յե՛կեք կոլխոզ մտեք. (այս ասելով նա նայեց Գուրգենի վրա).

ա՛յ, թե վոր դուք մեզ հնդեր եք, ձեր լավ, իստակ պինջակին ինձ տվեք, ձեր չաղ ոռճիկն էլ հետը, իսկ իմ մաշված, քրտնակեր չապիկը դուք հագեք, ա՛յ են ժամանակ կեկեք միասին աշխատենք, կոլխոզ սարքենք... Թե վոր եղ կոլեկտիվը լավ բան ա, ինչի՞ չենք քաղաքում սարքում. կեկել ենք դեղի վրա չոքել... չե՛, մենք էլ չենք ուզում կոլխոզ, մենք ուզում ենք ձեզ նման ուսել իմել ու սիրուն աղջկերանց հետ ման գալ...

— Դրուստ ա ասում,— բղավեցին հետևի չարքերից:

Նա կանգ առավ, ինքնատիպական հաղթական հայացքով հետ ու առաջ նայեց և թվում եր, թե էլի պիտի չարունակի, բայց նրա վրա կել Թաիվից ռեպլիկաների անձրևը.

— Սարո, եղ յո՞րը չքավոր գառար:

— Շորերը տանը Թողել ա, ակլոր ա կեկել:

— Մարդարի արտերը լավ Թունդ ա կալել...

Աղմուկը նորից բռնկվեց. կերկու կողմերը իրար մկրտում եյին կծու խոսքերով ու հայհոյանքով: Զանըտհարությը խառնվում եր աղմուկի հետ, վոչ մի ազդեցություն չանելով: Բեմի վրա՝ սեղանի չուրջը նստածները տեղերից վեր կացան: Միքայելը մոտեցավ բեմի ծայրին ու ձեռքերը տարածելով, դիմեց ժողովին.

— Ընկերներ, հանդարտվե՛ցեք:

Ձերը աղմուկը գաղարեց, Միքայելը, խոսք խնդրելով դիմեց Սարոյին, վորը դեռ կանգնած եր բեմի առաջ:

— Ընկեր, դու ասում ես, Թե քաղաքում կոլեկտիվ չկա. քաղաքում յեղել ե՞ս:

— Ձեղել եմ:

— Բա ենտեղ կոլեկտիվ չե՞ս տեսել:

— Չե՛:

— Բա գործարաններում, հիմնարկներում մարդիկ վո՞նց են աշխատում, մխա՞սին, Թե ջոկ-ջոկ:

Սարոն բերնբաց նայում եր Միքայելին:

— Ձես են եմ ասում,— նորից սկսեց նա իր ճղճղան ձայնով,— վոր եղ ձեր լավ շորերը տվեք մենք էլ հագնենք, ձեր ոռճիկն էլ հետը, են ժամանակ մխասին ընկեր կլինենք...

Հանկարծ Գուրգենը հանեց իր սպիտակ պիջակին ու ձգեց Սարոյի վրա:

Սարոն վերցրեց պլուջակն ու հանկարծակիի գալով, չդիտեր, ի՞նչ անի:

— Ա՛րա, յե՛տ առաբ, ա՛մոթ ա,— բղավեցին յեռևի շարքերից:

— Հիմի վո՞նց ես Սարո, դու լավ, քաղաքի պլուջակ ունես, յես չունեմ,— բղավեց առաջին շարքերի դյուզացիներից մեկը:

Սարոն չվարած մեկնեց պլուջակը նախապահին ու իսկույն դուրս գնաց դահլիճից:

Մինչ այդ, Միքայելը հետ նայելով Գուրգենին, գլխի շարժումով կչտամբում եր նրան, վորն ի պատասխան դրա ժպտում եր: Համբիկը ներս յեկավ կանանց ցրվելուց հետո, հոգնած, կնճռած ճակատով: Տեսնելով Գուրգենին պլուջակը հաղնելիս, նա չիմանալով պատճառը, ժպտաց. ապա վերցնելով մի թղթի կտոր, գրեց վրան ու պղուչությամբ գրեց Գուրգենի առաջ:

— «Հերոսությունից մինչև ծնծաղելին մի քայլ է, Գո՛ւրգեն...»

Գուրգենը նայեց Համբիկին ճնշված ժպտով, ապա նույն թղթի վրա պատասխանեց.

— Սա մի դեմագոգիա եր ի պատասխան ավելի մեծ դեմագոգիայի. հետո կպատմեմ...

Դահլիճի մյուս ծայրի աղմուկը հանկարծ դադարեց, և ուշադրությունը կենտրոնացավ նոր խոսողի վրա: Կանգնած եր Սարգիսը,— փոքրահասակ, սև բլուզի վրա պլուջակ հագած, խոլամանկ, փոքրիկ դեմքով մի մարդ, անհամաչափ յերկար սլիսակահեր բեղերով ու պսպղուն աչքերով: Նա վեր կացավ, փոքր ինչ պատպտա ավեց, իր խոսքն ավելի նշանակալից ու ծանրախոհ դարձնելու համար, ապա սկսեց.

— Դուք ուսումնական մարդիկ, յեկել եք մեզ լուսավորելու, խորհուրդներ տալու. բարով եք յեկել. մեր ասենք դուք բժիշկ եք, մենք ել հիվանդ. շատ բարի. լինչո՞վ եք մեզ բժշկելու. դուք ասում եք կոլխոզ մտեք, վոր առողջանաք, համե՛ցեք. դնանք տեսնենք կոլխոզն ի՞նչ ա.— Թե մարդ ա մտնում կոլխոզ, վչանում ա, թամբալանում, ձի, յեզն ա մտնում,— չարչարում են, կաշի ու վոսկոր դարձնում, հենց իմանաս մեջը սատանա յա նստած, վոր ամեն ինչ չուռ ա տալիս... Ձերը վոր բանն եղավ ա, պատճառն ի՞նչ ա, վոր դուք մեզ ենտեղ եք ուղարկում...

Զքավորների խմբից չեկ Վանին խոսքը կտրեց.

— Լավ ուստա յես քեզ համար, Սարգիս:

— Կոլխոզը փորվիդ վնաս ա,— ասաց Ջահել բատրակներից մեկը ծիծաղելով:

— Կոլխոզի սատանան դու յես, ել ո՞ւր ես ուրիշի վրա գցում,— ասաց բատրակ Ցերվանդը:

Սարգիսն ինչ վոր մրթմրթաց նրանց հասցեին, ու տեղից դուրս յեկավ: Կարծես նրա նշանին սպասելով, հեռվի շարքերը շարժվեցին, աշակերտական նստարանները հետ ու առաջ քաշելով, վերևի տախտակները թխթխկացնելով: Նրանք կանչում եյին բղավելով, գնալով դեպի մուտքը.

— Ջե՛նք ուզում... Ջե՛նք ուզում...

Բեմի վրա կանգնած եր բջիջի քարտուղարը և ուզում եր խոսել, բայց իրարանցումն ու աղմուկը հնարավորություն չեյին տալիս: Նրա նիհար, ջլուտ ու խոժռած դեմքը հառել եր հեռվի շարքերին. հաղիվ զսպելով իր ցասումը, նա սպասում եր այդ շարժման հետեվանքներին:

Ցերբ մնացողները կենտրոնացան առաջին նստարանների վրա, նախագահը զանգահարեց ու ասպա պատվիրեց դռները փակել: Բատրակ Ցերվանդը գնաց դուռը փակելու. այդ ժամանակ դրսից դռանը մոտեցավ տատանվող միջակներից մեկը, Ստեփանը:

— Ցերվա՞նդ, հը՛, ասում ես կոլխոզ մանե՞մ,— հարցրեց նա անկամ ձայնով:

Բայց Ցերվանդն ուշադրություն չդարձնելով նրա ասածին, դրնգալեն փակեց դուռն ու Ստեփանը, քիթը դիպցնելով, հետ քաշվեց ու դանդաղ քայլերով հեռացավ: Կուլակ Սարգիսը նկատելով, վոր նա ձեռքով բռնել է քիթը, ասաց հեգնանքով:

— Ա՛յ հախդ ա... ի՛նչ ունես կամրջումը, վոր վաթաթվես յափնջումը...

Բջիջի քարտուղարը աչք ածելով դահլիճում մնացողներին, ասաց ուժեղ և ինքնավստահ ձայնով.

— Ընկերնե՛ր, առաջին անգամը չե, վոր կուլակները վոտընձգություններ են անում մեր սոցիալիստական շինարարության դեմ. նրանք իրենց հեռվից տարան մի քանի անգիտակից

մլջակներին, բայց նրանց ջանքերը զուր են. մենք կշահենք դատակարգային թշնամուն... Ես դիմում եմ ձեզ, դիտակից բատրակներիդ, չքավորներիդ, զուք պիտի սերտ կպչեք կոլխոզին ու հետզհետե կլայնացնեք նրա շրջանը...

Բատրակ Յերվանդը ձայն խնդրեց:

— Ընկերնե՛ր, մեր ժողովից հետացան կոլխոզի հակառակ մարդիկ, յենթակուլակները, եղ ավելի լավ է, մեր թշնամիները դնացին: Ես առաջարկում եմ, ուղղակի ցուցակի մեջ գցենք, ով ուզում ա, թող կոլխոզի անդամ գրվի:

Առաջարկությունն ընդունվեց: Յերբ ցուցակագրեցին, պարզվեց, վոր անդամագրվել են 37 տնտեսություն:

— Ուրեմն, ընկերներ,— ասաց Միքայելը,— կարող եմ շնորհավորել ձեզ. կոլտնտեսության հիմքը գրված ե. այս անդամագրված ընկերներդ վաղը կգաք ժողովի. կբացատրենք ամեն ինչ, ցուցմունքները կտանք:

Կես ժամի չափ գործնական հարցերի շուրջը խորհրդակցելուց հետո, ժողովը ցրվեց:

— Այժմ, ընկեր Հասմիկ և ընկեր Գուրգեն, մենք կարող ենք գնալ,— առաջարկեց Միքայելը:

Նրանք նստեցին ապրանքատար ավտոն ու ճանապարհ ընկան դեպի խորհտնտեսությունը:

## IX

— Մինա՛ս, կամաց քշիր, թե չե ջարդ ու փշուր կանես մեզ,— դիմեց Միքայելը մեքենավարին:

Մինասը գանգատվեցրեց ավտոյի ընթացքը:

— Դե՛, ընկեր ենտուզիաստներ,— ասաց Միքայելը,— մեր գործը կարող ենք կիսով չափ հաջողված համարել. մեզ մնում ե միայն աշխատել միշտ վառ պահել կրակը...

— Բայց ընկեր Միքայել, դու այսոր իդեալիստական թեքման մեջ եյիր ընկել,— ասաց Գուրգենը:

— Ինչպե՞ս թե,— զարմացավ Միքայելը:

— Դու ուզում եյիր համոզել յենթակուլակներին. մոռանում եյիր փիլիսոփա Հոբբսի խոսքերը.— «յեթե մաթեմատիկական ճշմարտություններն մարդկանց չահերին հակառակ լինեյին, նրանք յերբեք չեյին ընդունվիլ...»

— Մի՞թե այդ տպավորությունն ստացար. իսկ չես ուզում էլի նրանց ասպարեզ քաշել, ճանճերին սպիտակի վրա նատեցնել, վորպեսզի չերեվան ու քննադատության տակ ընկնեն:

Բայց զարմանալի չե, Գուրգենը դու միշտ ինձ մեղադրում ես զանազան թեքումների մեջ, իսկ քոնը մոռանում ես. որինակ՝ հենց քո սլիզյակի պատմությունը...

— Ի՞նչ թեքում ես տեսնում դրա մեջ:

— Կարճ ասած— դա մի ջահելություն եր. դու չենթարկվեցիր պրովոկացիայի և քո վարմունքով ցույց տվիր, վոր նրանց տեսակետի վրա չես կանգնած: Բայց քանի վոր լավ վերջացավ, այնքան էլ չպետք է հարձակվել ընկեր Գուրգենի վրա:

— Ուրեմն չերկուսս էլ թեքման մեջ ընկանք. մնում է ընկեր Համլիկը:

— Ո՛չ, իմ բանը շատ դժվար եր— պատասխանեց Համլիկը. դուրսը կանայք ինձ պղում էլին, իսկ դուք ներսը հանդիստ նստած էլիք: Ի՞նչ սուտ լուրեր, ի՞նչ պրովոկացիա ասես, վոր առաջս չէլին դնում: Այնքան խոսեցի, վոր գլուխս դմբդմբում է: Բայց էլի վերջը կարողացա Փրոնտը պատռել և կանանց մի մասն իմ կողմը քաշեցի: Հենց վոր նրանց գեկավարուհիները նկատեցին այդ, իսկույն ցրվելու հրաման տվին, վախենալով, վոր մյուսներին էլ չհամոզեմ: Դե իհարկե, նրանց հավատն բերելը մի որվա բան չի, պետի յերկար ջանք թափել:

— Քանի ընկեր Համլիկն այստեղ է, հուսով եմ, այդ աշխատանքն էլ իր վրա կվերցնի,— ասաց Մկքայելը:

— Սրտեն վերցրել եմ վրաս, ու մինչև նպատակիս չհասնեմ, չեմ հանգստանալ:

Ժողովությունը զաղարեց ավտոմոբիլի կանգ առնելու պատճառով: Պարզվեց, վոր մեքենայի մեջ ինչ վոր փչացել է: Գուրգենն ու Համլիկը ոգտվեցին հանգամանքից, և չարունակեցին ճանապարհը վոտով, իսկ Մկքայելը մնաց:

Մկքայելն էլավ ավտոյից ու կանգնած նայում եր հեռացող զույգի հետևից, վորը լուսնի կաթնամշուշի մեջ մի առանձին խորհրդավորություն եր ստանում: Ու մի խառը զգացում եր գալիս մեջը.— նա և ուրախ եր, տեսնելով, ինչպես նոր կյանքի, նոր չինարարության համար նոր սերունդներ եր լծվում գործի եր թաղմ յեռանդով, ու միաժամանակ մի տխրություն եր գալիս մեջը, մի մտածում, թե ինքը դնացող, անցնող սերունդ է...

վորքան էլ ինքը համընթաց քայլում և նրանց հետ՝ այնուամենայնիվ լուսնի տակ անցնող չողչողուն ղուդի քայլերն ուրիշ են, նրանք ավանդարդ են, նրանք իրար ավելի լավ են հասկանում... և ի՞նչ խոսք, նրանք արդեն սիրահարված են նույնիսկ դուցե առանց դիտակցելու...

Ու մտքերը թռչում էին դեպի անցյալը. խուռն յերամով յելնում էին հիշողության մեջ իր թարմ տարինները, ընկերները, առաջին հեղափոխության հուզումնալից յելեվէջները... հիշում եր իր սիրած Ոլգային, այն անճնվեր աղջկան, վորը դալիս եր բանտն իրեն տեսնելու, և վորն այնպես զոհվեց հետագայում...

Նայում եր հեռացող ղուդին, վորը հեռվհետե լուծվում եր հեռվում, մշուշի մեջ ու խոսում անցյալի հետ. հին հույզերը նորոգվում էին, խռնվում մեջը, պղտորում աչքերը... ու կարծես քչելու համար իր շուրջը վխտացող անցյալի տավերնեերին, նա ձեռքով մի չարժում արավ, ու նայեց մեքենային. արդեն յերկրորդ անգամն եր տուլիչն իմացնում եր, վոր պատրաստ և գնալու:

Նա նորից նստեց ավտոն ու չարունակեց իր ճանապարհը:

Համիկն ու Գուրգենը քայլում էին լուռ: Համիկի մեջ մի կասկած անցավ, թե Միքայելը կարող եր իր մասին վոչ ցանկալի յենթադրություն անել, բայց նա դուրս վանեց այդ մտքերը. կանացի թուլությունն համարելով նրանց.— «ուրեմն յես էլ մի տավորական, թույլ ու վախկոտ կլին եմ...մտածում եր նա. իմ մեջ էլ և ապրում կաշկանդող հին կենցաղը, իսկ յես Գուրգենին էլ մեղադրում...»:

Գուրգենը նայում եր Համիկին, ու թվում եր նրան, թե այժմ ուրիշ կլին և իր հետ գնում. ինչ վոր փոխվել և նրա մեջ, վոր նա դժվարանում եր բնորոշել. նա զգում եր միայն, վոր ավելի մաերիմ և իրեն, վոր ինչ վոր մեծ կապ կա իրենց մեջ, մի մեծ գործ, վորի համեպ իր բոլոր անցյալ զեղումները փոքրիկ են, յերկրորդական:

Բայց և այնպես մնում եր լարված դրության մեջ. նա չարունակ ձգտում եր Համիկի թևը մտնել, իսկ նա խուսափում եր աննկատելի, զգալով նրա մոտենալու նպատակը, ու հեռանալով նրանից:

— Ընկեր Համլիկ, արի այս կարճ ճանապարհով կտրենք, բարձրանանք մեր խորհանտեսության յեռևի բլրի գագաթը. հրաշալի պիշեր ե, նստենք այնտեղ ու ղրուցենք, իսկի քունս չի տանում...

— Գնա՛նք, յես դեմ չեմ,— ասաց Համլիկը, չնայած վոր մեջը լինչ վոր տատանվում եր:

Նրանք դուրս յեկան ճանապարհից ու ընկան նեղ կածանը: Այժմ արդեն նրանք քայլում եյին իրար մոտիկ, համարյա իրար դիպչելով:

— Համլիկ, ի՞նչ կասես մեր արշավի մասին:

— Ավելի լավ անցավ, քան յես սպասում եյի, լինճ Թվում ե, ընկեր Միքայելը չափազանցացնում եր դիմադրությունը:

— Այո, նա վերպես հին մարդ, շատ ղժույշ ե:

Գուրգենն ուզում եր իմանալ Համլիկի կարծիքն իր յերկրի մասին, բայց անհարմար եր ղժում ուղղակի հարց տալ: Կարծես դուշակելով նրա ցանկությունը, Համլիկն ասաց.

— Մանավորապես Գուրգենն այսոր ցույց տվեց, վոր կարող ե պայքարել...

Ապա բոլեաչափ կանգ առնելով, ավելացրեց:

— Ճես մինչև այժմ քեզ ընդունում եյի վորպես դիտության ենտուզիաստ, այժմ քո մեջ մի ուրիշ մարդ ել բացվեց— սոցշինարարության մարտնչող...

Գուրգենի այտերը վառվեցին այդ խոսքերից:

— Զգիտեմ լինչո՞ւ, Համլիկ,— ասաց նա հուզված, մտերմական ձայնով.— յես միշտ ժժգոհ եմ լինքս լինձնից. միշտ լինձ Թվում ե, Թե չասացի այն, լինչ վոր ասելու եյի, չարի այն, լինչ անելու եյի... Այսքանը դիտեմ, վոր լծվել ենք մի մեծ ու դժվար գործի և պիտի նպատակին հասնենք...

— Ճեվ, ի հա՛րկե, կհասնենք...

Քայլում եյին, խոսում ամայի դաշտում. լինչ վոր տատում եյին, վերևից եր անցնում, իսկ ներքուստ անտես Թելերով կուտակվում եր մի ղժացում, վորի անունից կարծես խուսափում եյին...

Մոտ կես ժամից հետո նրանք արդեն բլրի վրա եյին: Թիկնելով դետնին, խոտերի վրա, նայում եյին առաջները սփռված

լուսաղարդ տեսարանին: Լուսինը սահում էր յերկնքի ջինջ, բայց կապույտի վրայով, վայլում էր ներքևի այդու բարդիների գագաթներին, մութ ստվերներով լցնելով նրանց տակերը: Թեթև հով էր փչում, խաղում շնչի հետ, ասես բերում էր բարձրություններից ինչ վոր տարօրինակ զգացումներ, մտքեր...

## X

Գուրգենը պառկել էր, դլուխը հենած արմունկներին ու լուռ նայում էր մերթ առջևը սփռված տեսարանին, մերթ գողունի՝ յերեսը դարձնում էր Հասմիկի կողմը: Նա մեծ ցանկություն ուներ արտահայտելու իր մտորումներն ապագա գործունեության մասին,— միասին գործելու, պայքարելու մասին, սակայն մի ուրիշ, մտերմական տոնով, վորի մեջ կուզեր հնչեցնել և իր ատանձին, թագնված զգացումները: Բայց ինչո՞ւ Հասմիկը խուսափում է «առանձին» մտերմությունից: Ցերը նրանք մենակ մնացին, թվում էր, թե շատ մոտ են իրար, անբաժան ընկերներ են, և առանց Հասմիկի նա չէր կարող յերևակայել իր ապագան, բայց այժմ դարձյալ ինչ վոր մշուշ իջնում է, ծածկում Հասմիկին, հեռացնում նրան իր աչքերից: Թվում է թե նա մի բարձր պատվի վրա յե ու ինքը մաքառելով պիտի հասնի նրան: Ու նորից չարվում են նրա առաջ տարօրինակ խոչընդոտները, նորից Հասմիկը դառնում է «իրրացիոնալ»:

«Ցեթե մոտենամ,— մտածում էր Գուրգենը,— ասեմ, յես քեզ սիրում եմ, նա անպատճառ կհեղնի, կասի՝ դու միանգամայն ծիծաղելի յես, չե՞ վոր դու չես ընդունում սերը... ուրեմն այդ կողմից նավերս այրել եմ... Ցեթե ասեմ— արի՝ ամուսնանանք, ապրենք միասին, ինչպես ապրում են չատերը, այդ խոսքերը կհնչեն նրա ականջին այնպես դռեհիկ, ինչպես մի նուրբ յերաժշտություն հանկարծ վերջանար կովի բառաչով. նա յերևի այդ դեպքում մի զարմացական – հեղնական հայացք կնետի վրաս, կսկսի խնդալ ու կթողնի հարցն առանց պատասխանի, իսկ իմ ինքնասիրությունը չի թույլ տալ նորից կրկնելու: Ուրեմն վո՞րն է Հասմիկի «կվինտեսենցիան», վո՞րն է այն հանդույցը, վորից կարող եմ յերկնել... կամ գուցե այս բոլորը նրա կողմից մի խաղ է, վորի նպատակն է ինձ տանջել...»

Նորից նա նայում եր առջևի տեսարանին, ու չրջում եր մտքերը, անցնում եր ապագա դործունեյության հեռանկարներին:

Իսկ Համլիկը նույնպես սառնել եր ու ձեռքի ափով յերեսը ծածկել, բայց մատների արանքով զաղտագողի դիտում եր Գուրդենին, նկատում եր նրա առել-առել լրեն ուղղված ծարավի հայացքները: Մի րոպե նրա մեջ մի խենթ ցանկություն յեկավ՝ խառնշտել Գուրդենի մազերը, կատարյալ լրտեսության ու ապշեցում առաջացնել նրա մեջ, բայց մի ատոր մլտք բարակ ոճի նման դուրս սողաց մլջից ու ասաց.—«Համլի՛կ դրա՛տա. թեպետ Գուրդենն այժմ մի ուրիշ, ավելի պայծառ վայլ ատացավ աչքիդ, բայց ջուրը դեռ չի պարզվել վերջնականապես.. տղամարդիկ անփութակցաբար հետևում են լրենց նախկին հոդերանության. նրբանք «ծպտյալ իմպերիալիստներ» են կանանց վերաբերմամբ, և ձգտում են մեզ դարձնել լրենց «հավերլվածը», ակոմպանիմենտը, իսկ յես կոչված եմ ինքնուրույն ձայն ունենալու... Թող Գուրդենը պարզապես, համոզիչ կերպով ցույց տա, թե ի՞նչ եմ յես նրա աչքում, թող տեսնի իմ մեջ այն մյուս Համլիկին, և այն ժամանակ... Ձե՛, վոքը ինչ թուին դեռ անհրաժեշտ է...ու քանի զսպանակն իմ ձեռքին է, առայժմ կսպահեմ...»

Նա գլուխը բարձրացրեց ու ցանկանալով հանել Գուրդենին ճնշված լռությունից, հարցրեց.

— Ինչի՞ մասին ես մտածում, Գուրդեն:

Գուրդենը հանկարծակի գալով, խնդուն չպատասխանեց.

— Ապագայի մասին,— ասաց նա բառերը ձգելով.— այսպիսի լուսնկա գիշերները, յերբ նայում եմ խաղաղ, քնած տեսարանին, թվում է, թե ժամանակը կանգ է առնում. կուզեյի մի անընդհատ, վատ ցերեկ լիներ, յեռուն գործերով լի... Այս րոպեյիս աչքիս առաջ անցավ մեր այցելած գյուղը, ու մեր գործն ինձ թվաց շատ դանդաղ, կարծես սայլով ենք ընթանում... անհամբերությունից մլտքս թռչում է առաջ, ու տեսնում եմ մեր ամբողջ յերկիրը, նույնիսկ յերկրագունդը վերածված համատարած սոցիալիզմի...

— Այսինքն՝ անում ես այն, ինչ վոր պետության մեջ,— այնտեղ էլ ապագա գյուտերով բազմապատկում ես բնբքավության ցույնը: այլ խոսքերով՝ Գուրդենը լուսնի աղեցության տակ

*յերազում է, իսկ յերազները մեծ դրոշի ասելով՝ ծուլ ուզեղի ղավակները են...*

*«Ելի խլեց անպիտանը»,— մտածեց Գուրգենն ու խայթվածի նման վեր թռավ, նստեց տեղը: Կարծես նրան բարկացնելու համար Հասմիկն էլ նստեց:*

*— Ջուր ես կարծում, թե վաղվան դալկքը յերազ է,— ասաց Գուրգենը լուրջ տոնով,— չե՞ որ մեր կյանքն այժմ մի արշալույս է, որը և նեղկա յե, և ապագայի նախերգանքը...*

*Գուրգեն, դու ամբոխավարություն ես անում առանց ամբոխի. հարցը վախ թե վաղվան դալկքի մասին է, այլ քո դիպանոթ թռիչքների մասին, որ անում ես յերևակայության թևերով...*

*— Իսկի յել չե. մեր բոլոր ճանապարհները տանում են դեպի սոցիալիզմ. դու մոռանում ես, որ մեր կյանքը մեծ պլանի մեջ է առնված և որեցոր նեղկան լուծվում է ապագայի մեջ...*

*— Բայց դու թռչում ես բոլոր պլաններից դուրս ու պտըտվում ես վերջնակայանների չուրջը...*

*— Իսկ դու, որ այդպես հարձակվում ես, չե՞ս ձգտում միշտ դերակատարել պլանները, ուրիշ խոսքով՝ չե՞ս թռչում պլաններից դուրս:*

*— Շնորհավորում եմ, Գուրգեն, դու ընկալ քո իսկական տեղին. այժմ դու, ըստ սովորության կսկսես հարձակվել ինձ վրա, վերապրելով ինձ այն, ինչ յես քեզ եմ վերադրում:*

*— Վա՛յ, յես մտադիր չեմ հարձակվելու... այսպիսի մի դիշեր, յերբ նույնիսկ դորտերը քնքշանում են ու իրենց կռկռոցը բայաթի դարձնում, յերբ բնությունը խոսում է ուշացած պոետների ու մարդարեների հետ՝ յես զինադադար եմ հայտարարում Հասմիկին— ապագայի մասին խոսելու համար...*

*— Ո՛հ, ինչ բանաստեղծական եր նախերգանքդ... խոստովանիր, Գուրգեն, յեթե յես այստեղ չլինեյի, այս դիշեր մի ուտոպիա կդրեյիր «Լուսնի աշխարհը» վերնագրով:*

*— Ինչո՞ւ չե կդրեյի, բայց վոչ թե «ուտոպիա», վոր նշանակում է «վոչ մի տեղ», այլ կդրեյի «պանտոպիա» այսինքն՝ «ամեն տեղ»...*

*— Յեթե այդպես է, զինադադարդ ընդունում եմ, պայմանով, վոր լավ թռիչք կատարես դեպի ապագան...դե՛, թռի՛ր լայն թևերով. բայց չմոռանաս և ինձ... տե՛ս, լուսինը ժպտում է*

մեջ ու գորտերն ել իրենց պատմական դերն են կատարում՝ նրանք կռկռում են ուտոպիաների վրա, կարծելով թե իրենց ճահիճներից դուրս ել վոչինչ չկա...

— Չե, Հասմիկ, դու առաջ ընկիր, վոր հավատամ թե իսկապես գալիս ես հետս:

Հասմիկ.— Լավ, յես եմ սկսում. դե լսիր ուշի-ուշով... ուրեմն տարիներ են անցնում, թե վո՞րքան— այդ թող ինքը ժամանակն ասի, ու մենք միասին գալիս ենք նորից դեպի այն գյուղը, վորտեղ մենք այսոր նվաճեցինք միայն 37 մոտեսություն: Թռչում ենք «Դեպի ապագա» ոդանավով, ազատ ու զվարթ, չդպալով վոչ սահմաններ, վոչ արդելք,— վողջ յերկրագունդը մեկ ե, ուր ուզում ես իջիր.— ամեն տեղ զգում ես քեզ աշխատավոր մարդկության մի բջիջում, ընդհանուր սոցիալիստական ձգտերով, ընդհանուր լեզվով... Մեզ ուղեկցում են պրոֆեսոր Արեգյանն ու մի քանի ուրիշ դիտնականներ, վորոնք վերադառնում են Ծիլադելֆիայի, Բոմբեյի դիտական կոնգրեսներից:

Հայաստանի առաջին քաղաքից մեր դեմ են յելնում բազմաթիվ ոդանավեր, շրջապատում են մեզ պատկաճև, ինչպես այն փոքրիկ ձյունաթռչուր ամպիկները, վորոնք ընդդրկել են լուսնին... Դա կլինի արևածագին ու վողջ եսկադրան կրոցյալված արշալույսի նարնջի գույներով ու կհնչի ոդելույով մի նոր, վերամբարձ Ինտերնացիոնալ...

Մենք թռչում ենք պտույտներ անելով Հայաստանի վրայով. մեր առաջ սկսվում է մի հրապուրիչ յերկիր, այնքա՜ն տարբեր մեր առաջվա տեսածից... Ամեն տեղ, ուր աչքն եր դարնում, կենդանության մի չքեղ պատկեր եր ցայտում. նախկին չոր, անապատային ու ժայռոտ վայրերից հետքեր չեյին մնացել. վո՛րքան բուսականություն, վո՛րքան ջրեր-առուներ ու լճակներ, պուրակներ, այդիներ... բազմաթիվ հիդրոկայաններ, գործարաններ... ու դալար դաշտերի մեջ վայրում եյին փոքրիկ քաղաքները՝ մեկը մյուսից դեղեցիկ... Գուրգենը նայում եր հափշտակված. րոպե առ րոպե լավում եր նրա բերանից և հիանալի՛... հրաշալի՛... սքանչելի՛... Վերջապես, յերբ նրա վոդեվորությունը հասավ եր զաղաթնակետին, նա հանկարծ վճռեց այլևս թաղնել դիտությունն ու նվիրվել բանաստեղծության. իսա-

*կուլն հանեց իր ծոցատետրն ու սկսեց դրի առնել մի պոեմ, որի առաջին տողերն այսպես էյին.—*

Նորոգված յերկիր, պլանաշե՛ն յերկիր,
Յես ֆեզ տեսա արևի շողերով...
*... Գուրգենն անհանդիստ շարժում արավ.*

Գուրգեն.— *Հասմի՛կ ասաց նա,— դու Հասմիկորեն ես տանում դործը. յես բողոքում եմ.*

Հասմիկ.— *Բողոքի՛ր, բայց իմացի՛ր, որ ապագայում, յերբ դասակարդերը կվերանան, խոսքը կլինի ազատ՝ Արագածի հովերի նման, բայց վոչ նրանց նման թեթև և դո՛ւ, իհարկե, ջերմ պաչտպան կլինես ազատ խոսքի... իսկ այժմ չարունակենք մեր ճամբորդությունը... մենք ուշադրությամբ հետևում էյինք, աչքաներով նկատել մեզ ծանոթ վայրերը, բայց համարյա վոչինչ չեյինք կարողանում պտնել: Վերջապես յերկուսս էլ ցնցվեցինք, յերբ առաջին պտույտից հետո պրոֆեսոր Արեգյանն ասաց.*

— *Սհա Յերևանը. նա այժմ վերածված է չորս կոմբինատքաղաքի...*

*Մենք ապահությամբ հառեցինք աչքներս ներքև. Հասմիկը նայում եր նախկին կայարանի կողմը, կարծելով, թե կգտնի մյուս թաղերը. բայց գործարաններն էլ չեյին ջոկվում-նրանք առանց ծխնելույզների էյին. իսկ նրանց չուրջն այնքան նոր ծառատունկներ, նոր շենքեր կային, որ նա չկարողացավ մի բան պարզել: Գուրգենն էլ նայում եր համալսարանի կողմը, բայց այստեղ էլ դժվար եր մի բան վորոշել: Նախկին Յերևանից բան չեր մնացել. միայն Զանդուն եր ձգվել ոձի նման, բայց նրա տները էլ բոլորովին փոխված էյին:*

— *Այս չորրորդ կոմբինատի վերին մասը հատկացրած է դիտության և դիտնականներին,— ասաց Արեգյանը.— ուսանողները նրան «վերացական» թաղ են անվանում...*

*Մենք նայեցինք վերևի կողմը. ամենից աչքի ընկնողն աստղադիտարանի աշտարակաձև շենքն եր: Նրա գագաթից հանկարծ թռան դեպի մեզ մի խումբ ուսանողներ. չարաճճի պտույտներ և ութաձև հանդույցներ անելով ողում, նրանք բարձրացան մեր վերևն ու բաց թողին կարմիր թերթիկների մի հորդ անձրև: Թերթիկների վրա գրած եր.— «Կեցցե՛ն սոցիալիստական չինարարության անդրանիկ մարտիկները...» Գուրգենի ինքնասիրու-*

թյունը վորոշ թրթիռներ ունեցավ այդ բառերից, իսկ Հասմիկի դեմքն ամբողջովին մի մեծ ժպիտի վերածվեց: Մենք նշաններով վողջունեցինք ուսանողներին ու դուրս չեկանք քաղաքի շրջանից: Սալառնում եյինք դանդաղ, ու հրճվում նորառար տեսարաններով: Ա.հա մոտեցանք Սևանա լճին, վորն արդեն մի հրաշալիք եր,—լայնուր ջրերը շրջապատված եյին սոճիների վերտալաց անտառներով, վորի խիտ կանաչների մեջ հսկա ծաղիկների նման փայլում եյին դունավոր չենքերը: Դժվար եր դոնել մի ուրիշ վայր, ուր բնությունն ու մարդկային արվեստն այդպես ներդաշնակ զուգորդվեյին: Գուրգենը նայում եր հմայված. նա սպառեց իր պտեմի մեջ հին բանաստեղծության վողջ արսենալը, քրոնաթոր յեղավ ու մնաց դժգոհ... Նա չարունակ հետ ու առաջ եր շրջում «դեղային» ածականները «դեղահրաչ»— «հրաչադեղ...» «դեղածխծաղ»— «ծխծաղադեղ...» «զարմանահրաչ»—«հրաչազարմանո...» ու վերջը չկարողանալով արտահայտել իր մեջը հորդացող զգացումները, զայրույթով նետեց մատիտը լճի մեջ... կարծես այդ նշանին եյին սպասում.— այդ բռնեյին ներքևից մեղ նկատեցին լճի վրա չարված հիդրոպլանները, ու հսկա բադերի նման խմբով բարձրացան դեպի մեղ՝ վողջունելու... Այդ եքսպրոմտ դիմավորումն այնքան ցնծալի եր, վոր Գուրգենը մոռացավ իր անհաջող բանաստեղծական դերյուտը... Հիդրոպլանները ընկերացան մեղ ու մենք չարունակեցինք պտույտը...

... Գուրգենը, խայթված այդ չարաճճի հարձակումներից, ջղայնության նշաններ եր ցուցադրում:

Գուրգեն.— Խոսի՛ր, խոսի՛ր, Հասմիկ, վոչնորվիր, այդ բոլորը մենք արձանագրում ենք...

Հասմիկ.— Իրր թե ժպտամ է՞ս. բայց յեթե ժպտայիր, վոր քեզ բանաստեղծ դարձրի այժմ պիտի ուրախ լինես, վոր ազատեցի քեզ այդ պաշտոնից, մանավանդ, վոր քեզ մեծ վտանգ եր սպառնում— դու գիտե՞ս, վոր հայտնի Ֆուրյեն իր ուտոպիայի մեջ իր սպարտա Ֆալանստերներում, շատ անհաճելի պաշտոն և առաջարկում անչնորհք բանաստեղծներին...

Գուրգեն.— Ա.յսի՞նքն...

Հասմիկ.— Ամաչում եմ մինչև անգամ ասել... այն հայոնի անմաքուր տեղերը մաքրելու պաշտոնը...

Գուրգեն.— Այդ դեպքում անհրաժեշտ կլինի պատժել և քեզ, վորպես ինձ բանաստեղծ դարձնողին...

Համմիկ.— Համաձայն եմ, ընդունում եմ իմ պատիժը և լռում. առաջարկում եմ քեզ շարունակել մեր ճանապարհորդության նկատառիվը...

Գուրգեն.— Լա՛վ, շարունակենք մեր յերթը, դեպի ապագան...

## XI

Գուրգեն.— ... Համմիկը՝ ըստ սովորության, այնքան եր տարվել տեսարաններով, վոր մոռացել եր մեր ճանապարհորդության բուն նպատակը: Վերջապես մեզ ուղեկցող պրոֆեսոր Արեգյանը հարցրեց.

— Վո՞րտեղ կուզեյիք իջնել, ընկերներ:

— «Յեցակերը» գյուղում,— ասաց Համմիկը:

— «Յեցակերը» գյո՞ւղ,— հարցրեց Արեգյանը, դեմքի բոլոր կնճիռները հարցականի վերածելով,— բայց մեզ մոտ այդպիսի բաժանումներ չկան... մենք ունենք միայն կոմբինատներ, սոցյալիստական բջիջներ...

Րոպեչափ մոածելուց հետո, նա ասաց.

— Ձեզ կարող է ոգնել հնադիտության պրոֆեսոր Ակնոցյանը, վորի հետ ձեզ քիչ առաջ ծանոթացրի:

Պրոֆեսոր Ակնոցյանը հանեց իր սակվոյաժից մի պատմական քարտեզ ու յերկար մնատելուց հետո բացականչեց.

— Գտա՛նք. նախկին «Յեցակերը» գյուղն այժմ ընկնում է 51-րդ սոցյալիստական բջիջի շրջանում:

Արեգյանն իսկույն կարգադրեց, վոր մեզ իջեցնեն հենց այդ բջիջում: Մեզ ուղեկցող ոգանավերն ու հիդրոպլանները հրաժեշտ տալով, մեկնեցին իրենց տեղերը:

Մենք իջանք մի կոկիկ քաղաքում, մի բարձր սպիտակ շենքի առաջ: Յերկար ժամանակ մնացել եյինք կանգնած, ապշած հիացմունքից. լայն փողոցի բոլոր տները շրջապատված եյին ծաղկանոցներով ու պուրակներով: Տպավորությունն այն եր, կարծես մենք գտնվում եյինք մի չքնդ կուրորտում, վորի շենքերը կառուցված եյին հատուկ մրցությամբ՝ մեկը մյուսից գեղեցիկ: Վերջապես Համմիկը, վորպես հին մտածողություններից գեռ չազատագրված մի մարդ, հարցրեց Արեգյանին.

— Սրանք ձեր հաճոգատյան տնե՞րն են:

Պրոֆեսորը ժպտաց ներողամտաբար.

— Վո՛չ, սրանք մեր սովորական տներն են, վորտեղ կարելի յե աշխատել, և հանգստանալ: Մեր սակավաթիվ հիվանդների համար մենք ունենք հատուկ կուրորտներ, բայց ընդհանրապես, հեչա հաղորդակցության չնորհիվ, մեր առաջ բաց են բնության ամենագեղեցիկ վայրերը,— թե հանգստանալու, թե զվարճանալու համար:

Հանելով ծոցից հնագետ պրոֆեսոր Ակնոցյանից վերցրած քարտեզը, Սրեդյանը ցույց տվեց մեզ նախկին «Ձեցակեր» գյուղի տեղը: Համակին ագահ աչքերով դիտում եր շրջակայքը, բայց այնքան եր փոխվել տեսարանը, վոր մեկին բլուրների ընդհանուր ձևերն եյին հեռավոր կերպով հիշեցնում անցյալը: Ջորս կողմը ծառաղարդ ու ծաղկաղարդ, ընդհանուր բանջարանոցներով ու այգիներով. մի թիզ հող չկար առանց մշակման. իսկ հոյակապ տները, դործարանները, կանոնավոր լայն փողոցները.. չե՛, սա չատ հեռու յեր նախկին «Ձեցակեր» գյուղի պատկերից...

— Հե՛յ դիլդի «Ձեցակեր» գյուղ, վո՞րտեղ ես,— ասաց Գուրգենը,— հիշո՞ւմ ես Համլիկ, ամռան յերեկոն, նեղ ու ծուռ փողոցները, փոշոտ, գյուղացու խղճալական բակը, մեր սոցարշավը Միքայելի հետ...

Այս խոսքերի վրա Համլիկի աչքերը պղտորվեցին. նա վոչինչ չպատասխանեց ու յերեսը դարձրեց մյուս կողմը, իր հուզմունքը ծածկելու համար:

— Ինչո՞ւ յես տխրում, Համլիկ,— հարցրեց Գուրգենը:

— Տխրում եմ, վորովհետև մեզ համար էլ անելու բան չի մնացել... ա՛խ, չե՞ վոր մենք պիտի Ձեցակեր գյուղի կոլխոզի 37 տնտեսությունը վերածեյինք համատարածի. չե՞ վոր յես պիտի պրոպագանդ մղեյի գյուղի կանանց մեջ...

— Վորքան մխամիտ ես Համլիկ, մեզ համար այստեղ էլ աշխատանք չատ կա... մոռացիր Ձեցակեր գյուղը. նա արդեն պատմություն է...

Խոսակցությունն ընդհատեց պրոֆեսոր Սրեդյանը:

— Այսոր գյուղատնտեսական ինստիտուտում դիսկուսիա յե լինելու բանջարաբուծության նոր ձևերի մասին,— ասաց նա,— կարծում եմ դա ամենալավ այուրպրիզն է ձեզ համար:

Մի քանի րոպեյից հետո մենք արդեն մի մեծ չենքի առաջ էյինք, վորը շրջապատված եր հաղվագյուտ ծառերով: Ցերբ ներս մտանք դահլիճը նա արդեն լիքն եր հասարակությամբ. հիմնական դեկուցումն արդեն սկսված եր:

Դիսկուսիայի ժամանակ մենք այնքան նորություններ իմացանք ազրոկուլտուրայի զարգացման շուրջը, վորը տաս տարում հազիվ կարող էյինք յուրացնել. փոխվել էյին վոչ միայն դիտության սվյալները, այլև նրանց մշակելու մեթոդները: Արհեստական անձրև, արհեստական լույս, ջերմություն... Ֆիզիկան ու քիմիան սերտ միացած ազրոկուլտուրայի հետ: Պարզվեց նույնպես, վոր յեղանակների դուշակումը նույնքան ճիշտ հիմունքների վրա յե դրված վորպես և աստղագիտությունը: Այս բոլորը Գուրգենը լսում եր օբյեկտիվ սառնասրտությամբ, իսկ Հասմիկը ցուցադրում եր իր դեմքին անկայուն հետաքրքրություն, շարունակ զարմանքի արտահայտությամբ փոխոխելով իր դեմքը: Բայց մի դեպք հուզումնալից դարձավ Հասմիկի համար.— դիտնականներից մեկը համեմատության դնելով կապիտալիստական և սոցիալիստական չրջանների ազրոկուլտուրան, ասաց և մեջի այլոց.

— Միայն սոցիալիզմն եր, վոր ամբողջ թափով առաջ տարավ գյուղատնտեսությունն իր հսկա ծավալով. կապիտալիստական աչխարհը պարարտացնում եր հողը մարդկանց արյունով. այն ավերածությունը, վոր նա պատճառում եր իր արյունահեղ պատերազմներով, մարդկանց կյանքերը խորտակելով, հսկայական մեջացներ վատնելով չեր կարող նպաստել վոչ դիտությանը, վոչ նրա գործնականին... Այժմ, ընկերներ, յերբ մենք հանրադումարի յենք բերում սոցիալիզմի նվաճումները, չենք կարող առանց հիացմունքի նայել այդ պերճախոս, լայնատարած դաշտերին, վորոնք սիրված են վողջ յերկրագնդի վրա: Ցեվ այդ բոլորը նրանից է, վոր չկա շահագործում, չկան պատերազմներ. զենքերը դարձել են պատմական թանգարանների զարդեր, իսկ նրանց վրա ծախսվելիք մետաղը գործադրվում է մեքենաների վրա...

Հանկարծ Հասմիկն այլայլվեց:

— Հիվա՞նդ ես,— հարցրեց Գուրգենը:

— Ջե, Գուրգեն, բայց հիվանդից էլ վատ եմ, յես անհարմարություն եմ ղգում... պրոպանումս ատրճանակ կա, վերցրու:

Գուրգենը խոստացավ վերցնել ընդմիջման ժամանակ, բայց ա՛յ քեզ դժբախտություն. յերբ նրանք քաշվեցին մի անկյուն, և Հասմիկը հանեց իր ատրճանակը, հանկարծ մեզ մոտեցան մի խումբ դիտնականներ, վորոնք լսելով Սրեղյանից, թե մենք «պրոլետարական դիկտատուրայի շրջանի» մարդիկ ենք, ուզեցել եյին մեզ մոտիկից տեսնել, հետներս խոսել:

Նկատելով Հասմիկի ձեռին ատրճանակը, մեկը նրանցից հարցրեց.

— Սա ի՞նչ է. յերևի հեռադիտակ է, այո՞:

Կարո՞ղ եք յերևակայել Հասմիկի դրությունը. նա յոթն անդամ իր դույնը փոխեց. հուշամնալից հայացքով նա նայում եր Գուրգենին: Մինչև այդ մյուսներն էլ սկսեցին հետաքրքրվել փոքրիկ ղենքով: Դրությունն ավելի քան ծանր եր, բայց Գուրգենը, վոր միշտ կրիտիկական րոպեներին փրկություն և դալիս Հասմիկին, այս անգամ էլ յեկավ...

— Սա մի մանկական խաղալիք է,— ասաց նա,— սրանով մեզ մոտ յերեխաները ծաեր եյին վորսում...

Կարծես մի սար ընկավ Հասմիկի ուսերից. նա մտերմական մի հայացք ուղղեց Գուրգենին, ու այդ հայացքի մեջ ինչ վոր տարօրինակ արտահայտություն կար...

... Հասմիկը լսում եր Գուրգենին չրթունքները խածնելով, մեծ ճիդ գործադրելով իր լռությունը պահպանելու համար: Յերբ Գուրգենը վերջացրեց ատրճանակի պատմությունը, նա անհամբեր կտրեց խոսքը.

Հասմիկ.— Գուրգեն, դու այդտեղ մի կարևոր դեպք բաց ձողիր, թույլ տուր լրացնեմ:

Գուրգեն.— Ինդրեմ, կարող ես. տրվում է հինգ րոպե:

Հասմիկ.— Դու մոռացար, վոր հենց այն րոպեին յերբ բոլորը հետաքրքրությամբ դիտում եյին Հասմիկի ատրճանակը, Գուրգենին մոտեցավ դիտնական Ցեթերյանը և իր սուր քննական հայացքը հառեց նրա վրա:

— Ձեր մեջ ինչ վոր տարօրինակ դծեր են նկատվում, ասաց նա. դուք անցյալի լավ նմուշ եք. թույլ տվեք քննելու ձեր ուղեղը «իդեալիկ» ճառագայթներով...

Գուրգենը չկորցրեց տասը տարեկան աշակերտի նման, ու խոսք չգտնելով, վոր ասի, լուռ հետևեց պրոֆեսորին, դեպի նրա կաբինետը:

— Այո՛, այո՛,— ասաց Յեթերյանը քննելուց հետո,— իմ յենթադրությունները ճիշտ էին. ձեր ուղեղի ծալքերում դեռևս թաղնված են անցյալի մնացորդները— տղամարդու դերիչխանության «ալֆա» և «բեթա» դծերը. դուք դեռ չեք ազատագրվել վերջնականապես այն հին վերաբերմունքից, որ դոյություն ուներ դեպի կինն անցյալում... այդ են ասում «իդրեկ» ճառագայթները ձեր ուղեղի յենթագիտակցական շերտերի մասին...

Ո՛, այդ բոլորին չես էլ կարող անկանխակալ լինել Գուրգենի դրության մեջ... նա կուզեր չողիանալ, ցնդվել վորպեսզի չտեսնեիր իր վատնված դեմքը. բայց արդեն ուշ էր. անողոք դիտությունն իր խոսքն ասել էր...

Ու կարծես նրա դժբախտությունը կրկնապատկելու համար պրոֆեսոր Յեթերյանն իր յեզրակացությունը հայտնեց Հասմիկին...

— Դե, յես վերջացրի իմ ուղղումը, այժմ կարող ես շարունակել քո պատմությունը, ասաց Հասմիկը:

... Գուրգեն.— Քո ուղղումը բավական ուտոպիական էր թեպետ, բայց հետաքրքրական. դու չուզեցիր մենակ չմոթված լինել և ինձ ընկեր արիր... ուրեմն վատան այն է, վոր յերկուսս էլ այլայլված եյինք ու վերացած իրականությունից (մանավանդ Հասմիկը)...

Մեզ սթափեցրեց պրոֆեսոր Սրեգյանը:

— Պետք է շտապել,— ասաց նա, այսոր մեզ մոտ հյուր են գալու Հնդկաստանի ընկերները. դա ձեզ համար բավական լավ առիթ է...

Մենք դուրս յեկանք դյուղատնտեսական ինստիտուտից. մեր առաջ հանկարծ բացվեց անմոռանալի տեսարան—ամբողջ վողջը բռնված եր մարդկանցով, զանազան ձևի ինքնաշարժ մեքենաներով, իսկ վերևում յերկու հարկով չարժվում եյին աերոպլանները, ուղեկցելով յեկվոր ընկերներին: Մենք մխացանք յերթին: Յերաժշտությունը, մարդկանց խանդավառ կեցցեները ու կոչերը, վողջը մի վերացնող համերգ եր կազմում:

Հյուրերն իջան աերոպլաններից աշխատանքային պալատում, վորի ընդարձակ դահլիճում հավաքվել եր ահագին բազմություն: Տարօրինակ պատկեր եր.— մենք տեսնում եյինք առաջներս Հնդկաստանի ընկերներին, և միաժամանակ ռադիո-հեռատեսի միջոցով դիմացի եկրանների վրա յերևում եր Հնդկաստանի այն

քաղաքը, վորտեղից նրանք յեկել եյին, տեսնում եյինք այնտեղի միտինգը, և նրանք էլ վոխադարձաբար մեզ եյին տեսնում... դա միջազգային ու միջերկրային միտինգ եր— Հնդկաստանի բանվորը, հաղթելով տարածությունը միտինգում եր Հայաստանի 51-րդ սոցիալիստական բջիջի հետ:

Հանդիսավոր ճառի մեջ կոմբինատի մի բանվոր ասաց.

— Ամբողջ աշխարհը աչքերը հառել է Հնդկաստանի դիտական կոլեկտիվի վրա. այստեղ մտածում է իր ավարտմանը մի խոշոր գյուտ, վորի շնորհիվ արևի էներգիայի ոգտագործումը պիտի ավելանա հարյուր հազար անգամ: Մի ուրիշ կետ ևս դրամում է համաշխարհային ուշադրությունը— դա Անդրկովկասն է, վորի դիտական կոլեկտիվները նույնպես մեծ ուժերով զբաղված են նորագյուտ «նեոֆլա» մետաղով, վորի միջոցով հաջողվել է ատոմնալուծել մի շարք նյութեր և վորը նույնպես խոստանում է ապագայում էներգիայի հսկայական աղբյուրներ, մի նոր հեղաշրջում գիտության մեջ...

Մեծ խանդավառությամբ ռադիոյի միջոցով լսվեց պատասխան— ճառը Հնդկաստանից. միաժամանակ մենք և տեսնում եյինք և լսում խոսողին:

Մենք դուրս յեկանք այդ միջերկրային միտինգից բոցավառ որամաղրությամբ:

Ճաշից հետո մենք այցելեցինք կոմունա տներից մեկը, վորտեղ ապրում եյին կոմբինատի բանվորները: Այնտեղ եր ապրում և պրոֆեսոր Աբեդյանը: Համբիկը մի առանձին հետաքրքրությամբ հարց ու փորձ եր անում, ծանոթանում կոմունայի կյանքին:

— Այս նույն կենցաղն է տիրում և մեր բոլոր տներում,— ասաց Աբեդյանը,— ամեն տեղ ընդհանուր ճաշարան, ընդհանուր մանկատուն, ակումբ-պրատարան, ընթերցարան, կինո—հեռատես և կինո—թատրոն. կարելի յե ասել,— ամբողջ տունն ապրում է վորպես մի մեծ ընտանիք...

Պատասխանելով մեր հարցերին, նա ասաց.—

— Մեր պարտադիր աշխատանքը տեվում է միայն չորս ժամ, բայց մեզ մոտ մեծ ծավալ է ստացել կամավոր աշխատանքը, վորը ուղղակի հրաշքներ է անում իր ստեղծագործական թափով: Մենք հազիվ ենք կարողանում տեղավորել բոլոր ցանկացողներին:

Յերեկոյան մենք բարձրացանք տան վերևի տերրասը, վոր-

տեղ «կոմունարները» հանգստանում էին այդ ժամերին: Մենք առաջ բացվում էր մի չքեղ տեսարան, ամեն կողմից մեզ կարծես վողջունում էին հարևան սոցքլիչների, կոմբինատների ղվարթ, շողշողուն լույսերը: Արեգյանը ցույց էր տալիս կոմբինատներն ու բացատրում.

— Ահա մեր հարևան արհեստական կաշվի կոմբինատը, իսկ նրա ձախ կողմը— քիմիական կոմբինատն է... այն բարձր աշտարակը՝ արհեստական անձրևի կայանն է... և այդպես շարունակվում են մեկմեկու հետևից կոմբինատ— բջիջները,— ամբողջ յերկրապնդի բոլոր մասերում...

— Մենք աշխատանքի յենք լծել բոլոր գետերն ու գետակները, հիդրոկայաններ կառուցել, լծել ենք քամին ու արևը,— ասում էր Արեգյանը,— յերկիրը գիտության ոգնությամբ վերանորոգվել է, փոխել իր վաղեմի դեմքը. մեր ամբողջ աշխատանքները, մեր ամբողջ կյանքը մեծ պլանի մեջ է առած. կա մի մեծ, համաչխարհային պլանային խորհուրդ, որը տարեկան չորս անգամ ժողով է ունենում յերկրապնդի զանազան կետերում...

Նա փոքր լինչ լուռ էր խորհրդածելով, ապա շարունակեց.

— Պլա՞ն, ամեն լինչ պլան... Նա ընդգրկում է մեր ամբողջ կյանքը. նա յե նախագծում և ուղեղծում, նա յե կազմակերպում մեր կամքը, ուժ և տալիս մեր բոլոր ընդունակություններին... Զարմանալի յե, թե լինչպե՞ս անցյալում մի խորաթափանց ուղեղ կարողացել է նշմարել պլանի այդ հզոր նշանակությունը. խոսքս Սպինոզայի մասին է, որն ասել է, յեթե մարդիկ ապրելին վորոշ պլանով, նրանց չեր կարող տիրանալ վոչ մի նախապաշարմունք... ահա այդպես, պլանը, մեծ Հոկտեմբերի այդ ծնունդը, դարձել է մեր աշխարհայացքի ամուր հենարանը...

Մեր չուրջը նոսած հատարակություն, խմբերի բաժանված, դրուցում էր զանազան հարցերից. մի տեղից լսվում էին գիտական տերմիններ, մյուս տեղից՝ գրողների, յերաժիշտների, նկարիչների անուններ: Այս մի խմբում բուռն վիճաբանություն է մատերիալիզմի մասին. լսվում են ականավոր փիլիսոփաների անունները, սկսած հին ժամանակներից. կրկնվում են Մարքսի, Հեգելի, Կանտի անունները:

— Սրանք ձեր գիտնականնե՞րն են— մխամտաբար հարցնում է Հասմիկը.

— Վո՛չ, վոչ, սրանք մեր բանվոր-բանվորուհիներն են,— պատասխանեց Սրեդյանը ներդաշնակ ժպիտով:

Տերրասի ծայրին, եկրանի վրա յերևաց կլինո-հեռատեսի պատկերը, ակամա գրավելով մեր ուշադրությունը:

— Վո՞րտեղ կուզեյիր լինել այս յերեկո— հարցրեց Սրեդյանը:

Ծրագիրն այնքան մեծ եր, վոր մենք մնացինք չվարած. թատրոն, յերաժշտություն, դասախոսություններ... վո՛րը ընտրենք, հիանալի յե...

— Դուք կարող եք այդ բոլորը տեսնել և լսել հենց այստեղ նստած:

Սրեդյանը ցույց եր տալիս քիչ-քիչ ամեն բանից. ահա մի բուռն դիսպուտ ապագա քաղաքի հատակագծի շուրջը, ահա մի ներկայացում, մի համերգ... բանաստեղծ Սմպյանի դասախոսությունը...

Սրեդյանը կանգ առավ:

— Այս բանաստեղծը շատ որիգինալ մարդ է. նա թարգմանել է հույն բանաստեղծ Սրիստոֆանի «Թռչուններըը» կոմեդիան և այժմ ապրում է ոդում, մեր նոր ձևի տղանավ—ոներում... այնտեղից էլ դասախոսում է...

Մենք դեռ յերկար խոսում եյինք Սրեդյանի հետ, ու քանի մոտ եյինք ծանոթանում «ապագայիններըի» կյանքին, նա ավելի մտերիմ ու հարազատ եր դառնում մեզ համար...

Յերբ մենք լինում եյինք տերրասից, Հասմիկը նորից աչք ածեց շրջակայքի լուսաշող տեսարանին ու ասաց.

— Գուրգե՛ն, այս բոլորը յերա՞զ է, թե իրականություն:

— Հասմիկ, դեն ձգիր այդ հին բառերը.— այնտեղ, վորտեղ գոյություն ունի պլանը, ինչ գործ ունեն յերազները...

Հասմիկը նայեց Գուրգենին մի թախանցող հայացքով, վորը շատ բան եր ասում...

## XII

Առավոտը զարթնեցինք արևածագին, մի նոր, անուշ ինտերնացիոնալի ձայնից:

Սրեդյանը ներքև իջավ դահլիճ, բարևեց.

— Վո՞րտեղից է լսվում յերաժշտությունը,— հարցրեց Գուրգենը:

— Այսպես ասած— մեր «տրուշանից»— արևի ուժակայանից. նրանցից մեկը մեղանից մոտ է: Ամեն առավոտ, յերբ արևի առաջին ճառագայթներն ընկնում են կայանի վրա, նա հնչում է ինտերնացիոնալը: Բայց մենք չուտով դնալու յենք բերքի տոնին. դուք պետք է անպատճառ ներկա լինեք:

Փոքրիկ տղանալով մենք թռանք ու լջանք մի ընդարձակ դաշտում: Տարօրինակ դույնզդույն մի բազմություն եր սփռվել այնտեղ, կարծես մարզ— ծաղիկներ եյին բուսել դաշտում: Այստեղ ներկայացնում եյին կենդանի պատկերով ազրակուլտուրայի պատմության բոլոր անցած շրջանները, ու դրա համար եյին խայտաբղետ հագուստները:

Ահա մի խումբ մարդիկ կլեսամերկ, հասարակ վայտերով վորում եյին դետինը. ահա մի ուրիշ խումբ— բահերով եր վարում, հետո դալիս եյին—վայտե չուբը, դուբանների տեսակները, և վերջապես՝ տրակտորը, կոմբայնն ու ելեկտրոդուբանը:

Հանկարծ դրոշակները ծածանեցին, նշան տալով ու ամբողջ դաշտի բազմությունն սկսեց յերդել. թնդաց մի հզոր, մասսայական յերդ:

Սրեդյանը կրկնում եր յերդի խոսքերը, մեզ ծանոթացնելու համար. դա աշխատանքի հիմն եր. նրա մի մասը միայն մնաց մեր հիշողության մեջ.

— «Անցա՛վ չահագործ, դիշատիչ շրջանը մարդկության, անցան պատերազմները, ու խաղաղ աշխատանքը սիրեց վողջ յերկրին... վերթում են ծաղիկները, վերթում են արտերը, աշխատանքը մե՛րն է հիմա, աշխարհը մե՛րն է հիմա...»:

— Թնդանոթները մեքենաներ դարձան, թունավոր դազերը պարարտանյութ, վողջ յերկրագունդը մի աշխատանոց է հիմա, մի արտով և բաղխում, մի սոց-կարդով ապրում... աշխարհը մե՛րն է հիմա, աշխատանքը մե՛րն է հիմա...

— Արևատիպ դաշտերով քայլեցե՛ք ազատ, հպարտ ճակատներդ հովերին արեք, քշված են անգործ կեղեքողները ու կոմունիզմի դրոշն է մեր առաջ... աշխատանքը մե՛րն է հիմա, աշխարհը մե՛րն է հիմա...

Համիկն ու Գուրգենը լսում եյին հմայված. նրանք լուռ ձեռք-ձեռքի տվին: ինչ վոր զգացմունք հորդում եր նրանց մեջ, մղում եր դեպի այդ արևավառ կյանքը...

... Բայց այդ րոպեին հանկարծ ամեն ինչ մշուշով ծածկ-

վեց. ինչ վոր ոգանալ բարձրացրեց նրանց ու ոլացալ դեպի ճերկան... Նրանք իջան նեբքև լուանի չողերով խորհանահաւաթյան բլուբի վրա, ախտոսալով, վոր առաջա կյանքի միայն մի չնչին մասը տեսան....

. . . . . : :

... Յերկուան էլ անվհատակցարար ձեռք–ձեռքի եյին տվել ու նայում եյին իրար թաւիանցող հայացքով, ասես նոր եյին ճանաչում միմյանց... Մի ակնթարթ էս,— ու իրենք էլ չիմացան, թե ինչպես գրկեցին իրար մի յերկար կարոտ համբույրով...

Լուսինը մտանեյել եր հորիզոնին ու նայում եր գանատա, իր հեռավոր սառնաթյամբ. լուսարացը հետզհետե նեբս եր սպրդում ու վերցնում առարկաների վրայից աղջամուղջի քողերը. աքաղաղները իրարից վատվաճ՝ հետզհետե ուժեղացնում եյին իրենց կանչը. դիմացի պուրակը շարժում եր իր կատարները վաղորդյան հովից. նեբքևի ճամբով անցնում եր գյուղացին, Գյուլեյի յերգը չվացնելով...

— Ի՞նչ բերինք ապագայի յերկրից— հարցրեց Գուրգենը:

— Մի ոգանալ բերինք՝ «Դեպի ապագա» ոգանալը. նա հիմա մեր թևերն է գառել...

— Իսկ ի՞նչ Թողինք այնտեղ:

— Յես Թողի իմ առրճանակը...

— Իսկ յես Թողի այնտեղ քո յերևակայած «անցյալի յենթադիտակցական մնացորդները...»

— Լույսը բացվում է Գուրգեն, դնա՛նք ուղղակի դեպի աչխատանք, դեպի վորճատաչխը...

— Գնա՛նք դեպի մեր կոլխոզի 37 անտեսությունը, վորի շարունակությունը մենք տեսանք ապագայում— ասաց Գուրգենը, Հասմիկի ձեռքը սեղմելով:

Նրանք վեր կացան աչխույժ Թաւիով: Բացվող լույսի մեջ յերկուան էլ իրար Թվում եյին նոր մարդ, նոր յեռանդով, կրկնապատկված ուժերով...

Կարծես Թև առած իջան բլուրից ու քայլերն ուղղեցին դեպի վորճատաչխը:

— Վո՛րքան ուրախ եմ Գուրգեն, վոր պայքար կա, գործ կա անելու...

Յերբ մոտեցան վորճատաչխին, հանկարծ նրանց դիմաց

յերևաց Միքայելը՝ ձիով:

— Ես վո՞րտեղ եք, ա՛յ քաջեր— ասաց նա,— մթնումը թաղնված եք, լուսումը յերեվում. դիշերս չեմ քնել, շատ անհանգիստ եյի, ասում եյի՝ չլինի՞ ձեզ վրաձանք և պատահել...

Նրա ձայնը դողդողում եր հուզմունքից, ասես իր հարազատ զավակներին եր հանդիպում:

— Վոչինչ չի պատահել,— պատասխանեց Գուրգենը, քունները չեր տանում, նստած խոտում եյինք բլուրի վրա:

— Ոտում եյինք ապաղայի մասին,— ավելացրեց Հասմիկը:

— Դե դուք տեղումն ապաղա եք, ել ի՞նչ ապաղա եք ուզում, ի՛նչ ուրախ եմ, վոր ձեզ տեսա. դե՛ գնանք վրաձագաշտը:

Միքայելը, հասնելով, կանգ առավ վրձագաշտի ծայրին, հանեց ծոցից դիտողության տետրերն ու մեծը, ավեց Հասմիկին: Նա ու Գուրգենն իսկույն առաջ ընկան արագ քայլերով:

Գուրգենին ողջմրցում եմ հայտարարում,— ասաց Հասմիկը, յերեսը դարձնելով դեպի Միքայելը:

— Ախպեր, յես ել եմ ռոցմրցման մեջ մտնում,— ասաց Միքայելը նրանց հետևից:

— Ընդունում ենք,— կանչեցին յերկուսով:

Մտան դաշտի մեջ:

— Ուրեմն Հասմիկ, դու լինճ ռոցմրցում և ել ի՞նչ ես հայտարարում,— հարցրեց Գուրգենը, յերբ նրանք հեռացան Միքայելից:

— Ռոցմրցում և ռոց-սեր... սիրում եմ մի անպիտան տղայի «ռոցիալիստական» սիրով... իսկ նա յել սիրում է, բայց իր ղպացումի անունը չի ուզում ասել...

Գուրգենը ժպտաց.

— Ես այժմ կարող եմ չարունակել իմ տետրի հոդվածը՝ սիրո մասին... սիրում եմ մի չարաճճի աղջիկա, «պայծառ արևի տակ...»

Արևը հզոր պռույտներով պատռեց հորիզոնում կուտակված թեթև ամպերն ու ճգեց դաշտին իր թարմ շողերը, ամեն ինչ վոսկեզոծելով:

Միքայելն սկսեց հաշվել ցողուններըը, բայց սխալվեց, կանգ առավ ու նայեց յերիտասարդ զույգի կողմը: Անքուն գիշերվա հուզմունքը, նրանց տեսնելու ուրախությունը, և այդ յեռուն,

*Ջահել աշխատանքը, նրա աչքերը խաղտեցին ու հրճվանք–արցունքի յերկու կաթիլներ սահեցին նրա արևակեզ դեմքով:*

*— Մեզ բանտ, մեզ աքսոր, ձեզ—սոցիալիստական չինարարություն... մրմնջաց նա ու սկսեց նորից ցողունների հաշվելը...*

1932

---

# ՋՐՎԵԺԻ ՅՈԼՔՈՒՄ

## I

*Ինժեներ Թառյանը վաղ առավոտյան դուրս յեկավ Գետաշենի կոմբինատի ժամանակավոր բնակարանից ու զարտօղղի կածանով սկսեց բարձրանալ դեպի ճոպաղլուխը: Գնում եր մտաքրաղ, դունատ դեմքով, բորբոքված աչքերով: Նախընթաց յերեկոյան՝ Գետաշենի արտադրական խորհրդակցության ժողովում նա յենթարկվեց խիստ քննադատության և տուն վերադառնալով՝ չկարողացավ քնել հուզմունքից: Առաջին րոպեներին նա վճռեց դեկուցում դրել կենտրոն, հայտնել, որ «այսպիսի պայմաններում չի կարող աշխատել», բայց մի յերկու յերես դրելուց հետո նկատեց, որ դեկուցման տեղ դուրս ե գալիս դրգռված, անկապ արտահայտությունների մի շարան, ու պատռելով դրած թերթերը, չարտեց անկյունը: Ապա՝ առանց շորերը հանելու, պառկեց մահճակալի վրա ու սկսեց կարդալ Մոսկվայից նոր ստացված տեխնիկական դիրքը: Կարդում եր ու կարծես հանդստանում.—սառը ֆորմուլները տանում եյին մի տեղը կանոնավոր սանդուխներով դեպի լրենց դգաստ բարձրունքներն ու վերացնում աստրյայից. բայց այդ տևում եր վոչ յերկար.—հանկարծ, դրքի ամենալուրջ տեղը նա հիշում եր իր դեմ խոսողներից վորևե մեկին, ու բռնկվելով գայրույթով, կորցնում եր կապը, դադարում կարդալուց. ապա հանգստանալով՝ նորից ընկնում դրքի ռելսերի վրա:*

*«Պետք ե վերջ տալ այս բոլորին»,—ասաց նա վեր թռչելով տեղից, ու սկսեց յետ ու առաջ քայլել սենյակում: Այժմ նա աշխատում եր հանդիստ վերլուծել իր դեմ առաջադրած մեղադրանքները. բայց այդ չեր հաջողվում. նա հաճախ մոռանում եր, արտացնում քայլերը, յերևակայում եր թե ելի չարունակվում ե ժողովը, ու կրկնում եր մտքում իր պատասխանը, ծաղկեցնելով նոր արգումենտներով:*

Հարվածն անսպասելի էր Թաւրանի համար: Դեռ մի քանի որ առաջ նրան թվում էր, թե լրտես վհատարարներն հարվածա-վեն, բայց այդ մտքերի մոխիրներն—հանկարծ այս անողոք քննա-դատությունը... և, ինչ, լրտես դատապարտում են վոմբինատի մեծ թերությունների համար, և՛ տեմպը պահպանելու, և՛ ձիասանյութերն ուշ հասցնելու, բանուժի պակասի, բանվորների մատակարարման, նույնիսկ տեխնիկական սխալների համար...

Ինչպես և առաջներում, նա այժմ էլ այդ հարձակումները բացատրում էր անձնական թշնամանքով, ինտրիգներով,—«այո՛, պարզ է,—մտածում էր նա, քայլելով,—այս բոլորի պատճառն այն խառնակիչներն են... ինժեներ Սարյանը—«մի նորան նայեք, ճվից նոր է դուրս եկել, բայց խո-սում է իմ տեխնիկական սխալների մասին... իսկ ինժեներ Վարդանյանն ու Սարգսյանը... չեթե չես ճանաչել նրանց, չմեղ-մացնել նրանց սխալները, այժմ ինձ վրա չեկեն ուղղել լրտես տրաքները... չէ՛, պետք է անմիջապես հանձնարարված տալ, դիմել կենտրոն, վորպեսզի հեռացնեն այդ ինտրիգաններին»:

Արտադրական խորհրդակցության ժողովում խոսեցին և բանվորները, բայց նա կենտրոնացնում էր իր ուշադրությունը միայն մի քանի ինժեներների և ծառայողների վրա, համարելով ամբողջ բերդը նրանց կազմակերպած գործը:

...Ցավ այժմ էլ, վաղ առավոտյան, անքուն գիշերից հետո, նա շարունակում է նույնը՝ նորից վրդովում էր մտքում, թե պետք է ազատել կոմբինատը «խառնակիչներից»: Բայց այդպես մտա-ծելով, նա հանկարծ հիշեց մի ուրիշ դեպք,— բերը մի անգամ նման խնդրով նա դիմեց կենտկոմի քարտուղարին, վորը լսելով նրա գանգատները, հարցրեց.

— Իսկ այս ամբողջ ինտրիգի մեջ չկա՞ն ձեր սեփական սխալները...

Ու ինքը ճնշված այդ անսպասելի հարցից, պատասխանեց.

— Ցավս, ինա՛րկե, ինձ զերծ չեմ համարում սխալներից, բայց հարցի ծանրության կենտրոնն ուրիշ տեղ է...

... Նա արագացրեց քայլերը, կարծես խուսափելով այդ հիշողությունից, ու բարձրանալով ձորափուխը՝ նստեց մի խումբ ցից ժայռերի մեջ:

Նստած տեղից նրա առաջ բացվում էր ընդարձակ տեսա-րան: Դիմացի լեռների անտառածածկ լանջերը, վաղ առավոտ-

յան մեղմ կլեսամշուշի մեջ թվում էին հեքյաթային: Ժամանակավոր, վայրե անների շուրջը դեռ նոր էին նկատվում մեկ-մեկ մարդիկ· լսվում էր դետի վշշոցը, ու յերբեմն էլ պատռելով այդ աղմուկը, գալիս էր ժամանակավոր էլեկտրոկայանի դիզելի ռիթմիկ ձայնը:

«Իսկ այս ամբողջ իրագործվի մեջ չկա՞ն արդյոք ձեր սեփական սխալները»,— նորից հիշեց նա անապատելի հարցը,— «գուցե հենց այստեղից էլ պետք է սկսել, գուցե իմ գործելակերպի մեջ լինչ վոր անհանդուրժելի բան կա, վոր պիտի ուղղվի...»

... Ու նրա հիշողության մեջ՝ մեկը մյուսի յետևից գալիս էին դեպքերն իր մոտիկ անցյալից՝ մռայլ դույներով, կարծես դիտմամբ ավելի մռայլելու համար նրա ներկան...

Նրա առաջ էր գալիս այն առավոտը, յերբ նա հեռագիր ստացավ Մոսկվայից, թե կոմբինատի պրոյեկտը հաստատված է, ու դեռ կիսահաղնված՝ ուրախ դուրս թռավ մյուս սենյակը, համբուրեց կնոջը, յերեխաներին, լցնելով իր բնակարանը ցնծագին բացականչություններով:

— Սոֆի՛կ, պրոյեկտը հաստատված է...

Ուրախությունը վարակեց ամբողջ ընտանիքը· յերեխաները վեց-յոթ տարեկան տղան ու աղջիկը, դեռ չիմանալով լինչ և պատահել, սկսեցին թռչկոտել, կախվել նրա ուսերից, իսկ լինքը քոնում, համբուրում էր նրանց...

— Նո՛ւ, Սոֆիկ, հիմա կսկսվի մեր իսկական կյանքը,— ասում էր նա ուրախությունից լայնացած դեմքով:— Նախ և առաջ նյութականը...

— Այո՛, Արտյուշ, վերջապես մենք կապրենք մարդավարի,— ասում էր կինը,— թե չե ես լինչ և մեր որը· չենք կարողանում մի կարգին բավականություն ստանալ կյանքից...

Ապա փոխոխելով ձայնը ու դեմքը, կոկետորեն նայելով ներքևից վերև, ասում և քնքշորեն·

— Գիտես լինչ, յես կուզեյի մի բան...

— Ինչ·

— Մի գաշնամուր դնենք...

— Կդնենք, իհարկե, լինչ խոսք— համաձայնվում և նա,— վոչ միայն այդ, այլ և կնորոգենք սենյակները, կահկարասիքը...

Ապա փոքր ինչ հետ ու առաջ քայլելով սենյակում, ձեռքերն ուսկասների տակ խրած, նա ասում է.

— Վաղն արդեն լրագրում կդրեն, որ յես «Գեստաչենի» կոմբինատի գլխավոր ինժեների ոգնականն եմ. հիմա դու տե՛ս, Սոֆիկ, թե ի՛նչ պիտի գդան ինժեներ Շահյանն ու Գևորգյանը. չե՛ որ նրանք աչք ունեյին այս գործի վրա. յերևի նախանձից կաթվածահար կլստանան...

Կինն ամբողջովին համակվում եր ամուսնու գործունքներով ու ավելի յե խտացնում նրա առածը.

— Իհարկե, նրանք ինչպե՞ս կարող են ներել, որ դու նրանցից բարձր ես...

— Բայց դու գեռ չգիտես, Սոֆիկ, թե ի՞նչ դժվարություններ կային գործի մեջ. ճիշտ է՝ սկզբնական պրոյեկտը կազմել ե ուրիշը, բայց միայն յե՛ս եյի, որ արյուն ու մարմին տվի պրոյեկտին, մի ուրիշը վիզը կկտրեր...

Նորից յերեխաները վրա յեն ընկնում, խնդրում, են ընծաներ դնել և նա խոստանում և լուռ. ապա կինը հիշեցնում ե, որ դեռ հագնված չե. նա լվացվում ե, հագնվում ու նստում թեյի:

Թեյի ժամանակ ել շարունակվում եր խոսակցությունը, բայց համարյա ինքն եր խոսում, և ի՞նչ՝ միայն եր նրա գլխի, իր հաշակի մասին...

«Յե՛ս, յե՛ս...» այս եր նրա լեյտ-մոտիվը...

Վո՛րքան մեծ ուրախություն եր այդ որը, բայց ինչո՞ւ այժմ այդ բոլորը պատկերանում եր մռայլ գույներով. կարծես եր մեջ մինչև այսոր մի ուրիշ մարդ եր թաղնված և միայն այժմ եր բացվում իր իսկական դեմքը:

Իսկ հետո, յերբ նա յեկավ կոմբինատ, յերբ պարզվեց, որ գլխավոր ինժեների յերկարատև բացակայության պատճառով վաճառքն ինքն և դեկավարելու չինարարությունը, նա չե՞ր մտցնում իր գործի մեջ անձնական մոմենտներ, հարցերն առաջ չե՞ր տանում մխահեծան ու խլացնում քննադատություններ...

Այո՛, այս բոլոր խրատարձի մեջ կան և իր սխալները.—սոցիալիստական չինարարությունը հանճնել են իրեն, բայց նա դեռևս «գամած» չի գրա համար... պետք և հանդիստ անալիզի յենթարկել իր դեմ բերած մեղադրանքները...և ուղղել սխալները...

Այսպես՝ նա կշտամբում էր ինքն իրեն, վերաքննելով իր մոտիկ անցյալը: Այս բարձունքի վրա, այս թարմ ոդի մեջ, նյա պիշերային մտքերը թվում էին հիվանդոտ ու թախիծում էին աշնան տերևների նման. ու մի նոր ալիք խփում էր մեջը՝ վոր պետք է փոխել ընթացքը, պետք է ուրիշ կերպ աշխատել...

## II

Արևի չրջանակը նոր էր արձակում իր առաջին շողերը դիմացի լեռների գագաթների վրա, կուվելով փոքրիկ ամպերի հետ: Ձորերում թեթև մշուշով պրպղված անտառները հեռվհեռուց պարզվում էին. գոլ ոդը, տաս նորոգված դիշերվա մթնում, մեղմ շարժում էր տողունները: Նա նայում էր առավոտյան թարմության զուրկ անտառոտ լանջերին, նայում էր ծագող արևի բոսն վերելքին, կկոցելով ուժեղ լույսից իր անքնության այրվող աչքերն ու վրկնում իր մտքում— «պետք է վերացնել թերությունները, ու նոր աշխատանքի դիմել...»:

Հանկարծ ժայռերի տակ լսվեցին մարդկային ձայներ: Նա ցնցվեց անախորժ զգացումով, ցանկություն չունենալով այդ րոպեին հանդիպել վորևե մարդու: Զանցած մի յերկու րոպե նրա առաջ յերևաց պահապան Կարոն իր մեծ փափախով, իսկ նրա յետևից մի որիորդ, ճամբորդական խակի գույն զգեստով, ուսին ձգած բինոկլը: Որիորդն իր կենսուրախ, աշխույժ դեմքով, ռուսական լայն ժպիտով մի զվարթ գարնանային շող բերավ իր հետ: Յերբ նա մոտեցավ, ինժենները վեր կացավ տեղից:

— Ներեցեք, դո՞ւք եք ինժիներ Տարյանը,— ասաց որիորդն ազատ ընչելով, ու իր կապտավուն, ցայտուն աչքերը չեշտակի ձգելով Թառյանի դեմքին:

— Այո՛, յե՛ս եմ:

— Լիդա Կրասնովա,— հայտնեց նա իր ազգանունը, ձեռքը մեկնելով ինժիներին— ներեցե՛ք, յես թյուրիմացության մեջ եմ ընկել ձեր լեզուն չիմանալու պատճառով— կարծում եյի, թե իմ առաջնորդը սանում է ինձ դեպի ձեր գրասենյակը...

— Վո՛չինչ,— ասաց Թառյանը ժպտալով,— յես կարող եմ ձեզ ընդունել և այստեղ՝ մեր գործն ամբողջովին բնության մեջ և...

— Ձես դործուղված եմ Մոսկվայից՝ «Կայծեր» ժուռնալից. ինձ հանձնարարված է դրել մի շարք ակնարկներ ձեր կոմբինատի մասին:

— Շատ ուրախ եմ, կաշխատեմ ամեն կերպ աջակցել ձեզ. առայժմ խնդրեմ նստեք և հանդստացեք այս բնական աշխոնների վրա:

Ասպա դառնալով պահապանին, ասաց.

— Կարո՛, դուռ կարող ես դնալ:

Կարոն իր մաղակալած դեմքից մի ժպտուն հայացք ձգեց նրանց վրա, խուզարկող աչքերը պսպղացնելով. նա կարծես ասում էր— «հասկանում եմ, բանն ինչումն է», ու շուռ դալով, կջալ նեղքև:

Ձեքը կերկուան էլ նստեցին, Թաւյանն ասաց.

— Սա՝ կեթե կարելի կե ասել, իմ լեռնային կարինեան է...

— Այսպես բացոթյա՞, որիդինալ է.— ասաց որիորդը ժպտալով:

— Ամեն ճիշտ— սա իմ մենատանն է. հանդստյան վայրը...

— Հիանալի՛ կե,— ասաց որիորդը, աչքերը կուչ նայելով ծաղող արևին.— կես ձեզ նախանձում եմ, դուք շրջապատված եք այս դեղեցիկ բնությամբ:

— Գործի մեջ բնության ամենադեղեցիկ տեսարանն անգամ չի նկատվում... Դուք կերևի առաջին անդա՞մն եք տեսնում մեր կերկիրը:

— Այո՛, և դուցե դրանից է, վոր չեմ հագենում նայելուց. կես այժմ նամանում եմ Տոլստոյի այն հերոսին, վորն առաջին անդամ տեսնելով Կովկասյան լեռները, շարունակ կրկնում է մտքում— «լեռները...»

Նա հանեց բինոկլը պատյանից ու սկսեց դիտել շրջակայքը:

— Հոյակապ տեսարաններ են, մեկը մյուսից դեղեցիկ... ա՛հ, ինչպես է խաղում արևը ջրվեժի հետ... ախտ ոգոստոսծե՞ք նրա տեսքը...

— Նրա չուրը քիչ է. հետագայում կոդամենք... բայց դեղեցիկ է... Ձեվ դիտեք, այդ ջրվեժի հետ կապված է մի տարօրինակ լեգենդ— պատմում են, վոր նրա վերևը, հնուս, մի չարագործ է կեղել: Մի սովի տարի կալվածատեր էշխանն ազահությունից բռնված՝ հրամայում է իր չարագործներին կերկար անգամ ավելի վերցնել չահտաը: Գյուղացիք նեղվում են, վորճում

Են գնալ ուրիշ, հեռու ջրաղացներում աղալ ցորենը, բայց կալվածատերը հալածում է, չի թողնում: Մի որ՝ յերբ նա գալիս է ջրաղացն սուզելու, հանկարծ մի չտեսնված, սաստիկ անձրև է գալիս, և կատաղի հեղեղը քանդում է տանում ջրաղացը նրա հետ ել իշխանին, ու ձգում ջրվեժի տակը, մի անհայտ անդունդի մեջ: Ասում են, դիշերները նա յելնում է հորից, ճղնում է շարձացնել գլուխը ջրի տակից, բայց ջրվեժի հարվածները նորից ձգում են նրան անդունդը...

Մինչ լնժենները պատմում եր, Լիպան՝ թողնելով բնակկը, հանեց մատիան ու բլոկնոտը ու սկսեց գրի առնել:

— Դուք արդեն գրո՞ւմ եք,— ասաց Թաուլանը զարմացած, աչքերը հառելով որիորդի վրա. մի՞թե դա ել հետաքրքիր է ձեր ակնարկների համար:

— Վոչ միայն հետաքրքիր է, այլ և իմ առաջին ակնարկի վերնագիրն է լինելու «Ջրվեժի ցոլքում»:

— Տարօրինակ մարդիկ են ժուրնալիստները ու գրողները. նրանք մի առանձին թավիով կառչում են «յենթերային» բաներից, թողնելով մեր չինարարության պրոզային, բայց ծանրակշիռ խնդիրները:

— Ձեր մեծ հարցերին կմոտենանք անշուշտ, իսկ սա այսպես ասած, նախերգանքն է... բայց հետաքրքիր է, վո՞րտեղ են այդ հարցերը...

— Այս րոպեիս իմ գլուխը լիքն է տեխնիկական հարցերով, շինանյութերի ու տարքավորման պատվերներով, բանուժի լրացման հոգսերով և այլն և այլն... այս հարցերը բոլորը բարդ են ու տաղնապալից՝ իրենց չտապողականությամբ:

— Ինձ թվում է, ձեր այդ ամբողջ առոյան, կամ ինչպես ասում եք՝ պրոզան իր բարդություններով, հոգսերով ու տագնապով մի յուրահատուկ գեղեցկություն է կազմում... յես զարձյալ նախանձում եմ ձեզ՝ դուք ստեղծագործում եք սոցիալիստական չինարարության ամենայեռուն կետում...

— Դուք ինձ գինաթափ եք անում... այո՛ իհա՛րկե, չինարարության մեջ կան բարձր մոմենտներ.— այդ այն ժամանակ է լինում, յերբ աշխատանքը ծավալվում է իր ամբողջ լայնությամբ, յերբ տիրում է յեռուզուռը, այն արբեցնող ժխորը... Այդ րոպեներին իսկապես զգում ես, վոր արժե ապրել... բայց, յերբ վերջանում է գործը, յերբ «գրի մարդիկ» վոգեվորվում

են մեր գործով՝ հանդիսասէրը բացման մոմենտին, մի տարօրինակ տխրութիւն, մի եղերեայ յիշեցում կատուցողի վրայ, կարծես մի հզոր յերաժշտութենից հետո մեզ ձգում են խորին լռութեան մէջ: Այդ մոմենտին մենք նմանում ենք այն հազվադիւտ բանաստեղծներին, որոնք տխրում են իրենց յերկը վերջացնելիս— տխրում են, որ պիտի բաժանվեն նրանից...

— Բայց ընդհանուր խանդավառութեան մէջ ի՞նչ նշանակութիւն ունեն վարպետի մրմունջները, նրա տրտունջները, դա անհատական է...

— Չի՞ վոր դուք ինձ՝ անհատիս, յերանի յեք տալիս, որպես պիտի իմանաք, թե ի՞նչ տպրումներ ունեմ յես... իսկ այն բազմաթիվ հոգսերը, պատասխանատուութիւնը ամենքի և ամեն ինչի համար, այն քննադատութիւնը, հարձակումները, որոնք առաջ ու անխնա թափվում են վրաս...

— Բայց չի՞ վոր վերջի վերջո այդ բոլորը մի ընդհանուր աշխատանքի, պոլիտվոտական չինարարութեան մասնիկներն են, իսկ այդ ամբողջութիւնն ինձ համար մի պոեզիա յե...

— Գովում եմ ձեր վերաբերմունքը դեպի աշխատանքը, բայց կարծում եմ, վոր ձեր մէջ այդ բոլորը դեռևս թեորիա յե... Հետաքրքիր կլիներ իմանալ, թե վո՞րքան հետևողական կլինեք դուք կյանքում. բայց դրա համար անհրաժեշտ է, վոր բավականաչափ տպրնք ապրեք:

— Ցնա մի ամիս մնալու յեմ:

Խոսակցութիւնն ընդհատեց շշակի թափ, հուժկու ձայնը, արձագանքելով ծորի լանջերից:

Լիպան նորից վերցրեց բինոկլը ու սկսեց դիտել ձորը: Այժմ արդեն բոլոր կածաններն վրա յերևում էին մարդկանց խմբեր, վորոնք չտապում էին դեպի դործը:

— Հիանալի՛ յե,— ասում եր որիորդը, բինոկլը դարձնելով այս ու այն կողմը. ի՛նչ դասնեղ պատկեր է, արժե մի քանի դիտողութիւններ դրի առնել...

Ու նորից հանելով բլոկնոտը, սկսեց դրել.

— Ցնրնի դուք այժմ կդրնք— «տխրանները արևի տակ...»

— Ցնա այդպես չեմ դրիլ, ասաց Լիպան, բարձրացնելով ժպտուն դեմքը.— բայց հետաքրքիր է, թե դուք ի՞նչպես կդրնք:

— Ձեռ այսպես կդրեյլ— «Վաղ առավոտյան դյուղացի Մարգարը գնում եր «Գետաչենի» կոմբինատը. նրա տրեխներին կուլի ապրը եր կպած, իսկ ուսերի վրա նկատվում էին խոտի մնացորդները. շշակի ձայնը հիշեցնում եր նրան իր կուլի բառաչը...»

— Մ'յդ և ձեր պրոլան— լավ. այժմ լսեցե'ք, յես կկարդամ ձեր թեզադրածը.— «Մի գեղեցիկ արևոտ որ, դյուղացի Մարգարը վերադառնում եր տուն, Գետաչեն կոմբինատում յերկու տարի աշխատելուց հետո. նրա վրայից խպտած չքացել էին նահապետական դյուղի հետքերը. նա այժմ տոգորված եր սոցիալիստական շինարարությամբ և գնում եր իր դյուղը կոլտնտեսության հիմնելու...»

— Ո՛, ձեզ հետ՝ պետք է զգույշ լինել, դուք գեղեցիկ աղավաղմանը եք մտցնում...

— Դուք յերևի ուզում եք ասել՝ ուղղումները...

— Մյդ. հետո կտեսնենք. իսկ այժմ յես առաջարկում եմ լինել ներքև, դեպի մեր շինարարությունը. հարկավոր է ճեղ տեղավորել և ծանոթացնել գործի հետ:

Նրանք լիյան նեղ կածանով դեպի Գետաչենի ճաշարանը.— «Ինչ լավն է անալիտանը»— մտածում եր լինժեները, յերբ Լիդան նրա առաջն եր ընկնում իր սլացիկ մարմնի աշխույժ թռիչքներով.— «Սրան կարելի յե նույնիսկ սիրել...»

## III

Ճաշարանի դռների մոտ Լիդան ուշադրություն դարձրեց սպաի թերթի նկարների վրա ու կանգ առավ.

— Ո՞ւմ մասին են այս կարիկատուրները,— հարցրեց նա:

Թադյանը միջը ինչ չմոթվեց անսպասելի հարցից, վորովհետև կարիկատուրներն իրեն եյին վերաբերվում. նա կուզեր կանգ չառնել, բայց ստիպված եր այդ անել որիորդին պատասխանելու համար.

— Դատարկ բաներ են,— ասաց նա ձևանալով անտարբեր ու թարգմանեց պրածները:

Կարիկատուրը ներկայացնում եր Թադյանին մարզարեյի յերեսար պղեստով, յերկու ձեռներով բարձր բռնած պատվիրանները. Պատկերի տակ պրած եր.

«Մեծ մարգարեն պատգամներ է բերում լեռան գագաթից.— Պատվիրան առաջին.— Աշխատեցե՛ք առանց պլանի, մինչև որ ես կվտրտվակեմ Մարս մոլորակի հետ:

Պատվիրան յերկրորդ.— կառուցե՛ք առանց շինանյութերի, մինչև որ ես ամպերը շինանյութեր դարձնեմ:

Պատվիրան յերրորդ.— կերակրվեցեք առանց մթերքների, մինչև վար ես կայծակներ կվտրտամ ապրի վրա»:

— Ո՛հո, ձեզ կարելին ձեռք են առել,— ասաց Լիզան զգուշ ժպտալով:

— Դե, իհարկե, առանց չափազանցության կարիկատուրան համ չունի...

Վորքան էլ Թաուանն աշխատում էր անտարբեր ձևանալ, նրա դեմքի արտահայտությունը մատնում էր նրան: Այս յերկրորդ անգամն էր, ինչ նա տեսնում էր այդ նկարը և ինչպես անցյալ անգամ, նա այսոր էլ մտածում էր, թե ո՞վ կարող է լինել նրա հեղինակը ու յենթադրելով սրան կամ նրան, ակամա բռնկվում էր վրեժի զգացումով: Մանավանդ այժմ, այս ոտարոտու առաջ, նա ավելի յեր զրպռվում:

Նրանք բարձրացան վերև ու նստեցին պատշգամբի վրա, վորը նայում էր դեպի ձորը:

— Ի՛նչ լավ է այստեղ,— ասաց Լիզան, հավիշտակվելով,— այս բնության մեջ ինչ վոր լարվածություն կա, այս լեռները կարծես ճնշում են, բայց միևժամանակ մի հզոր ձգտում են առաջացնում՝ բարձրանալու դեպի վեր, չա՞տ վեր...

Սպասավորը ներս մտավ, յեռևից դուռը բաց թողնելով. նա թեթև չփոթված էր, իսկ ճաշարանի աննյակից խոսակցության ձայն էր լսվում:

— Եդ ի՞նչ է Տիգրան,— հարցրեց ինժեները:

— Բողոքում են, թե ինչո՞ւ ձեզ մոտ ավելի շուտ եմ պատվիրում:

Բայց դռնից լսվեց բանվորի ձայնը:

— Ի՞նչ ա, ինժեները վերի սրտի ցավնեն ա՞, վոր նրան մեզանից շուտ ես տալիս:

— Ցես ձեզ շուտ չեմ տալիս, բայց նա եղպես է կարծում,— ասաց սպասավորը:

— Լա՛վ, քո գործը տես, յերբ վոր հերթը պահել ես, ի՞նչ խոսք:

Սպասավորը պատվերն առանալուց հետո, դուրս գնաց:

Լիզան հետաքրքրվեց, թե ի՞նչ և պատահել. Թաւյանը բացատրեց.

— Նորից քննադատություն... բողոքում են, վոր իբր ինձ ավելի շուտ են մատուցում... Այս չարաթ ուղղակի իմ բենեֆիսն է. մանավանդ անցած յերեկոյան ամենաթունդ հարձակումների յենթարկվեցի. կոմբինատի բոլոր թերությունները բարդեցին ինձ վրա:

— Ձերը ոչնչատրի մեջ թերություն է լինում, նախ և առաջ մեղադրում են դերիժյորին:

— Լավ է լինել դերիժյոր, յերբ որկեստրը՝ վորպես մի մարդ, հնչեցնում է իր սիմֆոնիան, բայց յերբ լսվում են դհոնանները, այդ դեպքում դերիժյորը կրկնակի ցավով է տանջվում. մեկն այդ դհոնանները անմիջապես լսելով, մյուսը՝ նրանց քննադատությունը ճաշակելով:

— Բայց չե՞ վոր քննադատությունը անխուսափելի յե սպրլեստրիատի ամեն մի դործչի համար. և յեթե կուզեք՝ քննադատության ժամին և, վոր նա պիտի ցուցադրի իր լայն դիտակցությունը և ասի.— այս բոլորը ճշտում է մի ընդհանուր նպատակի՝ սոցիալիստական շինարարության. հերոսը պիտի ընդունի իրեն ընտրող պրոլետարիատի հարվածները նույն հանդստությամբ, ինչպես ընդունում է իր առօրյա աշխատանքը...

— Հերո՞սը... ասաց Թաւյանը— դուք ինձ զարմացնում եք, ընկեր, ինչո՞վ բացատրել, վոր այդպես բարձր հերոսական չափանիշով եք մոտենում մեր աշխատանքին:

— Մասամբ նրանից է, վոր հայրս հին հեղափոխական է՝ Սերբերի բանտերի ու աքսորի բովից անցած մի մարդ, վորն այժմ էլ գործում է նոր, յերիտասարդ ուժերի հետ: Նրա կարծիքով սոցիալիզմի կառուցողը պիտի լինի հերոս՝ անցյալի հեղափոխականի հերոսների նման:

— Բայց միթե դուք տարբերություն չեք դնում անցյալի և ներկայի գործունեության մեջ...

— Վո՛չ, յես նյութական տարբերություն չեմ տեսնում, և ահա թե ինչո՞ւ, յերբ անցյալում մեր հերոսները գոհվում էին ցարական բանտերում, ի՞նչն էր նրանց վոգևորողը, վոր կդա մի որ, մասսաները կբարձրանան կհասանեն իր՝ հերոսի զաղափարներին ու կշարժվեն... Իսկ ներկայումս ի՞նչ պիտի ասի նա.—

«Ես պիտի աշխատեմ, տանջվեմ, մինչև վոր մասսաները կհասնեն սոցիալիզմի բարձունքներին...» և այնքան ժամանակ, վորքան վոր տարերքություն կլինի գեկտարների և մասսաների մեջ՝ հերոսը պիտի տանջվի, այրվի լույս տալու համար... Նա պիտի լինի մի Պրոմեթեվս»:

— Ո՛, մեծ անուններ մի՛ք տալ. մեր աշխատանքն ավելի համեստ է... գործի մեջ՝ լինչպես պատերազմի ժամանակ, հերոսությունը գտնում է առօրյա:

— Ի՞նչ մեծ անունների վախ կարող է լինել մեր հեղաշրջվող դարում, յերբ ամեն մի բանվորի կրծքում մի-մի Պրոմեթեվս է նստած:

Լիպան ուզում եր ելի լինչ վոր ասել, բայց այդ րոպեին վուբիկոտ ներս մտավ մատակարարման բաժնի վարիչը մտահոգված, կնճռոտ ու քրտնած ճակատով...

— Հիմադիր է սպացվել,— ասաց նա բարևելուց հետո. «Կարմիր Հոկտեմբեր» գործարանն ուշացնում է պատվերները... հետո...

— Խնդրեմ գալիս եմ,— ասաց Թադյանը խոսքը կտրելով.— խնդրեմ կանչեք ինժեներ Ալեքսիևովին... հետո այս ընկերոջ համար բնակարան պետք է պատրաստել...

Վարիչը նույն թափով դուրս գնաց, դուռը բաց թողնելով:

— Ահա մեր դրությունը,— ասաց ինժեները.— ամեն ժամ մի նոր անակնկալ և յերևան գալիս, նորից լարում մեզ, նորից պայքարի կանչում... Թեպետ յես շատ կցանկանայի ձեզ անձամբ ծանոթացնել մեր շինարարության հետ, բայց դժբախտաբար անկարող եմ. շտապ կոչվի մեր առնգային աշխատանքը.... հետաքրքիր, հետաքրքրություններ ու հաղար ու մի մեծ ու փոքր գործեր...

— Վո՛չինչ, յես ինքս կարող եմ ծանոթանալ...

— Ահա գալիս և մեր ինժեները— նա ձեզ կոդնի:

Ալեքսիևովը կանոնավոր դեմքով ժպտերես յերիտասարդ եր, պատրաստակամ արտահայտությամբ:

— Ընկեր Ալեքսիևով, ծանոթացեք ընկերոջ հետ և ծանոթացրեք նրան մեր գործերին:

— Լա՛վ,— ասաց նա, ուրախանալով, վոր բացատրություններ տալու յեկ մի գեղեցիկ օրիորդի:

Լիլան գնաց Ալենիկովի հետ, իսկ Թաւյանը չտապեց դեպի գրասենյակը, ախտոտանք զգալով, վար լինքը չի ուղեկցում որբորդին:

## IV

Ցերկու որ եր, Լիլան ամբողջովին կլանված եր կոմբինատի աշխատանքներով: Ինժեներ Ալենիկովի հետ առաջին նվագ Թռուցիկ ծանոթանալով գործին, այնուհետև նա մենակ եր գնում աշխատանքի վայրերը, դիտում, ու տեղ-տեղ կանգ առնելով, նկատողություններ գրում իր բլոկնոտում:

Գալով այս անծանոթ յերկիրը, ընկնելով այս տարօրինակ բնության ու տենդոտ կառուցման վայրը, նա կարծես մի հենակից եր գտել իր տենչերի համար:

Մի քանի անգամ նա հանդիպել եր ինժեներ Թաւյանին, բայց զուտ պաշտոնական խոսակցություն եր ունեցել հետը: Հենց առաջին տեսնելուց նա, համակրելի տպավորություն եր թողել իր վրա:

Ցերեկը որը, առավոտյան, ինժեները դուրս գալով իր բնակարանից, նկատեց, վոր Լիլան գնում է դեպի աշխատավայրը, և ուրախանալով այդ հանդիպումից, նա արագացրեց քայլերն ու մոտեցավ նրան: Նա մի պահանջ եր զգում ավելի ինտիմ լինելու այդ նորեկ աղջկա հետ: Սովորական բարևից հետո նա ասաց.

— Ինչպե՞ս եք, զո՞հ եք. յես շատ պրաղված եյի այս յերկու որս և չկարողացա անձամբ ձեզ ոգտակար լինել: Այսոր վերջ ինչ թևթև եմ, կարող եմ ձեզ ուղեկցել:

— Շնորհակալ եմ,— ասաց Լիլան,— յես բավականաչափ ծանոթացա գործին. ձեր ոգնությունն ինձ անհրաժեշտ կլինի ավելի բարդ հարցերում:

— Ուրախությամբ ընդառաջ կգամ ձեր բոլոր պահանջներին. կարող եք ինձ դիմել ձեր բոլոր հարցերով:

Նրանք գնում եյին նոր կառուցված խճուղով, զրուցելով պատահան հարցերից. վոխադարձ համակրությունը առեղծում եր նրանց մեջ մի մտերմական զգացում, վորը հետզհետե տարածում եր նրանց վրա իր բարակ ցանցը:

Նրանք պատահեցին մի խումբ բանվորների, վորոնք աշխա-

տուժ էլին ճանապարհի վրա, հարթելով անձրևից գոյացած փոսերը: Ձերը դուրդն անցավ, բանվորներն սկսեցին սրախոսել նրանց յետևից.

— Ի՞նչ աղջիկ ա, թամամ աչքի լիս ա... յարաբ ինչի՞ յա յեկել:

—Դրան էլ հարցնել կլի՞, են ա յեկել ա ինժեների հետ ժամանակ անցկացնի:

— Բա հո ինձ նման չէ,— ասաց յերբորդը, բահի վրա հենվելով,— կնկանս պատկերում տեղն էլ եմ մոլոր գցել...

— Ա՛յ տղա, ես թավուր աղջկան մոկի անելուց հետո յես վո՞նց բանեմ,— ասաց Սարոն, նույնպես հենվելով բահին:

— Դե ատ՛ա, թամբալ, քեզ էլ մի մհանա յե պակաս, վոր անզարմացուն աներս, բա՛նիր, թե չե անուամդ սև տախտակի վրա կգրեմ...

Ինժեները մի քանի քառեր վորսալով այդ խոսակցությունից, դվխե ընկալ, վոր իր մասին է, և անախորժություն զգաց. «ջեռ վոչինչ չեզած արդեն խոսում են»,— անցավ նրա մտքով:

Դուրս գալով բլրի լանջը, նրանք կանգ առան: Այստեղից բացվում եր աշխատանքի մի յեռուն պատկեր. ներքևում, մինչև դեսուդեն ալեկոծ բանվորները քանդում էլին հողը. ճանապարհի մոտ եքսկավատորն իր վիթխարի բերանով հող եր դուրս տալիս խոշոր կատրներով, տեղ հարթելով ապագա շենքերի համար:

Լիպան նայում եր ներքև, յերբեմն աչքերին դնելով բինոկլը:

— Ի՞նչ յեռանդ ներշնչող պատկեր է,— այս տենդային աշխատանքը դիտելով, քիչ է մնում յես էլ բանվոր գրվեմ...

— Յես ձեզ կառաջարկեյի ավելի լավ գործ,— քարտուղարուհու պաշտոնը— ասաց նա, ինքն էլ զարմանալով իր շտապողականության վրա:

— Դա ծրագրից դուրս առաջարկություն է. չե՞ վոր յես կարճ ժամանակով եմ յեկել:

— Վո՛չինչ, կարելի յե յերկարացնել ժամկետը. մենք կդիմենք, ուր հարկն է...

Լիպան ուզում եր մերժել, բայց տատանվեց. նա վորճեց շոկել ղրուճյունը անորոշ պատասխանով:

— Դժվար թե հաջողվի...

— Համենայն դեպս մտածեցեք դրա մասին...

Ինժեների տոնից Լիպան նկատեց, վոր նա այդ առաջարկու-

թյամբ վերոշ քայլ և անում մոտ հարաբերություն ստեղծելու՝ իրար հաճախ տեսնելու համար:

Նրանք լինան ներքև ու մոտեցան կառուցվող շենքերից մեկին: Բանվորները յետ ու առաջ էյին չտապում, շինանյութեր տանում ձեռնասայլերով ու դատարկ վերադառնում, վարպետներն արագ տեղավորում էյին բերած նյութերը:

Իջնելով շենքի վրան, Թառյանը դեռ վերևից նկատեց շենքի ծայրի անկյունում կանդնած լնժեներ Վարդանյանին, և հիշելով նրա յելույթն իր դեմ՝ չկարողանալով լինքն իրեն զսպելու մտայլվեց ու խոժոռեց դեմքը: Նկատելով նրան, Վարդանյանը մի քանի քայլ մոտ յեկավ, յենթադրելով, թե Թառյանը գալիս է իր կողմը, բայց նա պլկի թեթև շարժումով բարևեց, ու դիտմամբ ծռեց ճանապարհը դեպի աջ: Լիզան զարմացավ նրա դեմքի հանկարծակի փոփոխությունից, չիմանալով նրա պատճառը, իսկ Վարդանյանը մնաց անհարմար դրության մեջ, ու իր չփոթությունը ծածկելու համար սկսեց յուցմունքներ տալ վարպետին ձեռքերը շարժելով: Նրան բացահայտ զրկում էր Թառյանի վերաբերմունքը, մանավանդ վոր նա տեղ-տեղ կանգ առնելով նկատողություն էր անում, առանց իր՝ Վարդանյանի ներկայության:

Լիզան արդեն սկսում էր վերակերպանք զգալ Թառյանի անուշադիր վերաբերմունքից, բայց վերջինս՝ յետ դառնալով՝ հանկարծ սթափվեց, նկատելով, վոր աչքաթող է արել Լիզային ու խիստն սկսեց խոսել հետը, աշխատելով ցուցադրել Վարդանյանի առաջ էր ուրախ տրամադրությունը:

— Ընկեր Լիզա, ահա և մեր ապագա կոմբինատի գործարաններից մեկը. մի որ էլ կղաք կտեսնեք պատարաստի շենքեր, վառ լամպեր, հաղորդալարեր, բայց չեք տեսնի ինձ՝ կադուցողիս և կմոռանաք, վոր յես այստեղ տանջվել ու մաշվել եմ. հիշո՞ւմ եք Զեխովի պատմվածքը այն լնժենների մասին...

— Ի՞նչպես չե, հիշում եմ... ձեր ասածն այն լնժենները չե՞, վոր հսկայական կամուրջ և շինում ու բացման հանդեսի ժամանակ՝ բազմաթիվ հասարակության մեջ, յերևակայում և, թե բոլորը մոռացում են իրեն՝ կառուցողի մասին...

— Այո՛, հենց այդ և... և այդ մոմենտին գալիս և խայտառակ դեպում հագած կաշեշանտանի մի պարոնուհի ու հանդիսականների ամբողջ ուշադրությունը նրա կողմն և անցնում. մոռանում են և՛ կառուցողին և՛ կամուրջը...

— Բայց լհա՛րիւ, այժմ պատկերը դէմսովին փոխւել է,— ասաց Լիւիան լրջօրէն.— այժմ վոչ մի «խայտառակ» չի կարող թնդել արտիստական ուշադրութիւնը, նուինպես և վոչ մի ինժեներ չի կարող յերեւակայել, թե ինքն է մեռակ կառուցողը. այժմ կոլեկտիւն է կառուցում և նա յէ մեծարւում հանդէսի ժամանակ իր ընկերներից...

— Իհարկէ,— ասաց Թառեանը,— միայն ինչ դժգոհելով այդ ուղղութիւնից, վորը նկատառում եր իմ դէրը. ապա նկատելով նորից Վարդանեանին, նա՝ բարձրացնելով ձայնը, շարունակեց.

— Բայց այդ կոլեկտիւի մէջ կան իսկական և չինծու կառուցողներ... դուցե յես առիթ կունենամ ձեզ հետ խոսելու վերջինների մասին... իսկ այժմ անցնենք բետոնի գործարանը...

Ներանք նորա մոտ տախտակէ չինքն ու սանդուխներով բարձրացան վերև:

## V

Յերեկոյան Թառեանը նստած եր սենեակում՝ մեծ գրասեղանի մոտ՝ զբաղված եր կոմբինատի պրոյեկտներով: Ելեքտրական լամպը լցնում եր համեստ սենեակն ուրախ լուսով, կարծես մերկացնելով ամեն մի եր, բացելով ամեն մի թաղնված անկիւն: Նրա աջ կողմը զրած եր թղթերով լիքը պորտֆելը, իսկ սեղանի վրա անկանոն ցրւած եյին գծագրերի խողովակաձև փաթաթները, գրասենեակից բերած «գործեր», գրքեր, հաշւարկման աղիւսակներ, և այլ թղթեր:

Գլխաւոր ինժեներն ուղարկւել եր Մոսկւայից կոմբինատի ընդարձակման պրոյեկտները՝ տեղում մի շարք հարցեր պարզելու և վերջնական լրացումներ մտցնելու համար: Այժմ Թառեանն ուսումնասիրում եր այդ պրոյեկտները, պատրաստւելով զեկուցման տեխնիկական խորհրդում:

Նա ուշադրութեամբ նայում եր առջևը բացւած գծագրերին, ու տեսակ-տեսակ թղթի վրա հաշւում ու տողում: Պրոյեկտների կապույտ ֆոնի վրա արտացոլւում եյին սպիտակ գծերը, ասես բացելով նրանց թաղնված գաղտնիքները:

Վերջացնելով գլխաւոր պրոյեկտներից մեկի տողումը, նա ուշ յերեկոյան վեր կացաւ տեղից ու սկսեց հետ ու առաջ քայլել սենեակում:

«Ուրեմն կոմբինատն ընդարձակվում է,— մտածում էր նա.— այն, ինչ կենթադրություն էր, այժմ դառնում է իրականություն... ո՞ւմ կհանձնեն նոր շինարարությունը, ո՞վ կլինի դեկավարը, ի՞նքը, թե մի ուրիշը...» Այդ հարցը հուզում էր նրան. նա սիրում էր իշխանությունը, թեպետ և խորշում էր նրա բարդություններից ու ծանրություններից:

Գլխավոր ինժեները դրում էր, որ կմնա Մոսկվայում դարձյալ մի ամիս «դուցե և ավելի», այդ լուրը ուրախացնում էր նրան, քանի որ իր «իշխանությունը» շարունակվելու կնորից. նույնիսկ յերբեմն նա մտորում էր, թե մի դուցե գլխավոր ինժեները կմնա ընդմիշտ Մոսկվայում, և այն ժամանակ... ինքը՝ Թաւյանը կլինի նրա տեղը... բայց այդ դեպքում նա կկարողանա՞ արդյոք վերականգնել իր խախտված դիրքը, մոռացության տալ իր «պարտությունը...» ահա ի՞նչն էր գլխավորը... վերեղից էլ սկսում էր նա, միշտ դալիս էր դեպի իր «պարտությունը», որը սարի նման ծառանում էր առաջը...

Նա կանգ առավ պատուհանի առաջ ու դուրս նայեց: Իր դիմաց, մեծ չինքի առաջ, էլեկտրական լամպի տակ, կանգնած էր պահակը՝ հրացանն ուսին, աչքերը հառած մի կետի:

Թաւյանը նայում էր անթարթ, կարծես առաջին անգամն էր պահակ տեսնում ու զարմանում. նա դրավում էր իր ուշադրությունը:

«Ուրեմն մենք պիտի այրվենք ու լույս տանք, վորպեսզի սրանք հասնեն սոցիալիզմի դադաթնակետին, և ունենան նույնպիսի բարձր դիտակցություն, վորպես և իրենց դեկավարները»,— այսպես էր մտում Լիդան...

... «Բայց չե՞ վոր կարող է պատահել, վոր այս պահակը ավելի հարուստ մտքեր ունենա, քան յես, վոր լոկ մի «սպեց» եմ, վարակված փառքի ու իշխանության տենչով...»

...«Պիտի այրվել լույս տալու համար, պիտի կյանքը դնել սոցիալիստական շինարարության համար...» Ցնծում Լիդայի այս մտքերը յես համարում եմ «անկորած», թեորետիկ, ապա ի՞նչ եմ առաջադրում նրանց փոխարեն, ի՞նչի եմ ձգտում... Շուրջս ամեն ինչ շարժվում է, իսկ իմ կյանքը կարծես կանգ է առել...

«Ցավ դրա պատճառն այն է, վոր մի անգունդ է գոյացել իմ և բանվորության մեջ...»

Նրա հայացքն ընկավ այն չեզքին, վորտեղ ապրում եր Լիդան:

... Յեթե Լիզան համաձայնվեր իր մոտ աշխատելու... ինչո՞ւ չե նրան թվում, թե այդ կինը կարող է մի առանձին դեր խաղալ իր կյանքում, առես նրա ձեռքին հրաշալի բանալիներ կան... Թվում է, թե նա՛ կարող է մի կամուրջ ձգել իր և մարդանեերի մեջ...

Մի ղգացում քաշում եր նրան դեպի այդ որիորդը, բայց գա լոկ մարմնի, դեղեցկության հրապուրը չեր. նրան դուր եկին գալիս Լիզայի հերոսական ձգտումները, նրա խիզախ, պայքարող մարքերը, թեկուզ և նրանք իր աչքում «անիսրճ եկին Թվում, առերյա կյանքից հեռու...»

Բայց ահա բավական ժամանակ է, Լիզան դրական պատասխան չի տալիս իր առաջարկին՝ պաշտոնավարելու Գետաշենում՝ և այդ հապաղումն ավելի չե լարում իր ձգտումը դեպի նա:

Նա մտեցավ սեղանին, հավաքեց կարևոր թղթերն ու դծագրերը: Յերը բացեց պորտֆելը, այնտեղ նկատեց մի ծրար. դա կնոջ նամակն եր, վորը ստացել եր ցերեկով, բայց ժամանակ չունենալով կարդալու, մոռացել եր պորտֆելի մեջ:

Նա չտասով բացեց ծրարն ու սկսեց կարդալ: Կինը գրում եր, սովորական ձևով, վոր յերեխաները լավ են, բայց կարոտել են հորը, հաղորդում եր մի շարք նորություններ ծանոթների և բարեկամների մասին, ապա նորից անցնում է յերեխաներին.

«Պավլիկն ասում է, թե պիտի դա քեզ մոտ իր ընկերը հովտեմբերիկների «կոլեկտիվի» հետ. այդտեղ պիտի մի աշտարակ կառուցեն և դրա վրա մի այնպիսի մեծ էլեկտրական լամպ դնեն, վոր ամբողջ աշխարհին լուս տա...»

Թառյանը կանգ առավ բոլորապես տխուր ժպտալով.

«Յերեխան ինձնից լավ է ծրագրում— մտածում եր նա.— նա դալիս է կոլեկտիվի հետ, իսկ յես շարունակ պատվում եմ իմ յեսի շուրջը...»

Բայց նամակի վերջին առանձնապես դրավեց Թառյանի ուշադրությունը. այնտեղ կինը մի անսովոր առնել ղրում եր, թե վերջերս Թառյանը անտարբեր և դարձել դեպի ընտանիքը, վոր վերջերս Թառյանը ծանր խոհեր և թերում իր մեջ... «Գուցե այդ հանգամանքը ծանր խոհեր և թերում իր մեջ... «Գուցե

հարկավոր և ինձ էլ ընթանալ նոր ուղիներով... կուզեյի յես էլ անկախ կյանք վարել...»

Նա մնաց ապշած այս տողերից.— «ուրեմն այստեղ էլ նոր ուղիներ, այստեղ էլ ճեղքվա՞ծ... Նա՛ էլ, ինչպես և յես, կանգնել և «անխուսափելի հարցերի առաջ...»

Նա նստեց սեղանի մոտ ու մի քանի րոպե մոածելուց հետո սկսեց գրել պատասխանը: Փոքրիկ ներածությունից հետո նա շարունակեց.

«Այն հոգեկան կացությունը, որի մեջ յես գտնվում եմ ներկայումս, կարող եմ անվանել ճգնաժամ...

Ճիշտն ասած՝ այդ ճգնաժամն սկսվել եր վաղուց, բայց չեր նկատվում, ինչպես չեր նկատվում որ-որի վրա չորի մաշվելը... Ամենից կասեմ,— յես նույնիսկ կուրացած յենթադրում եյի, թե ինձ կմնծարեն, կհայտարարեն հարվածային...

Բայց ահա մի որ ինձ համար պարզվեց, որ յես վոչ միայն չեմ վայելում մասսայի համակրությունը, այլև նա ինձ անվըստահության քվե յե տալիս: Մի յերեկո՝ մի լայն ժողովում, ինձ յենթարկեցին քննադատության, և այն որվանից սկսվեց այս բոլորը...

Սկզբում, ճիշտ է, յես կարծում եյի, թե դա մի պատահական յերևույթ է, ինտրիգների արդյունք, բայց հետզհետե համոզվեցի, որ դա տարիների յեղրակացությունն է, նրանց հաշվեհարդարը... պարզվեց, որ յես կցված եմ յեղել սոցիալիստական չինարարության, կատարել եմ խորհրդային «ծառեր», բայց ներքուստ կապված չեմ յեղել նրա հետ...

Յեվ ահա մի որ լուսարձակին ընկավ ինձ վրա. մարդիկ տեսան այն, ինչ վոր կար՝ վոր յես խորթ եմ շրջապատին... Սկզբում չեյին ուզում հավատալ, բայց այժմ յես ինձ տեսնում եմ կանգնած մի պատի առաջ, վորի վրա գրված է— «այստեղ վերջանում է անցյալը...»

Ահա վորտեղ եմ յես գեմ ընկել ու նայում եմ առաջ վիրավոր տրտում... ի՞նչն է այժմ ինձ ուժ տալիս— այն, վոր մեջս ճեճ ցանկություն եմ զգում ընթանալու նոր ուղիներով, գործադրելու իմ գիտությունն ու փորձը սոցիալիստական չինարարության համար...

Բայց դրա համար անհրաժեշտ է վերափոխվել. դրա համար հարկավոր են նոր թեվեր...

Դու գրում ես, վեր կարիք ես զգում «նոր ուղիների», ուզում ես լինել անկախ և այլն... ի՞նչ կարող եմ ասել՝ միայն մի բան— հեռացի՛ր քո պատրաստության, քո վճռից. միևնույն է, վարքան էլ թափնվես/ չուրջդ վխտացող մարքերից, նրանք անխուսափելիորեն կգան, կվանգնեն առաջդ. ու կասեն այն, ինչ ինձ են ասում.

— «Այսօրվ վերջանում է անցյալը...»

## VI

Լեցուն, ծանրակշիռ որ եր Թադյանի համար, այն որերից մեկը, յերբ կարծես ամբողջ վինարարությունը կենտրոնանում եր իր կաբինետում, յերբ նույնիսկ վինարարության վուշին ասեղախոսում եր իր մոտ՝ այցելուների վոտներով:

Նրա համար հաճելի յեր, վոր բազմաթիվ մարդիկ կախում ունեն իրենից, սպասում են իր վճռին, և այդ վճիռն անմիջապես զառնում է իրականություն, գործ: Այդ ժամերին նա լըցվում եր մի արբեցնող զգացումով. թվում եր, թե բոլոր բանվորներն, աշխատակիցների կամքը կենտրոնանում է իր մեջ, թե ինքն է բարձրացնում չենքերը...

Այսպիսի ժամերին նա համերաշխ ու ներդաշնակ եր ընդհանուրի հետ:

Բայց այդ ժամերի մեջ անխուսափելիորեն ներս էլին սլըզդում զանազան անախորժ, խճճված հարցեր. հազիվ մեկից ազատվելով, նա ընկնում եր մի ուրիշի մեջ, ասես նրան մաս-մաս էլին անում և տեղավորում մանր տուփերի մեջ:

Այդպիսի րոպեներին նա իրեն զգում եր պաշարված «մանրությունքով» (ինչպես ինքն եր անվանում այդ խճճված հարցերը), ու մի ցանկություն եր դալիս մեջը՝ ազատվել իշխանությունից, անցնել մի համեստ, քիչ պատասխանատու պաշտոնի:

Առավոտյան ամենից առաջ նրա մոտ յեկավ մատակարարման բաժնի վարիչը: Թադյանը գնահատում եր այդ թխադեմ, ուշադիր հայացքով Մելքյանին: Նրա ձախ աչքը չարունակ կիսախուփ եր, կարծես անընդհատ հնարներ եր վնտռում դժվարություններից ազատվելու համար:

Նա բերավ մի շարք անախորժ լուրեր.— այս ինչ գործարանը ուշացնելու յե իր պատվերները, մի ուրիշն առաջարկում է

լքացուցիչ պայմաններ... Շինանյութերի վերաբերմամբ սպասվում են կրճատումներ...

Յեվ այդ բոլորի դեմ անհրաժեշտ եր պայքարել, միջոցներ ձեռք առնել՝ հարմարեցնելու արդեն հունի մեջ ընկած գործն այդ նոր փուփոխությունների հետ:

Նրա դնալուց հետո յեկան զանազան կազմակերպություններ, տրեստների, գործարանների, արտելների ներկայացուցիչներ: Նրանք հիշեցնում եյին, վոր իրենց աշխատանքներն սկսվելու ժամկետն արդեն անցել է, սպառնում եյին խախտել պայմանագրերը: Հողափորների մի արտելի վարիչ յերկար ժամանակ վիճում եր, ապացուցում, վոր իրենք վնաս են անում, և խնդրում եր՝ պայմանին հակառակ ավելացնել գները: Յեվ այս բոլոր հյուրերի հետ անհրաժեշտ եր «լեզու գտնել», համոզել, հեռաձգել ժամկետները, խոստումներ անել...

Ժամի մեկին նշանակված եր տեխնիկական խորհրդակցություն: Նա պատվիրեց սպասավորին այլևս չընդունել այցելուներին, բայց քիչ անց՝ պարզվեց, վոր յերկու ինժեներների ըգրաղված լինելու պատճառով ժողովը չի կայանալու:

Թառյանը թիկնել եր աթոռին ու կարծես ուշում եր վորոշել, թե վո՞ր գործին պիտի անցնի այժմ: Բայց նոր անցած խոսակցություններն ու վեճերը դեռ ևս իներցիայով աղմկում եյին մեջը: Ու այդ մտածումների ժխորի մեջ մի միտք սողում եր մեջը...

«Արտաքուստ կարծես ամեն ինչ գնում է իր կարգով, ընդունում եմ մարդկանց, խոսում, կարգադրում, բայց ներքուստ մեջս մղմղում է մի վերք... այս բոլորը չի կարող լցնել այն անդունդը, վոր գոյացել է իմ և բանվորության մեջ. հարկավոր է մի արտակարգ բան...»

Հանկարծ նրա առանձնասենյակի դուռը վոքր ինչ բացվեց ու արանքից ներս նայեց Լիդան: Դռան յետևում լսվում եր ըսպասավորի արդելող ձայնը:

Թառյանը դուրեկան ցնցումով սթափվեց, ու դլխի շարժումով բարևելով, ասաց.

— Համեցե՛ք:

Լիդան աչխուժով ներս մտավ, կարծես ինչ վոր գրավիչ ձգողով լցնելով սենյակը: Նա հագել եր նավաստու կապույտ

ոպիտակ բլուզ, ձեռքին բռնել ժուրնալների ու լրագրերի մի կապոց: Նրա դեմքն արեվից կարմրել էր, և ուրախ հոգմոնքի մեջ էր:

Թառյանը ձեռք տվեց ու ցույց տալով աթոռը, առաջարկեց նստել:

— Այս վո՞րտեղ էք, ընկեր. բավական ժամանակ է, չեյից յերևում, մոռացել էք մեզ:

— Չեմ մոռացել. համենայն դեպս իմ բլոկնոտը միշտ հետս է ձեզ...

— Բլոկնո՞տը... ո՞վ գիտե լինչ սարսափելի բաներ էք դրում մեր մասին:

— Ի՞նչ կա վոր. յեթե գրածս ճշմարտություն է, լի՞նչ կա- րող էք առարկել:

— Գուցե և չատ բան. ճշմարտությունը պիտի ներկա- յացնել իր արմատներով, ուզում եմ ասել՝ իր պատճառնե- րով...:

— Բայց դուք գիտե՞ք վոր կան պատճառներ և «պատճառ- ներ». յերբեմն նույնիսկ առաջ են բերում յերկհարկանի «պատ- Էառների պատճառները» և հարցերը հյութազուրկ անում...

— Չկարծեք, թե միայն բացասական կողմերի մասին է խոսքս. յես ուզում եմ ասել, վոր արտաքինից դատելով, կարող եք թյուրիմացություններ մեջ ընկնել. որինակ՝ անցյալ որը մի թղթակցություն կարդացի մեր չինարարության մասին: Թղթակիցը մեծ վոգևորությամբ խոսում էր մեր մասսայական աշխատանքների մասին.— «հարյուրավոր ձեռքեր քանդում են...» և այլ... իսկ այդ նույն պատկերն լինճ տխրություն է պատճառում. վորովհետև մենք դեռևս այդ մասում չենք կարո- ղացել մեխանիզացիա մտցնել...

— Յես կաշխատեմ խոսափել վրիպումներից.— դժվար հարցերի վերաբերմամբ միշտ խորհրդակցում եմ ինժեներների հետ:

— Այժմ դուք բավականաչափ ծանոթացել եք մեր չինարա- րությանը. լի՞նչ տպավորություններ ունեք:

— Կասեմ առանց թաղցնելու. իմ կարծիքով ձեզ մոտ ար- դիականական չինարարությունը միահյուսվանի յե առաջ շը- նում...

— Այո՞նքն։

— Դուք կառուցում եք չէնքեր, բայց կարծես մոռանում եք, վոր դրա հետ զուգընթաց պիտի կառուցեք և մարդկանց նոր՝ սոցիալիստական դիտակցությունը...

— Ա՛յ թե վորտեղից եք բռնում մեզ— ասաց Թառյանը։— բայց յեկեք խոսենք կոնկրետ... ի՞նչ եք ուզում ասել։

Լիդան մի պայծառ, զարմացկոտ հայացք ձգեց Թառյանի վրա։ Նրան դուր եր գալիս այդ կովկասյան առնական դեմքը իր թախծոտ, խոհուն աչքերով. բայց այդ դեմքի վրա նրա ինքնաերությունը խայթում եր հեղնող ժպտի հպվիլ նկատելի մի պիծ. նրան թվում եր, թե այդ ժպիտն ասում եր։— «ինչ ուզում ես խոսի՛ր, բայց լմացի՛ր, վոր դու կին ես, այսինքն՝ փոքր ինչ յերեխա...»

— Լավ, յես կխոսեմ ավելի կոնկրետ։— ասաց Լիդան։— Մեր հիմնարկները, նորաշենները, յերբեմն մոռանում են, վոր պիտի լինեն նոր, սոցիալիստական կյանքի դպրոցներ. նրանք պիտի կարմիր բանակի նման ներս առնեն մարդկանց և դուրս թողնեն վերափոխված...

— Բայց մի՞թե մեզ մոտ այդ չի արվում։

— Շատ քիչ։

— Գուցե մենք այդ ասպարիզում քիչ արդյունք ենք տվել, բայց պիտի լմանաք, վոր այդ վերափոխումը մի որվա գործ չե... հարցը բավական բարդ է՝ մանավանդ մեր շինարարության հոսուն, փոփոխվող բանվորության վերաբերմամբ. այս կետում մեր ընկերները հաճախ են չեղվում...

— Ինչպես և դուք եք չեղվում հակառակ ուղղությամբ՝ հանուն ձեր շինարարության դուք աչքաթող եք անում կառուցողներին... մենք այդ կետում կպայքարենք ձեր դեմ...

— Ցես համաձայն եմ ձեզ հետ պայքարելու,— ասաց Թառյանը ժպտալով,— պայմանով, վոր դուք աշխատեք մեզ մոտ։

— Ցես հենց դրա համար եմ յեկել. բանը նրանումն է, վոր մեծ անհարմարություն եմ ղգում, յերբ գնում եմ դիտելու ձեր աշխատանքները. մի տեսակ բուրժուայի տեսք եմ ստանում,— ուրիշներն աշխատում են, իսկ յես նայում եմ....

— Այո՛, անցյալ որը մեր ինժեներներից մեկն ասում եր, վոր դուք ամեն տեղ մագնիսական փոթորիկ եք առաջացնում։

— Ի՞նչպես թե...

— Ուշադրություն եք դրավում:

Լիզան կարմրեց:

— Գուցե և խանգարում եմ...

— Վոչ, այդպիսի բան չկա, սա կատակի խոսք է. ուրեմն... ընկեր Լիզա, ձեզ անհրաժեշտ է պաշտո՞ն. կես նորից իմ առաջարկությունը կանեմ ձեզ...

— Վո՛չ, կես կուզեմ մի այնպիսի պաշտոն, վոր ինձ հնարավորություն տար մոտ լինել բանվորական մասսաներին:

— Լա՛վ, կես չեմ պնդում. մանավանդ վոր ինքս էլ ընդունում եմ, վոր կենցաղային հարցերին առանձին ուշադրություն պիտի դարձնեն:

— Ուրեմն կարող է պատահել, վոր մենք չպայքարենք այդ հարցերի շուրջը, այլ ընդհակառակը— ընթանանք մի դծով...

— Ինչպես կերևում է՝ դուք լուրջ սպառնալիքներ եք ունեցել. կերևի ձեր բլոկնոտում բավականին պայթուցիկ նյութեր կան մեր դեմ...

— Այնքան էլ չէ, ահա տալիս եմ ձեզ, կարդալ եք կարդալ...

Թառյանն ուզում եր հրաժարվել կարդալուց, ցույց տալու համար, վոր կարևորություն չի տալիս, բայց չկարողացավ զսպել իր հետաքրքրությունը, վերցրեց բլոկնոտն ու սկսեց թերթել: Մի քանի կերեսից հետո զրած եր խնամքով մի հոդված «Բրոնզե լինժեներ» վերնագրով:

Նա սկսեց կարդալ գովասանական ակնարկը, յենթադրելով թե իր մասին է, բայց կերկու կերեսից հետո նկատեց, վոր լինժեներ Սարյանի մասին է, ու մի թախիծ լցավ վրան, ասես մի թել կտրվեց... իր հակառակորդը գովասանքի կեր արժանանում...

Նա թողեց այդ հոդվածն ու չարունակեց թերթել, իր հուզումը ծածկելու համար: Հանկարծ նրա աչքին ընկավ մի անպերություն, վորն իրեն եր վերաբերում.—

«Ինժեներ Թառյանը... դեռ չի սպասազրվել անցյալի ժառանգությունից... բանվորները նրա համար ավելի «բանուժ» են, քան սոցիալիզմի կառուցողներ... տարված և իշխանության տենչով, «կառուցողի» փառքով... բայց դրանց տակ կա խորհող ու վնասրող մի մարք... Թվում է, կեթե վերացվի մի

*քարակ կեղև, նա կհարի իսկական սոցիալիզմին, կկցվի մասսաներին...»:*

*Թաւյանը կարդաց չունչը պահած, մեծ ջանք գործադրելով, վորպեսզի չմատնի իրեն. ապա վերադարձնելով բլոկնոտը, ասաց,— մի բան ասելու համար.*

*— Գոլում եմ ձեր յեռանդը. չարունակեցեք նույն վոգով...*

*Լիդան վեր կացավ տեղից:*

*— Ուրեմն, ընկեր Տարյան, դուք կխոսե՞ք իմ պաշտոնի մասին,— կարճ ժամանակով է, բայց անհրաժեշտ է:*

*— Լավ, կխոսեմ և ձեզ համար կանեմ:*

*— Ցտեսություն,— ասաց Լիդան, ձեռքը մեկնելով Թաւյանին: Նա դնաց, իսկ Թաւյանը մնաց անշարժ իր տեղը, կարծես Լիդայի խոսակցությունը մի յերաժշտություն եր, վոր դեռ շարունակում եր հնչել իր ականջին. բայց այդ յերաժշտությունը միաժամանակ և գրավում եր, և տանջում... Լիդան բացատում եր իրեն,— «անցյալի ժառանգությունից չազատագրված...», հնչում եր նրա ականջին Լիդայի խիստ դատավճիռը....*

## VII

*Արևը վայրում եր խճուղու վրա, խաղում եր գետի փրփրուն ալիքների հետ. զով ոդը մեղմ սահում եր, գուրգուրում դեմքերը. գետի վշշոցի հետ աղմկում եր մյուս ափին գտնվող սղոցարանը:*

*Ինժեներ Սարյանը (վորին Լիդան «բրոնզե ինժեները» եր անվանել իր ակնարկի մեջ), կանգնած եր կամուրջի վրա, իր նախկին ուսանողական ընկեր Աչխենի հետ, վորը յեկել եր եքսկուրսիայի և այժմ հրաժեշտ եր տալիս:*

*Ինժեների դեմքը, վորն առանց այն էլ թուխ եր, բացօթյա աշխատանքից ավելի յեր այրվել, սևացել:*

*Նա հագել եր արևից խունացած, կինամոնագույն բլուզ, վորի ոճքը բաց եր թողել, իսկ դոտու տեղ մի չիչ-վոր թել եր կապել:*

*Աչխենի հետ նա ուսանողական տարիներին մտերիմ եր. հետո, յերբ նա ավարտեց ու տեղափոխվեց Գետաչեն, կապն ըս-*

*լըղբում պահպանվում եր նամակադրությամբ, բայց շատ չանցած՝ այդ ել դադարեց:*

*Ա.չխենը յեկել եր եքսկուրսիայի, բայց նա մի ուրիշ՝ դաղտնի նպատակ ել ուներ,— նա յեկել եր պարզելու, թե ինչո՞ւ յե լռել Ս.րմենը, և ի՞նչ դիտավորություն ունի նա իր վերաբերմամբ...*

*Բայց այդ հարցը շատ «վտանգավոր» եր, հարկավոր եր մոտենալ դրան հեռավոր պատրյանների միջոցով. սակայն արդեն յերկու ժամ եր, ինչ նա այստեղ եր, բայց չեր կարողանում մի բան հասկանալ այդ «ժայռի կտոր» տղայից: Մոսելիս նա չեր նայում Ա.չխենին, այլ հրամանատարի նման դեմքը պտտում եր այս ու այն կողմը, կարծես այնտեղ կռվող զորքեր կային, և իր հրամանին եյին սպասում:*

*«Ի՞նչ ե պատահել,— մտածում եր Ա.չխենը.— Ինչո՞ւ յե նա այնպես խորթացել, վոր վոչ մի կերպ չի հաջողվում մեջ բերել «այն հարցը...» Ճիշտ ե՝ նա խոսում ե, բայց ինչի՞ շուրջը—շինարարության, տեխնիկայի, պլանների, սոցիալիզմի հաղթանակի...*

*— Մեր գործերը լավ չեն գնում,— ասում ե նա մտահոգ,— պետք ե անընդհատ աշխատանքի դիմեյինք, բայց չի հաջողվում շինանյութերի պակասության պատճառով.. բայց վոչի՛նչ, մեր հարվածայիններով միջոցով ամեն ինչ կհաղթահարենք... Ե՛ Ա.չխենն, արժե կյանքը դնել սոցիալիստական շինարարության համար...*

*Ա.չխենը լսում եր լարված դրության մեջ, ուզում եր խոսքը դարձնել իրենց անցյալին, կամ «ապագա» ամուսնության, բայց Ս.րմենն ելի իրենն եր քշում,— խոսում եր շենքերից, մեքենաներից, հիդրոկայաններից: Ահա մնացել ե մի քանի րոպե, արդեն Ա.չխենի ընկերները դնացել են, ինքն ել պիտի դնա մյուս կողմը. նա զայրույթից ինքն իրեն ուտում ե, ուզում ե կշմտել Ս.րմենի թևը, ուշքի բերել նրան, բայց նա ելի դարձի չի գալիս:*

*— Ինձ ուզում են հարվածային հայտարարել,— ասում ե Ս.րմենը,— բայց ամաչում եմ, չդիտեմ, ինչպե՞ս պիտի կանգնեմ բանվորների առաջ ու դովասանք լսեմ իմ մասին...*

*— Հիշո՞ւմ ես մեր ուսանողական կյանքը,— վերջապես հարցնում ե Ա.չխենը.*

— Ե՛հ, ի՞նչ հիշեմ, բան չեմ լինք սովորում.— «պատարիլ պվարդիայի» անդամները եմինք դրվել... հիմի գլխիս վա՛յ եմ տալիս: Նոր եմ սկսում սովորել: Այստեղ վոր յեկա, վճռեցի բոլոր աշխատանքներն ուսումնասիրել, բայց մի յերկու ինժեներ բյուրոկրատություն են անում, շատ բան չեն լուսաբանում: Ինժեներ Թադյանն ինձ չի սիրում. անցյալ անգամ «արտադրականում» քննադատեցի նրան, հիմա ամպամած և նայում վրաս...

Աշխենը յենթադրում եր, թե Ամբենը մի ուրիշ «սրտի հատոր» ունի, նա փորձում եր մի բան լսմանալ.

— Այստեղ հետաքրքիր աղջիկներ կա՞ն:

— Չգիտեմ:

— Ասում են մի ռուս աղջիկ և յեկել Մոսկվայից.— գեղեցիկ ե՞:

— Չգիտեմ:

— Բա դու աչքեր չունե՞ս.

— Դե՛ աղջիկ և, ե՛լի... ո՞վ ժամանակ ունի...

— Յե՞րբ ես դալու քաղաք:

— Գուցե աշնան վերջը:

— Վեր գնամ, ո՞ւմ բարևեմ,— հարցնում և Աշխենը ընկճված ձայնով, մտածելով, թե գուցե այնտեղ, քաղաքումն և Ամբենի «սիրտը»: Բայց նա անսպասելի կերպով ասում և.

— Հա՛, կասես Բարկենին, վոր ուղարկի իմ գիրքը— Ամբարտակների մասին... անպատճառ ուղարկի...

Աշխենի ընկերուհին հեռվից՝ գետի մյուս ափից, թաշկինակով նշան և անում, թե գնալու ժամանակն և. Աշխենն ելի մի փոքր մլուլ և տալիս, հուսալով թե վերջապես «սառույցը կհալի»:

Մի րոպե յերկուսի հայացքները հառում են իրար. Աշխենը ձգտում և թափանցել նրա «ներսը», սպասում և թե նա կասի իր ուզածը, բայց լսում և ուրիշ բան...

— Աշխեն, ինչո՞ւ դու այդպես քաշվեցիր ասպարեզից,— հարցնում և նա լուրջ,— մտել ես ինչ վոր պստիկ հիմնարկ, թաղվել ես թղթերի մեջ, բյուրոկրատություն ես անում...

— Ջուր ես կարծում, թե դո՛ւ յես միայն շինարարությամբ զբաղվում,— ասում և Աշխենը նեղացած, ապա ձեռքը մեկնում և վուխկոտ շարժումով.

— Մնաս բարև:

Ու գնում է պայրացած, արագ քայլերով, չնկատելով առջևի ճանապարհը:

«Բրոնզե լնժենները» մի րոպե նայում է նրա յետևից ու կաթծես հանկարծ մտաբերում է, վոր Աչխենը գնաց նեղացած, և ցանկանալով մեղմացնել դրուքյունը, կանչում է նրա յետևից.

— Աչխեն, ձմեռն արի՛, ձմեռը, դործի թեթև ժամանակը...

— Ինչո՞ւ, յես քո վառարանն ե՞մ, վոր ձմեռը գամ,— ասում է Աչխենն ու ավելի րոպրոքվում, խառնում քայլերը, դիպչում քարերին:

«Վերջացավ, ամեն ինչ վերջացավ»,— մտածում է Աչխենը, ու գնում հուսահեկ, հետզհետե ծանրացող քայլերով:

Իսկ բրոնզե լնժենները չտասլ գնաց դետի ափով դեպի վեր:

Քիչ անց, նա լսեց աջ կողմից քայլերի ձայն, ու յերեսը դարձնելով նկատեց Լիղային, վորն իջնում եր նեղ կածանով:

— Բարև ձեզ, ընկեր,— ասաց Լիղան, մոտենալով.— այս ճանապարհով յես չեմ գնացել, խնդրում եմ ինձ տանեք ավազանի մոտ:

— Ցես հենց այնտեղ եմ գնում:

Ու չարունակեցին ճանապարհը միասին:

Հենց վոր Աբմենն ու Լիղան իրար ընկան, Աչխենի ընկերուհին հեռվից նկատեց ղուդին ու նրա ուշադրուքյունը դարձրեց այն կողմը:

«Ահա թե ինչո՞ւ յե սառել դեպի ինձ,— մտածեց Աչխենը արտ ճմլոցով. նա հազիվ եր կարողանում զսպել իր հուզումը, ու ատամները կրճտացնելով նայում եր:

— Ե՛հ, գնանք,— ասաց Աչխենը ջղայնորեն.— ինչ վոր պրակտիկանտ ուսանողուհի յե, Մոսկվայից ե յեկել...

Այժմ նա արդեն «գիտեր» պատճառը, ու մտածում եր վրեժի մասին. նա «վրեժը» կրկնում եր մի առանձին կրքով, ասես բավականուքյուն եր ստանում նրանից:

Լիղան գնում եր ճամբով, բրոնզե լնժենների հետ ու չարաչար հարցեր տալիս, իսկ նա պատասխանում եր չվոխված, կասկածելով իր ուսանելնից, վորը լավ չեր նմանում:

Լիղան զուր եր գալիս նրան, բայց թվում եր վորպես մի բարձր սարի ձյունեղեն գագաթ, գեղեցիկ, բայց անմատչելի...

Յերբ նրանք տեղ հասան, Սրմենն այնպես եր լարված, ասես մի դժվար, անհասկանալի գիրք եր կարդացել:

Սվազանի փոսի մոտ կանգնած եյին ինժեները Թաւյանն ու Սլենկինովը: Նկատելով Լիդային Սրմենի հետ, Թաւյանը հիշեց Լիդայի գրածը «բրոնզե ինժեների» մասին ու յենթադրեցավ, թե նրանք «մոտ են» իրար, կնճռեց ճակատը: Լիդան մոտենալով ձեռք տվեց յերկուսին էլ, ու սկսեց հարցեր տալ սվազանի մասին: Սրմենը բարևեց հեռվից:

Մինչ նրանք խոսում եյին, բրոնզե ինժեները դնաց նոր փոքած կանալի ուղղությամբ:

Բալականաչափ հարցեր տալուց հետո, Լիդան հանեց բլոկնոտն ու սկսեց գրի առնել իր դիտողությունները:

## VIII

— Մենք դնահատում ենք ձեզ վորպես սպեցի. նշանակություն ենք տալիս ձեր տեխնիկական փորձառությանն ու հմտությանը,— ասում եր կուսկոմի քարտուղար Շավարշը Թաւյանին.— մենք ձեզ տվել ենք իշխանություն ավելի, քան ուրիշներին, աչքի առաջ ունենալով մեր շինարարության ուրույն պայմանները. շատ անգամ ուրիշ տեսակետներ գոհել ենք ձեր զուտ տեխնիկական տեսակետին... դա յեղել է ոգտակար և նպատակահարմար և մեր ընկերներն ամեն կերպ ընդառաջ են յեկել ձեր պահանջներին: Բայց ահա հասել է մի որ, յերբ մեր շինարարությանն անհրաժեշտ են վոչ միայն վոտներ, այլև թևեր... այստեղ է ահա, վոր ձեր դերը փոխվում է «դիալեկտիկորեն».— շինարարության չարժիչ ուժի փոխարեն դուք դառնում եք նրա արգելակը...

— Այդ ո՞ւր եք ասում, ընկեր Շավարշ, ո՞ւր վոր միշտ տեսել եք մեր տանջալից աշխատանքը...

Խոսակցությունը Թաւյանի առանձնասենյակումն եր. ընկեր Շավարշը յեկել է մի չարք հարցերի շուրջը նախնական խորհրդակցության, բայց դլխավորապես վորոշելու համար Թաւյանի դիրքը:

— Իմ խոսքը ձեր աշխատանքի մասին չէ, այլ ձեր ուղղության, ձեր տիպի մասին. մեր բանվորությունը բարձրացել է, աճել գիտակցությամբ, մասնակցում է ամեն մի հարցում, հան-

դես և գալիս իրեն հանդիսական ալլաններով, հսկում և, քննադատում, մատնանշում թերություններըդ... իսկ ի՞նչ դիրք եք բռնել դուք.— մենք շատ անգամ ենք խոսել այդ հարցերի շուրջը.— «հարվածայիններ՞ը»— ասում եյիք.— հա՛, վոչի՛նչ, բա՞ն է; ելի՛... կարմիր տախտա՞կը,— դուցե մի բան ավելացնի...» և այլն և այլն... իսկ հարվածայնություններ արդեն ծավալվել է, ամեներից դուրս է թափվում. մասսաները պահանջում են նոր աեմպ, նոր մոտեցում...

— Այդպես, դուք մինչև տեմպի հարց եք դնում, մոռանալով, վոր դա կախված է մեծ մասամբ չինանյութերի ժամանակին հասցնելուց. իսկ յերբ չինանյութերը, մեքենաները ուշանում են, դարձյալ ինձ են մեղադրում և տեմպի, և «ուղղության» համար...

— Նույնիսկ մեր պատվերների վերաբերմամբ պիտի փոխել աշխատանքի մեթոդը. ամեն տեղ պիտի առաջ քաշել բանվորության,— ա՛յ, որինակ մեր մոտորների պատվերի համար ընկեր Լիզան առաջարկում է դիմել «Կարմիր աստղ» գործարանի բանվորներին, և իր վրա յե վերցնում գործը...

Թառյանը բոպեյապես մնաց լուռ. նրա ինքնասիրությանը դիպչում եյին Շավարշի դուցմունքները:

— Ուրեմն, ընկեր Շավարշ,— ասաց նա,— դուք բնավո՞ն եք համարում այն վերաբերմունքը, վոր ստեղծվել և իմ դեմ...

— Այո, դա պատահական յերևույթ չե. բանվորությունը տեսնում է, վոր դուք իրեն համընթաց չեք քայլում և յերես է թեքում ձեղնից. և նա իր վերաբերմունքը դուց տվեց իր ժողովներում... Այժմ ձեր հարցի լուծումը կախված է ձեղանից... մատան իր վերելքն է տալու, դուք պետք է նրա հետ քայլեք, և դլխավորն է՝ նրա առաջին չարքերում...

Թառյանը վոչինչ չպատասխանեց: Շավարշը վեր կացավ տեղից, վերցնելով սեղանի վրայից պորտֆելը:

— Այսուրվա մեր խոսակցությունը համարենք առաջաբան,— ասաց նա, լուրջ ու բարյացակամ տոնով.— հետագայում մենք մեր ընկերների հետ միասին կկազմենք վորոշ ծրագիր, կքննենք մեր բոլոր հարցերը, և կարծում եմ՝ կկարողանանք մի քանի ամսվա

ընթացքում վերականգնել մեր շինարարության առողջ տեմպն ու ընթացքը...

Նա դուրս գնաց, կարճ «ցը» ասելով, իսկ Թառյանը մնաց նստած, ինքնամոռացության մեջ:

Նրա ինքնասիրությունը խոցվում եր Շավարշի քննադատությունից, բայց ներքուստ զգում եր, որ նրա ասածը հիմք ուներ:

«Ահա այժմ կուսակոմի քարտուղարը յեկել ե կամուրջ ձգելու իմ և բանվորության մեջ. նա կարող ե ուրիշ ընթացք տալ դործին և յես կընկնեյի, որպես աշնան թոշնած մի տերև... սոցիալիստական շինարարության մեջ յես կարող եմ դործել միայն մասսայի հետ. դրանից դուրս յես վոչինչ եմ... պետք ե թողնել մի կողմ կեղծ ինքնասիրությունը և չտկել իմ բեկված դիծը...»

Ճիշտ ե, մինչև այժմ նա մտածել ե իր սխալների մասին, բայց միշտ այդ արել ե «հին ձևով». այն նշանակալից յերեկոյից հետո՝ իր «պարտությունից» հետո, նա միշտ մտքից չեր հանում, որ պիտի վերացնի իր թերությունները, բայց ամեն անդամ նրա մեջ ակամա ծագում եր մի դիմադրություն, առաջ եր գալիս իր ինքնասիրության, իր պրեստիժի հարցը.— նա կուզեր այնպես ուղղել իր դործունեության ընթացքը, որ իր արածը «պարտություն», դիջում չթվար: Այժմ հասել ե վերջին խոսքի որը. ամեն կողմից շրջապատը թելադրում ե իրեն՝ «դեպի նոր աշխատանք...»

«Պետք ե ընթանալ մասսայի հետ,— նրա առաջին շարքերում, նրանից ստանալ այն հրաշագործ ուժը, առանց որի յես վոչինչ եմ...»

## IX

Լիպայի առաջին և յերկրորդ ակնարկները «Գետաշենի» մասին լույս տեսան Մոսկվայի «Կայծեր» ժուրնալում.— մեկը շինարարության ընդհանուր պատկերն եր տալիս (որի մեջ մի քանի նպաստավոր տողեր կային և Թառյանի մասին), իսկ մյուսը նվիրված եր հարվածայիններին ու «բրոնզե ինժեներին» Սարյանին: Գետաշենում այդ ակնարկներն ընդունեցին վոչ միանշանակ. մի քանի ինժեներների մեջ դժդոհության մի ալիք անցավ Լիպայի դեմ և միաժամանակ բացվեց բամբասանքի կծի-

կը.— սկսեցին խոսել, թե Լիզան մի «ավանտյուրիստկա» չե, չեկել և ուզղակի Փլիրտի համար, վոր նա զոլել և «բրոնզե ինժեներին» իր՝ անձնական, ինտիմ կապի պատճառով. խոսում էլին նուչնպես, վոր նա մի ամառանոց ապրում և Թաւյանի հետ, վորը նրան յերես և տալիս,— և ահա այդ յերես տալու հետեվանքը՝ ում ուզում և զոլում և, իսկ ով իր համար հետաքըրքիր չե, մոռացության և մատնվում:

Թաւյանի վրա Լիզայի սկնարկները ցնցող աղդեցություն արին. առհասարակ նա անտարբեր չեր դեպի այն ամենը, ինչ վոր խոսում և անում եր Լիզան, իսկ այդ դեպքում նա զրում եր իր մասին: Այն մի քանի տողերը, վորոնք վերաբերում էլին իրեն, նա կարդաց հուզումով, բայց յերբ վերցրեց ժուրնալի հետևյալ համարը ու կարդաց Սարյանի մասին, նա չկարողացավ զսպել իր ցասումը և մինչև կեսը հասցնելով, դեն շպրտեց ժուրնալը ու անչարժ զամվելով աթոռին, մտածում եր Լիզայի «վարմունքի» շուրջը, ատեպ-ատեպ բռնկվելով խանդով դեպի «բրոնզե ինժեները». նուչնիսկ րոպեներով սկսում եր ատել Լիզային... Այո՛, նա համարում եր նրան բարձր իր տեսած կանանցից, ընդունում եր, վոր նա խորը տոպրված և սոցիալիզմի պայքարով, և ինչ... նա էլ զարճել և մի սովորական կին և զեկավարվում և իր անձնական «սիմպատիաներով...» «Չե, նա այն չե, ինչ վոր ինքը տեսնում եր նրա մեջ...»

«Ուրեմն յես ինչ եմ, յես՝ վոր ներկայումս զեկավարում եմ հինարարությունը, վոր այսքան ջանքեր եմ թափում...»

Փոքր ինչ հանդարտվելով, նա առաջ քաշեց սեղանի վրա կուտակված թղթերը: Նա հանկարծ նկատեց մի զլանաձև ծալած գծապիր ու նրա մոտ մի տետր, և իսկույն մտաբերեց, վոր այդ գործը Սարյանինն և: Դա մի շենքի պրոյեկտ եր, վորը վոխանցության եր յենթարկվել շնորհիվ նոր հանգամանքների: Նա զիտեր այդ գործը հանձնել եր Սարյանին՝ ցույց տալու համար, վոր /նրա զիտցածը դեռ շատ քիչ և «Գեոտաշենի» համար: Բայց ահա նա բացեց պրոյեկտը, թերթեց տետրը ու մնաց զարմացած.— «բրոնզե ինժեները» դասրս և յեկել տեխնիկական բարդ հաշիվների տակից. ճիշտ և, մի տեղ սխալ եր գործածել ֆորմուլները, բայց այդ էլ ներելի յեր յերիտասարդ ինժեներին. այսքանը պարզ եր, վոր նա հետզհետե առաջադիմում և...

Նա վերջացրեց տեխնիկական հաշիվների ստուգումը, բայց դեռ շարունակում եր նայել խնամքով կատարված գծագրին:

«Վերջ ի վերջո չեթե յես նկատում եմ նրա առաջադիմությունը, ինչո՞ւ պիտի նույնը չնկատեր Լիզան. և նա այդ արդեն բացատրեց, հենց սկզբի օրից.— չե՞, վոր նա ցույց տվեց ինձ իր բլոկնոտը...» Գուցե նա համակրում է Սարյանին, բայց համենայն դեպս դա չենթադրություն է. չեթե նրան բամբասում են, այդ էլ այն խավերում, վորոնք դեռ չեն ազատագրվել հին քաղքենական ժառանգությունից:

Չե՛, փաստը փաստ է. նա վոչ թե պիտի կռվի այդ տեսակ «հակառակորդների» դեմ, այլ իր ներսի «մանրունքի» դեմ,— անցյալից բերած անհատական ժառանգության դեմ... Միայն այն դեպքում նա կարող է մոռացնել տալ իր անցյալի սխալները: Ու յերբ նա՝ ազատագրված այդ բոլորից, կմտնի առաջավորների շարքերը, այն ժամանակ իր անունն էլ կտեսնի «բրոնզե լինժենների» կողքին...»

Հետևյալ որը, յերբ նա պնում եր լինարարությունն աչք ածելու, ավարտվող շենքերից մեկի վրա նա նկատեց Լիզային: Այդ բարձրության վրա նա թվում եր ավելի վեհ ու դեղեցիկ: Նրա մոտ կանգնած եյին յերկու տեխնիկներ:

Նա նայեց վերև, ու հեռացավ կարոտով, ակամա ներելով «վարմունքը». չե՛, դժվար է հավատալ, վոր նրա մեջ խոսում են անձնական մոտիվները... «Յերկուսից մեկը.— շարունակում եր նա իր մտածմունքը.— յեթե Լիզան մի սովորական կին է, ինչ կարիք կա այսքան նրա մասին մտածելու. իսկ յեթե նա բարձր է իմ տեսած բոլոր կանանցից, ապա ուրեմն յես կհանդիպեմ նրան, յերբ կհասնեմ իմ բարձունքներին...»

Իսկ Լիզան նայում եր վերևից, ու հայացքով հետևում նրան. նա զգում եր նրա ջղային քայլվածքը. զգում եր, վոր իր դրածները նրա վրա անախորժ ազդեցություն եյին արել. և ասում եր մտքում՝ «մեծ նավին մեծ լող է հարկավոր. սպասի՛ր մի քիչ և դու էլ կլինես մեր շարքերի մեջ. առ այժմ քեզ կշերջապատենք կոմյերիտական դեղեցիկ պատկերով...»

## X

Առավոտը վաղ Թաւյանը զարթնեց հանկարծակի, կարծես ինչ-որ մեկի հրամանով: Նա վեր կացաւ, չտապ հագնվեց և պատրաստվում էր դուրս գալ, յերբ նրա դիմաց յեկաւ մեխանիկ Նազարյանը:

— Բարև ձեզ, կարելի յի՞ մի քանի րոպեյով:

— Համեցեք,— ասաց Թաւյանը ձեռքը տալով:

Ներս մտան, նստեցին սեղանի մոտ: Մեխանիկն իր խոժոռած դեմքով րոպեապես մնաց լուռ. ու ակնոցները մայլ տեսք էին տալիս նրան. հին ձևով խուզած մորուքը, վերևում այտերի մոտ ածիլած էր, իսկ ներքևում հետզհետե նեղանում էր, կտրած յեռանկյունու ուղիղ գծերով. նրա ամբողջ դեմքը կարծես մխանդամից կարդի յեն ընկել ու այդպես էլ մնացել:

— Ընկեր Թաւյան, ներեցեք, վոր յեկա ձեզ մոտ, տուն. դրասենյակում դժվար է հանդիստ րոպե գտնել ձեզ հետ խոսելու համար:

— Պատրաստ եմ ձեզ լսելու:

Մեխանիկն սկսեց հանդիստ տոնով.— այդպես էր նա ինքն իրեն խոսք տվել՝ լինել հանդիստ: Նա ջղային էր, և բավական էր մի թեթև դեպք, վոր կորցներ իր հավասարակշռությունը:

Նա սկսեց թվել մի շարք թերություններ. այս ինչ գործին հետևող չկա, «անտեր է», այն ինչ նյութերը ժամանակին չբերին, մեքենան կարող է կանգ առնել. արհեստանոցն ուշացնում է մեքենայի նորոգումը... ու այդպես մի շարք հարցեր գալիս էլին իրար յետևից: Յեթե Թաւյանը չճանաչեր նրան, նա կզարմանար այդ անընդհատ մարտիրոսաբերություններից... Մինչև վերջ տեղ նա հանդիստ էր, բայց ահա յեկավ պզտլուն տեղը.

— Ձես չեմ հասկանում, ընկեր Թաւյան, սա ի՞նչ բան է. յերեխաներ են ուղարկում ինձ ոգնական. մի յերկու որ սովրում են, հետո թողնում, գառնում են մնծամիտ, քիչ է մնում ինձ սովրեցնեն... մեկ էլ տեսնում ես՝ մեքենան վչացրին, իսկ ո՞վ է պատասխանատու, իհարկե՛ գլխավոր մեխանիկ Նազարյանը... յես չեմ կարող աշխատել այսպիսի պայմաններում...

Մեխանիկը խոհում եր, չարժում մորուքը, իսկ Թառյանը ակնոցը եր իր հայացքը նրա դեմքին ու նայում եր տարօրինակ արտահայտությամբ, կարծես նոր եր նկատում ինչ վոր կարևոր բան:

— Բերե՛ք, դործի դրեք խելքը դլխին տղաներ, թե չե սա ի՞նչ բան ե. չեն լսում, չեն ուզում սովորել. ա՛յ հիմի մեքենան կոտրել են, ի՞նչ պիտի անենք...

«Հի՛ն են, հի՛ն, և դեմքը և մորուքի ձևը և խոսքերը...» մտածում եր Թառյանը, նայելով մեխանիկին:

Նազարյանը հանկարծ լռեց.

— Դուք վերջացրի՞ք,— հարցրեց Թառյանը, կարծես արթնանալով իր մտքերից:

— Ա՛յո՛,— ասաց մեխանիկը:

— Պատերազմից առաջ դուք վորտե՞ղ եյիք ծառայում:

— Նոբելի մոտ:

— Լավ ե՞ր նրա մոտ:

Մեխանիկը վոչինչ չպատասխանեց:

— Ցես նկատել եմ,— ասաց Թառյանը, չսպասելով նրա պատասխանին, վոր ձեր դործելակերպի մեջ մի հիմնական սխալ կա. դա այն ե, վոր դուք չեք ուզում նկատել, վոր ժամանակը վոխվել ե...

Նազարյանն ուզում եր միջամտել, բայց Թառյանը ձեռքի նշանով հանդստացրեց նրան:

— Մի քանի տարի առաջ, դուք այդ ձեր ոդնական տղաներին մի-մի ատաղակ կտայիք, հետո կհայտնեյիք «տիրոջը», վոր բանի պետք չեն, և նրանց անմիջապես դուրս կվռնդեյին. այնուհետև կդնայիք «մարդկային ապրանքի» շուկան, կվարձեյիք ավելի լավերին: Իսկ այժմ մենք սովորեցնում ենք բոլորին, դործ յենք դնում, ու նորից սովորեցնում, առաջ քաշում... Այստեղ մենք հեչա ճանապարհներ չունենք. մենք ենք պատրաստում և՛ ամանը և՛ նրա միջի հեղուկը... Հենց նրա մեջ ե մեր ժամանակի հնարագիտությունը, վոր կարողանաս առաջ տանել և՛ դործը և՛ մարդուն... Դուք դասում եք հին տեսակետից, յերբ ասում եք— թող դա՛ լավը, թող լսի՛ ինձ և— մեր մեջ մնա՝ մի քիչ էլ ուզում եք, վոր ձեզ հպատակվեն. վ. Այդ բոլորը գալիս են հնից. մենք պիտի կառուցենք վոչ միայն չենքերը,

այլև նոր մարդու պիտակությունը,— ասաց նա, հիշելով Լեդայի խոսքերը...

— Դե վոր դուք էլ այդպես եք մտածում, էլ ի՞նչ կարող եմ ասել,— նեղացած խոսքը կտրեց Նազարյանը:

Թառյանն ըմբռնեց, վոր թեպետ հարցը սարսափելի է, բայց էլ կարող հասկացնել մեխանիկին «նորի» եությունը: Միաժամանակ, նա ըմբռնեց, վոր ինքն էլ վորոշ չափով վարակված է նույն այդ «հնով». միայն մի զանազանությամբ, վոր ըմբռնում է այդ, և պայքարում է ինքն իր դեմ... Եվ այժմ, մատնանշելով տեխնիկի թերությունները, կարծես ինքն իրեն էր քննադատում:

— Ինչ վերաբերում է փչացած մեքենային,— շարունակեց Թառյանը,— այսօրվանից ամեն նորոգելու— իսկ արհեստանոցի մասին նույնպես մենք նույնպես միջոցներ ձեռք կառնենք զարծն արագացնելու համար: Ուրիշ ի՞նչ ունեք,— հարցրեց Թառյանը, զգալով վոր Նազարյանն ինչ վոր ուզում է ասել, բայց քաշվում է:

— Հա՛, մի հարց էլ կա... դե ձեզ էլ հայտնի չե իմ դրությունը... Ես ոռճիկով չեմ կարող պահել բնատանքս...

Թառյանը վոչ ինչ լուց, սպասելով վոր նա էլի կխոսի, սպա ասաց.

— Լավ, կավելացնենք հետևյալ ամսից: Միայն պետք է ասեմ, վոր պիտի արագացնեք ձեր տեմպը. այդպես աշխատել չի կարելի:

Նազարյանի մռայլ դեմքին կարծես ինչ վոր շարժվեց. նա չխոթված ձայնով արտասանեց «չնորհակալ եմ», սպա ձեռքն անգիտակցաբար տանելով ծոցագրպանը, շոշափեց իր բլոկնոտն ու հիշեց, վոր յերեք հարցի մասին պիտի խոսեր:

— Շնորհակալ եմ, ընկեր Թառյան. կաշխատեմ ամեն կերպ բավարարել... Ես ուզում եյի ձեզ մի բան ասել...

Բայց այդ րոպեին Ելլիկը ներս նայեց.

— Ձեզ կկանչեն...

Թառյանն իսկույն վեր կացավ, ու դուրս գնաց նախասենյակը:

— Սխոռա,— ասաց մտքում մեխանիկը. նա ուզում եր խոսել այն խրոնիքական հենֆլիկտի մասին, վորը առեղծվել եր իր և արհեստանոցի վարիչի մեջ, և վորը, իր կարծիքով՝ նույնպես

լուրջ և կարևոր խոսակցություն եր պահանջում: Նա սպասեց, մտածելով, թե գուցե Թաուրանը նորից ազատվի, բայց ահա նա նեղս յեկավ, իր հետ բերելով Լիզային և չորս կոմյերիտականների:

— Նստեցե՛ք,— հրամիրեց Թաուրանը դիմելով նրանց:

Նրանք նստեցին, իսկ մեխանիկը վեր կացավ տեղից:

— Յոեսուքյուն,— ասաց նա, հեղնող հայացք ձգելով Լիզայի վրա, ու դուրս գնաց:

Թաուրանը հետևեց նրան մինչև դուռը:

— Վոչի'նչ, մնացած հարցերի մասին մի ուրիշ անգամ կըխոսենք,— ասաց Թաուրանը ձեռք տալով:

Սպա յեկավ նստեց հյուրերի դիմաց, ժպիտը դեմքին՝ ժպիտների հանդեպ: Լիզան հագել եր նավաստու զգեստ, իսկ կոմյերիտականները խակի գույն բլուզներով եյին, վորոնք արևից ու քրանքից դեղնավուն եյին դարձել: Նրանք՝ բացի Լիզայից, փոքր ինչ քաշվում եյին:

— Լսում եմ ձեզ,— ասաց Թաուրանը, դիմելով Լիզային:

— Ընկեր Տարյան,— ասաց Լիզան.— մենք ցանկանում ենք ոչտակար լինել ձեր շինարարության ավելի, քան մեր անմիջական աշխատանքներն են պահանջում. մենք ուզում ենք ստեղծել մի ավանգարդ, վորը պարկ տա հարվածայնության. և բացի դրանից վերացնել բանվորների կենցաղային պայմանների մի շարք թերությունները...

— Յես միայն կարող եմ վողջունել ձեր վորոշումը,— ասաց Թաուրանը:

— Մենք կաշխատենք գործին կցել և շրջանի կոմյերիտականներին, միայն դուք պիտի մեզ աջակցեք, ընդունելով մեր ընկերներին և տեղավորելով նրանց այս կամ այն շինատեղում:

— Շատ ուրախ եմ, ընկերներ,— ասաց Թաուրանը,— վոր դուք ձեռնարկել եք այս դեղեցիկ գործը. յես ամեն կերպ կաջակցեմ ձեզ:

— Առայժմ մեր ցուցակում կան 12 հոգի. նրանք պիտի հարվածայնության պարկ տան այն կետերում, վորտեղ տեմպը դանդաղում է և պլանը թերակատարվում է:

Թաուրանը ժպտաց:

— Ուրեմն դուք մեծ դավադրություն ե՞ք կազմել:

— Այո,— ասաց Լիլիան,— մենք պաշարում ենք բերդը, և հենց վաղվանից:

— Ցնս ել ձեզ հետ,— ասաց Թաւյանը,— Թևերս պիմար Թե ձեր յետևից հասնեմ:

— Վա՛չ, ընդհակառակը,— ասաց Լիլիան,— մենք ապատում ենք ձեզնից մի նոր, հարխամարդին աշխատանք...

Այնուհետև Թաւյանը պիմից մյուս կոմիսերիատականներին, հարցրեց.

— Իսկ դուք ինչ կասեք, ընկերներ:

կարծես մի ընդհանուր հրամանով բոլորի պեմքին չարժվեց ամպիսած ժպիտը:

— Մենք բոլորս մեկ ենք,— ասաց Համոն, իր հաստատակամ աչքերը գարձնելով Թաւյանի վրա:

Թաւյանը հարցրեց ամեն մեկից Թե ո՞րտեղ և աշխատում, ինչ պայմաններում ենք:

— Ուրեմն, ընկերը Տարյան, մեր առաքելությունն ընդունված համարենք,— ասաց Լիլիան վեր կենալով տեղից. նրան հետևեցին կոմիսերիատականները:

— Այո՛, ընդունված է և հաստատ հիմքերի վրա չի,— ասաց Թաւյանը, նույնպես վեր կենալով և ձեռք մեկնելով:

Նրանք հրաժեշտ տվին ու դուրս եկան: Նայելով այդ Թարմ պեմքերին, որոնք լցված էին մի վառ հավատով, Թե ամեն ինչ կարող են անել, ամեն ինչ հաղԹահարել, Թաւյանն ինքն էլ վարակվեց նրանց ենտուզիազմով. կարծես հարյուրապատիկ ձեռքեր էին ավելանում իրա ուժերին:

«Ձե՛, կարելի չե աշխատել այսպիսի ընկերների հետ, կարելի չե աշխատել անձնվեր, ամբողջ էությամբ լծվել սոցիալիստական շինարարության...»

Ու սրտաֆելը վերցնելով, նա շտապ քայլերով դիմեց դեպի գրասենյակը:

## XI

Ճչխենը վերադարձած սրտով. նա հաղիվ եր կարողանում Թաղցնել իր ախորժյանը, իսկ յերբ ընկերուհին հին հարցնում եր, Թե ինչո՞ւ չես ախոռը, նա պատասխանում եր.

—Դուխս ցավում է, բերևի մրսել եմ:

Միայնակ ժամերին նա անձնատուր էր լինում իր ապրումներին: Նա չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե այն Արմենը, որն այնպես մոտ էր իրեն, այժմ սիրում է մի ուրիշին: (Նա հասկացած էր, որ նա սիրում է Լիպարիտին): Ճիշտ է, ուսանող ժամանակ նրանք մեծ նշանակություն չէին տալիս իրենց կապին, խաղ էին համարում, բայց այժմ, երբ Արմենն արդեն «ինժեներ Սարյան է», Աշխենի մեջ մեծ ցանկություն կար նրա հետ ամուսնանալու: Իր ընկերուհին, որը ամուսնացել էր ինժեների հետ, միշտ պնդում էր համոզված տոնով.

— Սխալ՛, խելքի՛ արի, ճնռիլ ընկածին բաց մի թողնի. եղաստա բան է, թե մենք՝ կանայք կարող ենք առաջ գնալ առանց տղամարդկանց. կասկի վանդերը մինչև մարդն է, կնոջ կարիքն հաջող ամուսնությունն է...

Համալսարանն ավարտել չհաջողվեց ընտանեկան հանգամանքների ընթացքով. այժմ էլ ինչ որ հիմնարկում «բյուրոկրատություն է անում» (նա հիշում է Արմենի հեղնող խոսքերը՝ իր աշխատանքի մասին):

Նա ինքն էլ պրում էր որ թևատուրկ է յեղել. ինչ որ հոգնածություն է յեկել վրան. ընկել է մի փոքրիկ ջրհան, որը նրան հետզհետե ավելի ցած է տանում. իսկ մայրն իր հին կարգով հիշեցնում է ամուսնության մասին...

Այդպիսի պայմաններում Գեղաշենը դարձել էր նրա ուշադրի կենտրոնը, «փրկության» վայրը. պետք է ամուսնանալ Արմենի հետ, ղրկք առեղծել. «կնոջ կարկերան հաջող ամուսնությունն է, իսկ Արմենը հաջող փեսացու է...»

Իսկ այժմ այդ հույսն էլ ֆ մարում. Արմենը դնում է ձեռքից... Առնա-առնա նա բռնկվում էր վրեժով, որը քանի ղընում ավելի էր ծավալվում մեջը: «Ձես չե՛մ թույլ տա այն լրբին, որ տիրի իմ Արմենին»— ասում էր նա ու յերբեմն ինքնամոռացության մեջ բառնցքով խփում սեղանին: Մայրը նկատում էր այդ ու մոտավորապես գլխի ընկնում, որ «բանը վատ է», բայց վորքան աշխատում էր խոսք գուրս քաշել, չէր հաջողվում:

Մի շաբաթից հետո, յերբ Աշխենն ուշքի յեկավ, նրա մեջ վրեժի մի ծրագիր ծագեց: Նա արդեն Գեղաշենում մի քանի

ջուկները լանց Լիպայի մասին, թե Թաուրանը նրան չերնա և տա-չիս, գուցե և ապրում է հետը: Նույնիսկ ընդունելով, որ այդ բոլորը ճիշտ է, Աչխենը դարձյալ վտանգը տեսնում էր Սրմենի կողմից, որովհետև նա ազատ է, ամուսնացած չի. Թաուրանին ի՞նչ— նա կարող է սիրուհիներ պահել ու թողնել, իսկ Սրմենն աղջկան ընդմիշտ կընկնի նրա ճանկը...

Ցնել ահա նա մտածեց վրեժը հանել Լիպայից ուրիշի միջոցով— նա վճռեց դնալ ինժեներ Թաուրանի կնոջ մոտ, նրա ականջը ձգել Լիպայի և Թաուրանի հարաբերությունների մասին, և նրա ձեռքով հեռացնել ասպարեզից Լիպային...

Նա ծանոթ էր տիկնոջը. յերկու անգամ պատահել էր նրան էր ընկերուհիներից մեկի ընտանիքում, բայց չհարկե, այդ ծանոթությունը հեռավոր էր:

Սկզբում նա վճռեց նամակ գրել, բայց վերջը մտածեց, թե նամակին կարող է չհավատալ, դեն շպրտել, իսկ երեն կհավատա:

Նա հաղալ էր նոր, կանաչադույն հագուստը, յերկար պոտուվից հագնում առաջ, վորը դրել էր աթոռի վրա ու շպարվելու, շրթունքները կարմիր ներկելով, ոճիքը մի քանի անգամ ուղղելուց հետո՝ վերջապես գուրս յեկավ սենյակից մեծ ոեդիկյուլը ձեռքին:

«Բուրժուական ընտանիք է, պետք է կարդին հագնված գնալ»,— մտածում էր նա, յենթադրելով, թե ինքը ճիշտ վոր կարդին է հագնվել:

Նա անցավ երենց նեղ, փոշոտ փողոցով ու մի քանի պատույանների հետո գուրս յեկավ քաղաքի կենտրոնական փողոցը:

Նա կանգ առավ հանդիսավոր մուտքի առաջ ու մի րոպե տատանվեց, ապա դանդաղաբեց, մտնել սեղմելով փոքրիկ կոճակը: Գուռը բացվեց, գուրս յեկավ ռուս ապտամլորուհին, ձեռքերը վեր քաշած. յերևում էր, նոր էր թողել իր գործը:

— Տա՞նն է,— հարցրեց Աչխենը:

— Տանն է,— պատասխանեց ապտամլորուհին, ու ավելացրեց,— խնդո՛ւյն:

Նա դնաց իմաց տալու տիկնին Թաուրանին:

Ներսից պետության ախորժելի ձայն էր հնչում: Քիչ անց ըս-

պատավորուհին նորից յեկավ վոտները քաշ տալով իր լայն տուֆլինների մեջ, ու ասաց ավելի բարյացակամ տոնով:

— Համեցե՛ք:

Յերկրորդ սենյակից դուրս յեկավ տիկինը, մի սուր՝ կանացի կատածած հայացքով չափեց Աշխենին վոտից գլուխ ու սառը քաղաքավարությամբ հրավիրեց նստել:

— Բա՛րև ձեզ, նստեցե՛ք խնդրեմ, յես իսկույն...

Ու նորից մտավ յերկրորդ սենյակը: Այնտեղ փոքրիկ տղան չարություն եր անում, պլանոյի ստեղնաշարին բռունցքով խըփելով: Տիկինը բարկացավ վրան, ու մի մելոդիկ կտոր նվագելով, փակեց պլանոն, ասա ինչ վոր կարգադրեց սպասավորուհուն:

Մնալով մենակ, Աշխենն սկսեց մանրամասն դիտել չորս կողմը:

Նրան դուր եր գալիս սենյակի արդուզարդը. նրա մեջ ինչ վոր հին, բուրժուական վոճ կար. կարծես մի թանգարան լիներ, անշարժ ու լուռ: Պատերին հին նկարներ, վորոնց մեջ և Բյոկլինի «Մեռած կղզին». նուրբ բամբուկե գարակներ, վորոնց վրա գարսած եյին գանազան դեղեցիկ իրեր. կային փոքրիկ գարդանկար կտորներով ծածկված, չիրմաններ: Մյուս սենյակի գռնից յերևում եյին հին ձևի մահճակալներ,— բարձր վանդակներով, փայլուն մետաղից չինված դվմիկներով:

Հին վոճավոր պահարանը լիքն եր դեղեցիկ կազմով գրքերով. յերևում եր, նրանց վուշին խնամքով սրբվում եր, բայց գրքերը վաղուց և, չեյին կարդացվում, այնպես լավ, իրար կողքի հարմար կարգով եյին նրանք դասավորված: Առաստաղից ներքև եյին նայում չքեղ լուստրները, դույզդույն հուրնքաձև ապակե թևերով:

Աշխենը նայում եր, հիանում, բայց նրա ներսը հետզհետե աճում եր վախը, իսկ յերբ տիկին-թատյանը. նորից ներս մտավ, նա հանկարծ ահով բռնվեց. նա սարսափեց իր մտադրությունից— ինչպե՞ս թե ինքը յեկել և տիկնոջը պատմելու նրա ամուսնու «դավաճանության մասին...

Վերջապես տիկինը նեղա յեկավ, հազուստը փոխած. նստից Աշխենի դիմաց, ինքնահավան, վերևից նայող կնոջ հայացք

ձղելով նրա վրա: Աչխենին ոտաոել տալն ել վատ չև եր՝ նրան փոքր ինչ նվաստացնելու համար:

— Ինչո՞վ կարող եմ ոտաոակաւ լինել,— հարցրեց նա:

— Տիկին, ես ուզում եյի ձեզ հետ խոսել մի կարևոր հարցի մասին... Ձես նոր եմ յեկել Գեոաշենից...

Մի անհանգիստ ցնցում անցավ տիկին Սոֆիայի մեջ. նա դլաց, վոր ինչ վոր անախորժ բան և հաղորդելու Աչխենը: Բայց ինքն իրեն զսպելով հարցրեց:

— Գեոաշենի՞ց: Դուք այնտե՞ղ եք աշխատում:

— Վո՛չ, ես եքսկուրսիա եյի դնացել. այնտեղ մի ընկերուհի ունեմ,— ասաց Աչխենը կարմրելով:

— Այդպես... Ձեվ ի՞նչ, այնտեղ յերկա՞ր մնացիք,— հարցնում եր տիկինը, կարծես աշխատելով հեռացնել անախորժ լուրը:

— Վո՛չ, միայն մի որ:

— Հետաքրքի՞ր եր այնտեղ:

— Այո՛, բավական հետաքրքիր...

— Նոր մարդիկ կա՞յին:

— Այո, Գեոաոատանից յեկած մի որիորդ կար...

Սոֆիայի սիրտը ճմլվեց. նա հիշեց մի չարաթ առաջ լսած լուրն իր մի ծանոթ տիկնոջից, վորը խայթեց իրեն ավնարկելով այդ աղջկա մասին:

— Նա այնտեղ պաչտոն ունի՞:

— Նա և՛ ժուրնալիստ է, և՛ իրեն այնպես է պդում, կարծես իրեն տանը լինի... ասում են ձեր ամուսինն ել թև և տա-լիս նրան...

Սոֆիայի ինքնասիրությունը վատ կանդնեց, նա կուզեր ասել այդ րոպեյին,— «վո՛չ, սուտ է», բայց նա ցանկանում եր ելի տեղեկություններ իմանալ Աչխենից, ուզում պարզեց իրեն.

— Այսինքն ի՞նչպես է թև տալիս... Որինակ ի՞նչ է անում...

— Նրան թույլ է տալիս ազատ ամեն դործի մեջ խառնվելու...

— Հետո՞— անհամբեր հարցրեց տիկինը:

— Հետո ասում են, վոր ձեր ամուսնու և նրա մեջ կապ կա...

Տիկին Սոֆիան կարծես մի ուրիշ ծանրից ղժաց. քիչ եր մնում ճչա Աշխենի վրա, բայց նորից իրեն զսպեց, ու կեղծ հանդիստ տոնով հարցրեց.

— Հետո՞...

Աշխենին թվում եր, թե դրանով կվերջանա իր ասելիքը, բայց այժմ նեղն ընկնելով, նա չարունակեց հնարելը.

— Ախտիկի լուրերը եյին, թե այն ուրս աղջիկը և ձեր ամուսինը առանձում են իրար հետ պիշերները...

— Իսկ այդ լուրերին դուք հավատո՞ւմ եք:

— Ես, վորովհետև պատմողն իմ ընկերուհին է. նա էլ առանցներից եր լսել...

— Ուրիշ բան չունե՞ք ասելու...

— Վոչ, բոլորն ասացի. յես ուզում եյի ձեր ուշադրությունը դարձնել...

Սոֆիայի դլուխն սկսեց պտտվել— սենյակի պատերը չարժվում եյին, բայց նա ստամոքսն իրար սեղմելով կռվում եր էլ թուլության դեմ: Նա վոտքը քինչ լռելուց հետո ասաց.

— Շնորհակալ եմ ձեր տեղեկությունների համար. դուք ինձ, խնա՛յիե, ուզում եք լավություն անել. բայց մի հարց էլ կտամ ձեզ. ասացեք, արդյոք մի ուրիշ պատճառ չկա՞, վոր ձեզ ստիպեց ինձ մոտ գալու... Ինդրեմ անկեղծ ասեք:

Աշխենը դլուխը կախեց, ու Սոֆիայի հայացքից խուսափելով դլուխը կախեց. նրան թվում եր թե Սոֆիան դիտի ամեն ինչ:

Բայց նա վոչինչ չասաց իր և Արմենի միջև յեղած կապի մասին:

Տիկին Սոֆիան բոլորչափ ապատելով, համոզվեց, վոր ամեն ինչ դուրս քաշեց Աշխենից ու դեմքին ու ձայնին կեղծ անտարբերություն տալով ասաց.

— Հասկանալի յե. դուք կարող եք անհոդ լինել. այդ բոլորը թշնամիների բամբասանք է, վոր հավատացած եմ, ձեզ էլ դուր տեղը վրդովել է: Յես շատ լավ եմ ճանաչում իմ ամուսնուն և չեմ կարող թույլ տալ կարծելու, վոր նա թեկուզ մի րոպեյով յենթարկվի պանապան ավանտյուրիստ կանանց... համենայն դեպս չնորհակալ եմ ձեզանից...

Աշխենն ընկճվեց. նրան թվում եր, թե մեծ իրարանցում կառաջացնի տիկնոջ մեջ, բայց այժմ տիկինը չեշտակի նայում

եր, քննող վարժուհու նման, իսկ ինքը նմանում եր քննությունից ճնշված աշակերտուհու:

Նա վեր կացավ տեղից ու շշնջաց ընկճված ձայնով:

— Յուսահատություն:

— Յուսահատություն, ուրեմն դուք հիմա հասկացա՞ք, թե վատեղից են գալիս այդ կեղտոտ բամբասանքները,— ասաց տիկինը,— ձեզ դուք ուզում եք լավություն անել, կխնդրեմ ձեզ մխայն, որ այս բոլոր խոսակցությունը մեր մեջ մնա, թեպետ իհարկե, ես շատ չնչին ուշադրություն եմ դարձնում դրա վրա...

Աչքերը դուրս կեկավ փորից ու ճնշված կրծքին ազատ շունչ տվեց. նա կարծես փշերի վրա էր նստած, ու վոչ թե պնացել եր մի բան ասելու, այլ իրեն ստիպած եր հարցաքննության: Նա դժդոհ եր, ու կարծես փոշմանում եր,— «ասեցի, բամբասեցի, ստորություն արի, և ի՞նչ. փոխանակ նրան ընկճելու, ես ինքս ընկճվեցի... կամ դուցե կեղծում է այդ կինը, համենայն դեպս ես կուզեյի նրա նման լինել...»

Իսկ տիկին Սոֆիան, հենց վեր Աչքերը դուրս պնաց, մի քանի րոպե ձերկու ձեռքով բռնեց իր գլուխը, կարծես իրեն հաշիվ տալու համար, թե ի՞նչ է կատարվել. ապա ձերկար լարությունից ուժասպառ լինելով, նա ընկավ դիվանի վրա ու սկսեց ջղաձգորեն հեկեկալ:

Մի մտք կարծես շշնջում եր նրա ականջին «կործանվում է, կործանվում է քո ընտանեկան աշխարհը...»

Սպասավորուհին գավթի դռնով ներս էկավ, գամբյուղը լցրած մթերքներով ու մնաց սպշած. տեսավ կրակի վրա դրած կաթը բարձրացել է, թափվել, իսկ տիրուհին պառկած եր դիվանի վրա անհարմար դիրքով և հեծկլտում է...

## XII

Ալեսան սլանում եր խճուղով, հետևից թողնելով փոշու ամպը, դաշտերն ու բլուրները ու քանի արագ եր գնում, այնքան ավելի եր թեթևացնում տիկին Սոֆիայի տրամադրությունը, կարծես սեղմելով նրա մռայլ մտքերը: Մի շաբաթ է անցել, նա շատ է մտածել, տանջվել և այժմ վճռել է գնալ «այնտեղ» և անձամբ տեսնել: Նա ինքն իրենից պարտավորում եր.

նա կարծես հեչտ եր վճռում «անկախ աշխատելու», թեկուզ ամուսնուց բաժանվելու հարցը, իսկ այժմ այդ բոլորը չքացել է, և մնչը ծառացել մի հզոր տեսիլ՝ պաշտպանել ամեն կերպ իր բնաղը՝ իր «կարմին ընտանիքը»: Վո՛չ, նա լսել անգամ չի ուզում բաժանվելու մասին. նա ամեն ինչ կդրծադրի, միայն թե ազատի իր ամուսնուն այդ «ավանտյուրիստկայի» ձեռքից...

Սլացող ավտոն կարծես ձայնակցում եր նրան, ուժ եր տալիս՝ իր ախոյանի դեմ կռվելու համար:

Նրա կողքին նստած եր մի դեր մարմնով անտեսանար՝ ինչ-որ հիմնարկի անտեսական բաժնի վարիչ. նա յերբեմն փորձում եր խոսել տիկնոջ հետ, բայց վերջինս հազիվ եր լսում նրան, պատասխանում եր չոր ու չամաք «այո» կամ «վոչ»:

Բայց ահա ավտոն դանդաղում է ընթացքը. տնտեսվարը իր կենսուրախ փքված յերեսը դարձնելով դեպի տիկինը, կարծես ասում է— «վոչինչ, ամեն բան կդրսումի, ինչպես միշտ պրսումում են մեր դործերը...» Նա յերկարացնում եր իր խոսքը, ցատ յերևույթին ուզում եր սիրաբանել, բայց տիկինը, քաղաքավարի կերպով մի յերկու բառով պատասխանում եր, ոչ անձնատուր լինում իր մտքերին:

«Իսկ յեթե այս բոլորն ապարդյուն անցնի, մտածում եր տիկինը.— ի՞նչ կարող ես դու անել, յերբ մի փոքրիկ հայտարարություն պատին բավական է, վոր ողը ցնդի քո ամուր բերդը... և դրա դեմ վո՛չինչ, վո՛չինչ չի ոգնիլ... ահա իմ կողքին նստած է մի տղամարդ՝ իր Սրտյուշի նման ընտանիքի տեր. ահա նա ձգտում է սիրաբանել իր հետ, ու յեթե ինքն էլ արձագանք տա, նա կարող է տարվել, և ո՞վ գիտե, գուցե հենց ճանապարհին էլ վճռվի նրա ընտանիքի բախտը... Այսպես են տղամարդիկ... իսկ մենք էլ նույն խմոցից ենք...

— Ի՞նչու յես այդպես ախուր,— չարունակում է տնտեսվարը.— այս գեղեցիկ բնության մեջ չպետք է տխրել... Մանավանդ ձեզ նման հետաքրքիր կինը...

— Վո՛չ, յես չեմ տխրում. վոքր ինչ ոկար եմ, ուրիշ վոչինչ:

Տնտեսվարը պատմում է իրեն անցյալ ճամբորդությունից. տիկինը հազիվ է լսում նրան, տարված իր մտքերով:

Նա հիշեց Սրտյուշի վերջին նամակը. մի՞թե այդ նամակով

նա «քաղաքավարի կերպով» բաժանման դասը չէր թաց անում... այն ճղնաժամը, որի մասին նա պրում էր, դուցե հենց այդ սիրային պատմության շուրջն է, և միշ թե իր գործունեության խնդիրների շուրջը... Ե՛հ, չարժե մտածել. ինչ ուզում է թող լինի. հարյուրավոր ամուսիններ բաժանվում են իրարից, մեկն էլ մենք կլինենք...

Տնտեսվարը վոգևորվում է, ձայնը բարձրացնում, սիկինը դեմքը խոժոռում է, ապա ձարպկորեն խոսակցության մեջ է ձգում, վոր իր ամուսինը «Գեսաչենի» ինժեներ Թադյանն է՝ տնտեսվարին հասկացնելու համար, թե ո՞վ է ինքը: Ցեղ անտեսվարն ասում է՝ «ճանաչում եմ ձեր ամուսնուն» և այնուհետև զայրվելով այդ անունից, մեղմացնում է իր ձայնը և իր սիրարանությունը, մոքումն ախոսալով:

Տիկինն սկսում է դիտել անտեսվարին. նա հաստատուր է, սեղ չոր և դրավում և հաճախ դիտչում է իրեն, բերանից էլ կոնյակի հոտ է վչում... «յերևի յերկու կին է պահում, և իր հիմնարկի ու իր ընտանիքի հաշիվներն էլ է խոսնում...»

Նա համեմատում էր անտեսվարին Արտյոշի հետ. ինա՛րկե, նա ուրիշ է, այս նորելուկ Սանխո—Պանսոյի նման չէ... նա դժվար թե այսպիսի թևթև քայլեր անի, սիրաբանությամբ դրաղվի... չե՛, նա բարձր է այդ բոլորից...

...Յերևի նա արդեն ատացած կլինի իր հեռագիրը և կհանդիպի իրեն... թե՞ դուցե ատնությունն է սիրել նրան ու իրեն ոգտում է մի անակնկալ...

Սվառն սկսում է, արագ պտտում Սոֆիայի մոքերը. յերբեմն ժամացույցի նման անընդհատ մոտծում է, ինքն իրեն մաշում...

Նախասենյակին կպարսպում, յերբ ավառն կանդնել էր ինչ-որ նորոգելու համար, հանկարծ դիմացից լսվեց մոտեցող ավտոյի թավ ձայնը ու չանցած մի րոպե՝ կանդնեց կպարսպում: Սոֆիան նկատեց իր Արտյոշին ու ժպտալով դլուխը շարժեց, պատասխանելով նրա վողջույնին: Թադյանն արագ ինքն ավտոյից ու մոտ գնալով, համբուրվեց կնոջ հետ:

— Ես վո՞նց է յեկար,— հարցրեց նա:

— Դե դու չես գալիս, մոտացել ես մեզ, գոնե յես գամ...

—Ե՛հ, դործերն որ որի վրա չասանում են, հնար չկա պակվելու...

Մի քանի րոպեյից հետո նրանք նստեցին ավտոն ու սլացան դեպի «Գետաչեն»:

Սոֆիան, մոռանալով իր սիրամաշուկ մտքերն, այժմ նստած «իր ամուսնու» մոտ, յերջանիկ սլանում եր, չնկատելով նույնիսկ չրջակա դեղեցիկ բնությունը: Նրանք խոսում էյին ընտանեկան մտերմությամբ, իրար հաղորդելով դգացումները, վորոնք տվյալ ճամրաներով թռվռում էյին նեռը: Տիկինը խոսում եր յերեխաների մասին, պատմում նրանց չարություններից մասին, հավատացնում, վոր շատ մեծացել ու փոխվել են... Յեվ Սրտյուշն էլ արձագանքում եր նոր հարցերով:

«Ջե՛, ամուր և մեր ընտանեկան բերդը—մտածում եր Սոֆիան, խոսակցության ժամանակ դադարելով դիտելով ամուսնուն ու վոչ մի փոփոխություն չդանելով նրա արտահայտության, նրա վերաբերմունքի մեջ:

... Յերջանիկ և տիկին Սոֆիան՝ նրա կյանքում վոչինչ չի փոխվել...

«Ամուր և բերդը»,—չարունակ պատվում եր նրա մտքում մինչև Գետաչենը:

## XIII

Տիկին Սոֆիան մի քանի ժամ ինքնամոռացության մեջ եր, կարծես վոչ մի ամպ չեր յերևացել իր կյանքի հորիզոնում. նույն Սրտյուշն եր, փոքր ինչ ավելի մատղաշ, ավելի շատ եր խոսում դործերից, բայց դա բնական եր. չե՞ վոր նա ծանրաբեռնված եր հարյուր ու մի հոդսերով...

Նրանք նախաճաշեցին միասին. տիկինն ուտում եր՝ խորշելով ապատավորուհու պատրաստած հատարակ նախաճաշը ու թեթև դրուցում: Բայց ահա Թաուխանը վերցրեց պորտֆելն ու ասաց.

— Սոֆիա, յես ուշանում եմ, պիտի դնամ դործի, իսկ դու պրպտվիր վորևե բանով...

Սոֆիան մնաց մենակ ու սկսեց աչք ածել սենյակը: Նրան պարմացնում եր այս ամուրուն հատուկ վինթիությունը, վորը նա նկատում եր իր չորս կողմը:

Նախ նա թեթև խուզարկեց սենյակները. փոքրիկ սեղանի վրա

դրած էլին յերկու հախճապակե թասեր. նա խկուն մատից— «ի՞նչու» յերկու, և վոչ մեկը. իհա՛րկե, մեկը նրա համար է... ինչ-վոր վեպ է դրած դրասեղանի վրա, վրան խորհրդավոր աչքերով մի կին է նկարած, իսկ դրքի լուսանցքում ինչ-վոր դծեր են քաշած մատիտով, տեղ-տեղ էլ բացականչական նշաններ... Յերևի սա նրա ուժածն է, սիրային վեպ է... բայց ամենից շատ նրան դուրսում եր վուսել շալը, վորն այժմ ձգած եր աթոռի վրա. Թեպետ Ալեյուշն ասաց, թե դա իրեն՝ Սոֆիայի համար է, բայց ո՞վ գիտե, դուցե նա հիմա յե այդպես ասում, իսկ յերեք ինքը չգար Գեռասչին, կձգեր նրա վզովը...

Ալյոշկի կասկածները հատկ-հատկ ընկնում էլին նրա մեջ ու թունավորում, բևեռում տրամադրությունը: Մոտ մի ժամ կարգի բերելով, կամ ավելի ճիշտ՝ խուզարկելով տենյակը, նայելով իրերին, մանավանդ նամակներին, նա վերջապես սթափվեց, յերը սպասավորուհին դուռը բաց արավ ու ներս նայեց:

— Սենյակը չմաքրե՞մ:

— Հա, ա՛րի մաքրի:

Մինչև Եվիկը մաքրում եր, տիկինը մտածում եր, թե ի՞նչպես անի, վոր «տեղեկություններ» դուրս քաշի նրանից «այն աղջկա» մասին: Նա ստանալում եր, ու ինքնասիրությունը չեր թույլ տալիս ստորանալ «ինչ-վոր սպասավորուհու» առաջ, բայց քանի անցնում էլին րոպեները, նա ավելի ու ավելի պղտոր եր, վոր չի կարող համբերել:

Նա սկսեց ոգնել Եվիկին. սրբում եր փոշին, տեղավորում իրքերն ու թղթերը և մտածում, թե ի՞նչ ձևով սկսի:

Նա սպասեց, մինչև Եվիկը դործը վերջացրեց ու հանելով տեղիկյուվից մի յերեքանոց թղթադրամ, մեկնեց նրան, ասելով.

— Եվիկ, լավ ես աշխատում, ես վերցրու, յերեխաներիդ համար պետք կդա... բայց լավ կանես, մեկ էլ սրբես փոշին:

— Շնորհակալ եմ,— ասաց Եվիկն իր վեճի խոր դրպանը ձգելով թղթադրամը:

— Քանի ժամանակ ե, աշխատում ես, Եվիկ:

— Մեկ տարի, խինդ ամիս:

— Ետաեղ ծառայող կանայք կա՞ն:

— Ինչի՞ չե, կան:

— Ձես էլ պետք ե ծառայեմ, լա՞վ է այստեղ:

— Ի՞նչ է:

— Ետեղ ուս կանայք կա՞ն:

— Կան, մի քիչ էլ Եսոնցից կան:

— Ռուսաստանից նոր յեկած կա՞ն:

— Հա, մի աղջիկ կա...

— Վո՞րտեղ է ապրում:

— Ա՛յ ես դիմացի տան... սիրուն է...

«Դիմացի տանը», «սիրուն է»— ընկնում են Սոֆիայի ականջն ու ցնցում— «պարզ է,— մտածում է նա— Աբրաշն իր հարմարության համար է բնակեցրել նրան իր դիմաց...»

Սոֆիան հուզմունքից ձեռքին բռնած ուղղանկյուն թանաքամանը սխալմամբ կոշտի վրա է դնում սեղանին ու թափում մինչև թանաքը: Ցերիւսով նրանք մաքրում են սեղանը:

— Վո՞րտեղ է ծառայում այդ աղջիկը,— հարցրեց Սոֆիան կեղծ հանդարտությամբ:

— Ցեսի՞մ,—պատասխանեց Եվիկը, արդեն զգալով, որ ախկինը վոչ թե գրուցում է իր հետ, այլ հարց ու փորձ է անում: Նա վիրավորվեց: «Ի՞նչ, կկաշառի՛ ինձ...» անցավ նրա մտքով:

— Նա եսաեղ յեղե՞լ է,— հարցրեց Սոֆիան:

Եվիկը նեղացավ, չլսելու ձևվեց, սկսեց արագ—արագ մաքրել գրագրատակի փոշին: Նա մեկ վճռեց չպրսել փողն, ու գուրս գնալ, բայց հետո մտածեց վոր բանը կարող է հասնել Թառյանի ականջը, նեղացնել նրան, իսկ դեպի Թառյանը՝ վորպես զիտուն մարդու, նա մի տարօրինակ պատկառանք եր զգում:

Տիկին Սոֆիան ինքն իրեն խղճաց.— «արդյոք յես մի մուրացկանուհի չե՞մ, վոր տեղեկություններ եմ մուրում ինչ-վոր Եվիկից»,— մտածում եր նա:

Բայց խանդը կրծում է նրան: Փոքր ինչ միջոց տալով, նա նորից սկսեց հարցեր առաջարկել: Եվիկը համառորեն պատասխանում եր— «յես՞մ», «չմզի՛նա», սակայն յերբ ախկինը լուեց, Եվիկի մեջ խաղաց ինչ վոր կանացի հետաքրքրություն ու ցածր ձայնով ասաց.

— Կանն եղ աղջիկը լավ ջրից չե...

— Նա եսաեղ յեղել ե՞,— նորից հարցրեց ախկինը:

— Հա՛, յերկու անգամ յեղել է տղերանց հետ...

«Պարզ է, պարզ է»,—մտածում էր ալեկը, ախուր, առաջուան նայելով աննյակի երեսին: Ելիկի խոսքից նա պզաց, վոր նա էլ է դրախ ընկնում թե չէ՝ չգիտե ինքը հարց ու փորձ անում ու այդ դիտակցությունը տանկց նրան զարթնեցնել հարցնելը:

— Լա՛վ, Ելիկ, բավական է, չնորհակալ եմ,—ասաց նա.— մյուս եղբոր մաքուր կպատմես աննյակը:

— Մյուս կսրբեմ բա՛, կմոռնա՛մ.—ասաց Ելիկը զուրս գալիս:

## XIV

Սոֆյան ընկավ ամոսին ու կոչքանց հենվելով նրա մեջքին, ավելի ախից ու ընկճվեց: «Ի՞նչու չեմ չկիլ այսոկ, մտածում էր նա,—վորկեզի առաքանամ ապատավորուհու առա՞ջ, խակ հետո էլ ծաղրի առարկա դառնամ այն աղջկա բերանո՞ւմ... ավելորդ եր, ավելորդ եր իմ գալը...»

Նա վեր կացավ, մոտեցավ անկանին ու նկատելով հայելին, մոտ քաշեց, ու տեսնելով իր վհատ դեմքը, սքափվեց. խնդուն հարբարեց դեմքն ու հանելով չեմոդանից իր բերած կոստյումը, սկսեց հագնվել: Ինամքով կարդի բերելով իր արտաքինը, չորթվելով, նա վոքը ինչ սկրա առավ, ու վճռեց այցելության գնալ մի ինժեների կնոջ մոտ, վորն այնտե՞ղ եր ապրում:

Նա զուրս կեկավ, ձեռքին բռնած բարակ, գեղեցիկ ձեռնափայտը, բայց հազիվ մի քանի քայլ արած, մխքը վոխեց ու գնաց գետի գրասենյակը, ուզեց տեսնել, «առուկել» Աբոյուչին: Նա անցնում եր ընդարձակ շենքերի միջով: Զորս կողմն անընդհատ շարժում եր.— գնում-գալիս եյին շինանյութերով բեռնակիր սլառներ, ֆուրգոններ ու սայլեր. անդատարկ, գիլ ճչում եր սլառն, ճանապարհ եր պահանջում սիկին Սոֆյայից. ինչ-վոր մեքենա սկանչ ծակող ճչոցով տախտակներ եր սղոցում. խուսր-խուսր գնում-գալիս եյին բանվորներ, տեղնեկներ, ամեն առավոտ մարդիկ. մի յեռուն կյանք և այնտեղ, բայց ոտարոտի յե երևն, և վոր գլխավորն է՝ ինքն երևն զգում է վոքր ու չնչին իր բոլոր հարցերով, գում է ավելորդ այս ժխորի մեջ...

Հարցնելով իր ամուսնու տեղը, նա բարձրացավ յերկրորդ

հարկը. այտոնդ մէջտեղում խմբված երկու մատիկ. դիմացի բաց դռնից յեղուում եր գծագրանոցը, որտեղ մեծ սեղանների վրա աշխատում էին տեխնիկները: Անցնելիս կտակածով հայացք ձգելով դեպի մեքենագրուհիների սենեակը, տեսնում Սոֆիան մտածում եր տեսանու առանձնասենեակին. այնտեղ յուրաքանչիւր մատ կանոնաւոր տարում էին: Սարսափելը, հատակալոր, մտքը ինչ ասելուն մի մարդ, վարը կարծես տան–ձմեռ մէջտեղում եր ու կծկվում, հարցրեց նրան.

— Դուք ո՞ւմ եք ուզում.

— Ինժեներ Թադեոսին:

— Ձրտղված էլ պետք է տասանք:

Այդ պատասխանը կոպիտ հարուածի նման շշմեցրեց Սոֆիային, կարծես տարաւորը դիտմամբ ուզում եր վիրաւորել:

— Սա՛ք, որ էր կինը եկել է, ուզում է տեսնել,—տարօրինակ ձայնով:

Սարսափելը նեղս մտալ ու քիչ անց բացեց դուռը, հրաւիրեցրել տիկնոջ: Առանձնասենեակում կային ինժեներներ նստած, ծխախոտի ծանր ծխի մէջ տաք վեճերի մէջ, քննում էին մի խոշոր շինքի կիրակնի մասերի վոսկոման հարցը, աչքերը դուռ մի քանի կոպեկ դծագիր: Փոխոսկան հարցն առաջ եր գալիս այն հանգամանքից, որ տաղաց կիրակնեղենը չեր համապատասխանում պահանջած չափերին:

Նկատելով իր կնոջը, Թադեոսը դործնական ժպտով վոչնչացրեց ու ձեռքով ցույց տալով աթոռը, առաջարկեց նստել:

Այդ էլ վիրաւորեց Սոֆիային, այդ էլ թվաց անուշադրութիւն դեպի կինը: Մի քանի րոպե նա նստած եր դատարկ դիմ... մէջ.— «այտոնդ չես ափերդ եմ»— անցաւ նրա մտքով:

Բայց ահա Թադեոսը յեղափոխեց.

— Ուրեմն հարցն այս ձևով է անցնում...համաձա՞յն եք...

Ու նա քիչ վոր նկատեց իր բլոկնոտի վրա ու հանձնեց իր կողքին նստած քարտուղարին:

Բոլորը թեթևացած սկսեցին առաջ ծխել:

Թադեոսը նայեց կնոջն ու նկատելով նրա դժգոհ դեմքը, առաջարկեց ինժեներներին.

— Ինչպես ձանրաքանաք կինջս հետ...

Նրանք սիրալիր բարևեցին տիկին Սոֆիային, ապա մի քիչ հետո բոլորից հետո մեր կացան, դնալու համար, բայց վոտի վրա սկսեցին նորից խոսել մինչ-վոր մոռացված հարցի մասին:

Այդ ժամանակ դուռը բացվեց և ներս մտավ Լիզան՝ առույգ տաքացած դեմքով, արագ շնչելով, կարծես վազելով եր գնկել: Նա բարևեց բոլորին ձեռք տալով, բայց սիկնոջից ու նատեց բեն առաջարկած աթոռին, սեղանի վրա դնելով ձեռքի ժուռնալը:

Սոֆիան Լիզայի ներս մտնելուն պես ասաց մտքում— «սա նա յե» ու մի սիկնարկով զգաց, վոր նրա մեջ կա մինչ վոր մի բան, վորն ինքը չունի, զգաց վոր նա իրենից լավ և, և այդ զգացումը բոլորովին թևավորի արավ նրան: Աչքերը դեմքին տվեց անտարբեր, նույնիսկ արհամարհոտ արտահայտություն, բայց ներքուստ նա ընկճված եր:

Աչքի տակով զգուշորեն նա դիտում եր Լիզային վոտից գլուխ, վորում եր ամեն մի չնչին թերություն նրա արտաքինի մեջ, բայց սրտի խորքում զգում եր, վոր Լիզան այն կանանցից է, վորոնց նա անվանում եր «կերջանիկ բնավորություններ»- այդ տեսակ բնավորությունների համար կյանքն անընդհատ հաղթություննեի մի շարք է. ահա այժմ էլ նրան ընդունեցին մեծ ուշադրությամբ ու աչքերը չեն հեռացնում նրանից: Մի հափշտակվող առաջնագծում կա այդ ազկա մեջ արտաքին ու ներքին մի գրավչություն, վորը սովորական չե: Նա համեստ է հագնված, բայց կա ներքին մի դեղեցկություն, վորը ծածկում է ամեն ինչ: Այդ դիտակցությունից Սոֆիան ավելի կեր առում նրան մի առելությամբ, վորը հետզհետե ավելի կե բռնկվում, վորը հասկել եր զգում իր մեջ:

Ժննդեանները դուրս կեկան, դեմքերի վրա տանելով քաղաքից վազած սկնարկող ժպիտ: Դուրս գալով, ինժեներ Վարդանյանն ասաց Սարգսյանին:

— Լավ տեսարան է, չե՞,— թող մի քիչ կրծեն իրար:

Ի՞նչպես. ուրեմն դու համոզված կա, վոր մեջը մի բա՞ն կա՞ ...

— Իհարկե կա, դու կասկածո՞ւմ ես:

Ինժեներ Սարգսյանն ուսերը վեր քաշեց:

Լիզան տվեց Թաթյանին հետը բերած ժուռնալը:

— Ելի բան եք պրի՞լ.—հարցրեց Թաուլանը, թերթելով. ի՛նչ հետաքրքիր վերնագիր է «Կառուցվող շենքեր և կառուցվող մարդիկ...» Այո՛ հասկանալի չե... սա ձեր անցյալ անգամվա քոսակցության զարգացումն է:

— Այո՛, կարելի չե ասել նրա մարմնացումն է. դժբախտաբար մարդկանց «կառուցումը» դեռևս առաջնակարգ խնդիր չե այստեղ...

— Շուտով դա էլ կլինի,— ասաց Թաուլանը, նայելով ժուռնալում հարվածայիններին պատկերներին: Նայում եր ու մտածում, ծանոթացնի՞ արդյոք Սոֆիայի հետ Լիդային թե չե, նա ատամնվում եր, վորովհետև չգիտեր, թե ի՞նչպես կընդունի այդ Սոֆիան:

— Ձեզ կարող եմ ձեզ մոտ թողնել ժուռնալը. յերկու հատ ունեմ...

«Ի՛նչ մտերմություն,— մտածեց Սոֆիան,— այն էլ իմ ներկայությամբ»:

Թաուլանը աչքի տակով մի հայացք ձգեց Սոֆիայի վրա ու պլաց նրա լարված դրությունը. նա ասաց Լիդային պաշտոնական տոնով:

— Ի՞նչով կարող եմ այսոր ձեզ ոգտակար լինել:

— Ձեզ յեկել եմ խոսելու հարվածայինների մասին. նրանց տեխնիկական սպասարկումը հետ ե մնում և մի տեսակ սառեցնում է գործը...

— Այդ կարող ենք խոկույն կարգի բերել,— ասաց Թաուլանը նշանակելով առջևը դրած սեղանի որացույցի վրա:

Լիդան հետ ընկավ աթոռին ու չարտճճի ժպիտով նայեց Թաուլանին:

— Հետո յես մի առաջարկություն էլ ունեմ,— ասաց,— արդյոք չե՞նք կարող մենք միասին մի դավադրություն կազմել. այնպես անել, վոր տեխնիկական պերսոնալն ամբողջ կազմով իրեն հարվածային հայտարարի...

Սոֆիան ավելի հաստատվեց իր յենթադրության վրա, վոր Սրայուշի և Լիդայի մեջ «մտերմություն» կա:

Թաուլանը ժպտաց:

— Դավադրության կարիք չկա. մենք այդ ծրագիրն ունենք

արդեն. բայց միայն վոքը ինչ ժամանակ և հարկավոր բոլորին նվաճելու համար:

— Մեր հարվածայինների ոդակը հետզհետե լայնանում է. նրանք արդեն սերտ կապ են հաստատել կոմկերխատականների հետ:

— Շնորհավորում եմ. յես ել արդեն ծրագրում եմ մի շարք խորհրդակցական ժողովներ: Ձեր հոդվածները մեծ ազդեցություն են անում բանվորության վրա. մամուլն, անկասկած, խոշոր դեր է խաղում մեր շինարարության մեջ: Լավ է, վոր դուք տեղական մամուլումն ել եք մասնակցում:

— Ճիշտն ասած, յես վոչ մի նոր բան չեմ ստեղծում, յես միայն գրում եմ այն, ինչ վոր տեսնում եմ...

Այդ Լիզան ավելի ցածր ձայնով սկսեց թվել մի շարք հարցեր հարվածայինների վերաբերմամբ, առաջարկում եր խորհրդակցություններ կազմակերպել:

Սոֆիան դողդողում եր այդ ցածր ձայնից, վորը նրան թվում եր շատ ինտիմ և վիրավորական իր համար. նա լարում եր ականջները, վոչ մի խոսք բաց չթողնելու համար, բայց մեջն աճող խանդը չխոթում եր նրա միտքը, նրան թվում եր, թե ինչ վոր դաղտնի խոսքեր են ասվում, վոր ինքը չի լսում: Դեռ Լիզան չեր վերջացրել իր ասելիքը, յերբ նա վեր կացավ տեղից ու շտաենալով դրասեղանին, ասաց դրդռված տոնով, ուշադրություն չդարձնելով Լիզայի վրա, բայց հարվածն ուղղելով նրա դեմ:

— Արտյուշ, ո՞ւտ կվերջացնես, յես շտապում եմ...

Թառյանը մի ցնցում զգաց կնոջ խոսքերից, կարծես մի անախորժ դաղտնիք բացվեց:

— Վերջացնում ենք,— ասաց նա, նայելով կնոջը:

Հանկարծ նրան համակեց մի տխուր զգացում, կարծես հիշեց ինչ վոր հին բան...

«Հի՛ն են, հի՛ն,— մտածում եր նա. հին են և ձայնը, և շարժումները և իր ամբողջ ներքինը, ապրումները...»

Լիզան նայեց տիկնոջն ու զգաց իր վրա ուղղած նրա սուր, չանթող հայացքը: Նա դլխի ընկավ, վոր դա Թառյանի կինն է, ու վեր կացավ տեղից, նկատելով վեր դրությունը լարված է:

— Ուրեմն դուք միջոցներ ձեռք կառնե՞ք:

— Այո, հենց վաղվանից:

Վիլան ցտեսություն ասելով դուրս գնաց:

— Նո՛ւ, Սոֆի, ի՞նչ կասես,— դիմեց Թաույանն իր կնոջը:

— Ձեզ այսոր ուզում եմ գնալ,— ասաց Սոֆիան վճռական ու խիստ տոնով:

— Ինչո՞ւ... ի՞նչ է պատահել, նստիր տեսնենք...

— Հենց այնպես... նա ուզում եր ասել, «վորովհետև չես այստեղ ավելորդ եմ», բայց զսպեց իրեն ու միայն ավելացրեց.

— Ինդրում եմ կարդարես, վոր ավտո տանք...

— Ի՞նչպես թե... նոր ես յեկել և իսկույն գնում ե՞ս... Ի՞նչ է պատահել:

— Վո՛չինչ, յերեխաներին հիշեցի, ուզում եմ գնալ:

— Այդպես չասելու կարիք չկա. յեկել յես, մի յերկու որ գոնե մնա...

— Վո՛չ,— ասաց Սոֆիան, ավելի կտրուկ ու դոդոված տոնով,— յես քեզ ինդրում եմ, ավտո պատվիրես, թե չե ստիպված կլինեմ ինքս դիմելու...

— Լա՛վ, մի ասա, ի՞նչ է պատահել:

Սոֆիան լուռ նայում եր հատակին չեղ հայացքով: Թաույանը, զգալով վոր նա խանդում է, ինքն ել լուեց ու չգիտեր ինչ ասի:

Լռությունը խանգարեց ինժեներ Ալենիկովը, վորը ներս մտավ, սիրալիր բարևեց յերկուսին ել:

— Արտեմ Լազարիչ, մի չտապ հարց կա, պիտի միասին գնանք... մեր վագոնեղենի հարցը ուրիշ ընթացք է ստանում...

Սոֆիան մոայլ դեմքով հրաժեշտ տալով, դուրս գնաց:

— Հանդստյան ժամին յես տուն կգամ, միասին կվճռենք,— ասաց Թաույանը կնոջ յետևից:

## XV

Թաույանը չկարողացավ տուն գնալ հանդստյան ժամին. նա վերադարձավ միայն դործից հետո: Ներս մտնելով, նա տեսավ Սոֆիան նստած է սեղանի մոտ ու ինչ վոր գրում է:

— Ի՞նչպես ես, Սոֆի. դու այսոր կարծես տկար եյիր,— ասաց նա մոտենալով:

— Վո՛չ, յես տկար չեմ. քեզ խնդրեցի ավտոմոբիլի մասին... խակ դու ի՞նչ արիր...

Նրա ձայնը խղվեց. նա վեր կացավ տեղից ու դնաց դեպի ծննդաբերի անկյունը:

— Ուրեմն դու լո՞ւրջ եյիր վճռել. ճիշտ ասած՝ յես չեյի հավատում, վոր դու այսոր կղնաս:

— Ինչո՞ւ, երբ թե յես շատ ցանկալի յեմ քեզ համա՞ր...

— Ի՞նչ ե կատարվում, Սոֆի,— յես քեզ չեմ հասկանում:

— Ցավ ինչո՞ւ պիտի ինձ հասկանաս. դու հասկանում ես ուրիշներին... չե՞ վոր նրանք ավելի մոտ են քեզ...

— Ի՞նչպես թե ուրիշներին. դա ի՞նչ բան ե:

— Շատ սովորական բան. մի նոր ընկեր, յերևոյթ, թարմ, առաջադեմ... իսկ յես ի՞նչ... յես մեյն խանգարում եմ...

— Սոֆի, դե բավական ե. դու ինչ վար յերևակայության մեջ ես ընկել:

— Ինչո՞ւ յերևակայության. յես կարծեմ աչքեր ունեմ:

— Այսինքն ի՞նչպես թե աչքեր ունես, ի՞նչ ես ուզում ասել...

— Յես վոչինչ չեմ ուզում ասել. ի՞նչ գործ ունեմ խառնվելու քո ինտիմ հարաբերությունների մեջ. յես ցանկանում եմ գնալ, ուրիշ վոչինչ:

— Լա՛վ, դու վազը կղնաս... բայց ասա, ինչո՞ւ յես բարկացած, ինչն ե պատճառը:

— Լավ, չխոսենք դրա մասին. վազը առավոտ խնդրում եմ կարպատբես, վոր ավտոմոբիլ ուղարկեն:

Այդ ակսեց կարգի բերել չեմոդանը, իսկ Թաուբանը հետ ու առաջ եր քայլում սենյակում:

Հանկարծ Սոֆին չբնկոցով փակեց չեմոդանի խուփը, ու վեր կենալով ասաց.

— Այնտեղ թողել ե ընտանիքը, այստեղ նոր ընկեր ճարել, (նա չեշտեց «ընկերի» վրա). իսկ ինձ ասում ե՝ չեմ հասկանում... լա՛վ պոլիտիկա ե...

— Բավակա՛ն ե, վերջապես, Սոֆի, թո՛ղ այդ խաղերը,— ասաց Թաուբանը. ձայնը ուժեղացնելով:

Այդ ժամանակ, երբ ձայնը ազդեց Սոֆիայի. նա դիտեր, վոր Այդուշը բարկանում ե, յերբ արդարացի յե, բայց ձևացավ նեղացած:

— Հա՛, Իհարկե, մնում ե, վոր դու ինձ վրա բղավես, դուրս անես այստեղից: Յես խանդարում եմ քեզ և քո սիրելի ավանտյուրիստային...

— Ի՞նչ ավանտյուրիստա:

— Այն, վոր քեզ հետ միշտ սիրաբանում ե...

— Նորից կրկնում եմ, Սոֆի, վե՛րջ տուր այս յերեխայությյան. իսկ յեթե համոզված ես, վոր ինչ ուզում ես, արա. միայն ազատիր ինձ այս տեսարաններից, այս մանրուքից...

— Հա, Իհարկե, յես մանրուքով եմ զբաղված, յես հետամնաց եմ, իսկ նա տարված ե բարձր դաղափարներով...

Ու հետ ընկնելով աթոռի մեջքին նա սկսեց ջղաձգորեն հեկեկալ, կրկնելով.

— Յես ավելորդ եմ... յես խանգարում եմ...

Թաւյանը մնաց չվարած. նա ամեն կերպ աշխատում եր հանդստացնել Սոֆիային, բայց այդ յերկար ժամանակ չեր հաջողվում: Վերջապես Սոֆիան հանդարտվեց: Այժմ նա սկսեց արդեն ուղղակի հարցեր տալ Լիդայի մասին: Արտյուշը հավատացնում եր, վոր վոչ մի կապ չկա իր և նրա մեջ. ու այդ պատասխաններն այժմ միայն ինչ հավատ եյին ներշնչում, կամ գոնե Սոֆիային թվում եր, թե յեղել ե ինչ վոր կապ և այսուհետև չի լինելու... Արտյուշը չի բաժանվելու նրանից...

Ու հետևհետե Սոֆիան ընկավ մյուս ծայրահեղության մեջ.— նա կրկնապատկեց իր վհատաքշանքը դեպի Արտյուշը. մի լարված ուժգնությամբ կարծես նա ի մի եր հավաքել իր ամբողջ ղգացմունքը դեպի նա: Թվում եր, թե Արտյուշի մեջ մի նոր մարդ եր տեսնում, ավելի դրավիչ, ավելի սիրելի...

Նրանք մնացել եյին առանց ճաշի. թեյն ու ընթրիքն ինքը Սոֆին պատրաստեց, իր հոգատար քնքշանքը տարածելով ամեն տեղ:

Ամբողջ յերեկո, ամբողջ գիշեր նա կարծես ուզում եր իր քնքշանքի, իր դուրգուրանքի մեջ թաղել իր կասկածները...

Իսկ Թաւյանը, խոսելու արանքներում մտածում եր իր նոր ճանապարհի, իր նոր ապրումների մասին. ու ակամա համեմատում Լիդային Սոֆիայի հետ. մեկը, վորպես ծառացած մի նժույգ՝ թռչում եր դեպի ապագան, իսկ մյուսը քաշում եր դեպի հետ, դեպի նեղ, անհորիզոն անցյալը, վորից նա ձգտում եր դուրս գալ...

Հետևյալ առավոտ Սոֆիան նորից մոայլվեց. այս անգամ ա-ռանց բռնկումների: Ամպամած, թախծոտ դեմքով հրաժեշտ տա-լով Աբդուչին, վերադարձավ քաղաք:

## XVI

Կնոջ զնալուց հետո Թաուկանը մի թեթևություն ևր զգում, կարծես մի կաշկանդող ծանրություն ևր ընկել վրայից: Նա զգ-մանքով նկատեց այն վոխոխությունը, վորը կատարվել և իր մեջ. արդեն մի անջրպետ ևր բարձրացել իր և կնոջ մեջ, իր և անցյալի մեջ: Սկզբում կնոջ առաջին նամակից նա յեղրակացրեր, թե Սոֆիայի մեջ բեկում է առաջացել, բայց տեսնվելուց հետո համոզվեց, վոր նա դեռ հեռու յե դրանից, և յեթե հարց և դնում «անկախ աշխատանքի մասին», դա հպարտություն և անում, կասկածից խայթված ինքնասիրությունից:

Առավոտը դեռ կխտահպնված նա մոտեցավ սեղանին ու աչ-քի անցրեց իր առաջիկա ամբողջ համար կազմած ծրագիրը, վորը ընդգրկում ևր մի նոր գործունեություն:

Եվիկը մի քանի անգամ գաղտագողի ներս նայելով դռան արանքից, վերջապես հարմար րոպե գտավ ներս բերելու թեյն ու նախաճաշը: Բայց Թաուկանը չտապ-չտապ, մտաղրաղ դուրս ղը-նաց, թողնելով թեյն ու նախաճաշը:

Յերբ նա անցնում ևր ակումբի մոտով, րոպեչափ կանգ ա-ռավ, դիտելով նոր կառուցվող շենքը:

Ակումբի բաց պատուհանից լսվում ևր տեղվոմի քարտուղար Շմակի ուժեղ, կոկորդային ձայնը.

— Բա գոնե ինչ բանվորի կնիկ ես, վոր մեր կանոնները չես իմանում. ինչո՞ւ չես ասել, վոր մարդդ հիվանդացել և բժիշկ կուղարկեյինք, վոդ կատանայիր...

Կինը ցածր ձայնով ինչ վոր պատասխանեց.

— Հա, դե սրանից հետո կիմանաս, թե մի բան պատահի, յեկ ուղղակի ինձ իմաց արա... հիմի յես քեզ թուղթ կտամ, կերթաս հաշվապահի մոտ, կատանաս վոդը, ես էլ բժշկի թուղթն ե...

Թաուկանը ներս մտավ ակումբի միջանցքը: Ձախ կողմի սեն-յակում, վորի դուռը բաց ևր, լիկկայանի ուսուցիչը պարապում ևր մի խումբ կանանց հետ: Թաուկանը կանգ առավ դռների մոտ,

բարևեց ուսուցչին, վորը փոքր ինչ չփոթվեց, կարծելով թե նա յեկել է իր պարապմունքներն ստուգելու: Կանայք ամոթխած դլուխները ցած քաշեցին, բայց աչքի տակով դիտում էյին Թաւյանին: Գրատախտակի վրա խոշոր տառերով դրած եր.

«Մարքսը, Ենգելսը և Լենինը մեր մեծ ուսուցիչներն են»:

Իսկ յերկրորդ տողում—

«Ելեկտրական լույսն ավելի արժան է, քան նավթի լամպինը...»

Թաւյանը բարևեց ուսուցչին:

— Ինչպես է, դո՞հ եք պարապմունքներից:

Ուսուցիչը գանգատվեց, վոր դասարանը փոքր է, չի տեղավորում բոլորին. նստարաններն էլ քիչ են:

— Լավ, դրա մասին կխոսեմ, առաց նա, ու անցավ դեպի աչ, տեղիամի դրասենյակը:

Ցերը նա ներս մտավ, Սիմակին ինչ վար աղյուսակներ եր լցնում թվերով:

Թաւյանը բարևեց:

— Բարև, համեցեք,—վեր թռավ նա տեղից, աթոռ առաջարկելով Թաւյանին:

Մի արտասովոր ուրախություն համակեց Սիմակին. դա ուներ իր դաղտնի պատճառը,—արդեն մի տարի եր, ինչ Թաւյանը խոստացել եր ուղարկել նրան բանֆակ սովորելու, բայց Սիմակին չէյին աղատում դործից, առարկելով, թե փոխարինող չկա. այժմ նրան թվում եր, թե Թաւյանը այդ հարցն արդեն վճռել եր ու յեկել եր անձամբ հաղորդելու ուրախ լուրը:

Թաւյանը նստեց:

— Ինչպես է առաջ դնում ձեր շինարարությունը,— հարցրեց նա ժպտալով:

— Ինչպես թե շինարարությունը. դա ձեզ է վերաբերվում... պատասխանեց Սիմակը:

— Վա՛չ, ձեզ էլ է վերաբերվում. մեր դործը մի ամբողջություն պիտի համարել...

— Հա, այդ մտքով ինդարկե, ճիշտ է, բայց պետք է ասեմ, վոր մեր մասն առաջ է դնում փոքր ինչ կաղալով:

— Ինչո՞ւ կաղալով. յես լսել եմ, վոր դուք բավական հաջող ձև տանում դործը:

Սիմակն ապաուամ եր, թե այս հաուաջարանից հետո Թաույանը կհայտնի «ուրախ լուրը». բայց նա անցալ ուրիչ հարցերի.

— Մեր տեխնիկական գործերն այնքան ծանր ու բարդ են,— ասաց նա, վոր ժամանակ չի մնում բանվորների կենցաղային խնդիրների համար մտածելու, մինչդեռ այդ կարգի հարցերը, մանավանդ բնակարանային՝ անդրադառնում են մեր չինարարության վրա:

Սիմակը համոզվեց, վոր իր յննթադրությունը սխալ եր, վոր վոչ մի «ուրախ լուր» չկա մեջտեղը, ու հիասթափվեց:

— Մեր կենցաղային հարցերի շուրջը դեռ մի քանի անգամ պեկուցել եմ,— ասաց նա վոչ բնչ ընկճված ձայնով,— բայց պետք է խոստովանել, դեռ քիչ բան է արված...

— Ընկեր Սիմակ, դեռ կուզեյի ավելի մոտ ծանոթանալ մեր բանվորության կենցաղային հարցերի հետ. մեր առաջ այժմ դրած է մի խնդիր— վերացնել այն բոլոր թերությունները, վորոնք արգելք են հանդիսանում մեր չինարարության. մենք պետք է աշխատենք շատ կարճ ժամանակում վերացնել այդ բոլորը: Դրա համար ծրագրված է կազմել մի հանձնաժողով, վորը պետի ուսումնասիրի հարցը:

— Իմ կարծիքով, գործը հանձնաժողովին հանձնելը կնշանակի դանդաղեցնել. ավելի լավ է ուղղակի դուք ինքներդ տեղից չարժեք:

— Գուցե և ձեր ասածով լինի, նայած թե ինչ բարդություններ կան. այժմ մենք կմշակենք ծրագիրը, իսկ հարցերի արագ իրագործումը կես ինձ վրա կեմ վերցնում:

Սիմակը սկսեց իր բացատրությունները, կանգ առավ նախ բնակարանային հարցի անբավարար վիճակի վրա, պարզեց, վոր հանրակացարանները չեն կարող տեղավորել բոլոր բանվորներին, ապա անցավ ճաշարաններին:

— Մեր ճաշարանների վարիչներն այնքան էլ սիրելի մարդիկ չեն բանվորների աչքին.

Նա սկսեց թվել մի շարք թերություններ:

— Իսկ ի՞նչ դրության մեջ է բանվորության մթերման գործը:

— Այստեղ էլ պետք է շատ բան կարգի բերել. անխուսափ վերաբերմունքը բավական հաճախ նկատելի կերևույթ է...

Այնուհետև նրանք անցան կուլտ-կրթական հարցերին. ի միջի այլոց Սիմակը խոսեց լիկիայանին ավելի մեծ աենյակ տալու մասին:

Թաւյանը հիշեց իր տեսած դատարանը:

— Ուրեմն, ընկեր Սիմակ, վորքանով այս խնդիրները կապված են մեր շինարարական մասից, որինակ բնակարանային հարցը, ամեն կերպ առաջ կքաշենք, իսկ մնացած հարցերի մասին դուք կխորհրդակցեք համապատասխան ընկերների հետ:

Թաւյանը լռեց,— նա նայում էր Սիմակի թախծոտ, հիասթափված դեմքին, նրա վոքր ինչ ուռած, խոհուն աչքերին, ու կարծես ճղնում էր մտաբերել ինչ-վոր մոռացված մի բան:

Հանկարծ նա հիշեց Սիմակին հետաքրքրող հարցը՝ վոր խոստացել է նրան ուղարկել բանֆակ. ու ղզաց անհարմարություն, կարծես նրան դատարան էին կանչել:

«Ա՛յ քեզ հակասություն— անցավ նրա մտքով.— տղան թևեր է առել, պիտի թռչի, իսկ մենք բայ չենք թողնում, վորպեսզի գնա բանֆակում սովորի, ասելով թե նա անհոխարինելի չե...»

— Մի հարց էլ կա, ընկեր Սիմակ,— ասաց Թաւյանը,— չեա խոստացել եմ ձեզ բանֆակ ուղարկել, բայց դեռ չեմ կատարել. այժմ վերջնականապես կվճռվի և այս հարցը. առաջիկա աշնան դուք կլինեք բանֆակում... հենց այժմյանից կուղարկենք դրությունը...

— Շնորհակալ եմ, ընկեր Թաւյան,— ասաց Սիմակը, ուբավությունից չփոթվելով ու կարմրելով.— կաշխատեմ ամեն կերպ արդարացնել ձեր հույսերը...

— Մեզ համար ցանկալի չե, վոր դուք կապված մնաք մեր շինարարության հետ:

— Իհարկե, չեա միշտ կապ կպահպանեմ «Գեաաշենի» հետ...

— Հա, մի ուրիշ հարց էլ, քիչ մնաց մոռանամ... միայն դա պետք է զաղտնիք մնա մեր մեջ.— չեա ձեզ կատամ հոդվածները պատի թերթի համար. իմ ծածկանունը կլինի «Ինքս իմ դեմ». դուք կղեաեզեք այդ հոդվածները, բայց չեք հայտնել, թե ո՞վ է դրողը. իհարկե այսուհետև պետք է աշխատեցնենք պատի թերթը, և լույս հաննենք առնվազն չարաթը մի անգամ:

— Ուրախությամբ կկատարեմ ձեր խնդիրը:

— Դե լավ, ուրեմն ցտեսություն:

## XVII

*Թաւյանը դուրս յեկաւ ակումբից և քայլերն ուղղեց դէպի Հինաւայրը: Ճանապարհին նրա առաջ ծաւալւում էր մի աչքառյժ աշխատանք. բաւական յերկար տարածութեան վրա փորւում էր ջրմուղի կանալը. մի կողմից արագ տեմպով քանդում էին, մյուս կողմից շարում էին խողովակները:*

*Նա անցնում էր, տես տեղ-տեղ կանգ առնելով, նայում ներսը, փոսի մեջ. ու համակւում էհկաւարին հատուկ ուրախութեամբ. նա ուրախանում էր դործի աշխուժ տեմպից, նրա բազմամարդութիւնից:*

*Նրա մեջ տարօրինակ ցանկութիւն էր դալիս՝ անմիջապես ֆիզիքական աշխատանք կատարելու, լինելու բանվոր, վարպետ. նա կարծես իր՝ դհկաւարի դործը իսկական դործ չէր համարում... լինել հարվածային բանվոր, թաղվել դործի մեջ՝ այս էր թվում դերադոյն յերջանկութիւնը...*

*Յեվ իսկապես ի՞նչ է իր իշխանութիւնը, վորը նրան այդպես ղբաղեցնում է. մի՞թե դա անդյալի մի հիվանդութիւն, մի մոմոք չէ՞... այս մեծ շինարարութեան մեջ ինքը փոքրիկ մի մասնիկ է միայն, բայց յերևակայում է թե միահեծան շարժում է ամենքին և ամեն ինչ... ընդհանուրը, կոլեկտիվն է իրեն տանում իր ընթացքով, և վոչ թե ինքը՝ Թաւյանը... նա այս մեծ մեքենայի մի համեստ մասնիկն է միայն...*

*Նա մոտեցավ կառուցվող մի խոշոր շենքի: Այստեղ պատերը դեռ նոր էին բարձրացել գետնից: Բանվորները յեռանդուն թափով աշխատում էին: Շենքի մի ծայրին «բրոնզե ինժեները» ինչ-վոր բացատրում էր վարպետին: Մոտակայքում վորմնադիրներից մեկը միալար յերդում էր միայն յերկու տող.*

*Ճերևան բաղ եմ արել,*
*Լեյլի յաման, Լեյլի յաման...*

*— Սրամ, դե բավական ա է՛, դուրս տարար... մի ուրիշ բան յերդիր,— ասաց նրա կողքի բանվորը:*

*— Հաղիր ա՛սա չես ուզում, վոր յերդեմ...*

*— Ինչի՞ չեմ ուզում, միայն թե եղ մի՛ յերդիր:*

*Վարպետը լուում է մի յերկու րոպե, բայց հետո նորից սկսում է նույն յերդը, նույն ձևով:*

*Թաւյանին նկատելով, մոտեցավ բրոնզե ինժեները:*

*Նրանք բարևեցին միմյանց:*

— Ինչպես են գործերը:

— Այժմ բավական աշխուժացել են. միայն ավազի մատակարարումը դեռ կարդի չի բերած. խոստացել են մի ավտո ավելացնել:

Նրանք անցան պատի ուղղությամբ թափված քարերի, հողաթմբերի մէջով, տեղ-տեղ կանգ առնելով:

— Վորքա՞ն հարվածային ունեք,— հարցրեց Թառյանը:

— Այդչեն չուտով կհասնենք բանվորների մի յերրորդին:

— Լավ է. ուրեմն մենք կարող ենք մեր ուզած տեմպը ամբողջովին վերականգնել:

Յերբ նրանք դուրս յեկան շենքից, Թառյանն ասաց.

— Յես ձեզ հետ ուզում եյի խոսել մի քանի խնդիրների մասին. յես չեմ հիշել մոռիկ անցյալը, այն ժամանակ մեր մեջ թյուրիմացություններ կային, վորոնք այժմ վերացած կարող են համարվել: Ներկայումս յես կարող եմ ասել, վոր իմ վերաբերմունքը դեպի ձեզ միանդամայն ընկերական, չնայած է... դուք հիմարիկ, առիթ կունենաք ստուգելու իմ ասածը: Բայց անցնենք գործի.— յես աչքի անցրի ձեր պրոյեկտը. շատ ուրախ եմ, վոր դուք հառաջադիմում եք. չեմ թաղցնիլ,— ինձ համար անսպասելի եր, վոր դուք հաջողությամբ դուրս եյիք յեկել ժվարությունների տակից: Յես այժմ վստահ եմ, վոր առաջ կդնաք նույն ընթացքով, իսկ իմ կողմից դուք կհանդիպեք ամենաջերմ աջակցության...

Բրոնզե լնժենները զարմացած նայում եր դեսանին, չհոթվելով իրեն համար անսպասելի այդ հայտարարությունից: Նա միայն կարողացավ ասել.

— Շնորհակալ եմ. յես աշխատում եմ իմ ուժերի համեմատ...

— Յես դիտեմ և ձեր մյուս, նույնքան բեղմնավոր գործունեության մասին.— մեր աշխատանքների աշխուժացման, հարվածային չարժման մեջ դուք նշանակալից դեր եք խաղում, ամեն տեղ իրրև որինակ ծառայելով: Մենք միասին շատ բան ունենք անելու. յես ոգտակար կլինեմ ձեզ իմ տեխնիկական փորձառությամբ, իսկ դուք ինձ կվարակեք նոր՝ սոցիալիստական տեմպով... Դա ել՝ պետք և խոստովանել՝ մի նոր գաղտնիք է, վորը ձեր առաջ լայն բացում եր դռները, իսկ իմ առաջ կարծես փակվում եր. դա մի յուրահատուկ գալտոնիզմ և իմ մեջ, վոր բերել

եմ իմ անցյալից... ահա այս էլի ուզում ասել... յես կցանկանայի վոր դուք հաճախ գայիք ինձ մոտ, խորհրդակցելու ավելի մանրամասնորեն...

Սարյանը դովասանքի արժանացած աշակերտի նման չվրդովում եր, և չգիտեր ի՞նչ ասի: Յերբ Թառյանը վերջացրեց նա ասաց հուզված.

— Յես մինչև այժմ աշխատել եմ, վորքան կարողացել եմ... ուրախությամբ կաջակցեմ ձեզ ամբողջ ուժերովս մեր ընդհանուր գործին...

Մի քանի րոպե նրանք դնում էլին լուռ: Սարյանը տարրերնակ հուզմունքի մեջ եր. մինչև այժմ նրան հավատացնում էլին, թե Թառյանն իր թշնամին է, իսկ այժմ դուրս է գալիս ընդհակառակը— նա վողջունում է իր հաջողությունները, նա պատրաստ է իրեն ամեն կերպ առաջ քաշելու... ու նորից, ինչպես իր մանկան Լիպայի գրածը կարդալիս, նրա մեջ խաղում եր մի ցավառն ուրախություն՝ իր գործով ուժերի, իր անսպասելի ընդունակությունների ուրախությունը... այո՛, նա կարող է առաջ գնալ. կարող է դեր խաղալ սոցիալիստական շինարարության մեջ...

Նրանք մոտեցան մի նոր շինառեղի; Այստեղ Թառյանին ընդառաջում եր մի այուրպլիզ.— այստեղ էլին կոմկերիտականների նոր բրիգադները, վորոնք յեկել էլին իրենց պլակատներով. նրանցից մեկը ամրացրած եր գետնի մեջ խրած յերկու ձողերի վրա. կարմիր լաթի վրա գրած եր խոշոր տառերով.

«Մեր լոզունգն է— բոլորս լինենք արժանի մարտիկներ սոցիալիստական շինարարության, բոլորս լինենք հարվածայիններ»:

Կոմկերիտականների խումբը մի առանձին յեռանդով վորում եր, հարթում տեղը. իսկ մյուս՝ ավելի վորձված բանվորները հմտերի ղեկերով վառեր էլին վորում:

Ամբողջ տնտարանը մի խանդավառ հուզում առաջացրեց Թառյանի մեջ. նրա համար անսպասելի եր այս բոլորը, վորովհետև չգիտեր, թե այդքան մարդ է գալու այս աշխատանքի համար, մանավանդ չեր սպասում, թե գործը այսպիսի ենտուզիազմ կառաջացնի, այսպիսի ցուցադրական նշանակություն կստանա:

Նա նկատեց Լիլային. նա եւ քլունդը ձեռքին, կարմրած ու քրտնած վորում եր հողը:

— Просим, просим — հանկարծ հնչեց Լիլայի հատուկ ձայնը, յերբ նա նկատեց Թառյանին:

Թառյանը մոտեցավ, բարեւեց: Լիլան յերեւում եր իր աչքին մի նոր համբոյր, աշխատանքի, ենտուզիազմի համբոյր:

— Մենք ձեր դեմ դավադրություն ենք կազմել— ասում է՞ք,— ասաց Լիլան. ընկեր Սարյանն էլ պետք է մասնակցի,— ասաց նա, նայելով Թառյանի կողմը:

— Ա.յո, յես անակնկալի մեջ ընկա.— ասաց Թառյանը. յես չեյի կարծում, Թե այսքան մարդիկ կբերեք.— կեցցե՛ք:

Յեվ ինքն էլ ընդհանուր վոգեւորությունից վարակվելով, վերցրեց հանգստացող բանվորի ձեռքից նրա քլունդն ու սկսեց աշխատել:

Բայց մի հինգ րոպե չանցած, Թառյանի մոտ յեկավ Թղթատարը— հայտնեց նրան, վոր կանչում են:

Սարյանը մնաց այնտեղ և սկսեց նույնպես աշխատել:

## XVIII

Թառյանի համար սկսվեց մի նոր կյանք:

Ա.րտաքուստ կարծես նույն Գեստաչենն եր, նույն դործը, բայց Թե ինքը, Թե իր շրջապատը այժմ նրա աչքին ուրիշ կերպ եյին յերեւում:

Նա այժմ կրկնապատկել եր իր աշխատանքը: Նրան Թվում եր, Թե յեռանդի մի նոր աղբյուր և բացվել իր մեջ, վորն անդուլ մղում եր նրան դեպի աշխատանք: Բայց զարմանալի եր, վորքան նա շատ եր աշխատում, այնքան ավելի չնչին եր յերեւում իր արածը, և առհասարակ վոչը եր Թվում իր դերը այս ընդհանուր շարժման մեջ:

Դրա հակառակ՝ նա այժմ սկրսել տեսնում եր այն, ինչ պժվարությամբ եր տեսնում առաջ՝ ուրիշների դործը: Ա.յժմ նա ինքն իրեն չեր պնում Գեստաչենի կենտրոնում, նրա յեսը չեր շարժում այն մտքից, Թե ինքն և շարժում ամեն ինչ, այլ զգում եր իրեն մի հզոր յերթի մեջ, և այդ զգացումը տր–որի վրա նրան համակում եր մի նոր, լայնաթեւ ուրախությամբ:

Հետզհետե նրա դործունեության մեծ մասը տեղափոխվում

Եր դեպի վինավայրերը, դրամենյակային աշխատանքը տեղափոխվել եր դիշերվան: Թվում եր, թե նա խուսափում է հանդիպելից:

Նրա արտաքինն ավելի ու ավելի սկսում եր նմանել բանվորի. միշտ վերադառնում եր տուն վհշտաված, շաղախի բծերով, բայց յերբ մաքրում եր շորերը, միշտ ամեն մի հյուրերի մեջ տեսնում եր իր նոր կյանքի, իր վերելքի պատմությունը:

Զգալի փոփոխություն եր նկատվում և Գեսաչենի աշխատանքի մեջ. կուսկոմի քարտուղարն արդեն ամեն տեղ պայքար եր մղում պլանների թերակատարումը վերացնելու համար: Արդեն բանվորության մեջ ստեղծվել եր հարվածայինների մի միջնադրոց, որը հետզհետե լայնացնում եր իր շրջանը: Մեծ աշխատություն եյին մտցնում գործի մեջ և Լիզայի կազմակերպած կոմյերիտական բրիգադները իրենց վարակիչ ենտուզիազմով: Արդեն, բեկում եր նկատվում և շինանյութերի մատակարարման մեջ:

Որ-որի վրա բարձրանում եյին շենքերը: Ահա Գեսաչենի մի ծայրում մի շենքն արդեն պատրաստ է և այնտեղ սկսել են տարբալորումը: Թառյանը շարունակ հետևում եր աշխատանքին, մոնտյորների խմբի հետ զբաղված եր մի խոշոր մեքենայի տեղափոխման գործով:

Մեքենայի շուրջը տիրում եր մի յեռանդուն աղմուկ, լարված ձայների բացականչեր, շղթաների ղրնդոց:

Արդեն տաս րոպեյի չափ Լիզան կանդնած եր գործարանի շենքում և բլոկնոտը ձեռքին գրում եր, բայց Թառյանը չեր նկատում նրան. յերբեմն նա գաղարում եր գրելուց և դիտում եր Թառյանին:

Այո՛, Թառյանը փոխվել է, և Լիզան, նոր չե, որ այդ նկատում է: Ու այժմ նա նորից հարց և տալիս ինքն իրեն,— ի՞նչ կա այդ մարդու մեջ, որ իրեն համակրելի յե: Նրա մեջ Լիզան տեսնում է մի թաղնված ուժ, որը ճնշված է յեղել անցյալի նեղ փականքի մեջ ու դուրս է յեկել նոր կյանքի ասպարեզը: Բայց նա դեռ ամբողջովին չի ազատագրվել անցյալից: Հակառակ իր ուզղափիծ, անչեղ կյանքին՝ Լիզան տեսնում է Թառյանի մեջ դեռևս տատանվող մի աշխարհ: Բայց նա որոշոր այրում է իր անցյալի նավերը, նվաճում է ինքն իրեն, նվաճելով և Գեսաչենը....

«Մեքենաները կենդանանում են մարդկանց ձեռքերով»— գրում է Լիզան.— ինժեները, բանվորների ու մոնտյորների հետ փոշոտվում է, լարում է իր մկանները, և ուրախանում է ամեն մի հաջող չարժումից: Նա ապրում է գործի մեջ՝ նրա հաջողություններով, ուրախություններով...

Հանկարծ աղմուկը դադարում է. մեքենայի մասը դնում են իր տեղը, ու բոլորը չունչ են առնում լարումից հետո: Ցեվրոպացի ինժեները, վորն ուղարկված եր մեքենաներ մատակարարող Ֆերմայի կողմից, յերեսը դարձնում է Լիզայի կողմը ու նայում է նրան «աղամարդկային» հետաքրքրությամբ՝ խոշոր ակնոցների տակից՝ բերանում բռնած կարճ ծխամորճը: Հետո նա մոտենում է Թաուրանին և սկսում է խոսել Ֆրանսերեն՝ դերմանական ակցենտով: Նա կասկած է հայտնում, թե հետևյալ չենքերը կուշտանան պայմանավորված ժամկետից. իսկ Թաուրանը հավատացնում է, վոր ամեն ինչ կկատարվի պայմանագրի համաձայն:

Լիզան չատպով դուրս գնաց գործարանի չենքից, կարծես վախենալով իր ներկայությամբ հանել Թաուրանին ինքնամոռացումից, վորի մեջ նա այժմ գտնվում եր: Նա անցնում եր յերկար չենքերի միջով, չարունակելով իր մտքերի թելը.

«Այո, Թաուրանի մեջ կա պայքար և հաղթահարում... ահա թե ի՞նչն է գրավում Լիզային: Նա նոր եր գիտակցում այն, ինչ անորոշ զգում եր, վոր այս չրջապատի մեջ ամենից շատ նա ձգտում է դեպի Թաուրանը. բայց տարօրինակ եր իր վերաբերմունքը.— կարծես նա չեր ուզում, վոր այդ զգացմունքը լիներ և Թաուրանի մեջ, վախենալով, վոր նա կշեղի նրան իր «նոր աշխարհից...» Նա կուզեր մի մաղնիսական զորությամբ հեռվից ազդել նրա վրա, միշտ ունենալ նրա վերելքին, բայց վոչ մի կողմնակի ճառագայթ չկրել նրա ուշադրությունից՝ իր վրա դարձնելու համար: Ամեն ինչ գործին, ամեն ինչ սոցիալիստական չինարարությանը՝ ահա այդ կուզեր նա տեսնել Թաուրանի ձգտումների մեջ...

## XIX

Կենտրոնից յեկել եր ընկեր Սահակյանը՝ մի չարք հարցեր տեղում պարզելու համար: Գիշերելով կուսկոմի քարտուղարի մոտ, նա տեղեկացավ, վոր այն թերությունները, վորոնց առի-

թոլ նա յևիել եր, արդեն վերացվելու վրա էյին: Պարզվեց, որ նա ուշացել եր ճանապարհին ուրիշ գործերի հետևելով:

Համարյա ամբողջ գիշերը նրանք վեճի էյին բռնված. Շաւիարյան ատացուցում եր, թե չպետք է շարժել նորից անցյալի թերութիւյուններըը, քանի որ հին հարցերը կրկնին իրենց հետ հին անձնական հաշիվները, էնտրիգաները, վորոնցից զուր տեղ կատաջանա խանգարմունք: Իսկ ընկեր Սահակյանն ատացուցում եր, վոր անցյալի սխալները իսպառ ջնջելու համար պետք է նրանց քննադատութիւյունը պարզորոշ մոցնել գիտակցութիւյան մեջ:

Ցերկուսն էլ մոտ ընկերներ էյին, նոր ասպարեզ մտած ու վեճի ժամանակ թերի լսելով իրար, անհամբեր ուզում էյին առաջ բերել իրենց գիտեցածն ու քաղաքական գործը, չարունակ չեզրվելով հիմնական վեճից և ընկնելով կողմնակի հարցերի մեջ: Գիշերվա մեջ մի քանի անգամ տարվելով վեճով, նրանք վեր էյին կենում, նստում չռզկանց անկողնի վրա՝ վոտները կախած, ասպա հանդարտվելով, նորից պատկում, ու չարունակում վիճաբանութիւյունը: Ու այդպես մինչև լուսադաց:

Ընկեր Սահակյանն առաջ տարավ իր գիծը, վորուշեց խորհրդակցութիւյուն հրավիրել: Բայց նախ քան այդ նա ծանոթանում եր գործին:

Այդ յերկու որվա մեջ գրալի բեկում առաջացավ Գետաշենի հասարակութիւյան այն սահմանափակ խավի մեջ, վորը կազմված եր ծառայողների մի մասից ու նրանց ընտանիքից: Թաւյանի հակառակորդները, վորոնք մինչև այդ առժամանակ մեղմել էյին իրենց ակտիվութիւյունը նրա դեմ, այժմ նորից թև առան, և սկսեցին տարածել, թե ընկեր Սահակյանը յեկել և Թաւյանի գործերը քննելու և նրան «հետացնելու» համար: Առանձնապես այդ ուղղութիւյամբ աշխատում էյին յերկու ընժեներները— Վարդանյանն ու Սարգսյանը, մանավանդ առաջինը: Նա մի անանուն նամակ եր ուղարկել Մոսկվա՝ գլխավոր ընժեներին, դանդատվելով Թաւյանից, վերագրելով նրա սխալները Գետաշենի բոլոր թերութիւյունները, վորոնք իր գլխի տակ ուռճացել էյին, ավելի գործեղ տպավորութիւյուն անելու համար:

Ընժեներ Վարդանյանը մաղձոտ դեմքով, դեղնած աչքերով հատարտ եր: Մի ժամանակ, յերբ նա ծառայում եր Բաքվի նչանա-

վոր հարսանեկան նավթահանքերում, այդ մաղձոտ դեմքն իր դերը կատարում էր լուվին և թվում էր՝ վորոշ բավականություն ևր պատճառում իրեն, տալով նրան մխահեծան, վախ ազդող իշխանավորի տեսք: Նա անխնա թափում էր այդ մաղձը իր ստորադրյալների վրա, շարունակ «վանդման» տեռորի տակ պահելով բոլորին, իսկ այժմ մտնելով խորհրդային իշխանության շենքը, նա իր նախկին սովորության հակառակ աշխատում էր ժպտալ ամենքին. բայց ամենքի վրա թողնում էր մի անախորժ տպավորություն, վորովհետև նրա ժպիտն անբնական մեռելային էր, ու մի տեսակ սարսուռ էր բերում՝ տես նրա հետ խոսելիս ինչվոր սառը, մեռելային մատներ էլին հպում:

Ինժեներ Թառյանին նա առանձնապես առեց այն որից, յերբ վերջինս դիրքը բարձրացավ. նա կարծում էր, վոր ինքն ավելի յե արժան այդ դիրքին: Նախանձից առելով Թառյանին, նրան թվում էր, վոր վերջինն էլ առում է իրեն և խանգարում է իր կարյերին: Ահա թե ինչո՞ւ նրա «տապալումը» իր սրտին այնքան մոտ էր:

Ինժեներ Սարգսյանը չափած-ձևած, զգույշ խոսքերով ու շարժումներով մինչահասակ մարդ էր, կանոնավոր հագնված ու վոսկե շրջանակով ակնոցով: Անցյալից նա կարծես բերել էր իր հետ և իր հին աշխարհը՝ մի փոքրիկ արկղի մեջ և պահում էր զգուշությամբ, բացելով վոչ բոլորի մոտ: Իրեն հետաքրքրող գլխավոր հարցը իր կարյերան էր, վորի համար էլ նա մի կողմից ամեն կերպ ջրվառում էր իր գործունեությունը, իսկ մյուս կողմից էլ զգուշությամբ աշխատում էր գցել ուրիշներին:

Յերբ Թառյանի դիրքը տատանվեց, նրա գաղտնի հույսերը նույնպես զարթնեցին. նրան թվում էր, թե ինքն է մենակ արժանավոր, վորը կարող է նրա տեղը բռնել ու սկսեց գործել նրա դեմ Վարդանյանի տեսլությունը, կարծելով թե վերջինս իր մրցակիցը լինել չի կարող, և մտադիր էլ չէ: Նա հույս էր դնում և «բրոնզե ինժեներին» վրա՝ վորպես Թառյանի հակառակորդի, այն հիման վրա, վոր վերջինս նույնպես քննադատել էր Թառյանին արտադրական խորհրդակցության ժողովում:

Ահա այս յերկուսը,— մեկը զգուշությամբ, իսկ մյուսն ավելի յեռանդուն,— տարածում էլին, թե Թառյանին հանելու յեն գործից, թե նրա «ակցիաներն» արդեն ընկել են:

«Գեսարչենի դեկավարությունը փոխվում է»,— անցնում էր բերնեբերան ու ամեն լսող արձագանքում էր այդ լուրին ու փոխում էր վերաբերմունքը դեպի Թաղյանը: Այն ինժեներներն ու տեխնիկները, որոնք առաջ ժամերով նստում էլին նրա կաբինետում, այժմ քիչ էլին յերևում. միայն ինժեներ Վարդանյանն աշխատում էր մեկ-մեկ յերևալ նրա աչքին, ու բարևել կծու քաղաքավարությամբ, իր Թումոո ժպիտով, որը կարծես ասում էր— «դու ընկնում ես, բարեկա՛մ, ընկնում ես...»

Մի քանի ծառայողներ, որոնք միշտ սիրալիր, խորը բարևում էլին Թաղյանին, այժմ այդ անում էլին զսպված: Գրաանցյակի վարիչը սուտ հիվանդացել էր ու չէր յերևում, որովհետև Թաղյանի իր վերաբերմունքը մինչև հարցի պարզվելը:

Ծառայողների ճաշարանում խումբ-խումբ նստած խոսում էլին չէումների որվա հարցի՝ այսինքն Թաղյանին «հեռացնելու» մասին. ամենքն աշխատում էլին ցույց տալ, որ վաղուց նախատեսնում էլին այդ փոփոխությունը և կզմայակից էլին պրանտալես էլին Թաղյանին փոխարինողի անունը, բայց հնարավոր.— մեկի պատահարար ասած անունը կրկնում էլին մյուսները:

Ամենից շատ աչքի յեր ընկնում այն սեղանը, որի մոտ նստած էր պատի թերթի բանասուեղծ Սեվյանը: Նա մեծ թափով հարձակվում էր Թաղյանի վրա իր մոտ նստած յերիտասարդների հետ: Սկզբում, յերբ Թաղյանը նոր էր նշանակվել, Սեվյանն ամիսը պատի թերթի նկարչին ներկայացնել Թաղյանին մի արտակարգ, նապոլեոնյան պոզայով. արծվային հայացքով նա նայում էր լեռներին, ձնծերին, աչքերից ուղղելով լուսարձակի ճառագայթներ, իսկ տակը գեսեղել էր իր վսեմանավորը— «Յեվ նա իր չանթող հայացքն է նետում ժայռերին,— ճեղքելու համար, գետերն և գիտում,— հիդրոկայաններին համար... ո՞վ է նա...տեխնիկայի արծվաթև գեկավարը...»

Առաջին որը Թաղյանը դուրս չեկավ ճաշարան: Այդ առիթ ամեց ավելի խոսելու նրա գեմ և յենթադրելու, թե ճիշտ որ նա հեռացվելու յե: Յերկրորդ որը նկատելով ինչ որ տարօրինակ վերաբերմունք գեպի ինքը, նա դլխի ընկավ, թե ի՞նչ է նշանակում այդ փոփոխությունը, իմացավ տարածվող չէումների մասին և իր թշնամիներին թե չտալու համար՝ իր ցանկության հակառակ գնաց ճաշարան ու նստեց իր սովորական տեղը: Սա-

Ջայն նրա ճաշելու ընթացքում բոլոր հայացքները դեպի իրեն էլին ուղղած. նա զդում եր նույնպես, վոր մեծ մասամբ իրեն մասին են խոսում: Ամենքը նայում էլին Թառյանի դեմքին, հետաքրքրվելով, թե ինչ և արտահայտում նա ու ասում էլին մտքում— «հա՛, իհարկե, յերևում է, վոր պիտի հետացնեն...» ու այդ ուշադրության տակ Թառյանն զդում եր իրեն անհարմար դրության մեջ,— կարծես բեմի վրա յեր՝ մի չատ անախորժ դերի մեջ:

Միայն հաշվապահ Նավասարդյանն եր, վոր յեկավ իր տվրաական ժամին, առանց վորևե փոփոխության խորը բարևեց Թառյանին ու դնաց նստելու իր մշտական տեղը հանդիսատ, կանոնավոր. նա միշտ կրկնում եր իր աֆորիզմը, վորը համարում եր մի չատ խրթին ասա— «հաշվապահությունը քաղաքականություն չէ»: Մարդկանց էլ նա վերաբերում եր նույն կարզապահությամբ, վորպես իր հաշիվներին ու թվերին:

Թառյանին մոտեցավ լինժեներ Ալեքսիևովը, հետվից բարևելով: «Յերևի սրան դեռ մանակից չեն արել,— մտածեց Թառյանը,— թե չե սա յել կխուսափեր լինճանից: Նա ձեռք տվեց Թառյանին ու նստեց կողքին:

— Ի՞նչ նորություն,— հարցրեց Թառյանը:

— Սրտեմ Լազարիչ, ինչ վոր լուրեր են պտտվում, իբր թե փոփոխություններ են լինելու...

«Սկսվեց»,— անցավ Թառյանի մտքով:

— Նա՛ւ, ի՞նչ կա վոր... Դա մի սովորական յերեվույթ է. խոսակցություններըը միշտ անպակաս են:

— Բայց խոսում են ավելի մեծ մասշտաբով...

— Խոսողները են մեծացնում մասշտաբը, վորովհետև փոփոխությունների հետ նրանք կապում են իրենց կարյերան... Ավելի կասեմ— չատերը նույնիսկ փոխում են իրենց դույնն այդ փոփոխությունների հետ... դա կոչվում է «միմիկրիա...»

— Ջուտա բիոլոգիական յերևույթ,— ասաց Ալեքսիևովը ժպտալով:

— Այո, և բավական տխուր յերևույթ,— ասաց Թառյանը չարունակելով իր մտքի թելը.— հեղափոխությունն էլ ունի իր փրփուրը. նա կազմվում է այն փոքրաթիվ, քաղքենիական տար-

բերից, վորոնք փոխվում են արտաքուստ, բայց ներքուստ դեռ շարունակում են ապրել մեռնող դասակարգերի թափթփուկնեըրով: Գունատխոսությունը նրա դվխավոր հատկանիշներից մեկն է, բայց նա իր քանակով այնքան փոքր է, վոր մի թեթև պրոլետարական ալիք բավական է նրան ծածկելու համար...

— Այո՛, ճիշտ եք նկատել այդ տխուր յերեվույթը, վորը մեծամասնակ ծիծաղելի յե. այդ մեռամորթոն այնքան արագ է կատարվում, հաց թխելուց էլ արագ...

— Գունատխոսությունն ինձ համար մի դեհիկ, սրիմխոխել յերևույթ է, յես դրա կարիքը չունեմ, և յերբե նկատեմ մեջս, կատեմ ինքս ինձ: Յես ուրախ եմ նրանով, վոր մեծ պահանջ եմ դրում մեջս ամբողջ կյանքս դնելու սոցիալիստական շինարարության համար. և այդ իմ ձգտումը յես կարող եմ իրագործել ինչ միտխոսություն էլ տեղի ունենա իմ կյանքում... Յես կարծում եմ, վոր ինչպես կարմիր հրամանատարը նախ և առաջ պիտի լինի լավ կարմիր բանակային, այնպես էլ մենք նախ և առաջ պիտի լինենք լավ բանվորներ...

... Նրանց խոսակցությունը շարունակվեց մինչև այն ժամանակ, յերբ պղտցին, վոր ճաշարանը դատարկվել է և իրենք են միայն մնացել այնտեղ:

## XX

Սահակյանը մտադիր եր մնալու Գետաշենում յերկու որ, բայց գործը յերկարեց: Վերջապես չորրորդ որը յերեկոյան նախհրդակցության հրավիրեց Գետաշենի բոլոր մասերի տեխնիկական կազմի ներկայացուցիչներին: Ինժեներ Թաւյանը, վորպես տեխնիկական դեկավար, այդ ժողովի կենտրոնական անձն եր, վորովհետև նա պիտի ընդուներ իր վրա քննադատության բոլոր սլաքները:

Թաւյանը նստած եր շատ սկեպտիկ տրամադրության մեջ: Վերջին որերի պտտվող շշուկները հասնում եյին նրա ականջին ու սկսած ազդում եյին նրա վրա, յենթադրել տալով, թե իր հեռանալու ժամը մոտեցել և և/պետք և հրաժարական տալ: Իսկ նրա հակառակորդները նստած եյին ինքնավստահ, հավատացած լինելով, վոր վերջին հարվածն են տալու:

Ժողովը բանալով, Սահակյանը համառոտ բացատրեց նրա

նպատակը և առաջին խոսքը տվեց ինժեներ Վարդանյանին, ապա Սարգսյանին, ցանկանալով սկզբից պարզել հակառակորդների դիրքը:

Վարդանյանին թվ տվեց և այն հանդամանքը, որ առաջին խոսքն իրեն տվին. նրա դեղին աչքերը փայլեցին չարախնդությամբ. նա հարձակվեց Թառյանի վրա, անխիղճ բարձելով նրա վրա բոլոր թերությունները, այնպես ներկայացնելով դրությունը, կարծես այն նշանավոր արտադրական խորհրդակցությունից հետո վոչինչ չեր փոխվել Գետաչենում:

Սարգսյանն արտահայտվեց ավելի զգուշ, մեղմացրած ձևով, կարծես քայլում եր ճահճոտ տեղով, փորձելով ամեն մի քայլը: Նա խոսում եր այնպես, կարծես չեր մեղադրում Թառյանին, բայց իր բերած փաստերն ասում էին այն, ինչ ինքը չեր ասում, ու մեղադրում էին Թառյանին, թեպետ նրա անունը չեր հիշվում:

Ցերը խոսքը հասավ Թառյանին, բոլորը զարմացան նրա հանգիստ ու օբյեկտիվ տոնից: Իր բացատրության մեջ նա մատնանշեց անցյալի սխալները, չխնայելով և ինքն իրեն, բայց միաժամանակ ցույց տալով և ուրիշ պատճառներ.— «անցյալը կմնա վորպես մի սխալ,—ասաց նա,—նրա նշանակությունը նրանում է միայն, վոր մենք կսովորենք այլևս չսխալվել»:

Ապա կանգ առնելով յերկու ինժեներների մեղադրանքների վրա, նա ասաց.

— Թվում եր, թե այդ ընկերները քննադատելով իմ գործունեությունը, ջատագով են Գետաչենի առաջադիմության՝ ինչպես իրենք եյին պնդում, սակայն փաստն այն է, վոր յերբ յես մոտ ժամանակներս հարց դրի, վորպեսզի մեր ամբողջ տեխնիկական պերսոնալն իրեն հայտարարի հարվածային, հենց այդ յերկուսն արգելք յեղան այդ բանին՝ զանազան պատճառաբանություններ հնարելով՝ գործը հետաձգելու համար: Կասեմ ավելին,— այսորվա նրանց յելույթը պարզեց, վոր այդ ընկերները նույնիսկ չեն հետաքրքրվում Գետաչենի աշխատանքներով, չեն ուզում տեսնել այն վերելքը, վորը նկատվում է վերջին ժամանակներս...

Այդ խոսքերը դողդոջին Թառյանի հակառակորդներին. նրանք փորձեցին հերքել, բայց մեջ յեկան «բրոնզե ինժեները» և

Ալենիկովը և հատատաեցին Թաւյանի խոսքերը: Բրոնզե լինժենների այդ պաշտպանութիւնն անպատեհ էր Թաւյանի հակառակորդների համար, բայց նրանք մնացին ապշած, երբ կուսակոմի քարտուղարը նոյնպես պաշտպանեց Թաւյանին: Նա կանգ առաւ անցեալի սխալների վրա, ապա անցնելով ներկային, ասաց.

— Բայց կարևորն այն է, որ այդ բոլոր սխալներն այժմ անվերապահ անցեալ են. մենք թևակոխել ենք մի նոր շրջան, որը հետևեալ աճեալ է՝ թե քանակով, և թե որակով...»

Ընկեր Սահակյանն իր ելոյթում խոսքում ասաց, որ հոգս ունի հետապայում մշտ վերելքի մէջ առնել Գետաշենը. Նա վոքր ինչ կշտամբեց երկու լինժեներներին «անձնական մոտեցման» համար:

Յերկու լինժեներներն պատճին, որ իրենց խաղը տանուլ են տվել, յենթադրելով, որ Թաւյանն ընկնելու չի, և շատ բան կտային, եթե հնարաւոր լիներ յետ վերցնել իրենց խոսքերը: Նրանք գնում եյին տուն լուռ, մտքում մեղադրելով իրար:

Իսկ Թաւյանը գնում էր ամուր քայլերով, խորհրդածելով իր գործունեութեան շուրջը, համեմատելով անցյալն ու ներկան: Ահա այժմ նա պղում է իր մէջ մի նոր ուժ, որը պակաս էր բանվորութենից. «անցյալում մի մեծ սխալ կար մեզանում,— յետ կտրված եյի ամենահզոր պրոլետարիատից...» մտածում էր նա, բարձրանալով դեպի իր բնակարանը:

Հետևյալ որը, ճաշարանում, տարածվեց յերեկոյան ժողովի հետեվանքների մասին ու սկսվեց հակառակ շարժումը— մակընթացութիւնը: Միևնոյն մարդիկ, որոնք յերեկ հարձակվում եյին Թաւյանի վրա, այժմ արդեն գովում եյին նրան. նոյնիսկ պնդում եյին— «սխալ յես տուում եյի ե՛...» Թեպետ ասել եյին ճիշտ դրա հակառակը: Բանաստեղծ Սեվյանը պատուեց իր վոտանաւորը, որ պրել էր Թաւյանի դեմ: Տուա հիմանդ քարտուղարը յերեսաց պրատնյակում և տուա էր հանդիսատեսին,— «հիմանդ պատկած եյի, ինչո՞ւ չեյիք գալիս այցելութեան»: Տուա եյին նոյն մարդիկ, նոյն տեղը, բայց տարբեր հակառակը: Անցնում էր վոքրիկ խմբի վոքրիկ ալեկոծումը, տեղի տալով տարբեր մխրճնակութեան:

Լիդան այդ օրերին հանկարծ անհայտացավ Գետաշենից: Շատ բաներ եյին յենթադրում այդ դեպքի շուրջը, բայց նրա ան-

հայտանալու պատճառն ուրիշ էր: Գեռաչենի մի խոշոր արհեստ, որը բաղկացած էր յերկաթեղենից, ինչ որ թյուրիմացության պատճառով դեմ էր ընկել մի կայարանում: Հեռագրերը չէին պնում հարցը պարզելուն: Լիպան, իմանալով այդ բոլորը, առանց ժամանակ կորցնելու, վերցրեց բոլոր տեղեկությունները և անմիջապես ճանապարհ ընկավ: Վեց որից հետո նա յերևաց Նորից Գեռաչենում հաղթական արտամարդության— արհեստն արդեն արժվել էր և նրա յեռանից էլ ինքն էր ճանապարհ ընկել: Նա յեկավ այն ժամանակ, յերբ նրա անհայտանալու շուրջը առանձին լեգենդներ էին պատմում: Ամենից շատ Լիպայի բացակայությունն անհանգստացնում էր Թաթյանին, և յերբ նա վերադարձավ, կրկնակի ուրախություն տիրեց նրան.— մեկը վոր տեսնում էր Լիպային, մյուսը իմանալով նրա գնալու պատճառի մասին:

— Դուք արդեն հարվածային եք,— ասաց նա Լիպային:

— Վո՛չ, յես ինքս ինձ շատ վատ կզգամ, յեթե այդ չնչին բանի համար ինձ հարվածային կհռչակեն:

— Վոչ մեկն էլ դրա համար,— յերևի կան շատ դործեր...

— Վոչինչ չկա արժանի ուշադրության:

— Յեթե բոլորն այդպես մտածեին...

— Այն ժամանակ հարվածայնությունը կլիներ սովորական յերևույթ, վորին և մենք ձգտում ենք:

Թաթյանը դլուխը չարժեց, իր ժպտով արտահայտելով կշտամբանք: Բայց և այնպես մի դուրեկան ձայն ասում էր իր մեջ.— «Լիպան ուրիշ կերպ չի կարող լինել...» Ինքը Թաթյանը կախրեր, յեթե նա ուրիշ ձգտումներով լիներ...

## XXI

Գեռաչենում հայտարարվեց հարվածային ամիս: Դա բնականորեն ըղձում էր վերջերս բանած նոր ընթացքից, բայց առեթը յեղավ ընկեր Սահակյանի գալը:

Հայտարարման առաջին որը դործից հետո կատմաձերբվեց ժխտնդ, վորն անցավ շատ բարձր արտադրության մեջ. բանվորները խոսք տվին վոչ մեկին հասնել պլանների թվերին, այլ և վերապահցնել: Բանվորությունն իր պատկառելի բազմությամբ, իր դրոշակներով, իր չեչոտակի, հուժկու խոսքով խորը տպավո-

թություն արտալ գեկավար ընկերների վրա: Ընկեր Սահակյանը մեկնեց քաղաք լի հավատով, վոր այսուհետև բոլոր թերությունները կվերացվեն:

Սկսվեց մի նոր շարժում. ամեն մի հզոր մզումով ամենքը ձգտում էին գերապանցել իրար աշխատանքի մեջ: Տրված արտադրական նորմաններին բանվորներն առաջարկում էին իրենց հանդիսական պլանները: Ամեն ինչ կարծես շարժվում էր մի հզոր ուժի թելադրությամբ, վորը նստած էր ամենքի մեջ:

Աշխատում էին, լարում ուժերը. ամեն որ նոր վտակներ էին ավելանում, իսկ Գևորչենը հորդացած գետի նման լայն հոսում էր լուրջ ու խոհուն, մերթ առաջ տանելով զանգվածներին, մեկ չափի բերելով շատ չտապողներին:

Թառյանի համար, վորպես գեկավարի՝ սկսվեցին այն կերջանիկ որերը, յերբ նա այլևս չէր նկատում իր գեկավարությունը, այլ մի ընդհանուր հոսանքի մեջ գնում էր առաջ, իր կամքը միացրած նրա հետ: Շինարարության կյանքում նա հիշում էր ծանր որեր, յերբ իր կարդադրություններըը կանգ էին առնում չգիայի վորևե ողակում, իսկ այժմ բավական էր իր մի խոսքը, վոր արձագանք դտներ հարյուրավոր մարդկանց մեջ և անմիջապես գործի անցներ: Մարդիկ հասկանում էին միմյանց կես խոսքից, վորովհետև տարված էին աշխատանքով և ինքը Թառյանն էլ արբեցած էր այդ նույն աշխատանքով, տալիս էր նրան իր ամբողջ յեռանդը: Այն, ինչ առաջ գրաղեցնում էր նրա միտքը, նրա հույզերը,— իր վտանքը, իր ընտանիքը, հակառակորդները,— բոլորը կարծես դարձել էին հետու անցյալի աննշմար պատկերներ:

Պատի թերթն այժմ դարձել էր տպագրական թերթ «Գետաշենի ձայն» անունով և լույս էր տեսնում չարաթը յերկու անգամ: Թառյանն աշխատակցում էր յերկու գծով,— մեկն իր իսկական ատորագրությամբ, մյուսը՝ «ինքս իմ դեմ ծածկանունով»: Յերբեմն պատահում էր, վոր նա վերջին անունով մատնանշում էր Գետաշենի թերություններըը, իսկ առաջինով արձագանքում էր իր իսկ հոդվածին, թե այսինչ թերություններըը վերացված են: Իր առաջին հոդվածի վերնագիրն էր— «Ի՞նչու յես հարվածային չեմ»: Հոդվածը խոսում էր մի բանվորի անունից և հանգում էր այն մտքին, թե ինքը կարող էր հարվածային լինել, յեթե ավելի

գիտակից, ավելի աշխուժ հետևեր գործին և նվիրված լիներ սոցիալիստական շինարարության:

Յերեք որից հետո նա ուղարկեց «Գետաշենի ձայն» թերթին հետևյալ հայտարարությունը.—

«Կարդալով «ինքս իմ դեմ» առորակությամբ հոդվածը՝ (ինչո՞ւ չես հարվածային չեմ) այսօրվանից հայտարարում եմ ինձ հարվածային և առաջարկում եմ ուրիշներին հետևել իմ որինակին: Ա. Թառյան»:

Հենց առաջին օրից ընտրվեց մի յերբյակ, վորի անունը հեռագրում դարձավ «յերկաթե յերբյակ»: Նրա մեջ մտնում էին Թառյանը, «բրոնզե ինժեները» և Լիդան: Նրանք հաճախ խորհրդակցում էին կուսակոմի քարտուղարի հետ և միջոցներ մշակում Գետաշենի գործը բարձրացնելու համար:

Նրանք աշխուժով հետևում էին բոլոր ցեխերի աշխատանքին և ամեն տեղ հասնում էին աջակցության:

... Ահա այսոր էլ, ինչպես և ամեն որ, Թառյանը ուշ յերեկոյան վերադառնում էր տուն յերբյակի խորհրդակցությունից ու ժամանակավոր էլեկտրոկայանի հեվքի ձայնակցությամբ մտածում էր իր և ընդհանուրի աշխատանքի մասին:

Բանվորական չենքերի առաջ՝ հրապարակում, աշխույժ աղմկում էին պատանիները. խումբ-խումբ կամ զույգերով զբոսնում էին աղջիկներն ու տղաները, կամ մի տեղ կանգնած աղմուկով խաղում: Հնչյուն ծիծաղը, կանչերն ու ճչերը մի կենսաթրթիռ յերաժշտություն էին մտցնում Գետաշենի ծանր ու լուրջ գործից հետո: Թառյանն անցավ հրապարակով ու մոտեցավ իր ընտանիքին: Ներքևի հարկում ինչ-վոր ժողով է, հավաքվել են, մեկը խոսում է: Նա բարձրանում է վերև, ուղարկում է Ելիկին պապիրոս գնելու ու նստում է թեյի՝ բաց պատուհանի մոտ:

Նա զանվում է այն դուրեկան դրության մեջ, յերբ հոգնածությունը ականջը մատած դուրեկան հանգիստ է խոստանում, դրավում, իսկ մարմինը դեռ տեղի չի տալիս, ասելով՝ սպա՛սվիր, սպա՛սվիր... Նա հանում է ծոցից իր հուշատետրը ու զանազան թղթեր և սկսում է կարդալ ու կարդի բերել:

Ելիկը վերադառնում է, բերում է պապիրոսը ու զարմանում, վոր Թառյանը դեռ չի խմել թեյը: Նա յերկու կումով

*խմում և ու ծխում: Երիկը շարից լցնում և բաժակը ու պնելով նրա առաջ, դուրս և գնում:*

*Բաց պատուհանից լուր վոր ծանոթ կանացի ձայն և հնչում ներքևից:*

*Նա աչքի յե անցնում իր հուշատետրի նկատողությունները, առանձին թերթերով դրությունները: Նա կարդի յե բերում, նորից նշանակում ավելի մանրամասն. բայց մի ձայն ներքևից չեզրում և նրա մտքերը... Նորից լուր-վոր դուրևկան ծանոթ ձայն և խոսում ներքևի հարկից:*

*Նա դուրս և գալիս պատշգամբը. ա՛յո, նման և նրա ձայնին... ասպա լսնում և ներքև, ու մոռանում ժողովը գահլիճին, կանգնում և պատուհանի առաջ, սուվերում, վորպեսզի չնկատվի: Այո, Լիզան և խոսողը. իր գրասիչ առնով նա կոչ և անում բանվորներին՝ ավելի յեռանդով տանել գործը: Հորդորում եր վո՛չ միայն սովորել, լավ աշխատել, այլև նաւյնը սովորեցնել ընկերներին:*

*Թատյանը լսում եր մի առանձին հաճույքով. նա և ամաչում եր ամեն րոպե հետ նայելով, վորպեսզի մարդ չտեսնի իրեն, և միաժամանակ բուռն գանկություն ուներ լսելու մինչև վերջը: Բայց մի քանի րոպեյից հետո լսեց դուռն թրխկոցը, նրան թվաց թե մարդ և գալիս և չուռպով հետացավ, բարձրացավ վերև:*

*Նա հանեց իր որակիրը, վորի մեջ արձանագրում եր որևա նվաճումները: Որակիրը, չոր ու ցամաք եր, պինվորական հակիրճ նախադասություններով, լիքը դանագան թվերով: Նա բացեց նոր եջ ու սկսեց գրել. «Ձես արձանագրում եմ նվաճումներ, թվեր, բայց չեմ գրում կատուցվող մարդկանց մասին, մինչդեռ նրանք մեր աչքի առաջ ածում են, կուտակում սոցիալիստական հինարարության հերոսությունը,— նրա ռազմական ուժերը:*

*«Լսում եմ Լիզայի ճառը. նա հնչում եր այնպես գրավիչ, ինչո՞ւ— վորովհետև նման եր այն հրամանատարի ձայնին, վորը կոչ և անում պինվորներին կռվելու և ինքն ամենից առաջ և գնում...*

*... Ձերը նա մեր հանդիսման առաջին որը խոսում եր հերոսության մասին, ինձ թվում եր, թե նրա գեղեցիկ յերևակա-*

յուֆյունն եր խոսում, բայց այժմ սեանում եմ, վոր նա ինքնարդեն տալիս և իր նմուշը...»

«Այո, Լիզան դառել է անվոխարինելի Գեսաչենում... նա ամեն սեղ հասնում է, ամեն սեղ դործում... խնդասես վոչ «աչրվում է լուս տալու համար...» Ամեն որ ժողով ունի, միշտ կսեսնեք նրան ամենադժվար կետերում. հետամնաց բրնդաղներին խրախուսում է, առաջ քաշում. և աշխասում է մեզ հետ, և միասնական դրում է. նույնիսկ ժամանակ է դանում սեխնիկայի ուսումնասիրության համար... նա այժմ մեր կենսրոնական անձերից մեկն է...

Նա կանդ առավ դրեբուց ու մոսեցավ եր Լիզայի մասին:

Ի՞նչ զարմանալի ընթացք ստացան իրենց հարաբերությունները... այժմ նրանք ավելի հաճախ են հանդիպում, ավելի շատ են խոսում իրար հետ, ու քանի շատ են սեսնվում, այնքան ավելի յեն կապվում դործով, բայց հեռանում են իրարից՝ վորպես անհասաներ... Զգացումները հետզհետե թաղնվում են ինչ վոր խորը սեղ: Բայց Թաւյանը դդում է մի ածող կապ. նա այժմ կարող եր ասել— Լիզան «անդաժանելի յե վո՛չ միայն Գեսաչենից, այլ և իրենից...» Նա ամուր նասած եր իր սրսում...

## XXII

Յերեկոյան Թեյից հետո բանվորները խումբ-խումբ վերադառնում եյին հանրակացարան, առանց չտապելու, դանդաղ քայլերով: Ելեքտրական ուժեղ լամպերը աչք ծակող լույսով պսպղում եյին, հրապուրելով բնակիչներին: Յեկողների մեծ մասը նասում եյին մեծ սեղանի մոս, հանում լրագիր կամ դիրք, կարդում: Վոմանք պառկում եյին Թախսերի վրա, վոմանք ել այս ու այն կողմը խմբվում ու զրուցում: Վորմնադիր բանվոր Մեսրոպը յերեսնվայր պառկել եր Թախսին ու կարդում եր մի բրոշյուր: Նա լիկիայանի աշակերս եր ու կարդում եր զժվարությամբ, դանդաղ:

— Սո-ցիա-լիս-տական ո՛ւղ-ո՛ւղ-ո՛ւղ... արա, ես ինչ ա զրած, մի ասե՛ս, ուղսերով ա՞,— դիմում է նա իր մոս նասած Պողոսին, վորը լրագիր եր կարդում:

Պողոսը յերեսը դարձնում է Մեսրոպի կողմն ու նայում դրքին, նրա ցույց սված սեղը.

— Սա ուղտերով ա՞. բա աչքեր չունե՞ս... ուղիներով...

— Ի՞նչ ա նշանակում ուղիներով.

— Նշանակում ա ճամբաներով:

— Բա ինձի չեն եղպես դրում:

— Գնա՛ դրոշին հարցրու,— պատասխանում է Պողոսն ու ընկղմվում իր լրագրի ընթերցանության մեջ:

Մեսրոպը չի բավարարվում այդ պատասխանով ու շարունակում է մաքառել իր ընթերցանության մեջ:

Քարտաշ Բարսեղը խորհրդածելով ծամում է հետը բերած հացի կտորը, չթռղնելով վոչ մի փշրանք, ապա հանում է իր հին ճեպի փայլուն տուփը, կոշտ մատներով վաթաթում է հատ ապալերան ու ագահությամբ ծխում, կարծես անհետ կորցնելով ծուխն իր թոքերի մեջ:

Մոռենում է բրիգադավար Վասիլը.

— Բարսե՛ղ, բա յե՞րբ ենք մենք էլ պարզերես դուրս գալիս.

— Ի՞նչ ա, պակաս ե՞ն թվերը:

— Չե՛, ավելանում են, համա լավ չեն ավելանում: Բանը քեզ վրա յե կանգնել. տղերանց մի քիչ վրա դիր... բա յե՞րբ ես հարվածային դառնում:

— Դե քարտաշը մյուս էլ հարվածային ա. մյուս մուրճով հարված է տալիս...

— Դե հանաքը թող. որինակ տուր...

— Աչքիս վրա: Դու վոր գրելով ես հաշվում, յես էլ աչքով եմ հաշվում. մի չարաթից հետո մեր անունը վեր կլինի, իմացա՞ր:

— Լա՛վ: Ուրեմն խոսք ես տալի՞ս:

— Ի՞նչ խոսք՝ դու գործին մոխիկ արա...

Վասիլը ժպտալով գլուխը շարժում է ու գնում մյուսների մոտ:

Բարսեղը ծխելը վերջացնում է, փչելով մաքրում ծխամորճը, գնում է ծոցի դրպանում: Հետո, աչքերը կկոցելով նայում է էլեկտրական լամպին, կարծես ճգնելով լինչ վոր մտաբերել: Նա ուզում էր մտաբերել լինչ վոր բան, վոր այսոր կապրպացել է լրագրում, ու սիրտ հարցներ, բայց նրա աչքերը՝ վորոնք չեն սիրում յերեկոն, կամաց-կամաց սկսում են թմրել: Նա հանում է չորերը, խնամքով ծալած դարսում տաբուրետի վրա ու պառ-

կում և անկողնում: Դուբեկան հանգստությունը միայն հետո և մղում քունը, նա մտաբերում և որվա դեպքերը. այսոր նրա մոտ յեկավ իր նախկին գործատեր Կոստանովը, վորը պատերազմից առաջ իր կապալառուն եր և վերջին անգամ կտրեց իր աշխատավարձի կեսը. հիմի յեկել, խնդրում եր, վոր Բարսեղը վկայի, թե ինքն առաջ վոչ թե կապալառու յե յեղել, այլ արտելի վարիչ, իրր թե ինքն ել հետներն աշխատելիս և յեղել:

Դե, ասում և, մխասին աղ ու հաց ենք կերել, ինձ ոգնի՛ր... Հա՛, հա՛, դելին նորից կենդանացնե՞մ, վոր դա մեզ նորից ուտի: Զե՛, պարոն աղա Գրիգոր, դու մի գնա մի՛ քիչ ել մոն յեկ ես աշխարհում, ու մտածիր քո են ժամանակվա արարքների մասին, հետո կխոսենք. դեռ մի քիչ ել բարակի, վոր ես բաները հասկանաս: Մի քիչ դժվար մարսելու յա քեզ համար, թե չե վոր մի անգամ ել յեկար, ես քու թղթի վրա կդրեմ. «խնդրեմ ծանոթանաք, սա առաջ դել եր. հմի յել դել և, ասինչև ատամնեքը չթափվեն, մոտ չթողնեք գործերին...»

Մեսրոպը վեր և կենում աթոռից. նորից լույսն ընկնում և Բարսեղի աչքերին ու նրանք փակվում են: Նա քնում և խորը քնով, վոչ մի անհանգստություն չզղալով դեռևս տիրող աղմուկից:

Սրդեն ամբողջ հանրակացարանը լցվել եր բանվորներով և նրանց կենդանի ժխորը կարծես չանչ եր տվել նույնիսկ նրա մեջի առարկաներին: Խումբ-խումբ հավաքված զանազան տեղերում՝ վիճում են կամ զրուցում, ծիծաղում, վոմանք ել սեղանի շուրջը նստած զրում են կամ կարդում: Հանրակացարանի մեջտեղից հանկարծ բացվում և ռադիո-բարձրախոսը և արևելյան պարի յեղանակի զանազան ալիքները լցվում են սենյակը, րոպեպես զրավելով բոլորի ուշադրությունը: Ցերեկասրդ բանվոր վազղենը վեր և թռչում տեղից, սկսում և պարել, ընդօրինակելով կանանց, ծիծաղաշարժ նազ անելով իր շարժումներով. չորս կողմը կանգնածներն սկսում են հրճռալ, զրավելով և հետու յեղածների ուշադրությունը: Շուտով յերեսհատուկ դերասան վազղենի շուրջը հասարակություն և խմբվում. նա սկսում և ընդօրինակել ինժեներներին, տեխնիկներին, հաշվապահներին: Շուրջը հավաքված բանվորները բռնկվում են ծիծաղով, յերբեմն ծափահարում, իսկ վազղենը լուրջ եր, ասես մի լուրջ գործ եյին զրել նրան:

Հետևեան հանրակացարանի բանվորները բաժանվում են խմբակների: Մի տեղ վիճում էին կոլխոզի մասին, մի ուրիշ տեղ իրենց աուրյա գործից, իսկ մի անկյունում էլ բավական տաք վիճաբանություն էր արուաքին քաղաքականության շուրջը: Մի խումբ ուս յերկաթգործ բանվորներ զսպված մեզմ բասով յերգում էին «Վոլգան»: Ամբողջ հանրակացարանն էր խռաակցություններով, էր ծիծաղով, յերգ ու ածդիս-բարձրախոսով վերածվել էր մի յուրահատուկ խառը յերաժշտության, վորն էր աշխուժությամբ զբաղեցնում էր բոլորին, նուչնիսկ նրանց, վորոնք զբաղված էին կարդալով կամ պրելով:

Բեռոնատործ Մարպարը, խոտոտեմ, խոշոր սև աչքերը հառած թղթին, գրում էր իր թվերը: Նա բրիգադիր էր և ամեն որ առուտրում էր իր բրիգադի պլանային թվերը: Ամփոփելով տեխնիկի ասած թվերը, նա առուտրում էր, աջողյալ օրերի հետ համեմատելով: Վերջապես նա վեր կացավ ու իր թախտի մոտ կանչեց իր բրիգադի անդամներին.

— Ա՛յ ազնք, եսոր լավ չենք բանել, պլանը կատարել ենք 90 տոկոսով, ուրեմն 10 տոկոս պարտք ենք մնացել:

— Ելի՛ չհասա՞նք... բա լավ բանում էինք...

— Հենց դու, ինքդ լավ չեյիր բանում, խոսելդ ա մեծ.

— Դե՛, ընկերներ,— չարունակեց Մարգարը,— թե վոր դուք սոցիալիզմ եք կառուցում, պետք է նրա պլանով աշխատեք. պարտքի տակ մնալը ազամարդություն չի:

Դե՛, յեկեք խոսք տանք ընկերներ,— ասաց Շավարշը,— վոր եղուցվանից ել վոչ մի պլանի պարտք չենք ունենալ:

— Համա՛ձայն ենք...— ընդ ու որտալի հնչում են ձայները:

— Դե ազե՛ք,— ասում է Մարգարը. խոսք կա յերկաթ ա, խոսք կա՝ վարաս, դուք վո՞րնից եք:

— Մեր խոսքը յերկաթից ել պինդ ա...

— Դե եղավս ել կդրեմ:

Մարգարը հանում է ծոցից մի թուղթ, մոտենում է սեղանին ու գրում է.

«Մենք, յերբորդ բրիգադի բեռոնատործ բանվորներս յերկաթե խոսք ենք տալիս եղուցվանից ել վոչ մի պլանի պարտք չունենալ, վորի մասին ստորագրում ենք...»

Մարդարը կարդում է իր գրածն ու հետո ասում.

— Դե, յե՛կեք, սորագրեցեք:

Ընկերները մեկ մեկու յետևից մոտենում են, սորագրում:

— Ընկերնե՛ր, խռաքն եղուց կերևա... ասում է կոմյերխա Շավարշն ու թվարանութեյան գլխքը ձեռին նորից գնում է դեպի սեղանը, իսկ մյուսները ցրվում են:

Վարմնագլխրնների բրնդապետար Սուքյասն իր չուրջն է հավաքել բրնդապն ու գլուխը տմբտմբաբնելով, լայն պնչերը վրջած, ասես դառախոսում է. յերևում է, բավականութեյուն է ստանում գրանից.

— Սոցիալիզմն էլ վոնց վոր ասուն չինելը, ենպես բան ա. որինակի համար Լենինն ինժեներ ա, պլան ա տալիս,— թե ես- պես պետք ա բռնենք գործը. մենք էլ մեր կողմից պետք ա բանի գնենք մեր հունարը: Հիմի գո՛ւ, Պետրոս, ասում ես, ի՞նչ կա, մի քիչ էլ տոկոսը պակաս լլի. չե՛, չատ սխալ ես. եդ կնչանակի սոցիալիզմի քարը ծուռ ես գնում, տունը կքանդվի... ամեն քար պետք ա իր տեղը լավ գնվի...

Ուկնդիրները յերեսին մեջ են խառնվում, հարցեր են տալս. խոսքը պռոսվում է իրենց գործի չուրջը:

Հանրակացարանի յերկարութեյամբ անցնում է հողագործների բրնդապետը Կարապետը կանչելով.

— Ա՛յ ռևազործնե՛ր, յեկե՛ք սեցեք. ես ա՞ ձեր խոստումը, եսպե՞ս եք գերազանցում պլանը:

Ասում է ու անցնում հանրակացարանի ծայրը, իսկ նրա յետևից գնում են հողագործները:

Հանկարծ ադմուկը փոխում է իր ընթացքը. ինչ վոր խլըրտում է նկատվում հանրակացարանի ծայրին: Բոլորը չարժվում են դեպի այն կողմը ու կուտակվում մի տեղ: Ինժեներ Սարյանն եր յեկել ու խոսում եր բանվորների հետ:

— Ընկերնե՛ր, ինձ ասացին, վոր առաջին և յերկրորդ բռնագործ բրնդապնների իրար հետ վեճ ունեն. յեկել եմ դրա համար.— մի ասե՛ք, տեսնենք, ի՞նչ եք ուզում:

Յերկու բրնդապի կողմից էլ խոսում են, աշխատելով մեկմեկու մեղադրել:

Պարզվեց, վոր նոր անցած ամսվա պլանի թվերը սխալ են հաշվել. վառսարեն յերկրորդ բրնդապն առաջինից ավել եր գործ չինել, բայց թվերով՝ առաջինն եր գերազանցել:

— Ուրեմն՝ ձեր վեճը քանակի մասին է. մեր տեխնիկը ըստ տասելուց սխալվել է. բայց չե՞ վոր սխալը կտարվվի տուտմաև ժամանակ:

— Բա սրանք ցուցակում մեզանից առաջ են ընկել,— ասաց յերկրորդ բրիգադի բանվորներից մեկը:

— Ա՛յ ընկեր Սուրեն, եղ խոսքը չի տաղում քեզ պես բանվորին. մենք վոր բանվորներին վերածել ենք բրիգադների, դա դործի հարմարության համար է, և վոչ թե մարդկանց իրարից բաժանելու և նրանց մեջ վեճ ու կռիվ դցելու: Մեր յերբյակը սխալ տեղեկություններ է տասյել, ինքն էլ կուղղի. նակ դուք պետք է լինեք իսկական ընկերներ. մենք միշտ պետք է ձգտենք առաջ գնալու վոչ միայն դործով, այլ և ընկերական վերաբերմունքով: Իսկ ձեր վեճերը՝ թե մենք առաջ ենք, դուք հետ՝ ու եսպես բաները ցույց են տալիս, վոր դուք չեղվում եք ճամբից ու ուզում եք մեզ հետ տանել դեպի ձեր հին դյուղական վեճերը: Ցնս կարծում եմ, վոր սա ձեր մեջ կլինի վերջինը...

Վիճողները լռել էլին ու դլուխները կախել: Մեկը, վոր վեճին չեր մասնակցում, ասաց.

— Դե, ինդարկե, ամոթ բան է մեր մեջ...

Բրոնզե լնժենները, վերջացած համարելով հարցը, յերեսը դարձրեց մյուսների կողմը:

— Ընկերնե՛ր, հիմա լինչպե՞ս է ձեր տպրուտաը.

— Լավ է,— վրա բերին մի քանի հոդի:

— Ճաշը վո՞նց է:

— Հարվածային ա... ընկեր Լիդան բա կթողնի՞...

— Ի՞նչ է անում:

— Վարիչների դլխին կակալ ա կոտրում. են ա կոմխանհետն առած ամեն որ աուտդում ա...ա՛յ թե աղջիկ ա է՛...

Բրոնզե լնժենները ծիծաղեց ու հրաժեշտ տալով դուրս ըննաց:

Լուսնի ահագին շրջանակը լուսավորում եր հրապարակը, մեզմ աքսորելով ավանի չենքերը: Սարյանը գնում եր, կարծես ծծելով լինչ վոր բարձր, վեհ կյանքի զդացումներ... Նրան թվում եր թե լրեն վիճակված է մի խոշոր դեր, վորի համար նա պետի դնի իր ամբողջ կյանքը, առանց մնացորդի...

Նրա համար այս հարվածային որերն ասես հարսանիքի որեր

լինելին. նա միայն մի յերաժշտություն էր լսում իր շուրջը՝ աշխատանքի յերաժշտությունը. նա տեսնում էր դաշտերի ժամանակ և հրճվում չչականների կանչից... նա իր կյանքն արդեն անխզելի կապերով միացրել է Գետաչենի հետ...

Ա.հա կառուցվում է սոցիալիզմը, բարձրանում են շենքերը՝ մարդկանց համար, և այնտեղ էլ՝ ապրում են, պատրաստվում մարդիկ՝ «կառուցվում» են այդ շենքերի համար:

Հարկավոր է չոպալել, հարկավոր է շա՛տ կառուցել... Երան թվում է, թե վինարարական տեխնիկան զանգատ է զարգանում... նա կուզեր մի մեծ գյուտ անել, դյուրացնել կառուցումը և յերկիրը լցնել նոր, սոցիալիստական շենքերով...

Նա գնում էր յերբյակի նիստին. Թառյանի սենյակի պատուհանից նա նկատեց Լիզային ու սիրտը ճմլվեց տարօրինակ զգացում. այո՛, դուցե այժմ Թառյանը նրան գործի խոսքերի հետ ասելիքն էլ է ասում... յերջանիկ է նա... իսկ ինքը՞— նա այժմ զգում է, որ սիրում է Լիզային, բայց յերբե՛ք չի ասել նրան այդ մասին...

Դեռ ոչ մի աղջիկ իրեն այդպես չի զգացել, ինչպես Լիդան: Իսկ Աշխենը... մի քանի որ առաջ նամակ էր գրել, զգուշացնում էր կյանքից, անիծում էր իր «միջավայրը», որը և նրան «քաշում է դեպի ցած...» և զիմում է իրեն, որ ազատի, մի տեղ ճարի Գետաչենում իր համար... Ձե՛, Աշխեն, Գետաչենը քեզ համար չե. սա մի ուրիշ աշխարհ է... դու որ գաս այստեղ, յերևի կաշխատես ինձ ամուսնացնել և կյանքս լցնել քո մանրուքով... չե՛, մենք իրար հետ ոչինչ չունենք...

Նա բարձրացավ վերև, Թառյանի բնակարանը:

## XXIII

Հարվածային ամիսն անցավ արտակարգ հաջողությամբ: Մի բարձր վոգևորություն իր վարակիչ ուժով բռնել էր ամբողջ Գետաչենը: Ամեա վերջը ոչ միայն լրացրել էին պլանի թվերը, այլ և գերակատարել:

Վերջապես յեկավ հաշվետու որը, յերբ արտադրական խորհրդակցության ժողովում պիտի հայտարարեին հարվածային-

նեբի անուններըը, պիտի գեկուցեյին ամսվա արդյունքների մասին:

Ամբողջ Գեսաչենի բանվորությունը յեկել եր ժողովի: Կնա ժամ առաջ արդեն ակումբի նստարաններըը, աթոռներըը զբաղված եյին բանվորներով, ծառայողներով խիտ շարքերով:

Մի տաք, մարդկային մթնոլորտ լցվել եր դահլիճը, յերբ բեմի վրա յերևացին գեկավար ընկերներըը:

Առաջին ծափահարությունների ճարճատյունն արդեն վորշեց ժողովի հետագա ընթացքը: Դա այն ժողովներից եր, վորոնք վոչ այնքան իր մեջ արտահայտած ճառերով են բնորոշում, վորքան իրենց բուռն ենտուզիազմով:

Առանձնապես բանվեց ժողովը, յերբ կուսկոմի քարտուղարը նեբս յեկավ ձեռք-ձեռքի տված «յերկաթե յերբյակի» անդամների— Թաղյանի, Լիպայի և բրոնզե ինժենեբի հետ:

Նա բացեց ժողովը, և սկսեց վոչնչության տարրերը: Անտես հոսանքներով նա անցնում եր ճառախոսներից բանվորներին և վերջիններից խոսողներին. թվում եր, թե ժողովը գեկավարվում է վոչ թե բեմից, այլ ինքն իրեն:

Սկսում են խոսել մեկ մեկու յետևից Լիպան, բրոնզե ինժեներըը, հարվածային բանվորներըը... Ամեն խոսողից հետո գահլիճն արձագանքում է իր հզոր ծափահարություններով:

Խոսում է արտադրական թվերը. նրանք էլ են բերում իրենց յետևից նոր բանկոմներ. «Հարյուր տասը, հարյուր տասնյերկու տոկոսով»... հնչում են մեկ մեկու յետևից գերազանցած թվերն ու ծափահարություններով արձագանքում ժողովից:

Խոսում է Թաղյանը: Նրա վարկի չափությունն այլ մասայից՝ անցել է. իր դիմաց բազմաթիվ աչքերի մեջ նա տեսնում է խրախուսանք. նա այժմ ուրիշ բան չի կարող ասել, քան այն, ինչ թելադրում են այդ բազմաթիվ աչքերըը... նա խոսում է Գեսաչենի նվաճումների մասին...

— Ընկերնե՛ր— վերջացնում է նա իր խոսքը— այս անցած հարվածային ամսում մենք սովորեցինք հաղթահարել դժվարությունները, մենք պինդ եյինք, հաղթական անմտով և այժմ կարող ենք կռիվ հայտարարել և բոլոր ապագա ամիսներին... յես հավատացած եմ, վոր սրանից հետո Գեսաչենն էլ յերբեք չի դիմել իր դիրքերը...

Մի առանձին խանդավառութեամբ ընդունում են բանվորները Լիպային.

— Գեռաչենն անմոռաց կմնա իմ կյանքում,— ասում է Նա,— իմ այսաեղի աշխատանքը դեռ շատ չնչին է. յետ այսուհետև էլ կմնամ կապված Գեռաչենի հետ և կտրնեմ նրա գործին հնարավոր ամեն կերպ՝ ինչով վոր հնարավոր է...

Հայտարարում են հարվածայինների և կարմիր տախտակի արժանացած անունները, ու քվեարկելուց հետո հաստատում ցուցակը:

Կոմկերիանների բրիգադները պարգևատրվում են կարմիր դրոշով:

Թառյանը, Լիպան, բրոնզե լնժենները հայտարարվում են հարվածային:

Ժողովը վերջանում է ովացիաներով ու յեռացող կաթսայի նման դուրս է թափվում ակումբի դռներից, տանելով հետն իր ջերմ տպավորութիւնները:

... Ուշ գիշերին Եվիկը գարթնում է իր փոքրիկ սենյակում ու լսում է Թառյանի քայլվածքը, նա դեռ չի քնել. հավր նա հարվածային յեղավ,— մտածում է Եվիկը, ու հիշում ժողովը. ու հետո ինքն էլ մտորում է հարվածային դառնալ, խոսել բարձր ձայնով բոլորի հետ...

Իսկ Թառյանը չարունակում եր քայլել...

## XXIV

Մի շաբաթից հետո Մոսկվայից վերադարձավ գլխավոր ինժեները, իր հետ բերելով տեխնիկական հանձնաժողովը, վորը բաղկացած եր յերեք ինժեներներից:

Նրանք սկսին տեղում քննել Գեռաչենի հավ՝ լայնացրած պրոյեկտը:

Մոսկվայի ինժեներներին հյուրասիրելուց հետո, վորոշվեց ամբողջ խմբով ձիաներով շրջագայութիւն կատարել նոր պրոյեկտի վերաբերող վայրերը դիտելու համար:

Յերբ նրանք գործը վերջացնելուց հետո վերադառնում եյին, Թառյանը գիտմամբ հետ պահեց ձին, առաջ դցելով մոսկվացի հյուրերին և գլխավոր ինժեներին: Նա հետից արդեն նկատել եր Լիպային, վորը նստած եր ձորի լանջին, ժայռի մոտ ու ինչ

վոր գրում եր: Նկատելուն պես նա անդրվելի պահանջ դրաց տեսնվելու՝ խոսելու նրա հետ: Նա լրեն զղում եր թևթևացած զլխավոր ինժեների գալով, իսկ մի ժամ առաջ ել Մոսկվայի հյուրերի հետ տեղան նստելով, հյուրասիրելով նրանց Հայաստանի կոնյակով և գինիներով, նա ինքն ել մասնակից չեղավ, և այժմ գանվում եր մի սրտատրոփ տրամադրության մեջ:

Նա ձեն նստած լջալ մինչև ճանապարհի պատյալը ու կանգ առալ նրա ծայրին, հայացք ուղղելով դեպի Լիլան: Հանկարծ Լիլան գլուխը բարձրացնելով, նկատեց Թառյանին, վորը գլխարկը ձեռին լայն շարժումով բարևում եր նրեն: Տեսնելուն պես Լիլան սրտի դուրեկան թրթիռով աշխույժ բարևեց, ձեռքը շարժելով ու ժպտուն դեմքը հառելով նրա վրա:

Թառյանն լջալ ձիուց ու հեռվից քաշելով, գնաց դեպի Լիլան:

— Ձեզ սպասում և ձի նստելը,— ասաց Լիլան, բարևներից հետո,— ձեզ մնում և միայն հագնել չերքեզի չորքը, և այն ժամանակ դուք կլինեք իսկական կովկասյան լեռնցի:

— Իսկ յեթե մի աղջիկ ել վախցնեմ, պատկերն արդեն լրի՛ կլինի, չե՞:

— Ի՞նչ պետա աղջիկ վախցնելուց, քանի վոր հետո՝ դուք ինքներդ ստիպված կլինեք վախչելու նրանից:

— Ձեր պատասխանը շատ տեղին եր, այո՛, իրարից վախչելը կա, իսկ իրար վախցնելը չկա... այդ ի՞նչ եք գրում...

— Ձեվ գրում եմ և նկարում ջրվեժը:

— Ջրվե՞ժը:

— Այո՛, հենց առաջին որից նա տպավորվել և իմ մեջ:

— Հիշում եմ... կարծես շատ վաղուց եր այդ... դուք առանձնապես ուշադրություն գարձրիք նրա վրա... հետո զրի առաք իմ պատմած լեգենդն իշխանի մասին. բայց դուք ասացիք, թե ձեր առաջին ակնարկը լինելու յե ջրվեժի մասին...

— Այո՛, յես այդպես եյի ուզում, բայց հետո փոխեցի միտքս. ջրվեժը թողի վերջինի համար...

— Վերջինի՞... հարցրեց Թառյանը— կարծես չհավատալով Լիլայի առածին: Նա ինչ վոր ուզում եր ասել, բայց ձին խանգարեց, առնձը քաշելով և արածելով կածանի վերևի խոտերը:

ձա պինդ քաշեց ձիուն, ու հարցական դեմքով նայեց Լիդային:

— Այդ վերաեղի՞ց ես գալիս,— հարցրեց Լիդան կամենալով խոսքը փոխել:

— Մոսկվայից յեկած ինժեներների հետ եյինք. տարանք գույց տալու նոր շենքերի տեղերը:

— Ի՞նչ հետևանք ունեցավ նրանց հետազոտությունը:

— Լավ է անցնում. Գետաշենի լայնացման պրոյեկտն ընդունվում է ամբողջովին:

— Շատ ուրախալի յե. ախտո՞ւս, որ յես չեմ մնացել այստեղ...

— Ի՞նչպես, մի՞թե դնալու յեք,— հարցրեց Թաուլանը, առնելով մի պատահական «վերջին» խոսքը, որը քիչ առաջ ասաց Լիդան: Նա բաց թողեց ձիու սանձն ու ավելի մոտեցավ Լիդային:

— Այո՛, դնում եմ,— յերեք օրից հետո... արդեն յեկու-անդամ հետաձգել եմ ժամկետները...

— Յես այնպես եմ ընտելացել ձեր ներկայությանը, որ չեմ կարող յերևակայել Գետաշենն առանց ձեզ...

— Ճիշտն ասած, յես ել բավական դժվարությամբ եմ բաժանվում Գետաշենից...

Տերեց կարճատև լռություն: Յերկուսն ել նայում եյին դեպի:

— Ընկեր Լիդա, յես կուզեյի անկեղծ լինել ձեզ հետ մի առատակարգ հարցի վերաբերմամբ... Այսոր յես մի ուրիշ տրամադրության մեջ եմ գտում ինձ... դուք հիշեցրիք ինձ մեր հանդիպման առաջին որը... հիշո՞ւմ եք, դուք ձեզ համեմատում եյիք վեպի այն հերոսի հետ, որն առաջին անգամ տեսնելով Գովկասյան լեռները, չարունակ կրկնում է մտքում «լեռնե՛րը...» Ահա յես ել նրա նման սկսած մեր հանդիպման առաջին որերից կրկնում եյի մտքումս մի անուն... դա ձեր անունն եր... իմ կյանքի այն ծանր որերին, ձեր անունը մի նոր չունչ եր տալիս ինձ...

— Նա միայն ինչ լռից, կարծես դժվարանում եր չարունակել, իսկ Լիդան անհամբերություն եր զգում, չիմանալով ի՞նչ պատասխանել:

— Հետաքրքրում, ընկեր Լիլա, ես դուրս կեկա այդ կրկլե-
ակ մեջից... գիտեք, երբեմն մարդս հոգու մեջ ել՝ ինչպես ա-
ռարկաների վրա՝ նաուում է փոշին և պահանջ է զգացվում թափ
տալու, աղաուելու նրանից... ու ես թափ տալի իմ անցյալի
փոշին... Չեմ թաղցնիլ ձեղանից, իմ այդ բոլոր ապրումները
անտես թելերով կապված են ձեզ հետ... իսկ այժմ, երբ դուք
սացիք, թե դնալու ենք, իմ ականջին շատ տարօրինակ հնչեցին
ձեր խոսքերը. ինձ թվում էր, թե դուք մշտապես պիտի մնաք
այստեղ...

Լիլան զգաց, որ խոսակցությանը դառնում է բացատրու-
թյուն և փորձեց խուսափել:

— Բայց չե՞ որ ես ձեզ մոտ հյուր եմ եկել... կարճ ժա-
մանակով, որոշ հանձնարարություններով...

— Այո՛, ես գիտեի այդ, բայց մինչ հեռացնում՞ եյի ինձ-
նից այդ միտքը. մանավանդ վերջերս, երբ ձեր անունն անիսկի-
կապերով միացել է Գեուաչենի հետ...

— Ցես ձեզ մոտ աշխատեցի մի փոքր, և կշարունակեմ այ-
սուհետև. ամեն կերպ կաջակցեմ հեռվից Գեուաչենի շինարա-
րությանը, ինչով որ կարող եմ...

— Դուք աշխատեցիք այստեղ հերոսարար. ձեր անունը գրը-
ված է այստեղ մեր կամքի տախտակի վրա, բայց և այնպես...
ես կուզեի, որ մինչ լինեք մեզ մոտ...

Թաւյանը լռեց: Նրա փոխված ղդայուն ձայնը հնչում էր
Լիլայի ականջին մի դուրդուրող կանչով՝ դեպի անը, անձնական
մի լնտիր անկյուն՝ իր համակրած մարդու հետ, որն այժմ
իր առաջ բացում էր սիրտը... բայց նա հանկարծ սթափվեց,
նաւացավ ինքն իր դեմ, ու նայեց չհշտակի Թաւյանի դեմ-
քին.

— Ցես ձեզ հասկանում եմ, ասաց Լիլան,— և կասեմ առանց
քաշվելու,— ես այն կանանցից չեմ, որոնք վախենում են նման
հարցերից: Ցես նույնպես չեմ թաղցնիլ— դուք այս ամբողջ
Գեուաչենի գործիչների մեջ եկել եք ինձ համար ամենահամա-
կրելին... բայց պիտի իմանաք և այն, որ նախ քան տգեղա-
դուս հետ մխանալը, նրա ձգտումները պիտի մխանան իմ ձգտում-
ների հետ...

— առյանի սիրտն ընկճվեց,— Լիլայի խոսքերը հնչեցին այն-

պես, կարծես նա ասում եր— «մենք հեռու չենք միմյանցից մեր դաղափարներով, ուստի և չենք կարող մոտ լինել իրար...»

Նա ասաց ճնշված.

— Մի՞թե ներդաշնակություն չեք դտնում իմ և ձեր ձըդտումների մեջ... իսկ ինձ թվում եր, թե մենք անհրաժեշտ ենք միմյանց...

— Վո՛չ, դուք դեռ վերջնականապես չեք ազատագրվել անցյալի ժառանգությունից...

Թաուբանին թվաց, թե Լիդան ակնարկում է իր կնոջ մասին, ու ասաց.

— Ձեզ ազատագրվել եմ անցյալից ավելի, քան ձեզ թվում է... չես ազատ եմ ընդհուպ նրա բոլոր կապանքներից...

Թաուբանը նայում եր ներքև, ձեռքի մատրակով խփելով դետնին: Լիդան նայում եր նրան, հիշելով իր առաջին հանդիպման որը, երբ նրա կովկասյան առնական կնճիռը խաղում եր նրա ճակատին:

— Ինչ առաջ դուք խոսում եյիք,— չարունակեց Լիդան,— վոր ձեր բնակումը, ձեր վերելքը կապված է իմ անվան հետ, դա ցույց է տալիս վոր դուք դեռ ևս չեք ազատվել անցյալից... դուք խոսում եք անցյալի լեզվով... դա հերոսի խոսք չե...

— Հերոսի՞,— հարցրեց Թաուբանը զարմացած:

— Այո՛, հերոսի... չես ուզում եյի տեսնել ձեզ սոցիալիստական շինարարության բովի մեջ, պրոլետարիատի հետ ձեռք-ձեռքի, և տեսա... բայց չես կուզեյի տեսնել ձեզ հերոսության պաղաթնեերին... կուզեյի վոր ամբողջ եյությամբ տարվեյիք դործով և ժառանգիք ինձ... այն ժամանակ դուք կլինեյիք իմ իդեալական հերոսը...

Թաուբանը չմեց այս խոսքերից, ինչ և նշանակում այս բոլորը. մի կողմից մի ջերմ պատում եր ներշնչում Լիդայի այն յուտոպիանությունը, թե նա իրեն ամենից շատ է համակրում, մյուս կողմից՝ «հերոսականը» կիսիչ լեզվակներով չանթում եր նրան... Գուցե սա մի քաղաքված մեծությա՞մ եր,— մտածեց նա, բայց խոհուն հետ վանեց այդ միտքը,— վո՛չ, Լիդան չի կարող քաղաքիկ, կեղծել.— նա չի ուզում վոր յես կանգնեմ վերելքի չանգում. նա ուզում է տեսնել ինձ բարձր պաղաթնեերին...

— Ընկեր Լիդա,— ասաց Թաուբանը լուրջ տոնով,— մեր

հանդիպման առաջին օրից յես ձեր մեջ տեսա մի ապուակարգ մարդ և այժմ նորից ավելի ևս համոզվեցի... դուք իմ մեջ տեսնում եք մի թուլություն... մի ղեցմունք դեպի ձեզ, որի հետ կապված է յեղել իմ վերելքը... յես կհաղթահարեմ և այդ թուլությունը... ահա և իմ ձեռքը...

Երանք սեղմեցին իրար ձեռքերը մի մի տարօրինակ ղեցումով. այդ հպումն էլեկտրական հոսանքով հարուցում էր մի ջերմացիր, անմոռաց կապ և միաժամանակ՝ խոստում էր տալիս հոսանալ իրար...

Թադեանը գնաց դեպի ներքև, ու հասնելով ձիուն, նստեց վրան ու մտածելով, ջենց դեպի վերև, դեպի մոտակա գյուղը, կարծես ուզում էր հետանալով մոռացության տալ մեջը փոթորկող ղեցումները: Իսկ Լիլան բարձրանում էր նուբնտես, խորհրդածելով այս անսպասելի բացատրության շուրջը...

Մի պահ նայելով Թադեանի յետևից, Լիլան ասում էր ինքն իրեն,— յես կլինեմ քո մոտ, հարատաս ընկերը, յերբ Գևոտչինը կոսի քեզ,— որ նրան ևս ամբողջովին... յերբ որ հիմնովին կնվաճես ինքդ քեզ սոցիալիստական շինարարության համար, վերջնականապես կապաստիս անցյալից...

## XXV

Թադեանը գնում էր դեպի նոր շինամայրը, որը պահված էր Ջրվեժի մոտ: Նոր բաժանումով նրա պետականությունն իրեն էր հանձնված, իսկ գլխավոր ինժեներն արդեն ստանձնել էր իր գործառնը:

Թադեանը գնում էր, ձեռքին բռնած «կայծեր» ժուռնալի համարը, որի մեջ զետեղված էր Լիլայի վերջին ակնարկը «Ջրվեժի ցոլքում» վերնագրով: Համարը նա վերցրեց գրասենյակում, մի ծառայողից, թեթև աչքի անցրեց, բայց չկարդացավ կարդալ՝ ասես մի ինտիմ, հուզող նամակ էր ստացել ու չէր ուզում ընկղմվել ակնոցով տողերի մեջ:

Նա գնում էր մտածելով Լիլայի մասին, հիշում էր նրա հրաժեշտի րոպեները, այն առավոտը, այնպես ոգևորվել և իր մեջ...

... Վաղ առավոտյան մի գյուղական ազմուկ բաց պատուհա-

Ալիս ներս է ընկնում ու զարթեցնում իրեն: Ներս է նայում Եվիկը. դուռը փոքր ինչ բանալով, ու հայտնում է, թե իրեն կանչում են: Նա չտալ հարնվում է ու դուրս նայում պատուհանից: Խավարն նրան վոլջունում են ցնծագին ձայներով խմբված կոմկերնատականները, վորոնք շրջապատել էին Լիպային: Թարմ արևը վառվում էր նրանց թարմ դեմքերին իր առաջին կայտառ ճառագայթներով: Լիպան նայում էր մի անառվոր արտահայտությամբ, վորը և ժպտում է, և թախծում միաժամանակ:

Նա լվնում է ներքև, վոլջունում է կոմկերնատականներին, ինչ վոր առում, ինչ վոր անում է, բոլորը թվում է յերազում: Մոտենում է Լիպային ու հրաժեշտ է տալիս, պինդ սեղմելով նրա ձևարը:

— Մնաք բարով,— հնչում է Լիպայի ձայնը,— մենք նորից կհանդիպենք...

Լիպան գնաց...

Լիպան գնաց... Նա սթափվում է այն ժամանակ, յերբ կոմկերնատականները՝ իրենց պլուխ առած Լիպային, անհայտանում են հեռվում...

Մի քանի րոպե նա նայում է յետևից, ու ապա բարձրանում վերև, կրկնելով մտքում Լիպայի վերջին խոսքերը,— «մենք կհանդիպենք նորից...» բայց յե՞րբ, վորտե՞ղ և ինչպե՞ս... Այդ ի՞նչ խոստում է, վոր այս թարմ արևի նման լավ որ և խոստանում...

Այդ որվանից անցել է մի ամիս:

Այժմ նորից Լիպան խոսում է հետը իր «կայծեր»-ի մեջ և հուզում է վորպես մի լինելիս նամակ...

... Ճանապարհին նրան հանդիպում է թղթատար Սոսին ու տալիս է մի նամակ: Հասցեյի ձեռքից նա իմանում է, վոր կնոջից է, ու պատռելով ծրարն սկսում է կարդալ, ապա կանգ է առնում ծանր չնչելով:

Կինը գրում էր.

«Արտյո՛ւշ, վաղուց է, վոր քո մեջ նկատում եմ անտարբերություն դեպի ինձ և դեպի ընտանիքդ: Ձևս կարիք չեր յերևար բացատրություններին մեջ մտնելու, քանի վոր քեզ հայտնի յե ամեն ինչ: Իմ ցանկությունն այն է միայն, վորպեսզի հարցերը դրվեն պարզ, իսկ այդ ձգտումը քո մեջ չեմ տեսնում, ուստի յես ինքս եմ ուզում վերջապես պարզել դրությունը:

Իմ դերն էլ շատ պարզ է— մեր ճանապարհները՝ ինչպես կերևում է, իրար չեն բռնում. ինձ համար պատնէշ չե,— դու ճպտում ես նո՛ր կյանքի, նո՛ր մարդկանց հետ:

Այս նամակն առանալուց հետո համարեր ինձ բաժանված ու ապա՝ համապատասխան կարգադրություններ»:

Սոֆիա

Թառյանն արագ կարդաց նամակն ու մնաց չշմած: Ընդամենը վեր Սոֆիան վատասրեն ճիշտ եր գրում իր՝ Թառյանի «նոր կյանքի», նոր արամադրության մասին, այնուամենայնիվ, այդ նամակը մի ցնցում եր բերում իր համար: Այն մոմենտից, երբ Սոֆիան կեկավ Գեորգեն և բացատրություն պահանջեց, նա պատց, վոր ինքը և կինն արդեն ոտար են և ապրում են իրար հետ միայն անցյալի հիշողությամբ. նա պատց, վոր մեկ կինը, վորի հետ նա կցանկանար կապել իր կյանքը,— Լիզան եր... Բայց այդ ժամանակ այդ հարցերը դեռ անորոշ էլին. իր պատճառները դեպի Լիզան գանվում էլին մի գուբիկան մշուշի մեջ, վորը նա չեր ուզում ցրել...

Իսկ ա՞յժմ... յերկու կողմից էլ նրա դեմ է գալիս խաոտարեմ վորոշությունը. Լիզան գնում է իր առաջ նոր վերելքի, նոր «պատմինների» հետանկարները, բայց անջատված է իրենից... մյուս կողմից էլ բաժանվում է և կինը, իր «հին տունը...»

Նա գնում եր խորհելով իր նոր վիճակի մասին՝ հանկարծ նրա ականջն ընկավ ջրվեժի ձայնը: Նա կանգ առավ, նստեց մի քարի վրա ու սկսեց կարդալ Լիզայի ակնարկը: Դա խնդատես մի առանձին գրվածք եր, թաթախված լիրիկական զեղումներով. նրան թվում եր, թե նրա տողերի տակ ուրիշ տողեր կան թաղնված, վորանք խոսում են իրեն՝ Թառյանի հետ...

... «Ծագում է արևը ջրվեժի մեջ, խաղում են ջրվեժի ցոլքերն ու հիշեցնում մի հին լեգենդ... սոլիական դարերի հառաջն է հնչում այդ լեգենդի մեջ, յերբ ճնշված ճորտը չկարողանալով հաղթել իրեն կեղեքող կալվածատերին, հանձնում է նրա զաղիքը յերկնքին...

Այնուհետև Լիզան պատմ եր բերում իշխան-կալվածատիրի լեգենդը, վորը լսել եր Թառյանից էլ Գեորգեն գալու առաջին օրը, ու ապա շարունակում եր. «գայտան խուրձերով թաղ-

վում էին ջրերը, անդուլ հարվածներով խփում, խորտակում «չար իշխանին», բայց միայն լեռնեղի մեջ, միայն ամուրի մեջ... Այժմ ահա բանվորներ են շարժվում ջրվեժի շուրջը, նոր նախագիծը նրան իր մեջ է առնում և վաղը—մյուս որը նրա շիթերը կուղղվեն դեպի տուրբիններն ու կդծվեն աշխատանքի հին ջրաղացների տեղ»:

«Կառուցողները մոտենում են ջրվեժին, լեցնում են հրեղեն խոսքերով լեռնեղը դարերի... նրանք իրենց հուժկու ձեռներով խորտակում են իսկական իշխաններին, անցյալի տերերին...»

«Կառուցվում են հսկայական շենքեր. փոխվում է յերկրի տեսքը, փոխվում են և մարդիկ— հսկայական շենքերի հետ կառուցվում է և մի հրաշալի շենք՝ նոր՝ ստեղծագործ մարդը...

«Շաչում է ջրվեժը, թաղում է անցյալն իր հարվածների տակ... դալիս են մարդիկ դեպի «Գետաշեն», բերում են իրենց հետ անցյալի մնացորդները ու նորոգվում են, զոլում նոր կյանքի համար...

Թոռյանը նորից չկարողացավ կարդալ մինչև վերջը. չե՞ որ այդ իրեն մասին եր, իր նմանների մասին... վեր կացավ տեղից, մոտեցավ ջրվեժին: Հուժկու աղմուկը դուրեկան եր հնչում նրա ականջներին, ներդաշնակում եր իր ալեկոծվող զգացումներին:

Նա վերցրեց գլխարկն ու դեմքը տվավ բարակ ցնցուղի հարվածներին... Ապա հանելով դրպանից կնոջ նամակը, պատռեց ու ձղեց ջրվեժի տակ: «Անցյալի վերջին բեկորները... մբռնաձոռմ եր նա.— յես այլևս վերջինչ չունեմ այնտեղ...»

Ու քայլերն ուղղեց դեպի հեռվում նշմարվող բանվորների խմբերը, գլխարկը ձեռին, դեռևս զգալով ջրվեժի ցնցուղները...

---

... Անցել եր յերկու տարի:

Ավարտվել եր «Գետաշենի» առաջին հերթի կառուցումը: Հանդիսավոր բացման որը, հոծ բազմության առաջ, մխիթարում հայտարարվեցին կառուցող հերոսների անունները: Նրանց մեջ էին Թոռյանն ու Լիզան:

«Աշխատանքային հերոսի չքանշան»— լսվում էին նրանց անունների յետևից:

*Միայն այդ ժամանակ Թաւյանը տեսաւ Լիզային: Նա յե-
ֆել եր հանդեսի սկզբին՝ իրենից աննկատելի: Միտինգից հետո
նրանք դնացին Թաւյանի բնակարանը, ու նոր միայն սկսվեց
նրանց տեսակցութիւնը:*

*Փոխադարձ հարց ու փորձը, այն ջերմ խոսակցութիւնը,
որը կապում եր նրանց և տարտնացնում, խայթող կսկիծով
անհանգստացնում եր Թաւյանին: Վերջապես նա հարցրեց.*

*— Ընկեր Լիզա, մի՞թե դուք նորից պիտի հեռանաք...*

*— Վոչ, յես կմնամ ձեզ մոտ... նոր «Գետաշեններին» հա-
մար...*

*Նրանք բաւուն չափով սեղմեցին իրար ձեռները:*

*— Յես կարծես միայն նո՛ր, նո՛ր պիտի սկսեմ կատուցել,—
ասաց Թաւյանը.— այս րոպեը, ինչ որ յես կատարել եմ,
չեռս չնչին և իմ ապագայի հեռանկարների համեմատ...*

1933

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՈՎԵԼՆԵՐ


Ա.րևը . . . . . 7
Կևատ տունը . . . . . 9
Վիրավոր թռչունը . . . . . 11
Վանդակներում . . . . . 13
Կարմիր հաճարյուղը . . . . . 18
Կռվախնճորը . . . . . 21
Հնձյաթը . . . . . 25
Խորհրդավոր այգին . . . . . 29
Արյունոտ ծաղիկները . . . . . 35
Վերջին տերևը . . . . . 38
Անցյալի նիրհը . . . . . 41
Խալիչայի յերգը . . . . . 45
Արծաթի տակ . . . . . 49
Հին ժամացույցը . . . . . 52
Դուշմանի յերգը . . . . . 54
Խորհրդային առավոտը . . . . . 58
Կոմյերիտուհին . . . . . 66


## ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ


Ընկեր Մուկուչը . . . . . 68
Տրակտորը . . . . . 80
Կարմիր հաբսնացուն . . . . . 91
Ողակում . . . . . 113

Անխոսափելին . . . . . 122
Զառախաթը . . . . . 139
Տեսիլը . . . . . 147
Սէքը վախեցած Հանեսը . . . . . 158
Փուշ Սթելը . . . . . 171
Հարմարյանի հուշատետրից . . . . . 187
Հանդիպումը . . . . . 210
Լուսեցը . . . . . 223
Հաղար գլխանի . . . . . 231
Նեղ փողոցի սիմֆոնիան . . . . . 257
Դավադրությունը . . . . . 266
Բաբելոնի աշտարակը . . . . . 276
Մոլախոտը . . . . . 287
Գայլերի ճամբին . . . . . 297

ՎԻՊԱԿՆԵՐ

. . . . . 320
Լուսնի շողերով . . . . . 381.
Ջրվեժի գոլգոտա



Պատ. խմբագիրը՝ Ա. Հայրյան
Տեխ. խմբագիրը՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաբանյան

Հրատ. 3852, գլ. լիազ. Պ—4165, Պատ. 1071, Տիրաժ 3000

Թուղթ 62×94 տպագրական 29¾ մամ. մեկ մամուլում 38400 նիշ, հեղինակ 28½ մամ.

Հանձնված է արտադրության 1 նոյեմբերի, 1936 թ.
Ստորագրված է տպելու 10 ապրիլի, 1937 թ.

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65

Exod. Lib.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220026902

A II
26902